1011
S II·6

Kyrius

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Ռ. Կը հալուի ծիւնը. թարգ. ՅԱՐ. ԹՈՌՄԱՆԵԱՆՑ 1
Մարիամ. հէքիաթ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ . . 3
Զորրորդ դարու Հայ եկեղեցին. . . . 13
Վարդի իւղը մահաղեղ ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ . 51
Սեւ մտածումներ } ՀՐԱՆՏ-ՎԱՀԷ. 63
Ոհ, թող որոտայ } 64
Ենր-Նախիջեւանի Ս. Խաչ Վանքը. ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ. 65
Իմ օրագիրը. ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. . . 161
Հայոց կրօնական բանաստեղծութիւնը. Դ. ԽԱՉԿՈՆՑ 209
Ալազեազ. Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ . . . 241
Քահանայական խնդիր. ՍԵՒ ՄԱՐԴԸ . . 242
Մի էջ Ներսիսեան Դպրոցի պատմութիւնից ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ. . . . 251
Տօրկուատո Տասսո. Դէօթէի. թրգմ. բժ. Լ. ՏԻԳՐԱՆԵԱՆՑ 260

ՊԱՏՄԱԿԱՆ.

Նամակ խմբագրութեան Պ. Ս. . . . 283
Սսի եւ Ատանայի իշխանաժողովը Ա. ՏԷՐ ՄԻՔԷԼԵԱՆ 290
Ս. Նազարեանի նամակները 317



ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԳԻՐՔ Ա.

1901 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէի և Ղեկ. Նիկ. 21.
1901

Дозволено цензурою, Тифлисъ, 7-го Февраля 1901 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Ռ. Կը հալուի ձիւնը. թարգ. ՑԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ 1
Մարիամ. հէքիաթ. ԴԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ . . 3
Զորրորդ դարու Հայ եկեղեցին. . . . 13
Վարդի իւղը մահաղեղ ՊԵՐՃ ՊՈՒՕՇԵԱՆՑ . 51
Սեւ մտածումներ } ՀՐԱՆՏ-ՎԱՀԷ. 63
Ոհ, թող որոտայ } 64
Նոր-Նախիջեւանի Ս. Խաչ Վանքը. ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ. 65
Իմ օրագիրը. ԻՍ. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. . . 161
Հայոց կրօնական ըանաստեղծութիւնը. Դ. ԽԱՉԿՈՆՑ 209
Աւագեազ. Ց. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ . . . 241
Քահանայական խնդիր. ՍԵՒ ՄԱՐԴԸ . . 242
Մի էջ Ներսիսեան Դպրոցի պատմութիւնից ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ. . . . 251
Տօրկուատո Տասսո. Դէօթէի. թրգմ. ըժ. Լ. ՏԻԳՐԱՆԵԱՆՑ 260

ՊՈՏՄԱԿԱՆ.

Նամակ խմբագրութեան Պ. Ս. . . . 283
Սսի եւ Ատանայի իշխանաժողովը Ա. ՏԷՐ ՄԻՔԷԼԵԱՆ 290
Ս. Նազարեանի նամակները 317

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ.

Գրական երեւոյթներ

Ա. ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ. Ուսումն սր. գրոց։ Արիստ. եպ. Սեդրակեան. քահ. խնդիր։ Հ. Ս. Եփրիկեան. ընաշխ. բառարան։ Լ. Մսերեան. Հայ. բարբառախօսութիւն։ Յար. Թումանեան. Մելիք Իւսուփ։ Մելիք Ս. Դաւիթ Բէկ. Լուսինեանք. Կ. Տեմիրճեաղով. Զարլզ Դարվին։ Յ. Աղամեան. Ազատ ժամեր։ Յ. Տէր Միրաքեան. Դեռահասներուն ազատ ընթերցանութիւն։ Վ. Արծրունի. Թշուառներուն բարեկամ։ Մատին Սիբիրեակ. Պառաւ Ծիրա։ Աւենարիուս. Ի՞նչ է սենեակը։ Տ. Ռիթիւճեան. Առասմունք։ Բժ. Ս. Շահնազարեան. Մշակը։ Մի լրագրական քննադատութեան առիթով։ Ամնապիրներ։ —

Ն. ՔԱՐԱՄԵԱՆ. 325

«*Մայրենի խօսք*» Ա. Բ. 345

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Թիֆլիսի Հայ եկեղեցական թանգարանի վարչութիւն 348

† *Մ. Մամուրեան*. 349

Մամուլի ստուերը. Ա. ՏԷՐ ՄԻՔԷԼԵԱՆ . . 351

Ստացուած գրքեր 356

Խմբագրութեան ծանուցումներ. . . . 357

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Կոյր երաժիշտը. Կարաչէնկօի. վերջ. թարգմ. Մուշէ վարդապետ. . . . 113—205

Կանոնք ժողովոց. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊՍ. ԴԱՒԹԵԱՆ . . . . . 33—48

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.



ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ

Կ. Ռ.-ի

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(Ужъ скоро стаетъ снѣгъ...).



Կը հալուի ձիւնը, սառուցը շուտով
Կը շողայ ազատ ջրերի միջին,
Կը գայ գարունը նախշուն թեւերով
Կը տայ աշխարհիս հարբոյր ա-
ռաջին:

Եւ չուող հաւքի երամը կայտառ
Կը գայ նայելու գեղ ծաղիկներին,
Արեւն էլ վերից կը շողայ պայծառ
Այդ հրաշալի, փառաւոր տօնին:
Որքա՜ն թարմութիւն եւ անուշ բուրմունք
Կը բերի գարունն մեզ համար իւր հետ,
Որքա՜ն սէր ու բաղդ, որքա՜ն հիացմունք.
Ի՜նչ շքեղ է նա, որքա՜ն կենսաւէտ...

Բայց արդեօք զարունն ամենի՞ս համար
Կը բերի բերկրանք, բաղդ ու ծաղիկներ.
Մենք կուրախանա՞նք հանդիսաւասար.
Ողջ կը կատարուի՞ն մեր սրտի ցղմեր:
—Երբ անուշաբոյր նա՝ իր զանբիւղից
Առաս նուէրներ շաղ տայ մեզ վերայ,
Մեզանից մէկը նորա աչքերից
Անկեանելի գուցէ կը մնայ?
Եւ այդ զրկուածին էլ նա ցոյս չի՞ տալ,
Նորա երեսին էլ նա չի՞ ժպտալ.
Բոլորին կը տայ բուրող ծաղիկներ—
Նորան կը թողնի զուրկ եւ անմուէր:
Գուցէ նա՝ իբրեւ հնչիւն սլացող՝
Կ'անցնի՝ ցնորքի, երազի նման՝
Եւ մեզնից մէկին կ'անի աչքաթող—
Կը թռչի մօտով, չի տեսնիլ նորան:

Ո՜հ, այն ժամանակ թող նա չը թափի
Դառն կշտամբանք զարնան յետեւից,
Նորա ընտրածին թո՛ղ չը նախանձի,
Իւր սրտի խորքում պահելով կսկիծ!
Ո՜հ, զուր արցունքով թո՛ղ նա աշխարհին
Իւր տառապանքը չը յայտնի խսպառ,
Որ չը խանգարուի՞ զարնան խնդագին
Ու հանդիսաւոր այդ տօնը պայծառ:

Թարգմ. Յարութիւն Թումանեանց



ՄԱՐԻԱՄ

(ՀԷՔԻԱԹ)



Էլ ամի հէքիաթ պատրաստ,
Խաչխա քուռակը տակրաս,
Էլիմ էրթամ Էրևան,
Զաքա-չուքա կերևան...

Ցարեգիրք ասում են, որ «փ հնում»
Հեռու մէկ աշխարհք իշխան էր կենում,

Որ ունէր որդի և երկու աղջիկ։
Երկար վայելեց նա կեանք երջանիկ.
Ու երբ ծերութիւնը նորա մօտեցաւ՝
Իր գանձն ու թագը բաժնել ցանկացաւ
Նա զաւակներուն, իր մօտ ժողովեց,
Եւ վերջին կամքը նա այսպէս յայտնեց.

«Ուզում եմ, ասաց, իմ հարստութիւնն
«Ու թագը թողնել ձեզ ժառանգութիւն.
«Բայց կ'ըզձամ, ուխտիս չի տուած վախճան,
«Գիտնալ ձեր սիրոյն դէպ ինձ աստիճան»։

—

Մեծ աղջիկն ասաց՝ «Հայր իմ պատուական,
«Քեզ սիրում, պաշտում եմ ցայն աստիճան,
«Որ պատրաստ եմ քեզ համար չամաչել,
«Ու երկրորդ անգամ Քրիստոսին խաչել»։

—

«Ձէն կենաս դստրիկ», ասաց ծերունին,
Ու սիրով սեղմեց Նորան իր սրտին։

—

Եւ որդին ասաց՝ «Հայր իմ պատուական,
«Ես էլ սիրում եմ քեզ ցայն աստիճան,
«Որ սիրոյդ հանդէպ թագ, իշխանութիւն
«Աչքիս մի չնչին բան են երևում.
«Թէ քեզ պէտք լինի, և ինձ հրամայես,
«Անտրտունջ կրակի մէջ ինձ կըտեսնես»։

—

«Դու էլ չէն կենաս», ասաց ծերունին,
Նորան էլ սիրով սեղմեց իր սրտին։

—

Կրտսեր աղջիկը՝ անունը Մարիամ
Հեզ դէմքով եկաւ հօրը յանդիման,
Ասաց՝ «Հայր, այնչափ սիրում եմ ես քեզ,
«Որչափ արժանի է մի հայր քեզ պէս»։

—

Այս խօսքերը որ իշխանը լըսաւ,
Բարկութիւնից սաստիկ կատղեցաւ.

Նորան այնպէս էր դուստրը երևում,
Իբր թէ նորան բընաւ չէ սիրում,
Ու կատաղաբար ասաց նա նորան.
«Հեռացիր աչքէս, անսիրտ անբզգամ».
Եւ պատրաստ էր նա խեղճուկին սպանել,
Թէ աչքէն իսկոյն չի շտապէր փախչել։

—

Տակաւին Մարիամ տունը չի թողած,
Մընաւ իր խուցը, սև օրը սրգաց.
Եւ ապա հալաւ, զարդք ու ակնեղէն
Փաթթեց կապոցքում, ու փախաւ տընէն։

—

Շատ գնաց, գնաց. իրիկուայ պահուն
Տեսաւ դաստակերտ մի նա հեռուում,
Ուզաց ներս մրտնել. սակայն կանգ առաւ,
Կոշտ մըշակների վարմունքէն վախցաւ,
Ու փոխեց ճանփան. մրտաւ մէկ անտառ
Ու մոլորուեցաւ նորա մէջ իսպառ.
Այնտեղ շատ օրեր նորա սընունդն էր
Ջուրը ակբիւրի, վայրի պըտուղներ։
Երեք-չորս շաբաթ նա այդ անտառում
Օր ու գիշեր էր լալով թափառում.
Եւ երբ անտառի սահմանին հասաւ,
Ճանապարհի վրայ սատկած էշ տեսաւ,
Հանեց դանակը, ու քերթեց էշին,
Ու վերան հագաւ նորա կոշտ կաշին,
Որ մարդիկ նորան դըշխոյ չի ճանչնան,
Այլ մէկ հասարակ աղախին գիտնան.
Բայց իր զարդերը, զգեստը թանգագին
Միշտ ծալած, փաթթած, պահած էր մօտին.

Եւ եկաւ այսպէս աղքատին հագուած
Մէկ գեղեցկաշէն դարպասի դիմաց.
Խնդրեց, պաղատեց նա կողկողագին
Որ առնուն նորան տան մէջ աղախին։
«Այժմ աղախին, ասին մեզ պէտք չէ.
«Կուզես գընա դաշտ, այծեր արածէ՛»։
Եւ դըշխան մուտցաւ ծընունդ իւր ազնիւ
Ծըռեց վիզն, եղաւ այծերու հովիւ։
Եւ ամենայն օր ցրտին կամ տօթին
Արածեցնում էր այծերն արօտին։
Դրսանց այնպէս էր տրգեղ, անվայել,
Որ ոչ մի գեղջուկ չուզէր վրան նայել.
Ամբողջ օրերը դաշտերն էր շրջում
Ու տրտմութենէն լալիս, հառաչում,
Կարօտ էր քաշում իւր քըրոջ, եղբօր
Եւ իւր սիրական, թէև անգութ հօր։

—

Մի օր էլ կարօտն այնպէս սաստկացաւ,
Որ համբերելու էլ չրկարացաւ,
Եւ իւր մանկութեան օրերու նըման
Ուզաց զարդարուել գէթ էլ մի անգամ.
Այդ դիտմամբ տարաւ այծերուն հօտը
Ձորի մէջ հոսող աղբիւրի մօտը
Ծառնորակ ջրի մէջ լըւացուեցաւ,
Արուսեակ աստղին նա նըմանեցաւ,
Գըռուղ ծամերը ու գէսը ծածան,
Լեռն ի վայր թափուող ջրի էին նըման.
Մատներին մատնիք ու վրդին մանեակ
Ձողչողում էին ինչպէս տրեգակ։
Երբ վրճիտ ջրի մէջը նայեցաւ,
Իր գեղեցկութեան շատ ըզմայլեցաւ,

Եւ հայրենաւանդ անուշ տաղերով
Այն օր մեղմացուց իւր սրտին գ՞որով.
Դադրեցան այծեր, ուլեր արածել,
Ըսկըսան նորա մեղեդին լըսել....
Մինչ այս ու մինչ այն՝ մութն եկաւ, կոխեց,
Եւ Մարիամը զգեստները փոխեց.
Բայց այդ միջոցին երևեցաւ նորան
Մի մատաղահաս գեղեցիկ իշխան.
Որ թափառելով՝ սար ու ձորերում
Այդ օրուայ որսի էրկ էր պտրում,
Եւ մի թաւ թըփի ետևը պահուած,
Մարիամի վրայ նայում էր զմայլած.
Բայց երբ աղջիկը իշխանին տեսաւ,
Վախից, ամօթից խիստ շառագնեցաւ.
Ժողովեց շտապով զգեստն ու գարդերը,
Թողեց ձորի մէջ ուլերն, այծերը,
Հապճեպով դէպի դարպասը գընաց։
Բայց մուճակներէն մին այնտեղ մընաց.
Եւ այդ մուճակը այնպէս նազուք էր,
Որ նորա նման ոչոք տեսած չէր.
Իշխանը կռացաւ ու գետնէն առաւ,
Ու համբուրելով հետը տուն տարաւ։

—

Եւ այդ իսկ օրից սիրահարուեցաւ,
Սեամաղձ կոչուած չար ցաւը ստացաւ.
Թէ իւր արթնութեան և թէ՛ երազում
Միշտ այդ հովուուհու պատկերն էր տեսնում,
Եւ դիշեր ցերեկ նորա ականջին
Ձայներ էր լսում աղջկայ երգին։
Հազար մունետիկ չորս կողմ ցրուեցան,
Ամեն ծակուծուկ շատ քրքրուեցան,

Բայց դատարկ ձեռքով դարձան մարդիկը—
Աւաղ, լոյս չեկաւ սիրուն աղջիկը։
Երբ այս հնարներն էլ զուր, ունայն կորան,
Իշխանը տրւեց այսպիսի հրաման,
Թէ որ կին մուճակն այս ոտին հագնի,
Իսկոյն իշխանի կինը կըլինի։
Կանայք, աղջըկունք շատ ուրախացան,
Ամենքը մեծ-մեծ յուսով լըցուեցան
(Ո՞ր կին չի կարծում իրեն արժանի
Կինը լինելու հըզօր իշխանի.)
Ամեն կողմերէն շտապով վազեցին,
Ոտները մուճակ խըրել փորձեցին.
Բայց, աւաղ աւաղ, ոչ թէ ոտերը,
Մուճակ չի մըտած նաև մատերը,
Տուն վերադարձան ամենքը ցաւած,
Ասելով՝ «մուճակն շատ վատ է ձևած»։
Բայց սևամազը մատաղ իշխանին
Արագ մօտեցնում էր գերեզմանին,
Եւ բացի հրաշքէն ոչ ճար, ոչ հընար
Կար աշխարհքիս մէջ այդ խեղճի համար։
Յանկարծ ծառաներն եկան պատմեցին,
Թէ մէկ հովուուհի ունի դրացին,
Որ դեռ մուճակը ոտին չափած չէ՛,
Ու չափելու էլ սաստիկ կ'ամաչէ։
Իշխանն հրամայեց. հովուուհին եկաւ
Ու իսկոյն մուճակն իւր ոտին հագաւ։
Պալատականքը զարմացած մնացին,
Ու կըծու ծաղրով շնորհաւորեցին.
Բայց երբ իշխանի ծընողք իմացան
Այդ բոլոր անցքը՝ սաստիկ բարկացան,
Եւ լըսել անգամ չէին կամենում,
Որ հարս տուն բերեն կեղտոտ հովուուհուն։

Մարիամի հոգին խիստ վրդովեցաւ,
Աղնիւ արիւնը մէջը խօսեցաւ,
Իշխանի ծնօղին ասաց նա հեզիկ
«Չը գիտնաք դուք ինձ հասարակ աղջիկ,
«Այծեր արածել իմ արուեստը չէր,
«Ինչպէս կարծում էք, ծննդենէս ի վեր,
«Միայն կոյր բաղդը այդպէս կամեցաւ
«Եւ դշխոյ Մարիամ հովուուհի դարձաւ.
«Զգեստս փոխելու թէ տաք ժամանակ,
«Իմ ով լինելը դուք շուտ կիմանաք».
Պալատականքը լիրբ ու բարձրաձայն
Դարձեալ Մարիամի վրայ ծիծաղեցան։

—

Բայց Մարիամ գընաց հեռաւոր սենեակ
Ու մընաց այնտեղ մի կարճ ժամանակ,
Եւ երբ այնտեղից նա վերադարձաւ,
Բոլոր ժողովուրդն սաստիկ զարմացաւ,—
Կեղտոտ հովվուհին էլ չիկար այնտեղ,
Բազմականների առջև նորա տեղ
Կանգնած էր չքնաղ դէմքով մի աղջիկ,
Վրայի հալաւը ճոխ ու գեղեցիկ,
Ոտից մինչ գլուխ ոսկի ու գոհար
Ցոլում ու փայլում էին վառ ու վառ։

—

Այս հիանալի պատկերն որ տեսան,
Այնտեղ գտնուողք ամենքն զարմացան,
«Ահա իսկական դշխոյ, ասացին,
«Եւ արժանաւոր հարս մեր իշխանին»։
Իշխանը շտապեց իւր կամքը յայտնել,
Որ դորան ուզում է իւր կին անել։

Բայց Մարիամ նորան տալեց պատասխան.
«Քու կինը կը լինիմ, իմ հրգոր իշխան,
«Ես այն ժամանակ, երբ իմ ծընողը
«Իր սրտէն հանէ դէպի ինձ ոխը,
«Իմ հարսանիքին գլանալի ներկայ,
«Եւ իր հայրական օրհնէնքը ինձ տայ»։

—

Իսկոյն դեսպաններ հօրը գընացին,
Դրշխոյի պսակին գալ հրաւիրեցին.
Բայց, աւաղ աւաղ, շատ օրեր չանցան.
Դեսպանք գլխակոր, տրրտում յետ դարձան։
—Ինչու՞ էք տրխուր, հարցուց աղջիկը։
—Շատ տարաբաղդ է քու խեղճ հայրիկը,
Ասացին դեսպանք, գետնին նայելով,
Աչքերից առատ արցունք թափելով,
Քու խեղճ ծընողը խելագարուած է,
Ցուրտ, գիճին բանդի մէջ արկելուած է.
Հարազատներդդ նորան խաբել են,
Ձեռքից ամեն բան յափշտակել են,
Եւ երբ քու հայրը դանդատ է արել,
Առել են նորան ու բանդ են դրրել,
Բանդի դրռները ամուր են փակած,
Պահապաններով բանդը շուրջ պատած։
Մարիամ լրսելով այս պատմութիւնը,
Դառրն ողբաց հօր թշուառութիւնը,
Փեսայ ու պրսակ նա մրտքէն հանեց,
Ծընկերը կոծեց, հոգ գլխուն ցանեց,
Եւ չրդադրեցուց իւր արցունքն ու լաց, —
Այսպէս նա իւր հօր սև բաղդը սրգաց։

—

Փեսան ուզում էր Մարիամին սփոփել,
Հօր անբաղդութեան վրէժը հանել.
Մարիամ լոկ խօսքով սփոփուել չէր ուզում,
Միշտ ու հանապազ այսպէս էր ասում,
«Մինչև իմ հայրը բանդէն չազատի
«Ու նորից փառքով գահը չի նըստի,
«Եւ հոգւով մարմնով չի առողջանայ,
«Հարսանիքիս օրն ներկայ չլինի նա,
«Թէկուզ իրարով գան երկինք գետին—
«Բընաւ լինելու չեմ ես քո կին»։

—

Ցեղից վեր թըռաւ քաջ իշխանորդին,
Բազմաթիւ զօրքեր ժողովեց չորս-դին,
Զէնք ու զրահով սպառազինեցաւ,
Դաւաճանների վրայ օրլացաւ,
Նենգութեամբ տիրած աշխարհքէն փախցուց
Ու հարսի հօրը գահը նըստեցուց։
Թէև խելագար էր խեղճ ծերունին,
Բայց չէր տակաւին անցել մէկ տարին,
Մարիամը այնքան ջանաց, աշխատեց,
Որ այդ ցաւէն էլ հօրը ազատեց։

—

Էլ ոչինչ խափան չիկար պայմանին
Քաջ իշխանորդու ու հեզ Մարիամին.
Հարսանիքն եղաւ ճոխ ու մեծածախ,
Բոլոր հիւրերը էին շատ ուրախ,
Զուլթակ ածեցին, փողեր փըչեցին,
Զանգեր քառասուն օր հնչեցուցին։

—

Եւ իմ հէքիաթը ահա վերջացաւ։

—

Երկընքէն երկու խընձոր վայր ընկաւ,
Մէկը լըսողին,
Մէկը պատմողին,
Զօփն էլ հէքիաթիս ականջ չիդնողին։

Գամառ-Բոքիպա

Այս ոտանաւորը մենք հանում ենք հանգուցեալ բանաստեղծի ձեռագիր տետրակից, որ Պ. Գրիգոր Զալխուշեանը ամենայն սիրելութեամբ դրեց մեր տրամադրութեան տակ։ Այդ տետրակը, որ 1881 թուին տպագրուած բանաստեղծութիւններ հատորիկի հետ միասին ամփոփուած է մի կազմի մէջ, ունի իւր վերջ հետևեալ համառօտ վերջաբանը՝ «Միայն այս տարի, այսինքն՝ 1885 Սեպտեմբերի 18-ին սկսեցի թղթերիս մէջ ցրիւ ընկած ոտանաւորներն ժողովելու. իսկ մինչև այժմ ես ամենևին հոգս տարած չէի այդ մասին, և այդ պատճառաւ հարիւրաւոր ոտանաւորներ անդարձ կորած պիտի համարել բարեկամաց և ծանօթներիս մօտ»։

Ն. Շահազիզ



ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Տ. Ս. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՊԱՐԹԵՒ

1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ

Արիստակէս Լուսաւորչի և Մարիամու կրտսեր որդին է։ Իւր ծննդեան թուականը դրինք արդէն 364-ին, և ըսինք ևս թէ իւր հօր մեկնելէն յետոյ մնաց մօրը խնամքին ներքև և անոր հետ վանք առանձնացաւ և ասլահով ապաստանարան գտաւ։ Մօրը հետ մնաց մինչև արբունք հասնելը, այսինքն շուրջ 15 տարեկան լինելը, և յետոյ աշակերտեցաւ Նիկոմաքոս անուն ճգնաւորի մը. և երբ աշակերտութիւնը վերջացաւ, իրեն համար առանձին ճգնարան ունեցաւ և շուրջը աշակերտներ հաւաքեց։ Ի հարկէ այդ ամենը Կեսարիոյ շրջակայից մէջ կատարուեցաւ։

Արիստակէսի վրայ ուրիշ տեղեկութիւն չունիմք

մինչև այն ատեն, որ Տրդատայ հրաւէրով Հայաստան եկաւ և եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և իւր հօր օգնական եղաւ։ Այս պարագայն ալ արդէն 306 թուականին կատարուած հաշուեցինք, Արիստակէսի 42 տարեկան եղած ատեն։ Որովհետև Արիստակէս լոկ անապատաւոր և միայնաւոր կը ճանչցուի, ուստի պէտք է ըսել թէ Կեսարիա եղած ատեն եկեղեցականութեան մտած չէր, և քահանայութիւնն ու եպիսկոպոսութիւնը ալ հաւասարապէս իւր հօրմէն ստացաւ։ Այն ժամանակ աբեղայութիւնը լոկ կրօնաւորութիւն էր առանց եկեղեցական աստիճանի։

Իւր հօր կենդանութեան ժամանակ Արիստակէս ամենայն ինչ եղած է, զի Լուսաւորչի տկարութեան և տառանձնասիրութեան պատճառաւ բոլոր հովուական հոգեր որդւոյն վրայ ծանրացած էին. այսու հանդերձ մասնաւոր կերպով պատուած պարագաներ չունիմք. իբր զի ամենայն ինչ Լուսաւորչի անունով կը գործուէր։ Ապա թէ ոչ պէտք է ճանչնալ թէ այն ժամանակի հաւատոյ կանոններ, բարեկարգութեան սահմաններ և բարոյական ուղղութիւններ՝ բոլորն ալ Արիստակէսի աշխատութեամբ հաստատուած են մեր եկեղեցւոյն մէջ։

Արիստակէսի նկարագրին իրր գլխաւոր գիծեր պէտք է նկատել արտաքին ճգնաւորական կերպարան՝ անշուք և անփառունակ, զծուած և ծաղրելի երևնալու չափ ոմանց աչքին. իսկ ներսէն նախանձախնդիր և խիստ հոգի՝ առանց աչառանաց և առանց երկիւղի. ճշմարտութեան և բարեկարգութեան խստապահանջ պաշտպան. զեղծումներու և զեղծեալներու դատապարտող և յանդիմանող։

Արիստակէսի կեանքին և մեր եկեղեցւոյն պատմութեան համար նշանաւոր կէտ մ'է Նիկիոյ ժողովոյն մէջ նորա ներկայութիւնը։ Մեզի հասած ժողովական հարց

ցուցակներուն մէջ ևս կը յիշուի Հայոց Մեծաց աշխարհէն սուրբ հայր մը. թէպէտ անունը ցուցակներու մէջ այլայլած երևնայ, այսինքն Արիստակէսը՝ Արիստարկէս կամ Արիստեկիսոս եղած։ Ըստ մեզ նոյն ինքն Արիստակէսն է նաև ուրիշ ցուցակի մը մէջ նշանակուած Արսափիոս Ծոփաց եպիսկոպոսը, զի նոյն ցուցակը Մեծ Հայքէն ուրիշ անուն չյիշեր։ Անուններու աղաւաղումը գրչագիրներու մէջ ստէպ հանդիպած մի բան է։

Թէպէտ Արիստակէս Մեծ Հայոց աշխարհէն կ'ըսուի, այլ ուղղակի Մեծ Հայոց եպիսկոպոս չկոչուիր, և ոչ ալ Մեծ Հայոց եպիսկոպոս Գրիգորի փոխանորդ կը կոչուի։ Թէպէտ ուրեք Դեսոպոնտոսի և ուրեք Թրենիոյ եպիսկոպոս կոչուած է, այլ ասոնք յետ և յառաջ անուններու հետ տեղի ունեցած պարզ շփոթութիւններ են, և ընտրելագոյն է Ծոփաց Եպիսկոպոսի կոչումը զոր ուրիշ օրինակներ կուտան։ Արիստակէսի Ծոփաց մէջ սպանուիլը, Ծոփաց մէջ ստէպ շրջելը, Ծոփաց մէջ Խոզանի (այժմ Խոզաթ) եկեղեցին շինելը (Ասողիկ. եր. 64), իրաւունք կուտան հետևցնելու թէ Ծոփաց աշխարհը Արիստակէսի նախնական և սեփական վիճակը եղած էր։ Ծոփաց աշխարհին կարևորութիւնն ալ այդ մեկնութիւնը կ'արդարացնէ։

Արիստակէսի Նիկիոյ ժողովին երթալուն յարակից պարագաներէն յիշենք նախ, թէ Պարսից Յովհաննէս և Մծբնայ Յակոբ և Եդեսիոյ Եւթաղ եպիսկոպոսները ուղեկից ունեցաւ մինչև Կեսարիա, թէ Գրիգոր Աստուածաբանի հօր Գրիգորի մկրտուելուն ներկայ եղաւ ի Նազիանզ Ղևոնդիոսի հետ, թէ Կեսարիայէ անդին Կեսարիոյ Ղևոնդիս եպիսկոպոս ևս ուղեկից ունեցաւ։ Կը պատմուի ևս թէ Նիկիոյ լիճին եզերքը Արիանոս տեղացիներ սկսան Արիստակէսը ծաղրել իւր անփառունակ կերպարանքին համար իբր սոսկական մշակ մը

նախատելով զնա, և թէ Արիստակէս եղներով լծուած արօր մը համարձակ լիճին վրայ տարաւ և ջուրը հերկելով անվտանգ դուրս ելաւ։

Ժողովական գործողութեանց մէջ Արիստակէսի յատուկ յիշատակութիւն մը չունիմք, միայն թէ իբրև Լուսաւորչի զաւակ և իբրև առաքելանման հովիւ Կոստանդիանոս կայսեր և բոլոր եպիսկոպոսակից հայրերու կողմէն ընդհանուր յարգանաց առարկայ եղած լինելը պատմուած է։

2. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ

Ժողովէն դառնալէն ետքը Արիստակէս իրապէս և պաշտօնապէս հայրապետական աթոռը ստանձնեց. վասն զի նոյն միջոցին վախճանեցաւ Ս. Լուսաւորիչը, ինչպէս պատմութեանս առաջին մասին մէջ բացատրեցինք և ճշդեցինք։ Ասողիկ կ'ենթադրէ թէ այդ առթիւ Արիստակէս Կեսարիա գացած լինի ձեռնադրութեան համար (եր. 63)։ Սակայն Սկզբնական պատմութիւններ, և ոչ իսկ Բիւզանդը, այսպիսի բան մը չեն պատմեր. Արիստակէս եպիսկոպոսական ձեռնադրութիւն ունէր, և Նիկիոյ Ժողովին ներկայ եղած էր իբր եպիսկոպոս, և հայրապետական պաշտօնն ալ արդեամբ կը վարէր, ուրեմն առանց նոր ընտրութեան անզգալի կերպով մը Աթոռին բուն տէրը դարձաւ։ Ձեռնադրութիւնը եպիսկոպոսական աստիճանին համար պէտք էր, և եպիսկոպոսութենէ հայրապետութեան անցնիլը ըստ հին սովորութեան նոր ձեռնադրութիւն չէր պահանջեր։ Հետեւաբար Արիստակէսի Կեսարիա երթալը ընդունելի չէ կարող լինել։

Արիստակէսի հայրապետութեան տևողութիւնը 7 տարի ըսուած է Խորենացիէն (եր. 378) և մեք հարկ

չեմք տեսներ այդ տևողութիւնը փոփոխել։ Միայն թէ ոչ ևս կարող եմք այդ եօթնամեայն սկսել 333 էն, ինչպէս կ'ընէր հին հաշիւը, այլ 326 էն սկսելով կը լրացնեմք 333 ին։ Առ այս բաւական լինին որչափ ինչ Լուսաւորչի մահուան վրայ գրեցինք։

Այդ թուականներու փոփոխութեան պատճառով պէտք է Արիստակէսի ժամանակ դնել Տրդատայ մահը և Խոսրովու յաջորդելը, որք տեղի ունեցան 330 ին։ Խորենացին այդ պարագայն Վրթանէսի կուտայ (Բ. եր. 10), բայց Բիւզանդ Վրթանէսի հայրապետութիւնը Խոսրովու թագաւորելէն յետոյ կը դնէ (եր. 6.). պատմական ուրիշ դիպուածներ հակառակութիւն չեն կրեր, և թղթակցական յարաբերութիւնք աւելի դիւրութեամբ կրնային կատարուիլ Արիստակէսէ, որ Կոստանդիանոսը անձամբ ճանչցած էր Նիկիոյ ժողովին առթիւ։ Թէպէտ և Խորենացին Կոստանդի կը վերագրէ Խոսրովի հաստատութիւնը, այլ Կոստանդիանոս 337 ին մեռած լինելով, անհնար է մինչև այն ատեն հասցնել Տրդատայ մահը, որ այդ ենթադրութեամբ 100 տարեկան մեռած պիտի ըսուէր։ Հաստատութիւնը Կոստանդիանոսի ժամանակ ընդունուած ատեն, ինչպէս ընդունած է և Արծրունին (եր. 58), աւելի յարմար է միջնորդի դերը Արիստակէսի տալ, Կոստանդիանոսի հետ անձնական ծանօթութեան համար, ինչպէս արդէն դիտել տուինք։

Պատմութիւնը շատ աղքատ է Արիստակէսի հայրապետական գործունէութեան մանրամասնութեանց նըկատմամբ, և մեք չեմք կարող ենթադրական պարագաներով զարդարել զայն։ Գլխաւոր պարագայն իւր նախանձայոյզ ընթացքն է։ Արքունիքը, աւագանին և երկրին բարձրագոյն դասակարգը չկրցաւ իսկոյն հրաժեշտ տալ հին հեթանոսական սովորութեանց. և նախկին զեղծումները կուզէր նոր դաւանութեան պատուաստել։ Արիս-

տակէս տղայութենէ քրիստոնեայ սննդեամբ ճգնաւոր և խստակրօն սկզբանց տէր, չէր կարող անտարբեր մնալ։ Նոյն ինքն Տրդատ չէր կարողացած ներել. և ոչ իսկ արքունական ազդեցութեամբ քրիստոնէական բարեկարգութիւնը զօրացնել, և նահատակ եղած էր իւր բարեկրօն սկզբանց։

Արիստակէս ալ նոյն վախճանը ունեցաւ և բռնական մահուամբ կեանքը վերջացուց։ Իրաւ անհատական դաւաճանութեան զոհ եղաւ, բայց ոչ նուազ ստոյգ է թէ զոհ եղաւ իւր նախանձայոյզ եռանդին։ Արիստակէս կը գտնուէր Ծոփաց երկիրը, ուր բդեաշխ էր Արքեղայոս, այն նախարարներէն մին, որք աւելի հրաւիրած էին վրանին սրբոյն կշտամբանքները։ Պէտք է ենթադրել թէ լոկ կշտամբանքէ աւելի բան մը ըրած ըլլալու է Արիստակէս, թերևս բանադրանքի կամ նզովքի սաստն ալ գործադրեց, որ Արքեղայոսի արիւնախանձ վրէժխնդրութեան հանդիպեցաւ։ Խորենացին կը գրէ. «Պատահեալ ի ճանապարհի սպան զնա սրով» (եր. 378), իսկ Բուզանդ Արիստակէսի խոստովանողական մահը կը յիշատակէ (եր. 6).

Արիստակէս թաղուեցաւ Եկեղեաց գաւառի Թիլ գիւղը։ Չեմք գիտեր թէ Ծոփաց որ կողմը պատահեցաւ սպանութիւնը, և հետևաբար չեմք կարող ճշդել թէ մօտաւոր կամ հեռաւոր տեղէ մը բերուեցաւ մարմինը։ Թիլ բերուելուն պատճառը կուտայ Բիւզանդ կոչելով զայն «կալուած Գրիգորի հօրն իւրոյ» (եր. 6)։ Թիլի գերեզմանը մեզի փաստ կը լինի ըսելու թէ դեռ չըկայր Լուսաւորչի գերեզմանը ի Թորդան, թէ ոչ այնտեղ թաղուած կը լինէր Արիստակէսն ալ։ Անտէր և ամայի վանք մ'է այսօր Արիստակէսի գերեզմանը Երզընկայի դաշտին մէջ Թիլ գիւղի մօտ, Զուխտակ Հայրապետ անունով ճանչցուած։

Արիստակէսի ծնունդը եղած էր ի Կեսարիա, հաւանաբար 264 ին, իւր Հայաստան գալը դրինք 306 ին, ելբ 42 տարեկան էր, որ կը լինի նաև իւր եպիսկոպոսանալուն ալ թուականը։ Լուսաւորչի մահուանէ յետոյ հայրապետ հռչակուիլը դրինք 325 ին վերջը 62 տարեկան եղած ատեն, խոստովանողական մահն ալ տեղի ունեցաւ 333 ին 69 տարեկան եղած ատեն։

Արիստակէսը կուսակրօն էր, և Լուսաւորչի սերունդը միակ գիծով շարունակեց Վրթանէսի կողմանէ, որովհետև այս երկուքէն զատ ուրիշ զաւակ չիշեր պատմութիւնը։

Տ. Ս. ՎՐԹԱՆԷՍ ՊԱՐԹԵՒ

3. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ

Վրթանէսի նախընթաց կեանքին վրայ ունեցած տեղեկութիւններս Արիստակէսէ աւելի չէ։ Ծնունդը եղաւ Կեսարիա 261 ին. և իւր հօր մեկնելէն յետոյ մնաց աշխարհական վիճակի մէջ, և ամուսնացաւ, հարկաւ 280 թուականէ ետքը։ Բուզանդ կը պատմէ թէ երկար ատեն անորդի մնաց. և «ի Ծերութեան» ազօթքի զօրութեամբ երկուորեակ զաւակներու տէր եղաւ (եր. 10)։ Ծերութեան տարիքը պէտք չէ բառացի կերպով իմանալ, զի այնուհետև դժուարին կը լիներ իւր սերնդոց հաշիւը գտնել, և մինչև Սահակ, որ 350 ին ատենները պէտք է ծնած լինի, չորս ծնունդներու համար գոնէ 70 տարուան միջոց զետեղել։ Հետևաբար բաւական կը սեպեմք ըսել թէ իբր 15 տարի անորդի մնաց Վրթանէս և 295 ին ունեցաւ Գրիգորիս և Յուսիկ երկուորեակ զաւակներ։

Վրթանէսի զբաղանքն ևս մեզի անյայտ մնացած

է։ Ոմանք կարծեցին թէ Կեսարիոյ մէջ քահանայութեան կոչուած ըլլայ, այլ մեք կը կարծեմք թէ Վրթանէսի տրուած երէց բառէն ծագած է այդ շփոթութիւնը. և այն որ անդրանիկ լինելը բացատրելու համար տրուած է, քահանայ իմաստով առնուած է։ Եւ ոչ մի պատմական հանգամանք չնպաստեր Վրթանէսը. Կեսարիոյ մէջ քահանայ եղած ենթադրելու։

Հայաստան գալը Արիստակէսի հետ միատեղ եղաւ. և եթէ Արիստակէս կրօնաւորական կեանքին համար նախապատուուեցաւ և առաջ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, Վրթանէս ալ եկեղեցականութեան մտած է իւր հօր ձեռնադրութեամբ, թէպէտ աւելի ուշ։ Միւս կողմանէ անհընարին է չտեսնել Վրթանէսի կեանքին մէջ քաղաքական գործերու հետ ունեցած յարաբերութիւնները, որ հետևանք է անշուշտ իւր ընդունակութեան, այլ և փորձառութեան։ Հետևաբար մեզի համար շատ պարզ է որ Վրթանէս եկեղեցականութեան մտնելէ առաջ և յետոյ, պետական և քաղաքական գործառնութեանց մէջ պաշտօնական դեր ունեցած է։

Սակայն Վրթանէսի գործունէութեան լիշատակութիւնը կը սկսի իւր եղբօր մահուանէ ետքը։ Երբ Արիստակէս նահատակուեցաւ, ոչ միայն Լուսաւորչի զաւակներուն սէրը, այլ և Վրթանէսի անձնական արժանեաց հաւաստիքը համոզեցին բոլոր ազգը որ Վրթանէս կաթողիկոս հռչակուի 333 ին 72 տարեկան հասակին մէջ Խոսրով Կոտակի թագաւորութեան երրորդ տարին։

4. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Ամեն պատմագիրներ կը լռեն Վրթանէսի ձեռնադրութեան պարագայն և ուր նոքա կը լռեն, աւելորդ է ենթադրական պարագաներ ստեղծել. ուստի պէտք է

ընդունել թէ Վրթանէս Կեսարիա գացած չէ ձեռնադրութեան համար։ Նշանաւոր է մանաւանդ Բուզանդի լռութիւնը (եր. 6), որ ուրիշ առիթներու մէջ ամենայն փութաջանութեամբ կաշխատի Կեսարիոյ աթոռին զանազան պատիւներ և իրաւունքներ վերագրել։ Ձերթալուն պատճառն ալ յայտնի է, զի Վրթանէս, եթէ ոչ առաջ, գոնէ Լուսաւորչայ վերջին ժամանակին և Արիստակէսի Նիկիա երթալուն առթիւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն պէտք է առած լինի։

Կրնայ ընդունուիլ թէ առանց Կեսարիա երթալու, Վրթանէսի կաթողիկոս լինելուն առթիւ Կեսարիոյ աթոռոյն դիմում եղած լինի։ Այդպիսի յարաբերութիւնք սովորական էին հին ժամանակները մեծ աթոռներու մէջ, որոց աթոռակալներ իրենց ընտրութենէ յետոյ դիմացէ դիմաց սիրոյ և հաղորդութեան գիրեր կը փոխանակէին, իրենց դաւանութիւնն ալ բացադրելով, իբրև հիմն քրիստոնէական սիրոյ և հոգևոր հաղորդութեան։ Բայց այդ յարաբերութիւնք բնաւ իշխանութեան նշանակութիւն չունէին և ոչ իրարու վրայ տիրապետութիւն կը ցուցնէին։

Վրթանէսի հայրապետութեան առաջին օրերը կըրնան խաղաղական կոչուիլ, թէպէտ երկարատև եղած չլինին։ Խոսրովու և Վրթանէսի ժամանակ երկրին մէջ տիրող երանաւէտ խաղաղութեան և աշխարհաշէն ձեռնարկութեանց վրայ Բուզանդի գրածը (եր. 7), այդ միջոցին կը պատկանի, վասն զի քիչ ետքը երկիրը սկսաւ նեղուիլ ներքին ապստամբութիւններով, որոնց անմիջապէս յաջորդեցին պարսկական պատերազմներ, որք սկսան 337-ին, Կոստանդիանոսի մահուան տարին, և 297-ին դաշնադրեալ քառասնամեայ խաղաղութեան աւարտելուն առթիւ։

Այդ շփոթութեանց մէջ Վրթանէս ալ Խոսրովի

հետ յոգնեցաւ և աշխատեցաւ և խաղաղութիւն վերահաստատելու ջանքերուն գործակցեցաւ։ Իւր անունը յիշուած կը տեսնեմք Որդունեաց և Մանաւազեանց եղբայրասպան կռուոյն մէջ (Բուզ. 9.), Սանատրուկի կամ Սանեսանի նուաճման մէջ (Բուզ. 17), Բզնունի Դատաբենի ապստամբութեան առթիւ (Բուզ. 19), Ռշտունի Մանաճիրհի տարապարտ վրէժխնդրութեան խնդրոյն մէջ (Խոր. 16), ևս և Պարսիկներու դէմ եղած պատերազմներուն մէջ (Բուզ. 26), այնպէս որ անհակառակ կարող եմք ըսել, թէ Վրթանէս աշխարհավար արդիւնքներով ալ պայծառացաւ ոչ նուազ քան եկեղեցական աշխատութիւններով։

Այդ տեսութեամբ իրարմէ կարի տարբեր են Ս. Լուսաւորչի երկու զաւակները. և գուցէ այդ տարբերութեան հետևանք է որ պատմութիւնն ալ անխտիր ամեն քաղաքական գործունէութիւն Վրթանէսի կը վերագրէ, առանց ի նկատ առնլու ժամանակագրական պահանջները։ Արդէն յիշեցինք թէ ինչպէս Խոսրովու թագաւորելուն համար հայրապետական միջամտութիւնը ժամանակագրական կարգով Արիստակէսի կը պատկանի, մինչ Խորենացին զայն Վրթանէսի կուտայ, թէպէտ միւս կողմանէ Բուզանդ Վրթանէսի հայրապետութիւնը Խոսրովու թագաւորելէն յետոյ կդնէ։

Կը կարծեմք թէ պատմական ստուգութիւն մը հաստատած կը լինիմք եթէ ըսեմք, թէ կանուխէն ալ Վրթանէս պետական և վարչական պաշտօններով զբաղած էր արքունիքին մէջ։ Արդէն իւր զաւակներէն Յուսիկ, իւր թոռները Պապ և Աթանագինէ, և իւր թոռնորդին Ներսէս, պալատական և զինուորական զբաղմանց հետևած են, միայն Գրիգորիս կայ Արիստակէսի կրօնաւորութեան հետևող։ Այդ տեսութեան կը նպաստէ անշուշտ Լուսաւորչի արքայազարմ տունէն

լինելը, և նոյն իսկ Լուսաւորչի պալատական զբաղմանց կեանքն անցնելը։

Վրթանէսի եկեղեցական հոգատարութեանց մէջ յիշատակութեան արժանի է Մակար Երուսաղեմայ հայրապետին հետ յարաբերութիւնը. և ինչ ինչ խնդրոց համար նմին ուղղած հարցումները, և Մակարի պատասխանները, որք «Կանոնք Մակարայ» անուամբ և 9 գլուխներու բաժնուելով կանոնագիրքին մէջ անցած են Օձնեցւոյն ձեռօք (Կան. եր. 80)։ Մակար Երուսաղեմացին 314-ին աթոռ բարձրացած և 334 ին մեռած լինելով, այդ թուականն ալ կը պարտաւորէ զմեզ մինչև 340 չտանել Վրթանէսի կաթողիկոսութեան սկիզբը, ինչպէս կրնէ հին հաշիւը։ Վրթանէս Մակարի հետ թղթակցած լինելու համար, պէտք է գոնէ 333-ին հայրապետութեան աթոռը նստած լինի, ինչպէս որ մեք ևս գրինք։

Գեղեցիկ յիշատակ մը ևս ունիմք Բուզանդէ պահուած։ Պարսից պատերազմին մէջ բաւական մեծ կորուստներ տուեր էին Հայոց զաւագանին և բանակը. Վաչէ Մամիկոնեան սպարապետն ալ կռուոյն մէջ մեռած էր և մեծ սուգ կար երկրին մէջ։ Վրթանէս սկսաւ ժողովուրդը մխիթարել հոգևոր խրատներով. նկատել տուաւ թէ Պարսից նպատակն էր յաղթութենէ յետոյ իրենց կրօնքին բռնադատել Հայերը, ուստի պատերազմին մէջ մեռնողներ եկեղեցւոյ և հաւատոյ համար արիւն թափած են. և «Ընդ վկայս Քրիստոսի է նոցա համար պատուոյ»։ Այդ պատճառով «Եդ օրէնս ընդ աշխարհն՝ մեծ քահանայապետն Վրթանէս զնոցա առնել յիշատակ ամ յամէ, և որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա, եդ կանոն յիշել զսոսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ի ժամ պատարագին, յորժամ զանուանս սրբոցն կարգի-

ցեն, և ապա զկնի նոցա զնոցայն (եր. 26—28)։ Վաչէեանց տունը այժմ չկայ, այլ յետագայ նմանօրինակ յիշատակելոց հետ միացած և այժմեան Վարդանանց տունը եղած է, և այդ տունին տրուած *ազգային տուն* կամ *ազգային յիշատակ* կոչումը այս կերպով իւր արդարացումը կը գտնէ։

5. ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ՄԱՀ

Քաղաքական դէպքերու շարքը կազմել մեր նիւթէն դուրս է, և միայն եկեղեցական պատմութեան յարակից մասերը քաղելով կը բաւականանամք։ Ընդհանուր խռովութիւնը սկսած էր երկրին մէջ գլխաւորապէս երկու ապստամբ բդեշխներուն երեսէն, Փայտակարանի Սանատրուկը կամ Սանեսանը հիւսիսէն, և Աղձնեաց Բակուրը հարաւէն։ Ասոնց ետևէն Պարսից բանակն ալ ներս մտաւ, և Դատաբեն Բգնունի սպարապետն ալ անոնց կողմն անցաւ։ Այդ էր երկրին վիճակը 337-ին։ Խոսրով փոփոխ բաղդով մրցեցաւ անոնց հետ Վրթանէսի խորհրդակցութեամբ. և Վաչէ Մամիկոնեան, Վահան Ամատունի, Մանաճիհր Ռշտունի, Արշաւիր Կամսարական և Անդովկ Սիւնի զօրավարներուն ձեռքով։ Խոսրով ունեցաւ մասնաւոր յաղթութիւններ, այլ չկրցաւ երկիրը խաղաղացնել և 339 ին մեռաւ յոյժ դժուար կացութիւն մը թողլով իւր որդւոյն և յաջորդին։ Առանց ուզելու վճռաբար ճշդել թէ Սանատրուկի և Բակուրի և Դատաբենի մահերը ինչ ազդեցութիւն ըրին ընդհանուր կացութեան վրայ, կը բաւականանամք դիտել տալ թէ ներքին ապստամբութիւններ և Պարսից յարձակումներ թոյլ չտուին Տիրանի իւր իշխանութիւնը հաստատել, մինչև որ վերջիվերջոյ ստիպուեցաւ երկիրն ալ թողուլ և Յունաստան ապաւինել։

Այդ միջոցին պէտք է դնել Վրթանէսի կեանքին դէմ դաւաճանութիւնը, որ հաւանաբար Խոսրովու վերջին տարին տեղի ունեցած է։ Վրթանէս կը գտնուէր Տարոն աշխարհախումբ տօնը կատարելու, որ քրիստոնէական ձև առած և յաջորդած էր հին հեթանոսական տօնին, և կաթողիկոսն ալ անձամբ ներկայ կը գտնուէր (Բուզ. 7)։ Երկու հազարի չափ լեռնականներ «ի բնակչաց Սիմ լերին» (Սոփ. 52), «ի սաղրելոյ նախարարաց» (Խոր. 4), կուզէին Վրթանէսի կեանքը դաւաճանել, այլ հրաշալի կերպով արգելուեցան, և Վրթանէս տնվտանգ անցաւ և գնաց Թիլ իւր կալուածը և եղբօրը գերեզմանատեղին։ Ըստ Բուզանդայ «Մեծի Հայոց տիկնոջն» (Բուզ. 8) մատը եղած է այդ դաւաճանութեան մէջ, այլ դժուարին է ենթադրել որ Խոսրովու և Վրթանէսի սերտ կապակցութեան միջոցին այսպիսի մի դաւաճանութիւն գործէ թագուհին։ Պէտք է ուրեմն ըսել թէ՝ Աղձնեաց ապստամբ բդեշխին կինն է ինքզինքը Հայոց Տիկին կոչել տալու և Ս. Հայրապետին դէմ ելնելու յաւակնութիւնն ունեցող դաւաճան կինը։

Խոսրովու որդւոյն Տիրանին վիճակը ևս քանզևս կը դժուարանայր ինչպէս վերև կըսէինք. Ծերունին Շապուհ նոյն իսկ իւր Ներսէհ որդին զրկած էր զօրաւոր բանակով՝ Հայոց աշխարհն ու թագը գրաւելու, և այս պատճառով Տիրան Կոստանդնուպոլիս փախչելու ստիպուեցաւ։ Վրթանէս ևս, որ յունասէր կուսակցութեան պետերէն մէկն էր, գուցէ և գլխաւոր դրդիչը սեպուած էր. պարտաւորեցաւ թագաւորին հետ ինքն ալ մեկնիլ, թէ վտանգէ խոյս տալու և թէ օգնութիւն փութացնելու նպատակով։

Տիրանի Կ. Պոլիս երթալը կը պատմէ Խորենացին (եր. 22), և անուղղակի կը հաստատուի այն Յուլիա-

նոս Կեսարին Կոստանդ կայսեր առջև խօսած ճառէն, ուր Հայոց իշխանին կամ թագաւորին փախչելը կը յիշուի առանց անունը տրուելու, և կըսուի ևս թէ պարսկական կուսակցութեան զօրութենէն ստիպուած էր նա փախչել. և թէ կուսակցութեան շահուելովը և կայսեր օգնութեամբը Հայոց թագաւորը կրցաւ վերստին իւր գահը դրաւել խաղաղութեամբ (Գաթըրճեան Բ. 463)։ Խորենացիին և Յուլիանոսին պատմածները գիրար կը լրացնեն և կը կենդրոնանան Տիրանի վրայ, և հնար չէ ուրիշ կերպով բացադրել այսպիսի նշանաւոր դիպուած մը։

Տիրանի և Վրթանէսի բացակայութեան ատեն, թագաւորութեան խնամակալն էր Արշաւիր Կամսարական որ Պարսից վրայ յաղթութիւն ալ տարաւ. այլ հայրապետութեան տեղապահը յայտնի չէ, գուցէ եղաւ Փառէն Աշտիշատի մայր եկեղեցւոյն եպիսկոպոսը որ յետոյ կաթուղիկոսութեան ալ բարձրացաւ։ Ամեն առթի մէջ այդ միջոցը երկար չեղաւ, զի Արշաւիրի յաղթութեամբ, և պարսկական կուսակցութեան տկարանալով և Կոստանդի պաշտպանութեամբ երկիրը հանդարտեցաւ և Վրթանէս և Տիրան իրենց աթոռները դարձան։

Վրթանէս ծերացեալ հասակին մէջ այդ տագնապներն ալ կրելէ և այդ յաջողութիւնը գլուխ հանելէ ետքը, այլ ևս երկար չապրեցաւ և հանգեաւ խաղաղութեամբ «չորրորդ ամին Տիրանայ» (Խոր. 24), այսինքն 341 ին։ Խորենացի 15 տարի կուտայ Վրթանէսի *եպիսկոպոսութեան*, և ամեն պատմիչներ 15 տարի տուած են Վրթանէսի կաթուղիկոսութեան։ Ըստ մեզ կարի երկարաձիգ է Վրթանէսի պաշտօնավարութեան 15 տարի տալ Արիստակէսի մահուանէ հաշուելով, ուստի աւելի յարմար կը սեպեմք ճիշդ իմաստով առնուլ եպիսկոպոսութիւնը Լուսաւորչի վերջին տարիէն, որով

7 տարի Արիստակէսի տրուած ատեն, 8 տարի միայն կը մնայ Վրթանէսի 333 էն 341։ Որդւոց և թոռանց ներբողաբանն ալ կըսէ թէ Վրթանէս կը մեռնէր «վաղագոյն հրաժեշտ խնդրելով յախտալի կենացս» (Սոփ. 18), որ գոնէ հայրապետութեան երկար չլինելը կը ցուցնէ։

Այս հաշուոյն համար իբր հիմնակէտ կուզեմք պահել Վրթանէսի մահուան թուականը Տիրանի երրորդ տարին ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն։ Այս ժամանակագրութիւնը թէպէտ կը մեղանչէ ընդհանուր առման մէջ, այլ կաթողիկոսներու և թագաւորներու մէջ համապատշաճ չափակցութիւն մը կը պահէ, այնպէս որ այս համեմատական կշիռը պէտք չէ եղծել և ուր ժամանակագրական պահանջներ հակառակը չեն ցուցներ, բաղդատական կէտերը՝ կրնան գործածուիլ իբր ուղղութեանց հիմ. և ահա այս կարգէն է Վրթանէսի և Տիրանի թուականներու համեմատութիւնը։

Միւս կողմէն Վրթանէսի տարիքն ալ արդէն յեցուն էր հայրապետութեան հասած ատենը, այսինքն 72 տարեկան էր, և այս տարիքին վրայ 15 ևս դրուած ատենը ոչ միայն կշիռը կը կորսնցնեմք, այլ և դժուարաւ կրնամք 87 տարեկան ծերունւոյն պատշաճեցնել Վրթանէսի գործունեայ կեանքը, որ չունի իսկ իւր վերջերը այն հանդարտ անգործութեան միջոցը, զոր ունեցաւ Լուսաւորիչը, այլ մինչև իւր վերջին շունչը միշտ շարժման և գործունէութեան մէջ կը գտնուի, ոչ միայն եկեղեցական այլ և քաղաքական և նոյն իսկ պատերազմական ճգանց մէջ։ 80 տարեկան հասակը զոր կունենայ մեր հաշուով 341 ին վախճանած ատեն շատ է, քիչ չէ իւր պատմութեան համեմատութեամբ։

Վրթանէս թաղուեցաւ ի Թորդան, Դառանաղի գաւառին մէջ ըստ միաբան վկայութեան Խորենացւոյ (եր. 24), և Բուզանդայ (եր. 29), միայն թէ մինչ Խո-

բենացին մարգարէական մեկնութիւն մը կուտայ այն տեղ թաղուելուն, ուր յետոյ Լուսաւորչի ոսկերք պիտի ամփոփուէին, Բուզանդ պատմական ոճով և յայտնապէս կըսէ թէ «անդ առ մեծի հայրապետին Գրիգորի զսորա սուրբ զոսկերսն հանգուցանէին»։ Ս. Լուսաւորչի նշխարաց գիւտին վրայ խօսած ատեննիս յստակ կերպով բացատրեցինք և հաստատեցինք, թէ այդ գիւտը տեղի ունեցաւ Վրթանէսի կենդանութեան ատեն, և պէտք չէ երբէք յետաձգել զայն մինչև դար մը անդին։ Իրօք ալ Որդւոց և թոռանց պատմութիւնը Վրթանէսի կաթողիկոսութեան հետ կը խառնէ Ս. Լուսաւորչի նշխարաց գիւտի պարագայն՝ (Սոփ. 51)։

6. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այստեղ պէտք է դնեմք Վրթանէսի որդւոյն Գրիգորիսի պատմութիւնը։ Գրիգորիս երկուորեակներուն երիցագոյնն է. և այս պատճառով պապին անունը ժառանգած է փոքրացուցիչ մասնիկով։ Ծնունդը դրինք 295 ին Կեսարիոյ մէջ, և Հայաստան դալը 306 ին մօրը և հօրեղբօրը հետ 11 տարեկան հասակին մէջ։

Իսկզբան երկու եղբայրներ «սնան զառաջեաւ թագաւորին Հայոց և ուսման գրոց փոյթ ի վերայ կալան ուսուցանել զնոսա» (Բուզ. 10)։ Այլ յետոյ կերևի թէ Գրիգորիս աւելի Արիստակէսի հետ կապուեցաւ և նորա կրօնաւորական կեանքին աշակերտեցաւ։ Աղուանք իրենց դարձին ատեն ըստ Խորենացւոյն (եր. 6) Լուսաւորչի արիւնէն հովիւ մը ուզեցին և կրօնաւորութեան յարմարագոյն անձը նկատուեցաւ Գրիգորիս, թէպէտ տակաւին մանկահասակ։ Բուզանդ 15 տարեկան եպիսկոպոս ձեռնադրուեցաւ կըսէ (եր. 10), սակայն մեր հաշուով Աղուանից դարձը 316-ին տեղի ունեցած

լինելով կամ թերևս աւելի ալ ուշ, Գրիգորիս առ նուազն 21 տարեկան եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացած կը լինի։

Գրիգորիս թէպէտ մանկահասակ, այլ առաքինութեամբ մեծ, կրցաւ մեծամեծ օգուտներ գործել քրիստոնէութիւնը տարածելու Հայոց յարակից նահանգներու մէջ։ Թէպէտ յատուկ Ազուանից կաթողիկոսի անունով կը յիշուի, այլ և Վիրք իւր սահմաններուն մէջ էին այն ատեն, և իւր քարոզութիւնները տարածեց նա մինչև Ատրպատականի կողմերը (Բուզ. 13), և հիւսիսային կողմէն սկսաւ աւետարանել Մագքութներու կովկասաբնակ ցեղերը։ Գրիգորիսի աշխատութեան ժամանակը 20 տարիէ աւելի եղաւ, զի իւր նահատակութիւնը 337-է յառաջ բերելու բնաւ հարկ մը չկայ։

Երբ Գրիգորիս հիւսիսային գաւառները յղուեցաւ Տրդատ այն կողմերու բդեաշխ կարգեց Սանատրուկ Արշակունին (Խոր. 6), կամ Սանեսան Արշակունին (Բուզ. 14), որպէս զի ծաղկահասակ եպիսկոպոսին պաշտպան լինի, և երևի թէ Սանատրուկ մէծապէս ձեռնտու եղաւ Գրիգորիսի յաջողութեանց։ Այլ երբ ծագեցան Խոսրովու վերջին տարիներու խռովութիւնները և Սանատրուկ ալ հիւսիսային ապստամբութեան գլուխ կանգնեցաւ, կովկասաբնակ ազգերն ալ իրեն միացուց, և ինքզինք թագաւոր հռչակեց, և Պարսից հետ ալ բարեկամացաւ, Սանատրուկի և Գրիգորիսի յարաբերութիւնները խանգարուեցան։

Գրիգորիս՝ Վրթանէսի զաւակ և Լուսաւորչի թոռ, չէր կրնար համաձայնիլ Սանատրուկի ապստամբութեան, և հետևաբար իւր կողմանէ զանց չէր ըներ Հայոց գահուն հաւատարմութեան դատը զօրացնել։ Ինչպէս որ նմանօրինակ դիպուածներու մէջ կը հանդիպի, Գրիգորիս Սանատրուկի աչքին իրեն հակառակորդ և թըշ-

նամուոյն բարեկամ, և իբր մատնիչ երևցաւ։ Խորենացին Գրիգորիսի նահատակութիւնը կը վերագրէ «դաւելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց հանապազասուտ արանց Աղուանից» (եր. 6)։ Այսչափն ալ կը բաւէ ցուցնել թէ ինչ եղաւ Գրիգորիսի մահուան շարժառիթը. Վրթանէսի դէմ եղած դաւաճանութիւնն ևս տեսանք վերը, որ հարկաւ հարաւակողման ապստամբութեան պետին Բակուրի սադրանօք եղած էր։

Բուզանդ մանրամասն պարագաներ ևս կը պատմէ։ Գրիգորիս, կըսէ, եկաւ Մազքութների բանակը և ներկայացաւ Արշակունի Սանեսանին, որ քաղաքական ապստամբութեան կրօնականն ալ միացուցած էր և քրիստոնէութիւնը թողած։ Գրիգորիս սկսաւ աւետարան քարոզել Մազքութներուն, ոոքա զննեցին Գրիգորիսի աւետարանը և տեսան որ կարգելու յափշտակել, աւարել և կոտորել, և հետևցուցին թէ Հայոց թագաւորին գործն է «զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս» (Բուզ. 14)։ Եւ ասոի գըրգռուելով Գրիգորիսը սպաննելու որոշումը կուտան։ Եթէ նկատեմք թէ Մազքութներու թագաւոր Սանեսան Արշակունին, Գրիգորիսի երբեմն պաշտպան Սանատրուկ Արշակունին է, որ ապստամբութենէ յետոյ Գրիգորիսը իբր Հայոց թագաւորին բարեկամ և իրեն թշնամի կը կարծէ, շուտով կը պարզուի այդ վիպական ոճին ներքև պարունակուած պատմական ստուգութիւնը։

Ինչ ալ ըլլայ սպանութեան քաղաքական շարժառիթը; յայտնի է թէ բուն ներքին պատճառը Գրիգորիսի քրիստոնէութիւնն էր, զոր կուզէին հարուածել Սանատրուկի ուրացութիւնը, Կովկասի ազգերուն հեթանոսութիւնը և Պարսից ազդեցութիւնը։ Մարտիրոսութիւնը կարի խուժդուժ կերպով գործադրուեցաւ,

վասն զի բարբարոսական ճաշակով մը «կալան ձի ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագուոյ ձիոյն, և արձակեցին... ի դաշտն Վատնեայ» (Բուզ. 15), որ կը գտնուի Կուր գետի բերանը, Կասպից ծովուն եզերքը։ Գրիգորիս շուրջ 42 տարեկան եղած էր նահատակութեան ատեն։

Գրիգորիսի մարմինը իւր սարկաւագներուն ձեռքով ամփոփուեցաւ և բերուեցաւ Փոքր Սիւնիք, և թաղուեցաւ Ամարաս գիւղին մէջ, ուր յետոյ վանք ալ շինուեցաւ, որ փոքրիկ բայց շէն վանք մ'է մինչև այսօր։ Ս. Գրիգորիսի նշխարք յայտնուեցան անգամ մը 489-ին Վաչագան Աղուանից թագաւորին ժամանակ, որոյ տօնն կը կատարեմք Խաչի հինգերորդ երկուշաբթին, իսկ բուն տօնը կը կատարուի իւր հօր և եղբօր և հօրեղբօր հետ, որդւոց և թոռանց յիշատակին։ Գրիգորիսի գերեզմանը նորէն անյայտ մնալէ ետքը, վերստին յայտնուեցաւ վերջին ժամանակներու մէջ 1858-ին, և մինչև այսօր կը պատուուի Ամարասի վանքին մէջ։

Տ. Ս. ՅՈՒՍԻԿ ՊԱՐԹԵՒ

7. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ

Վրթանէսի մահուանէ իբր 5 տարի առաջ նահատակուած էր Գրիգորիս, այնպէս որ Լուսաւորչի սերունդէն միայն Յուսիկ կար որ կարող էր Հայրապետութեան կոչուիլ։ Յուսիկ Վրթանէսի երկուորեակներուն երկրորդն էր, ծնած էր Կեսարիա 295 ին, նոյն իսկ անունը՝ թէպէտ հայկական ձևի վերածուած, բայց միշտ կը յիշեցնէ մեզ Ս. Հիւսիքոս վկային անունը, որ յատուկ եկեղեցի և պաշտօն ունէր Կեսարիոյ մէջ։ Հօրը հետ եկած էր Հայաստան 306 ին, ինչպէս ըսինք, և արքունիքի մէջ եղբօրը հետ առաջին ուսմունք և կրթութիւն առնելէ յետոյ, երբ Գրիգորիս կրօնաւորութեան մտաւ, Յուսիկ պալատական եղաւ և արքայորդի Տիրանին տան մէջ ապրիլ սկսաւ։ (Բուզ. 10)։

Տիրան արքայորդի կը կոչուի այդ պատմութեան մէջ և Խոսրով թագաւորի որդի. թէպէտ այն թուականին տակաւին կենդանի էր Տրդատ և կը թագաւորէր, որով Խոսրով տակաւին արքայորդի էր, իսկ Տիրան լոկ արքայաթոռ կրնար ըլլալ։ Հաւանական է ըսել արքայաթոռն ալ կրնար արքայորդի կոչուիլ իբրև արքայազուն իշխան. սակայն շատ յարմար է ընդունել միւս կարծիքն ալ որ կըսէ թէ Տրդատի ծերութեան և տկարութեան պատճառով, Խոսրով իւր հօր կենդանութեան ատեն կիշխէր իբրև գահակից թագաւոր։ Ուրիշներ պարզապէս անուններու շփոթութիւն մը ուզեցին ենթադրել, իբրու թէ Խոսրով գրելու կամ ընդօրինակելու

տեղ Տիրան գրուած ըլլայ. դիտելով մանաւանդ որ այն թուականին տակաւին Տիրան տունտեղ ունենալու տարիքին չէր կրնար հասած լինել։ Այդ մեկնութիւններէն որն և նախադասուի պատմութեան իսկութիւնը չը փոխուիր, այլ մեք կը նախընտրեմք Խոսրովը գահակից թագաւոր ընդունել։

Յուսիկ տակաւին նորահաս պատանի Տիրանի փեսայ կը լինի և կամուսնանայ տնոր աղջկան հետ, որոյ անունը չէ յիշուած։ Ոմանք կարծեցին թէ Յուսիկի կինը Տիրանի քոյրն է, և ասով ուզեցին լուծել այն դժուարութիւնը զոր Յուսիկի հարսերուն վրայ խօսած ատեննիս պիտի տեսնենք. այլ Բուզանդ շատ յայտ ի կըսէ թէ Տիրանի դստեր հետ ամուսնացաւ, և մեք ստիպողական հարկ մը չեմք տեսներ պատմիչին խօսքերը փոփոխելու։ Իսկ Յուսիկի ամուսնութեան պարագաներուն վրայ խօսելով Բուզանդ կըսէ նախ թէ «յամուսնանալն բռնադատեցաւ ի թագաւորէն իբրև զմանուկ». յետոյ կը յարէ թէ «յառաջնում գիշերին յղացաւ կինն». թէ Յուսիկ «ետես ի տեսլեան զի երկու էին մանկունքն և ոչ հաճոյ ի պաշտօն Տեառն», և թէ Յուսիկ «այլ ոչ ևս մերձեցաւ ի նա», և թէ «յերկոտասանամենից ի վեր առաքինանայր» (Բուզ. 10—12)։ Այդ յիշատակութեանց յենլով պէտք է ըսել թէ Յուսիկ գրեթէ 10 տարեկան ամուսնացաւ, և որչափ ալ այն ժամանակներ տարիքի շատ մտադրութիւն չէին դարձներ, սակայն 10—11 տարեկան պատանիի զաւակ ունենալը չկրնար հաւատալի ըլլալ, և հետևաբար գոնէ 15 տարեկան պէտք է ենթադրել Յուսիկը իւր երկուորեակները ունեցած ատեն, որ է ըսել 310 ին։ Յուսիկի տղայքը կոչուեցան Պապ և Աթանագինէ. Պապ անունը այժմ հայկական գաւառներու մէջ կը գործածուի իբր կրկնումն պապենական անունին, այլ չեմք պնդեր թէ չորրորդ դարու մէջ ալ

այսպէս եղած լինի. իսկ Աթանագինէ անունը ծանօթ է Լուսաւորչի հետ ազգականութեամբը և Նշխարաց փոխադրութեամբը և Ս. Կարապետի վանքին մէջ զետեղուելով։

Յուսիկի ամուսնական կեանքը կարճ եղաւ. որովհետև գրուած է թէ շուտով ձանձրացաւ թագաւորական տան փեսայութենէն, և թէ փոխադարձաբար «թշնամացեալ էր տունն թագաւորին ընդ նմա» (Բուզ. 12). մինչև որ «մեռաւ կին նորա... և ազատեալ լինէր Յուսիկ ի յաներոյն» (Բուզ. 12)։ Ըստ պատմչին Յուսիկի ցաւը իւր զաւակներուն ապագայ անառակութիւնն էր և եկեղեցական կոչումին դժկամակութիւնը, այլ եթէ միայն այդ լինէր արքունիքին հետ հակառակելու և թագաւորին հետ թշնամանալու պատճառ չկայր. ուստի պէտք է ընդունել թէ ընտանեկան աւելի կարևոր պատճառներ խանդարեցին փեսային և աներին լաւ յարաբերութիւնները։

Բուզանդ կը պատմէ դարձեալ թէ Յուսիկ ուրիշ տեսիլքով մը վստահութիւն մնացաւ Աստուծմէ թէ իւր որդւոց ներունդներ պիտի մտնեն աստուածային ծառայութեան, և պիտի լինին «սիւնք եկեղեցւոյ և մատակարարք բանին կենաց, և հիմունք հաւատոյ և պաշտօնեայք Քրիստոսի, և արբանեակք Հոգւոյն սրբոյ». որք դժուարութեանց ալ հանդիպելով «կայցեն ի հաւատս անշարժ իբրև զվէմ»։ Այդ խօսքեր յայտնապէս Ներսէսի և Սահակի կակնարկեն, որոց վրայ հոգևոր տեսութեամբ մխիթարուեցաւ Յուսիկ, և «զամենայն աւուրս կենաց իւրոյ գոհանայր և եթ յամենայն ժամ անդադար» (Բուզ. 12—13)։

Անծանօթ կը մնայ մեզ բոլորովին թէ ինչ եղաւ Յուսիկի կեանքը արքունիքի հետ թշնամանալէն մինչև կաթողիկոսանալը։ Եկեղեցականութեան մտած լինելուն

նշան չկայ, արքունիքի ծառայելը ենթադրելի չէ, ուրեմն կը մնայ հետևցնել թէ առանց պալատականի յարաբերութիւնները խզելու քաշուած կեանք մը անցուց բոլորովին հոգևոր գործերու զբաղեալ և բարոյական բարեկարգութեան սաստիկ նախանձախնդիր։

8. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Երբ Վրթանէս մեռաւ և Լուսաւորչի սերունդէն հոգևոր գլուխ ունենալու գաղափարը նորէն արծարծեցաւ, Տիրան դժուարութիւն չտեսաւ իւր փեսային կաթողիկոսանալուն մէջ, ինչչափ ալ ներքին յարաբերութիւններին կանուխէն պաղած լինէր։ Յուսիկ, որ արդէն 47 տարեկան էր, հրաւիրուեցաւ հայրապետական աթոռը, և Բուզանդի խօսքով «ըստ սովորութեան օրինակի» (եր. 29), շքեղ փառքով և արքունական զարդերով, մեծ հազարապետին և 12 նախարարներու ընկերակցութեամբ տարուեցաւ Կեսարիա ձեռնադրուելու համար։ Ձեռնադրութենէ դառնալուն Տիրան թագաւոր Տափերական կամուրջին վրայ դիմաւորեց Նորապսակ կաթողիկոսը և կաթողիկէն առաջնորդեց և հայրապետական աթոռին վրայ նստեցուց։ Յուսիկ կաթողիկոս էր, արքայազարմ սերունդէ էր, և թագաւորին փեսան էր, ուրեմն արքունական պատիւներ արդարացի էին իրեն։

Յուսիկին Կեսարիա երթալուն վրայ Խորենացին բան չըսեր, բայց մեք չեմք ուզեր հակառակել Բուզանդի պատմածին, որովհետև կը մտածեմք թէ Յուսիկ եպիսկոպոսական ձեռնադրութիւն չունէր, գուցէ քահանայութիւն ալ չունէր, և այսպիսի բացառիկ պարագայի հանդէպ ուզած են բացառիկ նշանակութիւն մը տալ ձեռնադրութեան, ինչպէս եղած էր յառաջագոյն իւր պապին՝ Լուսաւորչին համար, և ինչպէս եղաւ յետոյ իւր թոռին

Ներսէսի համար։ Կեսարիոյ արքեպիսկոպոսին անունը յիշուած չէ, այլ թուականը պէտք է դնել 342 ին։

Յուսիկի կաթողիկոս եղած ատենուան արտաքին նկարագիրը այսպէս կը դրուի. «Աւուրքք մանուկ, տիօք առոյգ, և բարձր հասակաւ, դեղով երեսաց սքանչելի և չքնաղ, զի այլ ոչ գտանէր նման նմա ի վերայ երկրի» (Բուզ. 30)։ Առհասարակ Լուսաւորչի ազգատոհմը, ինչպէս անուամբ նոյնպէս և կերպարանքով ալ պարթեւ և վայելուչ անձեր եղած են, զի միևնոյն նկարագիրը Ներսէսի վրայ ալ կրկնուած կը գտնեմք (Բուզ. 69)։ Իսկ Յուսիկի մանուկ կոչուիլը, զոր կը սիրէ յեղյեղել Բուզանդ, պէտք չէ անտիական և անչափահաս երիտասարդ իմանալ, զի Բուզանդարանի մէջ մանուկ կոչումը շատերու կը տրուի, թէպէտև տարիքնին ընդհանրապէս 40 է վեր է։ Միւս կողմանէ ժամանակագրութեանց և ծնունդներու խիստ և ճիշտ հաշիւը 47 տարի կուտայ Յուսիկի, իսկ այս տարիքին մէջ մանուկ կը նկատուի անոր համար, որ իրմէ առաջ կաթողիկոսներ աւելոր ծերեր էին։ Միւս կողմանէ թագաւորի փեսայ լինելն ալ, թագաւորին աչքին իբրև զաւակ և իբրև տըղայ սեպուելուն կը նպաստէր։

Յուսիկի կաթողիկոսութեան ժամանակէն որոշ դիպուածներ և պատահարներ հասած չեն մեզի։ Ընդհանուր կերպով իւր նկարագիրը կը կազմեն արթուն և գործունեայ, խրատող և յանդիմանող, նախանձայոյզ և անաչառ պաշտօնէի մը ձիրքերը։ Լուսաւորչի սերունդը իր սրտին մէջ բարձր դիրք մը կը զգայր նոյն իսկ արքունիքի հանդէպ, և քաղաքական գործերու քննութիւնն ու դատաստանն ալ իրեն օտար չէր նկատեր։ Գրիգոր և Արիստակէս այդպէս ըրած էին, Վըրթանէս ալ նոյնպէս, մանաւանդ քաղաքական գործերու մէջ ունեցած յատուկ յաջողակութեամբը։ Յուսիկ

ալ նոյն ոճին հետևեցաւ. բայց ինչ որ Վրթանէսի տարիքը ու դիրքը դիւրատար կընէին, Յուսիկի տարիքին և դիրքին ներելի չերևցան։ Յուսիկ իւր հոգևորական պաշտօնին պահանջը արտաքին ակնածութիւններէ գերազանց դասեց և նախանձայոյզ խստութիւնները շարունակեց։ Մտքի բարձրութիւնն ալ ունէր, զի «դպրութեան գրոց սրբոց արուեստաւն լի էր» (Բուզ. 31)։ Արդեօք արքունիքի հետ յառաջուց ունեցած դառնացեալ զգացումները դեր մը ունեցան իւր ընթացքին մէջ.—ենթադրել արժան չեմք սեպեր։

Տիրան և իւր նախարարները քրիստոնէական կատարելութեանց բնաւ հետամուտ չէին. մանաւանդ թէ հին հեթանոսական սկզբունքներուն կը հետևէին մէկ կողմէն անառակութեան, միւս կողմէն բռնութեան գործեր սովորական էին իրենց, մինչ Յուսիկ կաշխատէր այսպիսի անտեղութիւնները իսկոյն արմատախիլ ընել (Բուզ. 34—35). և երբ խրատի և յանդիմանութեան անպտուղ մնալը կը տեսնէր, վերջին միջոցներու կը դիմէր. «Արդելոյր զթագաւորն և զմեծամեծսն չտալ թոյլ մտանել յեկեղեցին։ Արդ ելեալ կապէր մեծապէս պատուհասիւք քահանայական իշխանական բանիւ յանդիմանութեան» (Բուզ. 31)։ Այդ խօսքեր բաւական յստակ կերպով կը ցուցնեն թէ Յուսիկ բանադրած և նզոված է թագաւորն ու նախարարները և եկեղեցի մտնելու իրաւունքէ զրկած։ Թերևս յաւուկ պարագայ մ'ալ առիթ տուաւ այդ եկեղեցական պատիժը վճռելու, որ մեզի անծանօթ մնացած է։ Դժբաղդաբար թէ Տիրան իւր փեսային՝ և թէ նախարարները հոգևորականի մը վճռոյն մեծ կարևորութիւն տուած չեն։

---

9. ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Անգամ մը Տիրան և Յուսիկ միասին կը գտնուին Ծոփաց Նահանգին Բնաբեղ կոչուած արքունի բերդին մէջ։ Հանդիսի օր մը, «օր մի յաւուրց տարեկան», արքունիքն ալ կուզէ եկեղեցւոյ հանդիսութեան ներկայ լինել. «Ի՛ր մեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլովք աւագանւովն մտանել յեկեղեցին»։ Յուսիկ կը լսէ և անձամբ եկեղեցւոյն դուռը ելնելով կընդդիմանայ ու կըսէ. «Զես արժանի. հիմ գաս, մի՛ գար ի ներքս»։ Սրգելքը թագաւորին հետ նախարարներուն ալ ուղղուած է հարկաւ, վասն զի բանադրանքն ալ ամենուն համար էր։

Տիրան կը զայրանայ երես առերես նախատանքին համար, բայց աւելի կը կատղին նախարարներ, և բրոնութիւնը բռնութեամբ վանելու վարժութեամբ, իրենք և իրենց մարդիկներ կը յարձակին հայրապետին և պաշտօնէից վրայ։ Եկեղեցւոյ դրան առջև և դուռնէն ներս ահագին ժխոր մը կսկսի, և ամեն հարուածներ հայրապետին դէմ կուղղուին, մինչև որ «բրածեծ եղեալ, ջաղջախեալ, կիսամահ կոշկոճեալ ընկեցեալ լինէր» սուրբ կաթողիկոսն Յուսիկ (Բուզ. 32), որ սակայն նոյն տեղ չէր մեռներ։

Հայրապետանոցին և եկեղեցւոյն պաշտօնեաները հազիւ կրնան տէր լինել հարուածեալ հայրապետին անձին, և առաջին խնամքները նոյնտեղ տալէն յետոյ, անշուշտ թագաւորին և նախարարաց ատելութենէ ալ հեռացնելու համար Ծոփաց գաւառի Բնաբեղ դղեակէն կը փոխադրեն Դարանաղի գաւառի Թորդան գիւղը՝ Լուսաւորչի ցեղին սեփական կալուածը։ Բայց խնամքները արդիւնք չեն ունենար որովհետև վտանգաւոր էր Սրբոյն վիճակը։ Յուսիկ հայրապետ «անդ՝

ոչինչ յետ բազում աւուրց հանգեաւ», և Թորգանի հայրենական դամբարանին մէջ թաղուեցաւ Գրիգորի և Վրթանէսի մօտ։

Յուսիկի հայրապետութեան տևողութիւնը Խորենացի 6 տարի կը դնէ (եր. 30), և պատճառ մը չունիմք այդ թիւը փոփոխելու, մանաւանդ որ պէտք է որ պատմութեան պահանջին համեմատ Յուսիկի հայրապետութեան սկիզբն ալ վերջն ալ Տիրանի թագաւորութեան ժամանակին մէջ ամփոփուի։ Հետևաբար Յուսիկի մահուան թուականը պէտք է դնել 347-ին, և այս թուականը կը պատասխանէ բովանդակ պատմական պահանջներուն։ Յուսիկ նահատակուած է ուրեմն 53 տարեկան եղած ատեն։

Խորենացին Յուսիկի նահատակութեան պատճառ կը ցուցնէ Յուլիանոսի պատկերին խորտակման պարագայն, որ ընդհանուր ընդունելութիւն ալ գտած էր երբեմն, և Լամբրոնացին շարականի մէջ ալ անցուցած է, ինչպէս որ մինչև ցայժմ կերգեմք. «Քաջութեամբ զանօրինաց խորտակեալ զպատկերսն տէր սուրբ Յուսիկ». Թէև *անօրինաց* և *զպատկերսն* յոգնակի ձևերը մէկ Յուլիանոսին մէկ պատկերէն աւելի այլաբանական իմաստով կրնան մեկնուիլ, գուցէ շարականին հեղինակ Լամբրոնացին աւանդութիւնը և այլաբանութիւնը իրարու միացնել ուզած է։ Ինչ և իցէ Յուլիանոսի պատկերին պարագայն այլ ևս իբրև պատմական չկրնար ընդունուիլ, և միաձայնութեամբ մէկկողմ թողուած է քննադատ պատմագիրներէն։ Ոչ միայն ժամանակագրական ուղղութիւնը կը պահանջէ որ 342-էն 347 կաթողիկոսութիւն վարող Յուսիկը երբէք ժամանակակից չդրուի 361 է 363 կայսրութիւն վարող Յուլիանոսի, այլ և Բուզանդի պատմութիւնը զայն բացայայտ կը հաստատէ բնաւ Յուլիանոսի անուն կամ պատկերի

յիշատակութիւն չխաւնելով Յուսիկի նահատակութեան մէջ. և յետոյ Յուլիանոսի ժամանակակից դնելով Արշակը։ Այս դիտողութիւնն ալ միայն նորերու գիւտը չէ. զի նոյնինքն Սամուէլ Անեցի (եր. 66) Յուսիկի սպանութիւնը կը դնէ ՅԿԴ=364-ին, իսկ Յուլիանոսի թագաւորելը ՅԿԸ=368-ին։ Իրաւ Սամուէլի այդ թուականներ ևս ուղղելի են, այլ մեզ կը բաւէ նկատել որ Յուսիկի վկայութիւնը կապ չունի Յուլիանոսի պատկերին հետ։

Յուսիկի մահուան ձևին մէջ ալ կը տարբերի Խորենացին երբ կըսէ թէ Տիրան «հրամայեաց ջալստիւք հարկանել յերկար մինչև ի գանելն աւանդեաց զոգին» (եր. 30)։ Այս խօսքերով կենթադրուի թէ Տիրան՝ կաթողիկոսը դատի ենթարկած լինի, դատապարտած, պատիժը որոշած, դահիճներու յանձնած, և պատժոյն գործադրութեան մէջ սպաննած։ Զեմք կարծեր որ քրիստոնեայ թագաւոր մը կարողանայ այսպիսի ընթացք մը ունենալ կաթողիկոսին անձին վրայ, և ոչ ալ աներ մը իւր փեսային վրայ, այլ շատ լաւ կը մեկնուի սպանութիւնը եթէ նկատուի այն իբրև թագաւորին կամքէն անկախ պատահար մը, զինուորական ժխորի մէջ տեղի ունեցած, թէպէտև Տիրան սիրտէն ուզած ալ լինի որ կերպով մը ազատի փեսայ կաթողիկոսին նախանձայոյզ ընթացքէն։ Մինչև իսկ պէտք է ընդունել թէ Տիրան հարկաւ Թորդան ալ գացած կը լինի, Յուսիկի գերեզմանը կեղծաւորաբար պատուելու։

10. Ս. ԴԱՆԻԷԼ ԱՍՈՐԻ

Ամէն բան վերջանալէն ետքը կարգը կուգայ հայրապետութեան յաջորդութիւնը հոգալու, և որովհետև ազգին փափաքն էր Լուսաւորչի ցեղին հետ կապուած մնալ, Տիրան ալ կը հաւանի Յուսիկի զաւակներէն և իւր

թոռներէն մէկը աթոռ բարձրացնել։ Պապ և Ամթանագինէ իբր 37 տարեկան անձեր են և արդէն ամուսնացած, Պապայ կինն է Վարազդուխտ և անորդի է. Ամթանագինէի կինն է Բամբիշ և զաւակ մ'ալ ունեցած է Ներսէս անունով, որ մօտ 20 տարեկան է և Բիւզանդիոն կը գտնուի։ Բիւզանդ ոչ միայն Վարազդուխտը և Բամբիշը իրարու քոյրեր կ'ենթադրէ, այլ և թագաւորին ալ քոյրեր լինելնին կը պատմէ. «Առին իւրեանց կանայս զքոյրս թագաւորին» (Բուզ. 44), և ուրիշ տեղ ալ Ներսէսի մայր Բամբիշը թագաւորի քոյր (Բուզ. 49) և Տիրանի քոյր (Բուզ. 69) կը կոչէ։ Այսպիսի ազգակցութիւն մը բոլորովին անհնար կերևի, ոչ թէ ճիւղահամարի դժուարութեանց համար, որուն ժամանակին արքունիքը բնաւ մտադրութիւն դարձուցած չէ, այլ նոյն իսկ բնական անկապակցութեան և տարիքներու անյարմարութեան համար, որ Պապ և Ամթանագինէ որ Տիրանի թոռներն են իրենց մեծ մօր տեղը եղող կիներուն, այսինքն իրենց մեծ հօր քոյրերուն հետ կարենան ամուսնանալ։ Անճշտութիւն մը կայ յայտնապէս, այլ ուղղելու համար բնաւ նշան մը չեմք գտներ, և միայն ենթադրութեամբ կրնամք ըսել թէ Վարազդուխտ և Բամբիշ Տիրանի եղբօր կամ քրոջ զաւակներ եղած ըլլան, առանց հարազատ քոյրեր ալ լինելու։

Երբ Յուսիկի զաւակները անհնար եղաւ եկեղեցականութեան համոզել, միտքեր դարձան Լուսաւորչի հոգևոր զաւկի մը վրայ, որ է Դանիէլ Ասորի, Լուսաւորչի շատ մօտիկ անձ մը, և ժամանակին անոր հիւպերեդը կամ փոքրաւորը եղած (Խոր. 30), և անոր ձեռնադրութեամբ մինչև քորեպիսկոպոսութիւն բարձրացած (Բուզ. 37), և որուն պաշտօնն էր Լուսաւորչեան տոհմին կալուածներուն տեսչութիւնը, և անոնց մէջ գտնուած եկեղեցիներու վերակացութիւնը առանց վիճա-

կաւոր հովուութեան, և առանց հաստատուն թեմ մը ունենալու, որ Հացեաց Դրախտի վանքին մէջ ճգնաւորութեամբ կապրէր և մերթ ընդ մերթ անկէ ելնելով Տարոն և Եկեղեաց գաւառները կը շրջէր, նկատելով որ Դանիէլ միշտ «ծերունի երէց» (Խոր. 30), կամ «ծերունի քորեպիսկոպոս» (Բուզ. 36) կը կոչուի, և Լուսաւորչի ժամանակէն գործի գլուխ գտնուած է, հարկ կը լինի որ 347 ին, գրեթէ 80 տարեկան անձ մը եղած լինի։

Երբ Դանիէլը կաթողիկոս ընելու խորհուրդը ընդունուեցաւ, պատուով և նախարարներու ընկերակցութեամբ Եկեղեաց գաւառի Թիլ գիւղէն ուր այն տեղն կը գտնուէր, բերուեցաւ Աղձնեաց Նահանգի Բառաէջ դղեակը ուր գացած էր Տիրան։ Բայց Դանիէլ այսպիսի ցոյցերով չշլացաւ, և փոխանակ իրեն ցուցուած պատիւներուն շնորհակալ ըլլալու, խսկոյն յանդիմանութեան սկսաւ։ Մի առ մի սկսաւ յայտնել արքունիքի և նախարարներուն ապօրինի գործերը, և անոնց երեսը զարկաւ գործուած անիրաւ սպանութիւնները, և աւելի ևս ծանրացաւ Ս. Յուսիկ հայրապետի մահուան վրայ, և նոյն իսկ Յուսիկէ աւելի սկսաւ ծանրացնել թագաւորին և նախարարներուն վրայ դրուած եկեղեցական վճիռը։ Ապա համարձակաբերան կերպով աստուածային վրէժխնդրութիւնը հրաւիրեց ազգին վրայ դառնութեամբ և անէծքներով լեցուն «Այս ամենայն լինելոց է ձեզ, զի այսպէս եցոյց ինձ Տէր»։ Իսկ իրեն առաջարկուած կաթողիկոսութեան վրայ խօսելով, մերժեց զայն անարգանօք. «Զիարդ կայցեմ գլուխ ազգի՝ զորս եթող Տէրն ի ձեռանէ» (Բուզ. 42)։ Բուզանդ ընդարձակ կերպով յառաջ կը բերէ Դանիէլի անիծակուր յանդիմանութիւնները (Բուզ. 39—42), կարծես խնդալով Հայ ազգին չարեաց վրայ։

Տիրանի բարկութիւնը չափ չունեցաւ, «և ի դառ-

նութեան ցասման իւրոյ հրաման տայր խեղդամահ առնել զնա» (Բուզ. 42)։ Աւագանիներէն շատեր չանցին հրամանը ետ ընել տալ, այլ դահիճներ գործադրութիւնը փութացուցին, «և ճոպան ի փողս եդեալ խեղդամահ արարին» ծերունի Դանիէլը։ Այս տեղ այլ ևս Յուսիկի մահուան պէս ժխորի մէջ կատարուած սպանութիւն մը չեմք գտներ, այլ ուղղակի թագաւորի հրամանով կատարուած բռնական և պատժական սպանութիւն մը։ Սակայն տարբերութիւններն ալ ակնյայտնի են, Դանիէլ Յուսիկի պէս կաթողիկոս մը և եկեղեցական իշխանութեան պետ մը չէր կրնար նկատուիլ ու պատկառանք ազդել, այլ կը նկատուէր իբրև գրպարտիչ մը որ Յուսիկի մահուան պատասխանատուութիւնը Տիրանի վրայ կը դնէր, և իբրև սսորի մը որ հայ ազգը կը նախատէր և կանիծէր. և այս կերպով միայն կըրնայ մեկնուիլ Տիրանի բարկացայտ և յանկարծական ընթացքին և հրամանին բուն պատճառը։

Դանիէլի մարմինը իւր Շաղիտա և Եպիփան աշակերտներուն ձեռքով, և արքունական գունդին մէջ գրտնուող պաշտօնեաներու գործակցութեամբ (Բուզ. 43), և ընկերակցութեամբ ժողովրդական բազմութեան, փոխադրուեցաւ Բառաէջ դղեակէն Հացեաց Դրախտ կոչուած մենարանը, որ Յուլ լերան ստորոտը կը գտնուէր և Դանիէլի սեփական ճգնարանն էր։ Գերեզմանը կը գտնուի այժմ Պուլանըխ գաւառը, որ է նախկին Հարք գաւառը, Կոփ գիւղի մօտ, պզտիկ ձորակի մէջ առանձինն մատուռով, որուն քով շինուած է Կոփայ Ս. Դանիէլի վանքը, իւր անուան նուիրուած։

Ոմանք Դանիէլի անունը կաթողիկոսներուն շարքը կանցնեն, այլ քանի որ ոչ ընտրութիւն լրացաւ, ոչ աթոռ ելաւ և ոչ պաշտօնի ձեռնարկեց, Դանիէլի անունը հայրապետական գաւազանին մէջ չկրնար դրուիլ։ Իսկ

իբրև Լուսաւորչի հոգևոր զաւակ իւր տօնը կը կատարուի Լուսաւորչի երկու զաւակներուն և երկու թոռներուն տօնին հետ միասին։

Դանիէլի մահուամբ նորէն կաթողիկոսութեան խնդիրը ձեռք առնուեցաւ, և վերստին բռնադատութիւն եղաւ Յուսիկի երկու զաւակներուն եկեղեցականութեան մտնելու համար, մինչև իսկ եպիսկոպոսներու ձեռքով բռնի սարկաւագ ձեռնադրուեցան (Բուզ. 44)։ Բայց նոքա սարկաւագ ըլլալ՝ յետոյ ալ իրենց զինուորական կեանքը և աշխարհական կենցաղը չթողուցին։ Թերևս Աթանագինէի որդին քսանամեայ երիտասարդ Ներսէսն իսկ կաթողիկոսութեան կոչուէր, Լուսաւորչի տոհմին սիրոյն համար, բայց Ներսէս ալ բացակայ էր և Կոստանդնուպոլիս կը գտնուէր (Խոր. 34)։ Այդ վարանող գործերու պատճառով հայրապետական աթոռը տարիի մը չափ անառաջնորդ մնաց (Բուզ. 32), մինչև յաջորդ 348 թուականը։

Տ. ՓԱՌԷՆ ԱՇՏԻՇԱՏԵՑԻ

11. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ

Երբ Լուսաւորչի սերունդէն կաթողիկոս ունենալու հնարաւորութիւնը դադրեցաւ, գոնէ Լուսաւորչէն բոլորովին չհեռանալու համար համաձայնութեամբ որոշեցին. «զի ի նմին տանէ իշխանութեան Գրիգորի գացեն, որ կալցի նա զաթոռ հարցն». և այս սկզբունքով ‹համարեցան արժանի զՓառէն ոմն երէց› (Բուզ. 44)։ Այդ խօսքեր մեզ իրաւունք կուտան հետևցնել. թէ Փառէն Լուսաւորչայ անմիջական աշակերտներէն և իրեն մօտիկ անձերէն էր նման Դանիէլի, որ իրմէ առաջ կաթողիկոսութեան արժանի դատուած էր։ Հե-

տևաբար Փառէն յոյժ ծեր անձ մ'էր, որ կը հաստատուի նաև քիչ տարի ետքը խաղաղութեամբ վախճանելէն։ Ինքն բնիկ հայազգի էր և Տարոնեցի, Աշտիշատ գիւղէն, այսինքն «յԱշտիշատից Տարոնոյ» (Խոր. 34), որ սեփական կալուած էր Լուսաւորչեան տոհմին, և Փառէն այս կողմէ ալ կրնար ըսուիլ թէ էր «ի տանէ իշխանութեան Գրիգորի», իսկ իւր պաշտօնը Գլակայ Ս. Կարապետի վանահայրութիւնն էր, ըստ Բուզանդայ. «ի մեծէ մարգարէանոցէն Յովհաննու . . . զի տեղին այն նմա էր հաւատացեալ» (Բուզ. 44)։ Իրաւ ըստ Յովհաննու Մամիկոնեանի դարուս վանահայրները 302-է սկսելով գրուած են Զենոբ 20 տարի և Եպիփան 30 տարի (Մամ. 7), որով կը հասնիմք մինչև 352, սակայն Եպիփան Դանիէլի աշակերտ էր և Ծոփաց երկրին մէջ ճգնող (Բուզ. 43 և 226) և ապա եղբայրանոցաց տեսուչներէն մին (Խոր. 44), և ոչ երբէք Ս. Կարապետի վանքին առաջնորդ, որով Մամիկոնեանի ցուցակը ընդունելի չկրնար լինել։

Փառէնի անունը Խորենացին կը գրէ Փառներսէհ (եր. 34), իբր սղումն Փառէն և Ներսէհ զոյգ անուններու. և Խորենացւոյն հետևողութեամբ վերջին ժամանակաց ցուցակներն ալ Փառներսէհ կը գրեն հայրապետիս անունը, սակայն մեք կը սիրեմք անունները իրենց պարզութեան մէջ պահել և Փառէն կոչել, ինչպէս կը կոչէ ևս Բուզանդ քանի անգամ որ առիթը հանդիպի, թէ հայրապետին պատմութեան և թէ նորա որդւոյն Յովհան եպիսկոպոսին պատմութեան մէջ (Բուզ. 274)։

Բուզանդ Փառէնի համար ալ ձեռնադրութեան պատճառով Կեսարիա երթալը կը պատմէ, 14 նախարարներու ընկերակցութեամբ (Բուզ. 44), սակայն Խորենացի և ուրիշներ բնաւ այսպիսի յիշատակութիւն չեն ըներ։ Բայց ուրիշ տեղ Խորենացին Շահակի վրայ

խօսած ատեն, «Առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու» (Խոր. 94), կաթողիկոս լինելը դիտել տալէն կրնանք ընդունիլ թէ Կեսարիա երթալու սովորութիւնը կը պահուէր երբ ընտրեալը եպիսկոպոսական ձեռնադրութիւն չունէր։ Հռովմայ աթոռոյն ընտրեալներն ալ հաստատուն կերպով Ոստիոյ եպիսկոպոսէն ձեռնադրութիւն կառնէին, ինչպէս Կոստանդնուպոլսոյ աթոռոյն ընտրեալներն ալ Հերակլիոյ աթոռէն. բայց ձեռնադրող աթոռներուն ենթարկեալ չէին, Հայոց աթոռոյն ընտրեալներն ալ Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն առնլու սովորութիւնը կրնային յարգել, առանց անոր ենթարկեալ լինելու։

Փառէն կաթողիկոսի գործունէութեան վրայ բառ մը անգամ չունի Խորենացին, իսկ Բուզանդ կը բաւականանայ ըսել թէ «զիւր անձն սուրբ պահէր». այլ վարչական կողմը շատ տկար կը ցուցնէ. «Զհամարձակէր նա կամ խրատել ինչ, կամ յանդիմանել զմոլորութիւն ինչ զուրուք կամ զամբարշտութիւնս, և ի հարկէ ընգերէր անօրէն թագաւորին և ըստ նորին կամացն երթեալ հնազանդէր» (Բուզ. 45)։ Որչափ ալ այդ ընթացքին մի մասը խոհական լռութեան վերագրեմք, սակայն միշտ կը մնայ տարիքով ծեր, նախընթացով վանական, և բնութեամբ տկար անձի մը վարչութիւնը, որ առանց զօրաւոր լինելու, կրնար սովորական կանոնաւորութիւնը պահել։

Փառէնի կաթողիկոսութիւնը յոյժ համառօտ եղաւ. Խորենացին միայն 4 տարի կուտայ (Խոր. 34), և գրեթէ ամենքը նոյնը կը կրկնեն։ Յովհաննէս Պատմաբան 3 տարի կուտայ (Յովհ. 60), բայց հաւանաբար Դ և Գ թուանշան տառերու շփոթութեան արդիւնք է։ Սամուէլ Անեցի 5 տարի կուտայ (Սամ. 66), բայց սա ալ կերեւի թէ Փառէնի մահուանէ ետքը առանց

կաթողիկոսի մնացած տարին Փառէնի վրայ կը հաշուէ, զի սովորական է ընտրութենէ ընտրութիւն հաշուել կաթողիկոսներու տարիները։ Ուրեմն հաստատուն կը մնայ քառամեայ միջոց մը տալ Փառէնի կաթողիկոսութեան 348-էն 352։ Իսկ իւր տարիքին գալով կանուխ և խաղաղութեամբ մեռնելն ալ խոր ծերութեան հասած լինելուն նշանակ է, ինչ որ նախընթաց ժամանակին մէջ Լուսաւորչի հետ ունեցած յարաբերութենէն ալ ցուցուած է։

Մահուան տեղը հայրապետական աթոռը պէտք է ենթադրել, այսինքն է Վաղարշապատ. վասն զի ուրիշ տեղ գացած լինելը բնաւ յիշուած չէ. իսկ մարմինը փոխադրուած է իւր առաջին կեանքին և առաջին պաշտօնին տեղը։ Եկեղեցւոյ պաշտօնէութիւնը կը տանի զայն Տարոն և կը թաղէ «ի յագարակն մեծի մարգարէանոցին Յովհաննու» (Բուզ. 45), որ ըսել է Ս. Կարապետի եկեղեցիէն դուրս։ Հին կանոններ կը պատուիրէին. «Մի ոք իշխեսցէ թաղել զդիս մերձ ի սուրբ եկեղեցիս, այլ արտաքս քառասուն քայլ» (Բարսղի. Գ. 135։ Կան. 109)։ Անոր համար է որ պատմիչք ինամով կը յիշեն թէ թաղուեցաւ յագարակն, որպէսզի եկեղեցւոյ մէջ կամ եկեղեցւոյ որմոց ներքև չհասկացուի։

12. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԷՊՔԵՐ

Փառէնի ժամանակին դէպքերէն յիշատակութեան արժանի է Յուսիկի զաւակներուն եղերական մահը. իրաւունք «յոյժ ահագին և սարսափման լսողաց արժանի» (Խոր. 34)։ Պապ և Աթանագինէ որ աշխարհասէր կենցաղնին կը շարունակէին, կը գտնուէին անգամ մը Աշտիշատ, որ իրենց հայրենական կալուածն էր (Բուզ. 117) և «բոզօք և վարձակօք և գուսանօք և կատա-

կօք... ուտէին և ըմպէին» (Բուզ. 48), երբ կայծակ մը, կամ ըստ պատմչին «հրեշտակ Տեառն ի նմանութիւն փայլատակաց», վրանին իջաւ և երկուքն ալ միանգամայն այրեց և մեռուց։ Ներկաներ սարսափահար փախան և հազիւ ամիսներ անցնելէ յետոյ «ցամաքեալ և կճղացեալ», այսինքն է խանձողեալ մարմինները վերուցին և թաղեցին Աշտիշատի եկեղեցւոյն ագարակին մէջ։ Ամանագինէի միակ օրինաւոր զաւակն է Ներսէս, իսկ Պապ ապօրէն զաւակ մը թողած է, Վրիկ անունով, Հացեկացի հարճէն եղած։

Աւելի նշանաւոր է Տիրանի արկածը, որ աչքերէն և թագէն միանգամայն զրկուեցաւ 350-ին։ Խորենացիի պատմութեան համեմատ, Տիրան խարդախ բարեկամութեամբ Պարսկաստան հրաւիրուեցաւ, և այնտեղ կալանաւորուեցաւ և հրապարակաւ կուրացուեցաւ (Խոր. 38)։ Իսկ Բուզանդի պատմութեան համեմատ իւր ճարտուկ ճանճկէն ձին Ատրպատականի Վարազշապուհ մարզպանին չտալուն համար, Փիսակ Սիւնիի քսութեամբ դաւաճանուեցաւ։ Վարազշապուհ 3000 զինուորով այցելութեան կուգայ Տիրանի Ապահունեաց գաւառի Աղիորսք գիւղը, Մասիոս լերան մօտ, և Տիրանը նենգութեամբ կը ձերբակալէ, Տալարի գիւղին մէջ կը կուրացնէ և այնպէս Շապուհ թագաւորին կը տանի։ Թէպէտև երկու պատմութիւններ էականին մէջ շատ չեն տարբերիր, սակայն աւելի պատմական է Խորենացիին յառաջ բերած ձևը, նկատելով մանաւանդ Տիրանին՝ Յոյներու օգնութեամբ և Պարսիկներու կամքին դէմ թագաւորութիւնը ձեռք անցնելու պարագայն։

Խորենացիի պատմածին համեմատ Շապուհ անմիջապէս Արշակը թագաւորեցուց Տիրանի տեղ և Հայերու օգնութեամբ Յոյներու դէմ արշաւեց (Խոր. 38)։ Իսկ ըստ Բուզանդայ Հայեր նախ Պարսից դէմ ելան, յետոյ

Յունաց դիմեցին և կայսեր օգնութեամբ, որ պէտք է լինի Կոստանդ, Պարսից յաղթեցին և խաղաղութեան ստիպեցին Տիրանը դարձնելու պայմանաւ, սակայն կուրացեալն Տիրան ազատութիւն ստանալով թագն ու իշխանութիւնը իւր Արշակ որդւոյն թողուց, և այս ալ հաստատուեցաւ Նապուհի կողմանէ (Բուզ. 54—58)։ Բուզանդի պատմածը աւելի հաւանական և աւելի կապակցեալ է, թէև հնար է երկուքն ալ հաշտեցնել, որովհետև շատ հաւանական է, որ այս անգամ ալ ուրիշ առիթներու նման, թէ Յոյներ և թէ Պարսիկներ մաս մը նախարարներ ունեցած լինին իրենց հետ միևնոյն ժամանակ և իւրաքանչիւր կողմ իրեններով գործած։

Տիրանի արկածին վրայ խօսելով երկու պատմիչներըն ալ անոր երկու աչքերուն խաւարիլը, եկեղեցւոյն երկու լուսաւորները Յուսիկն ու Դանիէլը խաւարցնելուն, այսինքն սպաննելուն կը բաղդատեն (Խոր. 38, Բուզ. 53)։ Սակայն չյիշուիր բնաւ որ Փառէն կաթողիկոս այդպիսի նշանաւոր պարագաներու մէջ, որևէ կրօնական կամ քաղաքական գործունէութեան կամ միջամտութեան նշան տուած լինի։

Տիրանի թագաւորութեան տևողութիւնը 11 տարի գրուած է Խորենացիէն (եր. 38), մեք ալ այս թիւը կը պահեմք 339 էն 350 թուականին պատշաճեցնելով։ Արշակը թագաւորութեան անցած ատեն իբր 45 տարեկան պէտք է ըսել, և իբր կարող և գործունեայ անձ մը ճանչնալ։ Իւր թագաւորութիւնը մեծաւ մասամբ զոյգ կընթանայ Ներսէսի կաթողիկոսութեան, և երկուքին պաշտօնավարութիւններն ալ թէ պատմական և թէ քննադատական շատ կէտեր ունին մտադրութեան արժանի։

Փառէնի մահէն մինչև Ներսէսի ընտրութիւնը տարիէ աւելի միջոց մը կայ, և Բուզանդ միայն նոր կաթողի-

կոս մը կը դնէ այդ միջոցին համար. Շահակ ոմն անուն ի տոհմէ զաւակին Աղբիանոսի եպիսկոպոսին» (Բուզ. 45), որուն ընտրութիւնը և ձեռնադրութեան համար Կեսարիա երթալն իսկ կը պատմէ։ Իսկ Խորենացի և ամեն պատմագիրներ և ցուցակագիրներ համաձայն և հաստատուն կերպով Փառէնի և Ներսէսի մէջտեղ ուրիշ կաթողիկոս չեն ճանչնար և մինչև իսկ Ներսէսի վարքին հեղինակը կըսէ. «Յայս ամս լռեաց հայրապետութիւն Հայոց» (Վարք 14). հետևաբար մեք ալ այստեղ Շահակ կաթողիկոս մը չեմք կրնար ընդունել։ Նոյն ինքն Բուզանդ որ նախ Շահակ կաթողիկոս մը կը դնէ, յետոյ զայն կը ժոռնայ, և առանց նորա մահը յիշելու և առանց դադարման պարագաները ցուցնելու, աթոռը թափուր կը նկատէ, և կը պատմէ այս պատճառով ազգին ունեցած խեղճութիւնը և Ներսէսի բացառիկ կեպով մը կաթողիկոս ընտրուիլը (Բուզ. 94)։

Պէտք է ուրեմն իբր ստոյգ ընդունել թէ Փառէնէ ետքը աթոռը իրօք թափուր մնաց, սակայն տեղական պարապութեան նախատեսութեամբ Արշակ և եպիսկոպոսներ հարկ սեպեցին գլխաւոր մը ունենալ, ոչ իբրև աթոռակալ այլ իբրև տեղակալ. և այս եղաւ Բուզանդի յիշած Շահակ եպիսկոպոսը։ Տեղակալին պաշտօնը տարիէ աւելի տևեց, և այս տարին է որ յոմանց գումարուեցաւ Փառէնի կաթողիկոսութեան 4 տարիներուն, և Փառէնի 5 տարի տրուեցաւ։ Սա ինքն Շահակն է որ ըստ միաձայն վկայութեան պատմչաց Ներսէսէ ետքը իրօք կաթողիկոս եղաւ։

Բայց Ներսէսի և իւր յաջորդներուն վրայ Աստուծով ուրիշ անգամ։





ՎԱՐԴԻ ԻՄԸ ՄԱՀԱՊԵՂ

Բ. քաղաքի վաճառաշահ փողոցումն էր գտնուում Ռոման Մալաֆէյէչ Բոզդանովի առևտրական տունը։ Բոզդանովի գործը շատ յաջողակ էր գնում. ոսկին թիերով էին քերում. գործավարներն ու ծառայողները հանգիստ չունէին. կեանքն եռում էր։ Ամեն ոք կամենում էր իր հոգեպահուստը դնել Բոզդանովի սնդուկը՝ ամենից ապահով գանձարանը. բոլորեքեան ձգտում էին առևտրական տան տիրոջ Ռոման Մալաֆէյէչի քաղցը լեզուից ու թեթև ձեռքից օգտուելու։ Եւ ո՛վ ասես չէր օգտուում. մուրացիկ աղքատներն ևս իրանց որոշեալ ստանալիքն ունէին. գործատան դուռը եկեղեցու դուռն էր, ձեռք պարզողին չէ չըկալ։

Մի շաբաթ էր Մալաֆէյէչը խիստ տխուր էր. սիրաշահ լեզուն բերանումը փակուել էր, քաղցը դէմքը քացախած պռպռտուն խմոր էր դարձել, յաճախորդներին սառը գլուխ էր տալիս, մօտեցողին հաշուապահին էր ուղղում, իսկ ծառայողների երեսին բնաւ չէր նայում։ Այս դրութիւնը գործին չէր վնասում, բայց ամենքի համար հետաքրքրութեան առարկայ էր։

Մալաֆէիչը մի օր կառքից իջաւ։

Ըստ սովորականին աղքատները երկու կողմից ձեռք տարածեցին և յոյս ունէին, որ աղէն իր ձեռքովն ամեն մէկի բուռը հինգ կոպէկանոցը կը դնի և ապա ներս կերթայ։

— Գնացէք, կորէք, գետինն անցնիք դուք, ճչաց Բօղդանովը. միւսանգամ այս դուռն եկողի ոտքը կը կոտրեմ.— քշիր բոլորին, որ այսուհետև ոչ մի աղքատի շուաքը չերևի գործատանս առաջին, հրամայեց Մալաֆէիչը դռնապանին ու ներս մտաւ, արագ քայլերով գընաց իր բազկաթոռի մէջ չընստեց, այլ վայր ընկաւ ուբերանից և քթածակերից խոր հառաչանք դուրս թողեց։

Գոլծատան ծառայողները, որոնք տիրոջը ողջունելու համար ոտքի էին կանգնել, այնպէս շուարեցան, որ նստել գործելը մոռացան, ամենքն ապուշի պէս տիրոջն էին նայում։

— Լսիր, դռնապան, գոչեց Բօղդանովը՝ վեր թռչելով տեղից ու դէպի դուռը նայելով. որ էդ սոված շներից ոչ մէկը չըմնայ, հասկացար։

— Բայց, տէր իմ. մի ծերունի և մի պառաւ ոչնչով չեն ուզում հեռանալ, բարկանում, հայհոյում, հրում եմ, մինչև անգամ երկու բռունցք տուի ծերի գլխին, ոչ քաշւում են, ոչ խօսում են. մօտեցաւ և զեկուցումն արեց դռնապանը։

— Տուէք այդ տեղից հարիւր ռուբլի, թող երեսներովը խփի՝ կորչին, գնան, հրամայեց Բօղդանովը դրամապահին։

Փողը գնաց ու յետ եկաւ, դռնապանը յայտնեց, որ ձանձրալի ծերը ձեռք անգամ չը բարձրացրեց.— ես կարիք չունիմ ասել է նա, կամենաք՝ ինքս ձեզ փող տամ, միայն թողէք, որ պառաւիս հետ այստեղ մնանք կանգնած։

Ծիշդ է ասում դռնապանը, մի շաբաթ է՝ որ այդ երկու գեղջուկները գործատան դուռը բացուելից մինչև փակուելը՝ այդտեղ ներկայ են աղքատների շարքից փոքր ինչ հեռու կանգնած, և ոչ ոք չգիտէ, թէ ընչու համար. և որ գլխաւորն է՝ ոչ ոքից ողորմութիւն ոչ խնդրում են և ոչ ընդունում, աւելացրեց գլխաւոր կառավարիչը։

—Ոստիկանի ձեռքով հեռացրէք, հրամայեց Բօղդանովը։

Ռոման Մալաֆէէիչը իր հրամանի կատարմանը չըսպասեց, ոտքերը պինդ պինդ գետին զարկելով՝ գլխաբաց դուրս եկաւ գործատանից, մօտ կանչեց հեռուումը կանգնած ոստիկանակ՝ն ստորին պաշտօնէին, պատուիրեց նորան, որ այսուհետև ոչ մի աղքատի թոյլ չը տայ իր գործատան սահմանին կանգնել՝ մանաւանդ այն երկու ծեր ու պառաւին, որ դրանք այս փողոցովը չը կարողանան անցկենալ։

—Շատ լաւ, ձայնեց ոստիկանը, գլուխ տուեց և իսկոյն մօտենալով ծերին ու պառաւին՝ հրամայեց հեռանալ այնտեղից։

—Օ՜ֆֆֆ, վերջապէս ազատ շունչ քաշեց բարձր ձայնով ծոր տալով Բօղդանովն և գնաց իր տեղը նստեց։

Եւ ճշմարիտ, Մալաֆէէիչի ուրախ տրամադրութիւնը հետզհետէ տեղն եկաւ։ Մի ամբողջ շաբաթ էր անցել և ծերն ու պառաւը՝ ոնց որ գետնի տակն անցան։

—Է՛յ, հրամայեց մի օր Բօղդանովը դռնապանին, այսուհետև չարգելէք աղքատներին, թող գան իրանց տուրքն ստանան. այսպէս էլ հասկացրէք ոստիկանին։

Աղքատները շարունակեցին իրանց սիրած տեղը շարուել։

Ի պատիւ Մալաֆէիչի պիտի ասել, որ նա արդարև աղքատասէր էր, գոնէ նրա արածներն այդ հուշակն էին հանել ամբողջ քաղաքում. եթէ մի օր Մալաֆէիչն իր ձեռքով գոնէ մի լուբլիաչափ աղքատների չէր բաժանում, իր սրտի վրայ կարծես մի բեռն էր ծանրանում, կերածն ու խմածը չէր հապկանում։

Մեծամասնութիւնն ի հարկէ Բոզդանովի մարդասիրական բնական հակումն էին վերագրում նրա քրիստոնէավայել առաքինութիւնը՝ առաւել ևս՝ որ նա շատ իր նման հարուստների ճանապարհովը չէր ընթանում. լսուած չըկար, որ Մալաֆէիչը մէկի կոպէկը կերած լինի, բայց աշխարհը հօ բարեսեսներից միայն չի բաղկացած, յոռետես ու թերահաւատների թիւը նոյնպէս քիչ չէ. կային մարդիկ, որոնք կասկածական աչքով էին նայում Բոզդանովի ընթացքին, որոնք բեղի տակին ժըպտում էին, այլք մինչև անգամ ծածուկ տեղերում իրանց մտերիմների ականջներում ինչոր քչփչում էին. այս ու այն մարդկանց մի ժամանակուան ապահով դրութիւնն իսկ այժմեան դառը վիճակն էին ակնարկներով յիշում, Մալաֆէիչի մատը վաղի սատանի պէս թաւի կոթումն էին տեսնում։ Իսկ հատ ու կտոր ծերունիք, որոնք շատ վաղուց մի մեծ քաղաքից գաղթել էին այն տեղ, նրանք ինչ որ անհաւատալի պատմութիւններ էին անում այն քաղաքի քարվանսարայի մշակ Առստամի մասին։ Իբր թէ մի անգամ մեր յիշած հեռաւոր մեծ քաղաքի քարվանսարայում իջած մի Օսմանցուի հարուստ վաճառականի պարկով լիքը ոսկիքն անհետացել էին և գողը չէր գտնուել ու մարդը դառը դատարկ, ծործորակը քերելով ու մեր աշխարհի կարգը կանոնը հայհոյելով՝ եկած ճանապարհը բռնել, յետ էր դնացել։ Այնուհետև Առստամ մշակը միջքացաւը պատճառ է բռնել, փալանը թիկունքից շպրտել ու անհետացել։ Անցել են տարիներ

և Մ. քաղաքում Առստամին տեսել են մշակի շորերը թողած, եւրոպացու թանգագին հագուստներով զարդարուած։

Այդպիսի հազար ու մէկ բամբասանքներից որ մէկին ականջ կախես. մեզ ինչ, թէ երեկուայ Առստամն էս օր Ռոման է դառել, քիչ օրինակներ կան. ում ինչ գործն է, շատ կարելի է մարդն իր ջահէլութիւնի մեղքն է քաւում. մի օսմանցուի հոսոս ուտէր միայն, թէ հարիւրաւոր աղքատներ օրական ուրախանային։

Վերջապէս ում չար ելեզուն կարող ես բերանումը կարել, դուրս չը թողնել, մեղքն ասողների շլինքը, մենք էսքանը միայն գիտենք, որ Բոզդանովը պարտականութիւն էր համարում իրան ձեռք մեկնող աղքատներին օրական մի մի շահի բաժանելը։

Եւ նրա այդ բարեգործութիւնը, կարծես, նրա առևտրի յաջողութեան պայմաններից մէկն էր։ Մի նախապաշարմունք մխուել էր Մալաֆէիչի ուղեղումը. իր գործը ձախ էր գնում այն օրը, երբ քսան աղքատից պակաս հինգ կոպէկներ էին իր գրպանից դուրս գալիս։

Այդ էր պատճառը, որ Մալաֆէիչը չը կարաց համբերել. գեղջուկ ծերի ու պառաւի հեռանալուց յետոյ, իսկոյն հրամայեց աղքատների ճանապարհն առաջուան պէս ազատ անել։

—

Բոզդանովը խիստ ուրախ է. այսօր նրա առևտրական տունը մի մեծ գործառնութեան մէջ ահագին շահ է ունեցել. նրա հարստութիւնը, համարեա, կրկնապատկուել է։

Նրա ծառայողները նոյնպէս ուրախ են. տէրն իր ձեռքով հանեց դրամարկղից թղթադրամի հաստ փաթեթը և առաջինից սկսած՝ մինչև դոնապանը՝ առատ նուէրներ բաշխեց։

Աղքատներն էլ լաւ բարիկենդան արին, սովորականից դուրս այսօր ամենքը շահու փոխարէն մի մի բուբլի պարգև ստացան ու աղայի կեանքն օրհնելով գնացին։

Բոզդանովը չսպասեց ճաշուայ ժամին իր սեպհական կառքին. նա պարգևաբաշխութիւնն արեց, փողոցային կառք նստեց, քշեց ուղղակի Ֆրանսիական խաղալիքների *մագազինը*, տասնաւոր թանգագին պաճուճապատանքներ ու խաղալիքներ գնեց, այն տեղից մտաւ կերպասավաճառի խանութը, կնոջ համար 35 գազ ամենաթանգագին շորացու կտրել տուեց ու շտապեց ուրախացնելու սիրական ամուսնուն ու անուշիկ զաւակներին։

—

—Մամա, մամաշա, պապաշան եկաւ, ձայն ձայնի տուին երկու, գեղեցիկ, 8—9 տարեկան կենդանի պաճուճապատանքներ Բոզդանովի երեխայքն և վազեցին դէպի կառքը։

Կինը զարմացած մարդու վաղաժամ վերադարձին, ինքն էլ ընդ առաջ եկաւ և բազումը դիմաւորեց ամուսնուն։

Երեխայքը խաղալիքները կառքից յափշտակեցին և տեղն ու տեղը փշրտեցին։

Տիկինը չարացաւ չարաճճիների վրայ, բայց մարդը նկատեց.

—Վնաս չունի, դրանց ցաւը տանի խաղալիքը, թող օրական տասը փշրտեն, Էսօրուանից քաղաքիս հայ հարուստներից ոչ մէկից յետ չեմ մնալ։ Ահա քեզ էլ նոր շորացու։

Ամուսինն երկու խօսքով պատմեց կնոջն իր յաջողութիւնը։

—Եթէ այդպէս է, այն երկու գիւղացուն մի քանի կոպէկ բաշխիր. այսօր ողջ օրն այն անկիւնիցը չեն

հեռանում. կարծեցի քաղցած են, խոհարարին հրամայեցի երեկուանից մնացորդ կերակրներով կշտացնել, բայց ուտել չեն կամեցել, երևի ինչ դարդ ունին։

—Շուտ շուտ մեզ մօտ էին կանչում, որ պաչ անեն, բայց մենք վախեցանք, մօտ չը գնացինք. բաբայ են, մէջ խառնուեցին երեխայքը։

Բողդանովը յետ նայեց ու սարսափահար եկաւ, գոյնը պատի ծեփ դառաւ։ Նրա աչքովն ընկան ձանձրալի ծերուկն ու պառաւը։

—Հիւանդ հօ չէս, շփոթուած հարցրեց տիկինը՝ նայելով մարդին, երեսիդ գոյն չըկայ, ոտք ու ձեռքդ դողում են։

Ոչինչ, ոչինչ, փոքր ինչ սիրտս խառնւում է, դու երեխաներին տա, ներս գնա, ես իսկոյն այս աղքատներին մի բան ընծայեմ ու գամ։

Տիկինը ներս գնաց։

Վերջապէս մինչև երբ, մօտեցաւ Ռոման Մալաֆէյիչն անծանօթներին և զոյգ բազուկները տարածեց օդում, ինձ հանգստութիւն տալու միտք չունի՞ք, ինչ հարկաւոր է՝ տամ, գնացէք, հեռացէք։

—Ախար ընչի՞, ա՛յ որդի, Առստամ ջա՛ն, իմ ու մօրդ աչքերը ջուր դառան քսան տարի ճամփէդ սպասելով, թէ մի օր կամ ինքդ կերևաս, կամ մի մատը թուղթդ կըգայ, ուրիշների դարիբութիւն գնացածները երկու տարին մի անգամ միջքների փալանները քաղքումը թողում էին, աղէքանց պէս զարդարուած գալիս էին իրանց իրաւորին ուրախացնում, համա մենք մեր գլուխն էինք ծեծում. օրը լուսանում էր, մեր աչքերն անքնութիւնից ուռած էր, մթնում էր, արտասունքից կարմրած էր...

—Մօր օրօրոցը կրակ ընկնէր, բալա ջա՛ն, իմ ջանին հանդիպէին էն սև սև մտքերը, որ գլխումս

պտտւում էին, հէնց կարծում էի թէ հիւանդ ես, գլուխդ մի փորձանքի է հանդիպել, կամ տունս քանդուել է, գրողի ճանգն ես ընկել։ Փառքիդ մեռնիմ Աստուած, երկնաւոր թագաւորն ուրախացնի Ալէքենց Խէչօյին, ոնց որ նա ինձ ուրախացրեց. մի օր որ չասեց, թէ, խնամի Եղսան, ինչ *մուշտուլուղ* (աչքալուսէքի պարգև) կը տաս, որ քեզ մի աչքալոյս տամ, էն սհաթը *ուրէս* տուեց (գգացի), հոգիս ներսից վկայեց, որ դու ողջ առողջ ես։ Ձեռաց քուչի մէջտեղը չոքեցի, ոտները փաթաթուեցի. Խէչօ ջան, ասացի, ջանս քեզ մատաղ, իմ Առստամից մի բարի համբաւ։

— Առստամս ո՞րն է, խնամի ջան, ասաց. թէ Ռոման Մալաֆէիչի համբաւն ես ուզում, Մ. քաղաքի էս գլխիցը մտիր, էն գլխումը դուրս արի, վերջին երեխէն Բոդդանովի գովքը կանի. հարստութիւն հօ չի նրա ունեցածը, ծով է, ծով։

—Թէ ես գլխի չընկնէի. դու մեռած կը լինէիր, ընդհատեց ծերը կնոջը, ես լսել էի, որ աղայ մարդիկն իրանց անունը փոխում են, ձեռաց հասկացայ, որ Ռոման Մալաֆիչ Բդդանովն ու Ծատուրենց Մաղաքի տղայ Առստամը մի խօսք է. երկուսն էլ դու էիր։

—Լաւ, յետոյ, հիմի ինչ է ձեր ուզածը։

— Ի՞նչ պիտի լինի, ես՝ քո գլխամեռ մէրը ու էս զգզգուած հալիւոր քո հէրն էն ենք ուզում, որ հերիք է քսան տարի մեր մինուճար որդուն կարօտ մնացինք, տանդ մի քունջ տաս, կուչ գանք, քեզանից ոչ հաց ենք ուզում, ոչ շոր, ունեցած չունեցածներս գեղումը ծախել ենք, ծոցներս դրել, բերել, մեզ գերեզման կը հասցնի, մեր հոգին կը հոգայ, դեռ մի քանի շահի էլ քո երեխեքանցը կըմնայ, էնքան լինի, որ դու տանից դուրս գնալիս՝ ու տուն յետ դառնալիս՝ մի հրոպպէ ներս մտնես, քո անուշ լեզուովդ՝ *ափի* (հայ-

ըիկ), Նանի (մայրիկ) բարի լիս, բարի ըիկուն ասես, թուշդ դէմ անես՝ պաչենք, սրտներս ուրախ՝ քեզ կեանք ու քո երեխէքանցդ ու խանում կնկանդ արևշատութիւն խնդրենք. վերջը քո ձեռի մի բուռը հողին արժանանանք։ Էս է մեր խնդիրը, Նանը ոտիդ տակին թաւալ թաւալ գայ, Առստամ ջան, շատախօսում էր մայրը։

—Ուրեմն ձեր միտքն էն է, որ իմ անունը հողի հետ հաւասարացնէք հա, դուք ուզում էք, որ աշխարհքն իմանայ, թէ հազար հազարների տէր Ռոման Մալաֆէիչ Բօղդանովը ու մի ժամանակուան քարվանսարայի մշակ, փալանը շալակին Առստամը մի և նոյն մարդն է, ձեր պէս անհասկացող բռի, կոպիտ, անտաշ, սարիցն իջած գազանի որդին է, որ հարստութիւնիս նախանձող, հացիս գլխին նստած իմ պատուի ու աստիճանի մարդիկ անուշ թիքէքս կուլ տալով՝ վրէս ծիծաղելով ասեն, թէ ընչի՞ հէրդ ու մէրդ մեզ հետ սեղանակից չեն։ Էդպէս չէ՞, այդ չի՞ ձեր մտքինը։ Չէ, այդ անկարելի է, ես երկու գիւղացի վայրենի պառաւների պատճառով թքանքատել չեմ դառնալ. կամ դուք պէտք է էս քաղաքիցը հեռանաք, օրն էս օր, հէնց էս րոպէին, վերցրէք ինչքան փող ուզում էք ու էնպէս աշխարհ քաշուեցէք, որ ձեզ ոչ ոք չը ճանաչի, թէ չէ՝ գիտեմ ինչ կանեմ։

—Այ որդի, մեր եկած օրից դու էդ ճամփէն մեր առաջը դնում ես. տեսնում չես, որ ոտքներս տեղիցը չի կտրւում, իմը հօ իմը՝ աւելի քո ջրատար պառաւ մօրը, խօսեց հայրը. դէ, էն է՝ մենք մեր ճամփէն գտել ենք. ամէն օր գալիս էինք քո դուքանի աղքատների շարքից մի քիչ հեռու կանգնում էինք, երեսդ տեսնելով՝ մեր սրտի փափագը լցնում էինք, մեր կարօտն առնում էինք, ուրախ ուրախ գնում էինք մեր

քրեհած քնջնումը սրտներս հանգիստ կուչ գալիս՝ մինչև մէկէլ առաւօտը։ Հօ վնաս չէինք տալիս, մի անգամ հետդ խօսեցինք ու երբ որ իմացանք, թէ մեր յայտնուիլը քեզ դուր չի գալի, մտքներումս դրինք ոչ հետդ ձէն տալ, ոչ մի մարդի ասել, թէ մենք ինչ մարդի հէրն ու մէր ենք։ Ենքանն էլ մեզ հերիք էր, որ ամէն օր գայինք հեռուից հեռու պայծառ երեսիդ արժանանայինք։ Ի՞նչ էիր ուզում, ա՛յ որդի, որ պօշիցով մեզ դռնիցդ քշեցիր։ Հիմի մօրդ խօսքն էն է, որ թուրն երեսներիս խաղացնես, մենք էս քաղաքիցը ոտ չենք փոխելու. թէկուզ երեսդ էլ չըդանք, էն էլ մեզ մխիթարութիւն է, որ քո խմած ջրիցն ենք խմում, քո ծծած օդն ենք ծծում։

—Ի՞նչ ասացիր, այս քաղաքից չէք հեռանա՞լ, ծնողաց աչքերին նայելով՝ տուեց Մալաֆէիչը այս հարցը։

—Սպանես, չենք հեռանալ, պատասխանեց մայրը։

—Չէ՞ք հեռանալ, ասում էք չէ՞ք հեռանալ. ա՛յդ է ձեր վերջին խօսքը։

—Հէնց էս է, որ լսում ես, պատասխանեցին մարդ ու կին։

—Շատ էլ լաւ կանէք, սրտերիդ ցանկութիւնը կը լցուի, էգուց ձեր կորած որդու երեսին մի մին բուռը հող կը քցէք, ու այնպէս կերթաք ձեր գիւղը. եթէ չէք հաւատում, համեցէք ձեր աչքովը տեսէք։ Ես իմ պատրաստութիւնը տեսել եմ, էս բոպէիս դեղատանիցն եմ գալիս, մի շուշա դեղ առայ, որ ձեր աչքի առաջին խմեմ ու վեր ընկնեմ, մեռնեմ։

Եւ Բօղդանովն. արդարև, գրպանից հանեց մի շիշ կարմրադեղնագոյն հեղուկ, շտապով խցանը բացեց, մօտեցրեց բերանին ու դարձաւ մօրը.

—Մնաս բարին, պառա՛ւ, ծծած կաթս հալալ արա, դու էլ, հալեւո՛ր, մնաս բա՛ր, ուտացրած հացդ հալալ արա։

—Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, յարձակուեցան երկու ծերունիքը ոդդու վրայ և ձեռքիցը խլեցին շիշը։ Բարեբաղդաբար հայրն էր խլողը. առանց մտածելու, նա շիշը զարկեց քարին ու փշրտեց։

—Հա՛, հա՛, հա՛, հը՛, հը՛, հը՛, հոհոռց Մալաֆէէչը, էդ մի շիշը որ կոտրեցիր, դրանով սիրտդ հանգըստացաւ. մի ժամից հինգ էդպէս շիշ կառնեմ ու կը խմեմ. էգուց կը գաք ու դուռ ու տունս տէրտէրներով ու տիրացուներով լցուած կը գտնէք. թէկուզ գլխներդ քարովը տուէք, ինձանից յետոյ մեռէք, ինձ ի՞նչ, ոչ կիմանամ, ոչ տխրեմ, կամ ուրախանամ։ Մնա՛ք բարին, էգուց համեցէք, հոգու հաց անուշ արէք։

Վերջին խօսքի հետ Բօղդանովը երեսը շրջեց դէպի տուն։

—Կա՛ց, ոտիդ տակին մեռնի՛մ, Աստամ ջա՛ն, կա՛ց, յառաջ վազեց, որդու առաջին չօքեց ու ծնկները գրբեկեց պառաւը։ Չէ՛, բալա ջան, չէ՛, գլուխներս քարովը տուինք, որ եկանք, քո սիրտը տրամացրինք. դու հազար տարի ապրի՛, բալա ջան, մենք հէնց էս սհաթը գլուխ կառնենք, էս քաղաքիցը կը կորչենք ու քո սիրտը չենք ցաւացնիլ։ Գնա՛նք, այ ճար կտրածի հալիւ՛որ, գնա՛նք, բալէս ասում է՝ գնացէք, մենք էլ գնանք. էս էլ հերիք է, որ մեր կուրանալու աչքովն երկու ողջ շաբաթ իր լսի պէս պատկերը տեսանք, իր սիրուն աղունակի երկու դոխերին—իր բալէքանցը, իր նաշխուն, զալամով քաշած նշանածին (կնոջը) հեռուից մտիկ տուինք ու Աստծուն փառք տուինք։ Յետ դառ, Մաղա՛ք, գնանք, հայհայներս գնացել է, վայվայներս է մնացել, քսան տարի ոնց որ դիմացել ենք, մի քանի ժամանակ էլ կը համբերենք, մինչև Աստուած իր տուած ամանաթը (աւանդը) յետ կառնի։ Նրանից յետոյ մեր որդին մեր հոգու համար մի քանի սև փող

կը բաշխի աղքատներին, մի «Հոգւոց» ասել կը տայ, ինքը գիտի, չի անիլ, ինքը ողջ լինի։

—Ա՛յ հիմի խելօք խօսեցար, նանի, քաղցրացաւ ու ժպտաց Մալաֆէիչը, միայն թէ դուք էս քաղաքից հեռացէք, ձեր մահից յետոյ երկու էնպէս մարմարի մատուռ կանգնացնեմ ձեր վրէն, որ մատով ցոյց տալու լինի. տարեկան հինգ նաւակատիկի ժամ պատարագով ձեզ յիշեմ, յիշատակեմ։

—Դէհ, բեր էդ չալ չալ աչքերդ պաչեմ ու գնամ, բալա ջան, ասաց պառաւն ու գրկեց մինուճարին։ Նոյնը արեց և հայրը, երկար միջոց ծերունիքը չէին կարողանում բաժանուել զաւակից։

Դարձեալ պատիւ Ռոման Մալաֆէիչ Բոզդանովին. նա մի բոպէ մոռացաւ իր դիրքը և ջերմագին համբուրեց կոշտացած ու չորացած ծնողական ձեռքերը և երբ գլուխը վեր քաշեց, աչքերումն արտասուք էր լճացած։

—Առէք ահա էս քսակը, առաջարկեց Բոզդանովը ծնողներին մի տուռզ թղթապանակ։

—Մենք մեզ համար ապրելու փող ունինք, բալա ջան, խօսեց հայրը, էդ քո բալուկների համար պահիր. բայց աղքատներին ամէն օր բաժանած շահիներիցը երկու հատ տուր, մեր մօտ պահենք յիշատակ ու մեռնելուս մինը մօրդ հետ կտակենք թաղելու, մինն ինձ հետ, մեր որդու աշխատանքն է, իր ծնողներին հալալ է։

Բոզդանովն ստիպուեց ծերի հրամանը բառացի կատարել և թուշը դէմ անել մի մի համբոյր նրանց նորից տալ ու ճանապարհ դնել։

—

Ա՛յ խելք, ո՞ր տեղից միտքս եկաւ, տուն մտնելուս որոճում էր մտքում Մալաֆէիչը, հազարներ արժէր երկու բուբլիանոց վարդի իւղը, լաւ էր որ աչքս տեսաւ ու կնոջս համար ֆրանսիացու մագազինից գնեցի. միամիտ գիւղացիք, նրանք ո՞ր տեղից պիտի վարդի իւղը թոյնից զանազանէին։

Էգուց մէկի փոխարէն տասը հատ կառնեմ կնոջս համար։

Պերճ Պռօշեանց



ՍԵՒ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ



Ո՜հ, արդեօք ես ինչո՞ւ ծնայ
Անէութեան անհուն ծոցէն.
Ինչո՞ւ կուրծքիս տակ սիրտ մը կայ,
Ուր յուզումներ կը փոթորկեն։

Ինչո՞ւ ապրիլ... ինչո՞ւ սիրել...
Երբ կեանքն է վիշտ, իսկ սէրը թոյն.
Ի՞նչ նպատակ զուր տառապել,
Երբ կ'անհետինք մռայլ, անգոյն։

Երբ ազնիւ ու վեհ ձգտումներ
Միշտ կը զոհուին դաժան Ես-ին,
Երբ գեղեցիկ յատկութիւններ
Կեղտերու մէջ կը կորսուին...

Ո՜հ, չեմ ուզեր ես այս կեանքը,
Որտեղ չը կայ սուրբ նպատակ,
Ուր յարատև սո՛ւ տանջանքը
Մութ փոս մ'ունի, մութ, անյատակ...

Հրանտ-Վահէ

---

* * *

Ո՜հ, թող որոտայ կեանքի փոթորիկ,
Ամեղ շանթերով ինձի հարուածէ.
Թող յար փշրուին յոյսերս քաղցրիկ,
Սև ճակատագիրս թող ինձ հալածէ։

Ես այդ բոլորը սիրով կը տանիմ,
Լուռ և անմրմունջ տոկալով բաղդիս,
Բաւ է, որ միայն սիրտ մը մտերիմ
Վշտակցի ինձ հետ, նոր յոյս տայ հեգիս...

Հրանտ-Վատէ



ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԸ

1.



Ս. Խաչ վանքը, որ Երևանցի Խաչէնց Մարգարը կոչում է «Երկնահանգէտ Սուրբ Խաչ վանք Նոր-Նախիջևանու», հիմնարկել է Ռուսաստանի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղուլեանը, որ Նոր-Նախիջևան հայաքաղաքի հիմքը դնելով և ժողովրդի ցանկացած եկեղեցիները նորա մէջ չինելով, կամեցել է դորանով գաղթականների նուիրական զգացմունքին լիովին բաւականութիւն տալ։ Վանքի հիմնարկութիւնը եղել է 1783 թուին, շինութեան սկիզբը — 1786-ին, իսկ օծումը — 1792 թուականի նոյեմբերի 27-ին, ինչպէս վկայում է Խաչէնց Մարգարը. «իսկ զկնի այնց հիահրաշ գործոցն կատարման, ի նոյն 1792 թուին, նոյեմբերի 27-ին, օծմամբ սրբացուցեալ զչքնաղ զերկ-

նահանգէտ Սուրբ Խաչ վանքն Նոր Նախիջևանու, զկառուցեալն յինքենէ...» [1]։ Ամբողջ 6 տարուայ ժամանակամիջոցը, որ անցել է վանքի հիմնարկութիւնից մինչև նորա օծելը, անշուշտ գործ չէ դրուել նորա շինութեան վերայ, որովհետև այնպիսի մի փոքրիկ վանք, ինչպիսին Ս. Խաչն է, այդքան երկար ժամանակի շինութեան կարօտութիւն չունի։ Անկասկած վանքի շինութիւնը վաղուց արդէն պատրաստ է եղել, բայց ուշացել է օծումը, որովհետև Յովսէփ արքեպիսկոպոսը բազմաթիւ գործերից աչք չէ թափել, ժամանակ չէ ունեցել օծելու. նա այդ ժամանակները զբաղուած է եղել Գրիգորուպոլ հայաբաղաքի հիմնարկութեամբ, որ մի դժուարին և երկար ժամանակ պահանջող գործ է եղել, որովհետև հարկաւոր է եղել արքեպիսկոպոսին Բեսսարաբիոյ զանազան քաղաքներից ժողովել հայերին մի տեղ, մի կենդրոնում բնակեցնել նոցա։ Ինչպէս յայտնի է, Գրիգորուպոլի հիմնարկութիւնը եղել է նոյն իսկ 1792 թուականին, ուրեմն արքեպիսկոպոսը առաջ վերջացրել է Գրիգորուպոլի հիմնարկութիւնը, յետոյ շտապել է Նոր-Նախիջևան և օծել է վանքի շինութիւնը։ Խօջէնց Մարգարի մեր վերը բերած վկայութիւնը ևս՝ «իսկ զկնի այնց հիահրաշ գործոց» ակնարկում է Գրիգորուպոլ քաղաքի հիմնարկութիւնը, որովհետև դորանից առաջ նա ասում է, որ ինքը 1792 թուին տպել է մի գիրք «Դուռն ողորմութեան» անունով, որի մէջ լիովին պատկերացրած է Գրիգորուպոլի և Նոր-Նախիջևանի հիմնարկութեան պատմութիւնը, որ կատարուել է Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռքով։ «Արդ՝ յանցեալ ամին (1792), գրում է նա, տպմամբ ծնեալ եղև յանախտ ճշմարտախօսութենէ իմմէ՝ մանուկ ինչ շրք-

---

[1]) Տես «Պատմութիւն Թէլամաքի», Թարգմանութիւն Մարգար Զաքարիայի Խօջէնց Երևանցւոյ. էջ 363։

նաղատես և վայելչագեղ, անուանեալ Գուռն ողորմութեան, յորում դէտ անաղօտ հայելով՝ տեսանի բովանդակ հանդէսն՝ ընդ լիակատար պատմութեան՝ Գրիգորուպոլ քաղաքին Հայոց, հիասքանչ հիմնարկեցման, ընդ որոյ և Նոր-Նախիջևանու գերահռչակ հիմնարկութեան։ Որով զմեծամեծ գործոցն աստուածայնոց՝ զհանդէսն, որ առ աղգս հայասերունդ զարմանագործեաց ի յայսմ ոսկեղէն դարու, աստուածարեալ բարերար խնամածուին իմոյ Տեառն Յովսէփայ Սրբազան Աբք Եպիսկոպոսին՝ հիւսիսային կողմանցս»։ Վանքի շինութեան և օծման յիշատակարանը, որ փորագրուած է մարմարիոնեայ տախտակի վերայ և դրուած է այժմուայ շինութեան հարաւային դրան ձախ կողմը, հետևեալ կերպով է արձանագրում վանքի հիմնարկութիւնը՝ «Ընորհօքն Աստուծոյ կառուցի զսուրբ Խաչ վանքս և հաստատեցի ի սմա զդրպրոցս և զտպարանս ես Սանահնեցի Արղութեանց Զիուչբէգի որդի և սուրբ Էջմիածնայ նուիրակ և Ռուսաց երկրի Հայոցս ազգի առաջնորդ Յովսէփ Արքեպիսկոպոս ի կայսերութեան ամենայն Ռուսաց Եկատերինէ Ալէքսէովնին Երկրորդի և ի հայրապետութեան ամենայն Հայոց Տեառն Ղուկասու կաթողիկոսին աշխատութեամբ հոգևոր որդւոյն իմոյ բայազիտցի Կարապետ վարդապետին օծեալ եղև յամի Տեառն 1791 և ի Հայոց թուին ՌՄԽ ի սեպտեմբերի։ Օծաւ 1792 Նոյեմբերի 27» [2])։ Մենք ասա-

[2]) Այս արձանագրութեան մէջ, ինչպէս կարելի է տեսնել, վանքի օծման թուականը երկու տեսակ է նշանակուած՝ «Օծեալ եղև յամի Տեառն 1791 և ի Հայոց թուին ՌՄԽ ի սեպտեմբերի և օծաւ 1792 Նոյեմբերի 27»։ Թէև բուն արձանագրութեան մէջ յիշուած թուականը է 1791-ը, իսկ «Օծաւ 1792 Նոյեմբերի 27» բառերը փորագրուած է մարմարիոնի շրջանակի վերայ, բայց մենք այդ վերջինը աւելի ճիշտ ենք համարում, որովհետև վանքը օծուել է Գրիգորուպոլ քաղաքի հիմնարկութիւնից յետոյ, որ եղել է 1792-ին։

ցինք այժմուայ շինութեան, որովհետև վանքը հիմնովին վերանորոգուած է Այվազեան Գաբրիէլ վարդապետի առաջնորդութեան և Մկրտիչ Յովակիմեան վարդապետի վանահայրութեան ժամանակ։ 1862 թուին Այվազեան առաջնորդը Խալիբեան դպրոցի այն ժամանակուայ տեսուչ և Սիւնհոդոսի նախկին պրոկուրոր Յովհաննէս Եսայեան Միրաքեանի հետ այցելելով իւր թեմի զանազան տեղերը, յունիսի 3-ին ժամանում է Նախիջևան, որտեղ ամեն բան աչքի անցնելուց յետոյ, նոյն ամսի 27-ին այցելում է քաղաքի իշխանների հետ և Ս. Խաչ վանքը։ Նա տեսնելով, որ վանքը շատ հնացած ու մաշուած դրութեան մէջ է, պատարագից յետոյ յորդորում է իշխաններին նորոգելու շինութիւնը։ Առաջնորդի ոգևորուած քարոզը և յորդորանքը մեծ տպաւորութիւն են թողնում քաղաքացիների վերայ։ Թարմ տպաւորութեան ներքոյ ստորագրութիւն է բացուում և հէնց այդ տեղ ստորագրուած գումարի քանակութիւնը հասնում է վեց հազար ռուբլու։ Իսկոյն և եթ ընտրուում են երկու հոգաբարձու՝ Աղա Գէորգ Խաթրանեան և Աղէքսանդր Ալաջալեան, որոնց և յանձնուում է թէ ստորագրութիւնը քաղաքացւոց մէջ շարունակելու և թէ վանքի վերանորոգութեան վերայ հոգալու գործը։ Երբ որ քաղաքացւոց մէջ ևս ստորագրութիւնը յաջողութիւն է գտնում և ստորագրած գումարը հասնում է 18 հազարի, երկու հոգաբարձուն իսկոյն և եթ ձեռնարկում են հին շինութիւնը քանդելու, նիւթեր պատրաստելու և 63 թուականի օգոստոսի 4-ին աշխարհախումբ բազմութեամբ և մեծահանդէս շքեղութեամբ Մկրտիչ վանահօր ձեռքով կատարում են վանքի նորոգ հիմնարկութեան օծման հանդէսը [3])։ Մեր վերը բերած յիշատակարանի մէջ, ինչպէս

---

[3]) «Պատմութիւն Խալիբեան ուսումնարանի». էջ 68. և «Մասեաց Աղաւնի» և «Ծիածան Հայաստանեայց». էջ 278—280։

կարելի է տեսնել, կայ միայն շինութեան աւարտելու և օծման թուականը, իսկ բուն հիմնարկութեան և շինութեան սկսուելու թուականը չէ յիշուած։ 1783 և 1786 թուականները, որոնցից առաջինը հիմնարկութեան օծման թուականն է, իսկ երկրորդը շինութեան սկսուելուն, մենք գտնում ենք Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռագիր «Դաւթարում» [4]), որ բարեբաղդաբար անկորուստ է մնացել և ամբողջութեամբ մեր ձեռքն է հասել։ Այդ տետրակում երջանկայիշատակ եպիսկոպոսը խօսելով Նոր-Նախիջևանի Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցու հիմնարկութեան մասին, ասում է՝ «ընդ սմին օծաք (ի 1783 թ.) և զհիմունս վանիցն, որ յանուն Փրկչին և Ս. Խաչին» [5]), իսկ մի փոքր

---

[4]) «Դաւթարը» մի մեծադիր կաշուէկազմ գիրք է, որ իւր մէջ պարունակում է իւր՝ Յովսէփ եպիսկոպոսի ձեռքով գրած Նախիջևանի հիմնարկութեան համառօտ պատմութիւնը, եկեղեցիների հիմնարկութեան յիշատակարանները և Խոտիից բերած եկեղեցական իրեղէնների ցուցակը։ Նորա լիակատար վերնագիրն է՝ «Դաւթար ի Ղոիմու բերեալ եկեղեցական անօթիցն արծաթեղինաց և շորեղինաց։ Արարեալ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակ և Ռուսաց երկրի ամենայն Հայոց ազգին Առաջնորդ և Նոր-Նախիջևանայ հիմնադիր տեառն Յովսէփայ արքեպիսկոպոսին սանահնեցւոյ Արդութեանց, աշակերտի հոգելոյս սուրբ Հայրապետին ամենայն Հայոց տեառն Սիմէօնի երևանցւոյ։ Յամի Տեառն 1780 և ի Հայոց թուականութեան ՌՄԻԹ ի Նոր-Նախիջևան»։ Դաւթարը այժմ գտնուում է բարեկրօն Տէր-Խաչատուր աւագ քահանայի ձեռքին։

[5]) Աւելորդ չենք համարում այստեղ դնել քաղաքի Ս. Լուսաւորիչ եկեղեցու սեղանի տակ դրած յիշատակարանը, որի մէջ յիշուած է և վանքի հիմնարկութեան մասին։ «Ընորհօք ամենազօրին Աստուծոյ, Հիմնացաւ սուրբ Լուսաւորիչ եկեղեցիս յամի մարդեղութեան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, ի 1783 թուին և ի Հայոց ՌՄԼԲ թուին, Սեպտեմբերի 9. ի տօնի երեք հարիւր տասնևութ հայրապետացն սուրբ ժողովուն Նիկիու, որ ի բարիկենդան շաբաթ օրն Սուրբ Խաչի։ Ի թա-

յետոյ գտնուում է և վանքի շինութեան սկսուելու յիշատակարանը՝ «1786 յունիսի 21 'ի սուրբ Լուսաւորչու բարեկենդան կիրակէին վերոյ Փրկիչ և կամ Սուրբ Խաչ վանից հիմն արկի, և շինութեան սկիզբն առնել ետու։ Աստուած հաստատէ ի կատարումն, որ ահա դեզերիմ ի կա-

---

գաւորութեան Մեծի Եկատերինէ Երկրորդ Կայսերուհւոյն ամենայն ռուստաց, որ գագաթ մեր ի Ղռիմու հանեալ եբեր ի Թաթարաց, եբեր ի յերկիրս ռուստաց ի գաւառն Ազովու որ կոչի Ռաստով, յորում քաղաք շինեալ անուանեցաք Նախիչևան ըստ անուան քաղաքամօրն աշխարհի, և ի վեհագոյն ժառանգորդուոյն կայսերական բարձրութեանց՝ մեծ իշխան Պաւլ Պետրովչին և նորին զուգակից մեծ Դշխոյ Մարիա Գեորգիևնին և զաւակաց նոցա՝ մեծ իշխան Աղեքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին և մեծ Դշխոյ, Ալէքսանդր Պաւլովնային։ Եւ ի հայրապետութեան սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց։ Ձեռամբ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակ, ռուսաց երկրի Հայոց Առաջնորդ և նոր քաղաքիս Նախիչևանայ հիմնադիր, ի Քրիստոս հանգուցեալ Սիմէոն կաթուղիկոսի Աշակերտ և Սանահնեցի երկայնաբազուկ Արղութեանց Ջումինոյ՝ իշխան Շիրազի որդի Յովսէփ Արքեպիսկոպոս մեղապարտի՝ որ օծի զհիմունս քաղաքիս և եղի ի չորս կողմն սորին քաղաքիս։ և զհիմն սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյս եղի ի չորս անկիւն սորին երեք երեք քար, յանուն երկոտասան առաքելոցն Քրիստոսի։ և ի ներքոյ սեղանոյն եղի զքարն օծեալ յանուն Փրկչին, ընդ նմին եղի և զքաղում մասունս սրբոց, բայց անյայտս։ վասն զի ի գալն ժողովրդեան մերոյ ի Ղռիմու ի Սամար և ի Կատարենէսլաւ բնակութիւնսն, անդ այրեցեալ էր բոլոր զգեստն և անօթն Ղարասու կոչեցեալ քաղաքին, ուստի արծաթեայ պահարանք սրբոց մասանց հալեցեալք էին և նշխարք սրբոց ամբողջ մնացեալք, սակայն մեզ անյայտ։ բարւոք համարեցաք աստ ամփոփելն։ Ընդ սմին օծաք և զհիմունս վանիցն, որ յանուն Փրկչին և Սուրբ Խաչին։ ապայն հանդիպողքդ յիշեցէք զմեզ ծնողօք մերովք»։ Այս յիշատակարանի վերնագիրն է՝ «Գիր, զոր ընդ հիմանն սուրբ Լուսաւորչի ամփոփեցաք ի յատակ սեղանոյն ընդ մասանց»։

տար հասուցանել»։ Վանքը թէև հասարակօրէն կոչուում է Ս. Խաչ, բայց նորա լիակատար անունն է Փրկիչ Ս. Խաչին։ Նա շինուած է Խռիմում գտնուած Ս. Խաչի վանքի անունով, որ, ինչպէս յայտնի է, նոյնպէս կոչուում է Փրկիչ Ս. Խաչին։ Դաղթականները նոր հիմնարկած քաղաքում շինելով իւրեանց Խռիմում ունեցած վանքի ու եկեղեցիների անունով վանք ու եկեղեցիներ, կամեցել են դրանով վառ պահել իւրեանց սրտում թէ իւրեանց երկրորդ հայրենիքի – Խռիմի յիշատակը և թէ իւրեանց բուն հայրենիքի—Հայաստանի յիշատակը, որովհետև անկասկած է, որ Խռիմի վանքերն ու եկեղեցիներն էլ շինուած են եղել դաղթականների Հայաստանում ունեցած վանքերի և եկեղեցիների անուններով։ Ամենամեծ սրբութիւնը վանքի մէջ, որ և ծառայել է իբրև հիմք շինութեան և անուանակոչութեան, համարուում է այն մեծ խաչքարը, որ այժմուայ շինութեան մէջ տեղաւորուած է աւագ դասի սիւնի մէջ դէպի ժողովրդի կանգնելու տեղը։ Թէև այդ քարը ոչ մի արձանագրութիւն չունի, բայց ի նկատի առնելով քարի յատկութիւնը և նորա վերայ բանդակած խաչի ձևը, կարելի է ենթադրել, որ շատ հին է և, գուցէ, հէնց բերուած լինի Հայաստանից։ Այժմ այդ խաչքարը առնուած է ոսկեզօծ ապակիածածկ շրջանակի մէջ, որի մէջ դրուած է երկու ուրիշ խաչ՝ մէկը պղնձէ մեծ, առանց մասունքի, իսկ միւսը փոքր, արծաթէ անյայտ մասունքով, որոնք մի անունով մեծ խաչի հետ կոչուում են «Ս. Խաչ»։ Պղնձէ Խաչը, որի երեսը զարդարուած է Քրիստոսի խաչելութեան և ուրիշ երկու պատկերով և զանազան էմալի ձևով և արեւելեան ճաշակով քաշած նկարներով, ունի հետևեալ հին յիշատակարանը. «կանգնեցաւ սուրբ նշանս ի բարեխոսութիւն Խաթունին։ Պարոն Զաքարէ դստեր։ Ի թվին ՉՀԸ (1329)»։ Ասել է թէ այդ խաչը շինուած է Ամենայոց Ղրիմի թերակղզին ժամանելուց մի տարի առաջ,

որովհետև Անեցիք, ինչպէս յայտնի է Նոր-Նախիջևանի ձեռագիր Յայսմաւուրքի յիշատակարանից, հասել են Ղրիմ 1330 թուին։ Ս. Խաչի ոսկեզօծ շքեղ շրջանակը կամ պահարանը իւր ծախսով շինել է վանքի ներկայ շինութեան հոգաբարձուներից մէկը Ալէքսան աղա Ալաջալեանը։ Վանքը շինուած է մի բարձր բլուրի վերայ, որ քաղաքից գըտնուում է 7 վերստ հեռու դէպի հիւսիս։ Քաղաքի և վանքի մէջ գտնուած տարածութիւնը, ինչպէս և բոլոր շրջակայքը, դաշտի բնաւորութիւն ունի, որովհետև Նախիջևանը իւր աշխարհագրական դիրքով պատկանում է Ռուսաստանի ցած հարթութեան այն մեծ դաշտային գօտուն, որ բռնում է Բեսսարաբիոյ, Քերսոնի, Եկատերինասլաւի, Տաւրիկեան, Հաշտարխանի, Ստարապօլի, Դոնի և Ուրալի նահանգները մինչև Սև, Ազովի և Կասպից ծովերի ափերը։ Այդ մեծ տարածութիւնը կազմում է մի մեծ դաշտավայր, որ Սև ու Ազով ծովերի ափերի մօտ կոչուում է Պոնտական, իսկ Կասպից ծովի մօտ—Կասպական։ Նա ծածկուած է սահմոլով, որի տակը գտնուում են՝ տեղ տեղ աւազաքար ու կրաքար, տեղ-տեղ հատաքար և գնէյս, տեղ-տեղ էլ կաւիճ, որոնք մի կողմից արգելում են ջրի ծծուելուն, միւս կողմից չեն թողնում, որ ծառերը գետնի մէջ խոր արմատ բռնեն։ Հէնց այդ պատճառով էլ բոլոր այդ տարածութիւնը զրկուած է անտառներից, եթէ չհամարենք այն կարճաբուն ծառերի և մացառների խմբերը, որոնք տեղ-տեղ ձորերի մէջ մարդու աչքի են ընկնում։ Նախիջևանի շրջակայքում մարդ որ կողմ նայելու լինի, կտեսնի միայն լայն, անպարագրելի դաշտը, որի միատեսակ հարթութիւնը միայն երբեմն խանգարուում է ցած բլրակների կանոնաւոր շարքերով, որոնց Ռուսները կոչում են «կուրգաններ», իսկ Հայերը—«Օբաներ», և ձորակներով, որոնց միջով հոսում են ամառը անձրևներից յառաջացած, իսկ ձմեռը ձիւնի հալուածքից գոյացած պըղ-

տոր ջրերը։ Եօթ վերստի փոքրիկ տարածութիւնը, որ բաժանում է քաղաքը վանքից, ունի իւր մէջ այդ տեսակ մի շարք կուրգաններ, որոնցից մի մեծը ընկնում է ուղղակի հէնց կէս ճանապարհի վերայ, ուստի և կոչուում է «Օրթա Օբա», և մի քանի ձորակներ, որոնցից մէկի բարձր բլրանման գագաթի վերայ շինուած է վանքը։ Վանքի այդ տեղ շինելու գլխաւոր պատճառը եղել է, նախ, տեղի բարձրութիւնը, որ իշխելով բոլոր շրջակայքի վերայ, բաւականին ակնահաճոյ տեսարան է ներկայացնում, երկրորդ, քաղաքի մօտիկութիւնը և, որ գլխաւորն է, այն վճիտ և քաղցրահամ աղբիւրը, որ առատութեամբ բղխում է վանքի բլրի աւազաքարի շերտերից։ Առ հասարակ Նախիջեւանի բոլոր շրջակայքը, բացի Դօնի մեծ աւազանից, որ գտնուումէ փոսի մէջ, որովհետև քաղաքը շինուած է գետի աջ-բարձր ափին, զրկուած է անուշահամ առատաջուր աղբիւրներից, եղածները բոլորն էլ կրային են և աղի և անախորժ համ ունին։ Վանքի տեղը առաջ պատկանել է Մարտիրոս Թորոսեան անունով մէկ մասնաւոր մարդու, որից գնել է գաղթականների հետ Նախիջևան եկած «Գանջեցի» Սիմէօն վարդապետը վանք շինելու նպատակով, բայց վերահաս մահը չէ թողել նորան իւր նպատակը իրագործելու։ «Ընդ սմին արկաք զհիմն Փրկիչ վանիցն, զոր մեր յաջորդ (նախորդ) Գանջեցի Սիմէօն վարդապետն, ասում է այդ մասին Յովսէփ եպիսկոպոսը իւր ձեռագիր «Դաւթարում», իւրով կայիւքն էառ զտեղի նորա ի Մարտինէն Թորոսեան, յաղագս վայելչութեան տեղւոյն և ակնակիտ յորդ աղբերացն, որք արդ բխին։ Անդ ժողովեցաք և զամենայն անասունս մեր և կարգեցաք զվերակացուս»։ Շինութեան համար, ինչպէս երևում է, մեծ աշխատութիւն է գործ դրուել, որովհետև աւազաքարից կազմուած բլուրը խորտ ու բորտ մակերևոյթ է ունեցել։ Հարկաւոր է եղել քանդել բարձր տեղերը, տաշել աւա-

զաքարը, իսկ փոս տեղերը լցնել բերովի հողով, մի խօսքով մի արուեստական հարթ մակերեսոյթ կազմել։ Ստացուել է այդպիսով մի ընդարձակ տարածութիւն, որ ըսկսուելով հիւսիսից, գնում է դէպի հարաւ և աստիճանաբար թեքուում է դէպի ձորակը։ Այդ տարածութեան մէջ բլրի մակերեսոյթը երեք կողմից՝ հիւսիսից, արևմուտքից և արևելքից շրջապատուել է պարսպով. մէջ տեղը հիմնարկուել է վանքը, արևելեան կողմը բնակութեան սենեակները, իսկ հարաւային կողմը, որ նայում է դէպի ձորը, բաց է մնացել, թէև այդ կողմից ևս հարկաւոր է եղել քարքաշելով մինչև բլրի մակերեսոյթը, ամրացնել հողը, որպէս զի չեղ մակերեսոյթից հոսած ջրերը չ'տանեն հողը, չ'քանդեն բլրի եզերքը և չ'խախտեն եկեղեցու շինութեան հիմքը։ Իսկ որպէս զի հարաւային կողմը իսպառ բաց չ'մնայ, արևելեան և արևմտեան պարիսպների մէջ, ձորի եզերքում ամբողջ տարածութեան վերայ փայտեայ վանդակապատ է քաշուել, ամրացրած քարէ սիւների մէջ, որի միջից մի դուռն է բացուել, որ բազմաստիճան քարէ սանդուղքով տանում է դէպի ձորը։ Վանքի բակը մտնելու համար, բացի այդ դէպի ձորը տանող դռնից, չինուել է այլ ևս մի մեծ դարպաս, որ բացուած է արևմտեան պարսպից։ Այդ դարպասից բացուել է երկու ճանապարհ, որոնցից մէկը ծռուելով դէպի ձախ, մանուածապատ և դժուարամատոյց արահետով տանում է ձորի միջով դէպի քաղաք, իսկ միւսը թեքուելով դէպի աջ, տանում է դէպի Ս. Խաչի ագարակը (хуторъ), որ բաղկացած է 30 տուն հայ գիւղացիներից և համարուում է քաղաքի մասը։ Մեզ յայտնի չէ, թէ ինչ ոճով է շինուած եղել եկեղեցու հին շինութիւնը, բայց ներկայ շինութիւնը, որ աւելի մեծ է, քան թէ եղել է հինը, հայկական ճարտարապետութեան և ոչ մի նշոյլ չունի։ Դա իւր գմբեթի լայն—բոլորշի ձևով, հարաւային և հիւսիսային դռների հաստ-բոլորակ սիւնա-

զարդով աւելի հին Բիւզանդեան ոճն է յիշեցնում, թէև այդ ոճը ևս շինութեան մէջ բոլորովին պահպանուած չէ։ Եկեղեցին երեք դուռ ունի՝ արևմտեան, հիւսիսային և հարաւային։ Նա թէև, ինչպէս ասացինք, վերանորոգութեան ժամանակ մեծացրած է, բայց դարձեալ մեծ չէ. նորա երկայնութիւնը՝ սեղանից մինչև արևմտեան դուռը 28 քայլ է, իսկ լայնութիւնը՝ հիւսիսային դռնից մինչև հարաւայինը 20 քայլ։ Արևմտեան դրան կից շինուած է դանգակատունը, մի շինութիւն, որ, բացի նորանից, որ շատ անշնորհք ու տգեղ է, այլ և իւր սրածայր աշտարակաձևման ձևով ամենևին չէ համապատասխանում եկեղեցու շինութեան ընդհանուր ոճին, որ բաւականին վայելուչ է ու դոդոբիկ։ Ցաճարի պատերի մէջ արտաքին կողմից զետեղուած են խաչքարեր, որոնք բոլորը ևս ունին կարճառօտ արձանագրութիւններ, հայկական ձևի խաչեր, զարդեր ու քանդակներ։

Ա. Սբ. Խաչս բարեխաւս է Պիսթային և հայրն Սարգսին եւ եղբարցն Յովանէսին եւ Վարդերեսին թվ. ՋՀԲ. (972—1523) Սեպտեմբերի ԻԷ։

Բ. Սբ. Նշանքս բարեխաւս է։ Բլշին. կենակցին սովին Զամբէքն եւ ծնօղացն Սահակին Ղումխթին թվ. ՋԲ. (902 1453)։

Գ. Սբ. Նշանս բարեխաւս է ածատրին Նուրատին համ ակոբին կողակցին քուլասէ խթնին թվ. ՋԻԶ. (926—1477)։

Դ. Սբ. Նշանքս բարեխաւս է Յովանէսին շնոփոր խթն եւ ծնօղացն վարդերին մարինէ մարթային թվ. ՋԷ. (907—1458)։

Ե. . . . . Յս Քս. թվ. ՌՃԿԱ. (1161—1712) . . . . . եւ ծնօղքն առաքել. մհտի մինաս. մուրատ կանգցա սբ. Գէորգա տճրս վրակց մհտի ալսէֆէր պալի մհտի Գրիգոր մհտի Սողոմոն։

Զ. Յշէ սբ. խչս տր. օվանէսի որդի մհտի փանոսին ծնօղացը հուբոն թվին ՌՃԿԱին. (1161 – 1712)։

Է. Սբ. նշանս բարէխաւս է նահատակի պ Գորգին թ. ՋՁԳ. (983—1534)։

Ը. Սբ. նշանս բարեխաւս է աբրահամայ մելիքին Սարգսին մայրին լուսին ավաք պրին թվ. ՊԿԸ. (868—1449)։

Թ. Յկէ սբ. նշանքս Յովանէս աբելին եւ իւր եղբաւրն Սիմէոն կրօնաւորին եւ ծնօղաց իւրոց թվ. ՊՂ. (890 – 1441)։

Ժ. Բարեխաւս են սբ. նշանքս ասլի պիկին սուլթան խթին եւ որդւոյն առաքելին թ. ՋԻԲ. (922 – 1483)։

ԺԱ. Ցիշտկէ սբ. նշանս տր. Պտրոսին եւ երիցկնոջն եւ զաւակացն տր. օվանէսին մանուկին ձեռամբ պրնին թ. ՌՃԾԴ. (1153—1704)։

ԺԲ. Բարեխաւս է սբ. նշանքս արհոն երիցուն օվանէսին տր պապային եւ լատիքին թվ. ՋԹ. (909 – 1460)։

ԺԳ. Բարեխաւս են սբ. նշանքս տր. ածատրին երիցկնոջն Զէրիֆ խթ. տր. պապին անա խթ տովլաթ խթ. տր. աւետիքին քուլաֆ խթ. էտիլ թվ. ՋԻԹ. (929—1480)։

ԺԴ. Սբ. նշ. յիշ. քարխանաճի ոհանէսին իր կողակցին թէրկան խաթուն իր փեսին Սարգիսին իր կենակցին Ճամշ խթնին իր . . . . տրտրին [6])։

---

[6]) Այս արձանագրութիւնների մէջ յիշուած թուականները ցոյց են տալիս, որ այդ խաչքարերը 15, 16, 17 և 18 դարերի գործ են, ուրեմն շինուած ու քանդակուած են Խոիմուսի։ Դոքա առաջ զարդարել են Խոիմի Հայոց եկեղեցիների պատերը, յետոյ գաղթականութեան ժամանակ եկեղեցական միւս իրեղէնների ու սրբութիւնների հետ բերուել են Նախիջևան։

2.

Ս. Խաչի ձորը շրջակայքում գտնուած ձորերից աւելի ընդարձակ է. նա կազմուած է երկու մասից՝ բուն ձորից, որի միջով հոսում են աղբիւրի և անձրևների ու ձիւների հալուածքից գոյացած ջրերը, և նորա շարունակութիւնից, որի վերայ ձգուած է վանքի ընդարձակ պարտէզը։ Ձորը անմիջապէս կից է Ս. Խաչի բլրին, այնպէս որ երթևեկութիւնը վանքի և պարտէզի մէջ կատարուում է փայտէ կամրջով, որ ձգուած է բուն ձորի վերայ վերոյիշեալ սանդուղքից սկսած մինչև պարտէզը։ Պարտէզի տեղն էլ, ինչպէս վանքի տեղը, մասնաւոր մարդուց է գնուած. նա առաջ պատկանել է մի պարոնի, որ այդ տեղ շինած է եղել մի փոքրիկ պարտէզ և զանազան շինութիւններ։ Հայազգի Մարտիրոս Շահնարեան զինուորականը իւր սեփական արդիւնքով գնելով այդ տեղը, ընծայել է վանքին, որ այն ժամանակ թէև դեռ գոյութիւն չէ ունեցել, բայց Յովսէփ արքեպիսկոպոսը արդէն մտադրած և որոշած է եղել կառուցանելու [1]։ Վանքի շինութիւնից յետոյ նախկին պարտէզի մօտ գտնուած շինութիւնները քանդել են և բոլոր տարածութեան վերայ պար-

---

[1]) Պարտէզի մասին մեր ունեցած տեղեկութիւնը մենք առնում ենք Նախիջևանի «Հայկական Մագիստրատի» ատենադպիր Մ. Մորոզովի ռուսերէն գրած ձեռագիր տետրակից, որ իւր մէջ պարունակում է Նախիջևանի համառօտ պատմութիւնը։ Մ. Մորոզովը իւր այդ գրուածքում, որ գտնուում է մեր ձեռքում, Ս. Խաչի պարտէզի մասին հետևեալ նկատողութիւնն

տէղ են ձգել, որ շատ յաջող կերպով աճել ու մեծացել է։ Պէտք է առհասարակ նկատել, որ Նախիջևանի հողը ծառատունկի համար անպէտք և անյարմար է, որովհետև, նախ, սահողի շերտի տակ գտնուում է աւազաքար ու կրաքար, որ արգելում են տունկերին խոր արմատ բռնելու, երկրորդ, ձմեռները անպակաս է լինում մրրկախառն բուքը, որ սառցնելով մատղաշ բոյսերի և տունկերի ծիլերը, չորացնում ու ցրտահար է անում նոցա։ Ս. Խաչի պարտէզի աճելուն նպաստել են ձորի հողի յատկութիւնը և տեղի դրութիւնը։ Ձորը երկար ժամանակ ջրերի հոսանքի յատակ լինելով, ժամանակի ընթացքում ծածկուել է պտղաւէտ տղմի հատտ շերտով, որ միջոց է տալիս բոյսերին խոր արմատ բռնելու, իսկ տեղի դրութիւնը դաշտի մակերևոյթից շատ ցած լինելով, պաշտպանում է ծառերը քամիների և ձմեռնային սառնամանիքի վնասակար ազդեցութիւնից։ Պարտէզը նամանաւանդ ընդարձակուել, բարեկարգուել ու շրջացել է Ցարութիւն աղայ Խալիբեանի ամենառակալութեան օրով, որ եկեղեցական գումարներից 18 հազար ռուբլի ծախսելով նորա վերայ, այնպիսի նախանձելի դրութեան է հասցրել նորան, որ շատ հեռաւոր տեղերում չէ կարելի գտնել նորա նմանը։ Խալիբեանի ժամանակն են բացուել կանոնաւոր ծառուղիները, նորա ժամանակն են տնկուել պտղատու ծառերը՝ տանձենիները, խնձորենիները և բալենիները, նորա ժամանակն է դրուել և ծաղկանոցի ու տնկարանի սկիզբը [8])։

է անում. „Садъ этотъ принадлежалъ какому-то Г-ну построившему здѣсь на полуденкѣ хуторокъ, за постройку и садъ по оцѣнкѣ заплатилъ деньги Армянинъ порутчикъ Мартинъ Шагнаровъ и подарилъ предполагавшемуся строиться здѣсь Монастырѣ, впрочемъ теперь изъ стараго осталось очень мало“.

[8]) Պարտէզի այդ բարեկարգութիւնը կատարուել է գլխ. խաւորապէս Գէորգ աղայ Խաթրանեանի ձեռքով, որին Ցարու-

Բուն ձորը, որ վանքի բլրի տակ շատ նեղ է, գնալով դէպի արևմուտք, լայնանում է և կազմում է մի բաւականին ընդարձակ տարածութիւն, որի վերայ ձգուում է վանքի

թիւն Խալիբեանը իւր կողմից յանձնած է եղել վանքի կառավարութիւնը։ Խաթրանեանը կառավարել է վանքը Խալիբեանի աթոռակալութեան համարեա բոլոր ժամանակամիջոցում «Հոգաբարձու» անունով և հրաժարուել է այդ պաշտօնից միայն այն ժամանակ, երբ սաստկացել են Հայրապետեան և Խալիբեան կուսակցութիւնների կռիւները։ Երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթուղիկոսը իւր 67 թուին Նախիջևանին արած այցելութեան միջոցում վանքի կառավարութիւնը նորից յանձնում է Գէորգ աղային, որ այս անգամ կառավարում է նորան լիազօր իշխանութեամբ 69 թուականից մինչև 76-ը։ Հանգուցեալ կաթուղիկոսի այդ կարգադրութիւնը անելու մասին պատմում են հետևեալը։ Մի օր կաթուղիկոսը հրաւիրուած է լինում Խալիբեանի մօտ ճաշի. այդտեղ խօսակցութիւն է բացուում Ս. Խաչի և նորա կառավարութեան գործերի մասին և կաթուղիկոսը ցանկութիւն է յայտնում վանքի կառավարութիւնը նորից յանձնել Գէորգ աղային, որի կառավարութեան մասին շատ գովասանք էր լսել։ Խաթրանեանը թէև առաջին նուագ իւր ծերութիւնը և զանազան տեսակ առարկութիւններ մէջ բերելով, հրաժարուում է, բայց յետոյ զիջանելով իւր կուսակից Խալիբեանականների ակնարկութիւններին, ընդունում է կաթուղիկոսի առաջարկութիւնը և ստանում է նորա օրհնութիւնը։ Բայց միւս օրը մտածելով, թէ ինչ դժուարութիւններ պէտք է առաջ գան և ինչ նեղութիւններ պէտք է քաշէ ինքը վանքը կառավարելու գործում տիրող կուսակցութիւնների պատճառով, նա զղջում է իւր տուած համաձայնութեան վերայ և գնալով վեհափառի մօտ, խնդրում է ազատ կացուցանել իրեն յանձնած պաշտօնից։ Հանգուցեալ կաթուղիկոսը պատասխանում է, թէ ինքը պատրաստ է արձակել նորան միայն թէ նա կարողանայ յետ տալ այն օրհնութիւնը, որ ստացել էր նորանից իւր տուած համաձայնութեան համար։ Վեհափառի այդ խօսքերին ոչ մի պատասխան չգտնելով, Խաթրանեանը նորից համբուրում է կաթուղիկոսի ձեռքը և յետ է առնում իւր հրաժարականը։

բանջարանոցը։ Տղմաշղախ հողը և աղբիւրի ջրի առատութիւնը, որ ամառուայ երաշտութեան ժամանակ մեքենայով բարձրացնուում է բարձր տեղերը, նպաստում են բանջարեղէնի յաջող աճելուն և հիւթաւէտութեան։ Բանջարանոցի սահմանումն է և այն աղբիւրը, որ յայտնի է «Սաղկ—սու» անունով։ Հին ժամանակներից Նախիջևանցիք սովորութիւն են արել գալ այդ աղբիւրը, լողանալ նորա մէջ, լուանալ հիւանդ և ցաւած տեղերը և հնոտիներ փաթաթել նորա մօտ գտնուած ծառերի ճիւղերին։ Ժողովրդի կարծիքով այդ աղբիւրի ջուրը սուրբ է. նա դեղ է զանազան ցաւերի ու հիւանդութիւնների, բայց մանաւանդ ջերմի, ուստի և կոչուում է «Սաղկ սու», այսինքն առողջարար կամ բուժիչ ջուր։ Մինչև վերջին ժամանակները դեռ այդ աղբիւրի վերայ շինուած փայտեայ ամպհովանու մէջ կախուած էր մի պատկեր, որ թէև շատ հնացած ու ժանգոտած էր, բայց դեռ հեշտութեամբ կարելի էր նկատել նորա վերայ Աստուածամօր երեսի գծագրութիւնը։ Ահա Նախիջևանցւոց «Սաղկ-սու»-ին ուխտի գալու և նորա մօտ գտնուած ծառերին հնոտիներ փաթաթելու այդ սովորութիւնն է, որ այնքան գեղեցիկ կերպով նկարագրում է հանգուցեալ Միքայէլ Նալբանդեանցը իւր «Մինին խօսք, միւսին հարս» Նախիջևանի կեանքից առած վէպի մէջ։ Վանքի բլրից դէպի արևելք ձորի մէջ գտնուում է աղբիւրը, որ առատութեամբ քաղցրահամ ջուր է մատակարարում թէ վանքին և թէ ագարակի բնակիչներին։ Նա մի քանի առանձին ակունքով բղխելով բլրի աւազաքարի և կրաքարի շերտերից, դեռ վանքի հիմնարկութիւնից առաջ և յետոյ ևս երկար ժամանակ հոսելիս է եղել ուղղակի ձորի միջով, լճանալով և բռնելով բոլոր ձորի տարածութիւնը, որից և յառաջացած են եղել եղէգնուտ ճախճախուտներ, որոնց հետքերը մինչև ցայսօր դեռ երևում են կամրջի մօտ։ Ցետագայ ժամանակներում վան-

քի վարչութիւնը նկատելով, որ ձորի ճահիճները ամառուայ տաքութիւնից հոտելով, ապականում են օդը և մնասում վանքում ապրողներին, նամանաւանդ որ ջրի քաղցրութեան, տեղի բարձրութեան և օդի մաքրութեան պատճառով քաղաքացիք սովորութիւն էին արել ամարանոց դալ վանքի սենեակները և ագարակը, աղբիւրի բոլոր աչքերը հաւաքում է մի տեղ, որի վերայ քաղաքացի Յովհաննէս Մարկոսեան Պօպովը իւր փողով շինում է մի գեղեցիկ ամեն կողմից փակուած ապիւսակերտ աւազան։ Դորանով մի կողմից մաքրուում է աղբիւրի ակունքը, միւս կողմից էլ արգելուում է ջրերին զանազան կողմեր տարածուելու և լճանալու։ Բայց այդ դեռ բաւական չէ լինում. ճահիճները բոլորովին չորացնելու համար հարկաւոր է լինում մի առանձին առու բանալ և նորա միջով հոսեցնել աղբիւրի բոլոր ջուրը, որով և իսպառ առնուում է ջրերի լճանալու առաջը և ճահիճները սկսում են կամաց-կամաց չորանալ և ցամաքել։ Ահա այդ ցամաքած ճահիճների տեղն է վանքի այժմուայ բանջարանոցը, որի մասին մենք վերը յիշեցինք։ Վանքի բակի հիւսիս-արևելեան կողմի շինութիւնները մէկ անգամից չեն կառուցուել. առաջ շինուել են արևելեան կողմում գտնուած վանահօր, դպրոցի և տպարանի սենեակները, որովհետև Յովսէփ արքեպիսկոպոսը վանքը հիմնարկելուց յետոյ, իսկոյն և եթ մշտական վանահայր է նշանակել, դպրոց է բաց արել և տպարան հաստատել, ուրեմն և հարկաւոր է եղել այդ բոլորի համար վայելուչ շինութիւններ ունենալ, յետոյ կառուցուել են հիւսիսային սենեակները, երբ քաղաքացիք սկսել են Ս. Խաչ ամարանոց դալ և վանքը ևս օգտաւէտ է համարել վարձու տալու նոցա իւր սենեակները։ Մագիստրատի 1811 թուականին Տագանրոգի քաղաքապետ գեներալ—մայոր Պոպկովին Հայերին պատկանած հողի և նորա վերայ գտնուած շինութիւնների մասին տուած տե-

ղեկագրից մենք իմանում ենք, որ վանքին պատկանած բոլոր. շինութիւնները այդ ժամանակ բաղկացած են եղել մի եկեղեցուց, վանահօր 32 սենեակներից և մէկ ջրաղացից։ По рѣчкѣ Темернику, ասուած է այդ տեղեկագրի մէջ, состоитъ одинъ Монастырь, съ каменною вокругъ оградою, въ немъ находится одна церковъ, архіерейскій домъ въ 32 покоя, при немъ водяная мельница». Ժամանակի ընթացքում այդ շինութիւնները քանիցս անգամ ենթարկուել են փոփոխութեան՝ բանգուել, վերանորոգուել, աւելացուել են. նամանաւանդ մեծ փոփոխութիւն է եղել 68 թուին, երբ նախկին վանական դպրոցը փոխուել է ներկայումս գոյութիւն ունեցող գիշերօթիկ ժառանգաւորաց ուսումնարանին։ Հարկաւոր է եղել արևելեան կողմում գտնուած նախկին «վանահօր բնակութիւն» կոչուած շինութիւնը յարմարացնել գիշերօթիկ ուսումնարանի պահանջներին։ Ամբողջ շինութիւնից 3 սենեակ թողնելով վանահօր բնակութեան համար, մնացեալներից աւելացնելով և փոփոխութեան ենթարկելով, կազմել են մի մեծ ննջարան, մի դահլիճ և երեք դասարան։ Մի քանի ժամանակից յետոյ վանահօր սենեակների և դպրոցի շինութեան մէջ նախկին խոհանոցի տեղը շինուել է և մի սենեակ, որով միացել և ամբողջութիւն է ստացել բոլոր շինութիւնը։ Այդ վերջին սենեակը շինուել է այն 400 ռուբլիով, որ հանգուցեալ բարերար Մկրտիչ Սանասարեանը իւր 75 թուին վանքին արած այցելութեան ժամանակ նուիրել է յօգուտ դպրոցին, ցանկութիւն յայտնելով, որ այդ փողով շինուի մի առանձին սենեակ դպրոցի մատենադարանի և թանգարանի համար։ Փողի հետ միասին հանգուցեալը նուիրել է դպրոցին և շատ ուսումնական պիտոյք՝ գրքեր, բնագիտական գործիքներ և աշխարհագրական քարտէզներ։ Հին շինութիւնից այդ ժամանակները

անփոփոխ են մնացել միայն գոմանոցը և նորա մօտ գտնուած մթերանոցի կամ ուրիշ տնտեսական պիտոյքների համար յարմարեցրած փոքրիկ սենեակները։ Ահա այդ շինութիւնն էր, որ 1891 թուականի մարտի 3-ին կրակի ճարակ եղաւ։ Կրակը ընկել էր դպրոցի հնոցից, բայց թէ ինչպէս էր պատահել—, այդ անյայտ մնաց, որովհետև գիշերն էր եղել։ Աշակերտները վերակացուի հետ քնած լինելով, չէին նկատել, նա մանաւանդ որ դասարաններում օդի հոսանք չլինելու պատճառով, կրակը չէր կարողացել իւր բոլոր զօրութեամբ բորբոքուել, այլ անընդհատ կերպով ամբողջ գիշերը ծխացել և մխով լցրել էր սենեակները։ Առաւօտեան միայն նկատելի էին ծուխը և բաց արել պատուհանները, բայց հրդեհը այնքան արդէն առաջ է գնացած եղել, որ այլ ևս հնար չէ եղել առաջն առնելու։ Մինչև աղբիւրից տակառներով ջուր հասցնելը, մինչև քաղաքից հրդեհաշէջ մեքենաների ժամանելը, ամբողջ շինութիւնից միայն պատերն են մնացել։ Կրակի զօրութիւնը այնքան սաստիկ է եղել, որ մինչև անգամ չեն կարողացել ազատել դպրոցի կահ-կարասիքը։ Բոլորը այրուել է՝ սեղանները, գրատախտակները, նստարանները, աշակերտների անկողինները և մինչև անգամ ուսումնական պիտոյքը և մատենադարանի մի մասը, իսկ կրակից հանուած հատուկտոր իրեղէնները միանգամայն կոտրատուել, փշացուել և անպէտք էին եղել գործածութեան համար։ Հրդեհի ժամանակ ընկելկորել է և այն մարմարոնեայ տախտակը, որ դրուած էր հանգուցեալ Սանասարեանի ծախքով շինած սենեակի ճակատին։ Նորա վերայ, որքան մենք յիշում ենք, փորագրուած էր հետևեալը՝ «Շինեցաւ մատենադարանս և թանգարանս ծախիւք մեծապատիւ Մ. Սանասարեանի ի 1875 ամի»։ Դպրոցի այրուելու և փակուելու լուրը մեծ տխրութեամբ համակեց քաղաքացւոց և նամանաւանդ

Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը, որ 68 թուականից սկսած խնամում ու հոգում էր դպրոցի վերայ։ Իսկոյն և եթ ընկերութեան նախագահ Պօղոս Խաթրանեանի ղեկավարութեամբ յանձնաժողով կազմուեցաւ, որին և յանձնուեցաւ դպրոցը վերաշինելու և բանալու հոգը։ Մեծ եռանդով և օրինակելի ջանասիրութեամբ ձեռնարկեցին գործին յանձնաժողովի անդամները, մեծ օժանդակութիւն ցոյց տուեց քաղաքիս փոխադարձ վարկի ընկերութիւնը և դպրոցի շինութիւնը առաւել պայծառ կերպով ապահովուեցաւ։ Վանքի գլխին եկածը մեծ չարիք էր, բայց նա ունեցաւ և իւր լաւ կողմը։ Առաջուայ շինութիւնը, որ սկզբից դպրոցի համար շինուած չ'լինելով, ոչ մի մանկավարժական յարմարութիւն չունէր, աշակերտական կահ-կարասիքը, որ փչացուած և հին ձևի լինելով, միանգամայն անհամապատասխան էր արդի մանկավարժական պահանջներին, բոլորը վերանորոգուեցաւ, բոլորը շինուեցաւ ժամանակիս պահանջներին համեմատ։ Անկասկած եթէ հրդեհը չ'լինէր, դպրոցը դեռ երկար ժամանակ կ'մնար իւր նախկին անբարեկարգ դրութեան մէջ և ոչ ոք չէր մտածիլ նորա վերայ. չարիքը այս դէպքում բարիք ծնեց և արդարացաւ այն առածը, որ ասում է, թէ «Ցամենայն չարեաց բարի ինչ ելանէ»։ Դպրոցը վերաբացուեցաւ 1894 թուականի սեպտեմբերին վեհափառ Հայրիկի օրհնութեան կոնդակով [9])։ Ս. Խաչ վանքը, բա-

[9]) Այսու Հայրապետական կոնդակաւ, ասուած է դպրոցի վերաբացման առթիւ արձակած կոնդակում, օրհնեմք բոլորով սրտիւ զնոր սկզբնաւորութիւն ազգաշահ ձեռնարկութեանդ ի բարգաւաճումն և յօգտակար ծառայութիւն Առաքելական սրբոյ եկեղեցւոյս մերոյ և Հայաստան ազգիս։ Օրհնեմք զդպրոցդ ժառանգաւորաց և զՄարդասիրական ընկերութիւնդ՝ հովանաւորողդ դպրոցին. օրհնեմք զխորհրդարանդ և զբարերար նախագահ և զամենայն անդամս ընկերութեանդ։ Օրհնեմք զբարեպաշտ նուիրատուս և զաշխատաւորս։ Օրհնեմք զուսուս-

ցի բանջարանոցից, պարտէզից, ունի այլ ևս երեք հարիւր օրավար հող, որի եկամտով մի տեսակ կառավարւում, մի տեսակ ծայրը ծայրին է հասցնում։ Սակայն քաղաքը աչք ունի և այդ հողի վերայ. նա պնդում է, որ վանքը հող չունի և որ այդ երեք հարիւր օրավարը տրրուած է նորան միայն ժամանակաւորապէս օգտուելու համար։ Այսպիսով դուրս է գալիս, որ վանքը բոլորովին կալուածք չունի, որ անկարելի է, որովհետև դեռ եղած չէ Հայերի մէջ մի վանք թէ Հայաստանում և թէ գաղութներում, որ մի որ և է կալուածքով ապահովուած չ'լինի։ Վանքերը, ինչպէս յայտնի է, շինուում էին կամ հոգևորականներից, կամ թագաւորներից ու իշխաններից և կամ մեծատուն ու հարուստ մարդկանցից և ամեն դէպքում ապահովուում էին հաստատուն կալուածներով՝ հողերով, ջրաղացներով, կրպակներով, գիւղերով, ագարակներով, որոնց յիշատակագիրը փորագրուում էր վանքի պատերի վերայ։ Եւ դուրիշ պէս լինել էլ չէր կարող, որովհետև պէտք էր կրօնաւորներին ապրուստ տալ, վանքի մէջ ապաստանող հիւանդներին, ծերերին կերակրել, պահել։ Ահա Հայաստանում վանքերի վերաբերութեամբ օրէնքի զօրութիւն ստացած այդ սովորութիւնն էր, որ գաղթականները իւրեանց հետ տարան և իւրեանց գաղթած տե-

---

ցիչս և զաշակերտս։ Եւ մաղթեմք յերկնային Մարդասիրէն, զի հրդեհն որ հրկիզեաց զնիւթական շինուածն, հրկիզեալ հալածեսցէ և ի չէք դարձուսցէ յայսմհետէ զամենայն նիւթական և զբարոյական խոչընդոտս և արգելս ի հասարակօգուտ հաստատութենէ Ձերմէ և կենդանարար Խաչն, որ կանգնեցաւ ի փրկութիւն ազգի մարդկան, օգնական լիցի ձեզ ի պահպանութիւն և յարատևութիւն ազգանուէր հաստատութեանդ։

Դպրոցը պրուեցաւ Սուքիասեան Եփրեմ վարդապետի վանահայրութեան օրով. նոյն վարդապետի օրով երկու տարի յետոյ եղաւ և դպրոցի վերաբացումը։

ղերը։ Անկարելի բան է կարծել, որ Նախիջևանցիք, որոնք հաստատ եկամուտներով ապահովել էին իւրեանց նախկին ընակութեան — Խուիմի Ս. Խաչը, չմտածէին Նախիջևանի Ս. Խաչի ապահովութեան մասին, անկարելի է կարծել, որ Յովսէփ արքեպիսկոպոսը, որ այնքան հըմուտ էր Հայոց եկեղեցական սովորութիւններին, կարգ ու կանոնին, աչքի առաջ ունեցած չ'լինէր իւր հիմնարկած և փայփայած վանքի ապագան։ Ահա այս հաւանական ենթադրութիւնների մէջ է ծնունդ առնում այն կալուածական խնդիրը, որի մասին հոգեւոր իշխանութիւնը միշտ վէճ է ունեցել քաղաքիս վարչութեան հետ, որ քաղաքիս մէջ անդադար խօսք ու զրոյցի առարկայ է եղել և որի մասին մեր պարբերական թերթերում շարունակ տեղեկութիւններ են տպուել։ Այդ խնդիրը յայտնի է «Ութ հազար օրավար հողի խնդիր» անունով։

Յ.

Վէճի բուն և էական մասը կազմում է Հոգեւոր իշխանութեան քաղաքից ութ հազար օրավար հողի պահանջը Ս. Խաչի համար։ Հոգեւոր իշխանութիւնը իւր այդ պահանջը հիմնում է այն հանգամանքի վերայ, որ Եկատերինէ կայսերուհու Նախիջևանցւոց տուած արտօնութեան հրովարտակի մէջ ասուած է, թէ քաղաքացւոց չնորհուում է 12 հազար օրավար հող, իսկ 1781 և 1799 թուականներին կատարուած ընդհանուր երկրաչափական տեղեկագրերով քաղաքին և վանքին պատկանած հողերի քանակութիւնը հաշուած է միասին 20000 օրավար, ուրեմն այժմ քաղաքի ձեռքին գտնուած 20 հազար օրավարից 8 հազարը՝ վանքի բաժինն է։ Վէճը սկսուում է 48 թուականից Մատթէոս Վեհապետեանի առաջնորդութեան և վանքի վանահօր պաշտօնակատար Մկրտիչ վար-

դապետ Յովակիմեանի օրերով [10]։ Առաջնորդը 48 թուականին այցելելով վանքը և մի քանի ամիս այնտեղ մնալով, վերահասու է լինում նորա տնտեսական դրութեան և տեսնում է, որ վանքը շատ աղքատ է։ Դորա պատճառը նա տեսնում է այն հանգամանքի մէջ, որ վանքի և քաղաքի հողերը տակաւին անբաժան ու խառնուած են, ուստի և վանքը միջոց չունի լիովին օգտուելու իւր կալուածքից։ Առաջնորդը վերադառնալով Նախիջեւան, իսկոյն և եթ դիմում է Նախիջեւանի Հոգեւոր կառավարութեան և տեղեկութիւններ է պահանջում վանքի հողերի մասին, բայց բաւականացուցիչ պատասխան չէ ստանում, որովհետեւ կառավարութեան գործերի մէջ այդ մասին տեղեկութիւն չէ երեւում։ Այն ժամանակ նա առաջարկում է կառավարութեան դիմել տեղական Հայոց Մագիստրատին և Ս. Խաչի վանահօրը և բոլոր հարկաւոր տեղեկութիւնները հաւաքելով, անմիջապէս իրան հաղորդել։ Մագիստրատը իբրեւ Նախիջեւանի միակ պաշտօնական հաստատութիւնը, որի մէջ 'ի սկզբանէ անտի կենդրոնացած էր բոլոր քաղաքի և նորա հաստատութիւնների գործերի կառավարութիւնը, պէտք է որ լիակատար տեղեկութիւն պարունակէր իւր գործերի մէջ վիճելի կալուածական խնդրի մասին, իսկ Ս. Խաչի վանահօր պաշտօնակատար Մկրտիչ վարդապետը իւր ունեցած տեղեկութիւններով կարող էր նպաստել գործին, որովհետեւ շատ ժամանակ էր, որ պաշտօն էր կատարում վանքում և լիովին ծանօթ էր գործի

---

[10]) Այս վէճի պատմութիւնը մենք քաղում ենք այն գործից, որ այժմ պահուում է Ս. Խաչում և կոչուում է «Գործ ըստ առաջադրութեան Սրբազան առաջնորդին առ Հայոց Հոգեւոր կառավարութիւն Նախիջեւանի յաղագս հարցանելոյ ուստի պէտք են վասն ունելոյ սուրբ վանիցն ի Տերութենէ նշանակեալ և յատկացուցեալ վարելահողից և սկսեալ ի 26 Մայիսի 1848 ամի»։

հանգամանքներին։ «Լուեալ եմք, գրում է առաջնորդը իւր այդ առաջադրութեան մէջ, որպէս զի Սուրբ Խաչ վանքն տեղւոյս ունի պարգեւեալ 'ի բարեբանեալ Տերութենէ Ռուսաց զբաւականաչափ վարելահողս և խոտատեղիս՝ 'ի ժամանակս յատկացուցանելոյ վասն քաղաքիս և վասն գիւղօրէից զայնպիսի երկիրս հողոյ, այլ 'ի բացատրութենէ մատուցելոյ մեզ ի 22 նախընթաց ապրիլի կառավարութեանդ այդորիկ չերևի ինչ ծանօթութիւն զայնմանէ առանձինն. վասնորոյ հրամանագրեմ դոյն հոգեւոր կառավարութեանդ, զի եթէ դա չունի այլ եւս զայնմանէ ըստ-մուտ տեղեկութիւնս, վաղվաղել հարցանել 'ի Մկրտիչ վարդապետէ 'ի վաղուց անդուստ եղելոյ 'ի վանք անդր, և գիտել 'ի նմանէ զհարկաւոր գիտելիս վասն իսկապէս ունելոյ վանիցն հողս և զորքանութիւնս նոցին և յետ ընկալելոյ 'ի նմանէ զծանօթութիւնս գրութեամբ ընդ տեղւոյս (Մագիստրատին) մարմնաւոր դատարանին, և խընդրել անտի զլիուլի ծանօթութիւնս վասն վանքական հողոյն և որքանութեան նոցին, յոր ժամանակէ տուելոյն 'ի սեփականութիւն վանիցն և ընդ այսչափ ժամանակս ընդ որոյ տեսչութեամբ եղելոյն և ում տիրելոյ ցարդ եկամտից նոցունց առաջի ունելով ընդ սմին միանգամայն և զձեւակերպութիւն պլանի որքանութեան պատկանեալ հողից վանիցն, զորպիսի տեղեկութիւնս յետ հաւաքելոյ կառավարութեանդ այդորիկ փութալ յայտնել մեզ լիուլի հանգամանօք վասն արժանապատիւ կարգադրութեան համաձայն օրինաց»։ Իւր ցանկացած տեղեկութիւնները ստանալուց յետոյ, առաջնորդը պաշտօնական թղթով դիմում է Նովորոսսիոյ և Բեսսարաբիոյ գեներալ—նահանգապետին և խնդրում է արքունի երկրաչափ ուղարկել և չափել—բաժանել վանքի հողերը բաղաքի հողերից։ Այդ թուղթը, որի մէջ պատմուած է առաջնորդի վանքին արած այցելութեան մասին, պարունակում է իւր մէջ մի քանի կէտ-

տեր, որ բաւականին լոյս են ձգում վիճելի խնդրի վերայ։ Դորա մէջ, նախ, յիշուած է, որ բարձրագոյն հրովարտակով 1779 թուին Նախիջևանցւոց շնորհած բոլոր հողը առաջին անգամ չափուած և բաժանուած է քաղաքացւոց և գիւղացւոց մէջ երջանկայիշատակ Յովսէփ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ 1781 թուին, երկրորդ, այդ հողաչափութիւնը կատարելու ժամանակ վանքին և քաղաքին բաժին ընկած հողի քանակութիւնը, որ եղել է 20,009 օրավար, 578 սաժեն, միասին է հաշուած, երրորդ, հողաչափութեան յատակագիծը հաստատուած է 1801 թուին Նովորոսսիոյ նախկին երկրաչափական գրասենեակում և պահուում է Մոսկուայի երկրաչափական դիւանատանը և, չորրորդ, 20,009 օրավար, 578 սաժեն հողից քաղաքին պատկանում է 12 հազար օրավար, իսկ վանքին 8 հազար օրավար 578 սաժեն։ Գեներալ—նահանգապետը ստանալով վիճակաւորի թուղթը, հրամանագրում է Տագանրոգի քաղաքապետին այդ մասին կարգադրութիւն անել։ Քաղաքապետն էլ սկսում է տեղեկութիւններ ժողովել այն կէտերի վերաբերութեամբ, որ յիշուած էին առաջնորդի թղթում, ուստի և դիմում է Նախիջևանի Մագիստրատին, քաղաքագլխին և Մոսկուայի երկրաչափական դիւանատունը, որից առաջ է գալիս մի բաւականին երկար թղթակցութիւն առաջնորդի և գեներալ—նահանգապետի մէջ։ Մինչ պաշտօնական կողմից գործը այսպէս ձգձգուում է, սկսուում է և մի երկար թղթակցութիւն վանքի վանահօր Մկրտիչ վարդապետի և քաղաքագլուխ Յարութիւն Խալիբեանի և առաջնորդի ու Հայոց Մագիստրատի մէջ, որ մեզ նկարագրում է այն թշնամական դիրքի մասին, որ բռնել էր դէպի վանքը Խալիբեանը և նորանից առաջ եկած անբաւականութիւնների և անախորժութիւնների մասին։ Անբաւականութիւնները, որոնք և վերոյիշեալ թղթակցութեան պատճառն են լինում,

առաջ են գալիս հետևեալ դէպքերից։ Վանահայրը, ըստ սովորութեան, վանքի դաշտը տալիս է «չոմաքների» ա նասուններ արածացնելու համար, անասնագլուխ 15 կ. թղթադրամ գին նշանակելով։ Քաղաքի հողերի կալալառուները քաղաքագլխի հրամանով ընդդիմանում են, ասելով, վանքը իրաւունք չունի, իսկ քաղաքից հողերի վերայ նշանակուած պահապանները բռնում են «չոմաքների» 70 գլուխ տաւարը և վանքի մի եզը և ստիպում են վանահօրը յետ տալ առած փողերը և յետոյ միայն վերադարձնում են եզները։ Միւս անգամ վանահայրը դարձեալ, ըստ սովորութեան, գոչում է գիւղացիներին վանքի համար քաղաքից նշանակուած արօտատեղի խոտը հնձելու։ Քաղաքի պահապանները քաղաքագլխից ստացած հրամանի հիման վերայ արգելում են գիւղացւոց կատարել իւրեանց այդ շատ հին ժամանակներից սովորութիւն դարձած պարտականութիւնը, սպառնալով, որ եթէ նորա չլսեն և չդադարեն, հրաման ունին նոցա քաղաք տանել և բանտարկել։ Վերջապէս վանք են գալիս քաղաքագլխի կողմից երկու աստիճանաւոր և պաշտօնապէս յայտնում են, թէ վանահայրը իրաւունք չունի այսուհետև վանքի պարիսպներից դուրս գտնուած հողի վերայ՝ ոչ խոտ հնձելու, ոչ սերմանելու և ոչ վարձու տալու։ Վանահայրը գրում գանգատուում է այդ բոլորի մասին քաղաքի Հայոց Մագիստրատին, նոյն իսկ Խալիբեան քաղաքագլխին, բայց երկու կողմից էլ բացասական պատասխան է ստանում։ Մագիստրատը յայտնում է, որ քաղաքի հողերը գտնուում են անմիջապէս քաղաքագլխի իշխանութեան ներքոյ, ուստի և ինքը իրաւունք չունի խառնուելու նորա գործերին և նորա արած կարգադրութիւններին, իսկ քաղաքագլուխը կտրողական և վանահօր համար շատ վիրաւորեցուցիչ կերպով պատասխանում է, թէ վանքը հող երբէք չէ ունեցել և չունի, իսկ եթէ նա

այսքան ժամանակ օգտուել է քաղաքի հողերից՝ հնձել է, սերմանել է, անասուններ է արածացրել, այդ բոլորը թոյլատրուել է միայն ի պատիւ վանքին։ Ինչ ասել կուզի, որ այդ թղթակցութեան մէջ ամենահետաքրքիրը Խալիբեանի վանահօր գանգատին տուած պատասխանն է, որովհետև քաղաքապլուխը իբրև միակ պաշտօնական անձնաւորութիւնը, որ իրաւունք ունէր կարգադրութիւններ անել հողերի մասին, անկասկած պէտք է որ լաւ տեղեկութիւններ ունենար վիճելի խնդրի մասին, եթէ, յայտնի բան է, չուզենար աղաւաղել փաստերը, ինչպէս այս դէպքում երևում է։ «Ստացեայ զհաղորդագրութիւն ձեր գրեալ յ30 մայիսի № 20, գրում է նա, սովին պարտաւորութիւն համարեմ յայտնել Ձերումդ Արժանապատուութեան, նախ, վանքն իւրեան սեպհական դաշտ երբէք չէ ունեցեալ և այժմ ևս չունի, այլ ի վաղ ժամանակաց հետէ ի պատիւ նորին կայ նմա թոյլատրեալ միայն սերմանել զսերմն և արածել զխաշինս և զայլ անասունս ի վերայ հասարակութեան տեղւոյ միայն ինքնին պատկանեալս. երկրորդ, վանքն չունելով իւր սեպհական դաշտ, չունի ապաքէն և զիրաւունս իբրև սեպհական տէր թոյլատրել որոց և կամիցի՝ արածել ի դաշտի հասարակութեան զտավարս և զայլ ապրանս պատկանեալս այլ և այլ անձանց և զարդիւնս ինքեան սեպհականել. Երրորդ, եթէ որպէս ասէք դուք՝ զայդպիսի թոյլատրութիւն ձեր առնէք յօգուտ վանիցն, ուրեմն և պարտ է ճանաչել, թէ դուք ջերմեռանդ էք առ վանքն և զնորին օգուտն խոկայք, ապաքէն զորպիսի օգուտ հասուցեալ էիք դուք նմին այդպիսի ջերմեռանդութեամբ ձերով յընթացս երկոտասան ամաց անցեալ ծառայութեան ձերոյ և զինչ արդիւնաւորութիւն եգիտ ի ձէնջ վանքն քաղաքիս, բայց եթէ ոչինչ վանորոյ նորին վեհափառութիւն Սրբազնագոյն կաթուղիկոսն ամենայն Հայոց տեսանելով

զայդպիսի ապարդիւն ծառայութիւն ձեր ի կենդակի իւրում առ իս անուանեալ էր զՁեզ երկոտասանամեայ մնասապարտ Ս. Խաչ վանիցն Մկրտիչ վարդապետն։ Ուրեմն խնդրեմ ի ձերմէ Արժանապատուութենէ չառնել զայդպիսիս, ոչ բերեալս իւրում պարտաւորութեան. ընդ սմին և ի ռուս չոմաքներէն առեալ փողերդ ետ տալ և ի մէնջ այդպիսի գրութեամբ ձերով բան չպահանջել, այլ պարտ են նոյն չոմաքներն երթալ օթքուբշչիքներուն պատկանեալ փողը տալ նոցա և եղը ետ ստանալ։ Միանգամայն յայսմ գրութենէ ձերմէ օրինակն որով ցուցանէք զձեզ արդիւնաւորողս վանքին, և ի սոյն պատասխանագրութենէ իմմէ՝ առ Նորին վեհափառութիւն»։ Խալիբի այս թղթին վանահայրը ուրիշ պատասխան չի գտնում տալու, բայց միայն, թէ «գրէք թէ վանքն չունի սեպհական դաշտ՝ այլ ի վաղ ժամանակաց հետէ ի պատիւ Նորին թոյլատրեալ լինէր սերմանել և արածել զխաշինս և զայլ անասունս։ Ասա բացապէս ի յայտ երևի զի վանքն ոչ թէ չունի այլ ունի՝ որովհետև դուք ինքնին վկայէք թէ ի պատիւ Նորին թոյլատրեալ լինէր», և թէ «չէ ձեզ փութ թէև Նորին վեհափառութիւն այլ ևս անարգէ զմեզ մեք եմք հպատակ և ծառայ Նորին Սրբազան Հայրապետութեան և նա է զլուխ մեր և Տէր Հոգևոր և զինչ նա վասն մեղասարաս անձանց գրէ չէ ցաւ՝ այլ՝ դուք որովհետև հաւասարիք միաչափ և միաստիճան ըստ Նորին սուրբ Օծութեան որպէս երևի՝ գերազանց է քան զկարն և զչափն՝ վասնորոյ և ես պարտաւորեալ գտայ յետ զեկուցանելոյս Ձեզ զայսմանէ յայտնել կարգաւ ուր որ հարկն է»։ Քաղաքագլուխ Յարութիւն աղայ Խալիբեանի դէպի վանքը բռնած այս թշնամական դիրքի պատճառը պէտք է որոնել այն թշնամական յարաբերութեան մէջ, որ կար Նորա և Բեսսարաբիոյ թեմի առաջնորդ Մատթէոս եպիսկոպոս Վեհապետեանի մէջ։ Մատթէոս եպիսկոպո-

սը 47 թուականին երջանկայիշատակ Ներսէս կաթուղիկոսից նշանակուած լինելով Բեսսարաբիոյ առաջնորդ, իւր գործունէութիւնը Նախիջևանում սկսել էր նորանով, որ մերժել էր Խալիբի աթոռակալութեան իրաւունքները և ձեռնարկել էր նշանաւոր «եկեղեցական գումարների» հաշուապահանջութեան գործին, որով, և յայտնի բան է, անհնարին կերպով զայրացրել ու գրգռել էր իւր դէմ նորան։ Ինչ ասել կուզի, որ առաջնորդի 48 թուականին Ս. Խաչ վանքին արած այցելութիւնը և վանքում արած կարգադրութիւնները, որոնք դարձեալ ուղղուած էին նորա դէմ, թէև կողմնակի կերպով, որովհետև վանքի կառավարութիւնը ևս առաջնորդի գալուց առաջ գտնուում էր նորա ձեռքին, աւելի ևս սուր բնաւորութիւն էին տուել նոցա յարաբերութեան, աւելի ևս գրգռել էին նորա ինքնասիրութեանը։ Խալիբի վիրաւորեցուցիչ թղթակցութիւնը վանքի վանահօր հետ, նորա վանքին հասցրած նիւթական վնասները, քաղաքապետ իշխան Լեվենին տուած կարծիքը վանքապատկան հողերի մասին անկասկած նորա այդ վիրաւորուած ինքնասիրութեան արգասիքն են։ Վերջապէս երկու տարի և կէս ժամանակ անցնելուց յետոյ, 1851 թուականի Հոկտեմբերի 30-ին ստացուում է Նովորոսսիոյ և Բեսսարաբիոյ գեներալ—նահանգապետի Մատթէոս եպիսկոպոսի 49 թուականին գրած թղթի վերջնական պատասխանը, որ իւր բացասական բնաւորութեամբ վհատեցնում և ձեռնթափ է անում առաջնորդին, թէև այնքան էլ վհատելու բան չկար, որովհետև այդ միայն դեռ վարչական իշխանութեան որոշումն էր. իսկ վարչական իշխանութիւնը դրական կերպով իւր որոշումը կարող է արտայայտել միայն այն գործերի վերաբերութեամբ, որոնք արդէն որոշուած—վերջացած են և կարօտ չեն ուրիշ ապացոյցի։ Մնում էր դեռ դատարանական իշխանութիւնը, որին միշտ կարող էր դիմել ա-

ռաջնորդը և իւր կողմնակի ապացոյցներով տանել գործը և նոյն իսկ վարչական իշխանութեան ձեռքով իրագործել տալ իւր ցանկացածը։ Հէնց այդ վերջին կէտի վերայ մատնացոյց է արուած և մինչև անգամ օրէնքի յօդուածները ևս մէջ է բերուած և նահանգապետի թղթի մէջ՝ «Вопросъ о принадлежности Крестовоздвиженскому монастырю участка земли изъ городскаго выгона можетъ и долженъ быть разрѣшенъ на основаніи 478 ст. закон. гражд. по VI. продолж. св. закон. (изд. 1842 г) порядкомъ судебнымъ». Նահանգապետը իւր բացասական պատասխանը հիմնում է Ցագանրոգի քաղաքապետի իւրեան տուած զեկուցագրի հետեւալ կէտերի վերայ՝ Նախ, երջանկայիշատակ Եկատերինէ կայսերուհու Նախիջեւանցւոց շնորհած հրովարտակի մէջ ոչ մի խօսք չէ ասուած վանքին հող տալու մասին, երկրորդ, սահմանաչափութեան գրքի մէջ չ'կայ նշանակուած, թէ վանքին առանձին հողաբաժին է յատկացրած, երրորդ, Նախիջեւանի քաղաքագլուխ Յարութիւն Խալիբեանի զեկուցագրից երեւում է, որ վանքը երբէք առանձին հողաբաժին չէ ունեցել, բացի այն տեղից, որի վերայ շինուած է, և, չորրորդ, Հայկական Մագիստրատը ամենևին տեղեկութիւն չունի Ս. Խաչին պատկանած կամ պատկանելիք հողի մասին։ Միայն մի կէտ կայ Նահանգապետի թղթի մէջ, որ կարող էր ծառայել վանքի օգտին իբրև փաստ, բայց դժբաղդաբար այդ կէտի վերաբերութեամբ էլ թէ Խալիբեանը և թէ Մագիստրատը բացասական պատասխան են տուել, ասելով, որ Մագիստրատի գործերի մէջ այդ մասին ամենևին տեղեկութիւն չկայ։ Այդ կէտը այն է, որ, երբ 1811 թուին Հայոց Մագիստրատի միջնորդութեամբ կայացել է յօժարակամ սահմանաչափութիւն գիւղերին պատկանած հողերի, նախկին քաղաքապետ գեներալ—մայիոր Պապկովը, որ թոյ-

լատրել էր այդ սահմանաչափութիւնը, պահանջել է տեղեկութիւն ընդհանրապէս Նախիջևանին պատկանած բոլոր հողի և նորա վերայ եղած շինութիւնների մասին։ Մագիստրատի քաղաքապետին այդ մասին ներկայացրած տեղեկագրից 'ի միջի այլոց յայտնուել է, որ քաղաքի 26 քահանաների և Ս. Խաչ վանքի ապահովութեան և կառավարութեան համար վաղ ժամանակներից յատկացրած է 1300 օրավար հող։ Գեներալ—նահանգապետի այդ թղթից յետոյ վանքի կալուածական խնդիրը մնում է անորոշ և առ կախ դրութեան մէջ մինչև 1886 թուականը, երբ նորից այդ խնդիրը վերանորոգուում է։ Սակայն այդ 35 տարուայ միջոցում ևս, ինչպէս առաջ, վանքը շարունակում է օգտուել քաղաքի հողից, սերմանելով, խոտ հնձելով և անասուններ արածեցնելով, այդ ժամանակամիջոցի վերջերին է վերաբերում և քաղաքի այն կարգադրութիւնը, որով քաղաքի հողերից յատկացնուում է վանքի պէտքերի համար այն 300 օրավար հողի տարածութիւնը, որ այժմ գտնուում է անմիջապէս վանքի տեսչութեան ներքոյ։

4.

Երկրորդ անգամ վանքի կալուածական խնդրի յարուցանողը լինում է Ս. Խաչի վանահայր հանդուցեալ Ադամ վարդապետ Տէր-Նիկողոսեանը, որ 1886 թ. իմանալով, թէ Ռոստովի գաւառում գտնուած հողերի համար նոր հողաչափութիւն է նշանակուած, անձամբ ներկայանում է երկրաչափին և պահանջում է, որ Նախիջևանի հողերը չափելու ժամանակ ի նկատի ունենայ իւր կարծիքները։ Հանգուցեալ վանահօր այդ մասին երկրաչափին տուած զեկուցագիրը ոչ մի նոր բան չէ պարունակում իւր մէջ. նորա մէջ դարձեալ յիշուած են մեզ

յայտնի փաստերը։ «1779 թուականի նոյեմբերի 14-ին Նախիջևանցւոց տրուած հրովարտակում, գրուած է այդ զեկուցագրի մէջ, քաղաքի հողի քանակութիւնը որոշուած է 12 հազար օրավար, իսկ գիւղացւոց իւրաքանչիւրին 30 օրավար։ 1781 թուականի ընդհանուր երկրաչափական տեղեկագրով գիւղացւոց պատկանած բոլոր հողերի քանակութիւնը որոշուած է 67,076 օրավար 734 քառակուսի սաժեն, իսկ քաղաքի և վանքի հողերի քանակութիւնը որոշուած է միասին 20009 օրավար 578 քառակուսի սաժեն, ուրեմն վանքին առանձին պատկանում է 8009 օրավար հող» [11])։ Ս. Էջմիածնի Սիւնհոդոսը, որին վանքի վանահայրը հաշիւ էր ներկայացրել իւր գործողութիւնների մասին և գործը վարելու համար փաստաթղթեր էր խնդրել՝ յիշեալ հրովարտակի և ընդհանուր երկրաչափական տեղեկագրի պատճէնները, հրամանագրում է Խորէն ծայրագոյն վարդապետին, որ այդ ժամանակները Պետերբուրգումն էր գտնուում, և նորա ձեռքով ստանում է վանահօր ցանկացած թղթերից մէկը երջանկայիշատակ Եկատերինէ կայսերուհու հրովարտակը և մտածում է արդէն պաշտօնական կերպով ընթացք տալ գործին և անձամբ վարել գործը, երբ Նախիջևանի Հոգևոր կառավարութիւնից տեղեկութիւն է ստանում, թէ Բեսսարաբիոյ կոնսիստորիայում գտնուել է մի գործ 48 թուականից, որ ամբողջապէս վերաբերում է վանքի կալուածական խնդրին և պարունակում է իւր մէջ այն

---

[11]) Այս երկրորդ անգամ յարուցուած կալուածական խնդրի պատմութիւնը մենք քաղում ենք այն վանական գործից, որ այժմ պահուում է Ս. Խաչում և կոչուում է՝ «Գործ թեմական Առաջնորդի վիճակին Հայոց Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ Արքեպիսկոպոսի Սաղինեանց յաղագս պատկանեալ Ս. Խաչ վանից Նոր-Նախիջևանի վարելահողոց, սկսեալ ի 29 Յունիսի 1887 ամի»։

բոլոր փաստաթղթերը, որ ցանկանում էր ձեռք բերել ս. Էջմիածնի Սիմեոնոդոսը։ Սիմեոնոդոսը դիմում է Բեսսարաբիոյ այն ժամանակուայ առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Սագինեանցին և մեկնելով Նորան գործի հանգամանքը, առաջարկում է գնալ անձամբ Նախիջևան և, եթէ հնարաւոր է, ընտանեկան կերպով վերջացնել գործը։ Պէտք է ի նկատի առնել, որ հանգուցեալ Սագինեանց եպիսկոպոսը դեռ 1887 թուականին իւր աթոռատեղին գնալու ժամանակ անցնելով Նախիջևանից, հետաքրքրուել էր վանքի կալուածքի խնդրով և խօսելով քաղաքիս առաջաւորների հետ, բաւականին տեղեկութիւններ էր ժողովել այդ գործի մասին։ Քիշինևում ևս շարունակելով իւր Նախիջևանում սկսած գործը, գտել էր թեմական ատեանի հին գործերի մէջ վերոյիշեալ 48 թուականի գործը և ուղարկել էր Նախիջևանի մայր եկեղեցու աւագ քահանայ Զարիֆեանին Նորա կարծիքն իմանալու, բայց լսելով, որ Սիմեոնոդոսը ևս հետամուտ է լինում այդ գործին, դադարեցրել էր իւր հետազօտութիւնները և հետևողութիւնը։ Այժմ ստանալով Սիմեոնոդոսի առաջարկութիւնը, նա նախապէս իւր արածների մասին մանրամասնօրէն տեղեկագրում է Սիմեոնոդոսին և յետոյ յայտնում է իւր կարծիքը, որ բոլորովին յար և նման է այն կարծիքին, որ տուել էր Նորան վերոյիշեալ Զարիֆեան աւագ քահանան։ Հանգուցեալ առաջնորդի այդ կարծիքը պարունակում է իւր մէջ հետևեալ գլխաւոր կէտերը՝ նախ, «Վանքն [Ս. Խաչի երբէք չէ ունեցեալ զառանձին սեպհական վարելահողս, այլ ամենաողորմածաբար շնորհեալ հողն այն որոշեալ է ի պէտս և յօգուտ Հայոց Նոր-Նախիջևանի և վանքն Ս. Խաչի, նոյն և հոգևորական դասն շնորհեալ են միմիայն Ցմասամբ հողոյն այնորիկ երբեմն որոշ և երբեմն անորոշ քանակութեամբ», երկրորդ, «եթէ հետևեսցի ևս համաձայնութիւն

ինչ ի կողմանէ իրաւասուաց Նորին (Նախիջևանի) կամովին յատկացուցանելոյ դրաւականաչափ վարելահողս վանիցն սրբոյ Խաչի, պարտի հաստատեալ լինել ի Տէր Նահանգապետէն Եկատերինասլաւի որ հազիւ թէ համաձայն գտցի ընդ այն», երրորդ, «առ ի շահել ինչ վասն վանիցն սրբոյ Խաչի հարկ անհրաժեշտ լիցի յանձնել զգործն ի ձեռն հմուտ և բազմափորձ փաստաբանի»։ Սինհոդոսը ի նկատի առնելով առաջնորդի կարծիքը, վերջնականապէս հրամանագրում է Նորան երթալ Նախիջևան և համոզել ընտանեկան կերպով և կամովին վերադարձնել վանքին իւր կալուածքը, իսկ եթէ այս անգամ էլ այդ չաջողի, յանձնել գործը փաստաբանի և վարել Նորան իւր «միակ պատասխանատուութեամբ»։ Առաջնորդը դալիս է Նախիջևան և կրկին անգամ համոզելուց և յորդորելուց յետոյ, թուղթ է գրում Քաղաքային վարչութեան և առաջարկում է գործը խաղաղութեամբ վերջացնել։ Թուղթը, պէտք է խոստովանել, գրուած է շատ գեղեցիկ և համոզեցուցիչ ոճով, շատ ընդարձակ, մեկին և հասկանալի մանրամասնութիւններով։ Նա պարունակում է իւր մէջ այն բոլոր փաստերը, ապացոյցները, հաւանական ենթադրութիւնները, որ կարողացել էր Հոգևոր իշխանութիւնը ժողովել 48 թուականից մինչև 89-ը՝ Եկատերինէ կայսերուհու հրովարտակը, 1781 և 1799 թուականների ընդհանուր երկրաչափական տեղեկագրերը, 1848 թուին կայացած կառավարիչ Սենատի եզրակացութիւնը և գեներալ-մայոր Պապկովի յիշած 1300 օրավարի խնդիրը։ Նա յիշեցնում է Նախիջևանցուց նոցա անցեալը, ներկան և ապագան, պատմում է Յովսէփ արքեպիսկոպոսի նոցա համար ձեռք բերած արտօնութիւնները պահպանելու գործ դրած ջանքերը, պախարակում է վանքի վանահայրերի անհոգութիւնը, մատնացոյց է անում Խալիբեանի աթոռակալութեան և նորա դէպի վանքը ունեցած թշ-

նամական յարաբերութեան վերայ, և, վերջապէս, յայտնում է, որ ինքը միտք ունի Ս. Խաչում գոյութիւն ունեցող Ծառանգաւորաց դպրոցին կից երկրագործական բաժին ևս բանալ, որի համար, բացի նիւթական միջոցներից, հարկաւոր կլինի և հողի մի որոշեալ քանակութիւն [12]։ Քաղաքային վարչութեան պատասխանը այդ թղթին լինում է կարճ և կտրողական. նա քննութեան չէ ենթարկում առաջնորդի թղթի զանազան կէտերը, չէ աշխատում հերքել բերած փաստերը, ուրիշպէս մեկնել փաստաթղթերի վկայութիւնները, այլ մի կողմ թողնելով բոլորը, մանրամասնութիւնների մէջ չմտնելով, պատասխանում է՝ «Притязаніе монастыря Св. Крестовоздвиженія, какъ не основанное ни на какихъ юридическихъ доказательствахъ и не подкрѣпленное никакими данными и документами, городская управа не можетъ удовлетворить»։ Այս բացասական պատասխանի հետ միասին վարչութիւնը մի քանի խորհրդածութիւններ էլ է անում, որ սակայն, կարծես, աւելի իւր տուած պատասխանի կտրողականութիւնը մեղմացնելու համար է, քան թէ

---

[12]) Այդ ժամանակները Նախիջևանի քաղաքացի «Մեծ աղայ» կոչուած Նիկողայոս Սարիեանը կտակել էր յօգուտ վանքին տարեկան 1,500 ռուբլի մի գումար, որ և ապահովեցրել էր իւր մի կալուածքով, որ գնահատուած էր 30 հազար ռուբլի և բերում էր տարին 1,500 ռ. եկամուտ։ Կտակարարը պայման էր դրել այդ փողով վանքում Ծառանգաւորաց դպրոցին կից բանալ երկրագործական բաժին և կոչել իւր անունով, և ցանկութիւն էր յայտնել, որ քաղաքն էլ բացուելիք բաժնի համար մի որոշեալ քանակութեամբ հող յատկացնէ։ Սակայն Հոգևոր իշխանութիւնը կտակած 1500 ռ. բաւականացուցիչ ապահովութիւն չհամարելով դպրոցի համար, չհաստատեց այդ կտակը, նա մանաւանդ որ քաղաքն էլ հրաժարուել էր հող տալու։

վանքի օգտին մի բան անելու ցանկութիւն։ Վարչութիւնը յարգում է վանքի բարեկարգութեան համար առաջնորդի գործ դրած ջանքերը, գնահատում է նորա ժողովրդի լուսաւորութեան գործի համար ձեռնարկած աշխատանքը և պատրաստ է իւր կողմից ամեն կերպով խրախուսել առաջնորդի լուսաւորեալ ձգտումները, պատրաստ է մինչև անգամ նիւթականապէս օգնել նորան, որովհետև այդ բոլորը համապատասխանում է վարչութեան նոյն տեսակ ձգտումներին, բայց պէտք է նախ և առաջ վանքի կառավարութեան ձևը փոխել։ Թէ ինչ էր հասկանում վարչութիւնը ասելով, թէ պէտք է կառավարութեան ձևը փոխել, — այդ երևում է այն ծրագրից, որ քաղաքային վարչութիւնը կցել է իւր պատասխանին։ Վանքի կառավարութեան համար այդ ծրագրով պէտք է կազմուի Նախիջևանի քաղաքագլխի նախագահութեամբ մի վարչութիւն չորս անդամից բաղկացած, որոնցից երկուսը չորս տարուայ ժամանակով ընտրուելու են քաղաքային խորհրդարանից և երկուսը Նախիջևանի «Մարդասիրական ընկերութիւնից»։ Աշխարհականներից բաղկացած այդ փանական կառավարութիւնը երկու գլխաւոր պարտականութիւն պէտք է ունենայ՝ ա. վանքի կալուածները կառավարելու, ժողովելու բոլոր եկամուտները և ծախսելու նոցա վանքի և վանական դպրոցի վերայ, բ. վանքի դպրոցը կառավարելու։ Վանքի վանահայրը պէտք է կատարէ միայն կրօնական պաշտամունքը և կրօնի դասատու պէտք է լինի դպրոցում, իսկ վանքի կառավարութեան մէջ ոչ մի իրաւունք չպէտք է ունենայ. նա ամեն բանում պէտք է ղեկավարուի վանական կառավարութեան ցուցմունքներով, միով բանիւ նա, ըստ ամենայնի, պէտք է գտնուի վանական կառավարութեան իշխանութեան ներքոյ։ «Եթէ այս գլխաւոր սկզբունքների վերայ կազմուի մի առանձին վանական կառավարու-

թիւն, վերջացնում է իւր գրութիւնը քաղաքային վարչութիւնը, նա իւր կողմից պատրաստ է նիւթական օժանդակութիւն հասցնել վանքին, քաղաքի հողերից մի այնպիսի հողաբաժին յատկացնելով օգտուելու համար, ինչպիսին մինչև ցայսօր ևս յատկացնում է»։ Գրիգոր արքեպիսկոպոս Սագինեանցը ստանալով քաղաքային վարչութեան այդ պատասխանը, որ մերժելով նորա գլխաւոր խնդիրը, մի փոքր օգնութիւն անելու համար ևս մեծամեծ արտօնութիւններ ու զոհողութիւն էր պահանջում Հոգևոր իշխանութիւնից, վհատում է, նա մանաւանդ որ դորանից առաջ նորա գործ դրած բոլոր ջանքը ուրիշ փաստեր ժողովելու գործը դատարանին յանձնելու համար, ապարդիւն էր մնացել։ Դորանից յետոյ նա շուտով վերադառնում է իւր աթոռատեղին, որտեղ և մեռնում է, չհասնելով իւր նպատակին, ինչպէս մի ժամանակ Մատթէոս Վեհապետեանը, իսկ գործը դարձեալ մնում է իւր անորոշ դրութեան մէջ, որովհետև գործի դատավարութիւնը յանձնուած էր առաջնորդի «միակ պատասխանատուութեանը»։ Մեզ թուում է, որ այդ գործը երբէք էլ չի որոշուիլ, որովհետև Հոգևոր իշխանութիւնը չունենալով իւր ձեռքին ուղիղ ապացոյցներ, վախենում է դատարանին դիմել, կասկածելով, որ չլինի թէ, եթէ գործը ձախող ելք ունենայ, ինքը պատասխանատուութեան տակ մնայ։ Դորանով էլ հէնց պէտք է մեկնել «ընդ ձերով միակ պատասխանատուութեամբ» խօսքերը, որոնց վերայ առանձին կերպով շեշտուած է Սինհոդոսի այն հրամանագրի մէջ, որով նա իրաւունք էր տալիս հանդուցեալ Գրիգոր առաջնորդին դատարանի ձեռքով պահանջել քաղաքից վանքի հողերը։ «Իսկ եթէ և յայս նուազ յորդորանք ձեր ապարդիւն երևեսցին, գրուած է այդ հրամանագրի մէջ, յայնժամ ընդ ձերով միակ պատասխանատուութեամբ յանձնել զայս

գործ միում ի հմուտ և ի հաւատարմագոյն փաստաբանից առ ի վարել զայն դատաստանական կարգաւ»։ Իսկ ուղիղ ապացոյցներ ձեռք բերելու համար Հոգևոր իշխանութիւնը շատ է աշխատել։ Դորա համար Մատթէոս Վեհապետեան առաջնորդը դիմել է Ս. Խաչի վանահայրութեան, Նախիջևանի Հոգևոր կառավարութեան, Հայոց Մագիստրատին և, վերջապէս, մարմնաւոր իշխանութեան. դորա համար Ս. Էջմիածնի Սինհոդոսը քրքրել է տուել իւր դիւանը և Պետերբուրգ է դիմել, դորա համար Խորին ծայրագոյն վարդապետը իւր Ս. Խաչում վանահայր եղած ժամանակ հետախուզել է Տագանրոգի նահանգական դատարանի դիւանը, վերջապէս, դորա համար շատ ջանք է գործ դրել և հանդուցեալ Տագինեանց եպիսկոպոսը, Բեսսարաբիոյ կոնսիստորիայի հին գործերը և Նախիջևանի քաղաքային վարչութեան դիւանը նայել տալով, բայց դժբաղդաբար բոլոր այդ ջանքերը ապարդիւն են անցել, որովհետև ուղիղ ապացոյց ասելով, պէտք է հասկանալ առանձին հրովարտակ Ս. Խաչի անունով 8 հազար օրավարի համար, որ դժուար է կարծել, թէ երբ և իցէ գոյութիւն է ունեցել։ Դորանում հաստատ կերպով համոզուելու համար պէտք է միայն ծանօթ լինել Նոր-Նախիջևանի հիմնարկութեան պատմութեանը և քաղաքի մէջ առաջին ժամանակները սահմանուած կառավարութեան ձևի հանգամանքներին։ 1778 թուականի Օգոստոս ամսին Խուիմի գաղթականները դեռ իւրեանց արտօնութեան հրովարտակը չ'ստացած, դուրս են գալիս իւրեանց նախկին բնակութեան տեղից և գալիս են նախկին Ազովի նահանգը։ Այստեղ նոքա պանդխտում են իւրեանց առաջնորդ «Պրուսայեցի» Պետրոս Մարկոսեան վարդապետի հետ Կատարինասլաւի գաւառներում և նոցա շրջակայքում, ենթարկուում են անձրևի, արևի ազդեցութեան, շատ նեղութիւն են քաշում զոդերից և զանազան

պատահարներից, մինչև որ, վերջապէս, 1779 թուականի Նոյեմբերի 14-ին ստացուում է Ռուսաստանի Հայոց այն ժամանակուայ առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի առանձին աշխատութեամբ Կայսերական ցանկալի հրովարտակը, որի մէջ ուրիշ արտօնութիւնների հետ միասին նոցա հաստատ բնակութեան տեղեր էր որոշուում։ Երջ. Սիմէօն Երևանցի կաթուղիկոսը, որի սրատես աչքերը հետևում էին Լուսաւորչի ցրուած հօտին մինչև անգամ նորա գաղթականութեան ամենահեռաւոր տեղերում, մէկ կողմից առանձին օրհնութեան թղթով մխիթարում է գաղթականներին, միւս կողմից հրաւիրում է իւր աշակերտ Յովսէփ արքեպիսկոպոսին գաղթականների հոգսը իւր վերայ առնել։ Իւր հոգևոր ծնողի կամքին հլու հնազանդ Յովսէփը, թողնում է մայրաքաղաքը իւր պատիւներով ու շքեղութեամբ, թողնում է իւր առաջնորդանիստ Հաշտարխանը իւր բոլոր յարմարութիւններով և շտապում է իւր վերայ դրած ծանր, բայց քաղցր պարտականութիւնը կատարել։ Նա հասնում է գաղթականների մօտ և Պետրոս վարդապետի կիսակատար թողած գործը, գլուխ հանելով, 1780 թուին երկար պանդխտութիւնից վերջին թշուառութեան դուռը հասած ժողովրդին հասցնում է Դոնի ափը և հիմնարկում է Նախիջևանը։ Ինչ ասել կուզի, որ այս դէպքում Յովսէփ արքեպիսկոպոսը ընդունում է իւր վերայ Պետրոս վարդապետի բոլոր իրաւունքները, գրաւում է ժողովրդի սէրն ու յարգանքը և թէ հոգևոր թէ մարմնաւոր իշխանութիւնների վստահութիւնը ևս վայելելով, երկու կողմից էլ ճանաչուում է լիակատար տէր և իշխան գաղթական ժողովրդին։ Այլ այնուհետև ամեն բան կարգադրուում է առաջնորդի հրամանով. նորա ամեն մի խօսքը սուրբ է լինում ժողովրդի համար, նորա ամեն մի կարգադրութիւնը անհերքելի մարմնաւոր իշխանութեան համար։ Նորա կարգադրութեամբ և ցանկացած ձևով հիմնարկուում

է քաղաքը, նորա հրամանով հետզհետէ շինուում են եկեղեցիները, Ս. Խաչ վանքը և քաղաքի զանազան շինութիւնները, նորա գծագրած սահմաններով սկիզբն է դրուում ժողովրդի թէ տնտեսական և թէ բարոյական կառավարութեան գործին. նա է նոցա միակ իշխանը, դատաւորը, տնտեսը։ Ճիշդ է, հրովարտակի զօրութեամբ քաղաքում բացուում է Հայոց Մագիստրատը կամ իրաւարանը մարմնաւոր գործերի համար և դրուում է մարմնաւոր իշխանութեան իրաւասութեան ներքոյ և իւր առաջնորդի առանձին կարգադրութեամբ «Հոգևոր դատարան» հոգևոր գործերի համար, բայց այդ երկու հաստատութիւնը ևս գտնուում են անմիջապէս նորա հսկողութեան ներքոյ, առանց նորա հրամանի ոչ մի բան չեն բռնում, նորա կամքին հակառակ նոցա մէջ ոչ մի գործ չէ կատարուում։ Ահա այս հանգամանքների մէջ դժուար չէ համոզուել, որ քաղաքի թէ նիւթական և թէ բարոյական կառավարութեան գործում իմ և քո լինել չէը կարող. այստեղ հոգևոր—եկեղեցականը խառնուած էր ազգայինի հետ, կրօնականը մարմնաւորի հետ. քաղաքի կալուածքից հաւասարապէս շահուում էին և հոգևորականները և աշխարհականները և կրօնական ու մարմնաւոր հաստատութիւնները. կաւավարութեան գլուխը կանգնած էր հոգևոր առաջնորդը, բայց նա քաղաքի և գիւղերի վերաբերութեամբ վայելում էր մարմնաւոր իշխանութեան բոլոր ֆունկցիոնները։ Յովսէփ արքեպիսկոպոսը հաւասարապէս մասն հանելով քաղաքի թէ կրօնական և թէ աշխարհական հաստատութիւններին, շահելով թէ հոգևորականներին և թէ քաղաքացիներին, անշուշտ հաստատ համոզուած էր, որ հոգերը շնորհուած են հաւասարապէս ժողովրդի բոլոր դասակարգերին, բոլոր հաստատութիւններին։ Եթէ մէկ օր զէթ նորա մտքով անցնէր, որ կ'դայ մի ժամանակ, երբ քաղաքացիք կսկսեն ջոկողութիւն անել հոգևորի և մարմ-

նաւորի մէջ, նա անպայման հէնց այդ ժամանակ որոշեալ մասն և բաժին կհանէր հոգևոր դասի և կրօնական հաստատութիւնների համար, ուրեմն և վանքի համար, և մարմնաւոր իշխանութիւնը անպայման կերպով կհաստատէր նորա արած կարգադրութիւնը, որովհետև այդ բոլորովին համաձայն կլինէր բարձրագոյն շնորհած հրովարտակի հոգուն և տրամադրութեան։ Ինքեանք քաղաքացիք էլ համոզուած էին, որ քաղաքին շնորհած հողից մասն ունին և հոգևոր դասը և կրօնական հաստատութիւնները, որովհետև ոչ թէ միայն առաջնորդի օրով, այլ և նորանից յետոյ ևս մինչև յիսնական թուականները, երբ Խալիբեան քաղաքագլուխը առաջին անգամ այդ խտրութեան խնդիրը բարձրացրեց. ոչ մի բողոք, ոչ մի անբաւականութիւն չէ յայտնուել այն բանի դէմ, որ հոգևոր դասը և վանքը շահուել են հողերից։ Մինչև անգամ 1811 թուին, երբ Տպանորդի քաղաքապետ Պապկովը տեղեկութիւն է խնդրել Նախիջևանի հողերի մասին, քաղաքացիք վախենալով, որ չ'լինի թէ բոլոր հողերը քաղաքինն է ասելով, գրկած լինին իւրեանց կրօնական հաստատութիւնները, քաղաքապետին ներկայացրած իւրեանց տեղեկագրի մէջ ցոյց են տուել, որ վանքի և հոգևոր դասի համար վաղ ժամանակներից յատկացրած է 1300 օրավար հող։ Ինքը Խալիբեանն էլ իւր առաջնորդի դէմ ունեցած թշնամական յարաբերութեան պատճառով նորա յարուցած հողերի բաժանման խնդրի վերաբերութեամբ հակառակ կարծիք տալով, նոյն ժամանակ հաստատել է, որ վանքը 'իսկզբանէ անտի օգտուել է հողերից, որով թէ և ոչ ուղղակի, բայց, գոնէ, կողմնակի կերպով ապացոյց է տուել վանքի ունեցած իրաւունքը քաղաքի հողերի վերայ։ Մենք հաստատ կերպով համոզուած ենք, որ եթէ Խալիբեանը չունենար թշնամական յարաբերութիւն առաջնորդի հետ, եթէ գէթ իմանար, թէ ինչ հետևանք կունենայ իւր տուած ցուց-

մունքը վանքի համար, անպայման կերպով կ'հաստատէր իւր նախորդների տուած տեղեկութիւնը 1300 օրավարի վերաբերութեամբ, բայց անձնական կրքերը մեզ շատ անգամ կուրայնում են և մոռացնել են տալիս հեռատեսութեան պայմանները ապագայի վերաբերութեամբ։ Ասում են, որ վանքի անունով 8 հազար օրավարի առանձին հրովարտակ է եղել։ Այդպիսի հրովարտակ եթէ եղել է, ստացուած պէտք է լինի նոյն Յովսէփ արքեպիսկոպոսի օրերով, որովհետև յայտնի է, որ նորանից յետոյ Նախիջևանցիք հողերի մասին այլ ևս ոչ մի հրովարտակ չեն ստացել [13]։ Այդ 8 հազար օրավարի մասին չէ յիշուում

---

[13]) Մեր պարբերական թերթերում, գլխաւորապէս «Նոր-Դարում» Ս. Խաչի կալուածական խնդրի մասին յաճախակի հրատարակուած տեղեկութիւնների մէջ կամ կրկնուած են մեզ յայտնի փաստերը կամ առանց մի որ և իցէ փաստաբանութեան յայտարարուած է, որ վանքին պատկանում է 8 հազար օրավար վարելահող, բայց քաղաքը չէ տալիս, սեփականացրել է իւրեան, կամ, վերջապէս, շատ սխալ և մինչև անգամ գոյութիւն չունեցող փաստեր են յառաջ բերուած։ Իրրև նմուշ թէ ի՞նչպէս երբեմն մեր թղթակիցները զօր են տալիս իւրեանց երևակայութեան, կարող է ծառայել անցեալները «Նոր-Դարի» 1895 թուականի 37 համարում Սեմֆերոպոլից տպուած «բաց նամակ Նոր-Նախիջևանցիներին» վերնագրով թղթակցութիւնը։ Նամակի հեղինակ բարեկրօն Ղազարոս Յովսէփեանը իւր այդ գրութեան մէջ պնդում է, որ երջանկայիշատակ Եկատերինէ Պ կայսերուհին շնորհել է Նախիջևանցուց 12 հազար օրավար վարելահող, իսկ Ս. Խաչին առանձին հրովարտակով 8 հազար օրավար և որ այդ վերջին հրովարտակը այժմ գտնուում է Տագանրոգի դիւանում։ «Մոսկուաբնակ Նոր-Նախիջևանցի Էմմանուէլ աղա Պապայեանցը, որ իւր ժամանակին եղել է դատաւոր, վարել է այլ և այլ պաշտօններ, իւր հայրենի քաղաքի նշանաւոր բոլոր անցքերին կենդանի վկայ է եղել և կարող է Խրիմու ու Նոր-Նախիջևանի հայ գաղթականութեան պատմութեան համար առատ և ճշմարիտ նիւթեր մատակարարել—ահա

ոչ մի դոկումենտում, ոչ մի պաշտօնական թղթում, ոչ մի, գոնէ, պատմական յիշատակարանում, նա չէ յիշուում և Յովսէփ արքեպիսկոպոսի այն պատմական «դաւթարում», որի մէջ շատ որոշ կերպով յիշուած է 1779 թուականի հրովարտակի մասին։ Միթէ կարելի է մի բոպէ անգամ կասկածել, որ արքեպիսկոպոսը, որ իւր ձեռագիր յիշատակարանում արձանագրում է իւր արած բոլոր մանր կարգադրութիւնները, եկեղեցիների և վանքի շինելու մանրամասնութիւնները և մինչև անգամ Խոտիմից բերած իրեղէնների որ եկեղեցուն մրքան տալը, մոռանար յիշել մի այնպիսի նշանաւոր բան. ինչպիսին է 8 հազար օրավարի հրովարտակը։ Եւ յետոյ կայսերական հրովարտակը ինչպէս կարող է կորչել. չէ՞ որ բոլոր կայսերական հրովարտակների պատճէնները անփոփոխ պահուում են արքունի դիւանում և նոցա պատճէնները կարելի է միշտ ստանալ։ Օրինակի համար, երբ որ Ս. Էջմիածնի Սինոդոսը կամեցաւ ստանալ 1779 թուականի հրովարտակի պատճէնը, գրեց Պետերբուրգ և Խորէն վարդապետի ձեռքով հեշտութեամբ

այդ պատկառելի ծերունին, գրում է նա, ասում է, որ Ռուսաց Եկատերինա II կայսերուհին ընծայել է Նոր-Նախիջևան քաղաքին 12 հազար օրավար, իսկ Ս. Խաչ վանքին 8 հազար՝ առանձին հրովարտակով, որի պատճէնը մինչև այժմ էլ գտնուում է Տագանրոգի արխիւում»։ Որ Եկատերինէ կայսերուհին շնորհել է Նախիջևան քաղաքին 12 հազար օրավար—, այդ յայտնի է ամենին, որովհետև կայ 1779 թուականի Նոյեմբերի 14-ին արձակած հրովարտակը, որի մէջ պարզ կերպով ասուած է՝ «По заселеніи вами особаго города при урочище Полуденки съ названіемъ Нахичевана и съ дачею на выгонъ онаго двенадцать тысячъ десятинъ, повелѣваемъ . . . . . » . իսկ որ Ս. Խաչի անունով 8 հազարի հրովարտակ երբ և ինչ եղած լինի—, այդ ոչ ոքի յայտնի չէ։ Ինքը Պ. Էմանուէլ Պոպոյեանը, որի վերայ մատնացոյց է անում բարեկրօն Ղազարոս քահանան և որի հետ մենք անձամբ տեսնուել ու խօսել ենք, այդ հրովարտակի մասին ոչ մի տեղեկութիւն չունի։

ստացաւ իւր ցանկացածը։ Ամենաշատը ինչ որ կարող է կորած լինել այդ այն 1300 օրավարի վանքին և հոգևոր դասին յատկացնելու պայմանաթուղթն է, որի մասին յիշատակութիւն է լինում Պապկովի թղթում։ Բայց մեզ թուում է, որ այդ պայմանաթուղթն էլ գոյութիւն չէ ունեցել. այդ 1300 օրավարի յատկացնելը եղել է ընտանեկան կերպով, որովհետև եթէ ճշմարիտ է, որ եղել է մի այդպիսի պայմանաթուղթ, ինչպէս կ'լինէր, որ մի տեղեկութիւն չ'լինէր Մագիստրատում այդ մասին։ Ասում են, որ երջանկայիշատակ Նիկողայոս կայսեր Նախիջևանի հինգ գիւղերի հողերի բաղաքի հողերից բաժանելու մասին արձակած հրամանագրի մէջ որոշակի տեղեկութիւն կայ վանքին պատկանելիք 8 հազար օրավարի մասին. մի այդպիսի ճիշտ տեղեկութիւն, ասում են, կայ և Եկատերինաւանի հայ գիւղացւոց միւս գիւղերի դէմ վարած դատաստանական գործի մէջ։ Եթէ իրօք այդպիսի ճիշտ տեղեկութիւններ կան հանգուցեալ կայսեր վերոյիշեալ հրամանագրի և Եկատերինաւանի գործի մէջ, ապա ինչպէս է պատահել, որ Հոգևոր իշխանութիւնը մինչև ցայսօր դեռ ուշադրութիւն չէ դարձրել այդ կարևոր թղթերի վերայ և չէ աշխատել ձեռք բերել նոցա պատճէնները. չէ՞ որ դորանով նա բոլորովին հասած կլինէր իւր նպատակին, նա գտած կլինէր այն ուղիղ ապացոյցը, որի համար ապարդիւն կերպով այնքան ճիգն ու աշխատանք էր գործ դրել, նա մանաւանդ որ գիւղերի և քաղաքի հողերի բաժանումը և Եկատերինաւանի դատավարութիւնը համեմատաբար նոր գործեր լինելով, առանձին մի դժուարութիւն չէր լինիլ որոնել, գտնել ոչ միայն կայսեր վճռաթուղթը, այլ և ամբողջ գործերը։ Բաւական էր միայն դիմել տէրութեան բարձր ատեանները և միշտ կարելի էր ձեռք բերել ցանկացած թղթերը, չենք ասում արդէն Ցարսկոյի Նահանգական դատարա-

նի մասին, որտեղից ամեն ժամանակ կարելի է ստանալ այն թղթերի պատճէնները, որոնք վերջնական կերպով վճիռ են ստացել նորա մէջ։ Բայց մեզ թուում է, որ այդ տեղեկութիւնները ևս պատկանում են այն «ասէ—կոսէներին», որոնց թիւը թէև խիստ շատ է, բայց որոնք էական և ոչ մի կէտ չեն պարունակում իւրեանց մէջ։ Հոգևոր իշխանութիւնը, ինչպէս արդէն յիշել ենք, նայել է տուել Տգանրոդի դիւանը, բայց ոչ մի նոր փաստ, ոչ մի նոր տեղեկութիւն վերոյիշեալների նման չէ կարողացել գտնել նորա մէջ վճռուած գործերում։ Ասում են, վերջապէս, որ բարձրագոյն հրովարտակով քաղաքին շնորհուած է 12 հազար օրավար, իսկ այժմ քաղաքացուց ձեռքին գտնուում է 20 հազար օրավար, ակներև է ուրեմն, որ 8 հազարը վանքինն է։ Մենք կարծում ենք, որ այդ ևս չէ կարող ծառայել իբրև փաստ յօգուտ վանքին, որովհետև, նախ և առաջ, եթէ քաղաքը այժմ աւելի հող ունի, քան թէ ի սկզբանէ անտի շնորհած է եղել նորան, այդ դեռ չէ նշանակում, որ աւելորդ հողը վանքինն է, երկրորդ, յայտնի է, որ քաղաքացիք իւրեանց հողի մի մասը փոխել են իւրեանց դրացի «զազախների» հողի հետ, և այդ փոխանակութեան ժամանակ սակաւ տուել են, շատ ստացել [14])։ Մեզ հա-

---

[14] Այժմ Նախիջևանին Դօնի ձախ ափին պատկանում է միայն մի փոքրիկ տարածութիւն, որ կոչուում է «կղզի» որովհետև քաղաքի մօտ Դօնը բաժանուում է երկու ճիւղի՝ Հին Դօն, և Նոր Դօն, որոնք շրջապատելով այդ տարածութիւնը, կղզու ձև են տալիս նորան։ Իսկ առաջ քաղաքին դեռի ձախ ափին, բացի կղզուց, պատկանել է և այն ցած տարածութիւնը, որ ամեն տարի գարնանը ջրով ծածկուելով, կազմում է եղեգնուտ ճահիճ, որի եղէգը հին ժամանակները այդ կողմերի բնակիչների միակ վառելիքն է եղել։ Պատմում են, որ զազախները մի տարի վառելիքի սաստիկ կարօտութիւն ունենալով, առաջարկել են Նախիջևանցուց փոխանակել ճահիճները իւրեանց սևահողի

մար Ս. Խաչի կալուածական խնդիրը բոլորովին պարզ է։ վանքը և քաղաքի հոգևորական դասը իրաւունք ունին քաղաքի հողերի վերայ, որովհետև եթէ այդ համաձայն չէ 1779 թուականի հրովարտակի տառին, գոնէ, բոլորովին համապատասխանում է նորա հոգուն ու տրամադրութեանը։ Խնդիրը միայն նորանումն է, թէ քաղաքի հողերից որ մասն է պատկանում վանքին։ Միակ կէտը, որ կարող է բաւականացուցիչ կերպով լուծել այդ խնդիրը, մեր կարծիքով, նախիջևանցուց 1811 թուականին Տգանրոգի քաղաքապետ գեներալ—մայեոր Պապկովին ներկայացրած տեղեկագիրն է, որի մէջ Ս. Խաչին և քաղաքի 26 քահանաներին պատկանած հող ցոյց է տրուած 1300 օրավար։ Թէև քաղաքապլուխ Խալիբեանը գորա մասին բացասական պատասխան է տուել, թէև Մագիստրատի գործերի մէջ այդ մասին ոչ մի տեղեկութիւն չէ յայտնուել և թէև, մեր խորին համոզմունքով, այդ 1300 օրավարը երբէք էլ բաժանուած ու վանքին յանձնուած չէ եղել և վանքը ևս նորանից չէ օգտուել, բայց նա իրրև մի չափ, մի քանակութիւն, որ քաղաքացիք դեռ 11 թուականից ցանկացել են վանքին և հոգևորականութեան յատկացրած տեսնել, ամենահաւանականը և ամենավաւերականն է։

հետ։ Նոքա համաձայնել են և փոխանակել են մէկ օրավար եղեգնուտը 3 օրավար վարելահողի հետ։ Բացի այս բոլորից, մեր ձեռքին գտնուում են և պաշտօնական վաւերաթղթեր—Յովսէփ Արղութեանի «խնդրագրի պատճէնը» և «Մանուկ Դերեջանեանի դատաստանական գործը», որոնցից երևում է, որ երջանկայիշատակ առաջնորդը միջնորդել է Տէրութեան առաջ Նախիջևանի հողերի քանակութիւնը աւելացնելու մասին և Պատեմկին իշխանը յարգել է իւր սիրելի բարեկամի այդ միջնորդութիւնը։

5.

Յովսէփ արքեպիսկոպոսը հիմնարկելով Ս. Խաչ վանքը, միտք է ունեցել դորանով երկու նպատակի հասնել՝ նախ, ժողովրդի կրօնական պահանջներին բաւականութիւն տալ, երկրորդ, Ռուսաստանի Հայերի համար մի ուսումնարանական և գիտնական կենդրոն կազմել, որտեղից հայկական կրթութիւնը և դիտութիւնը հնարաւոր լինի թէ գրքերի և թէ կրթուած երիտասարդների միջոցով տարածել ցրուած Հայերի մէջ։ Ահա հէնց այդ նպատակով վանքի շինութիւնը աւարտելուց յետոյ, նա իսկոյն և եթ հաստատում է նորան կից տպարան և ուսումնարան, ինչպէս ցոյց է տալիս և վանքի շինութեան արձանագրութիւնը՝ «Եւ հաստատեցի ի սմա զդպրոցս և զտպարանս»։ Երջանկայիշատակ արքեպիսկոպոսի այդ նպատակը և դիտաւորութիւնը այն ժամանակուայ հայ հոգևորականութիւնը չհասկանալով, ձգտում էր նորա կարգադրութիւնների մէջ փառասիրական նպատակներ տեսնել։ Ս. Էջմիածնայ միաբանութիւնը արձակ-համարձակ բամբասում ու մեղադրում էր նորան, ասելով, որ նա Ս. Խաչում Ռուսաստանի Հայոց համար կամենում է առանձին կաթողիկոսութիւն հաստատել և ինքը կաթողիկոս լինել։ Տպարանը, որ հաստատում է վանքում արքեպիսկոպոսը, առաջ պատկանում էր Ջուղայեցի Գրիգոր Խալդարեանին։ Խալդարեանցը այն ջուղայեցի Հայերիցն էր, որոնք գանազան վաճառականական յաջող գործերով հարստութիւն ձեռք բերելով, սովորութիւն էին արել իւրեանց կարողութիւնից մասն հանել և ազգին։ Նա 1780 թուականին Հայոց տպարան է հիմնում Լոնդոնում և ձեռնարկում է Հայոց գրքեր հրատարակելու, բայց մէկ գիրք՝ «Դաւանութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց» տպագրելուց յետոյ, նա իւր տպարանը փոխադրում է Պետեր-

բուրգ, մտածելով որ այնտեղ թէ շատ հայ լինելու և թէ Ռուսաց կառավարութեան Հայերին համակրելու պատճառով աւելի հեշտ և յաջող կերպով կարող կլինի իւր գործը առաջ տանել։ Նա իւր յոյսերի մէջ չէ սխալուում։ Յովսէփ արքեպիսկոպոսը, որ այդ ժամանակները նոր հիմնարկուած Նախիջևան քաղաքի գործերի համար գընտնուում էր մայրաքաղաքում և մեծ սէր ու համակրանք էր վայելում կայսերուհու արքունիքից, տեսնելով նորա աղգաշահ գործունէութիւնը, պաշտպան է կանգնում նորան, օգնում է նորան թէ բարոյապէս և թէ նիւթապէս և դորանով միջոց է տալիս նորան մինչև 1790 թուականը 12 զանազան բովանդակութեամբ գիրք հրատարակելու.

1783 թ. Ժամագիրք.
1785 թ. Յիսուս Որդի և պատմութիւն սբ. գրոց.
1786 թ. Աստուածաղերս, աղօթագիրք Ղազար կաթողիկոսի.
— Աւետարան ճաշու.
— Վէմ դայթակղութեան, թարգ. ի Յունաց լեզուէ.
— Հաւատով խոստովանիմ Շնորհալւոյ՝ հայռուս լեզ.
1787 թ. Եղիշէ.
— Կարճառօտ ժամագիրք.
1788 թ. Ընդհանրական Շնորհալւոյ.
— Շաւիղ լեղուագիտութեան.
— Բանալի գիտութեան։

1789 թուականին Յովսէփ արքեպիսկոպոսը ռուսիաբնակ Հայերի նպաստով գնելով տպարանը, որ Խալդարեանի մահից յետոյ 12 հազար ռուբլու պարտքի տակ էր ընկել, փոխադրում է նորան Նոր-Նախիջևան, որտեղ մնում է անգործ մինչև 1790 թուականը, որովհետև վան-

քի շինութիւնը, որտեղ պէտք է գործէր տպարանը, դեռ պատրաստ չէր։ Վերջապէս 1792 թուականին օծուում է վանքը, աւարտուում է սենեակների շինութիւնը և տպարանը տեղափոխուում է վանքը և սկսում է գործել Երեւանցի Խոջենց Մարգարի ջերմ գործակցութեամբ մինչև 1795 թ։

Ս. Խաչում հինգ տարուայ ընթացքում հրատարակուում է 12 գիրք.

Ժամագիրք.

Սաղմոս.

Յիսուս Որդի.

Քրիստոնէական վարդապետութիւն.

Աղօթամատոյց.

Ողբ և հառաչանք Էջմիածնի (Սիւնեաց Մետրոյ).

Դուռն ողորմութեան.

Ջուղայեցի բժիշկ Քալանթարեանի բժշկարան.

Պատմութիւն Տելեմաքի։

Համառօտ բառարան հայ—տաճիկ.

Յովհաննու Երզնկացւոյ վիպասանութ. զերկնային մարմնոց.

Կանոնադրութիւն Նախիջևանի հոգևոր դատարանի.

Այս տպարանը, որի հրատարակութիւններից մի քանիսը, համեմատելով ժամանակակից հայ տպագրութիւնների հետ, բաւական մաքուր են տպուած, դժբաղդաբար երկար գոյութիւն չէ ունենում վանքում, որովհետև ինքը առաջնորդը յաճախակի բացակայ լինելով քաղաքից և վանքից և ժամանակի մեծամասնութիւնը ստիպուած լինելով անցկացնել առաջնորդանիստ Հաշտարխան քաղաքում, չէր կարողանում հարկաւոր վերահսկողութիւնը ունենալ, որից և յաճախակի առաջ էր գալիս անկանոնութիւն և անյաջողութիւն տպարանի գործերում։ Թէև վանքում նշանակուած էր վանահայր Կոստանդնուպոլսեցի Թադէոս

Մարուքեան վարդապետը, իսկ քաղաքում յաջորդ Բայազիտցի Կարապետ վարդապետը, որոնք պէտք է առաջնորդի բացակայութեան ժամանակ հսկէին քաղաքի և վանքի կառավարութեան վերայ և աշխատէին անխախտ պահպանել առաջնորդի դրած կարգ ու կանոնը, բայց նոքա մասամբ անձեռնհաս լինելով, մասամբ էլ չունենալով այն բարոյական իշխանութիւնը, որ ունէր արքեպիսկոպոսը, չէին կարողանում այն անկարգութիւնների և խռովութիւնների առաջն առնել, որ յաճախակի, նամանաւանդ առաջին ժամանակները, առաջ էին գալիս զաղթականների մէջ։ Առաջնորդը 'ի նկատի առնելով այդ հանգամանքը և կամենալով տպարանը միշտ իւր աչքի առաջ տեսնել և իւր հոգացողութեան ներքոյ ունենայ, վճռում է, վերջապէս, 1796 թ. նորան Ս. Խաչից տեղափոխել Հաշտարխան, մանաւանդ որ այնտեղի Հայերը Խալդարեանի պարտքերը վճարելու ժամանակ մեծ նպաստ էին ցոյց տուել։ Բայց առաջնորդանիստ Հաշտարխանում ևս այդ տպարանը կարողանում է գործել միայն 1796—1800 թուականը, որովհետև այդ ժամանակները երջանկայիշատակ Ղուկաս կաթուղիկոսի մահից յետոյ, առաջ է գալիս աթոռակալութեան յայտնի խնդիրը և Յովսէփ արքեպիսկոպոսը Ռուսաց արքունիքի ջերմ պաշտպանութեամբ և գործակցութեամբ ընտրուում է կաթողիկոս և արձակուելով առաջնորդութիւնից, ճանապարհ է ընկնում դէպի Թիֆլիս, որտեղ և մեռնում է։ Այդ չորս տարուայ ընթացքում տպարանը լոյս է ընծայում միայն երկու գիրք՝ «Սաղմոսաց մեկնութիւն» Վարդան Բարձրբերդեցւոյ (1798 թ.) և «Պրիվիլէգք Հայոց, ընակելոց 'ի զանազան գաւառս Ռուսաստանի» (1800 թ.)[15]։ Տպարանի հետ միա-

[15]) Տես «Փորձ» Հինգերորդ տարի. Ապրիլ. 1881 թ. «Պատմական տեսութիւն Հայ տպագրութեան» Երիցեանի։ Խալդարեանի տպարանի փոխադրութեան պատմութիւնը տպուած է

սին Յովսէփ արքեպիսկոպոսը հաստատում է վանքում և մի վանական դպրոց, որի ղեկավարութիւնը ու կառավարութիւնը յանձնում է Թադէոս վարդապետին, որին, ինչպէս ասացինք, նա վանահայր էր նշանակել վանքի վերայ։ Այդ դպրոցը որ բաւականին յառաջադիմութիւն է անում «երկնաբաղաքացի և պերճիմաստ» Թադէոս վարդապետի խնամակալութեան ներքոյ, ունենում է նոյն վախճանը, ինչպիսին ունեցել էր և տպարանը։ Նա փակուում է առաջնորդի Ռուսաստանից հեռանալու միջոցում, որովհետև Թադէոս վարդապետը, որ այդ դպրոցի հոգին էր,

---

1788 թուականին Պետերբուրգում տպուած Շնորհալւոյ Ընդհանրականի վերջաբանում՝ «Յետ որոյ (շինութեան տպարանին) և գտաւմն ինչ ինչ առ ձեռն բանից յառաջադրեալ . . . և զոմանս գրեանս ծախիւք իւր տպեալ զգործն բարի յառաջացուցանէր (Գրիգոր Խալդարեանց)։ Բայց ի մէջ այսքան անտանելի դժուարակիր ծանրութեան գործոյս յամենուստէքէ անօգնական մնացեալ ալնուական առնս այսմիկ, զինչսն իւր՝ յոր յառաջագոյն ձեռնարկ ի վախճան հասուցեալ, ըստ ամենայնի գոյալուրկ ի ներքոյ ծանրագունի պարտուց կաշկանդեալ մնայր։ Ուստի տեսեալ անձնադիր հովուին և սրբազան դիտին (Յովսէփայ Արղութ.) զմնաչն անօժանդակ բանաւոր գառին, Նորակառոյց տպարանին ի Հաշտարխան կամ ի Նոր-Նախիջևան անդրափոխեցման զգիր գրեալ և սիրով հրաւիրէր . . . Քանզի որպէս յիշեցաւ ի վերանդր, յետ վախճանի առն Աստուծոյ պարոն Գրիգորին՝ մնաց տպարանն ի ներքոյ պարտուց հազար երկու հարիւր թումանի (որ է 40 քսակ կամ 12 հազար ռուբլի)։ Իսկ արի հովիւս այս և ապդասէր սրբազան արքեպիսկոպոսս յանձն էառ հատուցանել զպարտսն հանգուցելոյն՝ օժանդակութեամբ բարեսէր ազգիս մերոյ հայկազնոյ . . . որպէս և տէր իսկ կամեցաւ և յաջողեաց . . . զի անձինք բազումք բախութեամբ սրտի և նպաստիւք արդեան ձեռնամուխք կարեկցեալ՝ օգնեցին ի փառս միոյն Աստուծոյ և ի պարծանս Լուսաւորչակրօն Հայկազնեայս տոհմի»։ 1783 թուականին Պետերբուրգում տպուած ժամագրքի յիշատակարանի մէջ կայ և Խալդարեանցի տպարանի հաստատութեան պատմութիւնը։

ստիպուած է լինում թողնել վանքը և ուղեկցել առաջնորդին դէպի Ս. Էջմիածին և հէնց այդ ճանապարհորդութեան ժամանակ դեռ Թիֆլիս չ'հասած, մեռնում և թաղուում է Ղզլարում։ Թէև մենք ասացինք, թէ տպարանը և ուսումնարանը մի և նոյն վախճանն են ունենում, բայց այդ նոյնութիւնը միայն առաջնորդի Ռուսաստանից հեռանալու երկու հաստատութեան վերայ ունեցած ազդեցութեան մէջ է, իսկ ինչ վերաբերում է նոյն հաստատութիւնների գործի շարունակութեան ապագայում—, պէտք է ասել, որ նոցա մէջ և զանազանութիւն կայ։ Տպարանը առաջնորդի հեռանալուց յետոյ, իսպառ փակուում է, իսկ ուսումնարանը հետևեալ վանահայրերի ժամանակ նորից վերաբացուում է և շարունակում է իւր գոյութիւնը, մերթ փակուելով, մերթ նորից բացուելով համարեա մինչև 68 թուականը, երբ երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթուղիկոսի օրով սկիզբն է առնում մինչև վերջին ժամանակները վանքում գոյութիւն ունեցող «ժառանգաւորաց դպրոցը»։ Թէ ինչ տեսակ դպրոց էր իւր Յովսէփ արքեպիսկոպոսի բաց արածը, կամ ինչպիսի կազմակերպութիւն ունէին յետագայ ժամանակներում վանքում եղած դպրոցները—, մենք դորա մասին ճիշտ տեղեկութիւն չունինք։ Պէտք է կարծել սակայն, որ թէ առաջնորդի դպրոցը և թէ յետագայ ժամանակներում եղածները ունեցել են նոյն կազմակերպութիւնը, կրել են նոյն բնաւորութիւնը, որպիսին ունեցել և կրել են ժամանակակից Հայոց բոլոր դպրոցները։ Դա մի փոքրիկ վանական դպրոց է եղել նման այն դպրոցներին, որ այդ ժամանակ գոյութիւն ունէին համարեա Հայոց բոլոր վանքերում։ Վանահայրը ժողովում է եղել քաղաքից և գիւղերից չքաւոր ծնողների մանուկներ և հագուստ, սնունդ ու բնակութիւն տալով նոցա, պատրաստում է եղել եկեղեցու սպասաւորութեան։ Երջանկայիշատակ Գէորգ Դ.

կաթուղիկոսը 1868 թ. այցելելով Նոր-Նախիջևանը, տեսնում է, որ թէ քաղաքը, թէ գիւղերը և թէ վանքը զուրկ են կանոնաւոր դպրոցներից։ Այդ մեծ պակասութիւնը լրացնելու համար, դպրոցասէր կաթուղիկոսը հրամայում է քաղաքի և գիւղերի եկեղեցիներին կից ծխական դպրոցներ բաց անել, իսկ Ս. Խաչում հաստատել «Ժառանգաւորաց դպրոց»։ Օգտուելով այս հանգամանքից քաղաքում ընտանեկան կերպով գոյութիւն ունեցող և չորս հազար առ ձեռն պատրաստի գումար ունեցող «Եղբայրութիւն խրախուսչաց ազգաշահ վաստակոց» անունով ընկերութիւնը դիմում է Հայրապետին և ցոյց տալով, որ Նորին վեհափառութեան հրամանով սբ. Խաչում բացուելիք դպրոցը բոլորովին համապատասխանում է ընկերութեան նպատակներին, խնդրում է հաստատել ընկերութեան կանոնադրութիւնը և բացուելիք դպրոցը յանձնել իւր կառավարութեան։

6.

«Խրախուսչաց» ընկերութեան սկիզբը բաւականին հին էր, նորան հիմնել էր Նախիջևանցի Եպիփան Յակովբեան Պոպոյեանը իւր 18 ամեայ հասակում։ 1846 թուին Պոպոյեանը միտք է յղանում իւր հասակակից ընկերներից կազմել մի «Հոգևոր ընկերութիւն», որի նպատակը լինի բարեգործութիւն անել «Ամենօրհնեալ մօրն ողորմութեան սբ. Աստուածածնի հովանաւորութեան ներքոյ»։ Առաջին ընկերների ժողովը, որ կոչուում է «միաբանութիւն եղբարց» հաստատում է մի գանձանակ, որի մէջ իւրաքանչիւր եղբայր կամ «Հետևող» ձգում է ամեն շաբաթ իւր նուէրը կամ տուրքը, որ առաջին ժամանակները լինում է մի չնչին գումար, իսկ յետոյ աւելանալով, դառնում է առաջ տարին 7, յետոյ 12 ռուբլի

թղթագրամ։ Թէ ինչ տեսակ ընկերութիւն է կամեցել հիմնել Եպիփանը —, այդ ընկերութեան գործերից բացորոշ կերպով չէ երևում, թէև ընկերութեան թղթերի մէջ մինչև ցայսօր դեռ պահպանուում է նորա ձեռագիր տետրակը, որի մէջ ամփոփուած է նորա ընկերութիւն կազմելու շարժառիթը և պատճառները։ Մի բան, որ ճշմարտութեամբ յայտնի է —, այդ այն է, որ նորա ցանկացած կամ մտադրած ընկերութիւնը նմանութիւն չէ ունեցել մեր մէջ մինչև ցայսօր գոյութիւն ունեցած կամ ունեցող ընկերութիւններին։ Նախ և առաջ այդ եղել է ոչ թէ հասարակ ընկերութիւն, այլ աշխարհականներից կազմուած «Հոգևոր ընկերութիւն», երկրորդ, դորա նպատակը չէ եղել միայն փողով բարեգործութիւն անել, այլ «Հասարակաբար որպէս օրէնք հրամայէն սիրել զմիմեանս յամենաճշմարիտ սրտէ, և ըստ ամենայնի փութալ միշտ բարիս հատուցանելոյ միմեանց մանաւանդ ի վիշտս ի նեղութիւնս, ոչ խնայելով անձն փոխանակ եղբօր։ Եւս ունիլ պարտ է առաւելաբար հոգ և զուիթ ի վերայ հիւր և աղքատ հիւանդաց, զոր պարտ է գնալ մխիթարել և ծառայել նոցա. և հոգալ պիտոյից նոցին, և եթէ մեռանիցին, թաղել զնոսա ըստ օրինի»։ Ամեն բանից երևում է, որ Պոպոյեանը կամեցել է հիմնել միջնադարեան Եւրոպայի աբեղայական կարգերի պէս մի կարգ կամ, լաւ է ասել, մի հայկական Մասոնների ընկերութիւն, որոնց բոլոր գործողութիւնները ինչպէս յայտնի է, խառն էին զանազան կրօնական ծիսակատարութեամբ։ Մեր այս ենթադրութիւնները ճշմարտութեան չափ հաւանականութիւն կստանան, եթէ ի նկատի առնենք այն կարգ ու կանոնը, որ ընդունուած էին, նա մանաւանդ առաջին ժամանակները, եղբարց միաբանութեան մէջ, այն կրօնական ծիսակատարութիւնները, որ կատարում էին ընկերութեան «հետևողները»։ Ընկե-

ութիւնը կոչուում է «Հոգևոր ընկերութիւն», անդամները — «հետևողներ», ընկերների ժողովը — «միաբանութիւն եղբարց», ընկերութեան նախագահը — «կարգապետ», իսկ նորա երկու օգնականը — «առաջաւորներ»։ Հետևողները, որոնք 18 տարեկանից փոքր չպէտք է լինէին, ընտրուում են ընտրութեամբ և միաբանութեան մէջ ընդունուում են միայն նոքա, որոնք արժանաւոր են, «որք կարող իցէն յետ ընդունելոյն անլուցապէս հետևել. և կատարել»։ Միաբանութեան մէջ մտնելուց առաջ, ընդունուած հետևողը «թերթ ստորագրութեան Հետևողաց» կոչուած գրքի մէջ հետևեալ բովանդակութեամբ խոստմնագիր է տալիս. «Ես որ յօժարութեամբ սրտի իմոյ մըտի ի կարգ միաբանութեան հետևողաց, որ է սահմանեալ յանուն ամենօրհնեալ սրբոյ Աստուածածնի, պարտական եմ մինչև ցմահ անկեղծ եղբայրասիրութեամբ, և կատարեալ հնազանդութեամբ հաւատարիմ լինել եղբայրութեանն նպատակի, ընդունելով զամենայն բարեկարգութիւնս նորին առանց ինչ զանցառութեան, վասնորոյ և ես առ ի հաւատարմութեան բանիս, և անդառնալի խոստմանս իմոյ աստանօր ստորագրեմ»։ Հետևողները թէև հագնուում են «ըստ աշխարհական ծիսից», բայց ի նշան հետևողութեան պարանոցի վերայ կրում են արծաթեայ խաչ. նոցա աշխարհական զգեստն էլ «մաքուր, անախտ և չափաւոր է», որովհետև «չքեղաւոր բան զչափն զգեստը հպարտութեան նշան է, իսկ խաչը «ի նշան մահուան, զոր պատրաստ են ընդունել արիաբար ըստ պատահման վասն քրիստոնէական և սուրբ հաւատոյս»։ Հետևողները խստութեամբ պահում են բոլոր պահքերը, բայց նամանաւանդ մեծ պահքը. նոքա այդ ժամանակ ոչ գինի են խմում և ոչ օղի, իսկ չորեքշաբթի և ուրբաթ օրերը ծոմ են պահում մինչև երեկոյ, մէջքներին խարազան են կապում, որ միշտ զգաստ լի-

նեն, և բոլոր ժամանակը սաղմոս են քաղում և սուրբ գրքի ընթերցանութեամբ են զբաղուում։ Հասարակ օրերը առաւօտ և երեկոյ աղօթք են անում, իսկ օրուայ 24 ժամին «Հաւատով խոստովանիմ» են ասում. կիւրակնամտներին երեկոյեան աղօթքից յետոյ «ոտընկալութեամբ և ջերմեռանդութեամբ» մի կանոն սաղմոս և ուրիշ աղօթքներ են ասում. կիւրակի օրերը պատարագին ներկայ գտնուելուց յետոյ, ամբողջ օրը հոգևոր գործով և սուրբ գրքի ընթերցանութեամբ են պարապում, իսկ տէրունական և սրբոց տօներին պաշտօն են կատարում. պաշտօն են կատարում և չորեքշաբթի և ուրբաթ օրերը ի պատիւ Քրիստոսի և Աստուածածնի։ Պաշտօն կատարելու համար հաւաքուում է բոլոր միաբանութիւնը. կարգապետը վերան շուրջառ է առնում և սկսում է աղօթել, իսկ միւսները հետևում են նորան։ Այդ պաշտօնակատարութիւնների համար նոքա ունին և մի «Աղօթագիրք» [16])։ Եւ որովհետև ժողովուրդը տեսնելով աշխարհական մարդկանց եկեղեցական պաշտօն կատարելիս, կարող էր խրտնել և զանազան մեկնութիւններ տալ, նոքա աշխատում են իւրեանց ժողովները գաղտնի կերպով կատարել, որից եղբարց միաբանութիւնը մի գաղտնի

---

[16]) Աղօթագիրքը, որից մի օրինակ այժմ գտնուում է մեր ձեռքում, կազմուած է երկու մասից՝ ընդհանուր և պատարագի աղօթքներ։ Թէ ընդհանուրը և թէ պատարագի աղօթքները քաղուած են Սաղմոսից և մեր աղօթագրքերից և յարմարեցրած են հետևողների պահանջներին. գլխաւորապէս ընտրուած են այն աղօթքները, որոնք վերաբերում են Ս. Աստուածածնին։ Մեր ձեռքում գտնուած աղօթագրքի օրինակը գրուած է 51 թ. և պատարագի աղօթքների սկզբում ունի հետևեալ վերնագիրը՝ «Աղօթք համառօտաբար ի դեմս անմահ սուրբ պատարագին, առ ի ձեռն թիւրութեան, հետևող եղբարց։ Արտահանեալ ի սուրբ գրոց աղօթից և շարադասեալ ըստ պատշաճի սուրբ խորհրդոյն։ 1851 ամի»։

ընկերութեան կերպարանք է ստանում, իսկ նոցա խորհուրդները ու նստերը խորհրդաւոր բնաւորութիւն։ Ընկերութիւնը ունի և մի նշան կամ «էմբլեմ»։ Դա մի բոցավառ սիրտ է, որի միջից դուրս ցայտած կրակի մէջ երևում է ճառագայթաճաճանչ խաչը. սիրտը պսակաձև շրջապատում են թաւ ոստեր, որ նորա չորս կողմը կիսաբոլորակ են կազմում։ Մենք ասացինք, որ ընկերութեան թղթերի մէջ պահուում է իւր Պոպոյեանի ձեռագիրը ընկերութեան մասին։ Դա մի փոքրագիր չորս թերթից կազմուած, մաքուր, հին Հայոց ձեռագրերի օրինակով գրած տետրակ է, որ կազմուած է երկու մասից՝ ներածութիւնից և կանոններից կամ կարգերից, և կոչուում է «կարգ Հետևողաց»։ Ներածութեան մէջ Պոպոյեանը մէջ բերելով աւետարանի պատուէրը՝ «Սիրեցէք զմիմեանս», դատողութիւն է անում այդ մասին և շեշտում է այն բանի վերայ, թէ Քրիստոսի այդ սուրբ պատուէրը լիովին կատարելու համար, բաւական չէ միայն նորան խօսքերով արտայայտելը, այլ պէտք է գործով ևս ապացոյց տալ։ Ահա այս պատճառով ինքը ևս կամենալով այդ սուրբ պատուէրին գործով ծառայել, սահմանում է «Միաբանութեան կարգը»։ «Ես տրուպս և նուաստացեալս մեղօք, կամելով ընծայել պաշտօն ինչ ծառայութեան ամենօրհնեալ մօրն Աղօրմութեան սուրբ աստուածածնին, գրում է նա այդ մասին, յարդեանց վաստակոց իմոց ջան արարեալ սահմանեցի զայս կարգ միաբանութեան, որ է իբր ճանապարհ աստուածպաշտութեան վասն ամենասիրեցեալ և ջերմեռանդ աշխարհական եղբարցս իմոց»։

Միաբանութեան կարգը կամ կանոնադրութիւնը, որ կցած է ներածութեան, կազմուած է հինգ յօդուածից կամ կարգից, որոնց վերնագրերից կարելի է իմանալ նոցա բովանդակութիւնը. ա. «Հետևողք այս կարգի զինչ

պարտ են զգենուլ, և զինչ է նշան հետևողութեան նոցա». Բ. «Որպիսի կանոնիւ պարտ են սոքա աղօթել, և որպէս պարտ են պաշտել զտերունի տօնս, և ամենայն սրբոց». Գ. «Զինչ պահք պարտ են պահել». Դ. «Վասն հաղորդութեան պարտ են պատրաստել». Ե. «Զինչ են պարտաւորութիւնք միաբանելոցս այսոցիկ»։ Նա արգելում է իգական սեռից միաբանութեան անդամ ընդունել և խնդրում է աղօթել իւր համար, և թեր ու դէմ խօսակցութիւնների տեղիք չտալու համար, աւելացնում է, թէ միաբանութեան կարգը ինքը իւրանից չէ շարադրել, այլ քաղուածք է արել սուրբ հայրերի կանոնադրութիւնից։ «Բայց զայս գործ ոչ նորա հնար, և ընդեմ և եկեղեցական սրբոց հարց կանոնադրութեանց սահմանեմ, ասում է նա, զոր քաւ լիցի, այլ ըստ նոցին կարգադրութեանց բաղդատեալ և կամ ի նոցունց ծաղկաքաղեալ զորս ըստ անզօր մտաց իմոց պատշաճաւորս համարեցա ի սոյն գործ, սահմանեցի զայս կարգ հոգևոր ընկերութեան համառօտ և թիւրին տեսակաւ, որպէս զի բարեպաշտասէր եղբայրք, թիւրութեան հայելով, կարողասցին փութապէս յանձնառու լինել, և հետեւելով լիցին բարեպաշտ, և երջանիկ յայսմ և յաւիտենական կենաց, և որպէս հարկն է լինել ամենայն ուղղաբառ քրիստոնէից» [17])։ Ընկերութիւնը մինչև 1853 թ., բացի կրօնական—բարեպաշտական ժողովներից, ոչ մի գործի չէ ձեռնարկում. նա այդ ժամանակամիջոցում միայն աշխատում է հաստատուել, ամրանալ և նիւթականապէս հարստանալ։ Մէկ կողմից տարէցտարի աւելանում է միաբանութեան հետևողների թիւը, միւս կողմից առաջին

[17]) Պոպոյեանի ձեռագիր տետրակի լիակատար վերնագիրն է՝ «Կարգ Հետևողաց արարեալ յԵպիփանոսէ Պոպովեանց յամի տեառն 1846 և Հայկականիս ՌՄԶԵ-ին ի Նոր-Նախիջևան»։

երկու տարուայ ընթացքում հետևողների շաբաթական տուրքից գոյացած 36 ռուբլի թղթադրամը հետևեալ տարիների 7 ռուբլի 20 կոպէկ տարեկան տուրքի հետ միասին մեծանալով, հասնում է 478 ռուբլու 32 կոպէկ արծաթի գումարին։ Սակայն ամրանալու և հաստատուելու հետ միասին ընկերութիւնը այդ միջոցում ենթարկուում է և մեծ վտանգի։ Ընկերութեան գաղտնի նիստերը, որ յայտնի բան է, ծածուկ չեն մնում հասարակութիւնից, և նորա նպատակների անորոշութիւնը շուտով առաջ են բերում հասարակութեան մէջ զանազան թեր ու դէմ խօսակցութիւններ. զանազան ենթադրութիւններ և կասկածանքներ են յարուցանում նորա նպատակների մասին. նա մանաւանդ կասկածելի են երևում հասարակութեան աչքին հետևողների ծիսակատարութիւնները և կրօնական պաշտամունքը։ Շատերը կարծում են, որ հետևողները ազանդաւոր են և նոցա կազմած միաբանութիւնը նպատակ ունի Հայերի մէջ մի նոր ազանդ առաջ բերելու։ Եւ ճշմարիտն ասած կասկածելու և զանազան ենթադրութիւններ անելու տեղիք էլ կար. բնչ ասել է անորոշ նպատակի համար փող ժողովելը, անզարդացած, անգրագէտ, կիսակիրթ երիտասարդների շուրջառ առնելը, պատարագի աղօթքներ կարդալը և զանազան եկեղեցական արարողութիւն կատարելը։ Այդ կասկածանքները ու ենթադրութիւնները, որ առաջին ժամանակները խուլ կերպով էին արտայայտուում և բամբասանքի բնաւորութիւն էին կրում, գնալով այնքան սաստկանում են, որ սկսում են վտանգ սպառնալ նոյն իսկ ընկերութեան գոյութեան։ Արդէն հետևողների սիրտը սկսում է վախ ընկնել, արդէն թուլասիրտներից մի քանիսը ընկերութիւնը թողնելու և միաբանութիւնից բաժանուելու տրամադրութիւն են ցոյց տալիս։ Ընկերութեան ղեկավարները տեսնելով, որ եթէ գործը այսպէս շարունակուի,

միաբանութիւնը կարող է խպառ քայքայուել, մտածում են ընկերութեան խորհրդաւոր բնաւորութիւնը փոխել և պարզ կերպով որոշել նորա նպատակը, մի խօսքով օրինական ձև տալ նորան։ Այդ ժամանակին է վերաբերում ընկերութեան համար նոր կանոնադրութիւն կազմելու և նորան հաստատել տալու ձգտումը, այդ ժամանակին է վերաբերում և այն ընդհանուր երդմնագրի կազմելը, որի մէջ բացայայտ կերպով որոշուած է ընկերութեան նպատակը՝ «Մարզել երեսուն Լուսաւորչադաւան հայ որբ և աղքատ անտէր մանկունս ի հոգևորական կարգէ յոր և իցէ քաղաքաց»։ Երդմնագիրը, որ իւր ճակատին ընկերութեան նշանի տակ կրում է՝ «Ցանուն ամենօրհնեալ սրբուհւոյ Աստուածածնի» վերնագիրը և վերջում կարգապետի ու առաջաւորների ստորագրութիւնները, իւր բովանդակութեամբ արժանի է ուշադրութեան, որովհետև բովանդակում է իւր մէջ, բացի բացորոշ կերպով արտայայտուած նպատակից, և ընկերութեան կազմակերպութեան և նորա ապագայում բռնելիք դիրքի մասին տեղեկութիւններ և հետաքրքիր մանրամասնութիւններ։ Նա գրուած է կանոնադրութեան ձևով և բաղկացած է 13 առանձին յօդուածից՝ «Մեք միաբանեալ եղբարքս ունիմք զայսպիսի կանոնական սահմանադրութիւն զի յամենայօժար սրտէ մերմէ կապակցեալ սիրով ընդ միմեանս պարտաւորեմք մինչև ցօր մահուան մերոյ անկեղծ եղբայրութեամբ վարել ընդ միմեանս՝ օգնել միմեանց, և միակամ սիրով դիմել ի պայծառութիւն միաբանութեանս։ Մեք միաբանեալքս պարտական եմք ամ ըստ ամէ մինչև ցօր մահուան մերոյ տալ միաբանութեանս տուրս դրամոց, ըստ կարգաւորեալ չափուն, և զայնոսիկ դրամս մեր ամ ըստ ամէ անմիջապէս տալ ի կայսերական գանձարանն, վասն ապահովութեան և շահաբերութեան յանուն միաբանութեանս»։

«Եւ արդ յորժամ առաջնորդութեամբ Աստուծոյ յանցըս բանի մի ամաց աճեսցի եղբայրութիւնս մեր և բազմասցի գումար դրամոցն մերոց որ լինելոց է ի կայսերական գանձարանին, մինչև բաւական լինելոյ տրովք եղբարց կամ շահաբերութեամբ դրամոց ըստ բարեկարգեաց օրինաց մարդել երեսուն լուսաւորչադաւան հայ որբ և աղքատ անտէր մանկունս ի հոգևորական կարգէ յոր և իցէ քաղաքաց, յայնժամ պարտական եմք դիմել առ սբ. գահն Էջմիածնայ և յայտնել զխորհուրդ մեր սրբազան հօրն մերոյ կաթուղիկոսին. և Նորին առաջարկութեամբն խընդրել յամենողորմ կայսերէն շնորհել մեզ իրաւունս յատուկ միաբանութեանս անուամբ բանալոյ վարժատուն ի Նոր-Նախիջևան քաղաքիս վասն վերոյիշեալ մանկանցն, իսկ եղբայրութիւնս մեր պարտ է լինել վերատեսուչ նոյն վարժատան, և ի ձեռս իւր ունել զամենայն պէտս և զհոգացողութիւնս Նորին»։

«Վասն բարւոք կառավարութեան միաբանութեանս ունիլ պարտիմք եղբայր որ ընտրեալ, և կարգեալ ի մէնջ մինչև ցօր մահուան Նորին կարգապետ կամ վերատեսուչ անուամբ և նա պարտաւորի ըստ կարգաւորեալ կանոնաց և իրաւանց վարել ըզպաշտօն իւր»։

«Եւ ընդ սմին պարտեմք ունիլ ի միաբանութենէս մերմէ վասն գործակատարութեան և օգնականութեան կարգապետին երկուս յառաջադէմ եղբարս ժամանակաւոր ընտրութեամբ որք պարտ են ըստ յատկացեալ պարտաւորութեան իւրեանց հոգալ ընդ կարգապետին վասն բարւոք կառավարութեան և պայծառութեան միաբանութեանս»։

«Նոյնպէս ի վերայ դրամոց միաբանութեանս պարտեմք նշանակել ըզմի որ յեղբարց յարժանաւորագունից գանձապետ անուամբ և նա պարտ է ըստ յատկացեալ կանոնադրութեանց կատարել զպաշտօն իւր»։

«Այլ և առ ի ուղիղ կարգաւ ընթանալոյ գործոյս ունիմք սահմանագրեալ կանոնական պէս պէս կարգաւորութիւնս, և ըստ այնոցիկ բարեկարգեալ կանոնագրութեանց պարտական եմք կառավարել ամենախորին եղբայրասիրութեամբ առանց ինչ ընդդիմաբանութեամբ»։

«Իսկ եթէ զկնի ժամանակաց հարկեսցի մեզ առնել փոփոխութիւնս ինչ ի կանոնագրութեանց միաբանութեանս յայնժամ պարտաւոր եմք միաբան խորհրդով առնել զփոփոխութիւնս»։

«Ի հաւատարմութիւն անլուծանելի եղբայրութեանս մերոյ ստորագրեցաք ի մատենի միաբանութեանս, և եթէ պատահեսցի մեզ նոր եղբայր ընդունել, և նա պարտաւորի անշուշտ ստորագրել ի նոյն մատենին, և կոչել ընդ մեզ եղբայր»։

«Իսկ եթէ յետ ժամանակաց ի միաբանելոցս կամեսցի ոք հրաժարիլ յեղբայրութենէս ունիմք զնա առանց ինչ արգելանաց ի բաց առնել, նոյնպէս և զայնոսիկ եղբարս, որք ընդդիմաբանութեամբ հակառակութեամբ, խռովութեամբ, և անվայել քաղաքավարութեամբ վարեսցին ընդ մեզ, բայց զդրամսն զոր ընծայեալ իցէ նա չպարտաւորեմք վերադարձուցանել առ նա, այլ պահել ի գումարս դրամոց միաբանութեանն»։

«Եւ եթէ պատահեսցի այնպիսի ոք, որ ընծայեսցէ միաբանութեան գումար ինչ դրամոց, պարտական եմք և զայնոսիկ դրամսն ընդունել շնորհակալութեամբ, և նորին անուամբ մուծանել ի դիր, ի յիշատակ անմոռանալի պարգևաց նորին»։

«Ահա նպատակ եղբայրութեան մերոյ վասն որոյ ունիմք մեզ յոյս հաստատ և առաջնորդ զսուրբ աստուածածին, որոյ անուամբ սահմանեցաք զգործս դայս»։

«Արդ եթէ ամենողորմն Աստուած շնորհեսցէ մեզ հասանել բաղձանաց մերոց, յայնժամ պարտիմք վերոյ

յիշեցեալ գործոցս զկատարումն տալ, և եթէ ի կենդանութեանս մերոյ չժամանեմք առնել, յայնժամ յետնորդք մեր պարտական են առանց ինչ զանցառութեան և խափանելոյ բան մի ի նպատակէս մերմէ առնել զկատարումն, ի փառս ամենակալին Աստուծոյ, և ի պատիւ պաշտպանիս մերոյ ամենամաքուր մօրն ողորմութեան սրբոյ աստուածածնին, և յօդուտ լուսաւորութեան որբ և աղքատ անտերունջ մանկանց սիրելի ազգիս մերոյ»։

1858 թուականին գալիս է Նախիջևան Գաբրիէլ վարդապետ Այվազեանը, որ Մատթէոս եպիսկոպոս վեհապետեանի Հաշտարխանի թեմը տեղափոխուելուց և երջանկայիշատակ Ներսէս Ե. կաթուղիկոսի մահից յետոյ, նշանակուած էր Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմի առաջնորդ։ Վարդապետը իջևանում է Պողոյեանի տանը և զբաղուում է եկեղեցական գումարների և նոցա առթիւ հասարակութեան մէջ ծագած մեծ խռովութիւնների և երկպառակութիւնների խնդրով։ Նա ի միջի այլոց հետաքրքրուում է և Հոգևոր ընկերութեան գործով, որի մասին հասարակութեան մէջ այդ ժամանակ շատ աննպաստ կարծիքներ էին տարածուած։ Ընկերութեան խորհուրդը իմանալու և նորա մասին հասարակութեան մէջ եղած տարաձայնութիւնները պարզելու համար, նա առաջ ըսկսում է հարց ու փորձ անել Պողոյեանին, որից և լիուլի տեղեկութիւն է ստանում ընկերութեան թէ սկսուելու, թէ անցեալի և թէ ներկայ հանգամանքների մասին։ Հասկանալով, որ եթէ վերանան ընկերութեան միջից անխորհուրդ ծիսակատարութիւնները, որ անշուշտ առաջ էին եկել հիմնադրի և հետևողների անզարգացողութիւնից, ընկերութիւնը իւր բարի նպատակներով ապագայում կարող է մի օգտաւէտ բարեգործական հաստատութիւն դառնալ քաղաքի հայ հասարակութեան համար, առաջնորդը իւր մօտ է հրաւիրում միաբանութեան բոլոր հե-

տեղներին, գովում է նոցա եռանդը, խրախուսում է նոցա ձեռնարկութիւնը և յորդորում է մի կողմ թողնելով հասարակութեան մէջ տարաձայնութիւն սերմանող ծիսակատարութիւնները, հետամուտ լինել հաստատել տալու կանոնադրութիւնը և ձեռնարկել այն բարեգործութեան, որ համապատասխանում է ընկերութեան բուն նպատակներին։ Եւ որպէս զի ընկերութիւնը բոլորովին փոխուած լինի և հասարակութեան աչքին վստահելի և օրինաւոր ձև ստանայ, նա փոխելով ընկերութեան անունը, կոչում է նորան «Եղբայրութիւն խրախուսչաց ազգաշահ վաստակոց» և որտեղ որ լինում է, ինչ շրջանի մէջ նստում, վեր է կենում, ամեն տեղ մեծ գովասանքով է խօսում նորա մասին։ Այդ ժամանակ արդէն ընկերութեան գումարը աճելով, հասել էր 903 ռ. ընկերութեան ղեկավարները առաջնորդի խրախուսանքի ազդեցութեան ներքոյ սկսում են աւելի եռանդով գործել. նոքա աշխատում են արդարացնել նորա իւրեանց վերայ դրած յոյսերը և շուտով իրագործուած տեսնել ազքատ մանուկների կրթութեան գործը։ Եւ որովհետև այդ նպատակի իրագործումը կախուած էր մայր գումարի աճելուց, նոքա սկսում են ամեն տեսակ ջանք ու աշխատանք գործ դնել հարստացնելու ընկերութեան գանձարանը։ Նոքա ահագին տոկոսներով (18 տոկոս) մայր գումարը տալիս են ընկերներից մէկին շահեցնելու, նոքա ընկերութեան փողով առևտուր են անում յօգուտ ընկերութեան, նոքա տօնավաճառներից էժան գնով ապրանք են բերում և թանգ գնով բաժանում միմեանց մէջ, մի խօսքով ձեռնարկում են այն բոլոր միջոցներին, որին դիմում է ամեն մի անհատ, որ իւրեան նպատակ է դրած լինում անպատճառ հարստանալու։ Վերջապէս 64 թուին նոքա այնքան կարողանում են աճեցնել գումարը, որ հնարաւոր են համարում առաջին բարի գործը անել. նոքա այդ թուականին երեք հա-

բիւր ռուբլի են ուղարկում Եկատերինոդարի Հայոց դրպրոցին Չերքեզահայոց երեխաների կրթութեան համար, իսկ հետևեալ տարին արդէն այնքան զօրանում է դանձարանը, որ վստահանում են քաղաքումս մի ընթերցարան բանալու ձեռնարկել, որ պիտի կոչուէր «Թանգարան վերծանութեան», բայց որ դժբաղդաբար մեզ անյայտ պատճառով գլուխ չէ գալիս։ Ընկերութեան կանոնադրութիւնը, որ հաստատել է երջանկայիշատակ Գէորգ չորրորդ կաթուղիկոսը 1867 թ. Սեպտեմբերի 25 ին, «Նոր-Նախիջևանու Հայոց Մարդասիրական ընկերութիւն յանուն սրբոյ Աստուածածնի» [18]) անունով ընկերութեան նպատակը

---

[18]) Հաստատուած կանոնադրութիւնը դրոշմուած է կաթուղիկոսական կնքով և ունի հետևեալ մակագրութիւնը՝ «Զվերոգրեալ կանոնադրութիւն Մարդասիրական ընկերութեան Հայոց Նոր-Նախիջևանու՝ նուիրելոյ ընդ պաշտպանութեամբ ամենօրհնեալ և միշտ կուսի Մարիամու, հաստատեմք փոփոխելով կ՚յօդուածն Ի. ըստ նշանակելոյն ի կոնդակի մերում համար 352 ի 25 Սեպտեմբերի 1867 ամի։ Յորոյ վկայութիւն դրոշմեմք զՀայրապետականս մեր զկնիք, վաւերացուցեալ Մերովս ստորագրութեամբ»։ Կանոնադրութիւնը կազմուած է հինգ գլխից՝ «փրաւունք Մարդասիրական ընկերութեան, Դրամագլուխ ընկերութեան, Շրջան գործունէութեան։ Ժողով ընկերութեան, ընդհանուր ժողով անդամոց ընկերութեան». սոքա բոլորը միասին պարունակում են իւրեանց մէջ 20 յօդուածք, որոնցից արժանի են ուշադրութեան հետևեալները՝ «վասն կառավարութեան տնտեսական գործոց ընկերութեան լինի ժողով կամ խորհրդարան բաղկացեալ յերկոտասան հոգաբարձուաց, ընտրելոց ի թուոց անդամոց ընկերութեան միաձայն հաճութեամբ։ Հոգաբարձուք ընտրին ի միջոյ իւրեանց գնախագահ, գանձապետ, գգործակատար և զեռկուս հոգաբարձուս վասն ժառանգաւորաց դպրոցին, բայց վերջինքս այս պարտ են լինել ուսեալ և հմուտ և հաստատեալ ի նորին վեհափառութենէ, սրբազնակատար կաթուղիկոսէն ամենայն Հայոց»։ (յօդ. Ժ.)

«Անդամք ընկերութեան կարեն լինել միայն բնակիչք Նախիջևան քաղաքի, իսկ Հայք օտար քաղաքաց ցանկացողք լինել նպաստամատոյց ընկերութեան, կոչին նախանձաւորք ընկերութեան»։ (յօդ. Ը.)

«Ի խափանել ընկերութեան ի հետևումն որպիսի և իցէ դիպուածոյ, դրամագլուխ նորին և այլ ամենայն շարժական և

հետևեալ կերպով է որոշում. «Մարդասիրական ընկերութիւն Հայոց Նոր-Նախիջևանայ հիմնեալ էր ի 25 մայիսի 1853 ամի յանուն ամենօրհնեալ սրբոյ կուսին Մարիամու Աստուածածնին նպատակաւ հիմնելոյ ի քաղաքիս զՀոգևոր դպրոց և հրահանգելոյ ի նմին զմանկունս չքաւոր հոգեւորականաց, բայց քանզի նորին վեհափառութիւն սրբազնակատար կաթուղիկոսն Ամենայն Հայոց Տէր Գէորգ Դ. բարեհաճեցաւ սահմանել ի Սուրբ Խաչ վանս քաղաքիս զժառանգաւորաց դպրոց ընդ տեսչութեամբ վանահօր և երկուց հոգաբարձուաց կարգելոց ի նորին վեհափառութենէ, ուստի անդամք Մարդասիրական ընկերութեան Հայոց, գտանելով համեմատ նպատակի իւրեանց, յօժարութեամբ սրտի նուիրեն զտարեկան տոկոսիս դրամագլխոյ ընկերութեան և զբաժանորդագինն, ըստ ներքոյ եղեալ կանոնադրութեանցն համաձայն ի պահպանութիւն դպրոցին ժառանգաւորաց, տնտեսական կառավարութեան լինելով ի ձեռս ընկերութեան»։ Հանգուցեալ վեհափառի այդ առ-

---

անշարժ կայք վճռով ընդհանուր ժողովոյ ի գործ դնին ի պէտս այլոց որպէսի և իցէ բարեգործական ձեռնարկութեանց ի Նախիջևան քաղաքի»։ (յօդ. ԺԹ.)

«Վճիռք ժողովոյն լինին բազմութեամբ ձայնից»։ (յօդ. Ի.)

«Ընկերութեան պարտ է հոգալ զտնտեսական կառավարութենէ ժառանգաւորաց դպրոցին որ ի սուրբ Խաչ վանս քաղաքին Նախիջևանայ, այսինքն, Ա. հոգալ և գտանել զվարժապետս—զդաստիարակս, Բ. հոգալ զհարկաւորելի մատեանս և կայլ ամենայն կարևոր պիտոյս և, Գ. զծախս կառավարութեան ընկերութեան»։ (յօդ. Է.)

«Պատրաստական դրամագլուխն, որոյ գումարն է երկու հազար ռուբլի արծ. կարէ յանձն լինել ընդ ընդհանուր երաշխաւորութեամբ Հոգաբարձուաց ի շահեցողութիւն, ի ձեռս մասնաւոր անձանց, զլխաւորապէս ի ձեռս անդամոց ընկերութեան գոյացեալ տոկոսիքն պատրաստական գումարին ծախին ի պէտս ընկերութեան համաձայն նպատակի նորին։ Նոյնպէս դրամագլուխն կարելի է ծախել ի պէտս անհրաժեշտ կարևորութեան, բայց և ոչ աւելի քան զկէսն»։ (յօդ. Ե.)

թիւ արձակած սրբատառ կոնդակը ապագայում թիւրիմացութիւնների տեղիք չ'տալու համար, ուղղում է կանոնադրութեան Է. յօդուածը, որի մէջ խուլ և անբաւական կերպով է որոշուած ընկերութեան յարաբերութիւնը դպրոցի դպրոցը։ «Հաստատեմք, ասուած է կոնդակի մէջ, զկանոնադրութիւն ընկերութեանդ ձերոյ, զոր ընթերցաք ուշի ուշով, և ուղղեցաք զյօդուածն Է. այսպէս՝ «Ընկերութիւնն պարտի հոգալ զտնտեսական կառավարութիւն ժառանգաւորաց դպրոցին որ ի սուրբ Խաչ վանս քաղաքին Նախիջևանայ, այսինքն Ա.) հոգալ զամենայն կարեւոր պիտոյս ուսումնարանին, Բ.) Առնել զծախս կառավարութեան ընկերութեանն. Գ.) Գնել զդասական մատեանս կարեւորս ի դպրոցին, ըստ ընտրութեան և առաջարկութեան վանահօրն և հոգաբարձուաց. Դ.) Հատուցանել զթոշակն վարժապետաց, ընտրելոց ի վանահօրէն և ի հոգաբարձուացն, համաձայն կանոնադրութեան հրատարակելոյ յուսումնական խորհրդոյն որ ի Մայր Աթոռն ի ս. Էջմիածին» [19]։

---

[19]) Մարդասիրական ընկերութեան պատմութիւնը մենք քաղել ենք ընկերութեան թղթերից, որ ամենայն պատրաստականութեամբ մեզ տուեց օգտուելու ընկերութեան գործավար Տէր Սարգիս քահանայ Ոսկերչեանը, որի համար և մենք յայտնում ենք բարեկրօն հօրը մեր առ ի սրտէ շնորհակալութիւնը։ Ներկայումս գայութիւն չունի ոչ դպրոցը ոչ էլ ընկերութիւնը։ Առաջինը փակուեց սորանից երկու տարի առաջ, իսկ երկրորդը թէև իւր գործունէութիւնը դադարեցրեց նոյնպէս դպրոցի փակուելու հետ միասին, բայց պաշտօնապէս փակուած յայտարարուեց միայն ներկայ թուականիս Յունիսին։ Ընկերութեան ստացուածքը ապգիս վեհափառ հայրապետի սրբատառ կոնդակով տնօրինուեց յանձնելու տեղիս եկեղեցական Հոգաբարձութեան այն պայմանով, որ Հոգաբարձութիւնը չորս գիշերօթիկ սան պահէ—երկուսը Գէորգեան ճեմարանում, երկուսը Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմական դպրանոցում, որովհետև ընկերութեան նպատակն էր հոգևորականացուներ պատրաստել։

7.

Վանքի կառավարութիւնը ի սկզբանէ անտի գտնուել է վանահայրերի ձեռքին, որոնք կառավարել են նորան առաջ Ռուսաստանի առաջնորդների հսկողութեան ներքոյ, յետոյ Նախիջևանի և Բեսարաբիոյ թեմակալների, երբ Ռուսաստանի առաջնորդութիւնը բաժանուել է Հաշտարխանի և Բեսսարաբիոյ թեմերին և, վերջապէս, Ս. Էջմիածնի Սինհոդոսի հսկողութեան ներքոյ, երբ բոլոր Հայոց վանքերը յանձուել են նորա տեսչութեան։ Վանահայր չեղած ժամանակը միշտ նշանակուել է մի քահանայ, որ ազարակացուց կրօնական պիտոյքները հոգալու հետ միասին կառավարել է և վանքը նախկին «Հոգևոր դատարանի» և յետոյ բացուած Նախիջևանի «Հոգևոր կառավարութեան» հսկողութեան ներքոյ։ Քառասնական թուականներից մինչև 1883 – 84 ը, վանքի տնտեսական կառավարութիւնը բաժանուած է եղել կրօնականից. տնտեսականը գտնուել է աշխարհականների, իսկ կրօնականը վանահայրերի տեսչութեան ներքոյ։ Կառավարութեան տնտեսական մասի կրօնականից բաժանելու գլխաւոր պատճառը եղել է այն մշտական անբաւականութիւնը, որ տեղի է ունեցել քաղաքացւոց և վանահայրերի մէջ վանքի նիւթական միջոցների վերաբերութեամբ։ Ժողովուրդը հիմնուելով այն Հայի մէջ արիւն և մարմին դարձած համոզմունքի վերայ, որ եկեղեցին ժողովրդինն է, որովհետև նա է հոգում նորա բոլոր տնտեսական պիտոյքը, նա պահում նորան, իրեն միշտ իրաւունք է համարել խառնուիլ վանքի տնտեսական կառավարութեան մէջ, հսկել նորա ել և մուտքի կանոնաւորութեան վերայ և չ'թողնել, որ անհատների ձեռքով վատնուի ժողովրդի սեփականութիւնը. իսկ վանահայրերից շատերը, փոխանակ աշխատելու իւրեանց անշահասիրութեամբ գրաւելու ժողովրդի

սիրտը, վստահելի երևելու նորա աչքին և դորանով նորա տեղի ու անտեղի վանքի կառավարութեան գործի մէջ խառնուելու և բողոքելու առաջն առնելու, ընդհակառակը իւրեանց շահասիրութեամբ, անհոգութեամբ, մնասակար գործերով և կարգադրութիւններով շատ անգամ տեղիք են տուել բամբասելու և պահանջելու վանահօր պաշտօնանկութիւնը, որից առաջ է եկել այն ցաւալի հանգամանքը, որ վանահայրերը յաճախակի փոխուել են և վանքը համարեա միշտ զրկուած է եղել վանահայրական կայուն իշխանութիւնից։ Հոգևոր իշխանութիւնը կամենալով բառնալ վանահայրերի և ժողովրդի մէջ եղած անբաւականութիւնները և մէկ անգամ ընդ միշտ վերջ դնել երկպառակութիւններին, վանքի տնտեսական մասը հանելով վանահօր իշխանութեան տակից, յանձնել է առաջ Ս. Էջմիածնի Նախիջևանի ամբոխակալին, յետոյ մի առանձին Հոգաբարձուի և, վերջապէս, վանական կառավարութեանը։ Բայց դժբաղդաբար դորանով ևս իշխանութիւնը չէ հասել իւր նպատակին։ Ընդհակառակը դորանով աւելի ևս գրգռուել են կրքերը և գնալով մեծ ծաւալ են ստացել խռովութիւնները, որովհետև Հոգևոր իշխանութիւնը վերոյիշեալ կարգադրութիւնը անելով, նոյն ժամանակ չէ հոգացել ճշտիւ որոշելու վանահօր և տնտեսական մասի կառավարիչների իրաւունքների սահմանը, չէ աշխատել նոցա յարաբերութիւնները կանոնաւորելու և, որ գլխաւորն է, խիստ կերպով հսկելու, որ անխախտ կերպով և անխափան կատարուին իշխանութեան դրած պայմանները։ Անբաւականութիւնները նա մանաւանդ սաստկացել են, երբ վանքում բացուել է Ժառանգաւորաց դպրոցը, որովհետև այդ ժամանակից գործի մէջ սկսել է խառնուիլ և Մարդասիրական ընկերութիւնը, որի շահերը պահանջում էին, որ թէ վանահայրերը և թէ վանքի տնտեսական մասի կառավարիչները իւ-

բեանց վերայ կաթուղիկոսից դրուած պարտականութիւնները դէպի ուսումնարանը կանոնաւոր կերպով կատարեն։ Երջանկայիշատակ Գէորգ կաթուղիկոսի դրած պայմաններով վանքի տնտեսական կառավարութիւնը տարէցտարի պէտք է հոգար դպրոցի սնունդը և վառելիքը, իսկ վանահայրը պարտական էր կատարել դպրոցի վերատեսչութեան և կրօնուսոյցի պաշտօնները, մնացեալ բոլոր կարօտութիւնները յանձն էր առել հոգալու իւր միջոցներից ընկերութիւնը։ Խռովութիւնները առաջ էին գալիս այն հանգամանքից, որ կամ վանահայրերը օրինաւոր կերպով չէին կատարում իւրեանց պարտականութիւնը, կամ տնտեսական մասի կառավարիչները ժամանակին և կանոնաւոր կերպով չէին հասցնում աշակերտների համար նշանակուած սնունդն ու վառելիքը։ Ինչ ասել կուզի, որ այդ դէպքում կառավարիչների անձնական յարաբերութիւնները, խնամութիւնն ու բարեկամութիւնը մեծ դեր էին խաղում։ Բաւական էր լինում, օրինակի համար, որ Մարդասիրական ընկերութիւնից ընտրուած ու կաթուղիկոսից հաստատուած դպրոցի երկու հոգաբարձուն և կառավարիչները վատ յարաբերութեան մէջ լինէին վանահօր հետ, որ յայտարարութիւն տային ընկերութեան խորհրդարանին, թէ վանահայրը անընդունակ է դպրոցը կառավարելու—, և ահա ընկերութիւնը դիմում էր կաթուղիկոսին և խնդրում էր հեռացնել վանահօրը և մէկ ուրիշին նշանակել, թէև հոգաբարձուները շատ անգամ այնպիսի մարդիկ էին լինում, որ չէին կարող դատաւոր լինել վանահայրերի գիտութեան կամ անընդունակութեան։ Բաւական էր լինում, որ ընկերութիւնը մի տարի մի որ և է անյաջողութիւն ունենար, ինչպէս այդ պատահել է 76 թուականին, երբ գանձապահ Խաչերես Ալաջալեանի ինքնասպանութեան պատճառով կորել է ընկերութեան հինգ հազար ռուբլու չափ գումարը, որ ըն-

կերութիւնը սկսէր աւելի պահանջել վանքից, նա մանաւանդ որ դպրոցը գնալով մեծանում էր և ծախսերը աւելանում։ Հոգևոր իշխանութիւնը վանքի տնտեսական կառավարութիւնը բաժանելով կրօնականից, դորանով ոչ թէ միայն չէ կարողացել վանքի տնտեսական կամ նիւթական միջոցների վերաբերութեամբ քաղաքացւոց և վանահայրի մէջ եղած խռովութիւնները դադարեցնել, այլ և մինչև անգամ չէ կարողացել բարւոքել տնտեսական կառավարութիւնը այնպէս, ինչպէս որ ցանկալի է։ Դորա անյաջողութեան պատճառն էլ պէտք է որոնել տընտեսական մասի կառավարիչների անձնաւորութեան մէջ։ Ս. Էջմիածնի Նախիջևանի աթոռակալները, որոնց ի սկզբանէ անտի յանձնուած է եղել վանքի տնտեսական մասի կառավարութիւնը, ինքեանք մասնաւոր գործի տէր լինելով, քաղաքի քաղաքագլխութեան պաշտօնը ևս վարելով, միջոց չեն ունեցել վանքի վերայ հարկաւոր ուշադրութիւնը դարձնել և ստիպուած են եղել նորա կառավարութիւնը յանձնել մի մասնաւոր հոգաբարձուի և ամեն բանում հաւատալ նորան. իսկ վանական կառավարութեան անդամները թէև ինքեանք են ամեն բան կառավարել, բայց չհասկանալով վանքի նշանակութիւնը, շատ անգամ նեղ, վաճառականական հաշիւներ են գործ դրել, օրէնքին հակառակ կարգադրութիւններ են արել, որով և մնասել են նորա թէ բարոյական և թէ տնտեսական շահերին։ Վանական կառավարութեան անդամները, օրինակի համար, իւրեանց գործունէութիւնը սկսել են նորանով, որ ծախսել են վանքի անասունները և այդ վաճառումից գոյացած 8 հարիւր ռուբլի գումարով շինել պարտէզում այժմ գոյութիւն ունեցող փայտեայ շինութիւնները երաժշտութեան, մառանի և պարերեկոյթների համար, որով պարտէզին տուել են այն բնաւորութիւնը, որ նա ունի այժմ։ Այդ գործողութեամբ կառավարիչնե-

ը, ճիշտ է, աւելացրել են վանքի նիւթական միջոցնե-
ը, որովհետև պարտէզը, որ առաջ համարեա ոչ մի ե-
կամուտ չէր բերում, այնուհետև սկսել է արդիւնք տալ
վանքին, բայց դորանով նորա վնասել են նորա բարոյա-
կան շահերին։ Մինչև այդ ժամանակը պարտէզը մի գե-
ղեցիկ զբօսատեղի է եղել, որ ժողովրդի համար փոխա-
նակում է եղել Նոցա Խռիմում թողած այգիները և ծա-
ռաշատ պարտէզները։ Ամառուայ շոգ և փոշոտ օրերին
երեկոյեան դէմ բազմաթիւ կառքեր են կանգ առնում
եղել պարտէզի դրան առաջ և ամբողջ պարտէզը լը-
ցուում է եղել խայտաճամուկ բազմութեամբ. ստուերա-
շատ ծառերի տակ, սիզաւէտ մարգերի վերայ գորգեր ու
կապերտներ են փռուում եղել և տանից բերած ուտելե-
ղէնը հանուել նահապետական պարզ սփռոցի վերայ, որի
շորս բոլորը երեկոյեան ժամերգութեանը ներկայ գտնուե-
լուց և կուշտ զբօսնելուց յետոյ, բոլորում են եղել եկող-
ները։ Այդ տեղ արբեցողութիւնը և անբարոյականութիւ-
նը տեղ չեն ունեցել, համեստ զուարճութիւնը, մաքուր,
պարզ նահապետական բաւականութիւնները այդ զբօսան-
քի յատկանիշն են եղել։ Բայց վանական կառավարութեան
վերոյիշեալ կարգադրութիւնից յետոյ, ամեն բան փոխուել
է. պարտէզը սկսել է կամաց-կամաց կորցնել իւր նահա-
պետական պարզութիւնը և ստանալ այն գոյնն ու բնա-
ւորութիւնը, որ առհասարակ ունենում են մեծ քաղաք-
ների մօտ գոյութիւն ունեցող զբօսատեղիները։ Պարտէ-
զը այդ ժամանակներից սկսում են յաճախել կասկածելի
ընկերութիւններ, Բաքոսի երկրպագուները, Ռոստովի և
Նախիջևանի Ոսկի երիտասարդութիւնը... թեթև երաժշ-
տութիւնը, երգեհոնը և զուռնան ընկերանում են և կազ-
մում մի համերգ, որ վիրաւորում է Հայի կրօնական զգաց-
մունքը, պղծում է վանքի մաքրութիւնը.... Եւ մառանը
նպաստում է դորան. չէ որ մառանապետը պէտք է աւե-

լիքով վերադարձնէ այն փողը, որ տալիս է վանքին իբրև կապալադրամ։ Նոյն վանական կառավարութեան անդամները հետևելով իւրեանց նախորդ վանքի տնտեսական մասի կառավարիչ – հոգաբարձու Գէորգ Խաթրանեանի օրինակին, որ 1875 թուին 8 տարի ժամանակով և 50 ռուբլի տարեկան վարձով պայման էր կապել Նախիջևանի ընակիչ Սարգիս Քիստեանի հետ, որի կօրութեամբ նորա ձեռքն էր անցել վանքի հողից 60 կանգուն լայնութեամբ և 80 երկայնութեամբ մի տարածութիւն ամարանոց շինելու համար, վերանորոգել է յիշեալ վաճառականի հետ նոյն պայմանը, աւելացնելով նոյն քանով հողի քանակութիւնը, վարձադրամը 75 ռ. և ժամանակամիջոցը 12 տարի նշանակելով [20])։ Մենք, յայտնի բան է, հակառակ չենք,

---

[20]) Վանքի վանահայր Կիւրեղ վարդապետ Սրապեանը աւելի ևս առաջ է գնացել. նա 1884 թուականին վանական կառավարութեան լուծուելու միջոցում նորից փոխել է պայմանը, Քիստեանին տուած հողի քանակութիւնը 4 օրավարի հասցնելով, 25 տարի ժամանակամիջոց նշանակելով և պայման դնելով, որ ժամանակը անցնելուց յետոյ, հողի վերայ գըտնուած շինութիւնները վանքին մնան։ Հանգուցեալ Կիւրեղ վարդապետի պայմանագիրը պարունակում է իւր մէջ 6 յոդուած՝ «1. Երկու պայմանք երկու տանցն՝ զորս պայմանեալ էր վանական կառավարութեան ի 1874 և ի 1879 ամսն՝ այժմէն իսկ ջնջին և ոչ ևս գործեսցեն։

«2. Ի հողոյ վանացս չորս արքունի դեսեատին գետին յանձնի Մեծապատիւ Սարգիս աղայի Քիստեանց սկսեալ յառուէն որ ի ձորէն՝ յարևելից կուսէ տանցն՝ զառ ի վերն ամենայն և ի բարձրաւանդակին, տնկել նմա ծառատունկ շուրջ զտամբքն և սերմանել կանաչեղէնս ըստ պիտելւոյն։

«3. Իրաւունք են Սարգիս աղայի Քիստեանց զայս չորս դեսեաթինս պատել պարսպաւ կամ ցանկով որպէս և զիարդ ձեռնտու լիցի նմա, և զբարինսն տալ ի քարահանքէ վանացս։

«4. Իրաւունք են Սարգիս աղայի Քիստեանց բաց յերկուց տանցն՝ շինել այլ ևս տունս եթէ պիտոյասցի։

«5. Այս չորս դեսեաթին գետին ի հողոյ վանացս՝ մնասցէ ի ձեռս Սարգիս աղայի Քիստեանց առանց ինչ վարձու ամս քսան և հինգ ի 1884 ամէ ց1908 ամ Փրկչին ի գործել և ի տնկել և ի շինել։

որ վանքի կառավարիչները այս կամ այն միջոցով արդիւ նաբերեն հողերը, բայց կարծում ենք, որ նորա իրեանց կարգադրութիւնները պէտք է հիմնեն տիրող օրէնքի վերայ, որպէս զի ապագայում վանքը չտուժի։ Հոգաբարձուի և վանական կառավարութեան անդամների վերոյիշեալ գործողութիւնների մէջ երկու տեսակ անկանոնութիւն կայ՝ նախ, որ կառավարիչները իրաւունք չունէին այդպիսի պայմաններ կապել առանց բարձր հոգևոր իշխանութեան թոյլատուութեան, երկրորդ, որ նորա պայմանը պէտք է կապէին ոչ ընտանեկան կերպով, այլ նոտարական պայմանագիր պէտք է հաստատէին։ Այդպիսի անկանոնութիւններից միշտ կարող են օգուտ քաղել կա-

---

«6. Ի 1909 ամի 1 ին յունուարի այս չորս դեսեաթին գետին վանացս դարձեալ լինի յիրաւունս վանացս՝ և ամենայն որ ինչ շինուածք իցէն ի նմա և ծառատունկք՝ սեպհականք են վանացս Ս. Խաչի»։

Այս պայմանագիրը, ինչպէս կարելի է տեսնել, բացի նորանից, որ առանց բարձր հոգևոր իշխանութեան թոյլատուութեան և տնային կերպով է կապած, պարունակում է իւր մէջ և մի խոշոր անկանոնութիւն. դա հակառակ է օրինաց V հատ. 1692 յօդուածին, որ արգելում է անշարժ կալուածների երկար միջոցներով վարձու տալը։ Ադամ վարդապետ Տէր-Նիկողոսեանը, որ յաջորդել է Կիւրեղ վարդապետ Սրապեանին, նկատելով իւր նախորդի կապած պայմանագրի անկանոնութիւնները, յայտնել է այդ մասին Ս. Էջմիածնի Սիւնհոդոսին և պատասխան է ստացել՝ քանդել նախկին պայմանագիրը և նոտարական կարգով նոր պայմանագիր հաստատել 9 տարի ժամանակով և 75 ռ. տարեկան վարձագրամով, իսկ եթէ կապալառուն չհամաձայնի, վերջնականապէս քանդել հին պայմանը և առնել նորա ձեռքից չորս օրավար վանքապատկան հողը։ Սարգիս Քիստեանը չէ համաձայնել վանահօր առաջարկութիւններին և ուղղակի թղթակցութիւն է սկսել Սիւնհոդոսի հետ և վերջ ի վերջոյ համոզուել է կատարել վանահօր և Սիւնհոդոսի օրինաւոր պահանջը։ Բայց երբ որ Սիւնհոդոսը Քիստեանի այդ համաձայնութեան մասին տեղեկացրել է վանահօրը և առաջարկել է վերոյիշեալ պայմաններով նոր պայմանագիր կազմել, Քիստեանը նորից հրաժարուել է և գործը մնացել է նախկին դրութեան մէջ։

պալատները, եթէ միայն կամենային։ Քանի՞—քանի՞ ազգային կալուածներ են անհատների սեփականութիւն դարձել այդպիսի անկանոնութիւնների շնորհիւ, յաճախակի մինչև անգամ միայն օրէնքի ձեականութիւնը պահպանած չ'լինելու պատճառով։ 1792-ից մինչև ներկայ 1895 թուականը վանքը կառավարող վարդապետներից մեզ յայտնի են միայն հետևեալ վանահայրերի անունները՝

1. Թադէոս վարդապետ Մարուգեան
2. Կարապետ վարդապետ Սեբաստացի (մեռել է 1820 թ.)
3. Յովհաննէս վարդապետ Եգեբացի (մեռել է 1831 թ)
4. Վրթանէս ծերունի
5. Յարութիւն վարդապետ Ալամդարեան (մեռել է 1836 թ.)
6. Վարդան վարդապետ Զալիքեան
7. Մկրտիչ վարդապետ Յովակիմեան (երկու անգամ)
8. Գրիգոր վարդապետ Աղափիրեան
9. Հմայեակ՝ վարդապետ
10. Յովհաննէս վարդապետ Բէկնազարեան
11. Գէորգ վարդապետ Արամեան
12. Գէորգ վարդապետ Աբամէլիքեան
13. Մկրտիչ վարդապետ Շահնազարեան (պաշտօնակատար)
14. Գրիգորիս վարդապետ Յակովբեան
15. Մամբրէ վարդապետ Սանասարեան
16. Արիստակէս վարդապետ Դաւթեան
17. Սահակ վարդապետ Բաղդասարեան
18. Պետրոս վարդապետ Այվազեան
19. Խորէն վարդապետ Ստեփանէ
20. Կիւրեղ վարդապետ Սրապեան
21. Ադամ վարդապետ Տէր-Նիկողոսեան
22. Եփրեմ վարդապետ Սուքիասեան. (երկու անգամ)
23. Մուշէ վարդապետ Դանագեոզեան
24. Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան

Սոցանից եօթը՝ Կարապետ Սեբաստացին, Յովհաննէս Եգեբացին, Յարութիւն Ալամդարեանը, Վարդան Զալիքեանը, Յովհաննէս Բէկնազարեանը, Կիւրեղ Սրապեանը և Ադամ Տէր-Նիկողոսեանը մեռած ու թաղուած են նոյն

իսկ վանքի բակում։ Դոցանից մի քանիսի դամբարանի վերայ փորագրուած տապանագրերը հետաքրքիր են, որովհետև իւրեանց մէջ պարունակում են նոցա կեանքի և մահուան մասին տեղեկութիւններ։ Կարապետ վարդապետի մարմարիոնեայ տափարակ տապանաքարը, որ գտնուում է Ալամդարեանի գերեզմանի մօտ, ունի հետևեալ տապանագիրը.

«Կարապետ բաբուն հոգւով երանեալ»
«Սեբաստեան յերկրէ բողբոջ ընձիւղեալ»
«Բակերտ գիտութեանց ի ծայր արշաւեալ»
«Սուրբ կարապետի միաբան եղեալ»
«Սա նուիրականութեամբ յուստաց կողմ եկեալ»
«Ցաւարտ իւր գործոյն յաթոռ իւր դարձեալ»
«Հայոց Նախջուանու յոյժ սիրահարեալ»
«Վերստին եկեալ անդ յաջորդ նստեալ»
«Բայց օրհաս մահուն արագ ժամանեալ»
«Հասակն ոսկեբունջ տարաժամ հնձեալ»
«Վաթսուն հինգ ամեայ ի հարս յաւելեալ»
«Սուգ անմխիթար զմեօք պաշարեալ»
«Հազար ութ հարիւր տասն ամ Փրկչին լեալ»
«Հոկտեմբեր ամսոյս աստ եղև թաղեալ»
«Այս սուրբ տապանիս ով ոք հանդիպեալ»
«Մաղթանք առ Տէր Հայր մեր ասացեալ»։

Յովհաննէս վարդապետի տապանաքարը նոյնպէս տափարակ մարմարիոնէ. նա գտնուում է Ադամ վարդապետի գերեզմանի մօտ և ունի հետևեալ տապանագիրը.

«Զո որոնեք ներքոյ քարանց»
«Ո՞վ հետազօտք դամբարանաց»
«Ոչ էր սա պերճ ոք յիշխանաց»
«Կամ հետամուտ ունայն փառաց»
«Այլ էր չէրքեզ իսկ Եգերեանց»
«Գերի բերեալ եօթնեակ ամաց»
«Մկրտեալ ջուրբ ըստ օրինաց»
«Արժանացաւ հոգւոյն չնորհաց»
«Յայնժամ Յովսէփ վեհն արհեանց»

«Յովհաննէս զսա վերակոչեաց»
«Դասեալ ի խումբ աշակերտաց»
«Արօտ գիտակ սուրբ գիտութեանց»
«Մուտ ի սուրբ կարգ կրօնաւորաց»
«Լեալ վարդապետ այս սուրբ վանաց»
«Մտերմաբար զԱստուած պաշտեաց»
«Յաջորդ եղև առաջնորդաց»
«Խրատտու հայր արանց բազմաց»
«Մեղմող ուղղիչ թիւրեալ մտաց»
«Ատենախօս եկեղեցեաց»
«Եւ սիրելի քաղաքացեաց»
«Հասեալ ի ծայր ծերոցն ամաց»
«Ինքնին զայս վէմ փոյթ յօրինեաց»
«Առ որ մաղթել առ ձեզ մաղթեաց»։

«Վախճանեալ ի 70 ամ հասակի ի 1831 Հոկտեմբերի 1. Ադամ Մովսէս Մարտիրոսի Աստուածատրեանն զայս վեմ ի յիշատակ Սարգիս արեւելցի Ադամեանի եդ ի տապան Յորհաննէս վարդապետի»։

Յարութիւն վարդապետ Ալամդարեանի շրեղ ձուլածոյ շիրիմը գտնուում է եկեղեցու հարաւ-արեւելեան կողմում. նորա մէկ երեսի վերայ հայերէն, միւսի վերայ ռուսերէն գրուած է. «Յամի 1865. Մեծահռչակ ուսուցչի Յարութիւն վարդապետի Ալամդարեանց երախտագէտ աշակերտք Ներսիսեան Հայոց ուսումնարանի Տփխիսայ կանգնեն զայս արձան յանմահ յիշատակ անուան նորա որ վիրաւորեալ յաւազակաց վախճանեցաւ ի 25 Մայիսի 1834 ամի։ Здѣсь покоится прахъ архимандрита Артемія Аламдарьянцъ умерщвленнаго разбойниками 25 мая 1834 года. Незабвенному наставнику признательные ученики Тифлисскаго Армянскаго училища Нерсеса соорудили сей памятникъ 1865 г.» Ադամ վարդապետ Տէր-Նիկողոսեանի դամբարանը գտնուում է եկեղեցու հիւսիս-արե-

ելեան կողմում. Նորա մէկ երեսի վերայ հայերէն և ռուսերէն գրուած է.

«Բազմավաստակ Ադամ Ծ. Վ. Տէր-Նիկողոսեան սպանաւ յաւազակաց ի սուրբ խաչ վանս 1888 ամի 3 Ապրիլի։ Архимандритъ Адамъ Теръ-Никогосьянъ убитый 3 апрѣля 1888 года». իսկ միւս երեսի վերայ գրուած է միայն հայերէն՝ «սիրեցէք զթշնամիս ձեր և բարի արարէք ատելեաց ձերոց»։

Կիւրեղ Սրապեանի գեղեցիկ սև մարմարիոնեայ տափարակ տապանաքարի վերայ փորագրուած է վեհափառ Հայրիկի շարադրած հետեւեալ տապանագիրը.

Հանգիր, ով ժիր մշակ,
Վաստակեալ ի հունձս աւետարանի.
Երուսաղէմի Մայր Սիօնի ծաղիկ,
Նուիրեցար Էջմիածնի լուսակերտ Սիօնի,
Այլ աւաղ դու վաղաժամ թառամեցար.
Եւ լռեց քարոզչիդ մշտախօս բարբառ.
Ով դու սիրելի վարդապետ ժողովրդեան,
Եկիր ի վերջոյ Նորա գիրկ հանգեցար.
Նորոյ Նախիջևանի պատուական ազգայինք,
Եդին զայս մահարձան ի վերայ գերեզմանիդ.
Որ յօդեաց զանեղծ արձանագիրս
Առ ի պահել զանուանդ յիշատակ,
Ելաց ի վերայ նրժդեհ չիրիմիդ
Հայոց վշտակիր Հայրիկ։
Վախճ. յ8 Մարտի 1895 ամի [21]։

---

[21] Բացի այս վանահայրերից, վանքի բակում թաղուած են հոգևորականներից մի քահանայ, մի սարկաւագ, իսկ աշխարհականներից՝ Միքայէլ Նալբանդեանցը, Ռափայէլ Պատկանեանցը, Գէորգ Տիգրանեանցը և մի քանի անշան մարդիկ։ Սարկաւագի մարմարիոնեայ տապանաքարի վերայ փորագրուածէ.

«Վաղաթառամ քսան ամեան»
«Հայրս Փիլիպոս ըստ իմ անուան»
«Էր սարկաւագ ազգ Զուրապեան»
«Յովսէփ արհւոյ յոյժ սիրական»
«Նախիջևան սոյն քաղաքի»

8.

Վանահայրերից երկուսը, Յովսեփ վարդապետ Ալամդարեանը և Ադամ վարդապետ Տէր-Նիկողոսեանը, ինչպէս կարելի է տեսնել նոցա տապանագրերից, սպանուած են աւազակներից։ Վանքում պատահած այդ սպանութիւնների պատճառը պէտք է որոնել, նախ, այն անզգոյշ կենցաղավարութեան մէջ, որ նոքա ունեցել են, և,

---

«Անբախտութիւն ինձ հասանի»
«Մինչ ես կայի մօրս յարգանդի»
«Գրիգորիպոլ սա վախճանի»
«Անտի բերեալ աստ ամփոփի»
«Ոհ ինչ թուոյ երկեաք բ ամսի»
«Նէ իմ գոլով երկամենի»
«Գրիգորիպոլ գնացաք աստի»
«Զկնի ամաց տասներեքի»
«Նախիջևան կրկին եկի»
«Ընդ Մանուէլ վարդապետի»
«Յ սման գրոց զիս կրթողի»
«Տեսեալ զտապանըս ծնողի»
«Աղիք որդւոյս միշտ գալարի»
«Առ այս շիրիմ որ պատահի»
«Խնդրեմ ասել Տէր ողորմի»
«Յամի հաշար 800ի ինն. . .»
«Ի Մայիսի մետասանի փորագրեալ կրկին լինի»
«Ձեռամբ աւագ քահանայի որոյ անուն յՕհան ձայնի»։

Միքայէլ Նալբանդեանցի շիրիմը գտնուում է եկեղեցու հարաւ-արևմտեան կողմում. նորա մէկ երեսի վերայ հայերէն և ռուսերէն գրուած է՝ «Աստ հանգչի մարմին Միքայէլ Ղազարեան Նալբանդեանց ծնեալ ի 27 Հոկ. 1830 ամի վախճանեալ ի 1866 ամի 31 Մարտի». իսկ միւս երեսի վերայ գրուած է միայն հայերէն՝ «Կանգնեաց տապանս այս քոյր հանգուցելոյն մահտեսի Վառվառէ Մեսնիքեան»։ Մի գերեզմանաքար էլ կայ գանգակատան մէջ, որի արձանագրութիւնը թէև ոչ մի նշանաւոր տեղեկութիւն չէ պարունակում իւր մէջ, բայց արժանի է ուշադրութեան իբրև վանքում եղած տապանաքարերից ամենահինը։ Նորա վերայ աղճատուած ուղղագրութեամբ փորագրուած է.

«Այս է հանգիստ քէրէծմանի»
«Որ էղակից, պարկեշտուհի»

երկրորդ. այն կանխակալ կարծիքների մէջ, որ տարածուած են եղել շրջակայքում նոցա հարստութեան մասին։ Վանքը իւր մենացած դրութեամբ, իւր շրջակայքի սակաւ բնակութեամբ, իւր խոր ձորով և ծառախիտ պարտէզով ներկայացնում է մի շատ յարմար կենդրոն, որտեղ հեշտութեամբ և աննկատելի կերպով կարող են արկածախնդիր մարդիկ իշխանութեան հսկողութիւնից հեռու թագցնել իւրեանց ոճրագործութեան և յանցանքների հետքերը։ Վանահայրերը վանքի այդ դրութիւնը ի նկատի առնելով, պէտք է, որ ամեն ձեռքից եկած միջոցներով զգուշանային, պահապաններ պահելով և հաստատուն փականքներով սենեակների դռներն ու պատուհանները ամրացնելով, նա մանաւանդ որ վանքը իւր արծաթեայ և թանկագին սպասներով և վանահայրերը իւրեանց վայելուչ կեանքով մի մշտական հրապոյր են շրջակայ աւազակների համար։ Բայց դժբաղդաբար այդ զգուշութեան միջոցները միայն այժմ են գործադրւում, իսկ սորանից մի 5 - 6 տարի առաջ և ոչ մէկը այդ միջոցներից չկար, չենք ասում արդէն աւելի հին ժամանակների մասին, երբ վանքը կարելի է ասել, ապրել է միայն Ս. Խաչի

«Եէղեբլ Տոլմէդ. պատվականի»
«Շահէնարիանց. Թորոսի որդի»
«Ածնիվեանց Մարտիրոս աղաի»
«Ամի փառաց քոյ արժանի»
«Յէնէ աղոդք մէծ Հարսանի»

Պէտք է առ հասարակ նկատել, որ Նալբանդեանցի վանքի բակում թաղուելուց յետոյ, նա (վանքի բակը) մի առանձին նշանակութիւն է ստացել Նախիջևանցւոց աչքին. այնտեղ սովորութիւն է եղել թաղել միայն նշանաւոր մարդկանց. նա այժմ Նախիջևանի Պանթէոնն է։ Բայց դժբաղդաբար այս տեղ ևս կրկնուում է այն, ինչ որ առ հասարակ լինում է ուրիշ հայաբնակ տեղերի նշանաւոր մարդկանց գերեզմանոցներում։ Ալամդարեանի, Նալբանդեանցի, Պատկանեանցի կողքին թաղուում են դանդան Սուքիասեաններ, ղարաուլ Ստեփաններ, մի խօսքով պատիւը, ականաւորութիւնը ծախսուում է։

օգնութեանը ապաւինելով։ Ալամդարեանցը ինքը ոչինչ չէ ունեցել, թէև նա իւր վանահայրութիւնից առաջ մեծամեծ պաշտօններ կատարած լինելով, կարող էր, եթէ կամենար, նա մանաւանդ Թիֆլիսի թեմը կառավարելու ժամանակ, բաւականաչափ կարողութիւն ձեռք բերել։ Մի քանի հազար ռուբլի ունեցել է միայն Մկրտիչ Յովակիմեան վարդապետը, որ Յարութիւն վարդապետի վանքը գալուց առաջ վանահայրութեան պաշտօնն է կատարելուս եղել։ Ականատեսներից մէկը հետևեալ կերպով է պատմում Ալամդարեանի ոպանութեան դէպքը։ «Ես 14—15 տարեկան տղայ էի և ապրում էի վանքում. ես Մկրտիչ վարդապետի փոքրաւորն էի։ Սպանութիւնը պատահեց մայիսի չգիտեմ որ թուին, օրը շաբաթ էր։ Ալամդարեանը տարի ու կէս էր, որ եկել էր վանքը. նորանից առաջ վանահայրութեան պաշտօնը կատարում էր Մկրտիչ վարդապետը, որ վաղուց ի վեր ապրում էր վանքում իբրև միաբան։ Ալամդարեանը մի բարի և հեզ մարդ էր. նա շատ սիրով էր կառավարուում Մկրտիչ վարդապետի հետ, թէև այս վերջինը խռովարար և անհանգիստ բնաւորութիւն ունէր [22])։ Ալամդարեանի գա-

[22]) Մկրտիչ վարդապետ Յովակիմեանը, որ վանքում ապրել է մինչև 60 թուականի վերջը և քանիցս անգամ երկար միջոցներով վանահայրութեան պաշտօն է կատարել, բնիկ Հաշտարխանցի էր և նշանակուել էր Ս. Խաչի միաբան 1828 թուին։ Նախիջևանի Հոգևոր կառավարութեան հին գործերի մէջ մենք գտանք այն թուղթը, որով Ռուսաստանի երրորդ առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոս Գառնակերեանցը Մկրտիչ վարդապետին աբեղայ ձեռնադրելով, ուղարկում է Նախիջևան և հրամայում է Հոգևոր կառավարութեան նշանակել նորան Ս. Խաչի միաբան։ «Նաև՝ քաջ գիտելով՝ թէ Սբ. Խաչ վանքդ մեր ունի պէտս բանաւոր աբեղայի, ասուած է այդ թղթի մէջ, վասն որոյ պատրաստեալ Մկրտիչ անուն գոմն աբեղայ որ է բնիկ տեղեաւ աստրախանցի և անձն բանաւոր, արկաք յուղի ղնտգալ ի Սբ. Խաչ վանքդ մեր և մտանել ի կարգ միաբանութեանդ զորին, յորմէ ակն ունիմք հաւատարիմ ծառայութեամբ պիտանի պաշտօնեայ գտանել սրբոյ վանուդդ, ապաքէն գրեմ բա-

լուց յետոյ, վանքում շատ փոփոխութիւն չեղաւ. նա միայն կառավարութեան պաշտօնական մասը առաւ իւր ձեռքը, իսկ միւս մասերը մնացին դարձեալ Մկրտիչ վարդապետի ձեռքին, որովհետև նա երկար ժամանակ ապրած լինելով վանքում, ամեն բան լաւ գիտէր, բոլոր հանգամանքներին ծանօթ էր։ Մկրտիչ վարդապետը ուսեալ մարդ չէր. Նորանից շատ բան չէր կարելի սովորել, ընդհակառակը Ցարութիւն վարդապետը մեծ ուսում ունէր և լաւ վարժապետ էր։ Ես առանձին ուսում չեմ ստացել, դպրոց, ուսումնարան չեմ գնացել, բայց իմ այժմուայ ունեցած քահանայական գիտութիւնս Նորանից եմ ձեռք բերել։ Նա բացի Հայոց լեզուից, լաւ գիտէր և ռուսաց լեզուն. քաղաքից աշակերտներ էին գալիս Նորանից քերականութիւն սովորելու, շատ անգամ էլ նա ուղղում էր Մկրտիչ վարդապետի ռուսերէն գրութիւնները։ 1834 թուականը մի շատ անհանգիստ տարի էր Նախիջևանցւոց համար. օր չէր անցնում, որ մի անբախտութիւն չ'պատահէր։ Մէկ օր լսում էինք, թէ այս ինչ մարդու տունն են մտել, միւս օրը,—թէ այս ինչ ազայի թանգագին ձիերն են տարել, կամ խանութն են կտրել, կամ մարդ են սպանել, և այլն և այլն։ Շատ անգամ մեր մէջ խօսակցութիւն էր լինում այդ գողութիւնների ու աւազակութիւնների մասին և Մկրտիչ վարդապետը հպարտութեամբ ցոյց էր տալիս իւր պատից կախած զէնքերի վերայ և սպառնում

բեշնորհ ակնածութեան մարդասիրել դմա ի բարեաւ գալն ըստ պահանջման հարկին և ըստ չափու արժանաւորութեան»։ Եթէ մենք թղթի մէջ յիշուած «բանաւոր» խօսքը ուսեալ բառի նշանակութեամբ հասկանանք, պէտք է կասկածանքով վերաբերուենք ականատեսի Մկրտիչ վարդապետի վերաբերութեամբ ասածներին, բայց մենք ուրիշ աղբիւրներից էլ տեղեկութիւն ունինք, որ ականատեսի ասածները Նորա մասին աւելի ճիշտ են, քան թէ առաջնորդի գովասանքը։ Բաւական է միայն կարդալ Նորա մինչև ցայսօր դեռ վանքի գործերում պահպանուած գրագրութիւններից մի քանիսը։

էր, որ եթէ մէկը համարձակի վանք դալ, կ'փորձէ այդ դէնքերի զօրութիւնը։ Ալամդարեան վարդապետն էլ մի ուժով տղամարդ էր. նա սիրում էր կատակներ անել և շատ զուարճանում էր, երբ լսում էր այդ ժամանակ վանքում բանող ատաղձագործ Աւետիքի սրաբանութիւնները. Աւետիքը քաղաքում յայտնի էր «Ստալեար» Աւետիք անունով։ Մենք ապրում էինք ուրախ և անհոգ, թէև ես լսելով քաղաքում պատահածները, կարծես թէ, սպասում էի, որ վանքում ես կարող է մի այդպիսի բան պատահել։ Մեր դռները շատ ամուր չէին. նոքա փակուում էին ներսից հասարակ սողնակներով, որ անցրած էին երկաթեայ թոյլ օղերի մէջ։ Ես քնում էի Մկրտիչ վարդապետի սենեակում, որ դահլիճով բաժանուած էր Ալամդարեանի ննջարանից և ընդունարանից, իսկ դրացի սենեակում ժամանակաւորապէս պառկում էր «ստալեար» Աւետիքը։ Սպանութեան օրը վարդապետները թաղման հրաւիրուած լինելով, գնացել էին քաղաք, և միայն երեկոյեան դէմ վերադարձան վանք, որովհետև Ցարութիւն վարդապետի աշակերտներից մէկի ծնողները չէին ուզեցել թողնել նոցա, ասելով, թէ նոքա նոյնն է միւս օրը դարձեալ պէտք է գան քաղաքը հանգուցեալի այգը կատարելու համար, բայց վարդապետները չէին մնացել, առարկելով, թէ երեկոյեան ժամերգութիւն ունին։ Սպանութեան գիշերը վանքում կային՝ վարդապետները, Ցարութիւն վարդապետի Բարուշ (Բաղդասար) աշակերտը, «ստալեար» Աւետիքը, Ցարութիւնը, որ Ալամդարեանի փոքրաւորն էր և պառկում էր նորա սենեակում, խոհարար-կինը և նորա մարդը, որ գիշերէ գիշեր գալիս էր վանք ընելու։ Կային և ռուս մշակներ, որոնք հնձում էին պարտիզի խոտը և այնտեղ էլ հէնց քնում էին։ Մենք ամեն երեկոյ սովորութիւն ունէինք ընթրիք անելու. մէկ օրը ընթրիքի սեղանը պատրաստուում էր մեր սենեակում, միւս օրը Ալամդարեանի. այդ

երեկոյ մեր սենեակումն էր պատրաստուած։ Ցարութիւնը վարդապետը շատ ուրախ տրամադրութեան մէջ էր. նստ խօսում, ծիծաղում և կատակներ էր անում. նամանաւանդ նորան զուարճացնում էր «ստալեար» Աւետիքի խօսակցութեան ձևը և նորա մէկ ոճը, որ նա անդադար խնդրում էր կրկնել։ Այդպէս ուրախ ու զուարճ ընթրիք անելուց յետոյ, բոլորեքեան ցրուեցան իւրեանց սենեակները քնելու [23])։ Աւաղակները առաջ մեր սենեակը մտան. նորա

[23]) Թէև ականատեսը Ալամդարեանին ուրախ մարդ է ներկայացնում իւր պատմութեան մէջ, բայց մենք կարծում ենք, որ վարդապետի այդ ուրախութիւնը միայն արտաքուստ է եղել, որովհետև նորա այդ ժամանակուայ գրուածների մէջ երևում է մի ներքին թախիծ, որ կրծում է նորա սիրտը։ Սիրեցեալ կնոջ մահն էր առաջին անգամ լցրել ու համակել նորա սիրտը այդ թախիծով ու կսկիծով, կնոջ, որի մասին նա դեռ իւր 17 տարեկան հասակում տիրացու եղած ժամանակ (իւր նշանադրութեան հանդիսին) երգել էր այժմ ընդհանրացած ու ժողովրդականացած «Ցերկու ձեռին երկու մոմ» երգը։ Նորա կեանքի յետագայ ժամանակների հանգամանքները ևս չէին կարող ներպաստել նորան սփոփուելու այդ ցաւից, որովհետև նա իւր քահանայութեան վերջին տարիները և վարդապետ եղած ժամանակը ևս շրջապատուած է եղել ծանր և անյաջող պարագաներով։ Նամանաւանդ խոր հետքեր էին թողել նորա վերայ նորա Թիֆլիսում երջանկայիշատակ Ներսէսի թշնամիներից կրած նեղութիւնները ու հալածանքները, որ նա զեղուն կերպով արտայայտել է Հաղբատի վանքում գրած մի շարք երգերի մէջ, որոնցից նշանաւոր է «Գարուն»-ը, որի մէջ հեղինակը նկարագրում է իւր դառը կեանքը ու բանտարկութիւնը։ Համոզուելու համար, որ նորա տրամադրութիւնը չէր փոխուել, որ նախկին թախիծն ու կսկիծը շարունակում էին և Ս. Խաչում կրծել նորա սիրտը, բաւական է կարդալ նորա «Կողկողանք առ Խաչ Փրկչին», «Աղերս առ նախավկայ ամլորդին», «Սաղմոս ԾԵ». վերնագրերով ոտանաւորները, որոնք գրուած են վանքում 1834 թուին։ Աւելորդ չենք համարում դնել այստեղ հանգուցեալի «Ցորդորակ առ ուխտաւորս» ոտանաւորը, որ նուիրուած է Նախիջևանի Ս. Խաչին և չունի այն թախծալից բնաւորութիւնը, որ կրում է նորա գրուածների մեծամասնութիւնը։

«Ցառաջ քան զբարերար արևուն երևել՝»
«Երթիցուք ի Սուրբ Խաչ զմեր սուրբ ուխտ կատարել,»
«Անտուծոյ հօր մերոյ զբաղցր շնորհս վայելել,»

ձօթը հոգի էին։ Չ'գիտեմ արդէն, թէ նորա ինչպէս էին մտել կորրիդորը, որ գտնուում էր մեր սենեակի առաջ։ Ես յիշում եմ միայն այն, որ առաջ ոտնաձայն լսուեցաւ, յետոյ ուժգին զարկից բացուեցաւ մեր դուռը և ատրճանակի ձայնը մեզ խլացրեց և ծխով լցրեց մեր սենեակը։ Նորա առաջ վազեցին Մկրտիչ վարդապետի վերայ, երկու տեղից վիրաւորեցին նորան և կապեցին նորա ձեռքերը, կապեցին և իմ ձեռքերը և ճրագ վառելով, կոտրեցին վարդապետի փողի արկղը, քրքրեցին գրքերը և միւս իրեղէնները։ Աւազակներից մէկը այդ ժամանակ մօտեցաւ ինձ և ցոյց տալով վարդապետի վեղարի վերայ, հարցրեց ռուսերէն. «Այդ ինչ բան է». ես պատասխանեցի, թէ վարդապետի վեղարն է։ Ես նկատեցի, որ նորա չ'ճանաչուելու համար, սևացրել էին իւրեանց երեսը։ Մեր սենեակում ամեն բան վերջացնելուց յետոյ, նորա

«Միամիտ սուրբ սրտիւ Տեառն երկիրպագանել.»
«Լալագինս վհրաշագործ Խաչ Փրկչին համբուրել,»
«Մեր բազում յանցանաց քաւութիւն թախանձել։»
«Անդ զանբիծ Տիրամայրն բարեխօս մեզ կալցուք,»
«Զամլորդի Կարապետն մեզ նպաստ կարդասցուք։»
«Մեր հոգւոյ լուսատու զսուրբ Գրիգոր կոչեսցուք.»
«Ընդ սոցա մաղթանաց զաղօթս մեր խառնեսցուք.»
«Դրանց փառաց քրիստոսեան տաճարին բաղձասցուք.»
«Խունկ և մոմ լիաձեռն բարձրելոյն մատուսցուք։»
«Արբցուք անդ յաղբերացն ջուր անոյշ կենդանի.»
«Ախտաբոյժ, թաւ ուռիքն՝ մեզ լիցին հովանի.»
«Բախասցուք երկնառաք ցնծութեամբ ի հոգի,»
«Ուշ դիցուք նուագաց թռչնակաց սխրալի։»
«Երանի՜ եկողաց ի Սուրբ Խաչ վանն ուխտի.»
«Նոցա սիրտ և հոգի՝ շնորհօք Տեառն լիասցի։»
«Արդեօք ոյք ի վանացս ձեռնունայն դնացին,»
«Իւրեանց սուրբ անարատ բաղձանաց ոչ հասին,»
«Նշանաւ սուրբ Խաչիս գունդք դիւաց հալածին.»
«Մեր հոգիք և մարմինք ի չարեաց ազատին.»
«Ցաւք և ախտք առ ի մէնջ առ ժամայն փարատին»
«Օ՜ն, եկայք, երթիցուք յուխտ ի ծունր սուրբ Խաչին։»
(Տես Ցարութիւն վարդապետի Աչամդարեանց «Զափաբերականք» էջ 34—35.)

դիմեցին դէպի Ալամդարեանի սենեակը, և մենք աղաղակի ու լացի ձայն լսեցինք։ Յետոյ մենք Յարութիւնից իմացանք, որ աւազակները մտնելով վարդապետի սենեակը, առաջ կապում են նորա (Յարութիւնի) ձեռքը և սաստում են, որ աղաղակ չ'բարձրացնէ։ Այդ ձայներից զարթնում է Ալամդարեանը և հարցնում. «Ո՞յք են և ի՞նչ են ուզում»։ Աւազակներից երեք հոգի վազում են նորա վերայ, բայց նա այնպէս ուժգին կերպով զարկում է նոցա սրտին, որ նոքա յետ-յետ գնալով, վայր են ընկնում և մէկի ուշքը գնում է, նոքա թողնելով վարդապետին, սկսում են ուշքի բերել իւրեանց ընկերոջը և ջրի յետևից են վազում։ Վարդապետը ժամանակ գտնելով, մտնում է, որ փակէ դուռը և չ'թողնէ նոցա նորից սենեակ մտնելու, բայց աւազակները հէնց այդ ժամանակ զարկում են նորա ձեռքին և գլխին և մահամերձ վիրաւորելով, մէջքի վերայ վայր են ձգում դրան առաջ։ Այնուհետև նոքա կոտրում են և նորա արկղները, բրբրում են բոլոր սենեակը, բայց փոյ չ'գտնելով, առնում են նորա մուշտակները, մետաքսէ շորերը և Մկրտիչ վարդապետի իրեղէնների հետ երեք կապոց են անում, որ տանեն, բայց յանկարծ թողնում, փախչում են։ Աւազակների այդպէս յանկարծակի փախչելու պատճառը լինում է «ստալեար» Աւետիքը, որ լսելով ատրճանակի ձայնը և աւազակների տուն մտնելը, սաստիկ վախենում ու պահուում է հնոցում։ Երբոր աւազակները վարդապետի սենեակում ամեն բան վերջայնում են, նոքա մտնում են և Աւետիքի սենեակը և մարդու կօշիկներ ու շորեր տեսնելով, բայց իւրեան մարդուն չնկատելով, կարծում են, որ այդտեղից մարդ է գնացել ապարակ օգնութիւն կանչելու։ Ալամդարեանը տեսնելով, որ աւազակները փախչում են, նոցա յետևից կանչում է. «Ո՞ւր էք գնում, բարձրացրէք ինձ և տարէք մահճիս վերայ»։ Երբոր նոքա կատարում

են Նորա հրամանը, նա երեսաբրիչ է պահանջում, կապում է իւր ձեռքը և սկսում է սպառնալ, թէ «Նոքա ի զուր են ուզում այդպէս հապճեպ փախչել. նա նոյնն է, որտեղ որ լինին Նորա, կգտնէ նոցա և իշխանութեան ձեռքը կյանձնէ...»։ Վերջապէս սենեակներում աղմուկն ու ոտնաձայները դադարեցին. մենք հասկացանք, որ աւազակները փախան։ Մի փոքր յետոյ եկաւ մեր սենեակը Յարութիւնը և տեսնելով մեր դրութիւնը, սկսաւ արտասուել, Նորա ձեռքերը ամուր չէին կապել, այնպէս որ կարողացել էր կամաց-կամաց թուլացնել և արձակել կապերը։ Նա մեր ձեռքերը ևս արձակեց և մենք դուրս եկանք բակը և տեսանք, որ ապախնի մարդու ձեռքերն էլ կապած են։ Նորա ձեռքերը արձակելով, ուղարկեցինք Նորան ազարակ օգնութիւն կանչելու, իսկ մենք գնացինք Ալամդարեանի սենեակը։ Մինչև այժմ ևս շատ լաւ յիշում եմ Նորա սենեակի դրութիւնը — կոտրած արկղները, քրքրած գրքերը, շորերը և արեան մեծ լճակը, որ ահագին քանակութեամբ լերդացել, մակարդուել և ստացել էր ճիշտ այն ձևը, որ ունենում է մէջքի վերայ պառկած մարդը։ Ալամդարեանը լուռ, անխօս պառկած էր անկողնու վերայ. նա գլուխը դրել էր վիրաւորուած ձեռքի վերայ և, կարծես, նիրհում էր։ Ազարակցիներից առաջինը եկաւ Արծաթպանեան Կարապետը, որ մի քաջ և համարձակ տղամարդ էր. նորանից յետոյ եկան ազարակցիներից շատերն և պատմեցին մեզ, թէ Նոքա տեսել են աւազակներին երեք կառքով սրընթաց ազարակի միջով փախչելիս։ Իսկոյն իմաց տուին քաղաքագլխին և Ալամդարեանի աղջկանը։ Քաղաք գնացողը եղաւ նոյն Կարապետը, որովհետև ուրիշները չէին համաձայնում գնալ, ասելով, թէ աւազակները նոր միայն կառքերով դուրս գնացին ազարակից և ճանապարհին կլինին։ Առաւօտեան դէմ անհամար մարդ եկաւ քաղաքից. եկաւ քաղաքագլուխը և հան-

գուցեալի Աննա աղջիկը, որ Սերովբէ Պատկանեանի հարսն էր և ապրում էր Նախիջևանում [24])։ Վարդապետին տարան քաղաք և տեղաւորեցին բժշկի մօտ, բայց ոչինչ չօգնեց, նա միայն 15 օր ապրեց և մեռաւ, իւրեան շրջապատողներին սէր և խաղաղութիւն քարոզելով։ Աւագակներից մի քանիսին բռնեցին. Մկրտիչ վարդապետի փողի մի մասն էլ գտնուեցաւ [25])։ Ադամ վարդապետ Տէր Նիկողոսեանի սպանութեան ոչ որ ականատես չէ եղել. որովհետև նա այդ ժամանակ անձնական ծառայ կամ փոքրաւոր չունենալով, միայնակ է ընելուս եղել իւր սենեակում։ Լուսադիմին են միայն նկատել, որ թէև վարդապետի սենեակների դռները և դէպի վանքի բակը նայող պատուհանները փակուած են, բայց յետևի պատուհաններից մէկը բաց է։ Այդ բաց պատուհանից ներս մտնելով, տեսել են, որ վարդապետը սպանուած է, սենեակները քրքրած և արկղները կոտրտած։ Մենք միայն առաւօտեան եղանք վանքում և աչքի անցրինք հանգուցեալի սենեակները և դիակի դրութիւնը։ Թէև այն օրից անցել է ամբողջ եօթը տարի, բայց մենք դեռ շատ լաւ յիշում ենք բոլոր մանրամասնութիւնները։ 1888 թուականի Ապ-

[24]) Այսմդարեանցը երեք աղջիկ ունէր՝ Մարիամ, Կատարինէ և Աննա։ Մարիամը մարդու էր տրուած Աստրախանցի Յովակիմ Դիակոնովին, Կատարինէն Ստաւրոպոլի Տէր Մատթէոս քահանայ Բէկ Գիւլեանին և Աննան նոյն Ստաւրոպոլի Տէր Պետրոս քահանայ Պատկանեանին, որ վարդապետի սպանութեան ժամանակ դեռ քահանայ չէր ձեռնադրուած և ապրում էր Նոր-Նախիջևանում։ Աննան մինչև ցայժմ ևս կենդանի է և ապրում է իւր փեսայի մօտ Ղուբանի նահանգի «Ուստ—Լաբինսկ գիւղում»

[25]) Այս պատմութիւնը մեզ արել է Նոր-Նախիջևանի ս. Գէորգ եկեղեցու ծերունի քահանայ Տէր-Յակովբ Հատուրեանը, որ Ալամդարեանի սպանութեան դէպքի ականատեսներից միակն է, որ կենդանի է մնացել։ Ստալեար Աւետիքը, Յարութիւն վարդապետի Բաղդասար աշակերտը և Յարութիւն փոքրաւորը (Մոսկուայի Տէր Յարութիւն Գէօրչէեանը) շատ ժամանակ է որ մեռել են։

բիլի երեքն էր։ Առաւօտեան շատ կանուխ, երբ դեռ մենք քնած էինք, ուժգին կերպով բաղխեցին մեր դուռը. այդ Նախիջևանի այն ժամանակուայ յաջորդ բարեշնորհ Գարեգին վարդապետ Սաթունեանն էր, որ եկել էր մեզ իմաց տալու վանքում պատահած անբաղդութեան մասին և միասին վանք երթալու։ Բարեշնորհ վարդապետը կամենում էր իբրև հոգևոր իշխանութեան ներկայացուցիչ ժամ առաջ վանք հասնել և ներկայ գտնուիլ թէ հանգուցեալի իրեղէնների ցուցակագրութեան և թէ քննչի ու ոստիկանութեան կատարելիք առաջին հետախուզութիւններին և հարց ու փորձին։ Օրթա Օբայի մօտ մեր յետևից հասան քննիչը և թաղապետ Ոստիկանը և խընդրեցին, որ մենք չ'շտապենք և առանց նոցա ներկայութեան հանգուցեալի սենեակները չմտնենք։ Օրէնքի և իշխանութեան ներկայացուցիչների այդ իրաւացի պահանջի վերայ մենք թէև նոցանից շատ առաջ հասանք. բայց ստիպուած եղանք սպասել նոցա։ Այդ ժամանակ մենք վանքում ապրողներից իմացանք զանազան մանրամասնութիւններ, թէ ինչպէս նորա ոչինչ չեն լսել, որովհետև շները հեռացրած են եղել վանքի բակից, թէ սպանութիւնը հաւանականաբար կատարուել է կամ ուղիղ կէս գիշերին, կամ կէս գիշերից մի փոքր առաջ, որովհետև դիակը արդէն բոլորովին սառել ու կծկուել է և արիւնը մակարդուել ու չորացել, և թէ, վերջապէս, այդ սպանութեան գործի մէջ անկասկած մատն ունի վարդապետի ծառաներից մէկը, որ այդ սպանութեան դէպքից մի քանի ժամանակ առաջ գողութեան մէջ բռնուելով, յանձնուած էր իշխանութեան և բանտարկուած Ռոստովի բերդում[26])։

---

[26]) Այդ ծառան հայ էր և եկել էր Տաճկահայաստանից. նա, որքան մենք յիշում ենք, Լիմ թէ Կտուց անապատների աշխարհական միաբաններից էր և ծառայի ու տիրացուի պաշտօն էր կատարում վանքում։

Հանգուցեալ վանահօր ընակարանը բաղկացած էր երեք սենեակից՝ ննջարանից, ընդունարանից և մի երկար դատարկ սենեակից, որ գտնուում էր առաջին երկու սենեակների առաջ։ Ննջարանի և ընդունարանի պատուհանները նայում էին դէպի ագարակը և ձորը, իսկ երկար սենեակի պատուհանները դուրս էին գալիս վանքի բակը։ Աւազակները մտել էին ընդունարանի պատուհանից, որ գետնից շատ բարձր չէր և, ինչպէս յետոյ յայտնուեցաւ, սպանութեան գիշերը ամուր փակուած չէ եղել։ Երբ մենք ոտք դրինք հանգուցեալի սենեակները, առաջին նուագ ոչինչ չ'նկատեցինք, որովհետև ընդունարանում ոչինչ փոխուած չէր, բայց երբոր մտանք ննջարանը, տեսանք, որ այդտեղ ամեն բան քրքրած ու տակն ու վերայ է արած։ Հանգուցեալի ոտքերը կախուած էին մահճակալից, իսկ երեսը ծածկուած էր բարձով։ Յատակի վերայ լճացել էր արիւնը, մահճակալի մօտ գտնուած պատն էլ մեծ տարածութեամբ արիւնշաղախ էր։ Բարձը հանգուցեալի երեսից վեր առնելուց յետոյ, մեր աչքի առաջ հետեւեալ տեսարանը ներկայացաւ։ Վարդապետի կոկորդը խոր կտրած էր, սպի տակ մօրուքը արեան մէջ շաղախուած, աչքերից մէկը բաց էր, միւսը խուփ. երեւում էր, որ չարագործները զարկել ու մնասել էին այդ աչքը։ Ընդհանրապէս թէ բաց աչքի և թէ երեսի վերայ երկիւղի ու սարսափի արտայայտութիւն էր տպաւորուած։ Սպանութեան գործիքն էլ ընկած էր հէնց այդ տեղ մահճակալի մօտ. դա խոհանոցի մի լայն ու սուր դանակ էր։ Ամեն բանից երեւում էր որ աւազակները լաւ ծանօթ են եղել թէ վանքի ու վանահօր սենեակների դրութեան և թէ նոյն իսկ վանահօր սովորութիւններին. երեւում էր, որ նոքա վանքին մօտ մարդիկ են եղել, կամ մէկը նոցա այդ գործում առաջնորդել. խրատ է տուել։ Նոքա շատ ուշ են եկել վանք, որովհետև իմացել են, որ վանահայրը սովորութիւն ու-

նի ուշ քնելու, նոքա առաջ հեռացրել են շներին, վերջապէս, նոքա մտել են հէնց այն պատուհանից, որի յետևի երկաթը վարդապետը սովորութիւն չէ ունեցել ամրացնելու. նոքա նոյնպէս իմացել են, որ վարդապետը այդ ժամանակները ձեռքին փող ունի և պահում է իւր սենեակում։ Երկար ժամանակ ոստիկանութիւնը որոնում էր, բայց չէր կարողանում գտնել աւազակների հետքերը. վերջապէս նորան յաջողեցաւ նոցանից երկուսին բռնել և բանտարկել։ Գործի քննութիւնից երևեցաւ, որ աւազակները երեք հոգի են եղել. նոքա այդ ոճրագործութիւնից առաջ նոր են միայն դուրս եկած եղել Ռոստովի բերդից, որտեղ նոքա բանտարկուած են եղել զանազան յանցանքների համար։ Բանտում նոքա ծանօթացած են եղել վարդապետի ծառայի հետ, որ, ինչպէս ասացինք, գողութեան համար բերդն էր ձգուած, և նորանից իմացել վանքի բոլոր հանգամանքների և վարդապետի փողերի մասին։ Վարդապետին սպանելուց յետոյ, աւազակների գլխաւորը, որի ձեռքին է եղել և փողի մեծ մասը, փախել է Եկատերինոդար և այնտեղից էլ բոլորովին անյայտացել։ Ոստիկանութիւնը կարողացել է միայն նորա բնակարանը գտնել և նորա մօր ձեռքից խլել արիւնաշաղախ թղթադրամների մի մասը. այդ հետքով նա կարողացել է կալանաւորել և նորա երկու ընկերներին։

Վանքը ներսից շատ գեղեցիկ է. նորա պատերը զարդարուած են փորբադիր խաչքարերով, սրբերի արծաթապատ և ոսկեզօծ պատկերներով, որոնք բոլորը հս, ինչպէս ցոյց են տալիս նոցա վերայ գրուած յիշատակարանները, ժողովրդի կրօնական ջերմեռանդութեան արդիւնք են [27]) Ոսկեզօծ և արծաթապատ է և ամբողջ Խաչկալը։

[27]) Նշանաւոր են նամանաւանդ Աստուածամանուկը գբրկին ս. Աստուածածնի վերափոխման և Տրդատի մկրտութեան պատկերները, որոնք, ինչպէս երևում է նոցա նկարի նրբու-

Վանքը այժմ ունի տարեկան 4500 ռուբլի հաստատուն եկամուտ, որ կազմուում է բանչարանոցի կապալադրամից (700 ռ.), մոմավաճառութեան արդիւնքից (900 ռ.), սարտէզի կապալադրամից (1200 ռ.), վանքապատկան տների վարձից (500 ռ.) և հոգերի կապալադրամից (1200 ռ.)։ Թէ որքան արդիւնք և ինչ եկամտի աղբիւրներ է ունեցել վանքը իւր Յովսէփ արքեպիսկոպոսի ժամանակ -, մենք այդ մասին ամենևին տեղեկութիւն չունինք, որովհետև ոչ մի հաշուեթուղթ այդ ժամանակներից մեր ձեռքը չէ հասել։ Պէտք է կարծել, որ արքեպիսկոպոսը ինքն է հոգացել, գոնէ, առաջին ժամանակները վանքի թէ միաբանութեան և թէ տպարանի և ուսումնարանի ծախքերը, որովհետև վանքը նոր միայն հիմնարկուած լինելով, անկասկած չէր կարող դեռ մի

Թիւնից, Ճարտար արուեստագէտի վրձինի արդիւնք են Տրդատի մկրտութեան պատկերը, որի վերայ նկարուած են սբ. Լուսաւորչի, Նորա չարչարանքի և Տրդատի պատկերները, նրկարուած է Իտալիայում. նա ունի հետևեալ իտալերէն և հայերէն լեզուով գրած յիշատակարանը՝ «Scuola di S. Gregorio luminator della Naziona Armena 1692». «Ով սբ. Լուսաւորիչդ Գրիգորիէ մաղթեա՛ վասն տառապելեաց և մանաւանդ վաճառականաց Հայոց որք ուխտեալք և եղբայրացեալք գոլով ետուն տպել զտիպ հրաշալի չարչարանաց քոց ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցւոյն որ յանուն երևման խաչին կայ շինեալ ի տեղւոյն Վենետկոյ ի մեր թուոյն ՌՃԽԱ։ Այս պատկերի հին օրինակը Նորոդել տայով, նուիրել են վանքին Գէորգ և Յարութիւն Խաթրանեանները 1836 թ.։ Ս. Աստուածածնի վերափոխման պատկերի տակ գրուած է հետևեալ պատմական յիշատակարանը. «Ես Սանահնեցի երկայնաբազուկ Արզումեանց Հիսրբէկի որդի Յովսէփ արքեպիսկոպոս նուիրակ սրբոյ Էջմիածնի առաջնորդ ռուսաց երկրի Հայոց ազգի և հիմնադիր Նոր-Նախիջևանայ նկարել ետու պատկերս սբ. Աստուածածնայ և օծեալ նուիրեցի Նորաշէն սբ. Խաչ վանիցն Նախիջևանու 1786 թուին և ի մուտն հոկտեմբերի»։ Աստուածամանուկը գրկին սբ. Աստուածածնի գեղեցիկ պատկերը ունի հետևեալ հին յիշատակարանը. «Յիշատակ է հանգուցեալ Քէորքին ի դուռն սբ. Փրկչին. թվին ՌՄԻԶ», որ ցոյց է տալիս, թէ այդ պատկերը Ղրիմից է բերուած Նախիջևան։ Արժանի է ուշադրու-

որոշեալ եկամտի ապբիւր կամ մի ուրիշ աչքի ընկնելու արդիւնք ունենալ։ Յետագայ ժամանակներում վանքի եկամտի ապբիւրները կազմել են՝ 1. մոմավաճառութիւնը, 2. քաղաքի եկեղեցիներում վանքի անունով հաստատուած զանձանակները, 3. վանքի հօտը, որ ուխտաւորներին մատաղացու էր մատակարարում, 4. վանքի դաշտի եկամուտը, 5. պարտէզի երեսը և ուրիշ պատահական արդիւնքներ։ Թէ ընդամէնը որքան արդիւնք է կազմուում եղել եկամտի այդ բոլոր ապբիւրներից—, այդ ևս մեզ անյայտ է, որովհետև այդ ժամանակների հաշիւները ևս մեր ձեռքը չեն հասել։ Մեզ յաջողեցաւ Նոր Նախիջևանի Հոգևոր կառավարութեան հին գործերի մէջ գտնել միայն հանգուցեալ Ալամդարեանցի կազմած վանքի հաշուեցուցակը, որից երևում է, որ երկու տարուայ ընթացքում վանքը ունեցել է 1421 ռ. 96 կ. ծախք։ Ենթադրելով, որ տարուայ մէջ ինչքան ստացուել, այնքան էլ ծախ-

---

Թեան և Հոգեգալստեան մեծադիր, շքեղ պատկերը, որ նուիրել է վանքին Նոր-Նախիջևանի բարեգործական ընկերութիւնը ի յիշատակ իւր 25 ամեայ յոբելեանի։ Այդ պատկերը նկարել է Երուսաղէմի նուիրակ Մամբրէ վարդապետ (այժմ եպիսկոպոս) Մարկոսեանը իւր Նախիջևանում եղած ժամանակ։

Յովսէփ արքեպիսկոպոսը, որ իւր «Պաւթարում» ցուցակագրել է Խոիմից բերած բոլոր եկեղեցական իրեղէնները և նոցանից ինչ իրեղէններ, որքան և որ եկեղեցուն բաժանածը, յիշում է և վանքին տուած իրեղէնների հետևեալ ցուցակը.

2 չորս ճղանի արծ. կանթեղ	2 արծաթեայ տապանակ.
3 վեց ճղանի արծ. կանթեղ	6 արծաթապատ աւետարան
2 12 ճղանի արծ. կանթեղ	6 արծաթապատ պատկեր
15 հասարակ արծաթ. կանթեղ	1 արծաթեայ սկիհ
35 արծաթեայ խաչք	1 սաւաւարտ արծաթեայ
10 արծ. պատուանդանք խաչից	1 վակաս արծաթեայ
7 արծաթեայ սկիհ	1 երպրբէ արծաթեայ
6 արծաթեայ քշոց	1 լէկէն արծաթեայ
2 արծաթեայ բուրվառ	1 սկիհ (Ադամ վարդապետին)
4 գօտի. Բ արծ. և Բ մարգարտ.	2 քարհուպարէ խաչ
2 սաղաւարտ. արծ. և մարգ.	20 արծաթապատ շամադան։
3 վակաս, 2 արծ. և 1 մարգ.	

սուել է, կգանք այն եզրակացութեան, որ վանքը 33 – 34 թուականներին ունեցել է փոդով մօտաւորապէս տարեկան 700 ռուբլի, որ թէև մի չնչին գումար է, բայց ի նկատի առնելով ժամանակի պահանջները և կեանքի պայմանները, ինչպէս երևում է, բաւականացել է վանքի փոքրիկ միաբանութեան ընթացիկ ծախսերը ծածկելու։ Ժամանակի ընթացքում կեանքի պայմանները փոխուել են, վանքի պահանջներն էլ հետզհետէ աճել ու զարգացել են։ Թէև դորա հետ միասին աճել ու աւելացել է և վանքի արդիւնքը և 700-ից հասել է համարեա 5000-ի, բայց վանքի կեանքի պայմանները մինչև վերջին ժամանակները այնպէս էին կազմակերպուել, որ աւելի շատ էր պահանջուում, քան թէ նա ունէր։ Վանքի վարչութիւնը, բացի բուն վանքի ընթացիկ ծախսերը հոգալուց, վանահօրը ռոճիկ տալուց, ստիպուած էր իւր միջոցների մի խոշոր մասն էլ ծախսել ժառանգաւորաց դպրոցի վերայ, որովհետև Մարդասիրական ընկերութեան տուած տարեկան 1200 ռուբլի նպաստը բաւական չէր լինում հոգալու այն բոլոր ծախսերը, որ ունէր այդ գիշերօթիկ դպրոցը, չենք ասում արդէն այն, որ վանքը և նորա բակում գտնուած շինութիւնները անդադար վերանորոգութիւն են պահանջում, պարտէզը մեծ խնամք և նորանոր շինութիւնների միշտ կարօտութիւն կայ։

Բացի վերոյիշեալ հաստատուն եկամտից, վանքը ունի և պատահական արդիւնքներ, որ լինում է գլխաւորապէս ուխտի օրերը։ Վանքը տարուայ մէջ մի քանի ուխտի օր ունի՝ խաչի տօներին և վարդավառին. գլխաւորը վարդավառի ուխտն է, որ նախիջևանցիք կատարում են մեծ հանդէսով։ Այդ հանդէսը ազգային – ժողովրդական բնաւորութիւն ունի, դա հայկական ուխտագնացութիւնն է իւր բոլոր մանրամասնութիւններով, որ գաղթականները բերել են հայրենիքից իւրեանց գաղթականութեան

հեռաւոր տեղերը։ Տօնախմբութիւնը շարունակուում է երեք օր. նա սկսուում է ուրբաթ երեկոյից և շարունակուում է մինչև երեքշաբթի առաւօտը։ Ուրբաթ և շաբաթ հաւաքուում են քաղաքից և շրջակայ վեց հայ գիւղերից, երեքշաբթի սկսում են ցրուել. բուն տօնախմբութիւնը լինում է կիւրակի և երկուշաբթի օրերը։ Տօնախմբութեան տեղն է վանքի բակը, ագարակը և գլխաւոր-բապէս պարտէզը։ Հետաքրքիր է ուխտաւոր հայ գիւղացիների բազմութիւնը, գիւղացիք դեռ պահել են հայկական նահապետական կեանքը, իրենց հին զգեստը, լեզուն և սովորութիւնները։ Ահա հայկական տրեխը, պաճուճը, կապան և լայն գոտին, ահա աղջիկների բարակ թելերով հիւսած բազմաթիւ հիւսերը, որ ծածանում են նոցա յուսերի վերայ, ահա նոցա և դրամներով զարդարած արախչինները, կանանց զգեստների բազմատեսակ գոյները։ Այն աստիճանի խայտաճամուկ է այդ բազմութիւնը, որ մարդու աչք է խստոդեցնում։ Մէկ տեղ հարուստ քաղաքացին իւր ընտանիքով բոլորել է սեղանի չորս կողմը, միւս տեղ բազմանդամ գերդաստաններ են փռուել կանաչի վերայ տարածած գորգերի և կապերտների վերայ, երրորդ տեղ ժամանակաւոր վրան է շինած։ Բոլորեքեան ասում, խօսում, ծիծաղում են. աչքի են ընկնում պարող, երգող տղամարդկանց խմբակները և գոմշի գլխի չորս բոլորը պտտող երիտասարդների «դուռաչը», գոտէմարտութիւնը։ Ամէն տեղից լսուում է ուրախութեան, բարձր ծիծաղի ձայներ. խուլ աղմուկը բռնել է ամբողջ պարտէզը, լցրել է վանքի ձորը։ Երաժշտութիւնը բազմատեսակ է՝ ահա ազգային դափ ու զուռնան, եւրոպական երգեհոնն ու ջութակը. դոցանից ամէն մէկը իւր եղանակն է փչում, նուագում, շատ անգամ էլ դերերը փոխուում են. զուռնան մարշ է նուագում, իսկ եւրոպական երաժշտութիւնը—արևելեան եղանակներ, հայկական եր-

ղեր։ Պատահում են և սազանդարներ։ Ծառուղիներում մի մեծ տոնավաճառ է կազմուել. որը անուշեղէն է ծախում, որը խաղալիքներ, որն էլ զանազան տեսակ իրեղէններ։ Ազջիկները խումբ խումբ նազելով, ման են գալիս ամբոխի մէջ. նորա իւրեանց ցոյց են տալիս երիտասարդներին, որոնք եկել են իւրեանց համար հարսնացու հաւանելու, ջոկելու։ Այդ սովորութիւնն էլ գաղթականները իւրեանց հետ Հայաստանից են բերել։ Նախիջևանի Հայոց «վարթէորը» յայտնի է բոլոր շրջակայքում. նա ժողովում է բազմաթիւ օտար այցելուներ, որոնց թիւը տարեցտարի աւելանալով, կամաց կամաց փոխում է այդ ուխտագնացութեան հայկական բնաւորութիւնը և հասարակ տոնանավաճառի ձև ու կերպարանք է տալիս նորան։ Նախիջևանի «վարթէորը» յայտնի է և Հայոց գրականութեան մէջ. նորան նկարագրել է հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանը իւր «վարթէոր» վերնագրով Նախիջևանի բարբառով պատմուած գրուածքի մէջ [29])։

Երուանդ Շահազիզ

---

[28]) Պատկանեանցի «Վարթէորը» տպագրուած է «Գրականական Հանդէսի» երկրորդ գրքում։ «Վարթէորը» նկարագրել է և Իւրի Վեսելովսկին (Ю. Веселовскій) „Русскія Вѣдомости“ լրագրի բանասիրականում։ Երիտասարդ Հայերէնասիրի այդ յօդուածը կրում է „Армянскій уголокъ на югѣ Россій“ վերնագիրը։



ԻՄ ՕՐԱԳԻՐԸ

13 Օգոստոսի, Երէքշաբթի։

Դեռ նոր էր լոյսը յաղթահարել խաւարին և պատառել գիշերային թանձր վարագոյրը, երբ մեր ընդարձակ ննջարանում լսուեց պ. դաստիարակի լիահնչիւն ձայնը. «տղա՛յք, վե՛ր կացէք, ժամանակ է»։ Արդէն ժամի 4 էր։ Ամենքս վեր թռանք տեղերից, արագ հագնուեցանք և վերցնելով մեր երեսսրբիչները վազեցինք դէպի սառնորակ աղբիւրի աւազանը, լուացուեցինք. թէյն էլ արդէն պատրաստ էր։ Մինչև խմեցինք, ճանապարհորդական պարկերս շալակեցինք և վանքի բակում զոյգ-զոյգ շարուեցինք, արդէն ժամի 6-ը դարձաւ։

Երբ ամենքս պատրաստ էինք, պ. դաստիարակն ըստ սովորականին յայտնեց մեզ այսօրուայ ճանապարհորդութեան նպատակը, բացատրեց այն սուրբ վայրերի պատմական նշանակութիւնն, ուր այսօր ոտք էինք դնելու և Սանահնի ու Հաղպատի վանքերը նմանեցրեց

երկուորեակների՝ իբրև միևնոյն ժամանակի և հանգամանքների ծնունդ՝ համարեա թէ միևնոյն անձանց ձեռքով կառուցուած։ Յետոյ պ. դաստիարակի խնդրանօք՝ ծերունազարդ Վարդան արք-եպիսկոպոսը «Տէր-ողորմեա...» և պահպանիչ ասելով՝ օրհնեց մեր ուղևորութիւնը և բարի ճանապարհ ու վերադարձ ցանկացաւ մեզ։

Քայլերգի ներդաշնակ ու կանոնաւոր հնչիւնների համաձայն ոտքերս գետնին տրոփելով՝ դուրս եկանք վանքի բակից, արևելեան պարսպի դռնով, անցանք գիւղի կալերի մօտով և «Խչերկուտ»ի վրայով դիմեցինք դէպի «սբ. Աստուածածնայ ձոր»։

Գեղեցիկ առաւօտ է. արեգակն իր ոսկեգոյն ճառագայթները սփռել է բարձր լեռների կատարներին. երկինքը պարզ է. թարմ և զով քամին փչում է երեսներիս։ Լսւում է լեռնային վտակի կարկաչահոս ձայնը, ծառերի կանաչ տերևների սոսափիւնը և թռչունների քաղցր դայլայլիկն ու ճռուողիւնը։ Ձորս կողմը տարածուած դաշտերի անթիւ ու բազմերանգ ծաղիկները բուրում էին իրենց անուշահոտութիւնը։ Գիւղացին սկսել էր իր գործը. գիշերուան արօտից վերադարձած նախիրը ցրւում էր գիւղը և հարսները կովկիթները ձեռքերին տպասում էին իրենց սիրուն «նաշխուն»ներին, «ծաղիկ»ներին ու «նարգիզ»ներին։

Դուրս գալով «Աստուածածնայ ձոր»ից, անցնում ենք անտառածածկ բլրի լանջի երկարութեամբ ձգուած մի նեղ շաւղով, որ հովանաւորուած է հոնի, վայրի խնձորի, շլորի, տխլի և այլ տեսակ ծառերով։ Սբ. Կարապետ եկեղեցու բլրի արևմտեան ստորոտով ծռուեցինք դէպի արևելք. այժմ մեր առաջը տարածւում է մի փոքրիկ լեռնադաշտ՝ ծածկուած արտերով։ Այստեղ արևի ճառագայթներն օգուտ քաղելով դաշտի ծառազուրկ հարթութիւնից՝ սկսեցին չարաճճիութեամբ այրել մեր դէմքերը, բայց մենք էլ մի փոքր ոյժ տալով մեր ոտքերին՝ փախուստ տուինք մի փոքր դէպի հարաւ և մտանք Որնակայ ծառազարդ և ստուերոտ ձորը։ Ձորի վերին մասից, ահագին ապառաժների վրայից, խո-

խոջալով սրնթաց վազում է մի փոքրիկ առուակ, որ մի փոքր ցած իջնելով, կրկին ապառաժների վրայից ջրվէժի նման ներքև է թափւում։ Հէնց ջրվէժի մօտ առուակի վրայ ձգուած է մի փայտեայ կամուրջ՝ հողով ծածկուած։ Մենք նստեցինք բնութեան այդ սքանչելի տեսարանի մօտ և դիտում էինք սիրուն ջրվէժի սրընթաց թռիչքները. յետոյ թողնելով այդ բանաստեղծական վայրը, բարձրացանք դէպի դաշտը և Որնակ գիւղը։

Որնակ գիւղը մօտ 20—25 տուն հայ բնակիչ ունի. բոլորն էլ պարապում են երկրագործութեամբ և կենդանաբուծութեամբ. գիւղի դիրքը գեղեցիկ է՝ գըտնուելով երկու անտառապատ լեռների առաջը. գիւղի առաջը տարածւում է մի փոքրիկ դաշտավայր և ապահովելի ձորը։ Գիւղի միակ եկեղեցին անշուք է և աղքատ. կառուցել են Արղութեանները՝ հասարակ քարից. միմիայն արևմտեան պատը, որտեղ և եկեղեցու մուտքն է, շինուած է սրբատաշ քարից և մի քանի քարերի վրայ կան քանդակուած խաչքարեր։ Քարեայ փոքրիկ գմբէթը՝ հէնց տանիքի եզրին է շինուած, դռնից վերև։ Գիւղի աղբիւրը բերուած է 250 սաժէն հեռաւորութիւն ունեցող մօտակայ լերան ստորոտներից, Թիֆլիզի կուսանաց անապատի միաբան արժ. կոյս Մանիայի ծախքով։ Աղբիւրի կամարակապ որմի վրայ փակցրած է բարեգործ կոյսի լուսանկարը՝ շուրջը գրուած արձանագրութեամբ, որ վերաբերում է աղբիւրի շինութեանը։ Տարաբաղդաբար այժմ աղբիւրը կտրուած է՝ և ջուր չէ գալիս։

Երգելով, խօսելով ու թմբկահարելով ուրախ անցանք Որնակայ փոքրիկ դաշտավայրն էլ և օձապտոյտ ճանապարհով իջանք ձորը։ Ի՜նչ գեղեցիկ է լեռնային բնութիւնն իր բոլոր հրաշալիքներով. անդնդախոր, ոլորապտոյտ ձորը, կուսական անտառը, թռչունների արագ թռիչքը, ձորի անդնդում վազող գետակի խուլ ձայնը, խիտ անտառի միջից երևնց գոռոզ կատարները բարձրացնող ապառաժոտ սարերի տեսքը միանալով միմեանց հետ՝ մի այնպիսի վեհ զգացմունքներ առաջացնող ամբողջութիւն են կազմում, որ մարդ մի բոպէ

կանգ է առնում և նրա մտքերը դէպի անհունութիւնը սլանալով՝ ակնապիշ նայում է իր շուրջը . . :

Ձորի վէհիտ աղբիւրի մօտ մի փոքր հանգստանալով՝ զովացանք նրա սառնորակ ջրերով և դիտեցինք մօտիկ գտնուող ջրաղացը։ Ձորը կոչւում է «Հաղպատայ» ձոր, վազող գետակը՝ «Հաղպատայ ջուր» և ձորում տարածուած այգիներն ու ջրաղացներն էլ պատկանում են Հաղպատեցոց. ահա այդ ջրաղացներից մէկն էր մեր դիտածը, որ մի հասարակ, քարեայ խախուտ շէնք էր, միայն մի աղաքարով. նրա «տակնակ» ու «վերնակ»ներն էլ արագ չէին պտտում՝ ջրի նուազութեան պատճառով։

Այդտեղից օձապտոյտ ճանապարհներով դարձեալ բարձրացանք դէպի վեր և շուտով հասանք Հաղպատայ դաշտը, ուր մեզ դիմաւորեց այդ միջոցին Հաղպատ գըտնուող և Շուլաւերի դպրոցի ուսուցիչ պ. Ս. Ֆ. որ մեր դպրոցի նախկին սաներից է։ Մեր առաջը տարածուած է, մի փոքրիկ բարձրավանդակի վրայ, Հաղպատ գիւղը, իսկ գիւղից արևմուտք Հաղպատայ հռչակաւոր վանքը՝ շրջապատուած պարիսպներով. որքան մօտենում ես, այնքան սիրտդ սկսում է աւելի արագ բաբախել, այնքան աւելի անհամբեր ես դառնում՝ շուտով համբուրելու այդ սրբազան վայրի դարաւոր տաճարների քարերն ու պատմական նշանաւոր՝ թէ եկեղեցական և թէ իշխանական տոհմի անձանց շիրիմները։ Այդ փառաշէն տաճարների խումբը, որ երկար դարեր իր հզօր ու կարծր կուրծքը դէմ տալով ժամանակի աւերիչ ժանիքներին՝ պաշտպանուել է և մաշել իր ունեցած ուժի և զօրութեան մեծ մասը, այժմ կարծես ուժասպառ և յուսահատ՝ օգնութեան է դիմում իր բորբոսնած քարերը համբուրող և բարեպաշտ անձանցը . . :

Անցնելով «սուրբ Կիւրակէ» եկեղեցու աւերակների մօտով՝ կարգի ընկանք և զոյգ զոյգ՝ երգելով ու երաժշտութեամբ առաջ գնացինք. գիւղի երեխայքն երաշժտութեան և երգի ձայնի վրայ հաւաքուելով մեր շուրջը՝ հետաքրքրութեամբ դիտելով հետևում էին մեզ։ Հէնց գիւղի սահմանում դիմաւորեց մեզ պ. Գրիգորիս Եզընկեանը—ուսուցիչ և նախկին սան մեր դպրոցի—մէկ

ձեռքին մատուցարանի վրայ դրած աղ ու հացը, իսկ միւս ձեռքին եղանը. պարոնը մօտեցաւ դաստիարակին հետևեալ կարճ ատենաբանութեամբ. «Այս սրբազան վայրում դիմաւորում եմ Ձեզ աղ ու հացով և հայկական զէնքով. իբրև ընիկ Հաղպատցի, շատ ուրախ եմ Ձեզ այստեղ ընդունելով»։ Այս անսպասելի տեսարանը խորը տպաւորութիւն արեց ամենքիս սրտի վրայ. դաստիարակը ճաշակեց աղ ու հացը, սրտագին շնորհակալութիւն յայտնեց և մենք կրկին առաջ ընթացանք մեր քայլերգով։

Գիւղում կենդանութիւն էր տիրում. գիւղացիք արդէն սկսել էին կալերը. տղամարդիկ, կանայք, երեխայք, բոլորն էլ գործի վրայ էին։ Կալերի միջով անցնելով՝ մտանք վանքի պարսպի կամարակապ դռնով և «Համազասպ» կոչուած փառաշէն գաւթի մօտով և կանգնեցինք զանգակատան և վանքի հիւրասենեակների մէջտեղը, ուր վանահայր Յակոբ վարդապետը պատրաստակամութեամբ ընդունեց մեզ։ Կարգով մօտեցանք, համբուրեցինք հայր սուրբի աջը, ստացանք նրա օրհնութիւնը և տեղաւորուեցանք մեզ համար յատկացրած սենեակներում։ Առաւօտեան $9\frac{1}{2}$ ժամն էր արդէն։

Մի փոքր հանգստանալուց յետոյ՝ մեզնից ամեն մէկն ազատ էր իր ցանկացած գործով զբաղուելու մինչև ճաշ։ Այդ ազատ ժամանակը համարեա թէ ամենքս գործ դրինք վանքի մասերը հարևանցի կերպով դիտելով։ Ժամի 12-ին ճաշի զանգը հրաւիրեց մեզ կրկին ժողովուելու մեր բնակարանը. ճաշի սեղանը պատրաստուած էր վանքի զանգակատան ստուերում։ Ամենքս սեղանի շուրջը բոլորուելով՝ մեր գիտակցութեան մէջ վերարտադրուեց վանքի այն փառաւոր անցեալը, երբ միաբանական սեղանի շուրջը ճաշում էին մօտ հինգ հարիւր միաբաններ. երբ՝ վաղ առաւօտեան, ճաշին ու երեկոյեան վանքի զանգակների հնչիւնները միաբաններին եկեղեցի էին հրաւիրում և միախառնուելով եկեղեցականների ջերմեռանդ սրտից բղխած բարձրաձայն օրհնութիւնների հետ՝ դէպ երկինք էին վերառաքւում . . ։ Այդ փառաւոր անցեալի այժմեան բեկորների ներկայա-

ցուցիչ և միակ միաբան վարդապետի օրհնութեամբ սեղան նստեցինք և վերկացանք։

Երեկոյեան ժամի 4 էր, երբ մեր փողհարի հնչեցրած հաւաքուելու նշանը կրկին ժողովեց մեզ մեր դաստիարակի շուրջը. զոյգ զոյգ կանգնելով՝ դիմեցինք դէպի սուրբ Նշան եկեղեցու զաւիթը և մեր սովորական եղանակով դիտեցինք, չափեցինք, արձանագրութիւնները կարդացինք, կարևոր նկատողութիւնները նշանակեցինք մեր յիշատակարաններում։ Ամբողջ երկու և կէս ժամ զբաղուելով՝ այս գաւթի դիտողութիւնը հազիւ թէ վերջացրել էինք, երբ լսեցինք վանքի զանգակների քաղցրահնչիւն ղողանջիւնը. մտանք սբ. Նշան եկեղեցին, ունկնդիր եղանք ժամերգութեանը և վերջացնելուց յետոյ՝ սոյն եկեղեցու դիտողութիւնը թողնելով վաղուան համար, որովհետև արդէն մութն էր ներսը, դիմեցինք դէպի գիւղից դուրս գտնուող աղբիւրները։

Սիրուն երեկոյ էր. արևի վերջին ճառագայթներն ընկնելով սարերի կանաչազարդ կատարներին՝ աչքին դուրեկան լուսաւորութիւն էին տարածել։ Վանքի պարսպի արևելեան կամարակապ դռնից դուրս գալով և գիւղի միջով անցնելով՝ հասանք սրբատաշ քարից շինուած և խորանազարդ աղբիւրին։ Դիտելով աղբիւրի մօտի լճանման ընդարձակ աւազանը, գերեզմանատունը, խաչարձաններն ու խաչքարերը՝ շարունակեցինք մեր ուղին դէպի սբ. Լիս կոչուած անտառածածկ լեռը և հասանք «աւազան» կոչուած աղբիւրի տեղը. այս աղբիւրն իսկապէս առաջին մեծ աղբիւրի ակունքն է. շինուած է եղել սրբատաշ քարից և արձանագրուած քարն էլ ընկել ու կոտրուել է, տեղացիների ասելով հետևեալ պատճառով. տեղական քահանաներից մէկի կոյր ձին սատիկ ծարաւ զգալով՝ ներս է մտնում աղբիւրը և այլ ևս չի կարողանում դուրս գալ. ձիատէր քահանան քանդում է աւազանի մուտքի կամարները, հանում է իր ձին, իսկ քանդածը թողնում այնպէս...։ Ջերմաչափը հինգ բոպէաչափ աղբիւրի ջրի մէջ դնելով՝ ցոյց տուեց 7° ըէօմիւրի—երկու աստիճանով աւելի

սառը, քան թէ Սանահնի աղբիւրի ջուրը—բայց ափ-սոս որ ջրի ստորերկրեայ խողովակները փչացած ու կոտրտուած լինելով՝ մինչև որ ջուրը հասնում է գիւղի աղբիւրը՝ տաքանում է։ Մեր բոլոր դիտողութիւնները վերջացնելով՝ երգելով և զինուորական քայլով կրկին իջանք գիւղը, մտանք վանքի պարիսպը և թէյն ու թեթև ընթրիքը վայելելուց յետոյ՝ պառկեցինք մեզ համար պատրաստուած անկողիններում։

14 օգոստոսի, չորեքշաբթի. Հաղպատ։

Այսօր մի գեղեցիկ և լուսապայծառ օր է. առաւօտեան վաղ արթնանալով և թէյ խմելով՝ ճիշտ ժամի ութին Յակոբ հայր սուրբի և դաստիարակի առաջնորդութեամբ, դիմեցինք դէպի սբ. Նշան եկեղեցին և սկսեցինք մեր մանրամասն դիտողութիւնները, որ տեւեց մինչև ժամի երկուսը։ Այս փառահեղ և հրաշալի տաճարը Հայաստանի փառքերից մէկն է։ Սբ. Նշանը հռչակուած է ամբողջ Լոռում՝ իբրև հրաշագործ մասունքի, կենաց փայտի, կենդրոնավայր։ Սբ. Նշանը երբեմն երբեմն պտտեցնում են ամբողջ Լոռուայ գիւղերում՝ երաշտի, հիւանդութիւնների և ընդհանուր դժբաղդութեան դէպքերում։ Այս սրբազան մասունքը Բագրատունեաց տան սեպհականութիւնն էր։ Խոսրովանոյշ թագուհին յատկացրեց այս եկեղեցուն, որ և մասունքի անունը ստանալով՝ կոչուեց սբ. Նշան եկեղեցի։

Սբ. Նշան եկեղեցու ներքին մասի դիտողութիւնը վերջացնելով՝ վերադարձանք մեր բնակարանը. ճաշեցինք, մի փոքր հանգիստ առանք և երեկոյեան ժամի հինգին նորից սկսեցինք մեր գործը. դիտեցինք սբ. Նշան եկեղեցին արտաքին կողմից, սբ. Գրիգոր և սբ. Աստուածածին եկեղեցիները և Համազասպի գաւթի մօտ գտնուած երեք խորանազարդ դամբարանները։ Գիշերը վրայ հասնելով՝ արգելեց մեզ շարունակել միւս շէնքերի դիտողութիւնը. խմբովին գնացինք մեր բնակարանը և թէյ խմելուց, ընթրելուց ու մի փոքր զուարճանալուց և խաղալուց յետոյ պառկեցինք քնելու։

15 օգոստոսի, հինգշաբթի։

Առաւօտեան վաղ արթնանալով՝ մինչև թէյ խմելն ազատ էինք ամեն մէկս մեր ցանկացած գործով զբաղուել. իսկ թէյ խմելուց յետոյ, ճիշտ ժամի 9-ին, խմբուելով մեր դաստիարակի շուրջը՝ դիմեցինք դէպի վանքը՝ նրա մնացած մասերը դիտելու։ Նախ գնացինք դէպի Համազասպի շինութեան որմի մօտ գտնուող մատուռները, որի դիտողութիւնը թերի էր մնացել նախընթաց երեկոյեան և կարդացինք երկու մատուռների վրայի արձանագրութիւնները։ Այնուհետև անցնելով Համազասպի արևմտեան որմի տակով՝ մտանք նրան կից սբ. Նշան եկեղեցու հիւսիսային գաւիթը։ Գաւիթը դիտելուց յետոյ անցանք գաւթի արևելեան կողմն եղող գրատունը, յետոյ սբ. Նշան եկեղեցու արևելեան որմին կից եղող գաւիթը, ապա Համազասպ կոչուած ընդարձակ շինութիւնը, վանքի զանգակատունը և վերջապէս Ձիթահանք կոչուած շէնքը, որով և վերջացրինք վանքի դիտողութիւնը։

Ժամի 12-ին գնացինք ճաշելու. ապա հանգստացանք մի փոքր և երեկոյեան ժամի 5-ին նորից խմբուելով՝ վանքի պարսպից դուրս եկանք, որպէս զի դիտենք շրջակայքում գտնուող հնութիւնները։ Նախ դիմեցինք դէպի կուսանաց անապատ կոչուած եկեղեցին և ապա կրկին վանք վերադառնալով՝ հասանք Զգրաշէն եկեղեցին։ Արդէն մութն ընկնում էր, որ զինուորական քայլով ու երգելով վերադարձանք մեր բնակարանը։

Այսպիսով երեք օրուայ ընթացքում վերջացրինք Հաղպատ հռչակաւոր վանքի և շրջակայ հնութիւնների դիտողութիւնը և արձանագրեցինք բոլոր մանրամասնութիւնները մեր յիշատակարաններում [1])։

Թախիծը պատում է մարդուս սիրտը՝ երբ մտքով սլանում է մեր նախնեաց փառաւոր ժամանակները և

---

[1]) Մտադրութիւն ունենալով Հաղպատի մանրամասն նկարագիրն առանձին հրատարակել, զանց ենք առնում այստեղ ևս առաջ բերելը և կարճ ենք կտրում։

յանկարծ սթափուելով՝ տեսնում է ներկայի տխուր աւերակները...։ Ի՞նչ դրութեան մէջ էին այդ վանքերը մի ժամանակ և ի՞նչ դրութեան մէջ են այժմ. ի՞նչ կենդանութիւն էր տիրում այդ հրաշակերտ տաճարների շուրջը և որպիսի ամայութիւն այժմ. որպիսի հոգեբուղխ քաղցրալուր շարականներ էին հնչւում քրտնաջան և ուսումնասէր միաբանների դասերից, իսկ այժմ չղջիկների թևերի ձայներն են միայն սթափեցնում այդ սրբավայրերում կանգնած և մտքերի ովկիանոսում խորասուզուած ամեն մի հայ մարդուն...։

16 օգոստոսի, ուրբաթ. Կայեան բերդ։

Երեք օր վանքում հիւրասիրուելուց յետոյ, այսօր առաւօտեան վաղ վերկացանք և պատրաստութիւններ տեսանք վերադառնալու մեր կենդրոնավայրը՝ Սանահին։ Միայն երեք օր մնացինք այստեղ, բայց այդ կարճ միջոցում շատ բան կարողացանք տեսնել, շատ բան լսել և շատ էլ սովորել ու զգալ...։ Երբ ամեն բան պատրաստ էր, մախաղներս առանք մեր ուսերը, ցուպերը ձեռքերս և կարգով շարուելով վանքի բակումը՝ մեր խորին շնորհակալութիւնը յայտնեցինք վանահայր արժ. Յակոբ վարդապետին, որ անտրտունջ և պատրաստակամութեամբ օգնել էր մեզ, որքան կարողացել էր։ Ապա այդպէս կազմ ու պատրաստ գնացինք եկեղեցի և ներկայ եղանք առաւօտեան ժամասացութեանը. որպիսի զգացմունքով էինք լսում. կարծես հարիւրաւոր միանձանց օրհնութեան ձայնը լսելիս լինէինք. որքան քաղցրալուր էր հնչում այսօր «Փառք ի բարձունս» հոգեբուղխ փառաբանութիւնը։ Ժամերգութիւնը վերջանալուց յետոյ քահանաներից մէկը, մեր խնդիրքով դուրս բերեց սբ. Նշանը և մեզ վրայ «պահպանիչ» ասաց, իսկ միւսն իր շնորհալի ձայնով երգում էր «Ապաւինեցաք» շարականը։ Ոպէն խորհրդաւոր էր. ամենքս էլ լուռ էինք, կարծես մի ներքին երկիւղ էր պատել մեզ. գլուխներս քաշ գցած, բայց մտքներս արթուն աղօթում էինք և խնդրում Ամենաբարձրեալից, որ պահի ու պահպանի մեր

նախնեաց այս թանկագին յիշատակարանները, որ կանգնել են նրանք հազար ու մի չարչարանքով և աւանդ թողել մեզ համար։ «Պահպանիչը» վերջանալուց յետոյ ոՐպիսի պատկառանքով համբուրեցինք կենաց փայտի սրբազան մասունքը...։

Եկեղեցուց դուրս գալուց յետոյ հրաժեշտ տուինք մեր բարեկամներին և դուրս եկանք վանքի պարսպից. մնաս բարև Հաղպատ, գուցէ մեզնից շատերն այլ ևս չկարողանան քո սրբութիւնները կրկին անգամ համբուրել, բայց ուր որ գնանք, ուր որ լինինք, քո յիշատակը միշտ վառ կմնայ մեր սրտերում...։

Երկինքն ամպամած է, օդը գով. տխուր եղանակը համապատասխանում է մեր սրտի արտայայտութեանը։ Մեր թախծալի երգեցողութեան և երաժշտութեան հընչիւնները թնդացնում են ամբողջ գիւղը. գիւղացիներն իրենց կալերում կանգնած հրաժեշտ են տալիս մեզ. երեխաները հետևում են մեր խմբին։ Ճանապարհը հետզհետէ իջնում է ոլոր մոլոր շաւիղներով և փոքր առ փոքր վանքը չքանում է մեր աչքերից. վերջին անգամ երեսներս դարձնում ենք դէպի այդ սրբավայրերը և տխուր հայեացք ձգելով՝ բաժանւում նրանցից։ Ձորի գլխին հրաժեշտ տուինք մեզ ուղեկցող բարեկամներին և օձապտոյտ քարքարոտ զառի — վայրով սկսեցինք ցած իջնել։ Մեր դիմացը, ձորի միւս կողմը, կան ապառաժներ՝ պատի նման ուղղահայեաց, որոնց մէջ երևում են բազմաթիւ մեծ ու փոքր այրեր. երբ ձորում թմբուկ էինք ածում, սարսափելի ուժգին արձագանք էր լսւում։ Անցնելով անտառապատ ժայռերի միջից՝ ճանապարհը փոքր գետակի ձախ կողմից երկուսի է բաժանւում. մէկը տանում է դէպի Սանահին, միւսը դէպի Կայեան բերդը. մենք վերջին ճանապարհով ընթացանք։

Այս ձորը, որ Սևորդեաց ձորի մի մասն է կազմում, կոչւում է «Հաղպատայ ձոր» և ընկնում է Հաղպատից դէպի արևմուտք. միջից հոսում է «Հաղպատաջուր» գետակը. այս ձորումն են գտնւում Հաղպատեցւոց ընդարձակ այգիներն ու բանջարանոցները, ի թիւս այլոց նաև վանքի երկու այգիները։ Ձորում կան բազմաթիւ հնութեանց

հետքեր, ինչպէս օրինակ. «Կոտրած բեմ», «Ադաւի տապան», մի քարաշէն փոքրիկ մատուռ, վանքապատկան այգու մօտ, որ շինուել է ՇԼԵ թուին Հայոց Սարգիս առաջնորդի ձեռքով, որ տնկել է նոյնպէս այդ այգին և ընծայել վանքին։ Կան նաև բազմաթիւ խաչքարեր՝ արձանագրութիւններով և գերեզմանաքարեր։ Հաղպատայի վրայ կառուցուած քարեայ կամուրջի մօտ է վանքի ջրաղացատեղին։

Ահա երևում է և Կայեան բերդն իր զարմանալի տեսքով. կարծես մի օդային ամրոց լինի. կառուցուած է երեք կողմից անդնդախոր ձորերով շրջապատուած մի ապառաժոտ բլրի վրայ. մեր ճանապարհից երևում է միայն եկեղեցին և բերդի հարաւային կողմի պարիսպներն ու բուրգերը։ Բերդի տեսքը տխուր յիշողութիւններ է արթնացնում մեր մէջ՝ յիշեցնելով Լօռուայ բերդի աւերակները...։ Բարձրանում ենք զառիվայր նեղ լեռնային շաւղով և դժուարագնաց ժայռերով մագլցում դէպի բերդը. քանի առաջ ենք գնում, այնքան դժուարանում է ճանապարհը։ Վերջապէս բարձրացանք աւերակ բերդի առաջին հանդիպակած բուրգի վրայ, որտեղից տեսարանը հրաշալի և բանաստեղծական է։ Փչում է այն յարատև զով քամին, որ երբեմն զովացնում էր այդ բուրգերի վրայից կռուող քաջ հայ զինուորների տաքացած ճակատը։

Երեք-քառորդ ժամ բարձրանալուց յետոյ արդէն բերդի պարսպի մէջ էինք. պարսպի շուրջը մի պտոյտ անելուց յետոյ սկսեցինք մեր մանրամասն դիտողութիւնները։

Կայեան բերդը գտնուում է Հաղպատի և Սանահնի միջավայրում, մի փոքր աւելի մօտ Հաղպատին. շինուած է թերակղզու նմանութիւն ունեցող քարաժայռ բլրի վրայ։ Արևելեան, արևմտեան և հիւսիսային կողմերից շրջապատուած է անդնդախոր ձորերով. արևելեան կողմից Հաղպատաձորն է, իսկ հիւսիսային և արևմտեան կողմից Ձորագետն է հոսում. միայն հարաւային կողմից միանում է Որնակայ դաշտի հետ։ Բերդը շրջապատուած լինելով ամուր պարիսպներով, բուրգերով և աշտարակ-

ներով՝ անառիկ են դարձնում նրան։ Բարձրավանդակը փոքր տարածութիւն բռնելով՝ բերդն էլ հարկաւ փոքր է. պարսպի միջի տարածութեան երկարութիւնն է ընդամենը 175 արշին (125 արշինով պակաս Լուսուայ բերդի պարսպի երկարութիւնից). իսկ լայնութիւնը՝ եռանկիւնու վերջին ծայրին, որտեղ սահմանագծւում է թերակղզիանման բլուրը, 16 արշին է. ամենաընդարձակ տեղի լայնութիւնն 30 արշին է։ Բերդը գտնւում է 800 մետր բարձր ծովի մակերևոյթից (200 մետր Սանահնից ցածր). ժամի 9-ին ջերմաչափը ցոյց էր տալիս 18 աստիճ. Ռ.

Բերդի մէջ, արևելեան կողմը, հէնց պարիսպների շարքում շինուած է մի փոքրիկ եկեղեցի, սրբատաշ քարից, որ կառուցել է Հաղպատի առաջնորդ Յովհաննէս Արքեպիսկոպոսը։ Այդ եկեղեցու արևմտեան մուտքի ճակատին կայ հետևեալ արձանագրութիւնը.

«Ի թվին ՈՁԲ (682 հ. և 1233 փրկչ.) կամաւն Աս-
«տուծոյ ես Տէր Յովհաննէս առաջնորդ Հաղբատայ
«քուեր որդի մեծի Պատրոնաց Զաքարէի և Իւա-
«նէի ի ժամանակի՝ որ եհաս սասանումն աշխար-
«հիս մերոյ յանաւրէն Խորազմեանց ոչ գոյր տեղի
«ապաստանի սբ. նշանիս և եղբարցս. հրամանաւ
«քեռւոյն իմոյ Իւանէի և որդւոցն իւրոց Աւագին
«և Շահնշահի որդւոյ Զաքարէի շինեցի զամբոցս
«և զեկեղեցիս Հաղբատայ սբ. Նշանիս բազում աշ-
«խատութեամբ։ Արդ եթէ ոք զսա ի Հաղբատայ
«հանէ թէ ի մեծաց և թէ ի փոքունց զինչ և ի-
«ցէ պատճառաւ մարդն այն նզովեալ եղիցի ի մա-
«հուան և ի կենաց՝ յԱդամայ մինչև ի գալուստն
«Քրիստոսի՝ ինչ նզովք կայ ի վերայ նորա. եղիցի
«երերեալ և տատանեալ որպէս Կայենի. և բաժին
«Յուդայի առցէ. և աւանդիչ հոգւոյ նորա Սատանայ
«լիցի. և առաջնորդ սորա՝ որ կամաւոր նախանձու
«կամ ծուլութեամբ կամ կաշառաւք զսա ի Հաղ-
«բատայ հանէ զվերագրեալ նզովքն առցէ և որք հաս-
«տատեն աւրհնին յԱստուծոյ, և պարտին ինձ Տէր

«Յովհանիսիս զԱստուածածնի տաւնի Գ. աւրն ի «սմա պատարագն ինձ մատուցանել»։

Եկեղեցին կանգնած է չորս անսիւն կամարների վրայ, նման Հաղպատի Զգրաշէն եկեղեցուն. ունի գմբէթ. իւրաքանչիւր որմում կայ մի մի պատուհան. կաթուղիկէն նոյնպէս չորս պատուհան ունի։ Եկեղեցու լայնութիւնը հարաւից-հիւսիս 4 արշին 5 վերշոկ է. երկարութիւնը, արևելքից-արևմուտք 7½ արշին։

1827 թուին սաստիկ երկրաշարժից կործանւում է այս եկեղեցու կաթուղիկէն ու քարերը թափւում են ձորը, բայց 1836-ին երեք հարազատ եղբայրներ՝ Մարգար, Վարդան և Յարութիւն Երզնկեանցները Եփրեմ վարդապետի ձեռքով նորոգել են տալիս կաթուղիկէն՝ նախկին ձևով։ Յիշեալ բարեպաշտ եղբայրներից մէկը թաղուած է եկեղեցու հիւսիսային որմի տակ, արտաքուստ. տապանագրի վրայ արձանագրուած է.

«Ի ներքոյ վիմիս հանգչի մարմին Մարգարայ Եր-
«զընկեանց վերանորոգողի տաճարիս, որ ննջեաց ի
«Տէր 1842 ամի ի հաս. 67 ամաց»։

Համբարձման և Վարդանանց տօնի օրը շրջակայ գիւղերից բազմաթիւ ուխտաւորներ են գալիս այստեղ. Համբարձմանը գալիս են Հաղպատեցիք, իսկ Վարդանանց տօնին աւելի հեռաւոր գիւղերից։ Ուխտաւորների համար եկեղեցու մօտ կառուցուած է քարուկրեայ մի յարկանի հասարակ շինութիւն։

Բերդի մէջ միայն եկեղեցին է կանգուն մնացել, միւս շինութիւնները բոլորն էլ հողի հետ հաւասարուել և միայն հետքերն են երևում. պարիսպներն էլ կիսով չափ քանդուած են, ներքին մասերն են մնացել միայն։

Ճշտութեամբ յայտնի չէ Կայեան բերդի սկզբնաւորութեան ժամանակը. յայտնի է միայն, որ գոյութիւն է ունեցել Լոռուայ թագաւորների ժամանակ և ինչպէս պատմութիւնից յայտնի է, Լոռուայ Դաւիթ Անհողին թագաւորը պաշտպանուել է այստեղ՝ թշնամու դէմ։ Կայեան և Կայծան բերդերն յիշւում են իբրև Գրիգոր Մագիստրոս իշխանի կալուածներ. այնուհետև եղել է Զաքարէ և Իւանէ սպասալարների սեպհական-

նութիւն, որոնք զանազան ժամանակ պաշտպանուել են այստեղ թշնամիներից։ Ըստ պատմական աւանդութեան՝ Որնակ գիւղի վերին աղբիւրից ստորերկրեայ խողովակներով ջուր է բերուած եղել բերդը. մինչև այժմ էլ ցոյց են տալիս այն աւազանի հետքերը, որտեղ հաւաքուելիս է եղել աղբիւրի ջուրը. այժմ այդ տեղը լցուած է քարով ու հողով [1])։ Աղբիւրի հետքերն երեւում են նաև արտաքին պարսպի մէջ. այդտեղ կան խողովակներ, որոնց ուղղութիւնը դէպի ձորն է։ Երբ Լոռու թագաւորութիւնն ընկնում է և երկիրը շարունակ ենթակայ է լինում թշնամիների յարձակմանը՝ Հաղպատի սբ. նշանը սովորաբար բերում են այս անառիկ վայրում պահում. շատ անգամ էլ շրջակայ գիւղերի բնակիչներն ապաստան են գտել այս փոքրիկ ամրոցի պարիսպների մէջ։

Բերդն իր եկեղեցիով գիւղացիների յորջորջմամբ կոչւում է «Տսեւանց», որ երկու մեկնութիւն ունի. առաջինով բացատրւում է իբրև «Դրսեվանք» այսինքն Հաղպատից դուրս եղող վանք. երկրորդով այդ բառը համարւում է իբրև աղաւաղումն «Տես և անց» բառերի, որ իբրև թէ ստացել է իր անմատչելիութեան պատ-

---

[1]) Ջրի հաղորդակցութեան վերաբերեալ՝ Սանահնում մեզ պատմեցին հետեւեալը. երբ Աբխազներն արշաւում են Գուգարաց աշխարհը՝ շատ տեղեր նուաճելով ու աւերելով մտնում են Լոռի և մեծամեծ վնասներ հասցնելով թէ գիւղերին և թէ վանքերին, պաշարում են նաև Կայեան բերդը։ Բերդի մէջ ապաստանուածներն երկար ժամանակ դիմադրում են և չեն հնազանդում Աբխազներին։ Աբխազները սաստիկ կատաղում, գնում են Որնակ և բնակիչներին անխնայ կոտորում. ապա բռնում են մի պառաւի և ստիպում, որ յայտնէ բերդի գաղտնիքը. պառաւն ուզենալով իր գլուխն ազատել մահից՝ յայտնում է, որ նրանց ջրի պաշարը Որնակի աղբիւրներիցն է գնում ստորերկրեայ անցքերով, և եթէ ջուրը կտրեն՝ բերդն անձնատուր կլինի։ Աբխազները սպանում են պառաւին, ջրի աղբիւրը կըտրում և բերդում եղողներն անձնատուր լինելով՝ բոլորը կոտորւում են։ Ժողովրդական լեզուաբանութիւնն էլ Որնակ անունը բացատրում է «Որն է ակը» բառերով, այսինքն թէ որն է բերդի աղբիւրի ակը, ակունքը։

ճառով։ «Տես և անց» կոչումը յիշում է նաև Զաքարիա սարկաւագ պատմագիրը։

Բերդից սիրուն պատկեր է ներկայանում դիտողի առաջը. արևմտեան և հիւսիսային կողմից կատաղութեամբ գոռալով և ահռելի աղմուկ բարձրացնելով հոսում է Ձորագետը. մերձակայ վայրերը ծածկուած են անտառներով և հնձած արտերով, իսկ հորիզոնում երևում են բարձրաբերձ լեռների գագաթները. լերան լանջի վրայ, դէպի հիւսիս-արևմուտք, երևում է «Ամոռիկ» սիրուն կոչումն ունեցող տեղը, որ մի փոքրիկ բարձրաւանդակ է։ Այդ բարձրաւանդակի վրայ երևում են աւերակ գիւղի հետքեր. այդ աւերակների մօտ, մի բարձր բլուրի վրայ երևում է Անդրէի վանքը, որ ինչպէս պատմում են, բոլորովին աւերակ է։ Տիտուր, տրտում աւերակ, զրկուած իր շուքից, իր մեծ վարդապետ Վարդան Բարձրբերդեցուց, որ առանձնացած այստեղ գրել է իր եկեղեցիներն. այլ ևս չի լսւում այդ սբ. վայրում նրա վարդապետական խօսքը. այժմ նրա ոսկերքը հանգչում են նոյն տեղում, ուր անցրել է իր կեանքի մեծ մասը՝ ուսուցանելով և վարդապետելով. մի կոփածոյ քարից շինած տապանաքար և մի համեստ խաչարձան զարդարում են նրա մոռացուած դամբարանը։

«... Առեալ զայս գիր Հաւանութեան իմաստնոցն « վարդապետին Վարդանայ, առաքէ առ կաթողիկոսն « Կոստանդին ի Կլայն Հռովմէական և ինքն եկեալ ի « Կայեանայ մենարանն իւր, զոր սուրբ Անդրէ կոչէին, « հանդէպ անառիկ բերդին Կայենայ և անդ դադա- « րեալ յուսուցանել զբազումս, որք աշակերտէին նմա « վարդապետական բանին»։ Կիրակոս պատմագիր։

Ձորագետի սաստիկ վարար լինելու պատճառով զրկուեցինք այդ սուրբ վայրը համբուրելու բաղդից. շատ, շատ էինք ափսոսում, բայց ի՞նչ կարող էինք անել բնութեան դէմ։

Բերդի դիմացը, արևելեան կողմից, ուղղահայեաց բարձր ժայռերի մէջ երևում են բազմաթիւ մեծ ու

փոքր այրեր, որոնցից մի քանիսն այնքան ընդարձակ են, որ թշնամու յարձակումների միջոցին ամուր բերդերի տեղ են ծառայել և բազմաթիւ անձինք և թանկագին իրեր են պահպանել հալածողների ձեռքից։ Այդ այրերից նշանաւոր է Զարեհի այրը, որ այժ գիւղացոց բարբառով կոչւում է «Զառնի էր». այրը շրջապատուած է որմերով և բրջերով, անառիկ է. մի երկրորդն էլ կոչւում է «Պարնի էր»։ Երկուսն էլ շինել է տուել Հաղպատի Զարեհ պայպատ իշխանը. վերջին այրն այդ իշխանը շինել է տալիս յատկապէս իր ընտանիքի ապահովութեան համար. դրա մէջը կայ քարեայ աւազան՝ ջրի պաշար ունենալու համար։ Այդ երկու այրերից բարձր, միապաղաղ ժայռի մէջ գտնւում է դժուարագնաց «ծակ այրը», որ գաղտնի և ապահով տեղ է եղել։ Այդ այրերից է պ. Ա. Երիցեանը 1873 թ. հանել բազմաթիւ հին մագաղաթեայ ձեռագրներ, որոնք երկար ժամանակ անձրևի և խոնաւութեան մէջ մնալով՝ կրաշաղախ էին դարձել և քարացել։

Բացի այդ երեք նշանաւոր այրերից կան նաև բազմաթիւ մեծ ու փոքր այրեր, բոլորն էլ համարեա դժուար մերձենալի կամ թէ անմերձենալի ժայռերի, քարափների մէջ, ծերպերի գլխին. ինչպէս օրինակ «Խրամաձորի» քարայրը, «Զրոց էրը», «Պնդոցը», որ միայն 300 մարդ կարող է տեղաւորել իր մէջ, «Լաստու էրը», «Կաթանքաէրը», «ծակաքար» և այլն։ Մարդ զարմանում է և ափ ի բերան հիացած մնում՝ տեսնելով այդ անառիկ այրերը, որոնց ինչպէս ասում են՝ «ղուշն իր թևովը, օձն իր փորովը» հազիւ թէ կարող լինէին մերձենալ։ Զարմանալի՜ երկիր. որ կողմը նայում ես՝ աւերակ, որ կողմը նայում ես՝ տաճար; որ կողմը նայում ես՝ մատուռ և այր. բայց բոլորն էլ կործանուած կամ կիսակործան, անտէր, անխնամ, ամայի. հարիւրաւոր կրօնաւորների փոխարէն այժմ միայն մողէսներն ու չղջիկներն են ել և մուտ անում այդ սրբարան և արիւնաներկ վայրերում. ջերմ սրտերից բըղխած աղօթքների փոխարէն չարագուշակ բուի ձայնն է

միայն լսում. ակամայ յիշում ես բանաստեղծի ճշգրիտ նկարագրութիւնը.

«Որ կողմը նայես տխուր տեսարան,
«Որ կողմը դիտես աւերակ միայն
«Կամ հրաչալի սբ. եկեղեցեաց
«Կը տեսնես դու լոկ գմբէթը մնացած,
«Կամ մեծակառոյց ի հիմանց ի վեր
«Կիսաւեր կանգնած են ապարանքներ...»:

«Մայր Արաքսի» սրտայոյզ երգով մեր վերջին հրաժեշտը տուինք այս նուիրական սրբավայրերին, որ տրխուր յիշատակներ էին արթնացնում մեր սրտերում: Արաքսի փոխարէն մեր առաջը հոսում էր նրա կրտսեր եղբայրներից մէկը, Ձորագետը, որին վիճակուած էր ոչ պակաս տխուր դեր կատարել. քանի՞, քանի՞ սրտաճմլիկ տեսարանների է անխօս վկայ եղել, քանի՞, քանի՞ անգամ է բռնադատուել կուլ տալու իր հարազատ որդոց արիւնը. քանի՞, քանի՞ աւարառութեանց և սրածութեանց է տխուր հանդիսատես եղել՝ իր դարաւոր գոյութեան ընթացքում: «Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ պար չես բռնում մանկականդ»... Բայց զուր էինք Ձորագետից պատասխան սպասում. նա կարծես աւելի ու աւելի էլ վրդովւում, «մէջքը ուռցնում» և բարկանում մեզ, «խիզախ, անմիտ պատանի»ներիս վրայ, որ «վրդովում, նորոգում» ենք նրա բիւրաւոր ցաւերն ու վշտերը...:

Տխուր և տրտում քայլերս ուղղեցինք դէպի վեր. բարձրանում ենք մի սարսափելի ապառաժուտ ճանապարհով, ուր եթէ ոտքդ սահի՝ անդունդը կգլորուես. այդ քարերիցն էլ ազատուելով՝ հասանք լեռնադաշտի եզրին, որ կոչւում է Հակառակամուտ:

Հակառակամուտ. հետաքրքրական անուն և ճիշտ որ այդ անունն իր հետաքրքրական պատմութիւնն ունի: Այս տեղը համարւում է այն պատմական վայրը, ուր հռչակաւոր Գրիգոր Տուտէորդի եպիսկոպոսը գլորել տուեց Մինաս եպիսկոպոսին իր ջորիներով. պատճառը հետևեալն էր. Զաքարէ և Իւանէ սպասալարները, որ վրաց արքունի ծառայութեան մէջ էին և մեծ հռչակ էին ստացել այդ միջոցին իրենց քաջագործութիւններ-

բով՝ թուղթ են գրում Յովհաննէս կաթուղիկոսին և Լևոն թագաւորին, որ իրենց թոյլ տրուի զօրաբանակի մէջ ունենալ շարժական սեղան և խնդրում են նոյնպէս, որ սբ. Աստուածածնայ վերափոխման և սբ. Խաչի տօներն էլ ըստ վրաց ծիսի կատարել տան իրենք։ Թագաւորը և Դաւիթ կաթողիկոսը ժողով են գումարում Սիս քաղաքում 1204 թուին այդ խնդրի առթիւ և միասին խորհրդակցելով՝ ուրթը կանոններ են մշակում և ուղարկում Զաքարէ իշխանին. իսկ Յովհաննէս կաթուղիկոսը, որ Հռոմկլայումն էր նստում, ուղարկում է եկեղեցանման մի շարժական վրան, մարմարեայ սեղանով և այլ և այլ եկեղեցական սպասներով, նմանապէս և մի եպիսկոպոս Մինաս անունով, քահանաների, դպիրների, սարկաւագների հետ միասին, որոնք գալով Լոռի քաղաքը՝ ներկայանում են Զաքարէին և տալիս նրան կաթուղիկոսական ընծաներն ու հրամանագիրը։ Գալիս են նոյնպէս Դաւիթ կաթուղիկոսի ու թագաւորի դեսպանները և ներկայացնում ժողովի վճիռները։ Զաքարէն ուրախանում է իր ցանկութիւնն իրագործուած տեսնելով և հրամայում է շուտով ժողով գումարել նշանաւոր եկեղեցականներից՝ Սսի որոշումները վաւերացնելու և իրագործել տալու համար։ Ժողովին ներկայ են լինում արևելեան նշանաւոր բարձրաստիճան հոգևորականներ՝ ինչպէս օրինակ Հաղպատի եպիսկոպոս Գրիգոր Տուտէորդին, Իջևոյ Վրթանէս եպիսկ., Անւոյ աթոռակալ Սարգիս եպ., Կարուց Յովհաննէս եպ. և այլն. նոյնպէս և նշանաւոր վարդապետներ և վանահայրեր. ինչպէս օրինակ. Մխիթար Գօշ, Իգնատիոս, Ստեփաննոս, Վարդան և Դաւիթ քոբայրեցիք, Սանահնի վանահայր Յովհաննէս և բազմաթիւ գիտնական քահանաներ ու աշխարհական անձինք։ Երբ իմացուեց կաթուղիկոսի և թագաւորի հրամանի բովանդակութիւնը՝ ժողովականներից ոմանք ընդունեցին այդ, ոմանք մերժեցին, որից և խռովութիւն ծագեց և ժողովը ցրուեց՝ առանց մի որոշ եզրակացութեան գալու։ Այստեղ էր, որ Խաչատուր Տարօնեցին առաջին անգամ երգեց իր հեղինակած «Խորհուրդ խո-

ըին» տաղը։ Այդ ժողովից յետոյ Զաքարէ իշխանը Մինաս եպիսկոպոսին ուղարկում է Հաղպատ, որ նոր կանոնների համաձայն պատարագ մատուցանէ։ Գրիգոր Տուտէորդին լսելով նրա գալը, մարդիկ է ուղարկում նրա առաջ, որոնք բրերով ծեծում են նրա հետ եկած պաշտօնեաներին, իրեն Մինասին մահամերձ վիրաւորում, իսկ ջորիներն իրենց բեռներով ձորն են գլորում և սատակեցնում։ Մինասին այդ դրութեամբ տանում են Զաքարէի մօտ, որ սաստիկ բարկանում և սկսում է հալածել Տուտէորդուն, բայց սա կարողանում է ազատուել նրա ձեռքից՝ փախչելով Կարսայ կողմերը։ Ահա այդ պատմական անցքից յետոյ այս վայրը կոչւում է «Հակառակա մուտ», իսկ դրա շուրջն եղող հողերը մինչև այժմս էլ կոչւում են «հակառակայ հողեր»։

Այս աւանդական-պատմական վայրում փոքր ինչ հանգստանալով՝ շարունակեցինք մեր ուղին դէպի Սանահին. մառախուղը հետզհետէ սարերի գագաթներից ցած իջնելով՝ տարածւում էր և անձրև նախագուշակում։ Վերջին անգամ երեսներս յետ դարձրինք՝ մի անգամ էլ տպաւորելու մեր սրտերում այսօրուայ տեսածները։ Թէև ոսկեփայլ արևը ծածկուած էր մռայլ ամպերի տակ, բայց և այնպէս գեղեցիկ էր տեսարանը։ Ձորագետը կարծես զայրացած՝ իր կատաղի ալիքները խփում էր մերթ ժայռի կրծքին, մերթ հաստաբուն ծառերին, հարուածում էր այս և այն կողմը և անդադար փրփուրի կոյտեր արձակելով՝ առաջ էր գնում ոլոր-մոլոր ճանապարհներով։ Ալիքների կատաղի աղաղակներին արձագանք էին տալիս դատարկ այրերն ու կուսական անտառները։

Երբ հասանք Աստուածածնայ ձորի գլուխը, ամպերն աւելի խտացան, մառախուղը մօտեցաւ մեզ և մինչև «Խեչէրկուտ» հասնելն արդէն սկսեց անձրևել։ Անձրևը մեզ առանձին դժգոհութիւն չպատճառեց, որովհետև համարեա թէ մօտեցել էինք մեր բնակարանին. զոյգ-զոյգ կանգնեցինք և երգով ու երաժշտութեամբ մտանք գիւղը. ճանապարհին գիւղացիները սիրով ողջունում էին մեզ։ Մտանք վանքի պարիսպը. ար-

դէն կէսօրից անց էր։ Ուրախ տրամադրութեամբ ցած դրինք մեր ուսերից մաղախները, հանեցինք տրեխները և մեր սովորական ամենօրեայ զգեստները հագնելով՝ հանգստացանք և համեմատութիւններ էինք անում Հաղպատի և Սանահնի վանքերի շինութեան և ճարտարապետութեան վերաբերութեամբ։ Այսպիսով վերջացաւ մեր չորեքօրեայ ճանապարհորդութիւնը՝ թողնելով մեր սրտերում անջնջելի յիշատակներ։

17 Օգոստոսի, շաբաթ. Սանահին։

Զբաղուած ենք Հաղպատի դիտողութիւնները գրի անցնելով. աշխատում ենք վերջացնել մինչև ամսոյս 20-ը, որովհետև որոշուած է արդէն, որ այդ օրն անպատճառ ճանապարհ պէտք է ընկնենք դէպի Տփխիս։ Թէպէտ դժուարանում էինք բաժանուել այս սուրբ վայրերից և աշխատում էինք, որ մի քանի օր ևս կարողանանք այստեղ անցնել, բայց նշանակեալ օրից չէինք կարող ուշանալ, որովհետև մեզնից մի քանիսը վերաքննութիւն ունէին։

Սանահնի յիշատակն աւելի խորը տպաւորելու համար մեր սրտերում՝ ուխտել էինք, որ սբ. Աստուածածնայ տօնին անպատճառ ամենքս միատեղ այս պատմական սրբավայրում սբ. հաղորդութիւն ընդունենք։ Այսօր է հէնց այդ տօնի նաւակատիքը. առաւօտեան ժամերգութիւնից յետոյ խոստովանուեցանք և սպասում էինք պատարագի սկսուելուն։ Շուտով զանգերը հնչեցրին և սբ. պատարագն սկսուեց. պատարագիչն էր արժ. վանահայրը. մեր երգեցիկ խումբը երգում էր, մեզնից մի քանիսն էլ դպրութիւն էին անում։ Եկեղեցին լի էր ուխտաւորներով և տեղացիներով։ Դաստիարակի և վերակացուի հետ միասին ամենքս մեծ երկիւղածութեամբ մօտեցանք սբ. սեղանին և ճաշակեցինք Քրիստոսի արիւնն ու մարմինը՝ մեր սրտերում խոստանալով՝ կատարել Նրա պատուիրանները և հետևելով Նրա օրինակին՝ լինել համեստ, հնազանդ, բարեբարոյ, աշխատասէր և ուսումնասէր։ Ճաշին մեզ սեղանակից

էին՝ սրբազան Վարդան արք-եպիսկոպոսը, արժ. վանահայրը, գիւղի քահանան և Որնակի ծխատէրը, որ եկել էր Սանահին խոստովանուելու, որպէս զի միւս օրը պատարագ մատուցանէ իրենց գիւղում։ Ուրախ և համեստ զուարճութեամբ անցկացրինք այս օրը։

18 Օգոստոսի, հինգշաբթի։

Այսօր սովորականից վաղ արթնացանք և՝ վերկացանք, որովհետև սբ. Աստուածածնայ տօնն է. շտապեցինք երեսներս լուանալու աղբրի սառնորակ ջրով, որպէս զի առաւօտեան ժամերգութեանը ներկայ լինինք։ Բայց մեր շտապելը զուր էր. գիւղի կանայք ու աղջիկները մի մի կուժ ուսերին՝ հաւաքուել էին աղբրի գլխին. մէկը գալիս էր, միւսը գնում. հազիւ էր մեզ էլ մէկ մէկ հերթ հասնում։ Մի կերպ լուացուեցինք և շտապեցինք եկեղեցի։ Եկեղեցին հետզհետէ լցւում է ուխտաւորների բազմութեամբ. պատարագից առաջ հանդիսաւոր երգեցողութեամբ վանքի սրբութիւնները դուրս բերին խորանից և կարգով բազմեցրին բեմի վրայ։ Պատարագն ու խաղողի օրհնութիւնը վերջացաւ. ուխտաւորները մի քանի հատիկ օրհնած խաղողից վերցնելով՝ դուրս եկան և սկսեցին մորթել ու եփել իրենց բերած մատաղացուն և բաժանել։ Ուխտաւորների մեծամասնութիւնը մերձակայ գիւղերից լինելով՝ այսօր և եթ վերադարձան իրենց բնակավայրերը։ Պատարագի վերջը, երբ քահանան կարդում էր սբ. աւետարանը, մի կին եկաւ և չոքեց քահանայի առաջ, յետոյ քահանայի հետ մտաւ խորանը և վերջինս էլ քահանայական զգեստ ու փիլոն չմնաց, որ չածէր նրա վրայ. մեր հարցմանը՝ թէ ի՞նչ է նշանակում այդ, պատասխանեցին թէ այդ կինը «հրեշտակակոխ» է եղել և այդպիսով պէտք է բժշկուի...։

Ճաշից յետոյ, երբ ուխտաւորներն արդէն ցրուել էին, մեզնից շատերն ըստ սովորականին, գաւթի նըստարանների վրայ նստած՝ գրում էինք. ներս մտաւ մի հասակաւոր կին և տեսնելով մեր պարապմունքը՝ զարմանքով ու հետաքրքրութեամբ հարցրեց թէ ի՞նչ ենք

գրում. մեզնից մէկը պատասխանեց. երբ նա իմացաւ, որ մեր ճանապարհորդութիւնների մասին ենք գրում, ասաց. «ինչ որ լաւն է՝ էն կգրես, ինչ որ վատն է՝ էն մի գրիր, որդի»։ Երբ մեզնից պատասխան ստացաւ՝ թէ ցայժմ գիւղացիներից բացի յարգանքից ու պատուից ոչինչ վատ բան չենք իմացել, շարունակեց. «Աստուած տայ էդպէս լինի. Աստուած տայ, որ ուրախ սրտով գընաք մեր երկրից»։

19 Օգոստոսի, Երէկուանի։

Մեռելոցը մեր եկեղեցու աւանդական ծէսերից մէկն է, որ հաւատարմութեամբ պահպանել է թէ մեր եկեղեցին և թէ ժողովուրդը. ամեն մի պարտաճանաչ հայ իր պարտաւորութիւնն է համարում մեռելոց օրը օրհնել տալ իր հին ու նոր ննջեցելոց գերեզմանները։ Որքան որ մարդկային սիրտը, ժամանակի ընթացքում, բուժւում է մերձաւոր սիրելի անձանց մահուամբ պատճառած խորին ու ծանր վշտերից, այնուամենայնիւ մեռելոցի օրը յիշւում են շատ վաղեմի վշտեր ու արտասուքներ. ահա այդ վերանորոգուած վշտերից թեթևանալու և ննջեցեալների վերջին մնացորդներին յարգանք մատուցանելու համար՝ օրհնել ենք տալիս ննջեցելոց գերեզմանները և «Աստուած ողորմի հոգուն» սրտասանում՝ մեր վշտացած սրտի խորքերից։

Եթէ խորին վշտով համակուած և գլխներս կորացրած կանգնում ենք ամեն մէկս մի առանձին հողակոյտի առաջ և ողբում մեր ծնողի, եղբօր, քրոջ, ազգականի, ընկերի ու բարեկամի յիշատակը, որքան առաւել է լինում վիշտը և ընդհանուր, երբ ամենքս միասին կանգնում ենք մի որոշ և անշուք դամբարանի առաջ, որի մէջ ամփոփուած աճիւնը չէ պատկանում մեր ազգականին կամ բարեկամին, այլ այնպիսի մի պատմական անձին, որի անունը դարից դար յիշւում և աւանդւում է սերունդէ սերունդ. այսպիսի դամբարանը մեզ մի անհատի կարճատև կեանքի հանգամանքները չէ յիշեցնում միայն, այլ ամբողջ պատմական դէպքեր և

ազգի ու հասարակութեան համար ճակատագրական իրողութիւններ, անջնջելի և անմոռանալի գործեր։

Գլխարկներս ձեռքներիս, գլուխներս խոնարհած, շատերիս աչքերը արցունքով լի և տխուր հայեացքով կանգնած ենք երկու արքայական անշուք և խոտերով ծածկուած դամբարանների առաջը. Որքան տխուր յիշողութիւններ. որքան դառն է ճակատագրի խաղը. այն անձը, որ մի օր ամբողջ երկիր էր կառավարում, որի մէկ խօսքը բաւական էր ամբողջ ապարաններ և փառաշէն տաճարներ կառուցանելու համար, որի համար ամենքը պատրաստ էին զոհել իրենց ինչքն ու անձը, այսօր ամենքից մոռացուած, ամփոփուած է իր շինած հրաշակերտ եկեղեցու պատի տակ. արշինաչափ բարձրութիւն ունեցող խոտն ու ճինճարը թագցրել են իրենց մէջ դամբարանի տապանաքարը, որի վրայ դրոշմուած է արքայի անունը։ Գուդարաց աշխարհի արքայ Կիւրիկէի և նրա ամուսին Թագուհու գերեզմաններն են, որ օրհնել ենք տալիս։

Այսօրուայ տխուր յիշողութիւնները և դրանց առիթ տուող ննջեցեալների պատմական գործերը զբաղեցրին մեզ մինչև ճաշ։ Ճաշից յետոյ մի փոքր հանգստացանք և սկսեցինք պատրաստութիւններ տեսնել վաղուան համար։ Վաղը պէտք է վերջին հրաժեշտը տանք Սանահնին և ուղևորուենք դէպի Տփխիս. այս հանգամանքն ևս առիթ տուեց մեր տխուր տրամադրութեան շարունակուելուն։ Երկու ամսուայ ընթացքում այնպէս սերտ սիրով էինք կապուել այս սուրբ վայրերի հետ, որ դժուար էր թւում մեզ նրանցից բաժանուիլը։ Տրխուր էինք, որ պէտք է թողնէինք այս գեղեցիկ տեղերը, որոնց հետ կապուած էին մեր ամենալաւ յիշողութիւնները. ով ապրել է գիւղում, ով զգացել է գիւղական անպաճոյճ, պարզ կեանքի քաղցրութիւնը, ով ընդունել է գիւղացու սրտաբուղխ հիւրասիրութիւնը, ով ապրել է բնութեան այս հրաշալիքների գրկում, զմայլել նրա գեղեցկութեամբ, դժուար թէ յօժարութեամբ բաժանուի այդտեղից, նա մանաւանդ երբ այդ վայրերի ամեն մի անկիւնը անցեալ փառքի յիշողութիւն-

ներն է արթնացնում, երբ ամեն քայլափոխում տեսնում ես նախնեացդ մեծագործ և հոյակապ շէնքերի աւերակները։

Տխուր էինք, որովհետև պէտք է թողնէինք հայրենիքի գեղապանծ լեռներն ու դաշտերը, հովիտներն ու ձորերը, խիտ, կուսական անտառներն ու խոխոջուն գետակներն ու առուակները. էլ չպէտք է խմէինք նրա սառնորակ աղբիւրների քաղցրահամ ջրերը, չպէտք է ծծէինք նրա առողջարար և անոյշ օդը. այլ ևս չպէտք է տեսնէինք հայրենեաց լռիկ ու մնջիկ լիշատակարանները, նախնեաց սառը շիրիմներն ու հրաշակերտ ձեռագործները...։

20 Օգոստոսի, երեքշաբթի։

Երկնքի ընդարձակ տարածութեան վրայ ալիքների նման լողում էին պարզ ու սպիտակ ամպերը. արեւը վաղուց արդէն բարձրացել էր հորիզոնից և իր ոսկեփայլ ճառագայթները սփռել ամենայն կողմը. վանքի եկեղեցիների գմբէթների ոսկէգոյն խաչերը փայլփլին էին տալիս և նայողի աչքը խրտղրտեցնում։ Գիւղն էլ վաղուց արթնացել էր. արդէն ծխում էին գիւղացիների թոնիրներն ու օջախները, որոնց գլխին կանգնած համեստ հարսներր կերակուր էին պատրաստում։ Իւրաքանչիւր գիւղական խրճթի առաջ եղած կալերից ուրախ երգեր էին հնչում. կալսողները խրախուսում, եռանդ էին ներշնչում կալում կամներին լծուած ձիաներին ու եզներին. «կա՛լ արա, դարման արա՛, եզը ջան. դարմանը քեզ, ցորենն ինձ արա՛, եզը ջան»։

Վանքի պարիսպների շրջանակումն էլ անսովոր կենդանութիւն և իրարանցումն էր տիրում. մէկը բեռն էր կապում, միւսը ձիու վրայ բարձում, երրորդը արկղները միմեանց յարմարացնում, չորրորդը պարաններ բերում, հինգերորդը հակները համարում և այլն. մէկն էլ այդ բոլորին զանազան պատուէրներ ու հրահանգներ էր տալիս։ Այդ բոլորը մեր ճանապարհորդա-

կան պատրաստութիւններն էին և հրահանգներ տուողը մեր վերակացուն էր։

Մեր բնակարանումն էլ վաղուց արդէն ամենքը ոտքի էին. վերջին անգամ վանքի աղբիւրի սառնորակ ջրով երեսներս լուանալուց յետոյ՝ սկսեցինք մեր պատրաստութիւնները տեսնել. մէկը իր գրքերն էր կապում արկղի մէջ, երկրորդը մախաղը կարգի՛ բերում, երրորդը զգեստները դարսում, չորրորդն իր սիրելի, բայց այժմ խղճալի դարձած տրեխների դարդն էր քաշում և ծակուած տեղերը կաշուի կտորներ դարսում, հինգերորդն յիշատակարանն էր պատրաստում ճանապարհի համար և մատիտի ծայրը սրում, վեցերորդը գլխարկի արևակալը կպցնում և այլն. մէկ խօսքով ամենքս բանի էինք։

Մեր բեռների համար ընդամենը 7 ձի էր հարկաւոր մինչև Օձուն գիւղը, բայց դարձեալ մի ձի պակասեց. «տիրացու Ջան, դիմում է գիւղացիներից մէկը մեզ, մի թեթև բեռն ա մնացել, համա ձի չի ճարւում, մի հարցրէք վրրժապետից, ես մի ղօչաղ էշ ունիմ, կլի՞ որ նրա վրայ բարձենք»։ Այդ մնացած բեռն էլ «ղօչաղ» էշի վրայ բարձելով ճանապարհ ձգեցինք։

Երկու ժամից յետոյ մենք էլ ամենքս պատրաստ՝ սպասում էինք դաստիարակի հրամանին. ճիշտ ժամի 9-ին հրաման տրուեց զոյգ զոյգ կանգնելու և դաստիարակը մի քանի ջերմ խօսքերով յայտնեց, որ թողնում ենք այս սրբազան վայրերը. հաղորդեց նոյնպէս մեր այս ճանապարհորդութեան ծրագիրը։ Ապա մտանք Ամենափրկիչ եկեղեցին և ամենքս էլ մեծ երկիւղածութեամբ ու պատկառանքով շրթունքներս մօտեցրինք Մեծ Հայրապետի, Սքանչելագործ սբ. Գրիգոր Լուսաւորչի և սբ. Յովհան Օձնեցու աջերին. վերջին անգամ կարօտով նայեցինք սբ. տաճարի ամեն մի անկիւնը՝ մեր սրտերում անջնջելի տպաւորելու համար. վերջին անգամ հրաժեշտ տուինք լուռ արձաններին, սառը շիրիմներին ու խաչքարերին։ Սրբազան Վարդան Արք-եպիսկոպոսը շուրջառը վրան ձգած՝ սբ. մասունքով պահպանիչ ասաց մեր գլխին և տպա շարունակեց. «Դուք էք ազգի ապագայ յոյսը, աշխատեցէք և եղէք ազգի հաւատարիմ զաւակ-

ները. ուսման մէջ յառաջադիմեցէք. թէ այժմեանից ուսում չառնէք և չպատրաստուէք մեր ազգի համար, էլ ապագայի վրայ յոյս չենք կարող ունենալ։ Եղէք Ներսէս Ե. կաթուղիկոսի արժանաւոր զաւակները։ Տէր ընդ ձեզ. բարով եկաք, բարով էլ գնաք. Աստուած ձեզ բարի ճանապարհ տայ. ողջ լինէք. օրհնեալ եղերուք, ամէն»։ Շնորհակալութեամբ ծերունազարդ Սրբազանի աջը համբուրելով՝ դուրս եկանք եկեղեցուց։ Բակում սպասում էին մեզ գիւղացիներից շատերը. չէր կարելի առանց զգացուելու լսել գիւղացիների ջերմ բարեմաղթութիւնները և սրտաբուղխ «երթաք բարով»ը։ Նրանք ցաւելով ասում էին. ձեր գնալը զգալի կլինի մեզ համար, ճանապարհորդութիւնների ժամանակ երբ դուք հեռանում էիք այստեղից, կարծես թէ գիւղը դատարկւում էր. օրուայ ծանր աշխատանքից յետոյ ձեր երգերի քաղցր ձայների տակ էինք հանգստանում. որքան ժամանակ է, որ կարգին խմբական երգեցողութիւն չէինք լսել եկեղեցում. դուք որ եկաք, կիրակի օրերը մեզ համար մեծ տօնի կերպարանք ստացան... և այլն։ Մենք շնորհակալութիւն էինք յայտնում և ցաւում, որ երկար չենք կարող մնալ։ Գիւղացին առհասարակ չէ կեղծում, սրտի զգացածն է միայն խօսքով արտայայտում. միայն ցաւելով պէտք է ասել, որ այդ գովելի վարքն ու բարքը մեծ և քաղաքից մօտ եղած գիւղերում հետզհետէ անյայտանում է. նախնի պարզ և համեստ կենցաղավարութեան տեղ բուն են դնում շռայլութիւնը, նորաձևութիւնը և այլ քաղաքակրթուած ախտեր։

Վերջին անգամ հրաժեշտ տալով մեզ շրջապատողներին, երաժշտութեան և քայլերգի որոտընդոստ հընչիւններով դուրս եկանք վանքի պարսպից և գիւղի միջով ուղևորուեցինք դէպի ձորի գլուխը. բոլոր գիւղացիները, մեծ թէ փոքր, դուրս էին եկել իրենց կալերը և յարգանքով ողջունում և ընդունում էին մեր «մնաք բարով»ները։ Գիւղից դեռ չդուրս եկած՝ մի ձայն լսեցինք և յետ նայելով տեսանք, որ եռևներից վազում է գիւղի քահանան, ծեր Տէր Յովհաննէսը. նա փարաջան մի կողմը ձգած, թևերը վեր քաշած, գլխին մի թե-

թեւ աղլուխ կապած, արեւի կիզիչ ճառագայթների տակ կալ էր կալսում և մեզ տեսնելով՝ գալիս էր հրաժեշտ տալու։

Տէր Հայրը չնայելով իր հասակին, նա մօտ 70 ամեայ ծերունի էր, դեռ չէր կրում իր վրայ ծերութեան կնիքը. նրա մազերը դեռ ևս բոլորովին չէին սպիտակել. նրա դէմքին նայողը 45 50 տարեկան կկարծէր։ Թէև մէջքը մի փոքր ծռուել էր, բայց կնճռոտած ճակատը և արեւից այրուած ու սևացած երեսը համակրելի էր. դէմքն օժտուած էր հայկական քթով. ձեռքերը ջլոտ և ոսկրակազմ էին։ Նա իր որդու հետ միասին մօտենալով մեզ՝ «պահպանիչ» և «Տէր ուղղեա» ասաց և բարի ճանապարհ մաղթեց մեզ. երբ համբուրում էինք ծերունի քահանայի աջը և հեռանում, նրա աչքերի մէջ արտասրներ երևացին։ Մենք նորից հնչեցնելով մեր քայլերգը, շարունակեցինք մեր ուղին և շուտով հասանք ձորի գլուխը, որտեղից մի վերջին անգամ էլ հայեացք ձգեցինք վանքի ու գիւղի վրայ և սկսեցինք ցած իջնել դէպի ձորը. հետզհետէ ծածկուեցան մեր աչքից վանքը, գիւղը, անտառապատ լեռները և մենք մեզ զգացինք դէպի ձորն իջնող ժայռերի մէջ։ Թէպէտ շատ անգամ էինք իջել ու բարձրացել այս ժայռոտ քարկապները, բայց երբէք այնքան գեղեցիկ չէր թուացել մեզ, ինչպէս այս անգամ։ Այս նեղ շաւղի դժուարագնացութեան հետ վաղուց արդէն հաշտուած լինելով՝ արագ ցած իջանք և անցնելով Նանայի կամուրջը՝ հանգստացանք Ձորագետի միւս ափին գտնուող ընկուզենու ստուերում։ Այդ միջոցին դաստիարակը մի փոքր յետ էր մնացել և դիտում էր կրկին, արդէն մի քանի անգամ խմբովին դիտած, Նանայի հրաշակերտ, հնադարեան և կամարակապ կամուրջը, որի լայնածաւալ կամարի տակով ահռելի դղրդիւնով անցնում վազում է Ձորագետը կամ Դէբէտը։ Մենք ուզեցինք առիթից օգուտ քաղել և խորհրդակցելով՝ վճռեցինք ուրախ ցոյցերով ընդունել նրան. հէնց կամուրջն անցաւ նա թէ չէ, ամենքս «կեցցէ» աղաղակներով ու հրացանաձգութեամբ դիմաւորեցինք նրան և ուրախ բացագանչութիւններով մեր

մէջ առանք.. : Կէս ժամի չափ ընկուզենու ստուերում հանգստանալուց և զուարճանալուց յետոյ՝ դիմեցինք մօտիկ գտնուող, մեր դպրոցի նախկին սան, պ. Միխակ Արղութեանի այգին, ուր Սանահնի արժ. վանահայր Գեղամ վարդապետը հրաժեշտի ճաշ էր պատրաստել մեզ համար:

Ձորագետի ափերին եկ տարածուած Սանահնի այգիները. գիւղացիների արդեանց աղբիւրներից մէկն էլ այգին է. բայց մեծ մասամբ խնամքով չեն պահւում. պտղատու ծառերից իրենց քանակութեամբ առաջին տեղն են բռնում դամբուլի, ծիրանի, տանձի, խնձորի, դեղձի և թթի ծառերը. խաղողը մինչև սեպտեմբեր հազիւ է հասնում և այնքան էլ քաղցր չէ լինում. այգու տէրերը շահւում են այդ պտուղները և բանջարեղէններ ծախելով. գինի շատ չէ լինում և թթու է:

Նստեցինք այգու մեծ թթենու ստուերի տակ. սփռոցի տեղ գետնի վրայ տարածեցինք ընկուզենու լայն տերևները և վրան դարսեցինք հաց ու պանիրը և այլ Աստուծոյ տուած կերակուրները. այդ միջոցին յանկարծ մեր առաջը տնկուեց մի կիսամերկ ծերուկ և դաստիարակի առաջը դրեց մի շարան թարմ ձուկը «փէշքաշ ա» ասելով. նա հագած ունէր մի վարտիկ և մի պատառոտած չուխայ, որի տակից երևում էր նրա յաղթանդամ մարմինը. գլխին հագած ունէր մի հնացած, կարմիր տաճկական ֆէս: Դա Սանահնի դալլաքն էր և այդ ձուկն էլ որսալով Ձորագետում՝ պատուեց մեզ: Ճաշը բաւականին ուրախ անցաւ. փորած վարունգը, որ ծառայում էր գինու բաժակի տեղ, մի քանի պտոյտներ արաւ, որի միջոցին անպակաս էին կենացներն ու բարեմաղթութիւնները: Երբ դաստիարակի կենացն առաջարկուեց, նա բաժակ ի ձեռին մօտաւորապէս հետևեալն արտասանեց. «Սիրելի՜ սաներ, սրտանց շնորհակալ եմ ձեզնից. դուք մեր այս առաջին դպրոցական ճանապարհորդութեան ընթացքում վարուեցիք գիտակցօրէն և ամեն տեղ ձեզ լաւ պահեցիք, թէպէտ ձեզնից մի քանիսը սկզբում, կարգապահութեան ընտելացած չլինելով, մի փոքր խանգարում էին ընդհանուր

դիսցիպլինան, բայց նրանք էլ շուտով զգաստացան և իրենց ընկերների բարի օրինակին հետևեցին։ Ճանապարհորդութեան և նա մանաւանդ խմբովին ճանապարհորդութեանց միջոցին ամենառաջին պայմանը յաջող կերպիւ նպատակին հասնելու համար՝ ընդհանուր կարգապահութիւնն է. եթէ կարգապահութիւնը խանգարուի և ամեն մէկն ուզենայ իր ցանկացածն անել, ոչինչ չի դուրս գայ։ Ձեր կարգապահութիւնն անհրաժեշտ էր նաև մի ուրիշ տեսակէտից. դուք շրջում էք հայ ժողովրդի գիւղական դասակարգի մէջ, որ որքան բարեսիրտ և անկեղծ է, այնքան էլ տգէտ և յետ մնացած. ահա դրանք պէտք է ձեր կարգապահութիւնը տեսնելով՝ օրինակ առնէին ձեզնից, որովհետև տգէտ և անզարգացած անձի վրայ ամենից առաւել օրինակն է ազդում. ես անկեղծ կերպով հաւատացած եմ, որ եթէ ձեր ընդհանուր կարգապահութիւնը չլինէր, դուք մեր հայրենակից գիւղացիների յարգանքը չէիք կարող վայելել այն չափով, որչափով որ բարեբաղդաբար վայելեցիք ամեն տեղ։ Դուք ձեր վայելուչ դիրքով, դէպի հայկական սրբութիւններն ու տաճարները տածած պատկառանքով՝ ամեն տեղ գրաւեցիք գիւղացոց համակրութիւնը. նրանք տեսնելով ձեր, այսպէս ասած, ուսում առած քաղաքացիների վերաբերմունքը դէպի տեղական սրբութիւնները, աւելի ևս խրախուսւում էին իրենց աւանդական և կարծես թէ բնազդման շնորհիւ տածած երկիւղածութեան և պատկառանքի զգացմունքների համար։

Այս ճանապարհորդութիւնների միջոցին դուք առիթ ունեցաք անձամբ տեսնելու և շօշափելու այն սրբազան վայրերը, որոնց անունները սովորել էիք հայոց և եկեղեցական պատմութեան դասընթացում. այն անունները, որ բիւրաւոր ուրիշ անունների հետ ի միասին իբրև լոկ բառեր էին ներկայանում ձեր յիշողութեան մէջ, այժմ մարմնացած և կենդանի պատկերներ դարձան ձեզ համար և երբէք չէք մոռանայ. այն պատմական անձանց գործերը, որոնց դամբարանները ձեր աչքով տեսաք, այլ ևս չեն ջնջուի ձեր յիշո-

զութիւնից։ Այժմ ձեր հայրենիքի մի մասի, Գուգարաց աշխարհի մասին խօսելիս կամ կարդալիս ձեր աչքի առաջ չի ներկայանայ քարտէզի մի անկիւնը, այլ իսկական հողն ու լեռը, գետն ու դաշտը, գիւղն ու վանքը, գիւղացին և իր քրտնաթոր աշխատանքը։

Այս ճանապարհորդութիւնն առաջին կազմակերպուած դպրոցական ճանապարհորդութիւնն է Կովկասում. ուսանող ժամանակս ես մասնակցել եմ այդպիսի ճանապարհորդութեանց Եւրոպայում. ճիշտ է այդ միջոցին ոտքերս քայլում էին եւրոպական հողի ու սարի վրայ, խմում էի նրանց սառնորակ աղբիւրների ջրերը, զուարճանում էի այնտեղի բնութեան հրաշալիքներով, սակայն սիրտս ու հոգիս միշտ պտտում էր իմ հայրենիքի սարերում ու դաշտերում, միտքս միշտ մեր հայրենեաց պատմական յիշատակարաններով էր զբաղուած. ամեն անգամ հառաչանք արձակելով մրմնջում էի. ախ, արդեօք կգա՞յ մի օր, որ ես էլ իմ սաների հետ այսպիսի կազմակերպութեամբ շրջեմ մեր հայրենիքի բարձրաբերձ լեռները, ծաղկալից դաշտերը, անդնդախոր ձորերն ու կանաչազարդ հովիտները. արդեօք կարժանանամ առաջնորդելու հայ պատանիներին դէպի իրենց հայրենի սրբութիւններն ու պատմական վայրերը...։ Ուսանողական այդ իղձս կատարուեց. առաջին փորձն եղաւ և անկեղծ շնորհակալ եմ ձեզնից, որ դուք էլ ձեր լաւ վարմունքով նպաստեցիք առաջին փորձի յաջող ելք ունենալուն։ Տա Աստուած, որ երկրորդ փորձն աւելի արդիւնաւոր լինի և աւելի յաջող հետևանքներ ունենայ. տա Աստուած, որ ձեզնից շատերն էլ ապագայում իրենց սաներին առաջնորդեն դէպի այս սրբազան յիշատակարանները...։

Դաստիարակն իր խօսքը վերջացրեց թէ չէ. օդը դղրդաց մեր լիաբուռն շնորհակալութեանց արտայայտութիւններով։ Մեզնից ամեն մէկն ուրախ էր, որ մասնակցել է այս գործի սկզբնաւորութեանը։

Ժամի 3-ն էր, որ ճաշը վերջացրինք։ Այդ միջոցին Ուզունլարի կողմից մի կոյտ մոխրագոյն ամպեր քամուցը քշուելով՝ դիմում էին դէպի մեզ. շտապեցինք

կանապարհ ընկնելու։ Շնորհակալութիւն յայտնելով այդու տիրոջը, մեզ հիւրասիրող արժ. վանահօրը, այդուց դուրս եկանք և քայլերս ուղղեցինք դէպի Օ-ձուն. գնում ենք Ձորագետի ափով, այգիների միջով։

Ձորագետի ալիքներն սկսում են կամաց կամաց պղտորուել, նշանակում է արձրևն արդէն սկսուել է բարձրում. գետը կարծես բարկանալով այդ հանգամանքից՝ կատաղել է և լայն բացած բերանով մռնչալով ու գոչելով առաջ է շտապում՝ սպասելով երկնքից թափուած ջրերին, որ իր ալիքներն աւելի ուռցնելով, նոր ոյժերով կռիւ մղէ իրեն շրջապատող լեռների հետ, որոնք սեղմելով նրան իրենց ժայռոտ և նեղ կրծքում, զսպում են նրա անվերջ քմահաճութիւնները։ Նա անդադար հարուածներ է տալիս այս ու այն կողմը, գալարում, մոնչում է ինչպէս մի վիշապ և հասնելով տափարակին՝ հազիւ հանդարտւում է և ինչպէս կապանքներից ազատուած մի բանտարկեալ, իրեն ազատ զգալով՝ աշխատում է տարածել թևերը և ըստ կարելոյն ընդարձակ տեղ բռնել։ Ամպերն սկսեցին գոռգոռալ. նրանց խուլ աղաղակն երկար արձագանք գտաւ խոր ձորի մէջ. անձրևի կաթիլները քանի գնում խոշորանում և սկսում էին աւելի արագութեամբ թափուել։ Մէջքերիս կապած վերարկուներս յետ անելով՝ հագանք և առանց ուշադրութիւն դարձնելու տեղատարափ անձրեւի վրայ՝ շարունակեցինք մեր ճանապարհը։ Ճանապարհին պատահում էին մեզ սարուորներ, որ տաւարն առաջ արած, փալաս, փուլուս, տաշտեր, պղինձներ և այլն էշերի ու եզների վրայ բարձած՝ վրան էլ փոքրիկ երեխաներին նստեցրած՝ սարից դիւղն էին իջնում։

Քամին սկսեց փչել և ամպերը դէս ու դէն ցրուել. անձրեւը դադարեց, երկինքը պարզուեց։ Արեւն իր բոլոր ոյժը հաւաքելով՝ պայծառ կերպով լուսաւորեց սարերի գագաթները. մենք բարձրանում էինք դէպի վեր՝ լեռնային բաւականին դժուարագնաց շաւիղներով, մինչև որ հասանք ձորի գլուխը և խաչքարի մօտ մի փոքր հանգստանալով՝ շարունակեցինք մեր

ճանապարհը դէպի գիւղը։ Նորից սկսեց անձրեւել և մենք էլ կրկին վերարկուների մէջ փաթաթուելով՝ հասանք «կնդարար» աղբիւրը, սառը ջուր խմեցինք և դիմեցինք ուղիղ դէպի «խաչգունդ» եկեղեցին. դիտեցինք, ներկայ եղանք ժամերգութեանը, նկարագրեցինք կոթող արձանը և արդէն մութն ընկել էր, երբ դիմեցինք Տէր-Յովհաննէս քահանայի տունը և տխորժակով վայելելով հաց ու պանիրը՝ պառկեցինք մեր խոնջացած անդամներին հանգստութիւն տալու։

21 Օգոստոսի, չորեքշաբթի. Ուռուս։

Դեռ լոյսը չբացուած, անթիւ ու անհամար երկնային լապտերները ծփում էին երկնից կապուտակ և անսահման եթերի մէջ. լուռ էր բնութիւնը և բաւականին ցուրտ։ Ժամի 3 էր, որ վեր կացանք և սկսեցինք մեր իրեղէնները դարսել ֆուրգոնում, որպէս զի արևը դեռ չծագած ճանապարհ ընկնենք. աստղերն սկսեցին հետզհետէ անյայտանալ. մութն իբրև մի քող քիչ քիչ սկսում էր բարձրանալ երկրի երեսից և վերջապէս արևելքը բոցավառուեց և լերանց միգապատ գագաթները սկսեցին լուսաւորուել։ Ժամի 4½ էր արդէն, երբ մեր ֆուրգոնները տեղից շարժուեցին։ Սանահնի վանահայր Գեղամ վարդապետը, որ ուղեկցել էր մեզ մինչև այստեղ, հրաժեշտ տուեց և ինքն էլ ձիով ուղևորուեց դէպի սբ. Էջմիածին, որովհետև մի քանի օր առաջ այնտեղից «թուանքչի» էր եկել՝ հայր սուրբին տանելու՝ մի ինչ որ գործի համար։

Դուրս եկանք գիւղից և ֆուրգոններն անցնում են հնձած արտերի միջով. արևի ծագմանը դիմաւորեցինք Ներսէս Շնորհալու սրտառուչ «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար».. հոգենուագ երգով. տպաւորութիւնն ու մեր ներքին զգացմունքն աննկարագրելի էր...։ Ի՞նչ թարմութիւն է բուրում դաշտում. արտերը հնձուած են և ոչ մի ծաղիկ չէ երևում, բայց այնուամենայնիւ բուրում է, զով և կենսատու հով է փչում։ Արևի ճառագայթները լերանց բարձր կատարները ոսկեզոծելով՝

հետզհետէ աւելի ցածրանում, տարածւում են ընդարձակ դաշտերի վրայ և վերջապէս թափանցում են նաև անդնդախոր ձորերը։ Հեռու, դէպի արևելք, երկար ու բարակ ծուխեր են բարձրանում և երևում է մի մեծ գիւղ. դա սքանչելի դիրք ունեցող Դսեղն է, Լօռու քաջերի հայրենիքը։ Ահա մեր առաջն են Իգահատն ու Արդուին. ոչխարի հոտերն արածում են շաղաթաթախ խոտը, իսկ փոքրիկ հովիւները ցնցոտիներով ծածկուած նստոտել են խոնաւ և ցուրտ գետնի վրայ և հետաքրքրքրութեամբ նայում են մեզ։ Գիւղերումն էլ արդէն ըսկըսուել է շարժումն ու կենդանութիւն. կանայք ու աղջկերքը պղնձեայ մեծ սափորները կամ փայտեայ կուժերն ուսերին և կիսամերկ տղայք հաւաքուել են գիւղից դուրս գտնուող աղբիւրի գլխին։ Այդ երկու գիւղերն էլ ծածկուեցան մեր աչքից. անցնում ենք Ձորագետի աջ ափով. ձորի ափին հետզհետէ երևում են Դսեղ, Ծաթեր, Ձորագեղ, Կուրդան գիւղերը, կարծես թէ վերջին հրաժեշտն առնելու մեզնից, որոնց հետ մենք կապուած ենք սիրուն ու անմոռանալի յիշատակներով։ Անցնում ենք Մղարթ գիւղի տակով և հեռւում երևում է գեղեցկանիստ Վարդաբլուրը. մօտենալով Կողէս յունաբնակ գիւղին՝ աւելի պարզ է երևում Վարդաբլուրն իր շրջակայ գիւղերով. Գիւլագարակ, Հոբարձի, Գեառգեառ։ Այստեղ մեզ պատահեցին հայ զինուորներ Երևանեան գնդից. սրանք ամառը Ջալալօղլի լինելով՝ մասնակցել էին զօրախաղերին, որ տեղի էին ունեցել երէկ և շարունակւում էին այսօր ևս. հեռուից լսւում էին թնդանօթի խուլ ձայները։ Երբ բլուրը բարձրացանք՝ ամբողջ զօրաբանակը մեր աչքի առաջն էր. անսովոր լինելով այս տեսարանին, մի բոպէ չգիտէինք թէ որ կողմը նայենք։ Միմեանց դէմ կանգնած են երկու կարգ զինուորներ և կռւում են. անդադար հրացան են արձակում. մի կողմը հետզհետէ տեղի է տալիս, իսկ միւսը առաջ է գընում. ամեն մի կողմն աշխատում է յարմար դիրք բռնել՝ յաղթութիւն տանելու համար։ Հակառակ կողմը տեսնելով, որ թշնամին յարմար դիրք բռնեց՝ առաջ է դիմում և սկսում պատերազմը. երկու կողմերն էլ իրար

են խառնուում։ Անընդհատ արձակուող թնդանօթներին արձագանք են տալիս լեռները. ծուխն ամպի պէս շարունակ վեր է բարձրանում. շարունակ լսւում են հրացանների ճայթիւնը և սրերի շառաչիւնը. զինուորները քիչ քիչ առաջ գնալով՝ շարունակ նստում, պառկում և կամ կանգնած են նշան դնում։ Պողպատեայ սուրները փայլում են արեգակի ճառագայթների տակ և նայողի աչքերը խըտղտեցնում։ Զօրքի մի կողմը թուլանալով՝ իր վերջին ճիգն է թափում և փախուստ տալիս. ուրմ. բաձիգ զինուորներն ամեն ջանք գործ են դնում, որ թնդանօթները թշնամու ձեռքը չձգեն. վերջն ուժասպառ լինելով՝ հեծելազօրքն են օգնութեան կանչում, բայց հակառակորդների հեծելազօրն էլ վրայ հասնելով՝ սրանց մէջ է կռիւը տաքանում։ Յաղթուողները դէպի Լօռու բերդն են դիմում, յաղթողներն էլ նրանց յետևից են վազում. թշնամին աշխատում է վերցնել բերդը. ներսից պաշտպանուում են։ Բերդի պարիսպների տակ սպիտակին է տալիս գնդապետի վրանը։

Այս մեզ համար անսովոր և հետաքրքրական տեսարանը բաւականին կբաղեցրեց մեզ։ Սա միայն խաղ էր. բայց որքան սարսափելի պէտք է լինի իսկական պատերազմը. մտաբերելով արդէն՝ մարդուս ակամայ սարսուռ է պատում. չէ՞ որ այդ աչք խտղտեցնող փայլուն նիզակներն ու սրերը պէտք է ներկուած լինին զուտ մարդկային արիւնով. չէ՞ որ ամեն մի թնդանօթի և հրացանի թնդիւնի հետ պէտք է միախառնուին հարիւրաւոր մեզ պէս մարդկանց հառաչանքներն ու հեծկլտոցները...։

Ահա՛ անցնում են մեր մօտով մի խումբ հայ զինուորներ, որոնք յաղթողներից են. չնայելով արևի կիզիչ ճառագայթներին՝ բոլորն էլ հագած ունեն բըրդեայ բաճկոններ և բրդեայ գլխարկներ. մէջքերին ամրացրած զինուորական պայուսակը. բոլորն էլ չուստ կամ տրեխ ունին ոտքերին։ Իրենց պատմելով՝ հրացանաձգութեան մէջ հայ զինուորները միշտ առաջին մըրցանակն ու պարգևներն են ստանում. մանաւանդ Լոռեցի հայ զինուորները հմուտ են այդ բանին՝ նախա-

պէս վարժուած լինելով իրենց կուսական անտառնե-
րում հրացաններով որսի գնալուն։ Այս իրողութիւնը
վկայեց նաեւ այն ռուս սպան, որ ճանապարհին մի
փոքր տեղ նստեց մեր ֆուրգոնը և մեզ հետ զրուցա-
տրում էր։

Կէս ժամաչափ էլ շարունակելով մեր ուղին՝ հա-
սանք ռուսաբնակ Ալէքսանդրովկայ գիւղը։ Երկու ժամ
մնացինք «ֆուրգոնչու» տանը, ճաշեցինք և մի փոքր
հանգստացանք։ Տունը փայտաշէն էր և ընդարձակ բա-
կով. մեր իջևանած սենեակի մի անկիւնում ռուսական
մեծ վառարանն էր, իսկ դրա դիմացի անկիւնում բազ-
մեցրած էր սրբի պատկերը՝ առաջն էլ կանթեղ։ Տան
առաջը գտնւում էր ահագին փայտեայ շտեմարանը, որ
տախտակներով մի քանի մասերի էր բաժանուած և իւ-
րաքանչիւր բաժանմունքը յատկացրած էր մի որոշ տե-
սակ հացահատիկի համար. ցորեն, գարի, կորեկ և ա-
ճար կար շտեմարանում։ Շտեմարանի առաջն ընկած
էին մի քանի եւրոպական գութաններ. այս կողմի հա-
մարեա թէ բոլոր ռուս գիւղացիներն այդպիսի գու-
թաններ են գործածում, իսկ հայերն առանց բացա-
ռութեան դեռ ևս իրենց հնադարեան և ծանր գու-
թանով են հերկում գետինը։ Երբ մի անգամ առիթ
եղաւ հայ գիւղացիներին հարցնելու՝ թէ ինչո՞ւ իրենք
էլ եւրոպական գութան չեն գործածում, պատասխա-
նեցին. մենք էլ փորձեցինք նրանցով վարել, բայց տե-
սանք, որ ձեռք չիտալիս մեր հողում. քարի դիպչելով
շուտով կոտրւում է և մենք էլ չենք կարողանում նո-
րոգել։ Իսկ երբ հայ գիւղացին մի բանի մասին անն-
պաստ կարծիք է կազմում, այնուհետև ինչքան կամե-
նաս խօսի, համոզի, նրա համար միևնոյն է, նա այլ
ևս ոչ ոքի չի լսի։ Բայց պէտք է նկատել, որ նիւթա-
կան կողմն էլ նշանակութիւն ունի այստեղ. եւրոպա-
կան գութանը թանկ է, իսկ տեղական ձևի գութանը
գիւղացին ինքն է շինում։ Այստեղ խոտի դէզերը հայա-
բնակ գիւղերի պէս տների կողքին չէին դարսուած,
այլ գիւղից դուրս՝ առանձին տեղ։

Ժամի 4 էր, որ նորից ճանապարհ ընկանք դէպի

Ուռուտ գիւղը, ուր պէտք է իջևանէինք և մնայինք այս գիշեր, որովհետև նախապէս հրաւիրել էր մեզ տեղացի երիտասարդ պ. Արշակ Պապեանը։ Ճանապարհը հարթ էր և անցնում էինք գեղեցիկ դաշտավայրի միջով. չորս կողմը տարածւում էին կանաչազարդ բլուրներ։ Երեկոյեան դէմ, երբ արեգակը թեքուել էր դէպ իր մուտքը, անցանք Միսխանայ կոչուած փոքրիկ գետակը. երևաց նոյնպէս Ուռուտ գիւղը մի սիրուն կանաչազարդ բլրի ստորոտում. դրանից ոչ շատ հեռու, մի ուրիշ բլրի ստորոտին երևում էր Հայդարբէգ գիւղը։ Ուռուտ գիւղի տեսքը հեռուից բաւականին գեղեցիկ էր. քիչ թէ շատ միաձևութիւն է պահպանուած և տանիքները կղմինտրով են ծածկուած. առ հասարակ տարբերւում է սովորական հայ գիւղերի տիպից և իսկոյն նշմարւում է ռուսաբնակ գիւղերի ազդեցութիւնը։

Երբ երգելով ու երաժշտութեամբ անցնում էինք գիւղի միջով՝ մեզ դիմաւորեց վերոյիշեալ պ. Ա. Պ. և առաջնորդեց դէպի իրենց տուն։ Հասնելով մեր իջևանը, մի փոքր հանգստացանք և իջանք Ուռուտ գետակի ափը. գետակի վրայ ձգուած էր մի գերան, որ կամուրջի տեղ էր ծառայում։ Այդտեղից վերադառնալով մեր իջևանը, զոյգ զոյգ կանգնեցինք և դաստիարակի ու մի քանի ուսուցիչների ուղեկցութեամբ (որոնք եկել էին Ջալալօղլուց) դիմեցինք դէպի գիւղի եկեղեցին։ Մեզ հետ էին նոյնպէս գիւղի տանուտէրն ու մի քանի գիւղականներ։

Նախկին եկեղեցին քանդուած և նորն էր շինուած նրա տեղը՝ մի բարձր թումբի վրայ. նոր շէնքն ամբողջովին քարից է. շինել են ժողովրդական ճարտարապետները՝ օրինակ վերցնելով Օձունի եկեղեցու ձևից։ Պատուհանները նեղ և փոքր լինելով՝ ներսը մութն էր։ Եկեղեցին դեռ կիսակատար է և ժամերգութիւն չէ լինում։ Շինութեանը վերահսկում էր գիւղի երիտասարդ տանուտէրը։ Գիւղն ունենալով 50 տուն բնակիչ՝ միդաւեան դպրոց է պահում. ուսուցիչը մեր դպրոցի ուսումնաւարտներից էր եղել անցեալ տարի. գիւղացիները գոհ էին նրանից և յաջորդ տարուայ համար էլ հրաւիրել

էին նրան։ Ի նկատի պէտք է ունենալ այն հանգամանքը, որ գիւղացիներն ուշադրութիւն չեն դարձնում այնքան ուսուցչի գիտութեան վրայ—չեն էլ կարող—որքան նրա վարք ու բարքի վրայ. եթէ ուսուցիչը համեստ, քաղցրաբարոյ մարդ է, չի խորշում գիւղացուց, նրա սովորութիւններից ու կենցաղից, գիւղացին էլ լիովին հաւատ է ընծայում նրան, նրա խօսքն ընդունում և շատ դէպքերում օգուտ քաղում նրա խորհուրդներից։

Մութն ընկնում էր արդէն, երբ մեր դիտողութիւնները վերջացնելով՝ երգելով վերադարձանք մեր իջևանը, կաթնով ու կարկանդակով թէյն վայելեցինք և դուրս եկանք սենեակից։ Արդէն գիշեր էր և մեր շուրջը խորին լռութիւն էր տիրում. գիւղացիք ցերեկուայ աշխատանքից յետոյ հանգստանում էին։ Միայն մեր երգի ձայնն էր տարածւում տիրապետող լռութեան մէջ. երգելու միջոցին դաստիարակի և միւս գաւառական ուսուցիչների մէջ խօսք եղաւ ժողովրդական բանաստեղծութեան մասին և ուսուցիչներից մէկն իբրև նմուշ առաջ բերեց լօռեցոց հետևեալ ժողովրդական երգերը.

ԴԱՆ-ԴԱՆ

(երեխային զբաղեցնելու երգ).

«Դան—դան—դան որդի,
«Իմ Ըրևանայ խան որդի,
«Թաւրըզու թաւթա (?) որդի
«Շամախու փարչա որդի։
«Դան—դան դաննեցի
«Բերանդ եկեղեցի,
«Տուն եկայ համբուրեցի
«Դուս եկայ բարովեցի։
«Հայ եկաւ բարով տուի,
«Թուրք եկաւ քարով տուի։
«Դան—դան դի առնես
«Կանանչ բաղի խիարն ես,
«Մամի ջէբի խուրմէն ես
«Դէդի աչքի սուրմէն ես։

«Դան—դան դնդոց ես
«Մեղրով լիքը քթոց ես.
«Սրունաղբրի չուաքն ես
«Ալ ոչխարի դմակն ես.
«Մութ գիշերուայ ճրագն ես
«Դրնդէզի կրակն ես»։

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

«Նանի—նանի, իմ որդի,
«Քունդ տանի, իմ որդի.
«Նանա—նանա, նանով ըլիս,
«Ապրիս ու սաղ ջանով ըլիս։
«Իմ ըրեխի քունը տանի
«Սրա դուշմանին չունը տանի.
«Իմ ըրեխէն քուն ունի,
«Սովոմաքալ (?) տուն ունի։
«Քանի ջուրը ալին տայ
«Սրա դուշմանին քարին տայ.
«Քանի ջուրը փրփրի
«Սրա դուշմանը քրքրուի։

ՋԱՀՐԻ ԵՐԳ

(ճախարակի երգ).

«Մանի, մանի, իմ ջահրա
«Քարուանդ բանի իմ ջահրա.
«Իմ ջահրէն բան ա նստել
«Ումուլով ջան ա նստել։
«Ատղերը դուս ա եկել
«Աչքերիս լուս ա եկել.
«Մանեմ, մանեմ, մտիկ կանեմ
«Մեծ մեծ ոստեր կծիկ կանեմ։
«Ըղաքիդ չոքած ղուլ ունիս
«Կողքիդ ալմաս թուր ունիս,
«Օրը մի մսխալ եղ ունիս։
«Մանողիդ գլխին տեղ ունիս։

«Մանի, մանի, իմ ջահրա
«Իմ ու քու բանը չատ, ջահրա։ և այլն։

Այս հետաքրքրական զրուցատրութեան միջոցին հիւրասէր տանտէրն ընթրիքի կանչեց մեզ. ներս մըտանք ընդարձակ սենեակը և զարմանքով տեսանք մի ճոխ սեղան իր բոլոր պարագաներով, որ շատ հաղուագիւտ երևոյթ է գիւղերում. երևում էր, որ պ. Ա. Պ. մեծ հոգս և նեղութիւն կրելով՝ պարագաների և պաշարեղէնի մեծ մասը Զալալօղուց էր բերել տուել։ Երեսուն հոգուց աւելի շարուեցինք սեղանի շուրջը. բացի մեր խմբից ներկայ էին և չորս գաւառական ուսուցիչներ, Ե. Ե., Ս. Ք., Ա. Զ. և Ս. Յ., բոլորն էլ մեր դպրոցի նախկին սաներ [1])։ Հետզհետէ բերուող անուշ կերակուրները վայելելով և առաջարկուած կենաց բաժակների վրայ երգելով՝ ուրախ ժամանակ անցկացրինք. մեր կենացի առթիւ դաստիարակն ընդարձակօրէն բացատրեց դպրոցական ճանապարհորդութեան տուած օգուտները, որ մեծ հետաքրքրութեամբ էին լսում գաւառական ուսուցիչները։ Ընթրիքին շատ ուրախ կերպարանք էր տալիս այդ ուսուցիչներից մէկի, Եղիշէ Երզնկեանի (այժմ Հանգուցեալ) զուարճախօսութիւնները. նա խօսակցութեան մէջ հմտութեամբ զրաբար բառեր գործ դնելով և կամ բառերը բարդելով՝ ծիծաղ էր պատճառում մեզ. օրինակ նա ասում էր. «Ձերդ մեծապայծառաճաճանչափայլութեան կենացը». կամ թէ աւելի բարդելով. «Ձերդ մեծապայծառահրաշաճաճանչաարփիափայլութեան կենացը». կամ ժողովրդական ձևով. «սաղ ըլիս, բաղ ըլիս, չաղ ըլիս, բախչա ըլնիս, ծլիս, ճխկնոտիս, ծաղկիս, կանաչիս, օրհնեալ ես և օրհնեալ լինիս».. և այլն։ Ընթրիքից յետոյ մեր թմբուկին օգնութեան հասնելով գիւղական դաուլ-զուռ-

[1]) Ներկայ էին նոյնպէս մեզ հիւրասիրողի ծնողները՝ Երիտասարդի չափ առոյգ հայրը և մեծ «նանը», որ տան մէջ հսկողն ու նայողն էր. սրանց անպաճոյճ և պարզ ու որոշ բառերով արտասանած բարեմաղթութիւններն ու օրհնութիւններն ազդեցութիւն էին ունենում մեզ վրայ։

նան, սկսեցին մշատեղ հնչեցնել պարի եղանակներ. «կլոր» ու «կէնտ» պարերով էլ մի առ ժամանակ զուարճանալով՝ գնացինք հանգստանալու, որպէս զի վաղն առաւօտեան ճանապարհ ընկնենք դէպի Շուլաւէր։ Այս օրուայ մեր ընթրիքը գիւղական հարսանիքի կերպարանք ունէր։ Դաուլ-զուռնայի ձայնի վրայ հաւաքուած գիւղացիները նոյնպէս ցրուեցին, որպէս զի լուսադիմին արդէն իրենց գործին գնան։

Գուցէ հարցնէք՝ թէ ո՞վ էր պ. Ա. Պ. որ այսքան զուարճութիւն պատճառեց մեզ և պատուեց. այդ յարգելի պարոնը ոչ մէկիս ոչ ազգականն էր և ոչ նոյն իսկ ծանօթը. Զալայ-Օղլում ծանօթացանք դրա հետ։ Նա ազնիւ ձգտումների տէր երիտասարդ լինելով՝ ոգևորուել էր մեր ճանապարհորդութեան գաղափարով և տեսնելով ու լսելով մեր կրած կամաւոր նեղութիւնները՝ կամեցել էր մի գիշեր զուարճութիւն պատճառել մեզ և դրանով իր յարգանքը յայտնել մեր խմբին։ Եւ այդ առաջին օրինակը չէ մեր ճանապարհորդութեանց ընթացքում. իբրև նոր գործ՝ շատերն են կամեցել նպաստել և այդպիսով խրախուսել մեր կազմակերպուած և որոշ ծրագիր ունեցող շրջագայութիւնները։

22 Օգոստոսի, հինգշաբթի. Աղքեօրփի։

Առաւօտեան ժամի 6 ն անց էր, որ կաթնով թէյն ու գաթան վայելելով և գիշերուայ ընթրիքի պակասը մածնով ու մեղրով լրացնելով՝ օրտանց շնորհակալութիւն յայտնեցինք մեր հիւրընկալներին՝ իրենց անկեղծ և բուն հայկական հիւրասիրութեան համար, հրաժեշտ տուինք նրանցը և նստելով մեր ֆուրգոնները՝ ճանապարհ ընկանք դէպի Աղքեօրփի։

Առաւօտեան թարմ և զով, առողջարար օդը ծծելով և զմայլուելով գեղեցիկ դաշտավայրերի և բլուրների տեսքով՝ մի ժամից յետոյ հասանք Հայդարբէգ գիւղը, որի տները տարածուած են բլրի ստորոտում և թուով 70 - 80 են. գիւղից հեռու, դաշտի ծայրին, արևելեան կողմը, երևում էին մի քարաշէն եկեղեցու աւերակնե-

ը։ Շարունակելով մեր ճանապարհը կանաչազարդ և ընդարձակ հովտի միջով՝ մօտ կէսօրին հասանք ռուսաբնակ «Պրիվոյլնի» գիւղը, որ բաւականին ընդարձակ տեղ է բռնում և ունի նորակառոյց եկեղեցի. այս գիւղն իր դիրքի բարձրութեան (1680 մետր բարձր ծովի մակերևոյթից) ու զովութեան պատճառով Շուլաւէրցիների ամառանոցն է։ Անցնելով գիւղի երկայն ու լայն փողոցով՝ կրկին դուրս եկանք ազատ դաշտի վրայ. այստեղ կրկին շնորհակալութիւն յայտնելով ձիով մեզ ուղեկցող պ. Ա. Պ. Հրաժեշտ տուինք նրան. նա վերադարձաւ Ուռուտ։ Մօտենալով Օփրէթ կոչուած լերան՝ ֆուրգոններից ցած իջանք և ոտքով էինք առաջ գնում, որովհետև ճանապարհը դարիվեր և սաստիկ վատ էր. հէնց այդ ճանապարհի վրայ մի սայլի եզները խրտնելով՝ սայլը ձգել էին ձորը և ջարդ ու փշուր տրել, բայց բարեբաղդաբար սայլապանն ազատուել էր։ Օփրէթից սկսած ճանապարհն անցնում է խիտ անտառի միջով. երևում է Լալուարն իր վեհապանծ գագաթով. շուրջդ տարածւում են կանաչազարդ բլուրներ, որոնցից բղխում են բազմաթիւ սառնորակ աղբիւրներ։ Գտնւում ենք 1800 մետր բարձրութեան վրայ. մեր ամբողջ ճանապարհորդութեան միջոցին ամենամեծ բարձրութիւնն է այս։ Անտառը լիքն է պտղատու ծառերով. վայրենի տանձն ու խնձորն արդէն հասել են. կարմրին է տալիս հունը։ Բնութեան այդ սքանչելի վայրում կէս ժամաչափ հանգստանալով և հաց ու պանրի հետ ականակիտ սառն աղբիւրի ջուրը վայելելով՝ սկսեցինք արդէն իջնել լերան գագաթից։ Ճանապարհին անդադար պատահում ենք թուրք «քոչուոր»ների, որոնք սարից իջնելով՝ գնում են իրենց ձմեռուայ բնակարանները—գիւղերը։

Ժամի 5-ին երևաց Աղ-քեօրփի (սպիտակ կամուրջ) գիւղը։ Մօտենալով գիւղին, իջանք սայլից և քայլեցինք դէպի փոքրիկ ձորը, որի միջով անցնում է «Աղ քեօրփու չայ» կոչուած գետակը, որ կոչւում է նաև «Ճասլաղ». այս գետակն իր սկիզբն առնելով Լալուարի աղբիւրներից և հետզհետէ ուրիշ ջրեր ևս ընդունելով իր մէջ մեծանում է և վերջը թափւում Խրամի մէջ։ Ճասլաղի

վրայ շինուած կամուրջն երբեմն սպիտակ քարից շինուած լինելով՝ գիւղն էլ այդ կոչումն է ստացել և պահել մինչև այժմ, թէև կամուրջի քարերը վաղուց արդէն այլ ևս սպիտակ չեն։

Գիւղը տարածուած լինելով անտառապատ լերան լանջի վրայ՝ գեղեցիկ դիրք ունի. հեռուից երեւում է նաեւ կանաչապատ Լալուարը։ Գետակի մօտ գտնուող խանութների առաջը մեզ դիմաւորեց մեր դպրոցի նախկին սան պ. Վահան Տէր Վարդանեանը, և հրաւիրեց մեզ իջևանելու իրենց տանը։ Ընդունելով պ. Վ-ի սիրալիր հրաւէրը՝ ֆուրգոնները թողինք խանութների մօտ, իսկ մենք բարձրացանք գիւղը և իջեւանեցինք տեղական քահանայի. պ. Վ-ի հօր տանը։ Տունը շինուած էր ամբողջովին փայտից, պատերը ծեփած էին գաճով. տանիքը կղմինտրով ծածկած և թեք. մեզ հիւրասիրող ընտանիքի հիւրատունն էր այս. իսկ ընտանիքն ապրում էր քար ու կրեայ հայկական տան մէջ։ Սենեակում ըստ երկայնութեան ձգուած էր արևելեան «մեծ թախթը». պատերի վրայ եղած պահարաններում խառն ի խուռն ցրուած էին զանազան գրքեր, թղթեր, տետրակներ, հին «Արարատ»ի համարներ, նաեւ մի քանի №№ «Сельское хозяйство» գիւղատնտեսական ամսագրի։ Պ. Վահանն իր կէս եւրոպական և կէս գիւղական ապրուստով ու զգեստով մի տեսակ նոր տարազի խալիֆայի էր նմանւում. ինքը մի համեստ և բարեսիրտ անձն էր և իր հարուստ հօր յաջորդն ու ժառանգը պիտի լինէր։

Նաշելուց ու մի փոքր հանգստանալուց յետոյ պ. Վ-ի ուղեկցութեամբ բարձրացանք դէպի բլրի խիտ անտառները՝ դիտելու այնտեղ գտնուած «*Խորակերտ*» վանքը։ Երկու երեք վերստ տարածութիւնը խիտ անտառի մէջ մի ժամաչափ գնալուց յետոյ՝ ծառերի միջից երևաց վանքի խախտուած գմբէթի ծայրը. անցնելով մի փոքրիկ ձոր և սառնորակ աղբիւրից կուշտ խմելով՝ դուրս եկանք վանքի առաջ, որ գիւղից հարաւարևելք է գտնւում։

Վանքը շրջապատուած է եղել պարիսպով, որի

հետքերն են մնացել այժմ. կանգուն է դեռ սրբատաշ քարից շինուած ընդարձակ և կիսաքանդ մուտքը։ Արեւմտեան կողմը վանքն ունի գաւիթ, որի մուտքը գտնւում է արեւմտեան կողմից։ Պարսպի մուտքից մինչեւ գաւթի մուտքը բուսած են ահագին մեծութեամբ թփեր ու փշեր։ Գաւիթը քառակուսի է, 15 արշին մեծութեամբ. ամբողջովին շինուած է սրբատաշ դեղնագոյն քարից և ինչպէս երևում է, յետոյ է կառուցուած։ Կամարներն ազատ սիւների վրայ չեն հիմնուած, այլ հաստատուած են ութը հատ կիսասիւների վրայ. այդ կիսասիւների կամարները միմեանց կտրելով՝ կազմում են գաւթի փոքրիկ կամարակիկն, որ ներսից քանդակագործուած է եղել։ Գաւթի ճարտարապետութիւնը նման է Հաղպատի գրատանը, բայց դարաններին փոխարէն լուսամուտներ ունի։ Գաւթի շինութիւնից միայն որմերն ու կամարներն են ամբողջ մնացել, իսկ առաստաղը մեծ մասամբ աւերուած է. գմբէթը նոյնպէս կիսով չափ քանդուած է։ Առաստաղի ամբողջ մնացած մասերի վրայ երեւում են նկարների հետքեր, որ ապացոյց է թէ առաստաղը սկզբում նկարուած է եղել գունաւոր ներկերով։

Գաւթի մուտքի աջ և ձախ կողմը գտնւում են մի մի լուսամուտներ. մի մի հատ էլ կան հարաւային և հիւսիսային որմերում. արևելեան որմի մէջ ևս, որով գաւիթը կցուած է եկեղեցու շէնքին, գտնւում են երկու փոքր լուսանցքներ՝ եկեղեցու մէջից։ Արեւելեան որմի կամարներն ու հարաւային որմն արձանագրուած են։

Գաւթի արեւելեան որմի մէջ է գտնւում եկեղեցու կամարակապ մուտքը, որի ճակատին գտնուած արձանագրութիւնը վանքի շինութեանն է վերաբերում.

«Թուին ՉԱ (701 1252 փրկչ.) ի հայրապետութեան Տ. Կոստանդեայ, արհի եպիսկոպոսութեան Համազասպայ և յաշխարհակալութեան և գաւրապետութեան.... ի թագաւորութեան Դաւթի ես Ստեփաննոս որդի Յովհաննայ գնեցի զԽորակերտ և զիւր գեղն, զայգին որ ի Շղեր վանիցս յաւիտեան ի կա սպիտակ սուլտանի և շինեցի զսա ի հիմանէ սկսեալ յուսովն

անմահին Աստուծոյ լինել ինձ և եղբարց իմոց և որդոց արձան կենդանի և տեղի գերեզմանի մինչև գոյ Քրիստոս և առնէ ողորմութիւն ինձ և իմոցն ի փառս իւր. արդ որք խախտել ջանան զիմ տուածն յեկեղեցւոյս և կամ զտեղիս հանել յազգէ իմմէ, խախտեսցին և անկցին... քրիստոնէութենէն»։

Գուցէ արձանագրութեան մէջ յիշուած Խորակերտ գիւղը հէնց Աղքեօրփին է, որ վերջն այդ անունն է ստացել։ Միւս արձանագրութիւնները վերաբերում են զանազան նուիրատուութեանց։

Եկեղեցու մուտքի աջ և ձախ կողմը կան մի մի պատարագամատոյց խորաններ, որոնց լուսամուտներն, ինչպէս յիշեցինք, գաւթի մէջ են բացւում։ Նոյնպիսի խորաններ գտնւում են նաև բեմի աջ և ձախ կողմը։

Եկեղեցին անսիւն է և հաստատուած 4 կամարների վրայ, որոնցից արևմտեանը և արևելեանը մեծ են, իսկ միւսները՝ փոքր։ Կամարները միանալով միմեանց հետ՝ իրենց վրայ են կրում եկեղեցու գեղեցիկ և ընդարձակ կաթուղիկէն՝ հաստատուած երեսուն փոքրիկ սիւների վրայ։ Գմբէթի ներսից գտնւում են փոքրիկ քարեայ կամարներ, որոնք միմեանց կտրելով՝ մէջ տեղում ներկայացնում են երկու եռանկիւնիներ, որոնք միմեանց կտրում են։ Իւրաքանչիւր կամարի տակ մի լուսամուտ կայ.—արևմտեանը փակ է։

Եկեղեցին բացի արևմտեան մուտքից ունի և մի այլ մուտք հարաւային որմի մէջ։ Շէնքն արտաքին կողմից մաքուր, սրբատաշ քարից է, իսկ ներքուստ ոչ սրբատաշ քարից և վրան սրուածքի հետքեր են երևում։ Քարերն անձրևից ու խոնաւութիւնից վնասուած են։ Յատակը ծածկուած է հողով։ Երկայնութիւնն է 18 արշին, լայնութիւնը 10 $^1/_2$ արշին. բեմի բարձրութիւնը 1 արշին. եկեղեցին առհասարակ անխախտ է մնացել, միայն տանիքն է խախտուած և վրան ահագին ծառեր են բուսել։ Մտնելով այս սրբատեղին, քիչ է մնում, որ մարդու աչքերն արտասուքով լցուին՝ տեսնելով այս հրաշալի շէնքը կենդանիների աղբով լիքը... Տէր Աստուած, մինչև ե՞րբ պէտք է Քո սուրբ տաճարներն ու

աղօթատեղիներն այսպէս պղծուած մնան. ժամանակ չէ. .։

Եկեղեցու շուրջը գտնուում են բազմաթիւ գերեզմանաքարեր, որոնցից ուշադրութեան արժանի է մի գեղեցկաքանդակ խաչքար՝ կանգնեցրած բարձր և լայն պատուանդանի վրայ. այդ խաչքարն ու պատուանդանն արձանագրութիւն չեն կրում, միայն խաչքարի ճակատին համառօտ գրուած է. «սբ. նշան տ՛ բունական»։ Աչքի էին ընկնում նոյնպէս մի առանձին ձևի տապանաքարեր, որոնք քառանկիւնու ձև ունէին, լայն մասերը գետնի մէջ թաղուած, իսկ երեք կողմերը զարդարուած զանազան պատկերներով. օրինակ՝ մարդու պատկեր մէկ ձեռքին նիզակ, միւս ձեռքին սանձ բռնած։

Եկեղեցու շուրջն այնպիսի բարձր փշաւոր թփեր ու խոտեր են բուսել, որ մարդ դժուարանում է դրանց միջովն անցնել։ Եկեղեցուց մի փոքր հեռու, արևելեան կողմը կայ մի ընդարձակ եկեղեցու աւերակ. մնացել է կանգուն միմիայն բեմի արևելեան պատի կամարաձև մասը, որ շինուած է սրբատաշ քարից։ Տեղացիք այս շէնքին բաղանիք են անուանում, ասելով թէ մէջը ջրի խողովակներ են գտել։ Բայց շինութեան ձևից երևում է, որ եկեղեցու աւերակ է. ապացոյց են նաև այն երկու խորանները, որ շինուած են այդ աւերակի աջ և ձախ կողմը։

Վանքը շինուած է ծովի մակերևոյթից 1300 մետր բարձրութեան վրայ. երեկոյեան 7 ժամին ջերմաչափը ցոյց է տալիս 16 աստ. Ր։

Արդէն խաւարը տիրել էր անտառում, երբ մենք ուրուականների նման դուրս եկանք անբաղդ աւերակների միջից և խուլ ու մունջ թփերի ու ծառերի միջով ճանապարհ ընկանք դէպի մեր իջևանը՝ պ. Վահանի առաջնորդութեամբ։ Անտառի մէջ խորին, գերեզմանական լռութիւն էր տիրում. մի անսովոր ազդեցութիւն է գործում մեզ վրայ խաւարը. զգուշութեամբ փոխում ենք մեր քայլերը մթութեան մէջ՝ կարծես թէ վախենում ենք խանգարել մեզ շրջապատող անհուն հանգստութիւնն ու լռութիւնը։ Լսւում է միայն ճպռուի ձայ-

նը և ծառերի մեղմ սոսափիւնը։ Գիշեր ժամանակ անտառում առհասարակ մարդ երկիւղի ազդեցութեան ներքոյ է լինում և աչքին զանազան երևոյթներ են երևում. ամեն մի չնչին ստուեր գազանի կերպարանք է ընդունում, որ պատրաստւում է յարձակուել մարդու վրայ։ Մեր մտքերից այդպիսի երկիւղները ցրուելու նպատակով՝ դաստիարակը պատուիրեց խմբովին երգելով առաջ գնալ։

Այդպիսով մութի մէջ խարխափելով ու տատանուելով կոյրի նման, երբեմն ընկնելով, վերկենալով, զուարճանալով ու շարունակ երգելով՝ հասանք գիւղը և մեծ ախորժակով հաց ու պանիրն ու թէյն վայելելով՝ անմիջապէս Մորփէոսի գիրկն ընկանք՝ ընդարձակ թախտի վրայ և պառկեցանք։

23 Օգոստոսի, ուրբաթ. Շուլաւէր։

Առաւօտեան 4½ ժամին արդէն ամենքս ոտքի վրայ էինք. օրը մի փոքր ամպամած էր և զով։ Թէյ խմելուց յետոյ շնորհակալութիւն յայտնեցինք մեր հիւրընկալին և իջնելով ձորը՝ կամուրջի մօտ հրաժեշտ տուինք պ. Վահանին, նստեցինք մեր ֆուրգոնները և դիմեցինք դէպի Շուլաւէր։ Ճանապարհն անցնում էր գեղեցիկ բլուրների վրայով, խիտ անտառների միջով. մերթ բարձրանում, մերթ իջնում էինք։ Ճանապարհի ձախ կողմից կարկաչելով վազում է մի առու՝ շրջապատուած ուռենիներով. առուից ձախ հոսում է Շուլաւէրայ ջուրը, իսկ այդ հոսանքից էլ ձախ կողմը խիտ ու անսպառ անտառներն են։ Մի փոքր բաց տեղերում շարուած էին խոտի դէզերը, որ պատկանում են Զանախչի և Օփրէթ գիւղերին։

Երկինքն հետզհետէ պարզուեց և արևի ճառագայթներն սկսեցին իրենց ոյժն ու զօրութիւնը կամաց կամաց զգալի անել։ Ժամի տասն էր, որ հասանք «Խոժոռնի» հայաբնակ գիւղը և կրկին շարունակեցինք մեր ճանապարհը. արդէն պարզ երևում է «զուլի գեադուկ» արը, որի ստորոտում տարածուած է Շուլաւէրը։ Կէս

օրուայ մօտ երևացին Շուլաւէրի այգիները. անցանք փոքրիկ գետակը և մտանք այգիների ընդարձակ շարքի մէջ. խաղողի անթիւ ողկոյզները ժպտում են հեռուից. ծառերի ճիւղերից կախուած են դեղձը, խնձորը, տանձը, նուռը և այլն. բայց ամենից մեծ տարածութիւն են բռնում խաղողի վազները։

Անցնելով գիւղի միջով՝ իջևանեցինք սբ. Աստուածածին եկեղեցու մօտ կառուցուած տղայոց դպրոցում. երեք ժամի չափ հանգստացանք, ճաշեցինք և նորից ճանապարհ ընկանք։ Միակ նորութիւնը, որ տեսանք Շուլաւէրում՝ այն էր, որ կալերում էշեր էլ էին լը. ծել...։

Երբ դուրս եկանք գիւղի այգիների շարքից, բնութիւնը բոլորովին փոխուեց. մինչև Շուլաւէր շարունակ անցնում էինք խիտ անտառների, կանաչազարդ բլուրների, հովիտների ու ձորերի միջով, իսկ այժմ անցնում ենք ընդարձակ և բուսականութիւնից զուրկ ձանձրալի դաշտի վրայով։ Արևի ճառագայթները կիզում են սաստիկ և մեզ համար այդ աւելի զգալի էր, որովհետև դեռ երէկ համարեա մրսում էինք 1800 մետր բարձրութեան վրայ, իսկ այժմ գնում ենք 300 մետր բարձրութիւն ունեցող ջերմ դաշտավայրի փոշոտ կառուցիով։ Անցնելով ճիւղաւորուած Խրամ գետի վրայով, ուղևորուեցինք դէպի թրքաբնակ Ղըզըլհաջլու և այնտեղից Մառնէուլ գիւղը. արդէն մութն էր. իջևանեցինք մի խանութի առաջ, թէյ խմեցինք, ընթրեցինք և ոմանք ֆուրգոններում, ոմանք խանութի առաջ տարածուելով՝ անուշ քնեցինք։

Առաւօտեան ժամի $2^1/_2$ էր, որ զարթեցինք և 3-ին արդէն մեր ֆուրգոնները շարժուեցին տեղից. գնում էինք փայլուն աստղերի լուսով, մինչև որ արեւելքը շառագունեց և արևի կարմրագոյն ճառագայթներն ընկան շրջակայ բարձրութեանց վրայ։ «Առաւօտ լուսոյ»ն երգելով անցնում ենք դաշտի միջով. ճանապարհը լիքն է սեխի և ձմերուկի սայլերով։ Ժամի 9-ին հասանք «Սողանլուխ». իջևանեցինք մի խանութում, թէյ խմեցինք և վայելեցինք մեր ճանապարհոր-

դուլթեան վերջին ճաշը, որ բաւականին ուրախ անցաւ։

Ժամի 1-ին ճանապարհ ընկանք Սողանլուխից և մօտ ժամի 4-ին իջանք մեր alma mater ի բակում։ Վերջին անգամ դաստիարակը հաւաքեց մեզ իր շուրջը, վերջին անգամ մի քանի ջերմ խօսքերով խրախուսեց մեզ՝ լինել ուսումնասէր և ջանասէր, երախտագէտ դէպի դպրոցն ու վարչութիւնը. յորդորեց՝ մեր ճանապարհորդութեան ընթացքում տեսածն ու լսածը խորը կերպով տպաւորել մեր սրտերում և մեր այցելած նուիրական վայրերի սբ. յիշատակներն անջնջելի պահել։ Այնուհետև շնորհակալութիւն յայտնեց մեր կանոնաւոր ընթացքի համար, սեղմեց ամենքիս ձեռքը և հեռացաւ։ Երկար ժամանակ դպրոցի բակը դղրդում էր մեր «կեցցէ»-ների ձայներով...։

Խ. Ցարուբիանեանց.





ՀԱՅՈՑ ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

1. Մեր հին մատենագրութիւնը, չատ քիչ բացառութեամբ, զուտ կրօնական է, և մեր նախնիք, ընդհանուր դիծերու մէջ, բոլորովին կրօնական հասարակութիւն մ'էին, իրենց եկեղեցիով։ Սա ինքզինք իբրև ազգային ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ չեշտել տուաւ Զ. դարու կիսուն։ Այնուհետև է որ կունենանք մեր տօմարն ու կրօնական բանաստեղծութիւնը։

2. Ե. դարուն, «Ոսկեղէն դարուն», ս. Թարգմանիչներու ձեռքով կսկսի մեր Եկեղ. մատենագրութիւնն, որ երկու մասի կը բաժնուի՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ու ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ։ Առաջինը կը բովանդակէ 1. ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ, այսինքն Շարականներ, Տաղեր, Գանձեր. նաև կրօնական առասպելներ, Հաւատալիքներ, Տեսիլքներ և այլն. 2. ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ, այսինքն Վարք սրբոց և Տօներու նշանակութիւնը. 3. ԱՊԵՆԽՕՍՈՒԹԻՒՆ, գլխաւորապէս եկեղեցական ճառեր, ներբողներ ու խրատներ. 4. ՀՈՎՈՒԱԿԱՆ, այսինքն եկեղեցական կոնդակներն ու շրջաբերականները։ Վարդապետական մասն որ ժողովրդին մատչելի չէ և միայն կը զբաղեցնէ մասնագէտ եկեղեցականները, կը բովանդակէ 1. ԴՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ. այսինքն ուսումնասիրութիւն այնպիսի կրօնախնդիրներու որ կը վերաբերին Աստուածութեան գաղափարին, եկեղեցական խորհուրդներուն և այլն, և որ կը լուսաբանէ ուղիղ վարդապետութեան ու չարափառ վարդապետութեան տարբերութիւնը։ 2. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ, որ ս. Գիրքը կը բացատրէ Աւանդութեան և ս. Հարց գրուածներուն համաձայն։ Եւ 3. ԿԱՆՈՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ կամ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ, այսինքն եկեղեցական կանոններու քննութիւնը, ծագումն ու պատմութիւնը։

3. Եկեղեց. Մատենագրութեան աղբիւրներն են Քրոնոլոգիք կամ ԺԱՄԱԳԻՐՔ, Ծիսարանները այսինքն Մաշտոց, ԺԱՄԱԳԻՐՔ և

այլն. որոնց մէջ են կրօնական երգերը, Տօները և Խորհուրդներու վերաբերեալ աղօթքներն և այլն. Ճաշ-ընթէր կամ Տէնապարճաշ, ժողովածուներ, սուրբերու մասին պատմութիւն, ներբող և այլն. Լոնոնոէրբ զանազան եկեղեցական ժողովներու կանոններու հաւաքածուներ։ Ասոնցմէ զատ կան նաև սա նիւթական աղբիւրները՝ եկեղեցական պատկերներ, Խաչեր, Աւետարաններ, Զարդեր, Սպասներ, Անօթներ և այլն, որոնք ուներ իրենց պատմութիւնը. նաև տաճարներն որոնց շինուածքի տարբերութեան մասին ատենօք քննութիւններ և վէճեր եղած են։ Նմանապէս աղբիւր են հին ձեռագիրները, որոնց թէ արտաքին և թէ ներքին կազմութիւնը ծանօթութիւն կուտայ կղերին արուեստագիտութեան վրայօք։ Ասոնց մասին մինչև անգամ առանձին հրահանգներ կային։ Ձեռագիրներէն ոմանք ճոխ յիշատակարաններ ունին, որոնց մէջ տեղեկութիւն տրուած է թէ ուր գրուած է գիրքը, որուն ձեռքով և ով թելադրած է։ Ասոնց մէջ կան գեղարուեստի վերաբերեալ բառեր, դարձուածքներ։ Նախնիք մեծ ջանք ի գործ կը դնէին՝ ս. Գիրքը ծաղկելու համար, որովհետև ադիկա իրենց համար ապաշխարութիւն կամ բարի գործ կը համարուէր։

4. Եկեղեց. Մատենագրութեան ժողովրդական մասը միայն ժողովրդի կեանքին հետ կապ ունի. հոն պատկերացուած են հայոց կրօնական զգացումներն ու պահանջները։ Իր գոյութեան պատճառն ու նպատակը նոյն իսկ ժողովրդական կեանքն է։

Եկեղեցական մատենագրութեան այս մասին մէջ գլխաւոր տեղը կը բռնէ կրօնական բանաստեղծութիւնը։ Սա բանահիւսութեան կամ գրականութեան այն ճիւղն է ուր կարելի է ճանչնալ իւրաքանչիւր ազգի զանազան դասակարգի ըմբռնած կրօնական կատարելատիպ էակներն ու իրենց պարագաները։ Հոս երանգներով պատկերացուած է ժողովրդի երևակայութիւնը կրօնական գաղափարներու մասին, որոնք այնքան աւելի վսեմ ու ընտիր կերևան, որքան զարգացած է նոյն իսկ այդ գաղափարներն ընդունող ժողովուրդը, Կրօն. բանաստեղծութեան մէջ խտացած է ժողովրդի գաղափարը գերագոյն էակի, երկնային զօրութեանց աջակից կամ հակառակ ոգիներու, իրենց գործերուն և մարդոց վրայ գործած տպաւորութեան մասին։ Հոս իրականը խառնուած է մտացածինին հետ,

և աւելի յստակ կարտայայտուի ժողովրդի երևակայութեան ուժն ու իրենցմէ յառաջ եկած հաւատքը։ Եւ որովհետև կրօն. բանաստեղծութիւնը զարգացած է ժողովրդի երևակայութենէն, իր գոյութիւնը կը չարունակէ անխափան. դարերու ընթացքին մէջ, ցորչափ նոյն ինքն ժողովուրդն ապրի։ Այդ բանաստեղծութիւնը յաւիտենական է։ Հին հաւատքի ատեն հաստատուած կրօնական բանաստեղծութիւնը կը մշտնջենաւորէ իր գոյութիւնը՝ պատուաստուելով քրիստոնէական հայեացքով։ Այդպէս կարելի կըլլայ քրիստոնէական կրօնի բանաստեղծութեան մէջէն հետազօտել հին հաւատքի բեկորները։

5. Կրօնական բանաստեղծութեան աղբիւրներն են. 1. Նոյն իսկ ժողովրդական լեռնէրը. 2. Կրօնական լեռնէրը. 3. Քրիստոնէական եկեղեցւոյ պարտուելեան նախկին ժամանակները կամ երգոյցները. 4. Ճգնաւորական լեռներ կամ Մենակեցութիւն. 5. Բնութեան երգոյցներու բաղդատութիւնը լրօնական գեղջկերով։

Ժողովուրդը կրօնքով կապրի։ Ունի իր Սրբութիւններն որոնց մասին հիւսած է զանազան երգեր ու զրոյցներ։ Ասոնք դարերու ընթացքին մէջ փոխուած են ժողովրդի զարգացման համեմատ։ Ժողովրդական կեանքն է եղած այն զլխաւոր ուժն որով պահպանուած են նախնի կրօնի զանազան սկզբունքները. հազար ու մէկ փոփոխութեանց ենթարկուելով, և ատկէ զատ, ժողովրդական կեանքը պահպանած է իրեն մէջ հին հաւատքի քրիստոնէական կրօնքի հետ մրցման նկարագրութիւնն և ասոնց հետևանքները։ Ժողովուրդը պահած է Հին հաւատքի սրբատուփին ծէսերը, արարողութիւնները, Սովորութիւններն որոնք քրիստոնէական կրօնքի հետ կապ չունին երբէք, ասոնց մէջ քրիստոնէական բան մը չկայ, ինչպէս Ուխտագնացութեան մասին ժողովրդական հայեացքները, Ընկնաւորները, Գուշակները, Թղթահմայ ու Գրահմայ, Դիներու հաւատալ և այլն [1]։

Կրօնական կեանքն ըսելով որ չատ բազմակողմանի ազդեցութիւն ունի կրօն. բանաստեղծութեան վրայ՝ կը հասկնանք այն բոլոր կարգերը, ծէսերն ու արարողութիւններն որոնք կրօնին կը վերաբերին։ Ասոնք երկու մասի կը բաժնուին. 1. Կրօնական ծէսեր, զորոնք եկեղեցին ընդունած է և որոնց մասին ա-

[1]) Ասոնց մանրամասն վերլուծումը հմմտ. «Բիւրակն» չաբաթաթերթի, 1898, մեր «Ժողովրդ. բանահիւսութեան աղբակները»։

ռանձին կանոններ սահմանած է, 2. Այն սովորութիւնները զորոնք թէև եկեղեցին չէ ընդունած ու սրբագործած, սակայն ժողովուրդն իր բազմադարեան սովորութեամբ նուիրագործած է։

Ճգնաւորական կեանքն ալ որ ծագած է արևելքի մէջ՝ մեծ ազդեցութիւն ունեցած է Կրօնական բանաստեղծութեան վրայ։ Արհամարհելով աշխարհն ու աշխարհածին մարմիններին տանջելով յոյս կը տածէին երկնաւոր վարձատրութեան. ուստի կը հեռանային զուարճութիւններէ և մինչև անգամ աշխարհէն, և առանձնական կեանք կը վարէին այրերու և ծառի խոռոչներու մէջ։ Ճգնաւորական կեանքը մեծ ազդեցութիւն ունեցաւ ժողովրդին վրայ, և այնքան մեծ էր ատիկայ որ յերիւրուեցան զանազան հրաչքներ ու առասպելներ։ Ասոնցմէ շատ կը գտնուին Վկայաբանութեան մէջ, ինչպէս Նարեկացւոյ աղուներները, Յովհան իմաստասէրին վիշապը և այլն։

Առ հասարակ բնութեան երևոյթներու վրայ տարբեր գաղափար ունէին մեր նախնիք։ Ասոնք տեղեկութիւն չունենալով այն երևոյթներու պատճառի մասին, մէն մի երևոյթ կը բացատրէին իբրև ժողովրդի մեղքի հետևանք։ Տարաժամ Մահը, Սովը, Լուսնի և Արեգական խաւարումներն ամէնքն ալ մեղքի հետևանքներ էին։ Յովհաննէս «Կոզեռն» ճգնաւոր 1036 ին տեղի ունեցած Արևի խաւարումը կը վերագրէ Քրիստոսի 1.000 թուականին ու Նեռի ծնելուն։ Այդպիսի աւանդութիւններ շատ կան և հասած են մինչև մեր օրերը, և ատոնք մեծ ազդեցութիւն գործելով ժողովրդին վրայ՝ հետզհետէ Առասպելաբանութեան նիւթ դարձած են և մտած են Կրօնական բանաստեղծութեան մէջ։

Կրօնական բանաստեղծութեան առատ նիւթ կը մատակարարեն նաև զանազան պատմական դէպքեր, ինչպէս Պետրոս Գետադարձի համար կաւանդուի թէ խաչը ջուրը ձգելու տեղն Ծորոխ գետի հոսանքը կեցած է, Սահակ Ձորափորեցին մինչև անգամ իր մեռած տեղն ժողովրդին օգտակար եղաւ՝ Ամիրապետին բարկութիւնն իջեցնելով։ Վանքերու մասին աւանդութիւններն ալ նոյնպէս մեծ նշանակութիւն ունեցած են Կրօնական բանաստեղծութեան մէջ։

Կրօնական բանաստեղծութեան ազդակները կը կազմեն նաև կրօնական զրոյցները։ Ոեկ մէկ նշանաւոր դէպք կը դրոշմուի ժողովրդին մէջ և հետզհետէ ճոխ ընդմիջարկութիւններով

կը զարդարուի։ Ասոնց վրայ կը հիւսուին զանազան պատմութիւններ, զրոյցներ, որոնք տեղէ տեղ, բերնէ բերան անցնելով՝ կենթարկուին զանազան փոփոխութեանց։ Այսպիսի զրոյցներուն ընդհանուր հանգամանքն է պատկերացընել իրողութիւնը հրաշալի ձևով, գերբնական գործողութիւններով, որոնց կը միջամտէ Նախախնամութիւնը։ Հոս իրար կը խառնուին Իրականն ու Մտացածինը, և հրաշալի նկարագրութեանց առջև կը նսեմանայ Բուն պատմական իրողութիւնը, զրոյցին պատճառը։ Սուրբերէն, Սրբազաններէն չատերու մասին կան կրօնական զրոյցներ, որոնց մեծ մասը մինչև հիմայ գոյութիւն ունի ժողովրդի մէջ։ Եթէ վերլուծուին երևակայութեան այս արդիւնքները, պիտի տեսնուի որ ատոնք կը բովանդակեն եկեղեցական պատմական գլխաւոր կէտերը։ Ասոնցմէ կարելի է քաղել ամբողջութիւն մը ուր պիտի պատկերանայ ժողովրդի կրօն. հայեացքը, աւելորդապաշտութիւնը, պատմական կեանքի մասին ունեցած տեղեկութիւնները, նաև իր տնտեսական վիճակը։

6. Բանաստեղծութիւնը կը բաժնուի 1. Դիցաբանական (կամ մեր նախնեաց լեզուով «Վիպական») առարկայական (objectif) կամ Ոսկեղէն դարու լեզուով «Ցանդիմանակացական» իրերը, արտաքին դէպքերը կը պատկերացընէ. 2. Բանաստեղծական (Dratalique), որ Դիւցազներգական առարկանութիւնն ու Քնարականին անձնաւորութիւնն է միանգամայն, այսինքն ներքին աշխարհին արտաքին դէպքերով պատկերացումը, և 3. Քնարական (Lirique), որ աւելի ենթակայական (Subjectif) կամ Ոսկեղէն դարու լեզուով «Անձնական» է, որովհետև պուէտը (=Բանաստեղծ) իր ներքին զգացումը ցաւը կամ ուրախութիւնը կը յայտնէ։—Քնարական կոչուած է այս բանաստեղծութիւնը՝ երգերը քնարով երգուելուն համար։ Քնար երբայեցերէն բառ է, Քինոր։

Քնարական երգերը նախապէս ուրախութեան նուագներ էին որ յիշեցնելով անցաւոր կեանքը՝ աշխարհային բարութիւնները վայելել կը յորդորէին։ Սակայն և որովհետև Քնարաններուն կէսը կերգէին անցաւոր կեանքը, վիշտ ու հոգը, ասկէ ծագեցաւ Սուգի ու Աշխարանքի (Եղերական) երգերը։

7. Կրօնական բանաստեղծութեան Քնարական մասը խտացումն է հեղինակի կրօնական զգացման որ կարտայայտուի զանազան ձևերով, կամ իբրև պատկառանք, երկիւղ Գերագոյն էակէն, Խոնարհական զգացում, կամ իբրև Փառաբանութիւն,

Գովեստ աքանչանաց. և վերջապէս Ակնկալութիւն, Շնորհք, Ողորմութիւն սպասել Գերագոյն էակէն։ Այսպիսի զգացումներ կարտայայտուին նաև սուրբերու և վկաներու նկատմամբ, որոնց բարեխօսութեան ակնկալութիւն ունին։ Այս զգացումներով լեցուն են Հայոց հոգևոր երգերն որոնցմով հայ գրականութիւնը շատ ճոխ է։ Ի՞նչէն է այս։—Մէկ կողմէ ջերմեռանդ կրօնասիրութիւնը, միւս կողմէ Քրիստոնէական կրթութիւնն՝ որ մեր նախնեաց մէջ շատ մեծ եղած է։ Քնարական բանաստեղծութեան նախատիպն էր Ս. Գիրքը, գլխաւորապէս Սաղմոս։ Սաղմոսերգութիւնը Հայ եկեղեցւոյ հոգեզմայլ երգերէն մէկն է։ Ս. Գիրքն Ե. դարուն թարգմանուելով՝ Հայ դպրոցներու և Դպրեվանքներու գլխաւոր դասագիրքն եղաւ, ուր կը գտնէին ուսումնասիրութեան համար բազմակողմանի նիւթ։ Ս. Գրքին մէջ կը տեսնէին Կրօնական բանաստեղծութեան վերաբերեալ օրինակներ, որոնք կը զարթնցընէին Հայոց մէջ ձկտումը նոյնպիսի երգեր յօրինելու։ Մանաւանդ որ Սաղմոսի և նաև Աստուածաշունչի միւս գիրքերու զանազան օրհնութիւններն այնքան խորապէս տպաւորուեցան նախնեաց մէջ որ ասոնց հետևողութեամբ յօրինեցին նոր երգեր։ Քրիստոնէութենէ առաջ, Հին հաւատքի ատեն, կային կրօնական զգացումներ պարունակող երգեր, հարկ էր որ անոնց յաջորդէին Քրիստոնէական երգերը, որպէս զի մէկ կողմէ զօրացնէին քրիստոնէական կրօնի վերաբերեալ զգացումները, և միւս կողմէ Հին հաւատքի ոչ նուազ վսեմ գաղափարներն ամփոփէին իրենց մէջ։ Այս նպատակին հասնելու համար հարկ էր նոր կտակարանի գլխաւոր անցքերը քնարերգել՝ ժողովրդին ծանօթացընելով կրօնի էական կէտերը, այսինքն Աստուածութեան անձնաւորութիւնները, անցնիլ երկրորդական կէտերուն, այսինքն քրիստոնէութեան տարածողներուն, վկաներուն, ս. հարց և հին կտակարանի վերաբերեալ սուրբերուն։ Այս կարգը կը տեսնուի նոյն իսկ երգերուն մէջ։ Այն երգերն, որ կը բովանդակեն Աւետարանի գաղափարները, հին ատեն գրուած են, ինչպէս կը մատնանիշուին իրենց բովանդակութենէն ու ոճէն։ Կրօնական բանաստեղծութիւնը զարգանալու պատճառներէն մէկն ալ եղած են տօները. իւրաքանչիւր տօնի պատիւը բարձրացընելու և խորհուրդը ընդհանրացընելու համար՝ նախնիք յօրինեցին երգեր, որոնց մէջ մէկ կողմէ կարծարծուէր ս. Գրքի բովանդակու-

թիւնը, և միւս կողմէ կը յայտնէին իրենց զանազան կրօնական զգացումները։

8. Հայոց հոգևոր երգերը այսպէս կը բաժնուին. 1. Երգեր որոնք լոպ ունին եղեղեցական ծագում հեթ և այդ ծագումն ի երգումն։ Ասոնք կը կոչուին Շարականներ։ 2. Երգեր՝ որոնք ա՛չ մեկ եղեղեցական արարողութեան հետ լոպ չունին։ Ասոնք ալ կը կոչուին Տաղեր։ Եւ 3. Այն երգերն՝ որ ի երգումն ծամերգութեան որոշեալ ժիջոցին և ի բովանդակութեան խնդրուածքներ։ Ասոնք ալ կը կոչուին Գանձեր. (գանձ, գանդ պարսկերէն բառ է և կը նշանակէ կրօնական երգ)։ Ասոնցմէ զատ կան խառն երգեր որ կը բովանդակեն խնդրուածք և գովեստ (ներբող) սուրբերու մասին։

Տաղերը, գանձերը, նաև մեղեդիներն ալ Շարական կը կոչուին առհասարակ (թէև զանազանութիւն կայ ասոնց միջև, արդէն ըսինք) ինչպէս կը տեսնուի Ներսէս Շնորհալւոյ «Հրեշտակաց» ոտանաւոր մաղթանքին, նաև ասոր յաջորդ Գրիգոր Տղայ կաթողիկոսին «առ հաղբատացիս» թղթին և Ներսէս Լամբրոնացւոյ «Մեկնութիւն պատարագի» «Տէր թագաւորեսցէ ի» մէջ—«Զոր երգէ եկեղեցի խորհրդապէս նախ սկիզբն սրբոյ պատարագին ընդ որ և շարական յարմարին պատշաճապէս ի փառս Աստուծոյ»։

Գալով «շարական» բառի նշանակութեան, մեր եկեղեցական մեկնիչները աւելի կը համարեն «Շարական»ը բարդուած Շար և ական բառերէ, այսինքն ազնիւ քար, իբրև թէ նշանակէ «շարականաց պատուականաց» երգին վայելչութիւնն այլաբանելով։ Սակայն հայ լեզուի բարդութեան կանոնն ասոր դէմ կելլէ, որովհետև Ական իբրև ազնիւ քար նշանակիչ, սովորաբար նախագաս կը գրուի բարդութեան մէջ, ինչպէս «Ականակապ», «Ականագոյն» և այլն, իսկ ուրիշ բան եթէ նշանակէ, բառն անփոփոխ կը մնայ, ուղղական, ինչպէս «մեծական», «չարական» և այլն։ Ասոր համար նախամեծար է Շարական բառն ածանցուած համարել եբրայական սեմական շէր կամ շէրա բառէն որ «երգ» կը նշանակէ, այս սեմական բառն նոր պարսկերէնի մէջ ալ կայ՝ արաբացիներէն փոխառնուած։

9. Հայոց կրօնական երգերուն այս բաժանումը կը համապատասխանէ հին եբրայական բանաստեղծութեան սաղմոսերգութեան։—Սաղմոսի եբրայեցերէն անունն է Դէհիլլիմ, այսինքն գովեստներ փառաբանութիւններ, թէպէտ և Սաղմոսնե-

րէն չատերը մանաւանդ Ողբ կամ Եղերերգութիւն են՝ Քնարերգական ըլլալուն։ Սաղմոսներուն մեծագոյն մասն իբրև վերնագիր ունի Մեղմոր որ կը նշանակէ «բանաստեղծութիւն», «երգ»։ Այս բառն եօթանասնից յունարէն Աստուածաշունչի մէջ թարգմանուած է Փսալմոս, ուրկէ Հայերէն «Սաղմոս», այսինքն նուագերգութիւն կամ քնարական քերթուած։

Սաղմոսերգութիւններն իրենց բովանդակած նիւթին համեմատ կը բաժնուին. 1) Եհովայի կամ որ ճիշտն է Եահվէի «Ալելուեաները», «Գովեստի երգեր», Դէհիլէմ բուն նշանակութեամբ։ 2) Տօներու ապէն երգուածները «Երգ աստիճանաց» և 3. Այն ոաղմոսներն որ չը բովանդակէն Ղպտամեան դէպքեր, և 4. Խառն ոաղմոսներ, Եղերական, Մեսիական սաղմոսներ։

10. Ոտանաւորը կամ Տաղաչափութիւնը զանազան կանոններու համեմատ վանկերը չափով կամ թուով կարգաւ չարել, կամ բանաստեղծական լեզուով խօսիլ կը սովրեցնէ։ Հետեւապէս Տաղաչափութիւնը բանաստեղծութեան իբրև թէ քերականութիւնն է։

11. Տաղաչափութիւնն երեք տեսակ է. շեշտաւոր, վանկային, կամ բառական ու չափական։

Շեշտեալ ոտանաւորին մէջ բառերուն և վանկերուն շեշտն որոշ կանոնի տակ է։ Երգուելու համար եւրոպական եղանակներու վրայ յօրինուած երգերը շեշտեալ ոտանաւոր են։

Վանկային կամ թուական ոտանաւորը վանկերու թուով կը կազմուի։

Թուական ոտանաւորներն ընդհանրապէս յանգաւոր կըլլան։ Չափականն ալ, թուականին հակառակ, ոչ թէ վանկ կը համարէ, այլ վանկերու թուէն անկախ, վանկերու երկայն ու կարճը չափելով՝ ոտք կը ձեւացնէ։ Չափական ոտանաւորը բոլորովին անյանգ է։ Շարականները մեծ մասամբ չափական ոտանաւորներ են։

12. Չափականին ոտքերէն ոմանք երկավանկ են և ոմանք եռավանկ, կը գտնուին նաև բազմավանկներ, սակայն երկավանկներուն և եռավանկներուն բաղադրութիւնն են։ Չափական ոտքերն ու իրենց անուններն ըստ հնոց հետեւեալներն են, երկավանկ ոտքերն են Տիծամբիջ, Տիծաւոր, Հոմբոյր ու Անապայտ։

Երկավանկ բառի մը առաջին վանկն եթէ սուղ ու վերջինն երկար ըլլայ, կը կոչուի մեծամբիջ, եթէ առաջինն երկար

ու վերջինը կարճ ըլլայ, մեծասար, երկու երկար միավանկ բառեր կը կոչուին համբոյր, երկու սուղ բառեր՝ անգայտ։ Եռավանկ ոտքերն են ոտէղն, վէրջոտանջ, ոտողջա, ոտողբոբ, աւարտեղ, հաւեղ, ոտոյ, ներքև։ Եռավանկ բառի մը առաջին վանկն եթէ երկար ու վերջին երկուք՝ կարճ ըլլան, կը կոչուին ստեղն, առաջին երկուքը սուղ ու վերջինն երկար ըլլայ, վերջատանջ. եթէ առաջինը սուղ, երկրորդը ու երրորդը սուղ ըլլայ, քողաղօտ, առաջինն ու երրորդն երկար ու երկրորդը սուղ՝ քողարարբ. առաջինը սուղ և երկրորդն ու երրորդն երկար՝ աւարտեղ. առաջինը և երկրորդն երկար՝ հաւեղ, երեքն ալ երկար ըլլան՝ սոնք, և եթէ երեքն ալ կարճ ըլլան ներգև։

Այս այլ և այլ չափերուն համեմատ, ոտանաւորները կը զանազանուին մեծավէրջեան, մեծառաբեան, ոտէղնեան, վէրջոտանջեան, կամ խառն մեծավերջ ու վերջատանջ, մեծասար ու ստեղն, մեծասար ու մեծավերջ, ստեղնեան և ուրիշ համբոյրով խառն։

Հայկական չափերու բուն ու յաճախ գործածականն է վէցոտնեան կամ վէցոչափ կոչուածն որուն բովանդակ էական յատկութիւնները հետևեալներն են.

1—3—4—3. ով՝ [1]) պահապան՝ որ ծագեցար՝ յԵդեմայ,
4—2—4—3. նշան յաղթութեան՝ ընդդէմ՝ աներևոյթ թշնամւոյն։
4—4—4—4. դու փակելոյ դրախտին բացող՝ և առաջնորդ՝ աւազակին,
4—4—3—3. որ զբոցեղէն՝ սուրբն կապտեաց անեղին՝ հրամանաւ.
4—3—4—3. որովք և մեք՝ վերջացեալքս՝ յամենառատ՝ քո չնորհէ.
3—3—4—3. Ճոխանա՝ մրք նոքօք՝ գեր ի վերոյ՝ քան զարժանն.
3—3—4—4. ողորմեա՝ մաղթանօք՝ սոցա երկրորդ՝ բանաւորացս։

Շատ մը այլաչափ կարծուածներն ալ, ինչպէս ըրած է հ. Արսէն Բագրատունի, «Մշակականք», էջ 18, կրնան դիւրաւ վեցաչափի վերածուիլ։

Վեցաչափ տողի մը մէջ կրնայ 12—16 վանկ ըլլալ՝ չորս անդամի բաժնուած, որոնց իւրաքանչիւրը (երկար և սուղ խառն) երեք երեք վանկ կը համարուի։ Այսպէս իւրաքանչիւր տողը 12 չափական վանկ կամ 6 ոտք կուտայ։ Կրնան ան-

---

[1]) Այս «բութ» (՝) կէտը հատածի կամ անդամի տեղ նըշանակուած է։

դամները՝ չորս վանկի տեղ երեք կամ երկու նաև մէկ վանկ միայն ունենալ։—Միավանկ կամ երկավանկ անդամները սովորաբար տողին կէսէն առաջ կըլլան։

Շատ վարժութիւն պէտք է չափական ոտանաւոր մը կարդալու՝ երգելու և անոր գաղտնիքներուն թափանցելու համար։ Երբեմն ոչչափ կը սխալին մեր երաժիշտները Շարականը կամ Քաղուածքն երգելու ատեն։ Քաղուածք երգել ամէն երաժշտի գործ չէ, ինչպէս դիտուած է շատ անգամ։

13. Երաժշտութիւնն ալ բանաստեղծութեան նման ունի իր տաղաչափութեան օրէնքները, այսինքն իւրաքանչիւր երգ շեշտերու դրութեան համաձայն բաժնուած է հատածներու։ Երաժշտական երկու գլխաւոր հատած կայ՝ մեծասար ու սոսնց. մնացածները ասոնցմէ ածանցուած կամ բաղադրուած են։ Մեծասարը $^2/_4$ երաժշտական հատած մըն է, եթէ պարունակէ զոյգ ամանակ ուր կը շեշտուի առաջինը, մինչ երկրորդը անշեշտ կանցնի. ստեղն է $^3/_4$ եթէ կը բովանդակէ երեք ամանակ (կոճատ) ուր կը շեշտուի կրկին առաջինը, մինչև վերջին երկուքն անշեշտ կը մնան. մեծասարի ածանցներն են $^4/_4$, $^6/_2$, $^8/_4$, $^2/_2$, $^3/_8$, $^4/_8$, և այլն, ասոնց $^4/_4$, $^2/_4+^2/_4$ կը շեշտուի մեծասարի ($^2/_4$) նման, այն զանազանութեամբ միայն որ առաջին $^2/_4$ի շեշտն աւելի զօրաւոր է քան երկրորդինը և այլն. ստեղնի ածանցումն են $^3/_8$, $^6/_8$, $^9/_8$, $^{12}/_8$, $^6/_4$, $^9/_4$ և այլն, ուր $^9/_8=^3/_8+^3/_8+^3/_8$ առաջին $^3/_8$ը զօրաւոր շեշտ ունի, երկրորդը գրեթէ առաջնի կիսուն չափ. և երրորդն աւելի պակաս և այլն։ Բարդութիւններն են $^5/_4$, $^7/_4$, $^5/_8$, $^7/_8$ և այլն, ուր օր. $^5/_4=^2/_4+^3/_4$-ին կամ $^3/_4+^2/_4$-ին և կը շեշտուի պարզերուն շեշտադրութեան օրէնքով։ Մեր եկեղեցական եղանակներու մէջ կան թէ մեծասար և թէ ստեղն և թէ ասոնց ածանցներն և բարդ—ածանցներ։

14. Երաժշտութեան և լեզուի շեշտադրութեան օրէնքները սերտ կապ ունին իրարու հետ, երկուքին շեշտն ալ ի բարմէ անբաժան ըլլալով՝ անքակտելի ներդաշնակութիւն մը կը ներկայացնեն։

Մեր լեզուին մէջ կը շեշտուին բառերու վերջին վանկերը միայն։ Բացի կոչականներէ, երգեցողութեան մէջ ներելի է բազմավանկ բառերուն երկու շեշտ տալ և եթէ հնարաւոր է, բառի արմատը շեշտել, ինչպէս ըրած են մեր նախնի բանա-

ստեղծ—երգիչ—երաժիշտ հայրերը։ Ուրեմն նախ պէտք է երգի խօսքը լեզուական չափի վերածել, յետոյ հատածներու բաժնել, որպէսզի լեզուի և եղանակի չեշտերն իրար համբուրեն։

Լեզուի չեշտերն երաժշտութեան խազերէն առնուած են՝ լաւ առոգանելու համար։ «Առոգանութիւն» կը կոչուի բառերն ուղիղ արտաբերելու կանոնը, իր նշանները, ինչպէս չեշտ ՛, բութ ՝, երկար ՞, սուղ, ոլորակ կամ պարոյկ ՞ ձայնաւորներու վրայ կը դրուի։ Ասոնց անուններէն քերականական բացատրութիւններ յառաջ եկած են.—չեշտել, բութել, երկարել և սղել։ Այս նշաններով կը ցուցուի ամանակը=վանկերու ձայնին ատաճանը կամ տեւողութեան չափը։

15. Առոգանութիւնը ըստ նախնեաց (կամ մանաւանդ ըստ յունաց) ձայնաւոր գրերու բարձրութեան ու ցածութեան և երկայնութեան ու կարճութեան վրայ զբաղելով՝ լեզուին իրրև թէ երաժշտական մասն է, որուն համար յոյներն աւելի բացայայտ առերգութիւն կոչած են զոր մերինները առոգանութիւն թարգմանեցին։ Նիւթական նմանութենէն չխափուելով հանդերձ կըսենք թէ առոգանութիւն առերգութեան մէկ եղանակաւորումն է, ձայնաշրջումը, քան այդ բառին մէկ բարդութիւնը։ Մեր լեզուն հիմայ չեշտը զոհած է, միայն պարագաներու համեմատ երկար չեշտ ու պարոյկ՝ը գործածէ, բնականէն բութ բառ մը կրնայ երկարել, չեշտեալ ըլլալ։ Թէև յայտնի չի դրուիր չեշտը, բայց առոգանելու, մանաւանդ երգեցողութեան ատեն յայտնապէս կերևան։

16. Հ. Արսէն վրդ. Բագրատունի, երբ 1847.ին «Պոլիսոյ Վիրգիլեայ Մարոնի մշակականք»ը երկար յառաջաբանով մը հայերէնի թարգմանեց ոտանաւոր, այնպէս կարծուեցաւ թէ չափական ոտանաւորը զուտ հայկական է, հայացի. այս պատճառաւ չափական ոտանաւորը կոչուեցաւ «հակական չափ»։ Սակայն Հ. Յովսէփ վ. Դաթրճեան իր «պատմութիւն մատենագրութեան հայոց, Վիեննա, 1851, էջ 31—38» դիտել տուաւ թէ «Չափականութիւնն» ու «Համեմատականութիւնը» հին ասիական բանաստեղծութեան ջիղերն են։ Համեմատականութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ մէկ դլխաւոր իմաստ կամ մտածութիւն մը բացատրող երկու կամ շատ նախադասութեանց կանոնաւոր կապակցութիւնն ու շարքը։ Այս դաշնակաւոր կրկնութիւններն

աստիճանաւոր իմաստի յառաջադիմութիւնն է որ մեր նախնեաց «գուսանական» քնարթուածներուն ոգին ըլլալէ զատ, կան նաև ս. Գրքի մէջ ալ։ Աստիճանաց երգերէն մեծ մասն այսպէս է, ինչպէս Ճի սաղմոսը, «համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինց օգնութիւն»։ «Օգնութիւն ինձ ի տեառնէ եկեսցէ որ արար զերկինս և զերկիր»։ «Մի տար ի սասանութիւն զոտն քո, և մի ննջեսցէ պահպան քո»։ «Որպէս ոչ ննջէ և ոչ ի քուն երթայ պահպանն Իսրայելի»։ Կամ ելք, ԺԷ. «Աչ ի Տէր փառաւորեալ է զօրութեամբ իւրով,—Աչ ի Տէր խորտակեաց զթշնամին...» և կամ Դ։ Թագ. է. «Տէր, Ցելանել քո ի Սէիրայ, և ի շրջել քում յանդամանացն Եդովմայ...»։ Այսպէս Հ. Գաթրճեան կերպով մը մատնանիշ ըրաւ թէ չափական ոտանաւորը զուտ հայկական չէ։

Վերջերս իտալացի հայագէտ Գրիմի նամակին և Մ. Դիւվալի ուսումնասիրութեանց վրայ յենլով՝ Վենետիկեան վարդապետ մը, Հ. Աթանաս Տիրոյեան, երկարօրէն գրեց «Բազմավէպ» 1899, էջ 105, 249, 345, 502 թէ հայկական ոտանաւորի ծագումն ասորական է և հայկական չափերն ալ, շարականներու չափը, յար և նման է ասորականին։

17. Ասորական ու հայկական տաղաչափութեան մէջ իբրև նոյնութեան կէտեր նկատուեցան չափն, անդամներու և շեշտերու հանգամանքները։ Սակայն հայկական ոտանաւորի կազմութիւնը կը տարբերի ասորականէն թէ՝ անդամներու շարուածով, թէ իրենց պարունակած վանդներու ընդով և թէ անդամներու իրարմէ բաժնուելու ձանոնով։ Ինչ որ մեր լեզուին ներդաշնակութեան համաձայն չէ, մեր նախնիք զայն ասորերէնէ փոխ առած չեն։ Հին ասորականին մէջ մետասանավանկ եռանդակ չափը չիկար. չափ մ'որ հին հայկական ոտանաւորին մէջ շատ յաճախուած է. հակառակ ասորական ոտանաւորի օրէնքին՝ հայկականին մէջ երկավանկ անդամ մերթեք չի կրնար քառավանկ անդամի յաջորդել։ Այս վերջինները հայուն բնորոշ հանգամանքը կը կազմէ ասորականէն։

Եղիշէ Եպ Դուրեան այս կարծիքին դէմ ելաւ, «Մասիս» չաբաթաթերթ. 1900, էջ 176—182, և գիտել տուաւ այս նմանութեան կէտերը հասարակացին և աննմանութիւններն ու կեղակարծ նմանութիւնները կը հաւաստեն թէ հայկական տաղաչափութիւնը դէթ՝ մեծ բան մը չի պարտիր ասորականին։ Դրուն չափականութեան հիմնական սկիզբն է ոտանաւորի վան-

կերուն որոշեալ թիւը, և այդ կերպն ի գործ կը դրուէր ֆերլեոդ-նան ճառերու և տրկներդուներնոց մէջ, այսինքն ամբողջ գրուած մը համաչափ տողերէ կը բաղկանար։ Ըստ այսմ Ս. Եփրեմ եօթնա-վանկ տողերով յօրինած է իր ճառերը որոնք յաճախ 3+4 վան-կերու կշռութեամբ կը ձեւանան, Մար Բաղայ՝ հնգավանկ տո-ղերով (2+3 վանկերով · Ներսէս՝ վեցավանկ չափով (2+3)։ Իսկ աւելի վերջերը՝ Յակոբ Սրճեցի իր քերթուածները կը գրէր էր-նոդեոնովանկ տողերով որոնք քառավանկ 3 անդամէ կը կազ-մուէին։ Արդ, կը յարէ Եղիշէ եպիսկոպոս, անտեղի չէ մտածել թէ հայերը եթէ հետեւող ըլլային Ասորւոց՝ պատճառ մը չիկար որ չընդունէին այդ համաչափութիւնը, փոխանակ խաւն ի խուռն՝ անհամեմատ ու անհանգէտ տողերով յօրինելու իրենց քերթուածները, արձակի մը համարձակութեամբ շարժելով իրենց գրիչը։

Հոս պէտք է միտք բերել Գողթան երգերն որոնց ներքին կազմութեան մէջ մեծ գաղտնիք մ'որոնելու հետաքրքրութիւնն ամուլ մնացած է ցարդ, վասն զի, ինչ որ ալ ենթադրուի, ա-նոնք իրենց ամէնէն պարզ ձեւին տակ, արձակէն հազիւ զանա-զանուող տողեր են, լոկ քերթողական շունչ մըն է որ կ'անցնի անոնց մէջէն բնական ներդաշնակութիւն մը տալով բառերուն և երգուելու սահմանուած ըլլալով՝ հարկաւ վիպասանին գեղգեղան-քըն ու բամբռին թրթռանքը կշիռ ելեէջներով պիտի կրնային ոգեորել զանոնք։ Հայ. եկեղեցւոյ հնագոյն շարականներն ո-րոնք Ոռոմանոսի կաղապարուած ձեւ մը չունին, մանաւանդ Սաղ-մոսները (իբրև երգեր) չօշափելի վկայութիւն մըն են ի հաստատու-թիւն այսպիսի վարկածի մը. Եբրայական բանաստեղծութեան և Գողթան «թուելեաց» երգերուն մէջ ալ նմանութիւն մը չկայ զուգակշռութեան մասին. զուգակշռութիւնը իսրայէլեան քեր-թողներու մտածութեան յատուկ դարձուածքներ են, մինչդեռ Գողթան երգերուն մէջ երևցածը՝ զգացման ուժգնութիւն տա-լու կամ իրողութիւն մը չեշտելու բնական ձեւն է կրկնման, ո-րովհետև Շիկամորթն անգամ նոյնը կ'ընէ իր երգերուն մէջ։ Ամբողջ Գողթան երգերու և նաև սաղմոսարանին գաղտնիքն է սեղմ դարձուածքներ կամ քիչ շատ ներդաշնակաւոր լեզուի մը նախերգանքն իր բնական արտայայտութեան մէջ։

Արձակը՝ բուն արձակն անդամ՝ ունի այդ հանդամանքը։ Մանօթ հայագէտ Ֆէթթէր Գողթան երգերու արձակ մէկ հա-

տուածը տաղաչափական կապանքի զարկաւ, «Դիւցազնական չափ»ի հանդամանք մը տեսնելով անոր վրայ։ Թերևս իրաւունք ունէր պատուական գերմանացին, վասն զի այդ տողերու կազմութիւնը աւելի լրջութեամբ կը համապատասխանէ տաղաչափական արուեստի մը կանոններուն, քան թէ «Ցենչայ Սաթինիկ Տիկին տենչանա», նոյնպէս և միւս պատառիկները Գողթան երգերուն։ Սակայն տարօրինակ բան չէ որ ոչչէի մէջ ալ այդ չափով տողեր ելլեն մեր դիմաց, ինչպէս Մ. Խոր. Ա. լզ. «Եւ ի մէջ այսպիսեաց խառն երազոց—Թըւէր ինձ կալ ի վերայ ատենեաց իմոցս...» Խոր. բ. ը. «Ցեղերս ծովուն դիպեալ նաւուց Թըշնամեաց,—գիմէ ի վերայ, և ի խաղալըն նոցա—ի խորն իբրև ասպարէզս ու թ.—և սա ոչ ժամանեաց նոցա. առնու վէմըս բըլրաձևս՝—և ձրգէ ըզկնի, և ի սաստիկ պատառմանէ—ջուրցն ընկըղմին նաւք ոչ սակաւք».

Աւետ. (Մատթ. Ժ. 28—32), Ելք Դ. 11, Առակք Գ, Զ. 27—28, Մեկն. Մատթ. Ա. էջ 354, «դիւցազներգական չափի» համեմատ վեց տողերով են։

Վերջապէս կրնայ ըսուիլ թէ չափական ոտանաւորն յէականն և թէ յանգաւորը մեր մէջ սեմականէն փոխառնուած են։

18. Մինչև ԺԱ. դարը մեր նախնեաց ոտանաւորը չափական էր. այդ դարուն կ'սկսի Ցանգաւոր թուական տաղաչափութիւնն Արաբացւոց ազդեցութեան տակ։ Ցանգաւոր թուականն ու երբեմն անյանգ թուականը քիչ ատենէն ալդայնացած սովորական տաղաչափութեան յաջորդեց։ Ցանգական տաղաչափութեան գլխաւոր արդիւնաւորողներն եղան Գր. Մագիստրոս, Գր. Նարեկացի ու Ն. Շնորհալի։ ԺԲ. դարէն ետք չարականներն երբեմն չափական և երբեմն թուական են։

19. Շարականի երգեցողութեան տողերու և հատուածներու վերջաւորութեան ատեն, երկար կամ զոյգ ամանակ ունեցող վանկին կը հետևին ընդհանրապէս կոճատները մինչեւ վերջը, կամ կրկին զոյգ ամանակ ունեցող վանկ մը։ „Բարեխօսութեամբն“ այս օրէնքով է մինչև վերջը։ Բարեխօսութեամբ մը ո՛ Ա՛ չու՛ի ընկալ զաղաչան՝ս ոոց պաշտեցէք, և այլն „Լեառն վիմածին՝, ուրբ՝ը յորբաաբ. պարունակ ծալկեալ, այբ վայելչ՝ չ „Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայ՝սմ աւուր յայտնեցաւ, հովիւք երգեն ընդ հրեշտակ՝ս, զան աւետիս աշխարհի“։ „Զինուորութիւնք հրեշտակաց օրհնեն զքեզ“... „Զայնիւն աւետարանիր հրեշ-

պոլն .. Տէր, որ ի մեջ լերլն աղբերացու՝ցե՛ր ելջ՝ւ՝ն ի վերէն"։ Այս ընդհանուր օրէնքին համաձայն է գրեթէ չարականներու ⁴/₅ մասը։ Պատարագի արարողութեան մէջ ալ այս կանոնը թէև չատ փոխուած ու այլայլուած, օր. Ամէն և ընդ հոգւոյդ քում։ Եւ եւս խաղաղութեան ընդեր աղաչեսցո՛ւք։ Ամենայն սրբովք ընդ՝ յե՝շատակեսցո՛ւք նա ա՝ա՝նձանց՝ ընդեր աղաչեսցո՛՝ւք։

20. Հին տնտեսութեան ատեն, հրեաներն իրենց օրհնութիւններն ու սաղմոսերգութիւններն այլ և այլ նուագարաններով կ'երգէին, ինչպէս Քնար, Տաւիղ, (եբր. նեբել) Տասնաղի (եբր. ասոր) Զուրգակ (սաբեկա), Վին (հանիլլոր), Եղջերափող (յեբեն), Շեփոր (շոֆար), Սրինգ (չոֆելել), Թմբուկ (դոֆ), Ծնծղայ (Ասորերէն ցելցելա, եբր. ցելցելիմ)։ Մեր նախնեաց Գուսաներգութեան ընկերակցող նուագարաններն էին Փող եղեգնեայ, եղջերեայ ու պղինձի, Սրինգ, Ծնծղայ, Քնար, Թմբուկ, Զնար, Տաւիղ, Փանդիռն, Վին ու Բամբիռն։ Այս վերջինը բարձրկեկ (բամբ=պրակ. պոմ) ձայն մ'ունեցող աղեբախ նուագարան մըն էր։ Հիմայ Եկեղեցական երաժշտութեան մէջ գործածական են միայն Ծնծղայ, Քչոց ու Զանգակ, կամ որ ճիշտն է ըսել Ծնծղայ ու Զանգակիկ, որովհետև Քչոցն ուրիշ նուագարան մը չէ, եթէ ոչ քանի մը զանգակիկներէ բաղկացած։ Խնդիր է գիտնալ թէ միւս նուագարաններն երբեմն գործածուած են մեր Նուիրական երաժշտութեան մէջ, թէ ոչ։

21. Քրիստոնէութեան նախնական դարերու մէջ աստուածային պաշտամունքի յատկացուած երգեր չկային, այլ սաղմոսներու կանոններն էին սովորական ձայնով, և յետոյ հետզհետէ նոյն սաղմոսութիւնը յարմարցուեցաւ եկեղեցական երգեցողութեամբ ու ձայնի համեմատ։ Այս պաշտամունքը կոչուեցաւ սաղմոսերգութիւն։ Ժամանակ անցնելէ ետք, աւելի տարածուեցաւ երաժշտական երգերու կիրառութիւնը՝ ժողովրդի ձանձրոյթը բառնալու համար, որ երեկոյեան սաղմոսներէն ու ընթերցումներէն թոյլութիւն կզգար աստուածային պաշտամունքի ատեն։ Եղանակներու քաղցրութիւնը փարատեց այս թոյլութիւնը, որովհետև, ինչպէս կըսէ Լամբրոնացի, „Մեկնութիւն պատարագի", „Ազդումն երաժշտական եղանակին... ընդոստուցեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն Շնորհին. քանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ ի սրտմտութեան՝ որպէս երգոցն ձայն.... վասն

այսորիկ և եկեղեցական աւանդութեան ընկալաւ զայն յարտաքնոցն։

22. Ե. դարէն ետք կսկսին շարականները։ Ասկէ առաջ ինչպէս ըսինք, միայն սաղմոսերգութիւն կար։ Շարականներն ալ հիւսուելէ ետք, երգուած սաղմոսները—Ամ- ըսուեցան և ութ ձայնի յարմարցուած իւրաքանչիւր սաղմոսի տեղ նոր շարականներ յօրինուեցան որով մեր ազգի մէջ հաստատուեցաւ ութ տեսակ շարական, ինչպէս Օրհնու-ամ-ն, Հարց, Մեծացու-ցէ, Ողորմա, Տէր յերկնից, Մանկունք, Ճաշու-, Համբարձի, զորոնք կը յարէին իւրաքանչիւր Սաղմոսի։

„Օրհնութիւն“ կը կոչուի այն երգն որ յարմարցուած է սաղմոսարանի մարգարէական Օրհնութեանց իւրաքանչիւր կանոնի և որ կերգուի գիշերային ժամին. ասոնց առաջինն է Մովսէսինը, „Օրհնեսցուք զՏէր, զի փառաւոր է փառաւորեալ“, ասոր համար Օրհնութեան շարականն սկսելու ատեն, զայն կերգենք։

„Հարցն“ յարմարցուած է Բաբելոնի երեք մանուկներու օրհնութեան. „Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց“ և կերգուի առաւօտեան ժամուն։

„Մեծացուսցէն“ Սրբուհի Աստուածածնի երգին յարմարցուածն է, „Մեծացուսցէ անձն իմ զՏէր“, որ առաւօտեան ժամուն կերգուի։ Թէև հին ատեն կըսէին միայն կիրակի և ուրիշ կրօնական տօներուն, բայց հիմայ ամէն օր։

„Ողորմեա“ն է առաւօտեան ժամին այն երգն որ պատշաճեցուցած է Ե. Սաղմոսին „Ողորմեա ինձ, Աստուած»։

„Տէր յերկնից“ն է առաւօտեան ժամուն այն երգն ըստ ՃԽԸ Սաղմոսին „Օրհնեցէք զՏէր յերկնից“։

„Մանկունք“ն է առաւօտեան ժամուն երգուածն ըստ ՃԽԲ Սաղմոսին. „Օրհնեցէք, մանկունք, զՏէր։

„Ճաշու“ն է երգուած շարականն ճաշի ժամէն ետք, պատարագի ատեն, աւուր պատշաճի այլ և այլ սաղմոսներու համեմատ։

„Համբարձի“ն է իրիկուան ժամուն երգուածը՝ ըստ ՃԻ Սաղմոսի, „Համբարձի զաչս իմ ի լերինս։ Ասոնց ամբաւջութիւնը կը կոչուի պաղէր կամ ՀՆՈՆ։

Արդ, մինչ շարականները դեռ հիւսուած չէին, գիշերային ժամուն „Օրհնութեան տեղ, Օրհնեսցուք զՏէր“, առաւօտուան

ժամուն «Հարցին տեղ», «Օրհնեալ ես Տէր» և այլն սաղմոս-երգութիւններն էին, և իրիկունը, «Համբարձի զայս իմ ի լերինս» սաղմոսերգութիւններն էին, որոնց վրայ քիչ մ'առաջ խօսեցանք։

23. Եկեղեցւոյ արարողութիւնը ծանրու բաժնուած է.

Ա. Գիշերային ծամ. «Օրհնեալ Տէր մեր». «Տէր բազումն»՝ ի դէմս Հօր Աստուծոյ։

Բ. Առաւօտեան. «Լցաք առաւօտու».—«Օրհնեալ տէր Աստուած», ի դէմս Հօր Որդւոյն Աստուծոյ որ երևեցաւ իւղաբերից։

Գ. Արևագալի ժամ. «Եղիցի անուն Տեառն», ի դէմս Հոգւոյն, այլ և ի դէմս Յարութեանն և երևման աշակերտացն։

Դ. Սրբոցդ կամ Ճաշու ծամ, «Օրհնեալ հոգիդ ս. Աստուած». որ կատարի ի դէմս իջման Հոգւոյն սրբոյ և ի խորհուրդ նախամօրն ճաշակման և ապատութեան, Քր. ծննդեան, Ճրագալոյցի, Աւագ եշ. ու Զատկի ճրագալոյցի ճաշու ժամերը ԺԵ. դարէն յառաջ գոյութիւն չունէին։

Ե. Երեկոյեան ծամ. «Ես առ Աստուած կարդացի», որ կը կատարուի ի դէմս Որդւոյն Աստուծոյ. «որ էջն ի խաչէն և պատեալ պաստառակալաւ և եդաւ ի գերեզմանի»։

Զ. Խաղաղական ծամ. «Ի կարդալ իմում», որ կը կատարուի ի դէմս Հոգւոյն Աստուծոյ. նաև ի դէմս Բանին Աստուծոյ, որ եդաւ ի գերեզմանի և էջ ի դժոխս և խաղաղութիւն արար հոգւոցն։

Է. Հանգստեան ծամ «Ահաքեա, Տէր, զլոյս», «Եկեսցէ», որ կը կատարուի ի դէմս Հօր Աստուծոյ, «զի պահպանողական աչով Միածնին պահեսցէ զմեզ ի խաւարային գիշերի»։ Ըստ յիշատակարանաց ԺԲ. և ԺԳ. դարերու, չկային օրհնութեան քաղուածներ նախնեաց օրով, այլ միայն տէրունական տօներուն, և Հետևակ շարականները կերգէին օրհնութենէ ետք։ Նախ ԺԵ. դարու սկիզբը կը գտնենք քաղուածքը յիշատակուած, բայց Պահք օրեր օրհնութիւն չկար մինչև ԺԸ. կամ ԺԷ. դար։

«Հանգստեան ժամը» հնարեցաւ ԺԳ. դարուն, և կը պաշտուէր «ի վանականաց և երբ առանձինն ի սենեակս իւրեանց» և մուծաւ յեկեղեցի ի ԺԷ դարն, իսկ «Հաւատով խոստովանիմ» և «Որդի Աստուծոյ», յաւելան ի նա ԺԷ. դարուն։ (հմմտ. «Ժամակարգ», «Ներած.» Իէ.)։

Հսկում կըլլան մեծ տօներու գիշերը սաղմոսով և ընթերցմամբ, և կը դնեն սրբութիւնները բազմոցին վրայ ատեանը՝ Ծաղկազարդին, Մեծ ուրբաթին, Զատկին, Նոր կիւրակէին, Պենտէկոստէի, Վարդավառին, Փոխման, Խաչվերացին ու Աստուածայայտնութեան։

24. Նախնի դարերու մէջ, Բշ. օրն ի պատիւ արարչագործութեան որոշուած էր և ի պատիւ հրեշտակներու. Գշ. օրն՝ ի պատիւ մարգարէներու. Դշ. օրն՝ ի պատիւ ս. Աստուածածնի. Եշ. օրն՝ ի պատիւ առաքեալներուն. Ուր. ի յիշատակ չարչարանքի, և Շաբաթ՝ ի պատիւ մարտիրոսներու։

25. Եկեղեցական վերին աստիճանի շահեկան խնդիր մըն է դիտնալ թէ մեր եկեղեցին երգերուն ճրը կը կցէ «ալելուիան»։ Պահոց Ա.Ձ. Դ. հարց «Երգէին մանկունք» գործատուններն «ալելուիա» ունին, նոյնպէս, բացի Յարութեան օրերէն ու Ծնունդէն, ալելուիա կերգուի Ծաղկազարդի, Աւագ շաբթու երգերուն մէջ, և նաև քառասնորդական կիրակիներն ու ննջեալներու յիշատակին. նոյնը յոյն, ասորի և ուրիշ արևելեան եկեղեցիներու մէջ։ Լատինական եկեղեցւոյ մէջ շատ դարերէ ի վեր ննջեալներուն յիշատակին ալելուիա չերգուիր և նաև «Առաջաւորաց բարիկենդանէն» մինչև Աւագ շաբաթ օրը. և այս օրը, Յարութեան պատարագը մատուցուելէ ետքը, կսկսեն երգել ալելուիան։

Կ. Պոլսոյ Միքայէլ Կերուալարիոս պատրիարքն որ բիւզանդական պատրիարքութեան գերիշխանութեան ու անկախութեան աշխատողներէն մէկն եղաւ և որ արևմտեան եկեղեցւոյն դէմ այնչափ պայքարեցաւ, Հռոմի եկեղեցին կստգտանէ այս մասին։ Լատին եկեղեցին կառարկէ թէ եբրայեցիներն ալելուիա կերգէին ցնծութեան ատեն, հետևապէս հարկ չկայ ննջեցեալներուն և ուրիշ առթիւ երգել։

Նոյնը մտածեցին նաև հայերը Կիլիկեցւոց ատեն, ինչպէս որ Վարդան վարդ. Սաղմոսի ՃԺԸ մեկնութեան առթիւ, կըսէ «ի յիշատակ ննջեցելոյ ալելու չվայելէ ասել։ Սոյն պարագաներու մէջ ալելուիա երգելու կամ չերգելու համար բաւական վիճաբանութիւններ կատարուած են։

Ալելուիան երեք անգամ կը կրկնուի, կամ իրարու ետևէ, և կամ ընդհատմամբ խօսքերու «Որ վեր օրհնիս» ի Գ. տունին մէջ վերջինին պէս է. ինչպէս «Ովսաննա ի բարձունս,

ալելուեա», «Բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն, ալելուեա» և «Օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ տեառն, ալելուեա»: Ահա ալ երրեակ մտածումով: Նախ՝ «Ովսաննա ի բարձունս» երկրորդ՝ Փրկչին մարմնով գալն երգելու, և երրորդ՝ դատելու համար փառքով գալուստը երգարանելու համար:

26. Հարցերը երեք տուներէ կազմուած են և բոլոր տուներ միևնոյն եղանակով կերգուին:

Երեք երեք տներէ բաղկացած ըլլալը Երրորդութեան նշանակ է, իսկ միևնոյն եղանակով երգելը՝ երեք Անձն, մի Աստուածութիւն ըլլալուն:

27. Աւանդութեամբ, Կիրակոս պատմիչի մէկ աղօտ վկայութեամբ, Շարականներու առաջին հեղինակներն են ս. Սահակ, ս. Մեսրոպ, Մ. Խորենացի ու Յովհ. Մանդակունի, թէև ստոյգ ապացոյցներ կը պակսին, ինչպէս քանի մը անգամ ըսուեցաւ:

28. Շատ հետաքրքրական ու բաղձալի էր Շարականներու և Գանձերու մէջէն բուն հին և առաջին ըսուածներուն հեղինակը ճանչնալ. սակայն ատոնց վրայօք ձեռուընիս եղած քանի մը անվաւեր ու յարմարցուած աւանդութիւններ արժէք չունին: Բանասիրօրէն, այսինքն ոճի և արտայայտուած գաղափարին ու զգացման տեսակէտով կարելի է որոշել Շարականներու հեղինակները ու դարերը: Միայն սաչափը յայտնի է, որ հին շարականները նմանութիւն են սաղմոսներու և յարմարցուած մեր կեանքին: Ասոնք սովորաբար երեք տունէ կը բաղկանան: Առաջին տունը սաղմոսէն առնուած է, միւս տուներն ալ կը պարունակեն քրիստոնէութեան հիմնական գաղափարները: Ոճի կողմէ շատ պարզ են, կարտայայտեն պարզ զգացումներ, կարճ նախադասութիւններով: Հին արևելեան բանաստեղծները երկար պարբերութիւններով խօսելու սովորութիւնը չունին, այլ հասարակօրէն կարճ վճռական նախադասութիւններ կը գործածեն: Բայց որպէսզի այս նախադասութիւնները միօրինակութեամբ մտադրութիւնը չյոգնեցնեն, զանոնք յօրինաւոր (systématique) համեմատութեամբ մը իրարու հետ կը հիւսէին: Այսպէս այլ և այլ նախադասութիւններ բոլոր խօսքին նկատմամբ մէյմէկ անդամ կըլլան: Սոյն շարականներու մէջ երկու զգացում կայ, նախ փառաբանութեան, երկիւղ ու ակնածանք, յետոյ խնդրուածք ու ակնկալութիւն:

29. Շարականներու երգեցողութեան եղանակն հիմակուընէ կը տարբերէր։ Ժամակարգութեան հին հրահանգներու մէջ գրուած է որ շարականը, սաղմոսն աւարտելէ ետք չէր սկսուէր, այլ սաղմոսին քանի մը տունը ըսուելով՝ կը յարէին շարականին առաջին տունը՝ երկու կամ երեք անգամ կրկնելով. և դարձեալ քանի մը տուն ըսելով սաղմոսէն՝ կը յարէին երկրորդ տունը՝ նոյնպէս կրկնելով, և երբ սաղմոսը աւարտէր, կերգէին շարականի վերջին տունը։

Այս սովորութեան հետքը կը տեսնուի հիմայ պահոց Բ. ողորմեայի (ԲԿ.) մէջ, «Ողորմեա ինձ, Աստուած իմ, ողորմեա, զի անպատասխանի եմ» և այլն, ուր առաջին տունին սկիզբը կը դրուի ԼԷՆ ՀՄ, որ է սաղմոսին վերջին տունը, այսինքն քաւեա զանօրէնութիւնս իմ։ Երկրորդ տունին սկիզբը կը դրուի «տառապեալք» որ է իններորդ տունին վերջինը, այսինքն «լսելի արա ինձ... և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք»։ Իսկ երրորդ տունին մէջ կը դրուի ԼԷՆ ԽՈ, որ է ԺԷ. տունին վերջինը. «Փրկեա զիս յարենէ... ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քո»։ Սոյն սովորութիւնը կը ցուցնեն դարձեալ զանազան հարցերու շատ գործատուններ, ուր գործատունին առաջին տունին սկիզբը կը դնենք «Օրհնեցէք, ամենայն գործք տեառն, զՏէր» և այլն. նոյնպէս ուրիշ գործատուններու մէջ կան «Գիշերք, զՏէր օրհնեցէք». «Աղբերք, զՏէր օրհնեցէք». «Իսրայէլ զՏէր օրհնեսցէ», որ երից մանկանց օրհնութեան այլ և այլ տուներն են։

Այս սովորութիւնը մնացած է նաև Ծաղկազարդի երեկոյեան ժամերգութեան ատեն, ուր «Խոնարհեցո», «Ապրեցո» սաղմոսներուն կը յարենք նոյն օրուան ողորմեան «Ուրախ լեր» ու Տէր յերկնից «զՔրիստոս թագաւոր», քանի մը տուն սաղմոսէ ետք, երեք անգամ շարականին մէկ տունը կրկնելով ըստ Տօնացոյցին։

Ձայներու աստիճանն ալ տարբերութիւն ունէր։ Գրուած է որ «Մեծացուսցէն» և «Ողորմեան» ցած պիտի երգուին ու «Տէր յերկնից» բարձրաձայն, իսկ «Օրհնութեան» և ուրիշ շարականներու մասին բան մ'ըսուած չէ։

30. Հնագոյն ձեռագիր շարականներու մէջ շարականներու խորագիրն ալ ուշադրութեան արժանի է, ինչպէս ԼՈՒՍՈՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ, ԼՈՒՍ, ԷՍ և շարական։

«Կանոն»՝ Էջմիածին գտնուած 1588—ԺԷ չարականի մէջ իբրև անդրանիկ խորագիր դրուած է առաջին անգամ ս. Սահակի և ս. Մեսրոպի վերագրուած չարականներու ճակատը։ (Հմմտ. «Արարատ» 1894. էջ 178—179)։

Նոյն չարականին մէջ «Կանոն» և «Կարգ» համազօր խորագրերը կը գործածուին միայն այն ատեն, երբ ամբողջովին կամ պակաս են իրենց հետևող օրուան տօնի պատշաճ չարականները։ «Հարց» և «Օրհնութիւն» իբրև անդրանիկ խորագիր առաջին անգամ գրուած են Ը. դարուն ապրող Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսի Ցարութեան ութ ձայն կրճատ ձևով գրրուած օրհնութիւններու վրայ։ Կարգ իբրև խորագիր առաջին անգամ գրուած է ԺԱ դարուն ապրող Պետրոս «Գետադարձ» կաթողիկոսի գրած Մարտիրոսաց ութ ձայն կրճատ ձևով չարականներու վրայ։ «Երգ» իբրև անդրանիկ խորագիր դրուած է մի միայն Ներսէս Շնորհալի հայրապետին բաց ձևով գրուած բոլոր երգերու վրայ, ինչպէս «Այսօր անճառ»։

«Շարականն» իբրև անդրանիկ խորագիր առաջին անգամ չարականի մէջ կերգուի Ցինանց՝ կրճատ ձևով իրարու ետև գրուած 6 հատ «Գովեանքերու» վրայ։

31. Շարականներու. ութ ձայնի բաժանումը ծագած է Կանոն—սաղմոսներէն։ Ութ ձայն ու իրենց երկու դարձուածքի եղանակներն ունին նոյնպէս իրենց անուանակոչութիւնը. ինչպէս կը տեսնուի Ցայսմաւուրքի մէջ։ «Զորս ձայնք ի չորս ի տարերց ունին զգայունքն որպէս Ա ձայնն ի հողոյն, Բ.ն ի ջրոյն. Գ.ն ի յօդոյն, Դ.ն ի հրոյն, Ե.ն յերկաթոյ, Զ.ն ի ծովու ծփանաց, Է. ն յանասնոց, Ը. ի գազանաց, Թ. և Ժ. ի հաւուց». «Շնորհ. և իւր պարագայ», էջ 88, Վենետիկ։

«Երանելւոյն Բարսեղի» գրուածքին մէջ զոր թարգմանած է Ստեփաննոս փիլիսոփայ, ձայները բաժնուած են 24. բառաչել, բջել, կանչել, գոչել, ընչել, մնչել, բրջել, կառնջել, մրմռել, ճչել, կանչել, գոհգոհել, վչել, խանչել, հառչել, հառաչել, կաղինձել, հաչել, կարկաչել, սողալ և այլն։

Շարականները 20 մայր-եղանակ ունին, ասոնցմէ կեղանակաւորուին ուրիշ 20 եղանակ ալ։ Եթէ մանր մուներ եղանակաւորումներն ալ նկատի առնենք՝ ընդհանուր գումարն կըլլայ 140 կամ 120։

Ըստ «Մանր ուսմունքի» ութ ձայնի եղանակաւորումնե-

ըն և կամ մանրուսումներն են,

ԱՁ=Առաջին յոյն։

1. Գլած, 2. Կիրակամտի, 3. Մասրնակ, 4. Անմեղուկ, 5. Խոսող, 6. Զաղ. 7. Մամկոն, 8. Զաղն. 9. Հիւանդ, 10. Գուսան. 11. Հոռոմ. 12. Զուլահակ. 13. Փորակն. 14. Հոռմակ. 15. Մովսէս. 16. Աշակերտ. 17. Բրաւոր. 18. Երկաթ. 19. Պիծակ. 20. Խոռ. 21. Ծիծեռն Հաթերբեցի. 22. Աւել· 23. Թալրուկ։

ԱԿ=Առաջին լողմ.—

1. Գռուզ. 2. Կինայ. 3. Եկեղ. 4. Քնքշակ. 5. Գոճնակ. 6. Առաւնիկ. 7. Ծովցի. 8. Զահրիկ. 9. Մեռելքաշ. 10. Զոլատող. 11. Տարօնեցի. 12. Վաչդարձէք։

ԲՁ.=Երկրորդ յոյն.

1. Կատուն, 2. Զորեքաշ, 3. Արծիւ, 4. Զագն, 5. Հովիւ, 6. Լալկան, 7. Անձեղն, 8. Զիտ, 9. Բազէ, 10. Շահեն, 11. Զաղացք, 12. Աւելի։

ԲԿ.=Առաջ լողմ.

1. Շնորհազարդ, 2. Հարնձի, 3. Մեղու, 4. Ս. Նշանեցի 5. Կարմիր վանեցի, 6. Ուղան, 7. Կողեռն, 8. Հաս, 9. Մեծ գլուխ, 10. Խարուսիկ, 11. Զորուկ։

ԳՁ=Երրորդ յոյն.

1. Զաւճտող, 2. Գայլ, 3. Զակ, 4. Տաւպտոպոյ, 5. Սայլ, 6. Առէջ, 7. Արջ, 8. Մշեցի, 9. Շաւառն, 10. Զաղ, Տիրոցի, 11. Սրինդ, 12. Առոյծ, 13. Զար։

ԳԿ.=Վաս.

1. Տարած, 2. Խեղեփ, 4. Մագնէ, 4. Առաւօտ-երդ, 5. Յաւնիչ, 6. Հաւտուոր, 7. Ցեռքաշ. 8. Գայնիկ, 9. Գաբրիէլ, 10. Միքայէլ, 11. Ցեմակ, 12. Ցեղմն, 13. Եղնակ, 14. Պարնկուլ, 15. Վարուժնակ, 16. Անձէթ, 17. Աւելորդ, 18. Մառիչն, 19. Զոր, 20. Տանուտրակ։

ԴՁ=Չորրորդ յոյն.

1. Ռամ վառ, 2. Փող, 3. Դարբին, 4. Աշակերտ, 5. Տուկատ, 6. Այսօր մանէ, 7. Ովէսայն, 8. Աւելի, 9. Գէտ, 10. Կակծոտ, 11. Հաւ, 12. Բթեչ, 13. Ծնծղայ, 14. Ճոխ գետ, 15. Բերդ, 16. Ոչխար, 17. Յովանեցաք, 18. Զոր։

ԴԿ=Վէրջ.

1. Աղաջանք, 2. Կաղ, 3. Կիրակոներ, 4. Սարկաւագ, 5.

ճեջողն, 6. Զագն, 7. Փող, 8. Թագաւոր, 9. Գալստեան, 10. Խաչի, 11. Աւելի, 12. Կցխակ, 13. Քրեդ, 14. Վարսեղն։

32. Մեր ուխտ ձայնի համապատասխան են, պարսկական, արաբական ու թրքական սա ուխտ եղանակները։

ԱՁ=Հեֆտիւկեան.

ԱԿ=Սեկեան.

ԲՁ=Հիւսէյնի.

ԲԿ=Ահէմ.

ԳՁ=Հիճազ.

ԳԿ=Սապահի.

ԴՁ=Նէվա=Իսվահան.

ԴԿ=Իւչչագ։

33. Կաւանդուի թէ ս. Սահակ ու ս. Մեսրոպ յօրինեցին հայկական երաժշտական խազերն ու եղանակները։ Սակայն խազերն ալ, եղանակներն ալ ծագումով հայացի չեն, այլ հայացած են։ Երաժշտական խազերը սեմականին եղանակաւորումները, հայացածներն են։ Խազերը ձայնանիշներ չեն, այլ ամանակներ։ Եղանակներն ալ ոմանք Ցունարէնէ և ոմանք ալ արևելեան մանաւանդ ասորի եկեղեցիէն փոխ առնուած են։ Ասորական եկեղեցւոյ երգերու առաջին հեղինակն է Գնոստիկեան աղանդաւոր Բարդեծանի (174—152) որդի Հարմոն։ Բայց Ս. Եփրեմ (Դ. դար) այդ երգերուն տեղ ուղղափառ երգեր յօրինեց և տուաւ ժողովրդին, իսկ յունական եկեղեցւոյ երգերու առաջին հեղինակներն են Գրիգոր Նազիանցի (մեռած 390) և Մեծն Բարսեղ Կեսարացի (329—379), հռոմայական եկեղեցւոյն ալ Ս. Ամբրոսիոս (340—397)։—Մեծն Գրիգոր Պապը (մեռած 604)։ H. Petermann, ZDMG թերթին մէջ, 1851, էջ 365—72, նաև «Բազմավէպ», 1876, էջ. 399—406, մանաւանդ և «Արարատ», 1894, էջ. 176—186, 218—222. և այլն. Սահակ վրդ. Ամատունի ու Սողոմոն Ա. Ս. Սողոմոնեանի «հայոց եկեղեցական եղանակներ» մակագրուած ուսումնասիրութիւնը կը ցուցնեն թէ Ս. Սահակէն յառաջ չորս ձայներ, այսինքն ԱՁ. ԲՁ. ԳՁ. ԴՁ. գտնուած են յոյն երաժիշտներու ձեռքով որոնց անունները կը յիշուին Եբոնէ-ոյն Բարոչ յաղագս յայնից գրուածոցն մէջ։

Ինչպէս խազերուն և եղանակներուն հեղինակը Ս. Սահակ չէ, (տես 27) նոյնպէս շարականներու առաջին հեղինակներն ալ չեն կրնար Ս. Սահակ և Ս. Մեսրոպ ըլլալ, որովհետև Ս. Սա-

հակ առ Քորեպիսկոպոս կրած Գ. կանոնի մէջ (տես «Սոփերք հայկականք». հատոր Բ, էջ 8) պաշտօն սաղմոսերգութեան միայն կը յիշէ։ Եղիշէ՝ (ը. եղանակ) «սաղմոսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերան նոցա»։ Ե. դարու առաջին կիսուն այդ սաղմոսներէն ոմանք, ինչպէս են ալելուիաները, չնորհիւ ս. Սահակի ու ս. Մեսրոպի սկսան չորս ձայնով երգուիլ, մինչ անկէ առաջ պարզ արտասանութեամբ էին այս սաղմոսները։

Ութ եղանակ կայ սովորաբար, ինչպէս ըսինք, բայց Ցայսմաւուրքի մէջ տեղ մը կը յիշուի 10 եղանակ։ Անշուշտ երկու աւելորդ եղանակը դարձուածքի համար ըսուած է։ Դիտած ենք որ արևելեան եկեղեցիներէն յունականին մէջ. տնօրինական օրերուն ինչ եղանակ սաղմոսերգութիւն կերգուի, նոյն եղանակով է նաև մեր շարականը։ Հրէից պասէքին, «ինակոններու մէջ երգուածներն աւագ կողմ=ԲԿ են, ծաղկազարդի համբարձին ալ, «Այսօր ընդ հրակերպեան» ԲԿ է։ Երկար պիտի ըլլար մի առ մի թուել այսպիսիները։

Շարական ուսուցանողը կը կոչուէր «փիլիսոփայ» և արուեստի գրքերը կը կոչուին հանրաւում։ Կիլիկեցւոց ատեն մանրուսման կեդրոն էին Արքայակաղին, Դրազարկ, Սկեւռոյ, Կարմիր վանք և այլն։

34. Ոմանք կը կարծեն թէ շարականները կամ գանձերն եէ եղանակով կ'երգուին։ Սակայն և ոչ, շարականները յատուկ եղանակ ունին։ Մեր երանաշնորհ նախնիք շարական մը յօրինելէն առաջ կը խորհէին թէ որ եղանակին համեմատ պիտի գրէին, այնպէս որ ԲՁ շարական մը ԴՁ չի կրնար երգուիլ։ Ասով սա կը հասկցուի որ եղանակներն ալ ունէին իրենց յատուկ տաղաչափութիւնը. նախնեաց արուեստին հմուտ անձ մը կրնայ երաժշտապետներէ աւելի, եթէ եղանակները նշանակուած իսկ չըլլան, որոշել թէ շարականն որ եղանակով պիտի երգուի։

35. Մեր եկեղեցական մատենագրութեան մէջ ամենէն գերազանցն են շարականները, իբրև պսակ Աստուածային պաշտօնագրութեան։ Այս գերազանցութեան պատճառներն են 1. Երաժշտական արհեստին էջմՒԱԾԻՆ որով ամէն եղանակներու զանազանութիւնը կը պատկերացընէ ութ գլխաւոր ձայնի համեմատ իրենց եղանակաւորումներով, 2. ՀՄՈՒՊՔ ու ՈՍՑՈՒԱԾՔԻ ՎԵՏՈՒԼԻՆ որ իրարու հոգի միացած ձայներու եղանակին հետ՝ կենսանորոգ կը զուարթացնեն երգեցողը Աստուած փառաբանելու համար։ Ս. Գրքի խորհրդաւոր իմաստներն օրհներգուած՝ տօնին կամ

օրուան գեղեցկապէս պատշաճեցուցած են, մանաւանդ որ շատերը Ս. Գրքէն առնուած խօսքեր են՝ օրհներգուած ու եղանակուած, որով յիրաւի շարականներն արժանի է համարել Ս. Գրքի համառօտութիւնն իմաստի ու խօսքի համեմատ. 3. Հապա այն վարդապետական ասացուածքներն որ խառնուած են շարականներու մէջ, ինչպէս հայ Եկեղեցու վարդապետութիւնը ս. երրորդութեան, Աստուծոյ բանին մարդեղութեան, շնորհաց ու հատուցման, ս. եկեղեցւոյ և իր խորհուրդներուն նկատմամբ, մէկ խօսքով հին և նոր աղանդաւորներու դէմ արդարութեան զէնքերը, ինչպէս որ իրենց կարգին պիտի տեսնենք։ Հայ եկեղեց. մատենագրութեան մէջ բացարձակապէս չկայ գիրք մը որ շարականին չափ խառնրնէ հայ. ս. եկեղեցւոյ վարդապետութիւնը, ինչպէս, 1. որդւոյն յաւիտենական ծնունդն ի հօրէ կամ բղխումը, հմմտ. Շնորհ. «բղխումն ի հօրէ, բղխեա ի հոգւոյս»։ Բղխումն ու ծնունդ համազօր։ 2. Խորհուրդ հարդեղութեան Աստուծոյ բանին մասին՝ մի անձն աստուածային ի Քրիստոս՝ ընդդէմ Նեստորի և երկու բնութեան՝ աստուածային և մարդկային՝ ընդ դէմ Եւտիքեայ, այս է միևնոյն Քրիստոս՝ կատարեալ Աստուած և կատարեալ մարդ։ Ինչպէս «մանուկ՝ անժամանակ ի հօրէ, և ժամանակաւ գոյացեալ» ծնեալ լինի Աստուած և մարդ, Բ. օր ծննդեան շար. օրհն Դկ.—«յառաջ քան զյաւիտեանս որդի նախայաւիտեան, այսօր յերկրի երևեալ Աստուած և մարդ երկրեալ» Ե. օր ծննդեան, ողորմ. Դկ.—«իսկապէս բանն Աստուած հրոյս ի մարմին անփոփոխ գոլով յեւութեան»։ Որդւոց որոտման, օրհ. Դկ.—«կենդանութիւն բաշխող Քրիստոս... տնօրինաբար արտասուելով... որպէս մարդ հարցանէր, ուր եդիք զՂազարոս.—և որպէս զԱստուած բարբառով յարուցանէր ի մեռելոց զչորեքօրեայն» Ղազ. յար. հետևակ շար. ԱՁ. «այսօր գոլով,—անսկզբնակից հօր որդի, որ այսօր նախաստեղծին բնութեամբ ի կուսէն ծնար, Աստուած և մարդ». Դ. ծնդ. ողորմեա.—«զի կատարեալ էառ զբնութիւն Աստուածն բան զմարդկութեան» Այսօր անճառի զօղեալ տունին մէջ,—«Հուր կենդանի որ ի մորենին վառեցաւ, զոր անվնաս յարգանդի քում կրեցեր և ծնար Աստուած և մարդ, ողորմեա.—անեղանելիդ Աստուած, բանդ անմեկնելի ի հօրէ՝ ընդ ժամանակաւ լինել հաճեցար և մարմնացար ի սուրբ կուսէն՝ Աստուած և մարդ յայտնեալ», Ծնդ. ը. օր. հաչու—«անսկիզբն բանն յանսկզբնական ի հօրէ և սկզբնաւորեալ ի կուսէն մարմնոյ զգեցմամբ,

բովանդակելով յորովայնի և ընդ հօր գոլով, և սահմանեալ ժամանակաւ ծնեալ լինի Աստուած և մարդ» Տեառընդառաջ ճաշու Դկ. մտեալ ընդ օրինօք աննիւթական հողանիւթ գոլով, զի զհողածնեալքս հօրն ընծայեսցէ, Աստուածորդին որ ի ծոց հօր, տղայ քառասնօրեայ բառն ի գիրկս ծերունւոյն և յայտնապէս ծանուցանի Աստուած և մարդ նոյն:—Որ առաւել քան զմարգարէս մեծ ի ծնունդս կանանց որ Զքեզ մեզ յայտնեաց Աստուած և մարդ յերկրի երևեալ, Գլխտ. Կարապետի ողորմեա ԱՁ.—բանն անսկիզբն ի կուսէն սկզբնաւորեալ ի յերկիր մարմնով երևեցաւ, զոր տեսին քարոզք բանին ճշմարտութեան և ծանուցին տիեզերաց Աստուած և մարդ» որդւոց որոտման, օրհ Դկ. ծանուցար տիեզերաց Աստուած և մարդ գոլով, մարմնացար ի սուրբ կուսէն ի փրկութիւն ազգի մարդկան, աւագ օրհն. ԱԿ. ծածկեալ խորհրդոյն յաւիտենից լուեցելոյ և անճառին, ի հասանել ժամանակին պարգևեցաւ մարդկան ազգին, Էանն ԷՈՒԼԷԱՆ ԲԱՆԻՆ ԽՈՍՆԵԱԼ ԱՆՇԱՐԺՈՂ ԻՄԷ ԷՈՒԼԻՆ, Բ. օր փոխման, «Արևելք գերարփին»:

36. Աւելցընենք նաև հայ. եկեղեցւոյ «Աստուած կատարեալ և մարդ կատարեալ» վարդապետութիւնը: Երեքսրբեան փառատրութիւն «որ խաչեցար»: Ս. Աստուածը կերդենք ի դէմս որդւոյն Աստուծոյ որ նաև կը խոստովանի զբանն Աստուած՝ Աստուած ուրբ, Աստուած հզօր, Աստուած անմահ՝ ըստ աստուածայայտնութեանն, և աւելցնելով որ խաչէցաւ՝ յայտնի կը քարոզէ զայն բան Աստուած ըստ մարդկային բնութեան խաչեալ, ըստ հոգերգող խօսքերուն Շնորհալւոյ «Սոսկալիդ Սերովբէից--և առաւորդ Քերովբէից. խոնարհեցար ի չարչարանս չարչարէլ ԷՈՒԼԵՈՄԷ ՄԱՐԴԻՆ». դարձեալ՝ «Մերով ԷՈՒԼԵՈՄԷՆ ՏԵՍԱՆԻ, Աստուած անմահ խոստովանի»: Իսկ ԺԴ. դարուն մտած է «որ խաչեցարի» մէջ երգել ըստ պատշաճի օրուան հանդիսի, ինչպ՝ս «Որ ծնար և յայտնեցար».—«որ եկիր և գալոցդ ես»,—«որ մատնեցար», «որ թաղեցար», «որ յարեար ի մեռելոց», «որ համբարձար», «որ յայտնեցար ի թափոր», «որ եկիր ի փոխումն», Պենտեկոստէին՝ «որ եկիր և հանգեար»:—Ուստի հայ. եկեղեցին երգելով ս. Աստուածն ի դէմս որդւոյն Աստուծոյ, կը դատապարտէ միանգամայն Եւտիքէս և Նեստոր և Աստուածաչարչար աղանդաւորները. ինչպէս որ Տարսօնի, Սոյ և Ատանայի ժողովներուն մէջ ալ պարզուեցաւ, նաև Ն. Շնորհալի հայրին Մանուէլ Կոմնենոս կայսեր փեսայ Ալեքս Պրոստ-

բատորի գրած թղթին մէջ ալ, տպագր. Ս. Պետր. 1788, էջ 93. (հմմտ. «Ժամակարգութեան». ներած. էջ ԺԲ—ԺԳ)։

Արևելեան ու արևմտեան եկեղեցւոյ ս. հայրերը կը գործածեն խառնել, խառնուն, խառնարան, ապուռածախառն մարմին բանին մարմնոյ հետ միաւորութեան վրայ ճառելու ատեն, և այն՝ անքածառնելի, խոչան, անշնաւորեան, ճշմարիտը ցուցնելու համար Նեստորի դէմ, որովհետև խառնել՝ ոչ թէ խառնակել կամ չփոթել, այլ զօդել, «միաւորել» կը նշանակէ, «Որ ընդ հողեղէն քնուռնեան մերոյ խառնեցեալ ի քնաչան հոգիս» Ե. օր Պենտեկոստէի, հարց ԴՁ.

Թէոդոս թագաւորի շարականը կըսէ անոր վրայօք. «Հիմնեցոյց ընդ ինքեանս, հիմնարկեալ ... հաւատոյ» որ ոչ թէ կը նշանակէ այն խարհական թագաւորն կը հիմնէ եկեղեցի կամ հաւատքն ուղղակի և անմիջապէս, այլ խօսքին իմաստ է թէ «բարեպաշտ թագաւորք յայսմ ամենայնի՝ յոր ինչ կարող էր աշխարհական իշխանութիւնն, ջանային այնու ձեռնտու լինել սրբոց հարց՝ ի վանել զմոլորութիւն հերձուածողաց և հաստատել զեկեղեցի կամ զհաւատս»։

37. Սրբոյ բարեխօսութիւն. «Որ անպարագրելի աստուածութիւնդ տեսուչ և բարեխօս իւր ուխտաւորաց», Ստեփ. նախավկ. հարց ԳՁ.—«Որք ի մահու իւրեանց կենդանացան, ելին ի կամարն երկնից. խառնեցան ի գունդ զուարթնոցն, սոցա բարեխօսութեամբ ողորմեա».—«Այսօր հրաւիրեցաւ յերկնից արքայութիւնն ս. Հռիփսիմէ—որ զտիկնութեանդ քո թողեր զփառս... բարեխօսեա». ս. Սանդուխտի մանկունք ԴԿ.—«Ձայն բարբառոյ յանապատի, աղօթիւք սորա լուր մեզ»։ Ցովհ. զլխտմ. ողորմեա ԱՁ.—«Որ քոյին առաքինասէր... Տէր ս. Գրիգոր, անդադար բարեխօսեա»։ Ելն ի վիրապէն Օրհ. ԴԿ. Ներջեցելոյ շարականին մէջ «՝ի խոնարհս՝ վերջին ընդհ. դոպոսանը. վերահաս դատաստանը հաւատացեալներուն առջև դնելով՝ կը յորդորեն զանոնք Քրիստոսի աջ կողմը դասուելու արժանանալ։

38. Այս եռակի տեսակէտով, այսինքն շարականներու երաժշտական արուեստին կազմութեամբը, իմաստու. ասացուածքի վսեմութեամբ և հայ. եկեղեցւոյ վարդապետութեան դանձարանն ըլլալովը հայ. եկեղեցւոյ շարականները մեծ յարգ և համբաւ ունին և ոմանք եւրոպական լեզուներու թարգմանուած են, ինչպէս 1. Ֆ. Նէվպելճիկացի հայագէտին Les

hymnes funèbres de éEglise arménienne, L'ouvain, 1855 և L' Hymnologie arménienne. 2. Մկրտիչ Էմին ռուսերէնի թարգմանած է Վարդավառի, Ուխտաւորէից, Հոգեգալստեան, Յով. Մկրտչի, Պետրոսի և Պօղոսի, սրբոց Վարդանանց, ս. Հռիփսիմեանց, (Մոսկուա, 1879) և 3. Վենետիկցիներն ալ լատինէրէնի թարգմանած են (1877) Աստուածածնի շարականները, Laudes et Hymni at sS. Mariae Virginis honorum. Պիոս թ. ի քահանայութեան յիսնամեային առթիւ, Էօժէն Պորէ հայագէտն ալ, 1840 ին, իր ծանօթ գործին մէջ ս. Լուսաւորչի շարական, և իտալացի Լուիճի Բարէր՝ ս. Հռիփսիմեանցը։

Ո՛չ միայն արդի ժամանակներու մէջ մեր շարականները հայ. եկեղեցւոյ վարդապետութեան տեսակէտով մեծ յարգ և համբաւ ունին, այլ և հին ատենն ալ, ինչպէս որ Կիւ. Մանուէլ կայսեր ատեն յունաց վարդապետներուն քովն ալ։ Կիւ. Մանուէլ կայսրը կը գրէ Ն. Շնորհալւոյն. «Ծանիր զայս, զի զգայթակղութիւնս որ կայր ի սիրտս մեր յերգս ձեր և ի պաշտամունս որ առ Աստուած՝ բժշկեցաք քննութեամբ, վասն զի ի մէջ ածաք և ծանեաք երևելագոյնս ի նոցանէ»։ Սոյն խօսքը կը յիշեցնէ Գրիգոր կաթուղիկոս հաղբատացի վարդապետներուն գրած թղթին մէջ. «Վկայեցին եթէ ծանեաք յերգս ձեր և յօրհնութիւնս որ է շարականդ որ առ Աստուած զճշմարիտ հաւատոյ ձերոյ ուղղափառ դաւանութիւն»։

39. Գրիգոր Տաթեւացի ու Ստեփաննոս երէց ունին յիշատակարան մը «Վասն շարականաց թէ յումէ ասացան»։ Բայց հեղինակներու անունները չփոթուած են։ Զ. օր. Մ. Խորենացւոյ անունով կը յիշուին այնքան շարականներ, որքան չէ գրած. մինչև անգամ մէկ շարականը կը յատկացնեն քանի մը հեղինակներու։ Ասոնց հեղինակը բանասիրօրէն կարելի է գտնել։ Կիրակոս պատմիչ Խաչի շարականները կը վերագրէ Ե. դարուն։ Սակայն խաչի տոները Է. դարուն հաստատուած են ու շարականներն ալ Սահակ Զորափորեցի հայրապետը գրած է։ Անկէ առաջ Խաչի տօն հաստատուած չէր որ ասոր շարականն ալ ըլլար։

Ապաշխարութեան, մեծ պահքի շարականները ս. Մեսրոպի անունով մնացած են, որ բանասիրական ինչ ինչ ցուցումներով հաւանական չերևար։ Ս. Սահակ գրած է կըսեն, Ծաղկազարդի «Որ վերօրհնիս», Ղազարու յարութեան և Աւագ

չարաթի չարականները, Ծննդեան առաջին օրուան օրհնութիւնը «Խորհուրդ մեծ» հարցն, իսկ Մեծաց-ոյ-ոյ-ցէները կը վերագրեն Ե դարու Խորենացւոյն։ Սակայն և այնպէս Մեծացուսցէն Ե. դարու չի պատկանիր, այլ Ը. դարուն, որովհետեւ Ը. դարէն առաջ ս. Աստուածածնի տօներէն և ոչ մէկը հաստատուած էր, ինչպէս պիտի տեսնենք իրենց չարականներու կարգին մէջ։

Քիչ բացառութեամբ չարական մը գրած են, երբոր ուէ տօն մը կատարուած է։ Անտոն Անապատականի, Առաքելոց, Մարգարէից չարականներն ալ կը վերագրեն Մ. Խորենացւոյ, բայց ոճի տարբերութենէն կը տեսնուի որ աւելի վերջին դարերու գործ են, մանաւանդ որ այս տօները վերջերը հաստատուած են։

40. Ե. դարու մեր եկեղեցւոյ մէջ փայլող լուսափառ փարոսներէն ու հաստատեղոյս սիւներէն մէկն էր Յովհ. Մանդակունի մեծանուն հայրապետը։ Մեր հին մատենագիրներէն և ոչ մէկն որոշակի նշանակած է այս հայրապետին ճիշտ թուականն և ծննդավայրի մասին համաձայն չեն։ Ստեփաննոս Ա. սողիկ կը գրէ թէ ծնած է Ծախնոտ գեղը, իսկ ուրիշներ տարբեր կը գրեն։ Փարպեցւոյն «առ Վահան» գրած թղթէն գիտենք թէ Դիւտ կաթողիկոսին եղբօրորդին էր սա։ Ըստ հ. Բարսեղ վ. Սարգսեանի «Քննադատութիւնք Յովհան Մանդակունւոյ և իւր երկասիրութեանց վրայ» գործին, էջ 21, Մանդակունին ծնած է 400-ին մօտ, 450-ին քահանայ ձեռնադրուած, 454-ին Տիզբոնէն վերադարձած, 484—485 կաթողիկոս և 498-ին վախճանած։

Վենետիկի վանքը, 1345-ին գրուած Մաշտոցին վերջը ՀԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՀԱՅՈՑ ընտիր պատառիկ մը կայ որ Յովհ. Մանդակունւոյ համար կ'աւանդէ թէ «՝Նախ գէր գրաւ Հայ. ժամերգութիւն։ Հ. Բարսեղ, դարձեալ նոյն գործին մէջ, էջ 26—28, դիտել կուտայ «Ցիշատակարաններս «գիր» բառով՝ երկու բան կը հասկցուի. 1) ժամակարգութեան վերաբերեալ աղօթք, մաղթանք, քարոզք, երգք, և ամենայն որով կը կազմուի ժամերգութեան ամբողջական չէնքը, կամ գիրքն, որ Մանդակունիէն յառաջ կամ գոյութիւն չունէր կամ որ ինձ հաւանագոյն կը թուի՝ միայն սաղմոսերգութեանց, ընթերցուածոց և աւետարանի կարդացմանց մէջ կը կայանար։ 2.

Նշանագիր կամ խազ երգոց և չարականաց, ըստ ուրթ ձայնից։ Հ. Բարսեղ կեզրակացընէ թէ Մանդակունիէն առաջ «ժամակարգութիւնը բաղդատմամբ չատ անկազմ ու անկերպարան էր։ Մանդակունին եղաւ որ մեր ժամակարգութեան բնորոշ կերպարանք տուաւ։ Նախ յօրինեց խորին աղօթքներ, քարոզներ, մաղթանքներ և օրհներգներ՝ իրենց յատուկ և քաղցր եղանակներով ու խազերով, երկրորդ, այն սաղմոսականոնները, ընթերցուածքները, աւետարանները, երգերը կամ նուագներն որ իրեն ատեն կը գործածուէին անշուք ու ցրուած կերպով, զեղեցկագիտօրէն հիանալի վայելչութեամբ և հանճարեղ կերպով հիւսեց իրարու հետ։ Կ'աւանդեն թէ «կանոն տապանակի տեառն» չարականը գրած ըլլայ, բայց հաւանական չերևար ոճէն դատելով։ Ս. Հռիփսիմեանց համբարձին ալ Մանդակունւոյ կը վերագրուի, բայց ս. Հռիփսիմեանց տօնն է. դարուն հաստատուած է. հետեւապէս ս. Հռիփսիմեանց համբարձին աւելի Օձնեցուն կերեւայ, մանաւանդ որ այս հոմբարձին տաղաչափական արուեստն այրուբենական կարգաւ է։ Այդ ձևը մտաւ հայոց մէջ է. դարուն։ Ուրիշ չարականոցներու մէջ Յովհ. Մանդակունւոյ կընծայուին այն չարականները զորոնք ուրիշներ Մ. Խորենացւոյ ու. Անանիա Շիրակացւոյ կը վերագրեն։ Հ. Տաշեանի «ցուցակ ձեռագրաց». էջ 523. թիւ 222, 1313-ին գրուած չարական մը հուչականուն հայրապետին կը ընծայէ «Կանոն ս. Առաքելոց», «Կանոն գալստեան», «Կանոն Յովհ. Մկրտչի». ս. Գրիգոր Լուսաւորչի «Ով երջանիկ» չարականները, թէև ոչ հարազատ։

41. Այս հայրապետէն ետքն է որ յետագայ ծաղկող մատենագիրները չեն բաւականանար լոկ «ոաշոոներով և օրհնութիւններով», այլ կը յօրինեն չարականներ ու գանձեր որոնց ընտրութիւնն ըրաւ Բարսեղ Ճոն է. դարուն որ Շիրակի դպրեվանքին առաջնորդն էր։ Ներսէս Գ. Շինող կաթողիկոս երբ Դունայ մէջ ժողով գումարեց (645) եկեղեցական ինչ ինչ խնդիրներու կարգադրութեան համար, Բարսեղ ալ ներկայ էր այդ ժողովին, ուր իրենց յանձնուեցաւ ընտրութիւն ընել չարականներու, որոնց թիւը չափազանց չատնալով՝ ժամերգութեան խանգարման պատճառ կըլլար, այնպէս որ Վարդավառին Բագաւանի եկեղեցւոյն մէջ հարկաւոր է եղեր ուրթ զանա-

զան հայց փոխել։ Բարսեղի ընտրած չարականները կոչուեցան Ճօն—ընտիր։

Թէև ամէն չարակնոցի սկիզբը ծննդեան չարականները կընծայեն Մովսէս Խորենացւոյ, նաև աստուածայայտնութեան ճրագալոյցի կանոնն ալ, «Ուրախացիր, սրբուհի», սակայն Վարդան վրդ. «Անթառամ ծաղկի» տեսութեան մէջ աւելի Բարսեղ Ճօն վրդ. ի կուտայ այդ չարականը։ Ճրագալոյց բառը յունարէնի հետևողութեամբ եղած է. ինչպէս նաև լատիններն ալ լուչեռնա (lucerna), որովհետև ճրագալոյց հին ատեն կը կատարուէր իրիկուան մութին՝ ճրագները վառելով։ Բայց մեր մէջ սովորութիւն եղաւ ճրագալոյց կոչել բոլոր ժամակարգութիւնն աստուածայայտնութեան նախատօնակին, նաև Զատիկինն ալ։ Ճրագալոյցի տօնը հիներէն մէկն է։ Հարցը ԴՁ. «Որ դասուց անիմանալին աստուածաբանօրէն բաւական նրբութիւններ կը բովանդակէ և կը մատնանշէ հեղինակին ս. Գրքի հմտութիւնը։ Աստուած բազմաչեայ քերովբէից անտեսանելի կ'երգէ։ Անտեսանելին Աստուծոյ ստորոգելիներէն մէկն է։ Հիներէն Դիոնեսիոս Ոսկեբերան, Գրիգոր Նիւսացի, Եպիփան, Կիւրեղ Աղեքսանդրացի, Կիւրեղ Երուսաղեմացի այդ վարդապետութիւնը կը ջատագովեն։ Արևմտեան վարդապետներն ալ ս. Օգոստինոս, Ամբրոսիոս ու Հերոնիմոս արևելցիներուն համեմատ են այս մասին։

Սուրբերը միայն կրնան տեսնել Աստուած այսինքն ճանչնալ անոր էութիւնը, ինչպէս մեր չարականներն ալ կ'երգեն, «Որ անպարագրելի աստուածութեանդ տեսող և բարեխօս իւր ուխտաւորաց» («հարց ս. Ստեփանոսի»), «Որ յանճանելին մերձեալ ի լոյս հուպ երրորդութեանդ» (մանկունք Ոսկեբերանի)։ «Զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց φεωռելի» (նորաստեղծեալ)։ Ճրագալոյցի մանկունքի մէջ կ'երգուի Աստուծոյ բանին հրաշալի ծագումը=ծնունդը, որ իբրև հուր փայլատակեալ՝ բնակեցաւ մարմնի մէջ, որուն համար երկինք կը ցնծար հրեշտակներով և երկիրս ալ հրեշտակներու յայտնութեամբ կ'ուրախանար։ Եւ ս. Աստուածածնի բարեխօսութիւնը խնդրելով՝ զայն կը կոչէ «անհաս տնօրինութեան մայր և բոլորից փրկութեան մայր»։

Վարդան վ. Բարսեղ Ճօնի կ'ընծայէ նաև Ցարութեան հարցերը։ ԲԿ. ԳՁ. ԳԿ. ԴՁ. ԴԿ. հարցերն իրենց ոճի վսեմու-

թեամբ գերազանց ասացուածքներով կ'երևան որ Բարսեղ ՃՕնի պիտի ըլլան որ Է. դարուն միակ չարականագէտ ու երգահիւսը կ'երևայ հայոց մէջ։

42. Հին հայերէնն որ Զ. դարուն մարը մտնող արևու մը պէս իր ճառագայթները ժողովելով հորիզոնէն կը հեռանար, լիալիր լուսնի մը ճաճանչներով երևան եկաւ Է. դարուն մէջ։ Այս դարը մեծ կարևորութիւն ունի թէ հայերէն լեզուի պատմութեան և թէ եկեղեցական տեսակետով։ Լեզուի տեսակետով կարևոր է, որովհետև սահմանագլուխ մ'է հին հայերէնի կամ գրաբարի ու հին աշխարհաբարի կամ նախնեաց ռամկօրէնի միջև։ Դրաւոր լեզուի մէջ կը մտնեն ռամկօրէն բառեր ու ոճեր, գրաբարի անկում։ Եկեղեցական տեսակետով ալ կարևոր է, որովհետև Զ. դարուն մարմին առած հայ եկեղեցւոյ ինքնուրոյնութիւնը կը կատարելագործուի, եկեղեցական նշանաւոր դէպքեր կը պատահին, նուիրական երգեր կը շատնան և զանազան տօներ կը հաստատուին։

43. Զ. դարուն վերջերը կրկին կաթողիկոսութիւն ունէինք, որուն պատճառը յունաց Մօրիկ կայսրն էր։ Ասիկա, Մովսէս Բ. կաթողիկոսին ի հեճուկս, որ չընդունեց կայսեր առաջարկութիւնը Քաղկեդոնի ժողովին մասին, և որուն կաթողիկոսութեան առաջին տարիները կարգադրուեցաւ հայոց տոմարը, Աւանցի մէջ Յով՛աննէս անունով մէկը կաթողիկոս դրաւ, իսկ Մովսէս Դուինի մէջ մնաց կաթողիկոս։

616-ին Աբրահամ ծայրայեղ հակաքաղկեդոնեան կաթողիկոսին վերջին տարիները ջնջուեցաւ Աւանցի կաթողիկոսութիւնն և դարձեալ մէկ ընդհանրական կաթողիկոսութիւն մնաց։ Այս կաթողիկոսին ատեն, 596-ին վրացի Կիւրիոն եպիսկոպոս որ Մովսէս կաթողիկոսին ձեռնասուն էր, աշակերտն ու կաթողիկոսարանի երևելի անձերէն մէկը, Դրանիկ եպիսկոպոս, Քաղկեդոնի ժողովն ընդունելով՝ վրացիները հայոց եկեղեցւոյ իրաւասութենէն բաժնեց։

Դ. Խաչկոնց.

(կը շարունակուի)

* * *

Գլագեազ բարձր սարին
Զինն ա կիսուել կատարին.
Սարի ճամբէ, բա՛ց էլէ,
Էբամ հասնեմ իմ եարին:

Ա՜խ, իմ ճամբէն խարոս ա,
Միրտըս էրուած, եարոս ա.
Ղարդրի օ՛րն ընկի սեր—
Ազիզ եարի կարոտ ա:

Եարիս տեսայ՝ ղալիս էր,
Լալիս, գլխին տալիս էր.
Ճամբայ տուէ, ա՛յ սարեր,
Ձեռով արի՝ գալիս էր:

Էն ի՞նչ դուշ ա էն խարին.
Միրտըս կաթում ա արին—
Ա՛յ իմ թանգան, թե՛ւ տուր ինձ,
Թռչեմ, հասնեմ իմ եարին:

Ց. Յովհաննիսեան



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Վերջին տարիներս շատ յօդուածներ են տպուել մեր լրագիրներում այս վերնագրի ներքոյ. իսկ անցեալ տարի մի ամբողջ գիրք լոյս տեսաւ Տոպ. Սոսկուայում, գինը 1 ռ. Խորհրդ թէպէտ համեստաբար «համառօտ ակնարկ է անուանում հեղինակը՝ Արիստակէս արքեպիսկոպոս (Սկզբակեան)», բայց բաղկացած է 219 ոչ փոքրադիր էջերից։ «Զգաստութիւն, ուղղութիւն և անկեղծութիւն»—բազմանշանակ բառերով է վերջանում այս գիրքը, և նորա ճակատը զարդարում են Ներսէս Լամբրոնացու խօսքերը. «Ոչ խօսիցիմք—զկռփանք անձին նախապատուեալ, և զփառս ոչ բնաւ» և այլն։ – Քիչ չէ պատահում հիրկաւ, որ մի քարոզի կամ ճառի միակ գեղեցիկ մասը բնաբանը լինի և գրքերի համար չէ ասուած անշուշտ այն առածը, թէ ամեն ինչ լաւ է, երբ վերջը լաւ է. բայց որ մի գրքի բովանդակութիւնը ոչ միայն անհամաձայն, այլ կարող ենք ասել ուղղակի ծաղր լինի սկզբում և վերջում այդպէս հանդիսաւոր կերպով քարոզած սկզբունքների դէմ՝ այդ արդէն բաւական աչքի ընկնող երևոյթ է, և յատկապէս այդ կէտի վերայ կարևոր ենք համարում դարձնել ընթերցողի ուշադրութիւնը։ Ի. դարի համար գգաստութիւն ուխտել հրաւիրում է այստեղ մի եկեղեցւոյ պաշտօնեայ, ոչ մոռանալով իւր սրբազան կոչումը, իւր արքեպիսկոպոսական աստիճանի հետ կապուած մեծ պատասխանատուութիւնը, իւր հասարակական բարձր դիրքը՝ քահանայական խնդրի պատուական գրուածքի

կէսից աւելին նուիրել է ԺԹ. դարի իւր անձնական հաշիւները մաքրելու, մանր կրքերի բաւականութիւն տալու — հին լուացք լուալու։ Ուղղութիւն է քարոզում նա, որի գրեթէ իւրաքանչիւր խօսքի տակ, մի յետին միտք տեսնել կարող է, որ այնպէս նպատակաւոր կերպով ընտրութիւն տնել գիտէ խնդրի պարզաբանութեան համար յառաջ բերած անձերի և փաստերի մէջ։ Անկեղծութեամբ է խօսում ս. Արիստակէս (արք) եպիսկոպոս Սեդրակեանը։ — Եւ որ գլխաւորն է՝ նա խօսում է ՀՈՂՈՒՆԷՔ, «զկուփանս անձին նախապատուեալ, և զփառս ոչ բնաւ». ամէն վտանգ աչքի տակ առնելով խօսում է մի մեծաւորի դէմ, որ պատժել չը գիտէ. «ապօրինի» է անուանում մի ուրիշ մեծաւորի կարգադրութիւնները, որ մեռած է. այպանում, առակ նշաւակի է դարձնում մի կենդանի աստիճանակցի, որ աչքից ու մտքից հեռու մի վանքի վանահայր է։ Սակայն Սրբազան հեղինակի քաջութիւնը նորանով չէ միայն նշանաւոր, որ նա ապահով է զգում իրեն ամենտեսակ «կուփանք»ից, այլ և որ պարզ կերպով նախատեսնում է, թէ որպիսի փառքի պէտք է արժանանայ իւր համարձակախօսութեան համար՝ ոչ յիրաւի անմիջական իշխանաւորների և կարգակիցների կողմից, որոնց տուած պատիւն էլ արհամարհում է նա, պարսաւանքն էլ. հրապարակի վերայ փառք բաժանողը ներկայ լուսաւորեալ դարում ուղիշներն են, և լուսպմիտ սրբազանը գիտէր անշուշտ, որ իրք նմոն ազատախօսների մի ամբողջ բանակ արձագանգ կտայ իւր դասածներին, որ ազատախոհ մամուլը բարձրագոչ փողերով կհռչակէ իւր անունը, իւր քաջութեան և համարձակ խօսքի համբաւը Կովկասեան լեռներից սկսած մինչև Բոսֆորի ափունքը։ և այդ ամենն հակառակ ձայն խլացնող աղաղակի մէջ ամենքը կվստահանան, թէ արդարի եղակի քաջութեան համբաւ վայելեց Սրբազանը սորանից 17 տարի առաջ, երբ պինդ նստած էր Ցգիխիսի աղաջնորդական աթոռի վերայ, թէ որպէս օրինակելի քաջ հովիւ է հանդիսանում նա այժմ ևս ամենն անգամ՝ Արմաւրից մինչև Թուրքեստանի հեռաւոր

կողմերը ցրուած իւր հօտի համար, երբ իրական «կրոփանք»ի ամենափոքր երկիւղը կայ, երբ քաջ գործ է պահանջւում քաջ խօսողից։

Թող ներէ ընթերցողը, որ ըստ երևութին շեղւում ենք մեր խնդրից և գիրքը թողած հեղինակի անձն ենք քննադատութեան առարկայ դարձնում. մի վարմունք, որ աններելի պէտք է համարուէր, եթէ նորա անձը իւր գրուածքի մէջ ևս բուն կենդրոնը չլինէր, որի շուրջը դառնում է ամեն ինչ։ Յիրաւի, ինչ է այս գրուածքի իսկական նպատակը, եթէ ոչ այն, որ նա ինքը փոքր ինչ քողարկեալ կերպով բացատրում է արդէն երկրորդ երեսում։

Քահանայական խնդիրը եկեղեցու գոյութեան խընդիրն է. այդ կարևոր խնդրի լուծումը գտնւում է բացառապէս հոգևոր Բարձր Իշխանութեան ներկայացուցիչների ձեռքում, որոնք առանց բացառութեան ի չարն են գործ դրել իրենց սրբազան իրաւունքը, և վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում միայն մի բողոքող է եղել նոցա դէմ՝ մի փայլուն աստղ Հայոց հոգևոր եկեղեցական կեանքի մութ հորիզոնի վերայ, որ և ահա հանդէս է գալիս այդ մթութեան մէջ լոյս սփռելու, իւր բողոքները յառաջ բերելու և ցոյց տալու, թէ ինչ զեղծումների դէմ է բողոքել և ինչպէս։ Եւ ապացուցանում է այդպիսով ինչ որ կամենում է ապացուցանել. այսինքն թէ Ներսէս կաթուղիկոսը, որ Ներսիսեան դպրոց է հիմնել, Գէորգ կաթուղիկոսը, որ ճեմարան է հիմնել, նոցա յաջորդ միւս հայրապետները, որոնք նոյնպէս դպրոցներ են հիմնել, անձամբ կամ իրենց ձեռքի տակ՝ կրթուած հոգևորականների ամբողջ սերունդներ պատրաստել՝ ոչինչ չեն արել քահանայական խնդրի լուծման համար, այլ միայն ուղղակի կամ կողմնակի կերպով նպաստել են զեղծումների մնալուն և բազմանալուն. իսկ ինքը՝ Արիստակէս (արք)եպիսկոպոս, որ Ճեմարանից, Ներսիսեան և այլ դպրոցներից ելած քահանաներ է պահանջում՝ դորանով արդէն խիստ մեծ գործ է կատարում, հետևաբար և ներկայանում է իբրև միակ յուսալից անձը,

որ կարող է Հայոց եկեղեցու գոյութեան հետ այնպէս սերտ կապ ունեցող քահանայական խնդիրը լուծել, յաճախակի, մասնաւորապէս վերջին կաթուղիկոսական ընտրութիւնների ժամանակ բուռն կերպով արտայայտուած և ի դերև ելած յոյսերն այս նկատմամբ իրականացնել։ Բայց երբ այս բոլորն իրրև հալած իւղ է ընդունւում, ծափահարութեան և գովասանքի արժանանում՝ մենք ի խորոց սրտի վրդովւում ենք և զայրանում. որովհետև այսպիսի երևոյթների մէջ տեսնում ենք մեր հասարակութեան սևը սպիտակից զանազանելու անընդունակութիւնը, որովհետև մտածում ենք՝ այնտեղ, ուր ամեն փայլուն բան ոսկու տեղ է գնում, դատարկ փքուն խօսքեր համեստ գործից աւելի գնահատւում, հոսանքի հետ գնալը քաջութիւն՝ խաւար մտքերով յանուն լուսոյ ճառաբանելն իսկական լուսաւորութիւն համարւում՝ ոչ քահանայական և ոչ ուրիշ որ և է լուրջ խնդիր ուղիղ լուծումն կգտնէ. ոչ ճշմարիտ լուսաւորութեան համար ասպարէզ կայ, ոչ ազնիւ, անկաշառ գործունէութեան համար։ Ներկայ դէպքում վրդովեցուցիչն այն չէ միայն, որ գաղափարական պատկերի ներքոյ անձնական միտումներ են յառաջ քշւում, որ նպատակը կողմնակի լինելով՝ փաստերի ընտրութիւնն ու լուսաբանութիւնն ևս միակողմանի է և ուրեմն իսկական արժէք ունենալ չի կարող երևոյթի ուսումնասիրութեան համար, այլ որ իրօք ոչ մի գաղափար չկայ էլ մէջ տեղ, կարծեցեալ գաղափարը մի հանրածանօթ ստուեր է միայն և զեղծումների այն նկարագիրը, որ հեղինակը դնում է մեր առաջ՝ ոչինչ նոր բան չէ ասում։ Ի՞նչ է նորը. մթթէ այն, որ մեր քահանաները տգէտ են, և տգէտ, իրենց կոչման բոլորովին անհամապատասխան, մարդիկ մինչև այսօր էլ միջոց են գտնում հոգևորական ասպարիզի վերայ ելնելու։ Բայց հին, շատ հին ու անչափ անգամ կրկնուած երգ է այդ, և չէ՞ որ Սրբ. հեղինակը ինքն է ասում, թէ դեռ «60 – 61 թուականին Մ. Նալբանդեանցն էր գրում Տ. Մատթէոս կաթողիկոսին. Առ մեզ առ ամենայն կացութիւն անպիտան՝ պի-

տանի համարի առ հոգևորականութիւն»։ Այդ խօսքերը վաղուց արդէն առած դարձած՝ բերնէ բերան է անցնում և հայոց ազատ ժողովրդական եկեղեցւոյ ամեն մի զաւակ՝ աշխարհական լինի թէ հոգևորական, լսել ու կրկնել է այն անշուշտ հազար անգամ, անհոգ արհամարհանքով, առանց հաշիւ տալու իրեն, թէ որպիսի դատապարտութեան վճիռ է կարդում իւր գլխին։

Ի՞նչ է պարզւում ուրեմն և ո՞ւմ համար գրել կարդալ չիմացող քահանաների և անարժան ձեռնադրութիւնների նորանոր պատմութիւններ անելով։ Ուրիշ էր հարկաւ, եթէ ներկայ գրքի հեղինակը տիրող չարիքի իսկական արմատները երևան հանած և նորա առաջն առնելու համար ուղիղ միջոցներ ցոյց տուած լինէր։ Արե՞լ է նա այդ. ո՛չ։ Նա միայն ճիգ է թափել ամբողջ մեղքը «հոգևոր բարձր իշխանութեան ներկայացուցիչների» վերայ բարդելու, ժողովուրդին՝ աշխարհական դասին որ և է մեղադրանքից ազատ ներկայացնելու. լաւ իմանալով, որ ինչպէս առհասարակ ամեն ամբոխ, այնպէս և մեր ընթերցող ամբոխը սիրում է հաճոյական խօսքեր լսել իւր՝ և նախատինք իւր առաջնորդների, մասնաւորապէս հոգևոր բարձր իշխանութեան ներկայացուցիչների հասցէին, և աւելի կզուարճանայ, երբ այդ արդէն չափազանց սովորական դարձած նախատինքը թափուղն այս անգամ ինքը հոգևոր բարձր իշխանութեան մի ներկայացուցիչ է։ Բայց մենք ամենևին չենք զուարճանում, մանաւանդ նորա համար, որ այդ հոգևորականը իւր կարգակիցների մեղքից իրեն բաժին չի վերցնում, այլ մնում է իբրև մի փայլուն բացառութիւն։ Մենք չենք ուրանում, որ նա բացառութիւն եղել է. թէպէտ փաստաթղթերով ապացուցանել կարելի է, ասում են, որ Նորա Տփխիս առաջնորդ գնացած ժամանակ 1883 թ.-ին այնտեղի 60 քահանաներից ո՛չ թէ 4-ն էին միայն ներս. դպրանոց աւարտած, ինչպէս ինքն է ասում, այլ ճիշտ 17 հոգի, և որ նա միմիայն Տփխիսում անձամբ կամ ուրիշի ձեռքով 14 ագէտ, ո՛չ մի տեղ ուսում չաւարտած՝ մի քանիսը նոյն

խակ անզարգեցած քահանաներ է ձեռնադրել. բայց մենք այդ փաստերին և առանձին կարևորութիւն չենք տալիս և ընդունում ենք, որ նա աշխատել է միշտ կըրթուածներին յառաջ քաշել, ուստի մը քահանայ ձեռնադրելու համար իբրև անհրաժեշտ պայման ցոյց տալ և պահանջել։ Ինչ է հետևում դորանից։ Եթէ այս գրուածքի ոգին, հեղինակի բռնած ընդհանուր ուղղութեանը և պատճառաբանութեան եղանակին նայենք, պէտք է անենք, որ նա առանձին նշանակութիւն է տալիս ուսման ոչ այնչափ խորին հմտոզմունքից դրդուած, մի ներքին կարևորութիւն տեսնելով նորա մէջ, առանց որի հոգևոր կոչումը իւր նպատակին չէր հասնի, այլ որ մեր լուսաւորեալ դարի պահանջն է այդ և իրենց լուսամիտ Սրբազանին վայել է այդպիսի պահանջ դնել, դորանով է ցարժանանում նա լուսամիտների յարգանքին և գովեստին։ Սակայն թէ ոչ դժուար պէտք է լինէր մեզ բացադրել՝ ինչու կամ երկար ու բարակ խօսքերով հոգևորականի նպատակուած արժանիքների մասին՝ ի վերջոյ իբրև չափ այն է միայն ընդունում, թէ արդեօք դպրոցի որ դասատուից է ելել։ Նորա ներկայացրած գիւղական ինքնուս քահանայի տիպարը մանաւանդ, որ դեռ քիչ ոգ շատ հետաքրքրուի լրագրութիւնով ու պատանի զգայ կարդալու և հետևելու ժամանակակից հասարակական կեանքի ընթացքին» կասկած չի թողնում այլ և թէ ինչ բանի համար ամենից աւելի հարկաւոր է քահանայի ուսումը, անշուշտ լրագիր կարդալու՝ զարգանալու և ուրիշներին զարգացնելու համար. մօտաւորապէս այդ իմաստով էլ բացադրում է նա քահանայի կոչումը։

Մեր եզրակացութիւնը Արիստակէս Սրբազանի գրքի մասին այս է։ Ճշմարտութիւններ, որքան և հին կամ ծանօթ, կան այստեղ. բայց ճշմարտութիւնը պարզելու և առաջը դրած խնդիրը լուծելիս չեն նպաստում. որովհետև ճշմարտութեան ոգուց չեն բղխում և բացարձակ ճշմարտութիւնը չէ այն չափը՝ որով կշռուում են դժուար փաստերը՝ ճշմարիտ է, որ մեր դարում անբաւ զեղծումներ են կատարուել քահանա-

յական խնդրի շուրջը. մենք աւելին կասենք. այնչափ մեղք է դիզուել այստեղ, որ եթէ մեր ժողովուրդը ուրիշ մեղք իսկ չունենար, այս միայն բաւական էր, որպէս զի մենք բոլորս մէջը խեղդուէինք։ Բայց ուղիղ չէ, թէ այս մեծ չարիքի առաջն առնելու համար հոգևոր բարձրագոյն իշխանութեան կողմից ոչինչ չէ եղել. չարիքի առաջն առնող կանոնները, հրամանները, ճառերը չեն, այլ մարդիկ. իսկ մարդիկ պատրաստելու համար հոգևոր իշխանութիւնը ջանք չէ խնայել, հոգևոր կրթարաններ է հիմնել և մեծ զոհաբերութիւններով պահպանել, օտար կրթարանների օգնութեանն է դիմել՝ արել է յամենայն դէպս աւելի քան թէ ուրիշ մի հոգևոր իշխանութիւն նման պայմաններում կանէր կամ անել կարող էր։ Եւ արդիւնքը տեսնող աչքի համար այնչափ էլ չնչին չէ. մօտիկ ապագայում անշուշտ աւելի կերևայ. այժմ սպասածի չափ աչքի չընկնելուն պատճառները շատ բարդ են. ոչ մի վերանորոգում մի անգամից չի կատարուում, իսկ հոգևոր վերանորոգումը, մանաւանդ այնպիսի պայմանների մէջ սկսուած, որպիսիք մեր երկիրն ու եկեղեցին էին ներկայացնում անցեալ դարի սկզբներին՝ շատ աւելի երկար ժամանակի է կարօտում, քան մենք սովորաբար ենթադրում ենք։— Ճշմարիտ է, որ տգէտների ձեռնադրութիւնը մեր ժամանակ (իսկապէս և ոչ մի ժամանակ) ոչ մի փաստով արդարացնել չի կարելի. ոչ նորանով, որ տգէտները բարեբարոյ են լինում, որովհետև նոքա սովորաբար խիստ կասկածելի վարքի տէր են. և ոչ առաքեալների տգիտութեամբ, որովհետև առաքեալները երբէք մեր կարծած տգէտներ չեն եղել. եթէ գրագիտութիւնն է գիտութիւն համարուում, նոքա հաւանականաբար բոլոր-բեքեան գրել կարդալ գիտէին, փոքր հասակից ի վեր ամեն շաբաթ ժողովարանում Ս. Գիրք էին լսել և ապա կեանքի դպրոցում, մանաւանդ թէ Երկնաւոր Վարդապետի մօտ ձեռք էին բերել ամենամեծ հմտութիւն իրենց ապագայ կոչման համար. իսկ նոցանից մէկը, Պողոս, որ ամենայայտնին է մեզ՝ իւր ժամանակի ամենամեծ գիտնականներից պէտք է լինէր։ Ճշմարիտ է

նաև, որ եթէ գոնէ վերջին տասնեակ տարիներում ձեռնհաս իշխանութեանց կողմից ամէն ջանք գործ դրուէր, կամ գործ դուրս այսուհետև, կարելի կլինէր բազմաթիւ ճեմարանաւարտ և դպրոցաւարտ քահանաներ ձեռնադրել ոչ միայն քաղաքների և մեծ գիւղերի, այլ և երբեմն ամենայեռանկած գիւղերի համար, ուր ամենից աւելի կարիք կայ։ Բայց ճշմարիտ չէ, թէ ձեռնհաս իշխանութիւն այս դէպքում միայն Հոգևոր Բարձր իշխանութիւնն է։ Ճշմարիտ չէ, թէ մեր ունեցած ուժերը այժմէն իսկ եկեղեցւոյ կարիքներին գոնէ մօտաւոր չափով բաւականութիւն կտային. և միւս թեմերի համար էլ ուսումն. քահանաներ գտնելը նոյնչափ դժուարին կլինէր, որչափ Ռուսաստանի և Տփխիսի թեմերի համար։ Ճշմարիտ չէ, թէ ուսում առած քահանաներին բազմամարդ ծուխերով և ռոճկով նիւթապէս ապահովելն ու արտօնեալ դիրքի մէջ դնելը ամեն խոչընդոտ կվերացներ նոցա առջևից։ Փորձը քանիցս անգամ ցոյց է տուել, որ նոյն իսկ այն տեղերում, ուր թէ նիւթական ապահովութիւն, թէ պատուաւոր դիրք, թէ ազատ ընտրութիւն անելու բոլոր միջոցները կան՝ դժուար է լինում արժանաւոր քահանաներ գտնել. ինչիցն է։ Այդ հարցին պատասխանելու համար պէտք է նախ ի նկատի ունենալ, որ «արժանաւոր» խօսքը շատ սահմանափակ, պայմանական մտքով է գործածած այստեղ. իսկապէս արժանաւոր, իրենց կոչման համար պատրաստուած քահանայացուներ մենք գրեթէ չունինք. ճեմարանաւարտներն ու դպրոցաւարտները միայն նորա համար արժանաւոր պէտք է համարուին, որ ընդհանուր առմամբ եղածներից աւելի լաւ կլինեն և աւելի կընտելանան ու կյարմարուեն իրենց կոչման, քան նոյն իսկ իրենք սկզբում կարծում են. նոքա մի ներքին մղում դէպի այդ կոչումը չեն զգում, հարկն է սովորաբար ստիպում այն ընտրել։ Եթէ ուրեմն հարկի ստիպումը շատ ծանր չէ, ինչո՞ւ պէտք է յանձն առնեն նոքա մի կոչում, որ թէև գաղափարով բարձր, իրօք ամենատանջարդն է համարուում մեր մէջ, յատկապէս

այն տեղերում, ուր նիւթական ապահովութիւն և պատուաւոր դիրք կայ՝ քաղաքներում և մեծ գիւղերում։ Առաջին անարգոյը հէնց այդ կենդրոններում ժողովուած ֆաթէլիգէնտներն են՝ նոյն այն մարդիկ, որոնք ամենից շատ են խօսում կրթուած քահանաներ ունենալու կարիքի մասին։ Նոքա պահանջում են կրթուած քահանաներ, բայց անարգում, ծաղրում են և մեր դպրոցներից վերացնել են ճգնում այն կրթութիւնը, որ միայն կարող է հասկանալի և ցանկալի դարձնել հոգևոր կոչումը. այդ դպրոցներում կրթուածներին անուանում են ֆիրայոներ և հալածում որչափ կարող են. համարում են և հարամ անում նոյն իսկ այն հոգևորականների կերսծ իւրաքանչիւր պատառ հացը, որոնք թէ հարկաւոր չափով ուսում են ստացել և թէ պահանջից աւելի մեծ գործ են կատարում. արհամարհում են վերջապէս և առ ոչինչ համարում այն, ինչ որ հոգևորականի կոչման իսկական բովանդակութիւնը պէտք է կազմէ։ Իսկ հրապարակի վերայ չկան այնպիսի գաղափարական երիտասարդներ, որոնք այս արհամարհանքն ու անարգանքն արհամարհեն, սրբազան ոգևորութեամբ լեցուած եկեղեցւոյ սպասաւորութիւնը յանձն առնեն՝ ոչ յանուն սնոտի մեծութիւնների, այլ յանուն Քրիստոսի, յանուն ճշմարտութեան աւետարանի։ Չկան, և նոցա հանդէս գալուն մեծապէս արգելք են լինում ի միջի այլոց այնպիսի երևոյթներ, ինչպէս է Արիստակէս (արք)եպիսկոպոս Սեդրակեանի քահանայական խնդիրը։

Սեւ Մարդը։

ՄԻ ԷՋ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ



Ներսիսեան Հոգևոր Դպրոցի վերջին հոգաբարձական ընտրութեան առիթով տեղւոյս լրագրութեան մէջ երևեցան մի շարք յօդուածներ, որոնց մէջ անխնայ քննադատւում էր ազգիս Վեհափառ Հայրապետի՝ մեր թեմական Հոգևոր Դպրոցների հոգաբարձութեանց վերաբերեալ մի կարգադրութիւն, համարելով այն երջանկայիշատակ Տ. Մատթէոս կաթուղիկոսի դրուած կանոնների, վերջին քառասուն տարուայ ընթացքում գործադրութեան մէջ եղած կանոնադրութեան հակառակ և առհասարակ ժողովրդի իրաւանց դէմ բռնաբարութիւն և այլն և այլն։

Այդ կարգադրութիւնը հետևեալն է.

Ազգիս Ս. Հայրապետը, անշուշտ յարգելի պատճառներից դրդուած, շրջաբերական կոնդակ հրատարակեց, որով հրամայում էր բոլոր թեմական հոգևոր Դպրոցների հա-

մար ընտրել հոգաբարձուներ վեց վեց հոգի աշխարհականներից, 6 — ական անձնափոխանորդներով և երկերկու անձն հոգևորականներից։

Մենք չենք խօսում թէ ուր ինչ կերպ կատարուեց ընտրութիւնը, սակայն ըստ էութեան Հայրապետական հրամանը գրեթէ կատարուեցաւ։

Հայրապետի կարգադրութեան մէջ գտնում էին երկու գլխաւոր կէտ փոփոխուած նախկին կարգերի դէմ, իսկապէս ասելով երկու նորութիւն. — առաջինը որ տասներկու հոգաբարձուի փոխարէն նշանակուած էր վեց հոգաբարձու և երկրորդ՝ որ այդ վեցի վերայ աւելացնում էր և երկու քահանայ հոգաբարձու։

Մենք մեզ թոյլ չենք տալ Ազգիս Հովուապետի արած այդ կարգադրութիւնը քննադատել իմանալու համար թէ որ աստիճան նպատակայարմար է նոր կարգադրութիւնը և թէ ինչքան անհամապատասխան և ապարդիւն էր նախկին կազմակերպութեան գործունէութիւնը մեր հոգևոր Դպրոցներում մանաւանդ ներկայ խիստ փափուկ ժամանակներում։ Բայց մեր պարտքն է պարզել մեր ընթերցողներին մի գլխաւոր հանգամանք և հանել նոցա մոլորութիւնից, այն է ակնյայտնի կացուցանել նոցա առաջ, թէ որքան նոր էր Վեհափառ Հայրապետի այդ կարգադրութիւնը։

Ուստի և վստահանում ենք առաջ բերել մեր ունեցած տեղեկութիւնները վերոյիշեալ երկու խնդիրների վերաբերմամբ, օգտուելով յարգելի պ. Ա. Երիցեանի հնադարանից և այլ աղբիւրներից։

Ներսէս Ե. Կաթուղիկոսը իւր հիմնադրած ուսումնարանի համար պահում էր միշտ երեք աշխարհական հոգաբարձու, որոնց և յանձնում էր Դպրոցի տնտեսական մասի կառավարութիւնը և մասամբ ուսումնական մասինը թեմական առաջնորդի և տեսչի հետ, որ նոյնպէս յաճախ

հոգևորական էր լինում, օրինակ Ալամդարեան վարդապետը, Տէր Գաբրիէլ Պատկանեան քահանան։

Յայտնի է, որ երբեմն իշխանաւորներ բնական ձգտումն ունին ըստ կարելոյն աշխատել ստուեր ձգել իւրեանց նախորդի գործունէութեան վերայ, որպէս զի ինքեանք փայլին, մանաւանդ եթէ իրանք աւելի անընդունակ են իրանց հառանդով և գործերով նսեմացնել իրանց նախորդի փառքը, ինչպէս լինում է և ամեն հայ թերթի հետ, որոնցից իւրաքանչիւրը իրանով է կարծում սկսած լինել ամբողջ հայութիւնը։

Գուցէ այս ձգտումը եղաւ պատճառ, անշուշտ և Դպրոցին մի իրական ծառայութիւն մատուցանելու փափաքը, մանաւանդ որ արդէն սկսել էին տրտունջներ բարձրանալ հասարակութեան միջից երբեակ հոգաբարձութեան գործած զանազան զեղծումների մասին Դպրոցի շահերի դէմ, որ ի Տէր հանգուցեալ Տ. Մատթէոս կաթուղիկոսը ցանկացաւ մի փոփոխութիւն մտցնել Ներսիսեան Դպրոցի վարչական կազմակերպութեան մէջ, ուստի և 1861 թուի յունիսին կոնդակով Թիֆլիս ուղարկեց ս. Եղիազար եպիսկոպոսին, քննելու Դպրոցի հաշիւները և առաջնորդի հետ հոգալու Դպրոցի բարեկարգութեան մասին, և ուղարկեց մի թերթի վերայ գրուած «Հնչակաւոր Նախագիծ Տիեզերական Հայոց ազգային Հոգևոր Ներսիսեան Դպրոցի, պարունակեալ ի կոնդակի Ամենայն Հայոց Մատրիարքի յ 9 յունիսի 1861 ամի ը. 327» ի համառօտութիւնը, այսինքն այն սկզբունքները, որոնց հիման վերայ յետոյ Թիֆլիսում խմբագրուեցաւ նոր կանոնադրութիւն Դպրոցի համար։

Այդ սկզբունքները հինգ յօդուածներից էր բաղկացած, որոնցից հինգերորդը հետևեալն է.

«Թիֆլիզոյ Հայոց ազգային Հոգևոր Դպրոցն պարտի «լինել միշտ ի լիակատար կախման ծայրագոյն Պատրիարք

«կաթողիկոսի և Սինոդի սրբոյ Էջմիածնի. վիճակաւոր «Արքեպիսկոպոս տեղւոյս պարտի մնալ միշտ ըստ կոչման «իւրում առաջին հոգատար և նախագահ խորհրդարանի «կառավարութեան Դպրոցին, իսկ այլ անդամք այնր խոր-«հրդարանի պարտ էին ընտրիլ ի ձեռն հասարակութեան «քաղաքիս, ըստ յայտնի արժանաւորութեանց իւրեանց, «ասանց ղանազանելոյ ազգեզեցականս և աշխարհականս» և հաս-«տատիլ ի Ծայրագոյն կաթուղիկոսէն ամենայն Հայոց։ Թիւ հոգաբարձուաց կամ անդամոց խորհրդարանի պարտ է լի-«նել ընդ նախագահութեամբ վիճակաւորի երկոտասան»։

Այս էր 1861 թուին. նոյն թուին էր նաև, որ Տ. Մատթէոս կաթողիկոսը կոնդակ արձակեց խստաւ վերացնել որդեգրութիւնը Ներսիսեան Դպրոցում։

Մատթէոս կաթուղիկոսի տուած վերոյիշեալ 5 յոդուածով սկզբունքների հիմնական կէտերից մէկն էլ ուրեմն այն էր, որ պէտք է խմբագրուէր մի այնպիսի կանոնադրութիւն, որի զօրութեամբ հոգաբարձու ընտրուէին թէ եկեղեցականներ և ընդ աշխարհականներ առանց խտրութեան. և այս շատ հասկանալի էր, որովհետև նախ Դպրոցը ՀՈԳԵՒՈՐ կոչումն ունէր, հոգևորականներ պատրաստելու նպատակ, և ապա ինչ խտրութիւն կարելի էր դնել աշխարհականի և եկեղեցականի մէջ, որ առաջ էր գալիս, ինչպէս և այսօր առաջ է գալիս նոյն աշխարհականներից և նոյն ժողովրդից, ժողովուրդն ու հոգևորականութիւնը միշտ մի ամբողջութիւն են կազմել, այդ հէնց հայ եկեղեցու բուն հոգին է և ոչ մի այժ չէ կարող նոցա միմեանցից բաժանել, հակառակ ցանկութեան ծտար և օտարամոլ չարամիտների։

Բայց դեռ մենք չաւարտեցինք մեր խօսքը։

Կանոնադրութեան նախագիծը կազմուեցաւ հոգաբարձունների թիւը տասը որոշուեցաւ եկեղեցականներից և աշխարհականներից. Հայրապետն այն առիթան գոհ

էր, որ տասը թիւն սկզբում քիչ համարեց և ասաց «թող տասներկուք ըլլայ առաքելոց թուով»։ Եւ վերադարձուեցաւ Թիֆլիզ, վերջնական խմբագրութիւնից յետոյ կաթուղիկոսը հրամայում է 12 հոգաբարձուների ընտրութիւն կատարել։

Ընտրական կոնդակի մէջ ասուած է լինում, որ նոցա ընտրեն քաղաքի իշխանների և առաջաւոր անձանց միջոցով. իշխանները, որոնք շատ չէին թուով, առաւելապէս կողմնակից էին այն ժամանակուան առաջնորդ Սարգիս Արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանին, որին դէմ էր սակայն հասարակ ժողովուրդը։ Ընտրութեան համար Թիֆլիս եկած Մակար Արքեպիսկոպոսը, ցանկալով ընտրել տալ այնպիսի անձանց, որոնց ինքը ժողովուրդը համարում է այդ գործում առաջաւոր, առաջարկեց ընտրութեան այն ժողովրդական եղանակը, որը գործադրւում է մինչև այժմ և որին համաձայնեցաւ նաև Սարգիս Արքեպիսկոպոսը։

Անցաւ վրան երեք տարի և կաթուղիկոսը 1864 թուի հոկտեմբերի 1-ին թ. 451 կոնդակով պատուիրեց առաջնորդ Մակար Արքեպիսկոպոսին հոգաբարձական նոր ընտրութիւն անել 1861 թուի պատգամաւորների ձեռքով։

Առաջնորդի ծանր հիւանդութեան պատճառով այդ ընտրութիւնը տեղի է ունենում Դեկտեմբերի 13-ին և ընտրւում են 12 հոգաբարձուներ և 4 կանդիտատներ։ Սակայն այդ միջոցին պատահում է հետևեալը.—քաղաքիս չորս եկեղեցիների, այն է Զամբռուեցոց, ս. Նշանի, Նորաշէնի և ս. Սարգսի, ծխականներից ոմանք ընտրութիւնից մի քանի օր առաջ և նոյն իսկ ընտրութեան ժամին ներկայացնում են Մակար Արքեպիսկոպոսին միանման, բառ առ բառ միակերպ բողոքագիրներ, բոլորն էլ գրուած 1864 Դեկտեմբերի 10-ին, որոնցով բողոքում էին, թէ Նախկին պատգամաւորների ձեռքով ընտրութիւն կատա-

րելը «հարստահարութիւն է իրաւանց հասարակութեան» այլն։

Բայց այս բողոքները չանցաւ, գուցէ և այն պատճառով, որ ակնյայտնի ապօրինութիւններ կային նոցա մէջ, օրինակ հէնց երկու եկեղեցու բողոքագիրների մէջ ստորագրուած էր միևնոյն անձն, որպէս երկու եկեղեցու ծխական. և ընտրութիւնը կայացաւ։ Այդ ընտրութեան պիտի մասնակցէին Թիֆլիսի եկեղեցիների 54 պատգամաւորներ, բայց որովհետև «ի սոյն թուոյ պատգամաւո«րաց 4 անձինք վախճանեալք են, երեքն չգտանին ի «քաղաքիս և ի մնացելոց ներկայացան միմիայն ներքոյ «ստորագրեալ անձինք, որք և ընդ նախագահութեամբ «Նորին Բարձր Սրբազնութեան վիճակաւոր Առաջնորդ «Մակար Արքեպիսկոպոսի ընտրեցին քուէարկութեամբ «հոգաբարձու Ներսիսեան Հայոց Հոգևոր Ազգային Դպրո«ցի զհետևեալ անձինս...»։ Ստորագրել են քսան և չորս հոգի, և չնայելով սորան՝ ընտրութիւնը համարուելով վաւերական՝ առաջնորդը իւր՝ դեկտեմբեր 15 թ. 223 մանրամասն յայտարարութեամբ առաջարկում է ի հաստատութիւն Վեհափառ կաթուղիկոսին, կցելով նաև հետևեալը չորս բողոքների վերաբերմամբ.

« . . . Ամենախոնարհաբար յայտնեմ և զայս, զի ի «մերձենալ աւուր ընտրողութեանն և ի նմին իսկ աւուր «ի ժողովի անդ ընկալայ յոմանց ժողովրդոց չորից եկե«ղեցեաց քաղաքիս զչորս միանման բողոքագրութիւնս«սորա ի մտի ունելով զի ի յօդուածս Նորոգ կանոնա«դրութեան յիշեալ ուսումնարանին նշանակի «թէ յիւրա«քանչիւր ժամանակի ընտրութեան Նորոգ հոգաբարձուաց՝ նախապէս պարտին ընտրել ի ժողովրդոց Նորոգ պատգամաւորք, «որք ունիցին յետոյ ընտրել զնորոգ հոգաբարձուս» «խնդրեն յինէն զայնոսիկ գրութիւնսն ներկայացուցանել «Ձերում Սրբութեան և Սինոդին սրբոյ Էջմիածնի ի տնօ-

«ութիւն. ուստի ընդ սմին առաքելով զայնս ընդ որս «և զօրագիրն ընտրութեան կայացեալ ի նմին աւուր առ «սրբութիւն Ձեր, ի բարեհաճ կամս Ձեր ապաստան առ«նեմ ծանուցանել կամ ոչ Սինոդին սրբոյ Էջմիածնի. զի «ես չունելով յայնժամ առաջի աչաց զյիշեալ նորոգ կա«նոնադրութիւնն և չգիտելով հաւաստեաւ թէ արդարև «գոյ այդպիսի յօդուած ի նմին, պատշաճ վարկայ հա«մաձայնութեամբ ներկայ եղեալ պատգամաւորաց կատա«րել զՀայրապետական կոնդակ Ձերդ Սրբութեան, որ ի «1ն անցեալ հոկտեմբերի ընդ համարաւ 451, ձեռնադ«կելով նորօք յընտրութիւն նորոգ Հոգաբարձուաց։

«Այժմ, Վեհափառ Տէր, Սինոդն սրբոյ Էջմիածնի «հրամանաւ ի 5ն ներկայ դեկտեմբերի ընդ համարաւ «1930, առաքէ առ իս զյիշեալ կանոնադրութիւնն վասն «յանձնելոյ Հոգաբարձութեանն ի գործադրութիւն. ի կա«նոնադրութեան անդ յօդուած 11 – 12, գրի «անդամք «Հոգաբարձութեան և կանդիդատք նոցին ընտրին չորս«ամեայ ժամանակաւ ի ձեռն պատգամաւորաց, որք նոյն«պէս պահեն զիրաւունս իւրեանց չորսամեայ ժամանա«կաւ». ըստ այսմ պակասի միամեայ ժամանակն ծաւա«յութեան ներկայ եղեալ անդամոց Հոգաբարձութեանն. «ուրեմն բարեհաճեցարուք Վեհափառ Տէր, կամ հաստա«տել զնորոգ ընտրեալ հոգաբարձուս հայրապետական «կոնդակաւ, արձակելով օրհնութեամբ հանդերձ դիմնսն «և կամ յորդորել զնոսին շարունակել զամ մի ևս զայն «պաշտօն համաձայն կանոնադրութեանն»։

Դեռ այս ընտրութիւնը չկատարուած սակայն կաթուղիկոսի դիտաւորութիւնը միանգամայն փոխւում է հոգաբարձական կազմակերպութեան վերաբերութեամբ և ահա նոյն դեկտեմբերի 10ին թ. 581 կոնդակով զգուշաւոր խրատներով հրամայում է Առաջնորդ Մակար Արքեպիսկոպոսին Ներսիսեան Դպրոցի համար ընտրել ՀՈՐՍ

գործունեայ, հաւատարիմ, ազգասէր և տոհմական անձինք աստիճանաւորներից և աւագներից, և ԵՐԿՈՒ բազմափորձ և կրօնագէտ քահանաներ հոգաբարձական պաշտօն վարելու։

Դեկտեմբերի 10-ին գրած այս կոնդակը չկիտենք երբ ստացաւ Առաջնորդը, ընտրութիւնից առաջ լիէ յետոյ, սակայն յայտնի է, որ վերջինս նոյն ամսի 22-ին թ. 234 յայտարարութեամբ հետեւալ կերպով է պատճառաբանում այդ կոնդակի անկատար լինելը.

«Ընկալեալ զհայրապետական կոնդակ սրբազնակա-«տար օծութեան Ձերոյ ի 10 ներկայ դեկտեմբերի ընդ «համարաւ 581, յորում ի միջի այլոց զպուշաւոր խրա-«տուց հրամայէք ընտրել ՉՀՈՐՍ գործունեայ, հաւատա-«րիմ, ազգասէր և տոհմական անձինս լիէ յաստիճանա «ւորաց և լիէ յաւագաց ի բարեպաշտ ժողովրդականաց «քաղաքացոցս, ընդ նմին և ՉԵՐԿՈՒ բազմափորձ և կրօ-«նագէտ քահանայս ի պաշտօն հոգաբարձութեան ուսում-«նարանիս և այնպէս առաջի առնել Վեհափառութեան «Ձերում զանուանս նոցա և զհամակամութիւն միր. առ «որ հարկ համարիմ ծանուցանել Ձերում սրբութեան. զի «որովհետև աւուրքք յառաջ հրապարակաւ կայացաւ ժո-«ղովն ընտրութեան նորոգ հոգաբարձուաց և առաջարկե-«ցաւ յընտրութիւն բարեհաճ կամաց սրբութեան Ձերոյ, «և վասն զի՝ հրատարակեցաւ յունկն ժողովրդականաց «լիէ արդէն Սինոդն սրբոյ Էջմիածնի առաքեալ է առ «մեզ զկանոնադրութիւնն ուսումնարանի տեղւոյս վասն «գործադրութեան, վասնորոյ պատշաճ վարկայ չձեռնար-«կել ի կատարումն ներկայ հրամանի մինչև ընկալայց ի «Վեհափառ Տէրութենէդ Ձերմէ զվախճանական լուծումն «ըստ առաջարկութեան իմ յայտարարութեամբ ի 15-ն «ամսոյս ընդ համարաւ 223»։

Նորընտիր հոգաբարձութեան և նոր հրահանգի մա-

սին Առաջնորդի տուած յայտարարութեան գիջաւ կաթուղիկոսը և համարելով ընտրութիւնը արդէն կատարուած իրողութիւն՝ այս անգամ հաստատեց այդ ընտրութիւնը՝ թերևս առաջիկային թողնելով նոր ծրագրի իրագործումը, սակայն հետևեալ ընտրութեան չկար այլ ևս Տ. Մատթէոս կաթուղիկոսը և նորա վերջին ցանկութիւնը մնաց անկատար։

Շատ ծանրակշիռ հանգամանքներ, որոնք մի օր անշուշտ պատմութեան սեպհականութիւն կդառնան, առիթ էին տուել հանգուցեալ կաթուղիկոսին ընդունելու, որ Ներսիսեան Հոգևոր Դպրոցի հոգաբարձուների թիւը ոչ թէ տասներկու, այլ վեց լինին, և սոցանից էլ երկուսը քահանայ. այս դրութիւնը թէպէտև կաթուղիկոսի մահուամբ լիապէս չիրագործուեցաւ, սակայն մասամբ նա կատարուեց և յաջորդ ընտրութիւնների ժամանակ երկու նուազ հոգաբարձական կազմակերպութեան մէջ մտան և երկու քահանաներ։

Մեր նպատակից դուրս է քննել՝ հարկաւոր են թէ ոչ հոգևորական ներկայացուցիչներ հոգաբարձութեան մէջ, որի իրաւասութեան սահմանը տարածւում է տեսչի և ուսուցչաց ընտրութեան, ծրագրի մշակման և առհասարակ Դպրոցին հոգի և ուղղութիւն տալու վերայ, այն Դպրոցին, որ կրօնագէտներ և հայագէտներ պիտի տայ ազգին լինին սոքա հոգևորական թէ աշխարհականներ, բայց մի բան մեզ համար միշտ պարզ է, որ Դպրոցի կանոնադրութիւն տուող Հայրապետը, ինչպէս այդ երևում է նորա Դեկտեմբեր 10-ի կոնդակից, խորին կերպով համոզուած է եղել, որ Դպրոցին պէտք չէ արդէն «առաքելոց թուով» հոգաբարձուներ և նոցա մէջ անհրաժեշտաբար տեղ պիտի ունենան և քահանայ ներկայացուցիչներ։

Այս տեսակէտից արդեան վեհափառ Հայրապետի նորոգ կարգադրութիւնը ոչ թէ միայն ժամանակի պահանջ ենք համարում մենք, այլ և մի տեսակ մարմնացում Իւր երջանկայիշատակ նախորդի ցանկութեանց։

Գիւս ա. քահ. Աղանեանց.



ՏՕՐՔՈՒԱՏՕ ՏԱՍՍՕ

ԹԱՏԵՐԱԽԱՂ

ԳԷՕՏԷԻ

ԱՆՁԻՆՔ

ԱԼՖՕՆՍ ԵՐԿՐՈՐԴ, Ֆէրրարայի դուքսը։
ԼԻՕՆՕՐԷ ՖՕՆ ԷՍՏԷ, դուքսի քույրը (իշխանուհի)։
ԼԻՕՆՕՐԷ ՍԱՆՎԻՏԱԼԷ, կոմսուհի Սկանդինաս։
ՏՕՐՔՈՒԱՏՕ ՏԱՍՍՕ։
ԱՆՏՕՆԻՕ ՄՕՆՏԻԿԱՏԻՆՕ, պետական քարտուղար։

Գործողության տեղը Բէլրիգուարդո դաստակերտն է։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻԼ

Պարտէզը զարդարուած է վիւղասան բանաստեղծների արձաններով։ Բեմի աջակողմում դրած է Վիրգիլիոսի կիսարձանն, իսկ ձախակողմում Արիոստինը։

ԻՇԽԱՆՈՒՀԻ, ԼԻՕՆՕՐԷ.

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Դու ինձ ժպտալով ես նայում, Լէօնորէ՛, և հայեացքդ քեզ վրայ ես ձգում ու կրկին ժպտում, այդ ի՞նչ է նշանակում։ Ցայտնի՛ր ինձ, բարեկամիդ։ Կարծես թէ մտածմունքի մէջ ես։ Թէև գոհ ես երևում։

ԼԷՕՆՈՐԻ

Այո, իշխանուհի, ուրախ եմ, որ այստեղ մեզ երկուսիս տեսնում եմ գեղջկական գեղեցկութիւններով զարդարուած։ Կարծես թէ բախտաւոր հովուհիք լինենք և երջանիկների նման կրաղուած ենք։ Պսակներ ենք հիւսում։ Այս զոյնզոյն պսակը հետէն փնջաղարդում է իմ ձեռքում, իսկ դու, քո աւելի բարձրաթռիչ խելքով և վսեմ հոգով ընտրել ես նուրբ և գեղակազմ դափնին։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այս ոստերը, որ ես մոածմունքի մէջ խորասուզուած հիւսել եմ, մի արժանաւոր գլխի համար են։ Երախտագիտութեամբ դնում եմ Վիրգիլիոսի գլխին։ (Պսակում է Վիրգիլիոսի կիսարձանը)։

ԼԷՕՆՈՐԻ

Իսկ ես իմ ծաղկախիտ, գեղածիծաղ պսակը դնում եմ ճարտարաբան Լուդովիկոսի բարձր ճակատին (պսակում է Արիոստի կիսարձանը), նա, որի կատակներն երբէք չեն թառամում. թող նա էլ իսկոյն ստանայ իր մասը նորահաս գարունից։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Եղբայրս այնքան սիրալիր եղաւ, որ այսպիսի օրերում մեզ ամարանոց ուղարկեց։ Մենք առանձնացած ենք և կարող ենք ժամեր շարունակ երևակայել թէ գտնուում ենք բանաստեղծների ոսկէ դարում։ Ես սիրում եմ Բէլրիգուարդօ՝ն, որովհետև մանկութեանս ժամանակ այստեղ ուրախ օրեր եմ տեսել։ Այս թարմ կանաչը և այս արևը յիշեցնում են ինձ այն ժամանակուայ զգացմունքս։

ԼԷՕՆՈՐԻ

Այո՛, մեզ շրջապատում է մի նո՞ր աշխարհ։ Այս մշտադալար ծառերի ստուերն արդէն ուրախալի է։ Մեզ զովացնում է նաև այս աղբիւրների կարկաչիւնը։ Նորաբողբոջ ոստերը կախուած երերուում են առաւօտեան զովում։ Ծաղիկներն իրենց բաժակներից մանկական անմեղութեամբ ուրախ նայում են մեզ վրայ։ Պարտիզպանն արդէն վստահ բացում է նարինջների և կիտրոնների ջերմոցը, կապոյտ երկինքը հանդարտ տարածուած է մեզ վրայ և հորիզոնում հեռաւոր լեռների ձիւնը հալուելով տարածում է մեղմ բուրմունք։

ԻԳԻՄԱՆՈՒՀԻ

Գարունն ինձ շատ հաճելի կը լինէր, եթէ չը խլէր ինձ-նից բարեկամիս։

ԼԷՕՆՕՐԻ

Ո՜հ, իշխանուհի, այս սքանչելի ժամում մի՛ յիշեցնիր ինձ, որ պէտք է շուտով հրաժեշտս տամ։

ԻԳԻՄԱՆՈՒՀԻ

Ինչ որ այստեղ թողնում ես, կը գտնես այն մեծ քաղա-քում կրկնապատիկ։

ԼԷՕՆՕՐԻ

Ինձ կանչում է պարտքն, ինձ կանչում է սէրը դէպի ա-մուսինս, որ երկար ժամանակ զրկուած է ինձնից։ Տանում եմ նրա մօտ իր որդուն, որ այս տարի այդպէս ու շատ մեծացել, այդպէս շուտ ձևակերպուել է, որ մասնակից լինեմ նրա հայ-րական ուրախութեանը։ Մեծ և սքանչելի է Ֆլորենցան, բայց այդտեղ հաւաքուած բոլոր գանձերի արժէքը չի հասնի Ֆէր-րարայի գոհարներին։ Ժողովուրդն այդ քաղաքը քաղաքի դարձ-րեց, իսկ Ֆէրրարան մեծ դարձաւ իր իշխաններով։

ԻԳԻՄԱՆՈՒՀԻ

Աւելի այն լաւ մարդկանցով, որոնք պատահմամբ եկան այստեղ և բախտի բերմամբ մնացին։

ԼԷՕՆՕՐԻ

Դիպուածը հեշտութեամբ ցրւում է այն, ինչ ժողո-վել է։ Ազնիւ մարդը քաշում է դէպի իրեն ազնիւ մարդ-կանց եւ գիտէ ձեզ նման գրաւել նրանց։ Եղբօրդ և քեզ հետ կապւում են այնպիսի անձինք, որոնք ձեզ արժանի են և դուք արժանի էք ձեր մեծաշուք նախնեաց։ Այս տեղ փայլով ծագեց գիտութեան և ազատամտութեան գեղեցիկ լոյսը, երբ բարբարոսութիւնը դեռ թանձր խաւարով քօղարկուած էր պա-հում երկիրը։ Մանկութեանս ժամանակ արդէն հնչում էին ա-կանջիս Հէրկուլէս Ֆօն Էստէի և Հիպոլիտ Ֆօն Էստէի անուն-ները։ Հայրս շատ էր գովարանում Ֆէրրարան, Հռովմը և Ֆլո-ռէնցան։ Ես յաճախ փափագել եմ տեսնել այդ քաղաքները. վերջապէս ահա այստեղ եմ։ Այստեղ հիւրընկալել, խնամել են Պէտրարքային և այստեղ Արիոստը գտաւ իր կաղապարները։ Իտալիայում չէ յիշւում ոչ մի մեծ անուն, որ այս տանը հիւր-ընկալուած չը լինէր։ Եւ մեծապէս օգտաւէտ է հիւրընկալել

հանճարը։ Դու Նրան տալիս ես մի ընծայ, նա քեզ մի աւելի գեղեցիկն է վերադարձնում։ Այն քաղաքներն, ուր մտել է մի լաւ մարդ, նուիրական են։ Դարերից յետոյ էլ այնտեղ Նրա խօսքն ու գործն արձագանք են գտնում ապագայ սերնդի մէջ։

ԻՃԻՄԱՆՈՒՀԻ

Եթէ սերունդը քեզ նման վառ է զգում, շատ անգամ նախանձում եմ քեզ այդ բաղդաւորութեան համար։

ԼԷՕՆՕՐԷ

Որը դու սակաւների թւում վայելում ես հանդարտութեամբ և պարկեշտութեամբ։ Լի սիրտս ստիպում է ինձ իսկոյն ասել, ինչ որ վառ զգում եմ։ Դու այդ աւելի լաւ, աւելի խոր ես զգում և լսում ես։ Վայրկեանի փայլը չէ կուրացնում քեզ, սրամտութիւնը չէ կաշառում քեզ, շողոքորթութիւնն իր արուեստականութեամբ ի զուր է խորամանկօրէն հպւում ականջիդ։ Միտքդ հաստատ է մնում և ճաշակդ ընտիր, դատավճիռդ արդար, մեծ է միշտ քո մասնակցութիւնը մեծ գործում, որը դու գիտես, ինչպէս ինքդ քեզ։

ԻՃԻՄԱՆՈՒՀԻ

Դու այդ մեծ շողոքորթութիւնը չը պէտք է քօղարկէիր մտերիմ բարեկամութեան ծածկոցով։

ԼԷՕՆՕՐԷ

Բարեկամութիւնը ճշմարիտ է. բայց այդ այնուամենայնիւ կարող է ճանաչել արժանաւորութեանդ ամբողջ չափը։ Թոյլ տուր ընդունել, որ ինչպէս պատեհութիւնը, նոյնպէս էլ բախտն ունեն իրենց մասը քո կրթութեան մէջ։ Այդ դու ունես և վերջապէս այդպէս, որ կաս, աշխարհը նախադասում է քեզ և քրոջդ ձեր ժամանակուայ բոլոր մեծ կանանցից։

ԻՃԻՄԱՆՈՒՀԻ

Լէօնօրէ, այդ ինձ կարող է քիչ հետաքրքրել, երբ մտածում եմ, թէ որքան ընչին ենք և ի՞նչ որ ենք, այն էլ ուրիշներին ենք պարտական։ Մօտս եմ պարտական հին լեզուներ գիտենալու և լաւագոյնը ճանաչելու համար, որոնք նախնիքներից թողած ժառանգութիւն են։ Բայց Նրա հետ գիտութեամբ և զգօն խելքով երբէք չի կարող հաւասար լինել նրան երկու դուստրներից ոչ մէկը։ Եւ եթէ մէկը հաւասարուելու լինի Նրա հետ, այդ ի հարկէ, իրաւամբ Լուկրէցիան է։ Կարող եմ նաև

հաւատացնել քեզ, որ երբէք նշանակութիւն չեմ տուել ոչ այն դիրքին և ոչ էլ այն ստացուածքին, որ ինձ տուել են թէ բնութիւնը և թէ բախտը։ Ես ուրախ եմ, որ բանիմաց մարդիկ խօսելիս, ես կարողանում եմ հասկանալ նրանց մտքերը։ Վերաբերէր այդ դատողութիւնը հին ժամանակի մի անձնաւորութեան և նրա գործերի արժանաւորութեան, վերաբերէր խօսքը մի գիտութեան, որ փորձով ընդլայնուած, վսեմացնելով մարդուն, նպաստում է նրան։ Ինչ ընթացք որ ստանում է ապնիւ մարդկանց խօսակցութիւնը, ես ուրախութեամբ հետևում եմ, որովհետև հեշտութեամբ եմ կարողանում հետևել։ Ես ուրախութեամբ ունկնդիր եմ լինում խելացի մարդկանց վիճաբանութեանը, երբ պերճախօսի շրթունքը շնորհալի կերպով խաղում են այն ուժերի շուրջը, որոնք շարժում են մարդու կուրծքն այնքան մտերմութեամբ և այնքան սաստկութեամբ։ Ինձ հաճելի է, երբ իշխանների փառքի, տիրապետութեան լայնացման տենչը դառնում է նիւթ իմաստուիրի համար և երբ սուր խոհականութիւնը, նրբութեամբ արծարծուած մի խելօք մարդուց, փոխանակ մոլորեցնելու, մեզ ուսուցանում է։

ԼԷՕՆՈՐԻ

Այս ծանրակշիռ խօսակցութիւնից յետոյ մեր լսելիքը և մեր ներքին զգացմունքը մեծ քաղցրութեամբ հանգչում են բանաստեղծի հանգերի վրայ, որն ամենասիրելի վերջին զգացմունքները, սքանչելի ձայներով ներշնչում է մեր հոգու մէջ։ Քո բարձր խելքն ընդգրկում է մի լայնածաւալ շրջան։ Ես աւելի մեծ սիրով հանդչում եմ բանաստեղծութեան կղզու գագաթնէ պրակի մէջ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ինձ կամենում էին համոզել, որ այս գեղեցիկ երկրում, բոլոր ծառերից աւելի լաւ աճում է մրտենին։ Եւ եթէ մուսաների նման շատ շատերը կան, այնուամենայնիւ սակաւ են որոնում նրանց մէջ մի ընկերուհի և խաղակից, երբ ուրախութեամբ կարող են հանդիպել բանաստեղծին, որը կարծես թէ մեղանից խորշում է, կարծես թէ մի բան է որոնում, որ մենք չենք ճանաչում և կարելի է, որ վերջ 'ի վերջոյ ինքն էլ չի ճանաչում։ Շատ սիրալիր կը լինէր, եթէ նա հանդիպէր մեզ պատեհ ժամին, իսկոյն հիանալով մեզ ընդունէր այն դանձի տեղ, որ նա իսկուր երկար ժամանակ որոնում է լայնատարած աշխարհում։

ԼԷՕՆՕՐԻ

Պէտք է կատակիդ համբերեմ, թէպէտև ինձ է վերաբերում, բայց ինձ շատ էլ փոյթ չէ։ Ես յարգում եմ ամեն մարդու և նրա արժանաւորութիւնը և Տասսօի վերաբերմամբ, ես միայն արդարացի եմ։ Նրա աչքը հաղիւ թէ կանգ է առնում այս աշխարհիս վրայ, նրա ականջը լսում է ընութեան ներդաշնակութիւնը։ Ինչ որ պատմութիւնը թափանցում է, կեանքը տալիս է, նրա կուրծքն իսկոյն յօժարութեամբ ընդունում է։ Նրա հոգին ժողովում է ցիր ու ցան եղածը և նրա զգացմունքն անշընչին կեանք է տալիս։ Նա յաճախ ազնուացնում է այն, ինչ որ մեզ հասարակ է թւում, իսկ թանկագինը կորցնում է նրա աչքում իր արժէքը։ Այդ զարմանալի մարդը թափառում է իրեն յատուկ այդ կախարդական շրջանում և ստիպում է մեզ իր հետ թափառել և իրեն մասնակից լինել։ Կարծես թէ նա մօտենում է մեզ, բայց և մեզանից հեռու է մնում, կարծես նա մեզ է նայում, բայց կարելի է, որ նրան մեր տեղ երբեմնապէս ոգիներ են երևում։

ԻՀԼԻՆՈՒՀԻ

Բանաստեղծին նկարագրեցիր նրբութեամբ և մեղմութեամբ, որ սաւառնում է քաղցր երազների թագաւորութեան մէջ։ Բայց ինձ թւում է, որ իրականութիւնը նոյնպէս նրան ուժգնաբար քաշում է դէպի իրեն և կաշկանդած է պահում։ Այն զեղեցիկ երգերը, որ մենք երբեմնապէս գտնում ենք ոսկէ խնձորների նման մեր ծառերի վրայ կպցրած, յորինում են մեզ համար անուշաբոյր նոր հեսպերեան [1]) պարտէզներ։ Մի՞թէ այդ բոլորը չե՞ս ընդունում որպէս անկեղծ սիրոյ սքանչելի պտուղներ։

ԼԷՕՆՕՐԻ

Այդ զեղեցիկ թերթերն ինձ ևս հիացնում են։ Նա իր բոլոր հանդերի մէջ բաղմապան հանճարով փառաբանում է միայն մէկ անձնաւորութիւն։ Երբեմն բարձրացնում է նրան լուսափայլ շուքի մէջ մինչև աստղազարդ երկինք և մեծարելով, ինքը որպէս հրեշտակ, ամպերի վրայ, խոնարհում է այդ պատկերի առջև, յետոյ կանաչազարդ, խաղաղ դաշտերի վրայով հետևում է նրան

---

[1]) Հեսպերիա կոչւում էին Իւպիտերի երեք աղջկերքը, որոնք ունէին մի ամենազեղեցիկ պարտէզ, ուստեղ կային ոսկէ խնձորներով ծառեր։

և ամէն մի ծաղկից պսակ է հիւսում նրա համար։ Հեռանում է մեծարուածը, սրբազնացնում է այն շաւիղն, ուր նրա գեղեցիկ ոտքը մեղմութեամբ դիպել է։ Թուփերի մէջ թաղնուած, իր սիրահար կրծքից, սոխակի նման, լցնում է անտառը և օդը քաղցրահնչիւն ողբերով։ Նրա յուզիչ տանջանքն, երջանկութեան կսկիծը, գրաւում է ամեն մի ականջ և ամեն մի սիրտ պէտք է հետևի նրան։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Եւ երբ նա անուանում է իր սիրոյ առարկան, նրան— Լէօնորէ անունն է տալիս։

ԼԷՕՆՕՐԻ

Այդ ինչպէս քո, նոյնպէս և իմ անունն է։ Ես կը նեղանայի, եթէ մի ուրիշ անուն լինէր։ Ես ուրախ եմ, որ նա դէպի քեզ ունեցած զգացմունքը կարող է թաղցնել այդ երկդիմութեան տակ։ Ես գոհ եմ, որ նա այդ անուան սքանչելի ճնշման հետ ինձ էլ է մտաբերում։ Այստեղ հարցն այն տեսակ սիրոյ մասին չէ, որ կամենում է տիրել իր առարկային, բացառապէս իւրացնել նրան, որ նախանձից ցանկանար ամեն մարդու արգելել նայելու։ Եթէ նա երջանիկ մտածմունքի մէջ պարապում է քո արժանաւորութեամբ, թող մի փոքր զբաղուի նաև իմ աւելի ընչին անձնաւորութեամբ։ Նա մեզ չէ սիրում, ներիր, որ այդ ասում եմ։ Ամեն տեղից ժողովում է նա, ինչ որ սիրում է, մէկ անուան շուրջը, որ մենք կրում ենք և մեզ հաղորդում է իր զգացմունքը։ Մեզ թւում է, որ մենք այդ մարդուն սիրում ենք, բայց մենք նրա հետ միասին սիրում ենք միայն բարձրագոյնը, որ մենք կարող ենք սիրել։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Լէօնորէ՛, դու այդ գիտութեան մէջ շատ ես խորասուզուել. այնպէ՞ս բաներ ես ասում ինձ, որոնք համարեա թէ միայն շփւում են ականջիս և հալիւ թէ կարողանում են հոգուս մէջ թափանցել։

ԼԷՕՆՕՐԻ

Դու, Պղատոնի աշակերտո՛ւհի, չը հասկանաս, թէ մի նորեկ ինչի՞ մասին է վստահանում շատախօսել քո առջև։ Այդ կարող էր պատահել, եթէ ես շատ սխալուած լինէի, բայց և լաւ գիտեմ, որ բոլորովին չեմ սխալւում։ Այս սքանչելի ուսումնարանում սէրը սովորական կերպով չէ յայտնւում, որպէս

երես տուած երեխայ։ Այդ այն երիտասարդն է, որ Պսիխէի հետ ամուսնացել է և չաստուածների խորհրդում տեղ և ձայն ունի։ Նա թեթևամտութեամբ չէ ընկնում մէկի կրծքից դէպի միւսինը։ Նա քաղցր մոլորմունքով իսկոյն չէ կապւում գեղեցկութեան և վայելուչ հասակի հետ և յետոյ նա չէ զղջում զզուանքով ու դժգոհութեամբ իր շուտափոյթ սիրոյ հրապոյրքի համար։

ԻՃԻԱՆՈՒՀԻ

Ահա եղբայրս գալիս է։ Ցոյց չը տանք, թէ խօսակցութիւններս կրկին մեզ ուր է տարել։ Կարող ենք ենթարկուել նրա կատակներին, ինչպէս մեր հագուստն ենթարկուեց նրա հեգնութեանը։

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼ

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ԱԼՖՕՆՍ

ԱԼՖՕՆՍ

Տասսո՛ին որոնում եմ և ոչ մի տեղ չեմ գտնում. ձեզ մօտ նոյնպէս չեմ տեսնում նրան։ Կարող էք արդեօք նրա մասին մի տեղեկութիւն տալ ինձ։

ԻՃԻԱՆՈՒՀԻ

Ես երեկ նրան տեսայ մի կարճ միջոց, այսօր չեմ տեսել։

ԱԼՖՕՆՍ

Մի հին սխալ է, որ նա աւելի պտտում է միայնութիւնը, քան հասարակութիւնը։ Ես նրան կը ներէի, եթէ նա խուսափէր մարդկանց բազմական ամբոխից և աւելի յօժարութեամբ խաղաղութեան մէջ ապատ ինքն իր ոգու հետ խօսակցէր։ Բայց ես չեմ կարող գովել, որ նա ինքը խորշում է այն շրջանից, որ կազմում են նրա բարեկամներ։

ԼԻՕՆՈՐԻ

Եթէ չեմ սխալւում, ո՛վ իշխան, այդ մեղադրանքը շուտով ուրախալի գովեստի ես փոխարկելու։ Այսօր հեռուից տեսայ նրան, ձեռքին բռնել էր մի գիրք և մի թերթ, զրում էր և գնում էր և կրկին գրում էր։ Երեկ նա ինձ մի խօսք ասաց հարևանցօրէն և ինձ թուաց, որ նա մտադիր է իր երկասիրութիւնը յայտնել վերջացրած։ Նա աշխատում է միայն բարու-

քել մի քանի գծեր, որ առաջարկէ վերջապէս մի արժանաւոր նուէր քո բարեհաճութեանը, որը նրան այդքան շատ նպաստել է։

ԱԼՖՈՆՍ

Նրա գալուստը թող բարի լինի, եթէ նա իր երկասիրութիւնը բերի, թող նա երկար ժամանակ ապատ լինի։ Որքան նրա աշխատանքն ինձ հետաքրքրում է, որքան այդ մեծ գործը, շատ կողմից ուրախացնում է ինձ և պէտք է ուրախացնի, այնքան էլ աւելացնում է անհամբերութիւնս։ Նա չի կարողանում վերջացնել, չի կարողանում պատրաստել, միշտ փոփոխում է, դանդաղ է առաջ գնում, յետոյ կանգ առնում և յուսախար է անում։ Մարդ ակամայ տեսնում է հեռացած երկար ժամանակ այն զուարճութիւնը, որ այդքան մօտ էր թւում։

ԻՀԻԱՆՈՒՀԻ

Ես գովում եմ համբերութիւնը, հոգացողութիւնը, որով նա քայլ առ քայլ դիմում է դէպի նպատակը։ Միայն շնորհիւ մուսաների այդքան հանգերը կարող են սերտ ի մի կապուել և նրա հոգին զուրգուրում է միայն այն ձգտումը, որ նրա երկն ամփոփ լինի։ Նա չի կամենում առասպելներն առասպելների վրայ դիզել, որոնք գրգռելով զբաղեցնում են և ի վերջոյ որպէս ունայն խօսքեր, նուաղելով միմիայն խարում են։ Թող նրան եղբայր, որովհետև ժամանակը չափ չէ մի լաւ երկասիրութեան համար և եթէ ապագայ սերունդն է վայելելու, բանաստեղծի ժամանակակիցները պէտք է մոռացուեն։

ԱԼՖՈՆՍ

Թող մենք միասին գործենք, սիրելի քոյր, ինչպէս յաճախ աշխատել ենք միմեանց օգտին։ Եթէ ես շատ եռանդոտ լինեմ, չափաւորիր և եթէ դու շատ դանդաղ լինես, ես պէտք է քեզ խրախուսեմ։ Այն ժամանակ կարելի է, որ մէկէն ի մէկ տեսնենք նրան այն նպատակին հասած, որ երկար ժամանակ մեզ համար ցանկալի է եղել։ Այն ժամանակ թող մեր հայրենիքը և աշխարհը զարմանան, թէ որպիսի երկասիրութիւն է աւարտած։ Այդ փառքից ես իմ մասը կ'ստանամ, իսկ նա կը ներմուծուի կեանքի մէջ։ Մի ազնիւ մարդ չի կարող իր զարգացմամբ մի նեղ շրջանի պարտական լինել։ Հայրենիքը և աշխարհը պէտք է ներգործեն նրա վրայ։ Նա պէտք է սովորի կրել փառքը և պարսաւանքը։ Նա ստիպուած կը լինի լաւ ճանաչել ի-

բեն և ուրիշներին։ Միայնութիւնը նրան շողոքորթելով այլ ևս չի որորի։ Թշնամին չի խնայիլ, իսկ բարեկամը չի համարձակուիլ խնայել նրան։ Այն ժամանակ երիտասարդը կոուելով գործադրում է իր ոյժերը, զգում է ինչ որ է և ընդ նմին շուտով տղամարդ է զգում։

ԼԷՕՆՈՐԷ

Ուրեմն, Դու Տէր, նրա համար ամեն բան կ'անես, ինչպէս Դու մինչև այժմ արդէն նրա համար շատ բան արել ես։ Տաղանդը կազմակերպւում է խաղաղութեան մէջ, ընաւորութիւնն աշխարհի յորձանքի։ Ո՞հ երանի նա իր զգացումն, ինչպէս և իր գեղարուեստը կպմէր քո վարդապետութեամբ, որ նա այլ ևս չը խորշէր մարդկանցից, որ նրա կասկածանքը վերջ ի վերջոյ չը փոխարկուէր երկիւղի և ատելութեան։

ԱԼՖՕՆՍ

Մարդկանցից վախենում է նա, ով նրանց չի ճանաչում, եւ ո՛վ որ խուսափում է, նրանց շուտով սխալ կը ճանաչի։ Հէնց այդ միևնոյնը նրա հետ է պատահել, իսկ այդպէս մի ազատ հոգի հետոյհետէ կը շփոթուի և կը կաշկանդուի։ Այդ կերպիւ յաճախ նա աւելի իմ հաճոյքի համար է հոգում, քան նրան պատշաճ է։ Նա հաւատ չի ընծայում յարերին, որոնք հաստատ գիտեմ, նրա թշնամիքը չեն։ Պատահում է, որ նրա մի նամակը կորչում է, որ մի ծառայ նրա ծառայութիւնից ուրիշի մօտ է գնում, որ մի թուղթ է կորցնում, նա իսկոյն դիտաւորութիւն է ենթադրում, անհաւատարմութիւն, նենգութիւն, որոնք խորում են նրա ճակատագիրը։

ԻԳԼԻԱՆՈՒՀԻ

Թող չը մոռանանք, սիրելի եղբայր, որ մարդ ինքն իրենից չի կարող բաժանուել։ Եւ եթէ մի բարեկամ, որ ստիպուած է մեզ հետ թափառելը իր մի ոտը ցաւացնի, մենք այն ժամանակ յօժարութեամբ կամաց կը դնանք և կամաւ ու սիրով կը մեկնենք նրան մեր ձեռքը։

ԱԼՖՕՆՍ

Աւելի լաւ կը լինէր, եթէ կարողանայինք նրան բժշկել, աւելի լաւ կը լինէր իսկոյն բժշկի անկեղծ խորհրդով մի բուժումն փորձէինք, յետոյ բուժուածի հետ գնայինք ուրախ կեանքի նոր ճանապարհով։ Բայց յոյս ունեմ, իմ սիրելիքս, որ ես երբէք չեմ բարձի իմ վրայ անսիրտ բժշկի մեղքը։ Ես անում եմ,

ինչ որ կարող եմ, որպէս զի դրոշմեմ նրա կրծքի մէջ անկասկածութիւն և վստահութիւն։ Շատերի ներկայութեամբ ես ճախ ցոյց եմ տալիս նրան իմ շնորհքի հաստատ նշանները։ Եթէ ինձ դանդատւում է, ես քննութիւն եմ նշանակում, ինչպէս և արեցի, երբ նա նորերումս կարծում էր, որ նրա սենեակի դուռը կոտրել են։ Եթէ քննութիւնից ոչինչ չէ յայտնւում, թողնում եմ անուշադիր։ Եւ որովհետև պէտք է ամեն բան գործադրել, ես գործադրում եմ Տասսոի վերաբերմամբ հաւերութիւն ըստ որում նա դրան արժանի է։ Եւ դուք, ես գիտեմ, որ ինձ հետ համաձայն էք։ Այս օր ես ձեզ ամարանոց բերեցի և այս երեկոյ վերադառնալու եմ քաղաք։ Դուք մի վայրկեանով կը տեսնէք Անտոնիոին։ Նա գալիս է Հռովմից և ինձ հետ կը գնայ։ Մենք խօսելու և վերջացնելու շատ գործեր ունենք։ Պէտք է որոշումներ անել, շատ նամակներ գրել, այդ բոլորը ստիպում են ինձ վերադառնալ քաղաք։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Թոյլ կը տաս մեզ, որ ուղեկցենք քեզ։

ԱԼՖՈՆՍ

Առ այժմ մնացէք Բէլրիզուարդօ'ում, միասին գնացէք Քոնսանդօյի։ Վայելեցէք գեղեցիկ օրերը, ինչպէս ցանկանումէք։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Մի՞թէ դու չես կարող մեզ հետ գնալ։ Գործերդ կատարել ինչպէս քաղաքում, նոյնպէս և այստեղ։

ԼԷՕՆՈՐԷ

Դու Անտոնիոին իսկոյն խլում ես մեզանից, երբ նա պէտք է մեզ շատ բան պատմէր Հռովմի մասին։

ԱԼՖՈՆՍ

Կարելի չէ, սիրելի՞ք։ Սակայն երբ կարելի եղաւ, մենք իսկոյն միասին կը վերադառնանք, թող այն ժամանակ ձեզ պատմի և դուք էլ պէտք է ինձ օգնէք նրան վարձատրելու, որովհետև նա դարձեալ շատ է աշխատել իմ համար, իր ծառայութեան մէջ։ Եւ երբ կը վերջացնենք մեր խօսակցութիւնները, այն ժամանակ կարող է գալ խուռն բազմութիւնը, որ մեր պարտէզներում ուրախութիւն լինի, որ գեղեցկութիւնը յօժարութեամբ հանդիպի ինձ զովութեան մէջ, երբ նրան որոնելու լինեմ։

ԼԷՕՆՕՐԷ

Մենք էլ հաճութեամբ մեր ժառների արանքներով կը նայենք։

ԱԼՖՕՆՍ

Ընդհակառակն դուք գիտէք, որ ես կարող եմ խնայել։

ԻՄԼԻՆՈՒՀԻ

(դառնալով դէպի բէմը)

Վաղուց արդէն տեսնում եմ, որ Տասսօն գալիս է։ Նա յամր շարժում է իր քայլերը և իբրև երկմիտ երբեմն յանկարծ կանգնում է, յետոյ արագութեամբ դիմում է դէպի մեզ և կըրկին կանգ առնում։

ԱԼՖՕՆՍ

Մի խանդարէք նրա երազները, երբ նա ժառծում, բանաստեղծում է և թողէք թափառի։

ԼԷՕՆՕՐԷ

Ո՛չ, նա տեսաւ մեզ և այստեղ է գալիս։

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ՏԱՍՍՕ.

ՏԱՍՍՕ

(Մագաղաթակալմ մի գիրք ձեռքին բռնած)

Գալիս եմ յամրաքայլ, ձեզ համար մի երկասիրութիւն բերելու և դեռ վարանում եմ մատուցանել քեզ։ Ես քաջ գիտեմ, որ դեռ վերջացրած չէ, թէպէտև կարող է թուալ, թէ վերջացրած է։ Սակայն չէի կամենում անկատար ներկայացնել քեզ, այժմ մի նոր հոգս ստիպում է ինձ այդ։ Բայց յօժարութեամբ չէի կամենայ երկչոտ երևիլ, չէի կամենայ անշնորհակալ հանդիսանալ։ Եւ ինչպէս մարդ կարող է ասել. ահա այստեղ եմ, որ բարեկամները նրան խնայելով ուրախանան, ես էլ այնպէս կարող եմ միայն ասել, ընդունիր։ (Տալիս է գիրքը)։

ԱԼՖՕՆՍ

Դու զարմացնում ես ինձ քո այդ նուէրով և այս գեղեցիկ օրը մի տօն ես դարձնում իմ համար։ Վերջապէս այս իմ ձեռքումն է և որոշ մտքով, իմ սեփականութիւնն եմ համա-

բում։ Ես արդէն վաղուց ցանկանում էի, որ դու այդ որոշումն անէիր և վերջապէս ասէիր, ահա, բաւ է այս։

ՏԱՍՍՕ

Եթէ դու բաւական ես, ուրեմն կատարեալ է այդ, որովհետև ամենայն տեսակէտից քեզ է պատկանում։ Եթէ դիտէի աշխատութիւնը, որ գործադրել եմ, նայէի գրչիս գծածներին, կարող էի ասել, այդ երկասիրութիւնն իմն է։ Սակայն ուշադրութեամբ զննում եմ, թէ ինչն է տալիս այդ բանաստեղծութեանը ներքին արժէք և համարումն, ի հարկէ խոստովանում եմ, ամբողջովին միայն քեզանից եմ ստացել։ Եթէ բնութիւնն իր հարուստ կարողութիւնից սիրով պարգևել է ինձ բանաստեղծութեան սքանչելի հանճարը, կամակոր բախտը բուռն ուժով վանել է ինձ իրենից։ Երբ գեղեցիկ աշխարհն իր ամբողջ հիանալի լիութեամբ գրաւեց պատանեկան հայեացքս, կարիքը, որին արժանի չէին թանկագին ծնողներս, շուտ պղտորեց երիտասարդական միտքս։ Երբ շրթունքս բացւում էին երգի համար, հնչում էր նրանցից մի տխրալի երգ և ես մեղմ հնչիւններով մասնակցում էի հօրս ցաւերին և մօս տանջանքներին։ Միայն դու էիր, որ նեղ կեանքից բարձրացրիր ինձ դէպի մի գեղեցիկ աղատութիւն, ամեն մի հոգս ղլխիցս վերցրիր, տուիր ինձ աղատութիւն, որպէս զի հոգիս կարողանար քաջասիրտ երգ արտայայտել։ Ինչ գնահատութիւն էլ որ ստանայ իմ երկասիրութիւնը, քո շնորհքով է, որովհետև շնորհքը քեզ է պատկանում։

ԱԼՖՕՆՍՕ

Երկրորդ անգամ արժանի ես ամենայն գովասանքի։ Համեստութեամբ պատւում ես միանաւագ քեզ և մեզ։

ՏԱՍՍՕ

Ո՜հ, եթէ կարողանայի ասել, որքա՜ն վառ ցգում եմ, որ ես միայն քեզանից եմ ստացել, ինչ որ մատուցանում եմ։ Մի՞թէ անփորձ երիտասարդն ինքը շարադրեց բանաստեղծութիւնը։ Մի՞թէ ինքը հնարեց շուտափոյթ պատերազմի խելացի ղեկավարութիւնը, ղէնքի արուեստը, որ ամեն մի հերոս ուժգնութեամբ ցոյց է տալիս վճռական օրը։ Ինչպէս և զօրապետի խմաստութիւնը և ասպետի քաջութիւնը, նաև ինչպէս խորամանկութիւնը և ցգուշութիւնը պատերազմումն միմեանց հետ, դու չէի՞ր, ով իմաստուն քաջ իշխան, որ ներշնչեցիր ինձ այդ բո-

լորը, որպէս թէ իմ հանճարը լինէիր, որ մի առանձին ուրախութեամբ էր զգում իր սքանչելի, անհասանելի բարձր էութիւնը մի մահկանացուի միջնորդութեամբ արտայայտելու։

ԻԷԽԱՆՈՒՉԻ

Այժմ վայելիր երկասիրութիւնը, որ մեզ ուրախացնում է։

ԱԼՖՕՆՍ

Ուրախացիր ամեն մի լաւ գործի հաւանելուն։

ԼԷՕՆՕՐԻ

Ուրախացիր ընդհանուր փառքին։

ՏԱՍՍՕ

Այս վայրկենում ինչ որ կայ ինձ բաւական է։ Միայն ձեր մասին էի մտածում, երբ խորհում ու գրում էի։ Իմ ամենամեծ ցանկութիւնս էր ձեզ հաճոյանալ, իմ վերջին նպատակը ձեզ ուրախացնելն էր։ Ով որ աշխարհն իր բարեկամների մէջ չի տեսնում, նա արժանի չէ, որ աշխարհը նրա մասին տեղեկութիւն ունենայ։ Այստեղ է իմ հայրենիքը, այստեղ է շրջանն, ուր հոգիս հանգչում է յօժարութեամբ։ Այստեղ ունկնդիր եմ, այստեղ յարգում եմ ամեն մի ակնարկութիւն։ Այստեղ խօսում է փորձառութիւնը, զիտութիւնը, ճաշակը։ Այո՛, տեսնում եմ առջևս կանգնած աշխարհը և ապագայ սերունդը։ Ամբոխը մոլորեցնում է բանաստեղծին և երկչոտ է դարձնում։ Ո՛վ որ միայն ձեզ նման է, հասկանում է և զգում է, նա միայն պէտք է դատէ և վարձատրէ։

ԱԼՖՕՆՍ

Եւ եթէ մենք առաջի առնենք աշխարհը և ապագայ սերունդն, այն ժամանակ պատշաճ չէ, որ այդ մենք միայն ընդունայն ընդունենք։ Այն զեղեցիկ նշանը, որ մեծարում է բանաստեղծին, որին միշտ կարօտում է նոյն իսկ հերոսը և որը առանց նախանձի տեսնում է հիւսած նրա գլխի շուրջը, ես այստեղ նշմարում եմ քո նախնեաց ճակատին։ (Ցոյց է տալիս Վիրգիլիոսի կիսարձանը)։ Մի՞թէ դիպուածը կամ մի ոգի է այդ հիւսել և բերել։ Այդ այստեղ մեզ ի զուր չէ երևում։ Լսում եմ Վիրգիլիոսն ասում է. ինչու էք մեծարում հանդուցեալներին։ Նրանք վարձատրուել և ուրախացել են, որովհետև ապրել են և եթէ դուք մեզ վրայ զարմանում էք և մեզ մեծարում էք, տուէք նոյնպէս կենդանի մարդկանց իրենց մասը։ Իմ մարմարիոնի արձանն արդէն բաւականի զարդա-

րուած է պսակներով, կանաչ ոստը կեանքին է պատկանում։ (Ալֆոնսն իր քրոջը նշանացի է անում։ Քոյրը վերցնում է պսակը Վիրգիլիոսի արձանից և մօտենում է Տասսօ՚ին։ Տասսօ՚ն յետ է քաշւում)։

ԼԷՕՆՕՐԷ

Դու հրաժարւո՞ւմ ես։ Տե՛ս, ի՞նչ ձեռք է ընծայում քեզ այս գեղեցիկ անթառամ պսակը։

ՏԱՍՍՕ

Ո՛Հ թողէ՞ք մի փոքր ուշքի գա։ Ես չը գիտեմ մինչև անգամ թէ ի՞նչպէս պէտք է ապրեմ այս ժամից յետոյ։

ԱԼՖՕՆՍ

Վայելելով այն հիանալի ունելութիւնը որ առաջին վայրկեանում վախեցնում է քեզ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(Բարձր բռնելով պսակը)։

Դու կը պարգևես ինձ մի հաղուադիւտ ուրախութիւն, Տասսօ, քեզ անբարբառ ասել, ինչպէս եմ մտածում։

ՏԱՍՍՕ

Այդ գեղեցիկ ծանրութիւնը, քո թանկագին ձեռքից ծունր իջած ընդունում եմ իմ աղքատիմաստ գլխիս վրայ։

(Զոքում է. իշխանուհին դնում է պսակը նրա գլխին)։

ԼԷՕՆՕՐԷ *(ծափահարելով)*

Կեցցէ՞ առաջին անգամ պսակաւորուածը։ Որքան վարդարում է պսակը համեստ մարդին։

(Տասսօ՚ն ոտի է կանգնում)։

ԱԼՖՕՆՍ

Դա մի նմանութիւն է այն թագի, որ կապիտոլինում պէտք է զարդարէր քեզ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այնտեղ կը ողջունէի քեզ բարձրաձայն, այստեղ բարեկամութիւնը մեղմ շրթունքով է վարձատրում։

ՏԱՍՍՕ

Ո՛Հ, յետ առ սրան գլխից, վե՛ր առ։ Խանձում է դանդուրներս և որպէս արեգակի մի տաք ճառագայթ, ընկնելով գլխիս վրայ, մտածողութեանս ոյժը դուրս է հանում ճակատից և այրում է։ Ջերմի տաքութիւնը շարժում է արիւնս։ Ներեցէ՛ք։ Այդ արդէն շա՞տ, շատ է։

ԼԷՕՆՕՐԻ

Այդ ոստն աւելի պահպանում է մարդու գլուխը, որ թափառելու է փառաց տաք աշխարհներում և զովացնում է ճակատը։

ՏԱՍՍՕ

Ես արժանի չեմ այն զովութիւնն զգալու, որ միայն քաջերի ճակատին պէտք է փչէ։ Դուք, աստուածներ, վերցրէք և լուսաւորէք սրան ամպերի մէջ, որ նա բարձր, աւելի բարձր և անհասանելի բարձր տատանուի, որ իմ կեանքը դէպի այդ նպատակը մի յաւիտենական թափառականութիւն լինի։

ԱԼՖՕՆՍՕ

Ով վաղ է վաստակում, նա վաղ է սովորում գնահատել այս կեանքի հիասքանչ բարեաց բարձր արժէքը. ով վաղ է վայելում, իր կեանքում, կամաւ չի զրկւում նրանից, ինչ որ երբեմն ունեցել է։ Եւ ով ունի, պէտք է սպառազինուած լինի։

ՏԱՍՍՕ

Եւ ո՞վ կամենում է սպառազինուել, պէտք է կրծքում զգայ ոյժ, որը նրան երբէք չի թողնում։ Ա՛խ, հէնց այժմ նա թողնում է ինձ, որն ինձ սովորցնում էր տոկուն կերպով հանդուրժել դժբախտութիւնը, իսկ հպարտ կերպով անիրաւութիւնը։ Մի՞թէ այս վայրկեանի զմայլումն, քայքայել է անդամներիս ծուծը։ Ծնկներս թուլանում են։ Կրկին տեսնում ես ինձ, ո՞վ իշխանուհի, ծունկ խոնարհած քո առջև։ Լսի՛ր խնդիրքս. յետ առ պսակը, որ ես, որպէս մի գեղեցիկ երապից զարթնած, զգամ մի զովացուցիչ նոր կեանք։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Եթէ դու համեստութեամբ և անվրդով կարող ես կրել տաղանդը, որ աստուածները տուել են քեզ, սովորիր նոյնպէս կրել այս ոստերը, որ ամենագեղեցիկն են, ինչ որ մենք կարող ենք քեզ տալ։ Ում գլուխը մէ՛կ անգամ նրանք արժանապէս շօշափում են, յաւիտեան երերւում են նրա ճակատի շուրջը։

ՏԱՍՍՕ

Ուրեմն թոյլ տուէք պատկառանքով գնամ այս տեղից։ Թոյլ տուէք, բախտս խոր պրակում թաղցնել, ինչպէս ես երբեմնապէս այնտեղ թաղցրել եմ իմ ցաւերս։ Այնտեղ կամենում եմ միայնակ թափառել, այնտեղ ոչ մի աչք չի յիշեցնի ինձ այն

բախտը, որին ես արժանի չեմ։ Եւ ցոյց է տալիս ինձ մօտաւորապէս մի պարզ աղբիւր իր մաքուր հայելիում մի մարդ, որը սքանչելապէս պսակաւորուած, խորհելով հանդստանում է երկընքի ցոլքում, ծառերի, ժայռերի մէջ, ինձ թւում է, ես տեսնում եմ Եղիսիոնը պատկերացած այդ կախարդական մակերեւոյթի վրայ։ Ինձ ու ինձ լուռ մտածում եմ և հարցնում եմ, ո՞վ կարող է լինել այդ անջատուածը։ Անցած, դնացած ժամանակուայ մի երիտասարդ։ Այդքա՞ն գեղեցկապէս պսակաւորուած։ Ո՞վ կարող է յայտնել ինձ նրա անունը, նրա վաստակը։ Երկար սպասում և մտածում եմ. երանի մէկն էլ դար, մի ուրիշն էլ գար և քաղցրութեամբ մասնակցէր խօսակցութեանը։ Ո՞հ, եթէ տեսնէի այդ աղբիւրի շուրջը ժողովուած հին ժամանակուայ հերոսներին, բանաստեղծներին։ Ո՞հ, եթէ միշտ տեսնէի նրանց անբաժան, ինչպէս որ կեանքի մէջ ամուր միաբանուած էին։ Ինչպէս մագնիսն իր ոյժով ամուր կապում է երկաթն երկաթին, այնպէս էլ միակերպ ձգտումը կապում է դիւցազնին բանաստեղծի հետ։ Հոմէրոսն ինքն իրեն մոռացաւ, նրա ամբողջ կեանքը սուրբ էր երկու մարդկանց մտախոհութեան համար և Աղէքսանդրն շտապում է Եղիսիոն որոնելու Աքիլլէսին և Հոմէրոսին։ Ո՞հ, եթէ ես ներկայ լինէի, նրա՞նց, այդ մե՞ծ հոգիներին միաբանուած տեսնելու։

ԼԻՕՆՈՐԷ

Զարթիր, սթափուի՛ր։ Մի՛ զդալ տայ մեզ, որ դու ներկան բոլորովին ուրանում ես։

ՏԱՍՍՕ

Ներկան է, որ ինձ բարձրացնում է, միայն ես ինձ բացակայ եմ զգում, ես հիացա՞ծ եմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ես ուրախանում եմ, երբ դու ոգիների հետ ես խօսում և յօժարութեամբ լսում եմ, որ դու այդպէս մարդկօրէն ես խօսում։ (Մի մանկլաւիկ մօտենում է իշխանին և ծածկաբար մի բան է ասում)։

ԱԼՖՈՆՍ

Նա եկել է։ Հէնց պատէհ ժամին։ Անտոնիո։ Կանչի՛ր նը-բան այստեղ։ Ահա արդէն դալիս է։

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ.

ԱՌԱՋԻՆՆԵՐՆ, ԱՆՏՕՆԻՕ.

ԱԼՖՕՆՍՈ

Բարև՝ եկար, դու, որ ինքդ ես գալիս և բերում ես բարի լուր։

ԻԼԻՈՆՈՒՀԻ

Ընդունիր մեր ողջոյնը։

ԱՆՏՕՆԻՕ

Հարիւր վստահանում եմ ասել, թէ ինչ բաւականութիւն է ինձ նորից կենագործում ձեր ներկայութեամբ։ Ձեր աչքերի առջև կրկին գտնում եմ ամենը, որոնցից ես երկար ժամանակ զրկուած էի։ Դուք զոհ էք երևում արած, կատարած եմ։ Եւ այդ կերպիւ ես վարձատրուած եմ ամեն մի հոգացողութեանս համար, թէ անհամբերութեամբ սպասած և թէ դիտմամբ կորցրած օրուան համար։ Վերջապէս մենք յաջողեցրինք, ինչ որ մենք կամենում էինք և ոչ մի վէճ չունենք այլ ևս։

ԼԻՕՆՈՐԻ

Ես էլ ողջունում եմ քեզ, թէպէտև քեզ վրայ բարկացած եմ։ Դու այն ժամանակ ես գալիս, երբ ես պէտք է գնամ։

ԱՆՏՕՆԻՕ

Որպէս զի բախտաւորութիւնս ամբողջովին լիակատար չը լինի, խլում ես ինձանից դրա մի դեղեցիկ մասը։

ՏԱՍՍՕ

Նոյնպէս իմ ողջոյնը։ Ցոյս ունիմ, որ բալմակողմանի փորձուած մարդու ներկայութիւնն ինձ համար էլ ուրախալի կը լինի։

ԱՆՏՕՆԻՕ

Դու ինձ ճշմարիտ կը գտնես, եթէ մի որեւէ անգամ կարողանաս քո աշխարհից դէպի իմը նայել։

ԱԼՖՕՆՍՈ

Թէպէտև նամակով արդէն յայտնել ես ինձ, թէ ինչ ես արել և ինչպէս է ընթացել ամեն ինչ, այնուամենայնիւ պէտք է շատ բան հարցնեմ, թէ ինչ միջոցներով յաջողեցրիր գործը։ Այն տարօրինակ երկրում քայլը պէտք է լաւ հաշուած լինի, եթէ վերջ ի վերջոյ նա պէտք է հասցնի քեզ յատուկ նպատակ։ Ո՛վ իր տիրոջ օգտի մասին մաքուր է մտածում, նրա դրութիւնը Հռովմում շատ դժուար է լինում, որովհետև Հռովմը ցանկանում է ամեն ինչ ստանալ եւ ոչինչ տալ։ Եթէ գը-

նում են այնտեղ մի բան ստանալու, ոչինչ չեն ստանում, իսկ եթէ հետը մի բան տանում են, այն ժամանակ բախտաւոր են լինում եթէ մի բան են դէթ ստանում։

ԱՆՏՕՆԻՕ

Իմ վարմունքը և իմ ճարպիկութիւնը չէր, որոնց միջոցով Տէր, ես կատարեցի քո կամքը։ Որ իմաստունը չի գտնիլ Վատիկանում իր դասապետը։ Հանգամանքներն այնպէս պատահեցին, որ կարողացայ օգտուել։ Քեզ յարգում է Գրիգորը, բարևում և օրհնում է։ Պատուարժան ծերունին, որի գլուխը ծանրաբեռնում է թագն, ուրախութեամբ մտաբերում է այն ժամանակը, երբ նա քեզ ընդգրկած է ունեցել։ Այդ մարդը, որ որոշում է մարդկանց, քեզ ճանաչում է և շատ գովաբանում է։ Քո հաճոյքի համար նա շատ բան արեց։

ԱԼՖՕՆՍ

Ուրախ եմ նրա լաւ կարծիքի համար, եթէ իրաւացի է։ Բայց դու լաւ գիտես, որ Վատիկանից ներքև նայելիս, թագաւորութիւնները թւում են նրա ոտի տակ, այն էլ բաւականին փոքր, էլ ո՞ւր մնային իշխաններն ու մարդիկ։ Այժմ խոստովանիր թէ ամենից շատ քեզ ի՞նչն օգնեց։

ԱՆՏՕՆԻՕ

Լաւ, եթէ կամենում ես—Պապի բարձր խելքը։ Նա փոքր բանը փոքր է տեսնում և մեծը—մեծ։ Որպէս զի իշխաններին հրամայէ, յօժարութեամբ բարեկամաբար զիջանում է իր դրացիներին։ Այն կտոր հողը, որ քո իրաւունքին է թողնում, նա լաւ գիտէ գնահատել, ինչպէս և քո բարեկամութիւնը։ Իտալիան պէտք է հանգիստ լինի, նա կամենում է իր շուրջը բարեկամներ տեսնել, խաղաղութիւն պահպանել իր սահմանների վրայ, որպէս զի քրիստոնէութեան. այժը, որ նա ղեկավարում է, ջնջէ տաճիկներին և հերետիկոսներին։

ԻՄԱՆՈՒԷԼ

Կա՛ն արդեօք մարդիկ, որոնց նա ուրիշներից աւելի է հովանաւորում, որոնք նրան վստահութեամբ են մօտենում։

ԱՆՏՕՆԻՕ

Միայն փորձուած մարդն է գրաւում նրա լսելիքը, գործունեան նրա հաւատարմութիւնը, նրա հաճոյքը։ Նա, որ մանկութեան հասակից ծառայել է պետութեանը, այժմիշխում և ներգործում է այն արքունեաց վրայ, որոնց նա արդէն շատ տա-

բիներ առաջ, որպէս դեսպան, տեսել և ճանաչել է և յաճախ զեկավարել է։ Աշխարհն այնպէս պարզ է դրուած նրա հաչեացքի առջև, ինչպէս իր սեպհական պետութեան օգուտը։ Երբ նրան զործելիս են տեսնում, գովաբանում են և ուրախանում են, երբ ժամանակն յայտնում է, թէ նա հանդարտութեամբ երկար միջոց ինչ է պատրաստել և ինչ է կատարել։ Աշխարհումն չը կայ մի աւելի գեղեցիկ տեսարան, քան տեսնել մի իշխան, որ հմտութեամբ կառավարում է, տեսնել թագաւորութիւն ուր ամեն մէկը հպարտութեամբ հնազանդում է, ուր ամեն մէկը կարծում է, թէ ինքն իրեն է ծառայում, որովհետեւ նրան միայն օրինաւոր բան են հրամայում։

ԼԷՕՆՕՐԷ

Ի՞նչ փափագով կը ցանկայի շատ ժամից մէկ անգամ տեսնել այն աշխարհը։

ԱԼՖՕՆՍ

Ի հարկէ միասին գործելու համար։ Որովհետև Լէօնօրէն չի կարող միմիայն նայել։ Շատ լաւ կը լինէր, բարեկամ, եթէ կարողանայիր երբեմնապէս խառնել քո նուրբ ձեռքերն այդ մեծ խաղի մէջ։ Այնպէս չէ։

ԼԷՕՆՕՐԷ (ԱԼՖՕՆՍԻՆ)

Դու կամենում ես ինձ բարկացնել, բայց քեզ չի յաջողիլ։

ԱԼՖՕՆՍ

Անցեալ օրերի համար դեռ շատ պարտական եմ մնում քեզ։

ԼԷՕՆՕՐԷ

Դէ՛հ, լաւ, թող ես էլ այս օրուայ համար քեզ պարտական մնամ։ Ներիր և մի ընդհատիր հարցերս։

(ԱՆՏՕՆԻՈՒՆ)

Նա շատ բան է արել եղբօր որդիների և քեռորդիների համար։

ԱՆՏՕՆԻՈ

Ոչ պակաս, այլ աւելի քան արդարացի է։ Մի հզօր մարդ, որ չի կարողանում իւրայինների համար հոգալ, նաեւ ժողովրդից է պահարակում։ Գրիգորը հանդարտութեամբ և չափաւորութեամբ գիտէ օգնել իւրայիններին, որոնք ծառում են պետութեանը որպէս արթուն մարդիկ և հոգացողութեամբ կատարում է իր երկու կից պարտաւորութիւնները։

ՏԱՍՍՕ

Վայելում է արդեօք գիտութիւնը, վայելում է արուեստ-

տը, նրա հովանաւորութիւնը։ Աշխատում է արդեօք նմանել հին ժամանակուայ մեծ իշխաններին։

ԱՆՏՕՆԻՕ

Նա գնահատում է գիտութիւնն այնքան, որքան որ օգնում է թագաւորութիւնը կառավարելու, աղգերի հետ ծանօթացնելու։ Նա բարձր է դասում արուեստը, որքան զարդարող է, իր հռովմը շքեղազարդում է և պալատներն ու տաճարները դարձնում է աշխարհի սքանչելիք։ Նրա մօտ ոչ ոք չի համարձակուի անգործ մնալ։ Ո՛վ կարող է, պէտք է գործի ու պէտք է ծառայի։

ԱԼՓՕՆՍ

Եւ դու կարծում ես, որ մենք կարող ենք գործերը շուտով վերջացնե՞լ, որ վերջապէս նրանք զանազան տեղ արգելքներ չե՞ն դնի մեր առջև։

ԱՆՏՕՆԻՕ

Ես պէտք է շատ սխալուած լինէի, եթէ իսկոյն քո անունից, մի քանի նամակներով այդ վէճն ընդ միշտ վերջացրած չը լինէի։

ԱԼՓՕՆՍ

Ուրեմն իմ կեանքի այս օրերը գովաբանում եմ, որպէս մի բախտաւորութեան և շահաւէտութեան ժամանակ։ Սահմաններս ընդարձակուած և ապագայի համար ապահովուած եմ տեսնում։ Այդ դու կատարեցիր, առանց սրի հարուածի և անշուշտ քեզ համար քաղաքացիական թագ վաստակեցիր։ Մեր կանայքն, առաւօտեան գեղեցիկ ժամին, պէտք է դափնեայ տերևներից պսակ հիւսեն և դնեն ճակատիդ։ Միևնոյն ժամանակ Տասսօն էլ հարստացրեց ինձ. նա տիրեց Երուսաղէմը մեզ համար և այդ կերպի։ Նոր քրիստոնեաներին ամաչեցրեց և ուրախ հոգով, մեծ աշխատասիրութեամբ հասաւ մի մեծագոյն և բարձրագոյն նպատակի։ Իր աշխատանքի համար դու նրան տեսնում ես պսակաւորուած։

ԱՆՏՕՆԻՕ

Դու լուծեցիր հանելուկը։ Երբ եկայ, զարմանքով տեսայ երկու պսակաւորուածներին։

ՏԱՍՍՕ

Եթէ իմ բախտաւորութիւնս աչքերովդ տեսնում ես, կը ցանկայի, որ իմ ամօթխած հոգիս էլ նոյն աչքերովդ կարողանայիր տեսնել։

ԱՆՏՕՆԻՕ

Ինձ շատուց յայտնի էր, որ Այֆոնսը վարձատրելում անչափ է և դու նոր ես իմանում, ինչ որ իւրաքանչիւրն իւրայիններից արդէն գիտէ։

ԻՔԻԱՆՈՒՀԻ

Եթէ տեսնես, թէ նա ի՞նչ է կատարել, այն ժամանակ դու մեզ արդարացի և չափաւոր կը համարես։ Մենք այստեղ միայն լուռ, առաջին վկաներն ենք այն հաւանութեան, որն աշխարհը նրան չի մերժել և որ ապագայ տարիները տասնապատիկ աւելի կը տան։

ԱՆՏՕՆԻՕ

Ձեր միջնորդութեամբ նա ինքն համոզուած է արդէն իր փառքում։ Ո՞վ կարող է երկրայել, այն բանում, որ դուք գիտէք գնահատել Բայց ասա, ո՞վ է դրել այս պսակն Արիոստի ճակատին։

ԼԷՕՆՕՐԷ

Այս ձեռքս։

ԱՆՏՕՆԻՕ

Եւ լաւ է արել։ Այնպէս է նրան զարդարում, որ գափնէն էլ չէր կարող զարդարել։ Ինչպէս բնութիւնն իր հարուստ կուրծքը ծածկում է կանաչ, բաղմագոյն հանդերձով, այնպէս էլ ամեն ինչ որ կարող է մարդուն դարձնել յարգելի և սիրալիր, պարուրում է առասպելների ծաղկափթիթ զգեստով։ Բաւականութիւնը, փորձառութիւնը, խելքը և մտաւոր ոյժը, ճաշակը և մաքուր զգացմունքը դէպի իսկական բարին, մտաւորաբար երևում են նրա երգերում և որպէս թէ անձամբ հանդստանում են ծաղկաբեր ծառերի տակ, ծածկուած դիւրաշարժ ծաղկափոշու ձիւնով, պսակաւորած վարդերով և տարօրինակ կերպով ծամածռուած սիրոյ աստուածների սանձարձակ կախարդական խաղով։ Այդտեղ կարկաչում է առատութեան աղբիւրը և իր մէջ ցոյց է տալիս զոյնզոյն զարմանալի ձկներ։ Հաղուագիւտ թռչուններով լի է օդը, օտար հօտերով լցուած են դաշտերն ու պրակները։ Խորամանկութիւնը կանաչների միջից ծածկարար լսում է, իմաստութիւնը մի ոսկէ ամպից երբեմնապէս հնչեցնում է վսեմ դատավճիռներ։ Մինչդեռ թւում է թէ խելագարութիւնը լաւ դաշնաւորած հնչիւններով, վայրենաբար պեղում է այստեղ, այնտեղ և այնուամե-

նայնիւ հաւասարապէս պահպանում է ամենագեղեցիկ ամանակը։ Ո՛վ այդ մարդու առջև համարձակութիւն ցոյց տայ, իր արիութեան համար արդէն արժանի է պսակի։ Ներեցէք որ ոգևորուած եմ զգում ինձ, որպէս մի յափշտակուած, որ չը գիտէ ոչ ժամանակը, ոչ տեղը, ոչ էլ կարող է իր խօսքերի իմաստը կշռել, որովհետև այս բոլոր բանաստեղծներն, այս պըսակներն, այս գեղեցկութիւնների հպարտագիւտ տօնագեստներն ինձ անջատում են ինձանից և փոխադրում են մի օտար աշխարհ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ո՛վ որ լաւ գիտէ մի արժանիք գնահատել, նա միւսն էլ կը ճանաչի։ Մի անգամ դու պէտք է մեզ ցոյց տաս Տասսոի երգերի մէջ, ինչ մենք զգացել ենք և ինչ որ միայն դու ես գնահատում։

ԱԼՖՈՆՍ

Արի գնանք, Անտոնիո։ Պէտք է քեզնից դեռ մի քանի բաներ հարցնեմ, որոնք ինձ շատ են հետաքրքրում։ Յետոյ, մինչև արեգակի մայր մտնելը, պէտք է կանանց պատկանես։ Արի՛, մնաք բարև։

(Անտոնիոն հետևում է իշխանին, իսկ Տասսոն տիկնանց)։

Թարգմ. ըժ. Լեւոն Տիգրանեանց

(կը շարունակուի)

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Արժ. Հայր Խմբագիր

Գրութեանս հետ պատիւ ունիմ ուղարկելու Ձեր արժանապատուութեան երկու գրութիւնք, որոնք, եթէ արժան կհամարէք, չնորհ արէք հրատարակելու ձեր պատուական «Լումայ»-ի մէջ։ Այդ գրութիւնները ստացել եմ մեծ. ս. Յովհաննէս Յար. Սուղանաճեանցից, որ գտել էր նրանց իւր հօր, ի Տէր հանգուցեալ Յարութիւն աւագ քահանայի թղթերի մէջ։ Դոցանից առաջինը՝ հանգ. Ստեփաննոս Եսայեան Նաղարեանցի նամակն է առ Բարսեղ արքեպիսկոպոս Աժդարխանի թեմական առաջնորդը 1848 թուականից Ղազան քաղաքից, ուր նամակագիրը հայապարսիկ դպրութեան ուսուցչապետ էր։ Բովանդակութիւնը պարզ է և հասկանալի։

Երկրորդ գրութիւնը «Թաքուն» վերնագիրն է կրում, ոչ հեղինակի անունն ունի և ոչ էլ թէ ումն է ուղղած այն։ Միայն երևում է, որ նա վերաբերում է 'ի Տէր հանգուցեալ Միքայէլ Նալբանդեանցի կալանաւորելուն և ոստիկանութեան միջոցով նրան երջանկայիշատակ Ներսէս Ե. Աշտարակեցուն ուղարկելուն դատուելու համար։ Պարզ է նոյնպէս, որ «Թաքուն»-ը գրած է Մոսկուայից։

Այդ գրութիւնը ընթերցողներին փարը ի շատէ պարզելու համար ստիպուած եմ դիմել յիշողութեանս։ Երջ. Ներսէս Ե.-ի և Բեսսարաբիայի առաջնորդ Մատթէոս Վեհապետեան Արքեպիսկոպոսի մէջ տարաձայնութիւն կար. 'ի միջի այլոց և հանգ. Խաչատուր ազայ Լազա-

բանցի երկու գոտերց ամուսնութեան առթիւ նորա երկու քեռորդոց՝ իշխան Աբամելիքի և կոմս Դելիանովի հետ, որ թոյլատրել էր Մատթէոս Արքեպիսկոպոսը, որի մօտ քարտուղարի պաշտօն էր վարում շորս աստիճանաւոր Միքայէլ Նալբանդեանցն և ինչպէս ասում էին, մեծ ազդեցութիւն ունէր նորա վերայ։

1853 թուականն էր, երբ Դորպատից (այժմ Իւրեվ) Թիֆլիս գալիս ամբողջ մայիս ամիսն անցուցի Նոր-Նախիջևանում ծնողաց մօտ։ Մայիսի վերջին թուերին էր, որ Նախիջևանում լուր տարածուեցաւ, թէ Նալբանդեանցը Քիշնևից եկել է։ Նոյն օրը Նախիջևանի քահանայք փիլոնով ներկայացան նրան, որ ապացոյց էր նորա ազդեցիկ անձն լինելուն։ Այդ միջոցին Նոր-Նախիջևանի Մագիստրատը ստացած էր հրաման Կովկասի փոխարքայ իշխան Վորոնցովից, համաձայն պահանջման ընդհանրական կաթողիկոսին Ներսիսի, կալանաւորել Միքայէլ Նալբանդեանցին և ոստիկանութեան միջոցով ուղարկել Ներսէս Ե.-ի մօտ։ Նոր Նախիջևանի քաղաքագլուխն էր Յարութիւն Խալիպեանը։ Սա հրամանի կատարումը թողնում է միւս օրուան, որպէս զի գէթ մի օր ծնողները վայելեն իրանց որդու տեսութիւնը։ Վորոնցովի հրամանը կատնի էր և Խալիպեանը ապահով էր, որ նա ոչ որին յայտնի չէ։ Նալբանդեանցի գալստեան երեկոյ, դի Տէր հանդուցեալ Գաբրիէլ աւագ քահանայ Պատկանեանցը, որի աշակերտն էր եղած Նալբանդեանցը, գրօսնելու գնաց վերջինի հետ քաղաքից դուրս։ Ի՞նչ խօսեցին, ինչ հաղորդեցին միմեանց յայտնի չէ։ Միայն միւս օր Նալբանդեանցի հօր տանը սուգ էր, որովհետև այդ գիշեր նա անյայտացել էր, չգիտէին ուր է գնացել կամ արդեօք Դոն գետը չէ ընկել և կամ սպանուել։ Անցաւ մօտ 10 օր և լուր տարածուեցաւ Նոր Նախիջևանում, որ Միքայէլ Նալբանդեանցը Մոսկուայումն է։ Բացատ-

բուեցաւ գործն այնպէս, թէ Միրայէլ Նալբանդեանցը Տէր-Գարրիէլ Պատկանեանցից իմանալով իւր կալանաւորութեան հրամանը, նոյն դիշեր ծնողներից էլ գաղտնի գնացել էր Ռոստով և այստեղից փոստային կառքով թռել էր Մոսկուա, ուր պաշտպանութիւն էր գտել. մնացածը պարզուում է «Թարուն» գրուածքից։

«Թարուն»-ի հեղինակն աւելի քան հաւանական է թուում մեզ, թէ է Մսեր մագիստրոսը Մսերեանց, որին մի քանի տարի աշակերտած լինելով և նորա ձեռագիրներ շատ արտագրած լինելով, նորա գիրը շատ ծանօթ է ինձ։

«Թարուն» գրուածքն, ինչպէս երևում է, ուղղած է եղել երջանկայիշատակ Ներսիսին մտերիմ մի մարդու, բովանդակած տեղեկութիւնները Նորին Սրբութեան հաղորդելու համար։ Այլ թէ ինչպէս են ընկել այդ բնագիր գրութիւնները հանգ. հայր Սուքիասեանցի ձեռքը, ինձ անյայտ է։

Պ. Ս.

Ա.

Նորին Սրբազնութեան

Տեառն Բարսղի վիճակաւոր Առաջնորդ Արքեպիսկոպոսի

Ս. Նազարեանց մագիստրոս Հայապարսիկ Դպրութեան և վարժապետ Հայոց լեզուի ի Համալսարանին Ղազանու

Խնդալ, հանդերձ բազում բարեմաղթութեամբ ընդ մուտս նորոյ տարւոյն.

Անհրաժարելի և բնական իմն սովորութիւն է որդւոց մարդկան հպատորիլ իր՝ հրաց, հաղորդեցուցանել զայլս իւրոցն խորհրդոց և հաղորդիլ այլոցն, որոյ վասն և ստեղծաւ մարդ էակ բանական, այն է մտածող և խօսուն միանգամայն։ Ի չնաչխարհիկ կարողութենէ աստի խոկալոյ և արտայայտելոյ զխորհուրդս մտացն յառաջ եկին ի սկզբանէ անտի մինչև յօրս յայս միաբանութիւնք, ընկերակցութիւնք անհամարք վասն աշխարհաշէն գործառնութեանց որ ի նիւթականացն և որ յիմանալեացն կարգի։ Ահա այսչափ ազդոյ և մեծամեծս ներգոր-

ծող զօրութիւն մարդկային բանի և հանճարոյ՝ ըստ որում բան և խօսք նոյն գոլով, զի որ խօսին մտածէ և որ մտածէն խօսի, և զիս այսօր համարձակեցուցանէ ելանել ի խոհական պատգամակցութիւն ընդ առնդ Աւագնորդի և ընտրելոյ առ ի լինել գլուխ մտածող և յառաջածու բարի բարի գործոց առ Հայս Յաշտարխանու Զեն իմ բանք ս.ստանօր զիրաց անձնականաց որպէս մուտք գրուածոյս ինքնին ուսուցանեն, այլ զազգայնոց և զհայրենեաց միայն, որք կարօտին այսօր իմոց ընդ մեծիդ խորհրդածութեանց։ Ամս ութն ուսեալ մեր առ ոտս Եւրոպէական դաստիարակաց ի Դերպտեան կայսերական Համալսարանի Լիֆլանդիոյ, նոյն և՝ թէպէտ յոչ կամաց՝ սրժանաւորեալ վարժապետական աթոռոյ ի համալսարանիս Ղազանու ըստ մասին Հայոց լեզուի և դպրութեան, ոչ միանգամ ի հեռաւոր վայրացս խօսեցաք գրով յունկն և նախորդին ձերոյ Տեառն Սերովբէ Արքեպիսկոպոսի, և հայրենակցացդ մերոց ի Յաշտարխան զառաջեալ վիճակէ լուսաւորութեան Հայոցս ի Ռուսաստանեայս. մին բազումս խոստացեալ և կատարեաց ոչինչ, մինչեւ փոխիլ յաշխարհէս՝ չգիտեմ՝ թէ զո՞ր բարի յիշատակ իւր թողեալ յաղդիս. իսկ միւսք այր սակաւ մի ընդոստուցեալ ի քնոյ թմբութեան հաւան զոնձինս ձեւացուցանել ոչ տարակուսեցան, բայց գործն առողջ զհիւանդութիւն ախտացեալ՝ դնի տակաւին ի մահիճս տկար անդործութեան։

Բայց աչք տեսանելով զօր քան զօր պայծառանալ և բարգաւաճել Եւրոպացի ազգաց յամենայն հանդէսս ուսմանց և հարստարութեանց, իսկ զՀայս մեր խաւար և անպիտան յամենայնի, այր անլեզու և անասուն միանգամայն՝ ուրեմն և անընդունակ իսկ մշակելոյ առ ինքեանս զդիտութեանցն անդաստան, ըստ որում աշխարհաբառ լեզուն մինչեւ ցօրս ցայս ոչ յումեք ի կիր արկեալ և մաքրազարդեալ զի իցէ գործի յաջողակ յուսմանցն աւանդութեան, իսկ հին լեզուն մեր ժանկոտեալ մինչ իսպառ և անհասկանալի ժողովրդեան, ուրեմն և անպիտան իբրեւ գործի հասարակաց լուսաւորութեան. աչք բացօք՝ կրկնեմ՝ տեսանելով զայս ողորմ վիճակ ազգիս, զո՞ր այլ պիտեւան խորհուրդ, և զո՞ր այլ առ ի խորոց սրտի ցանկութիւն փափագելի մարթ էր ինձ հնչեցուցանել յականջս մերայնոց քան զոր հնչեցուցաքն մինչեւ ցայսօր ոչ մի անգամ կամ երկիցս և կամ երիցս այր անհամար անգամ. իմա դու ինձ զմիայնակ փրկաւէտ այն խորհուրդ և ցանկութիւն՝ զի միաբանեալ հայոց յաշտարխանու զսիրտ և զհոգի այր և զձեռս միանգամայն, փութասցեն հաստատել զընկերութիւն ինչ հայրենասիրական և կարգել օրինաւոր ուսումնարան ինչ եւրոպական գիտութեանց, բայց հայրենի սեռով նոյն և ի գործ արկանել զանգործն մինչեւ ցայսօր տպարան եւ այլն եւ այլն եւ այլն։ Զանհրաժարելի կարեւորութենէ բարեկարգ ուսումնա-

րանի վասն Հայոցս, նոյն և զայլ ամենայն վերաբերելոցն յայն մանրախուզիւ խօսեցեալ է մեր ի ճառի յայնմիկ առ բնակիչս յԱշտարխանու ի հայոց ազգէ զոր կարող է Սրբազնութիւն ձեր ստանալ ի պարոնէ Մելիքեանց կամ Բալասանեանց և լի կատարեալ վերահաս լինել որպէս մերոցն խորհրդոց նոյն եւ ճշմարտութեան նոցին, եթէ կամ ինչ իցէ արկանել և զձերն լոմայ ի գանձանակ ազգատ և չքաւոր ուսմամբ Հայրենեաց մերոց։ Զինչ. ոչ թէ կանաւն պարտ էր այսօր խօսիլ ընդ ձեզ, այլ խոստովանիլ մերկապարանոց, զի պարտականութիւն էր ձեր իբրեւ առն լուսաւորելոյ և զուսմանցն յարգ և արժանիս քաջ ճանաչողի ելանել յասպարէս Հայրենասիրութեան, գործել և կատարել՝ զոր այլք անտես արարին, կամ ընդունայն և սուտ խոստացան. Կամիք զանմահութիւն ձեզ ժառանգել և զանթարշամելի մշտականաչ յիշատակ ի տարեգիրս մարդկութեան. ահաւասիկ է ուղին՝ ուղին՝ զոր ունի բանալ աչ ձեր որդւոց ազգին ի տաճար մուսայից։ Քննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունել զկեանս յաւիտենականս. յովհ. Ե 38։ Առանց ուսման չիք Աստուած, չիք քրիստոնէութիւն կատարեալ, չիք գիտութիւն պարտականութեան առ Աստուած և ընկեր, չիք այո և չինութիւն և լուսաւորութիւն ազգի։ Զայսոսիկ և դուք գիտէք. խոստովանիմ և հաւատամ. բայց ասեմ նոյնպէս աներկիւղ. զի ժամանակ մեր, տառապեալ վիճակ ազգի մերոյ գործ խնդրէ այսօր, գործ կենդանի, գործ խօսուն. լոկ բանիւք ոչինչ վճարի այսօր. պէտք են և գործունեայ ապացուցից մերոյն հայրենասիրութեան. ապա թէ ոչ. սուտ է ամենայն Հայրենասիրութիւն. սուտ է ամենայն սէր առ ընկերն։

Զոր այլք ոչ արարին, մնայ ձեզ առնելոյ. ով գեղեցիկ և նախանձելի ասպարիսի կենաց պատուական սրբազնութեանդ։ Ե՛լ ապա ի հանդէս հայրենասիրական գործոց և ցոյց ազգիդ թէ գլուխ ես նորա խոհական և արժանի. ճեպիւ միաբանեա ի մի մարմին հոմաձայն զամենայն խաչինս քո. բաց մեզ ըզփակեալ և զկցեալ դուռն լուսաւորութեան, լուսաւորութեան Եւրոպէականի և տուր մեզ ճանաչել և պատուել զքեզ ի գործոց քոց։ Կամիք և զիս ունիլ գործակից ձեզ և օժանդակ. ոչ յամեցայց և ես երգել առ ձեզ՝ լուեալ զձայնն երանաւէտ՝ եթէ պատրաստ է արդէն անդաստանն մշակութեան, բացեալ է տաճարն . . . . *) սիրտդործ աչով մեծիդ Բարսղի և պատրաստ է ամենայն ինչ առ ի մուծանել զմանկտին ի պաշտօն գեղեցկացն քան զբնաւս էից, ի պաշտօն ասեմ հայրենի և հարազատ ուսումնականութեան և դաստիարակութեան յազգս ազգս գիտութեանց և ճարտարութեան։

---

*) անընթեռնլի։ Ծ. Խ.

Փոքր ի չատէ ազդելով պատուական սրբազնութեանդ զմիտս մեր,

մնամք
միշտ պատրաստական Ծառայ Ձեր
Սեփանոս Նազարեանց

ի յունվարի 6 1848
ի Ղազան

Բ.

Թ ա գ ո ւ ն

Ս. Ե. Նազարեանց յետ երաշխաւոր դանձն կացուցանելոյ վասն Նալբանդեանի, սուտ վկայութիւն ևս առեալ ի բժշկէ վհիւանդութենէ նորա, արգել մինչև ցայսօր զկատարումն պահանջողական հրամանի Տեղակալին Կովկասեան սահմանաց՝ ծանուցելոյ ի Մագիստրատէն Նոր Նախիջևանայ ի Պոլիցիայն տեղւոյս։ Եւ ոչ այս միայն, այլ և բազում ինչ գրեալ առ Իվան Դաւիթիչ Դէլեանովն ի Պ. Բուրգ, յորդորեաց և հաւանեցոյց զնա պաշտպան կալ ստահակին ամենայն զօրութեամբ, և զամենայն հնարս ի գործ դնել յագատութիւն նորա ի ձեռաց կաթողիկոսին։ Եւ նա չարժեալ ի թախանձանաց անխոհեմ խորհրդատուին, և կամելով զստահակն կացուցանել վարժապետ ի ճեմարանի, գտեալ է չգիտեմ որպէս զհնարն հաստատելոյ ի Սէնաթի Տէրութեան զարձակումն նորա ի Հոգևորական կոչմանէ. և ի դիմաց հոգաբարձուի ճեմարանին Աղայ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց գրել տալով զառանձին նամակ առ Սրբազնագոյն կաթուղիկոսն՝ ծանուցեալ է, թէ «զՆալբանդեանն չէ՛ կարելի առաքել ի Նախիջևան կամ ի Տփխիս, ըստ որում հիւանդ է նա, և այլն. և թէ արձակեալ է նա այժմ ի հոգևորական կոչմանէ, ... *) գործոց նորա կամ դատաստանն՝ ոչ պատկանի հոգևոր Ատենից այլ՝ Սէնաթի Տէրութեան, և այլն։

Այս ամենայն ներգործութիւնք Դէլեանովի՝ ընդդէմ էին և են թէ կառավարչի ճեմարանին, թէ գերազնուագոյն տիկնոջ Ելիսաբէթի Եկիմովնայի, և թէ այլոց ամենեցուն՝ որ ցանկան պահպանել միշտ զպատիւ ազգին, զպատիւ և զարժանաւորութիւն Սրբազնագոյն կաթողիկոսին, ևս և զպատիւ Լազարեան տոհմի և զճեմարանի, բաց ի Նազարեանցէ միայնոյ, որ զուրկ զոլով յերկարախոհ տեսութենէ, և ատելութիւն ևս ունելով թէ առ Նորին վեհափառութիւնն և թէ առ Ձեզ՝ ջանայ միշտ զհակառակն ներգործել բանիւ և գրով, թէև այսօրինակ ջանք նորա յոչ բարին՝ հակառակի և օրինաց Տէրութեան, որ զիրաւունս արձակելոյ զեկեղեցական անձինս հայազգիս ի հոգևորական կոչմանէ և ի պաշտօնէ՝ սեպհականեալ է միայն

---

*) Թերթը պատռուած լինելով՝ անընթեռնլի է։ Ծ. Խ.

Սիւնհոդոսին Էջմիածնի, (որպէս տեւանի ի Սահմանադրութեան որ յաղագս կառավարութեան եկեղեցւոյն հայոց, ի համարն 110)։ Հոգաբարձուն ճեմարանի՝ (որ ի 17 փետրվարի եկեալ այսր դարձաւ անդրէն ի Պ. Բուրգ ի 27 նոյն ամսոյ), չէ մեղադրելի ի մասինս յայտմիկ. քանզի նա պարզասիրտ և բարեհոգի ոմն գոլով՝ դիւրամէտ է յոր և իցէ կողմն՝ ըստ թելադրութեան խրատուուց։ Եւ մինչ աստ էր նա, բարեմիտ և ազգասէր անձինք, և առաւել կառավարիչն ճեմարանի, բազում ինչ խօսելով ընդ նմա՝ խելամտեցուցին զնա, թէ այնօրինակ անհանճար ճիգն Նազարեանցի և այնչափ ջանադրութիւնք Դէլեանովի ընդդէմ իրաւանց հայրապետական իշխանութեան, ի վախճանի անպատուութիւն և ամօթ մեծ ունին բերել թէ պաշտպանացն յիշատակելոց, թէ ճեմարանին, և թէ համօրէն Լազարեանց տոհմին։ Մանուցին ևս՝ 1) թէ անպատկառն այն Նալբանդեան առ ծածկելոյ զայլ ամենայն յանցանս և զչարադործութիւնս իւր՝ որոց վասն կոչի նա յատեան Սրբազնագոյն կաթողիկոսի, խորագիտութեամբ հաւատացուցեալ է Դէլեանովին թէ պատճառն կոչելոյ զիս կաթողիկոսին է միայն Պսակն Ձեր՝ զորոյ զթոյլտուութիւնն ես ինքն ի գլուխս հանեալ եմ, և այլն։ 2) թէ՝ յայլ սակս ստահակն այն զՊսակի տնունն միայն տայ, զի ցուցցէ՝ թէ ի պատճառս այնորիկ ունի ինքն անբախտութեան հանդիպել. և զի Լազարեանք ևս պարտաւորեսցին պաշտպան կալոյ ինքեան. և այլն։ 3) թէ՝ այդպէս անիրաւաբար պաշտպանելն զամբաստանեալն ի բազմաց զստահակ յանցաւորն և պահելն զնա ի Մոսկով կամ ի Պ. Բուրգ, կարէ պատճառս տալ ծայրագոյն Պատրիարգին՝ ըստ իւրոց Պատրիարգական իրաւանց ի գործ դնել զՀոգևորն իշխանութիւն՝ բողոքելով ուր հարկն իցէ. և յայնժամ վերջինն չար քան զառաջինն լինի. և այլն և այլն։

Զայսոսիկ լսելով Աղա Յովհաննէսն Յովակիմեան Լազարեանց ծանեաւ զվրիպանս իւր և ստրջացաւ վասն . . զնամակ առ վեհափառ հայրապետն ըստ խորհրդոյ ի նախանձանաց Դէլեանովի։ Եւ որովհետև մոռացկոտ է յոյժ նորին դերազանցութիւնն, յաւելին արդարախոհ անձինքն զայս ամենայն գրով ծանուցանել Դէլեանովին՝ որ կայ ի Պ. Բուրգ։ Բայց զինչ օգուտ. նա ինքն Դէլեանովն յորդորեալ ի գրութեանց Նազարեանցի, ոչ միայն անհաւան դտանի այսոցիկ զգուշաւոր խորհրդատուութեանց բարեկամաց, այլ և մեղադիր ևս լինի նոցա. և հաստատելով ի մտի՝ պաշտպան կալ ամենայնիւ ստահակին, և ազատ զնա կացուցանել ի դատողական քննութենէ սրբազնագոյն կաթողիկոսի կամ Սիւնհոդոսին Էջմիածնի, ջանայ այժմ ըստ առաջադրութեան և խնդրոյ վիճակաւոր արքեպիսկոպոսին՝ ամբառնալ զնա ի սոսկական վիճակէ անտի յաստիճան Կոլլէժսկիյ ըէկլեսթրաթօրի։ Եւ զայսոսիկ լսելով ստահակն, առաւել

ևս համարձակութիւն առեալ՝ ազատօրէն շրջի ի քաղաքիս և որ զգալի ևս է ճանաչողաց զպատիւ և զանպատուութիւն համազդային՝ յանդգնագոյնս բարբառի զանձնէ՝ պարծելով և հրատարակելով ամենայն ուրեք, թէ «ոսոխն իւր Ներսէս չունի իրաւունս և ոչ իսկ իշխանութիւն կոչելոյ զինքն յատեան իւր». և թէ «ինքն չէ նորա ծառայ, չէ ընդ իշխանութեամբ նորա, և այլն։ Եւ զՁէնջ՝ որպէս և զմեծարու Աղայ Յարութիւնէ Պողոսեան Խալիպեանց՝ անհամեստս զօղանջէ, զերկոսեանդ համարելով իւր թշնամիս, և այլն։

Թէպէտև կամք էին Դէլեանովի՝ զՆալբանդեանն վերստին մուծանել՝ ի ճեմարանն պաշտամամբ ուսուցչութեան, սակայն կառավարիչն ճեմարանի չէառ յանձն՝ ասելով թէ «չկարեմ զայդ առնել յառաջ քան զտեսանելն իմ զգրաւոր հաճութիւն Պատրիարգին առ այդ։ Ուստի կայ այժմ Նալբանդեանն անգործ և անպաշտօն, և ընակի ի միում ի սանց ճեմարանին՝ ստանալով ամսական ռոճիկս յապրուստ անձին, թէև ինքն ևս ունի ասեն հարստութիւն դրամոց՝ աւելի քան զ . . . հազար արծաթ ռուբլեաց։

ՍՍԻ ԵՒ ԱՏԱՆԱՅԻ ԻՐԱՎԱՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Պենսական լուրջ հարցերում և մանաւանդ եկեղեցական խնդիրներում որոշութիւնը և հաստատուն հաւատարմութիւնը անխուսափելի պայմաններ են։ Դաւանական ու կանոնական անորոշութիւնը պատճառ է դառնում տգէտների իրարանցման։ Եկեղեցու գլխի վարդապետական ու կարգապահական մեղկութիւնը իւր հեռաւոր այն հետևանքն է ունենում, որ տգէտ ստորադրեալներն ու ինքնուրոյնաբար ճշմարտութեամբ գործելու անսովոր սպասաւորները ուղղակի թուլանում են, այլանդակւում և ամենայն միտք ու գործ պատանեկան թեթևամտութեամբ դատում, կատարում ու զոհում։ Գլխաւորի զիջման մի քայլը ստորադրեալի մէջ խոտորնակ վազ է դառնում։

ԺԲ. դարում Գրիգոր Գ. Պահլաւունի մեծ կաթուղիկոսի հետ եկեղեցական միութեան բանակցութիւն սկսան Նոր-Հռովմ ու Հին-Հռովմ։ Նոր-Հռովմը բազմաթիւ գրագրութիւններից յետոյ զիջաւ իւր պահանջնե-

ը միայն երկու բնութեան խնդրի վրայ կանգ առնելով և գուցէ ձգտելով կաթուղիկոսին ենթարկել կայսեր իշխանութեան։ Անհետևանք մնաց այս, վասն զի Հայոց կաթուղիկոսն ևս պահանջում էր մէկ բնութիւն նոյնպէս դաւանել յարակցաբար, Անտիոքի աթոռը իւրեան ենթարկել և հաղորդութեան կարգն ուղել, ինչպէս տեսնում ենք Գրիգոր Տղայի գործերից։ Հին-Հռոմի պապերն էլ շարունակ առիթ ու յարմարութիւն էին որոնում իւրեանց նպատակներին հասնելու. նոքա մերթ թղթեր գրելով և իւրեանց եկեղեցին գովելով, մերթ երևակայած գերիշխանութեան մասին խօսելով և մերթ ընծաներ ուղարկելով կաթուղիկոսներին, չկարողացան ոչ մի նպատակի հասնել։ Երբեմն երբեմն կաթուղիկոսներից ու մանաւանդ Ռուբինեան թագաւորներից կորզած յարգանաց, սիրոյ ու համակրանաց թղթերը, ինչպէս և ում ձեռքով էլ դոքա թխուած լինէին, ոչ մի որոշ սկզբունք էին արտայայտում անհատական գոյն կրելով և եկեղեցու պաշտօնական գրութիւն չը լինելով և ոչ էլ մի յոտի չափ անգամ իրականութիւն էին դառնում։ Սորա վրայ աւելանում է և այս, որ Հայոց կաթուղիկոսներից ոմանք՝ ինչպէս Անտիոքի պատրիարքութիւնը ստանալով էին ուզում իբրև այդ յունական պատրիարքութեան իշխանաւոր ենթարկուել կայսեր, այնպէս էլ ամբողջ արևելքում հռոմէականաց ու նոցա եկեղեցականաց վրայ գերիշխանութիւն ունենալով՝ համաձայնում էին ըստ այդ մասին Հռոմի պապերի գերագահութիւնը ճանաչել։ Այս տեսակ երկդիմի քաղաքագիտական յարգանքով չկշտացան Հռոմի պապերը և ԺԳ դարի կիսում ուղղակի սկսան հնազանդութիւն ու միաբանութիւն պահանջել։ Միաբանութեան կարելիութեան հարուած տուաւ Կոստանդին Ա. կաթուղիկոսը իւր առ Հեթում գրած թղթով, որով նա Հռոմի դաւանական թղթի մէջ 15 սխալներ երևան հանելով, հրամայում է թագաւորին պատասխանել թէ ինքը միայն իւր հոգևորականաց է պատասխանատու և գործ չունի Հռոմի պապերի հետ. «և թող, ասում է նա, յեսան առնեն և յղրկեն թէ որ-

պէս խոստովանին Հայք»։ Նա այդպէս է գրում, թէև Հեթում իւր առ Կոստանդին գրած նամակի հետ ուղարկելով պապի գրութիւնը, խնդրել կամ ստիպել էր «քաղցր և կակղագոյն առնել պատասխանի» [1]։ Իսկ հնազանդութեան բաջաղանքը և Հռովմի գերագահութեան բանդագուշանքը յօդս ցնդեցրեց Մխիթար վարդապետ Սկևռացին, հերքելով ու տապալելով Հռովմի նուիրակին և իւր գեղեցիկ հերքումները Հեթումի հրամանով արձանագրած ներկայացնելով. այն Հեթումի հրամանով, որ այստեղ էս սկզբում յորդորում էր կաթուղիկոսին՝ շահել Հռովմի նուիրակի սիրտը [2]։

Սակայն ինչ որ երկու դար շարունակ ոչ ոք չարաւ և ինչ որ մերժեց այն Հեթումը, կամեցաւ ուրիշ ձևի տակ գլուխ բերել միւս Հեթումը և Կիլիկիայում հայոց մէջ խմորող ու խռովող հռովմէականաց յորդորներին ենթարկուելով՝ հաճել թէ Յունաց ու թէ Հռովմի պապերի սիրտը։ Սա տեսնելով որ կաթուղիկոսների վրայ բռնութեամբ ներգործել և ուզածը յառաջ տանելու հնար չկար, սկսաւ օգտուել Աթոռի թափուր ժամանակից։ Նա առաջին փորձը արաւ 1292 թուին՝ մեր զատիկը տօնել տալով այլոց հետ, որի համար բազմաթիւ հալածանքներ և աքսորանք ու բանդ բերաւ հակառակող և հաւատարիմ եկեղեցականների գլխին։ Հեթումն աշխատեց Գրիգոր Անաւարզեցու (+ 1306) միջոցով իւր նպատակներին հասնել, բայց չկարողացաւ։ Այսպիսի խառնակ ու շփոթ վիճակից օգտուում էին և հռովմէականք ու նոցա արբանեակները, որոնք պալատից սկսած մինչև Կիլիկիայի վերջին քաղաքը հին երգն էին երգում և ամենքի մտքերը պղտորում։ Կիլիկիայի եկեղեցական կեանքը չափազանց ընկած էր. ձեռնադրութիւնը խաղալիք էր դարձել, անարժան մարդիկ սեմաւորուում էին կաշառքի ոյժով, քարոզ չկար ժողովրդի մէջ. տգէտ, ժամասացութիւն անգամ չգիտեցող քահանայք բազմանում էին, պատարագը գիւղե-

[1]) Տես. Արարատ 1893. թ. 9.

[2]) Մխիթար վարդ. Սկևռացի. Պատասխանիք յաղ. համապատասխանութեան ԺԲ. առաքելոց. Երուսաղէմ 1860.

ըում մեծամեծ տօներին էր լինում, կիւրակինները ժամասացութիւն չէր լինում, եկեղեցիքը անհոգ թողնուած, առաջնորդները իւրեանց անձով զբաղուած, ժողովուրդը ընկած և իշխանները «եկեղեցով էին ջանում պերճանալ»։ Կաշառքով ու մի թեմի վրայ երդք չորս միանգամայն ձեռնադրած տգէտ առաջնորդներն էլ բնականաբար իշխանների ստրկաց ստրուկներն էին։ Հասկացողներն ևս տեսնելով թէ ինչպէս հաւատքի վրայ, եկեղեցական գործում բռնութիւն էին գործ դնում, այդ էլ այնքան՝ որ մինչև անգամ վերջերում մի շարք կաթուղիկոսների թունաւորում էին, տեսնելով որ ուշադրութիւն չէին դարձնում բուն Հայաստանի վրայ, որտեղ 600 գաւառան կար և Կիլիկիան շատ սակաւ նշանակութիւն ունէր նոցա համեմատութեամբ, «փափագէին յայտնի հալածչաց օտարաց, քան թէ այնպիսեացն մերոց՝ որք ստութեան իբր ճշմարտութեան ջատագով լինէին...» [1]։

Հեթում Բ.-ի հետ ձեռք տուած ընթացաւ Լևոն Դ.-ը և աքսորուած Գրիգոր Անաւարզեցու մահից օգտուելով՝ հնարեց, որ իբր թէ հանգուցեալ այդ կաթուղիկոսը ըստ իւր խնդրանաց պատուիրել էր ժողով անել և ուրիշ քրիստոնեաների հետ համաձայնելու համար հաղորդութեան մէջ ջուր խառնելը որոշել, նաև մի քանի տօների կարգը փոխել և այլն։ Այս շինծու և անիրաւացի հիմունքով Լևոնը գումարեց 1307 թուի իշխանաժողովը Սսում, որտեղ յայտնում են թագաւորն ու իշխանները՝ թէ յանձն են առնում Գրիգոր Անաւարզեցու պատուէրները, ըստ որում և իրաւունք են համարում նաև «եօթը տիեզերական ժողովներ» ընդունել, երկու բնութիւն դաւանել և այլն։ Այդտեղ ներկայ եղած են յիշւում 26 թեմական կամ վանական եպիսկոպոսներ Կիլիկիայից, 17 վարդապետներ և բազմաթիւ իշխաններ։ Այս իշխանաժողովը «յոյժ հաւանութեամբ և պատուով» ընդունում է իբր թէ Անաւարզեցու «հրամանը» և համաձայնւում իբր թէ բոլոր ե-

[1]) Տես. վարը Մովսէս վարդապետի գրուածքը. և Թովմա Մեծոփեցու յիշատակարանը. Տփխիս 1892։

կեղեցիների հետ։ Բայց այդ յայտարարութեան ստորագրած են յիշատակւում 35 եպիսկոպոս և ոչ թէ ներկայ համարուած 26 եպիսկոպոս և 17 վարդապետ. որտեղից են աւելանում այդ ինքը եպիսկոպոսները, ասուած չէ Ներսէս Պալիենց չեպիսկոպոսի աւանդած կարծեցեալ արձանագրութեան մէջ [2]։ Այս իշխանաժողովն ուրեմն ընդունող է դառնում Գրիգոր Անաւարզեցու անունով թխուած հրամանին և միակ «կամեցայ ու գրեցի» ստորագրող (ըստ այդ աւանդածին ի հարկէ Կոստանդին Կեսարացին վերստին կաթողիկոսութեան է արժանանում ի վարձատրութիւն, որպէս ասում է Մովսէս վարդապետը։

Իշխանների ձեռքից ազատուելով՝ հոգևորականներից շատերը յետոյ ա՛ելի ևս բողոքում են նաև ժողովներ անելով. կրօնաւորների և աշխարհականների ահագին բազմութիւն հաւաքուելով, աղմուկ է բարձրացնում և չէ կամենում Կիլիկիայի եկեղեցիներում որ և իցէ փոփոխութիւն տեսնել, ըստ որում բուն Հայաստանը մաս չունէր այս շփոթութեան մէջ։ Նոյն թուին Պիլարդուն դաւով կոտորեց Հեթումին, Լևոնին և ուրիշ իշխանների։ Բայց խռովութիւնը գնալով սաստկանում է նաև Օշնի օրով և 1309 թուին բազմաթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ, վանականներ, քահանաներ ու սարկաւագներ, տղամարդիկ ու կանայք, ծերեր ու երիտասարդներ հաւաքուելով Սիս, բողոքում են նորամուծութեանց դէմ։ Իսկ Օշին թագաւորը ոչ միայն չէ լսում դոցա, այլ և շատերին կոտորում է, այլոց աքսորում և ոմանց բանտարկում [1])։ Այդ Կոստանդին կաթողիկոսին մի նոր իշխանաժողով է գումարել տալիս Ատանայում, որտեղ վերստին յենուելով Գրիգոր Անաւարզեցուն վերագրած հրամանի վրայ, հաստատում են Սսի իշխանաժողովի ընդունածը հակառակ հաւատարիմ եկեղեցականների ու ժողովրդի ժողովական բողոքներին։ Աւանդւում է նախընթացի հետ միասին, որ այս

---

[2]) Առ այս տես իմ մանրամասն հետազօտութիւնս Արարատ 1893. մայիս—յունիս։

Տես. և Սամուէլ Անեցի. էջ 156։

որոշման ստորագրած են նախկին 35-ի տեղ 18 եպիսկոպոս, 17-ի տեղ 7 վարդապետ և ապա իշխաններ։

Ստորագրած անունների համեմատութիւնը և թուի մեծ տարբերութիւնները պարզ ցոյց են տալիս, որ այդ իշխանաժողովները բնաւ ու տակաւին օրինաւոր և հեղինակաւոր դիրք չեն կարողացել ձեռք բերել նոյն իսկ Կիլիկիայում։ Անվստահելի են դառնում նաև այդ անունները ոչ միայն վերոյիշեալ անհամաձայնութիւններով, այլ և Յովհան Քռնեցի ունիթոռի մի յիշատակութեամբ (տես նորա թուղթը Կղեմէս Գալանոսի գրքում), որ իբր թէ ս. Թադէոսի վանքի վանահայր Զաքարիա Ծորեցին ներկայ է եղել Ատանայի իշխանաժողովին, մինչ բեռ նորա անունը չկայ յիշուած Պալիենցի աւանդածի մէջ։

Սիւնեաց Յովհաննէս ու Ստեփաննոս եպիսկոպոսները և Գաւիթ և Եսայի վարդապետները իւրեանց կարգակիցների հետ մի թուղթ գրելով առ Կոստանդին կաթուղիկոս, ասում են. «եկեալ նուիրակդ ի ձէնջ Գրիգոր, կարճ և համառօտ բանիւ գպատասխանին մեզ ետ այսպիսի օրինակաւ. թէ հոգևոր Տեառն հրաման է, թէ ով ոք յանձն առնու զչրով պատարագելն և ի դեկտ. 25 զծննդեան զաօն կատարել, այնոցիկ միւռոն տուր և օրհնէ, և որք ոչ կամեցին ի ս. խորհուրդն զչուր խառնել և ի 25 դեկտ. զծնունդ առնել, այնպիսեացն միւռոն մի տար և մի օրհներ զայնոսիկ»։ Նոքա էլ մերժում են քանդել հայրենի ս. կարգը և միւռոնը չեն ընդունում։ Հետևաբար այն իշխանաժողովներում միմիայն այդ երկու կէտերն են որոշել և ոչ թէ այնքան դաւանական հարցեր։ Իսկ եթէ շատ հարցեր են որոշել և իրաւազանց Կոստանդին կաթուղիկոսը միմիայն երկուսն է հրամայում, պարզ է որ ինքն Կոստանդինն էլ այդ որոշմանց առաջին ոտնակոխողն է։

«Արձանագրութեան» վերնագրի մէջ ևս ներս է մտցրած «սակս միաբանութեան Հայոց ընդ եկեղեցւոյն Հռովմայ», «ընդ Հռովմէական եկեղեցւոյ», մինչդեռ բովանդակութիւնը այդպիսի բան չէ ասում, այլ շարունակ կրկնում է այն տենչը՝ թէ պէտք է միանալ

բոլոր եկեղեցիների հետ, որպէս և մի առ մի յիշում է նոցա։ Այդ «արձանագրութեանց» կարկատողը չէ հասկացել, որ եթէ Հռովմի հետ լինէր միաբանութիւնը, պէտք է գոնէ ոչ թէ եօթը տիեզերական ժողով ընդունէր, այլ շատ շատ կամ կրկնապատիկ։

Այլ և ականատես Մովսէս վարդապետ Երզնկացին իւր մի գրուածքով հերքում է այդ իշխանաժողովների որոշումները, ըստ որում և յառաջ բերած կտորները ցոյց են տալիս, որ մեր ձեռքում եղած «արձանագրութիւնները» հարազատ չեն։

Հռովմէական մունետիկները տեսան, որ նոյն իսկ արքայական բռնութիւններ ոչ մի նպատակի չհասցրին, ուստի սկսան թափուել ժողովրդի մէջ ու մտքեր պղտորել. չնայելով որ ամբողջ Հայաստանեայց Եկեղեցու լրման հոմոյամ ժողովը կարող է որ և իցէ փոփոխութիւն մտցնել նորա մէջ, բայց և այնպէս իշխանաժողովների որոշումը պարտաւորիչ էր յայտարարւում։ Գրիգոր Գ., Ներսէս Շնորհալի և այլք բանակցութիւն են ունեցել լատիններից ի սիրտ և ի հոգի զգուած յոյների հետ, որոնք լատինի մուտքով սրբապղծուած եկեղեցին կրկին ջրօրհնում էին, բայց և այնպէս այդ բանակցութիւնը սրտանց միաբանութիւն է Հռովմի հետ։ Եզուիթական այդ «տրամաբանութիւնը» այժմ էլ գործադրւում է և քիչ է մնում որ ասեն, թէ Ներսէս Բ. նզովել է Լէօին, ուրեմն իւր հնազանդութիւնն է յայտնել նորան. չէ՞ որ Յիսուս «սատանայ» կոչելով Պետրոսին, ցոյց տուաւ, որ նա առաքեալների գլխաւորն է!!!

Հռովմէական մունետիկները չբաւականացան հոգեկրկիտ խռովարարութեամբ, այլ և սկսան կեղծել և իրաւական գոյն տալ վերոյիշեալ գրութեանց ի նպաստ Հռովմէական եկեղեցու։ Եւ ահա մի մասնաւոր անձի գեղջուկ նամակ վերտառութիւն ստացաւ՝ որ իբր թէ Գրիգոր Անաւարզեցունն է և չկարողանալով որոշել արդեօք առ Հեթում ուղղել թէ առ Լևոն, խառնել են երկուսի անունները մի և նոյն կեղծիքի մէջ։ Այդպէս և Սսի և Ատանայի իշխանաժողովների կրաւո-

բական որոշումները ձևակերպուեցան և Ներսէս Պալիենց լատինացածը թերևս այլոց կեղծումներին լրումն տուաւ իւր աղաւաղ պատմութեամբ և այդ ամենի արտագրութեամբ։ Կեղծելու, մոլորեցնելու և աղաւաղելու եռանդը սոցա մէջ այնքան զօրեղանում էր, որքան անհետևանք էր մնում ամենայն միարարական աշխատանք իրականութեան մէջ։ Եւ որ հռովմէական ձգտումները իրականութիւն չէին ստանում, կեղծուածը մնում էր թղթի վրայ և կեանքի մէջ չէր մտնում, այդ տեսնում ենք նոյն իսկ լատին կրօնաւորի գրութիւնից՝ որ ասում է թէ տասն քսան տարի յետոյ դարձեալ Հայոց կարծեցեալ մոլորութեանց և Հռովմի հետ անմիաբան լինելու մասին անյաջող խնդիր են բարձրացնում Հռովմի պապերը (Դարդել. պատմ. էջ. 40. 44. 45. 47. 49.) և այդ չեն կարողանում իրագործել մինչև և մինչև անգամ Կիլիկիոյ՝ ուղ ու ծուծով լատին թագաւորները և ստիպւում էին նաև Հայոց ծէսով Հայոց կաթուղիկոսից օծուելու. (անդ էջ. (112—114)։

Սսի և Ատանայի իշխանաժողովի քաջագործութեանց մասին գեղեցիկ տեղեկութիւն է տալիս մեզ Մովսէս վարդապետ Երզնկացին, որ եկեղեցական հաւատարիմների հետ կուում էր թագաւորների ազգակործան ձգտումների դէմ Հեթում Բ.-ի օրերից։ Նա անդադրում մաքառեց թէ գործով ու թէ գրչով, թէև արքայականները բռնելով ու վանքերից յափշտակելով այրում էին հակառակ գրուածները և աշխատում իւրեանցը ձևակերպել ու թխել։ Մովսէսը կնքեց իւր օգտաշահ կեանքը 1323 թուին (Սամուէլ անեցի, 167)։ Մի վարդապետ, որի գրչից եռանդուն կեանք է արտացոլում, որի խօսքերից կաՀծեր են ցայտում և բռնկեցնում իւրաքանչիւր զգացող հայի սիրտը. այդ սուրբ անձը, որ ինչպէս երևում է իւր մի թղթից առ հատուածեալ երէցն ի Տրապիզոն, Գէորգ վ. Երզնկացու աշակերտն էր և զարդարուած էր ամենահամեստ զգացմունքներով, բայց երբ չարի դէմ պէտք էր ելնէր, արիանում է և իւր սրբազան պարտիքը համարում գրիչը ձեռք առ-

նելուն Հայաստանեայց ս. Եկեղեցու անմահ յաղթանակը հռչակելու։ Նա իւր բարձրակոչ և ազգու բողոքն է յարուցանում Հայոց Եկեղեցու պաշտպանութեան համար, մի բողոք՝ անյայտութեան մէջ մնալով հանդերձ, այսօր խօսեցնում է մեր բոլորի սրտերն ու ցոյց տալիս նոյն իսկ միջնադարեան հայ եկեղեցիների հզօր ամբութիւնը մինչև անգամ հայ թագաւորների անօրէնութեան դէմ։ Մի վճիռ, որ ոյժով է կայացած համարում յանուն վախճանուած կաթուղիկոսի իրաւազուրկ հրամանին և Աթոռի թափուրութեան միջոցին, այսինքն երբ մինչև անգամ որ և իցէ եկեղեցական ներքին վճիռ կայացնելու իրաւունք չկար. մի վճիռ՝ որ հիմնւում է վախճանուած կաթուղիկոսի շինծու պատուէրի վրայ և պարտաւորիչ դարձնում ազատակամ եկեղեցականաց ընդունելու. մի վճիռ՝ որ ստութիւններով է փաստաբանուած և սաստ ու խոստումով մի քանի անձանց վզին փաթաթւում. այդպիսի մի իշխանական վճիռ միթէ կարող է երբ և իցէ արժէք ունենալ և արմատ բռնել։

Հայոց հայրերի գրութիւններով տոգորուած, տրամաբանական նուրբ մտածողութեամբ զինուած, Մովսէս վարդապետը գիտէ քայլ առ քայլ հերքել հակառակորդի թագուն հիմքերը, վերլուծել, ստուգել և դիտաւորեալ ստութիւնը վսեմապէս հեգնելով ջրել։ Նա չէ ուզում երկարել իւր խօսքը, այլ միայն կարևորը գրել. նաև բարի չէ համարում հակառակութեան համար գրի վրայ արձանացնել եկեղեցու վտարանջող որդիների այլանդակութիւնները—մի կէտ որ հետաքրքիր պատմաբանին միշտ դժկամակութիւն կպատճառէ—. «զգարշելիսն ծածկել բարիոք է» – ասում է նա և այս հնարած առակը դժբախտաբար ժողովրդականութիւն է գտել, բայց ոչ այն հանգամանքների նկատմամբ, որոնք ակնարկում է Մովսէս վարդապետը։

Նա ցոյց է տալիս գրուածքի սկզբում, որ ինքը լաւ հասկանում է քրիստոնէական միութեան գաղափարն և բնաւ չէ հակառակում դորան. սակայն գիտէ նոյնպէս՝ որ ոչ մի մարդկային ջանք չի կարող այդ գլուխ

բերել և ողբում է Հայոց երկպառակութիւնների վրայ։ Ըստ որում զուր էին Ռուբինեանց մնացորդների ձգտումները, որոնցով ուզում էին օգնութիւն գտնել օտարներից. զուր էին, վասն զի եթէ օտարները կարենային ազատել այդ երկրի քրիստոնեաներին, կազատէին Երուսաղէմն, որ ամենից սերտ կապում էր իւր հետ դոցա սրտերը։ Քանի որ Երուսաղէմի ազատութիւնը ապարդիւն անցաւ, մթթէ Հայերն առաւելագոյն զոհաբերութեան կարժանանային. և կամ մթթէ հնարաւոր էր առաւել զոհաբերութիւն։ Այլ և օտարները Հայերից բնաւ չեն պահանջել հաւատափոխութիւն, որ գան և օգնեն Հայոց. նման պահանջներ միմիայն խաբեբայ եկեղեցականներին են արել, որպէս միշտ։

Այս դիտողութիւններն ևս ի նկատի ունենալով տեսնում ենք՝ որ Մովսէս լիապէս իրաւացի է։ Վշտալի է, որ օգնող օտարները հաւատափոխութիւն չէին ուզում, մինչդեռ վերջաբան հայ իշխանները ուզում էին դաւաճանելով սեփական եկեղեցու մի քանի սուրբ կարգերի դէմ՝ նոցա դիւր գալ, ուրեմն ուրիշին դիւր գալ տմարդութեամբ վատարութեամբ. ով կըսիրէ այն մարդին, որ իւր ամենաբարձր ունեցուածքի, այն է հաւատքի դէմ մեղանչում դաւաճանում է, մթթէ այդպիսին կարէ ում և իցէ հաւատարիմ մնալ. քաւ լիցի։

Բայց միւս կողմից ևս Ռուբինեանց քրիստոնէական միութեան այդ վերջընթեր ձգտումները աւելորդ էին, քանի որ ուրիշներն, ինչպէս Յոյներն ու Հռովմէականք ատում էին իրար իրրև անաստուածների. իսկ դոցանից մէկի հետ բարեկամանալն օգուտ չունէր և աւելի ևս վնասակար կլինէր, վասն զի կթշնամացնէր միւսին և միաժամանակ երկուքին էլ բարեկամանալը հնարաւոր չէր։ Սակայն չզոհել քրիստոնէական մէկ գաղափար միւսին, այն ևս առաւելագոյնը նուազագոյնին, հաւատարիմ լինել Հայաստանեայց ս. Եկեղեցուն և նիւթականի անհաստատ յոյսերի հետ չփոխել աստուածային փրկարար շնորհները, այս էր քարոզել Գրիգոր Վկայասէր իշխան կաթուղիկոսը իւր անվեհերութեան և ճշմարիտ հաւատքի ապացոյց թղթով, նորան պարտ էր հետևել։

Մովսէսը այս թղթի գաղափարով է ոգևորւում և այս թուղթը մէջ է բերում քաղուածօրէն Մատթէոս Ուռհայեցու պատմութիւնից, որ աւելորդ համարեցինք նորից տպել. (տես. անդ. էջ. 355—360). Ապա նա մի առ մի հերքում է հակառակորդների պատճառաբանութիւնները. և այդ հերքումները ցոյց են տալիս՝ թէ ինչպիսի միջոցների և իմաստակութիւնների էին դիմում արքայականները իւրեանց մոլար ընթացքն արդարացնելու համար։ Բայց Մովսէս լաւ ճանաչում է իւր եկեղեցին և հիմնովին պաշտպանում է իւր դաւանանքները։ Նորա տուած պատմական տեղեկութիւններից ևս տեսնում ենք, որ իշխանաժողովներում հաւաքուած եկեղեցականները շատ քիչ են եղել, բոլորը Կիլիկիայից և ոչ Հայաստանից. օրէնք դնողները ինքեանք են եղել և ինքեանք ընդունողներ և որ գլխաւորն է՝ հակառակ արքայական բռնութեանց՝ ժողովուածներից շատերը հակառակել են «իշտ. իսկ Կոստանդին Կեսարացուն ստիպել են ընդունել, խոստանալով կաթուղիկոս դարձնել։ Մովսէսը նոցա ըստ ամենայնի «սուտ» է անուանում և նկատում է. «սուտն անոտք է և ընթանալ ոչ կարէ»։ Ըստ որում և լաւ բաց է անում նոցա ստայոդ պատճառաբանութիւնների ծածկոյթը։

Բայց Մովսէս հիմն ի վեր տապալում է և այդ որոշման իրաւաբանական հաստատութիւնը. նա գրում է. «Բայց նախ քան զայս խնդրեմ ուսանել, յորոց ոմանց առաջարկութիւն իրիս այսորիկ եղև, զի ծանիցու՛ք զմայր բանին, զի ի շարագրողէն շարագրութիւն յարգի կամ եպերի։ «Գրիգորի, ասէ, կաթուղիկոսի գրել (գրեալ) այս թեմեւութիւն գրոյս վերևի» ոչ սրբոյ՝ զի չէր. ոչ Տեառն, զի յամօթ համարէին, ոչ վերագիտողի, զի եպերանաց ունէին կարծիս։ Եւ մի՛ ոք զբանս անզգամութիւն համարեսցի, զի թէ գործով ոչ էին կատարեալ՝ ոչ ունէաք ընդ գրով արկանել. զի որք զայսոսիկ ծանուցին զսահմանագրութիւն, զծնող բանիս ինքեանք հրապարակեցին աքսորեցին և հրապարակագոյժ արարին. ապա որո՞վ իմաստութեամբ զնորին վերագրեն զանուան յորջորջումն ի տառատպութեան, քանզի պարտ էր կամ

սուրբ վերաձայնեալ զգրեալսն հաստատել, կամ թէ այնմ էր արժանի՝ զոր արարին, խոտան և ամօթալի զբանսն համարել»։

Մի այլ տեղ էլ ասում է.

«Մինչև ցայս վայր է մարդահաճոյ, զի մի ասացից՝ մարդապաշտ՝ հակաճառութիւնս այս. զի թէ ճըշմարիտ էին բանքս այսոքիկ, ապա ընդէր որ գրեացն զսոյն, յաքսորելն իւրում իբր սարջացեալ իմն զոչմամբ ասէր. «Հաճելով իմ զկամս թագաւորին՝ ջուր արկի ի ս. խորհուրդն և զայս կրեմ ի նմանէ»։ Եւ յետ այսոքիկ, որք մօտակայքն էին, պատմեցին թէ ասէր. «Հայ եմ և հայ մեռանիմ»։

Սքանչելի է Մովսէսի առարկութիւնը. կաթուղիկոսին աքսորել են անպատիւ արել, որ և զոչացել է և իբրև ճշմարիտ հայ աքսորանքում վախճանուել. մինչդեռ նորան խայտառակող և աքսորող արքաները յանկարծ հրապարակ են գալիս իւրեանց կամքը միմիայն ջուր խառնելով շոյող ու զոչացած Անաւարզեցու անունով հրման կատարում բազմաթիւ խնդիրների նկատմամբ և նորա անունով կազմած մի «կանոնն հրամանի» մագաղաթի վրայ գրում ու եկեղեցում դնում։ Արդեօք մոլուած արքաները կարող էին նկատել թէ ոչպիսի այլանդակ հակասութեան մէջ էին։

Մովսէսն ևս որ և իցէ «գրեհիկ բանիւ» նամակ Անաւարզեցու կողմից չէ ճանաչում. այդպէս և «արձանագրութիւն» կոչուած յօդուածում վկայութիւնները գրաբար են և ոչ ռամկօրէն։ Մովսէսը ճանաչում է միայն ջուր խառնելու վերաբերմամբ վկայութիւնները, որոնք վերագրուած են Անաւարզեցուն։։ Եւ իրաւ՝ Անաւարզեցուն է վերագրում միմիայն այդ՝ նոյնպէս կեղծ նամակի հեղինակը, որ յաճախ ակնարկում է— «իմ քեռուն գիրն» [1])։

Արդ՝ ամփոփենք հիմնական կէտերը և ապա դընենք Մովսէս վարդապետի գրութիւնը։ Անաւարզեցին գահընկեց է եղել արքաների բռնութեամբ և աքսորուել. նա աքսորանքում զոչացել է թագաւորի կամքը

[1]) Տես. իմ քննադատութիւնը, Արարատ 1893 անդ։

զոյելու համար արածները և հաւատարմութեամբ վախ-ճանուել։ Նորա մի ինչ որ «քեռորդին» հաղորդել է Լևոն թագաւորին վկայութիւններ ի հաստատութիւն ջրի խառնման և ծննդեան տօնի, որոնք իբր թէ Անաւարզեցին է գրել։ Արքայականները ընդունել են այդ հնարած հրամանը, առանց նկատելու, որ աթոռից զըրկուած և աքսորուած կաթուղիկոսը հրաման տալու իրաւասութիւն չունի։ Նոցա որոշածները ոչ թէ հարազատութեամբ, այլ աղարտուած են մեր ձեռքը հասել։ Իշխանաժողովներում ժողովուածներից շատերը հոմախոհ չեն եղել և ընդդիմադրել են եկեղեցիներում փոփոխութիւն մտցնելու։ Իրողութիւնն արքայի և իշխանների գոլծն է եղել, որքան էլ եղել է։ Քաջալանջ եկեղեցականների մեծամասնութեան վեհ նշանաբանն էր.

«Թէ մարմնական սպառնալք պատուհաս, ես և հաւանողք ինձ՝ պատրաստ եմք ի վերայ ճշմարտութեան և սրբոցն օրինադրութեան մեռանել, և հաւատամք ս. Հօրն մերոյ Գրիգորի Վկայասիրի՝ այսու չարչարանօք առաջին սրբոցն գտանել մասնակից։ Իսկ ընդ հերետիկոսացն, զոր ասէք, բաժին նոքա ընկալցին, որ զսրբոց լուսաւորչացն մերոց զհրամանսն արհամարհեն, զցանկ օրինացն պատառեն և զառաջին ս. հարցն զկանոնադրութիւնսն խափանեն»։

Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի ս. խորհուրդն ի թուականին հայոց ՉԾԸ (1309)։

«Որդիք մարդկան, մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն և խնդրէք զստութիւն». ասէ ուրեմն յիւրում բանսն երանելին Դաւիթ. և ես զնորայն առբերելով վերաձայնեցից յիմումս ժամանակի։ Մինչև յե՞րբ սրտմտութիւն. մինչև յե՞րբ անձնահաճութիւն. մինչև յե՞րբ ակնառութիւն։ Ծամէ և ինձ այժմ զառաքելոյն բարբառել. ընդէ՞ր բնաւ հերձուածք են ի քեզ. մի ազգ, մի լեզու ոմն՝ ես Պօղոսեան. ոմն՝ ես ապօղոսեան, զուր վիճաբանութեամբ և ունայն բերմամբ։

Քրիստոս է գլուխ արարածոց, և Փրկիչ աշխարհի. և զիա՞րդ զմի Քրիստոսն ի բազումս բաժանէք, իբրեւ զայլայլեզու կամ զայլադէմ. ոմն յայս ինչ պարապեալ, և ոմն յայն յապաբան նորաձեւութիւն և յանիմաստ յաճումն, զօրէն կապկի զգայարանաց նմանեալ, և ոչ մտաց ի-մաստից ընտրողաբար փոյթ առեալ։ Մի է Տէր, մի հաւատք, ըստ անօթոյն ընտրութեան և միոյ Տեառն հաւատոյ. զիա՞րդ առօրեայ փոփոխումն և սկզբնաւորութիւն։ «Հիմն այլ ոք ոչ կարէ դնել, քան զեղեալն Յիսուս Քրիստոս» և այն վաղ ժամանակաւ եղաւ. զիա՞րդ ամենայն աւուր հիմնարկութիւն, յամենայն ժամ առաջարկութիւն նորագոյն սկզբանց։ Բազում սկզբունք բազում խռովութեանց են պատճառք, և բազում քակման և շփոթման։ «Ամենայն ազգ և թագաւորութիւն բաժանեալ աւերի», և ոչ հաստատի, ըստ տէրունական հրամանին. զի վիճմունք և բաժանմունք խռովութեան է պատճառ և ոչ խաղաղութեան, և խռովութիւնքն՝ աւերման և ոչ շինութեան։

Նախ զայս հարցանեմ, զի ամենայն իրիք առաջարկութեան դիտաւորութիւն գոյ. և առանց դիտաւորութեան սկզբնաւորութիւն երբէք իմիք ոչ լինի. վասնորոյ և զդիտաւորութիւն առաջարկութեանս այսորիկ հարցանեմ, զի գիտացից զհարկաւորութիւն իրիս այսորիկ. կամ զպիտանութիւն, զի ընդ կարեւորն և ընդ պիտանացուն բազում զանազանութիւն գոյ։ Եւ արդ՝ լսեմ՝ ասեն ստայօդ ունայնաբանութիւն, «զի սէր և միաբանութիւն, ասեն, հաստատեսցի և գայցեն Մակեդոնացիք և օգնեսցեն մեզ»։ Աւա՜ղ զուր և ունայն կարծեացս այսոցիկ, զի թէ առանց Աստուծոյ եղեւ և ոչինչ, որպէս և է ճշմարիտ, ապա գալ Մակեդոնացուոյն ոչ ըստ մերոց լիցի կամաց և ոչ ըստ նոցայն, այլ ըստ Աստուծոյ. զի որպէս լսեմք՝ նոքա ի վաղ ժամանակաց յամենայն պատրաստին, ո՛չ վասն մեր, այլ գալ և ազատել զԵրուսաղէմ յանօրինաց, և ոչ յաջողի։ Իսկ սէր ընդ մեզ և ընդ նոսա և առանց այսր իրի հայցմամբ սրբոյն հաստատուն է. և նոքա զմեզ բնաւ ոչ բռնադատեն ի մերոց սահմանաց փոփոխումն, այլ թե-

թեւամտութեամբ ի մերայոցս առ նոսա փութան շնորհ իմն առնելով խնդրովս։ Իսկ նոքա ոչ ի բացկալն՝ այլ եւս առաւել ի մերոյն պահելն՝ զմեզ ընդունին և ապերեն զ'ի բացկալն ի մերոց սահմանացն իբրեւ զօրինազանց։

Իսկ շաղկապ սիրոյ՝ թէ էին այսպիսի իրակերտութիւնք՝ ապա բացի սակաւուց ամենայն իրօք Յոյնք և Մակեդոնացիք (լատինք) համագործութիւն ունին, և այնքան թշնամութիւն է ի մէջ նոցա, մինչ զմիմեանս ընդ ամբարիշտս համեմատեն։ Քանի՞ցս անգամ Կ՝այցին Ներսէս յիւրում ժամանակին և ի թագաւորութեան Հռոմոց Մանիլին, փոյթ արարին վասն միաբանութեան Հայոց և Յունաց և ոչ եղեւ հնար։ Այլ և քեռորդի նորին Գրիգոր և Լամբրոնեցին Ներսէս ի նոյնս ջանացին, և ընդունայն և զուր եղեւ աշխատութիւն. և մեր ոչ սրբագոյն և ոչ իմաստնագոյն գոլ քան զնոսին։

Եւ տէրն Ներսէս Կ՝այցին՝ վասն այսր իրի՝ գրեալ յարեալս աղօթիւք խնդրել յԱստուծոյ, զի ըստ հաճոյիցն Աստուծոյ աւարտ իրին լիցի, որով յայտ իսկ է, թէ ոչ մարդկան հնարիւք, այլ Աստուծոյ իրակերտութեամբ յաջողեսցի իրս այս և ում որ ցաւէ վասն այսր վշտի և թշնամութեան, զուր և անօգուտ վիճման, պարտի աղօթիւք առաջի Աստուծոյ անկանել և զայլս ի նոյն յորդորել և երկրամերձ դիմօք և արտասուաթոր պաղատանօք հաշտեցուցանել զԱստուած, թերևս դարձցի ի բարկութենէ իւրմէ՝ որ վասն մեզաց մերոյ. զի այլ զինչ է պատառումն այս՝ քան թէ մեզաց մերոյ հարուած և պատուհաս յանցանաց։ Որով և յայտ իսկ է, թէ չիք բժշկութիւն վիրաց մերոց, բայց միայն աղօթից օժանդակութեամբ և Աստուծոյ ձեռնտութեամբ և մեր զօրէն խաղալիկ մանկանց կամ անհմուտ բժշկաց ի վերս գլխոյ՝ յոտից փութալ բժշկութիւն, և փոխանակ ի կարեւոր դեղս փութալոյ՝ ճեմականայն հետեւիմք զտմանց։

«Այլ, ասէ, ի ճշմարիտն ընթանամք ի կրօնս և յիմաստնոց գիւտս և ի տեսութիւն»։ Աւաղ անմտութեանս. յո՞ր ճշմարիտ, կամ յորո՞ց իմաստնոց գիւտ։ Արդ՝ բեր ինձ յառաջ զհաւատն Նիկիական և զստհմա-

նադրութիւն սրբոց հարցն և հաստատեա՛ անտի կիրաց քոց առաջարկութիւն։ Ամենայն ումեք յայտ է, զի որ ի ձայն մերձ լինի, նմա յայտ է ճշմարիտն, քան որ ի բացակայ. և թէ այսպէս է, որպէս և է իրաւացի, ապա որք ի նախակարգեալ օրինադիր հարսն հուպ էին և յաւանդիչսն հաստատութեան հաւատոց, նոցա յաւէտ պարտ է հաւատալ, քան թէ սուտակասպասաց յետնոց, որք ոչ միայն երկար ժամանակաւ և հեռի միջոցաւ յետնեալք են, այլ և վարուց եւս մաքրութեամբ ի նոցին համեմատութենէ վերջացեալ գտանին. որք զմեծ և զկարեւոր հոգաբարձութենէ անփոյթ արարեալ, զոչ պիտանիսն ջանան հաւատալ։ Որք բժշկական արուեստի հմուտք գոլով, ի հաւաքումն ծաղկանց՝ միայն զպիտանին և զօգտակարն ժողովեն, և զխոտանն և զանպիտանն ի բաց ընկենուն, զոր պարտ էր և հոգւոց բժշկաց այսմ փոյթ յանձին ունել. և ոչ ի վայրապար և յանօգուտ նորաձեւս փութալ և գպարզամիտսն և զանիմաստսն պատրել։ Արդարեւ, հոգիւք մոլորեցան և ի սպանութիւն հօտին Քրիստոսի միաբանեցան, և սպանութիւն ոչ ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ։

Եւ արդ եղից յայսմ վայրի առաջի լսասիրաց սեղան լի հոգեւոր խաւիւք՝ գհրաշից բանս սրբոյ գիտապետին Գրիգորի Վկայասիրի. (տես. Մատթ. Ուռհ. 355 — 360)։ Եւ արդ՝ սուրբ հօրս այսոքիկ են բանք և այսպիսի սպառնալիք, որ երկերիւր ամաւ կամ եւս աւելի յառաջ գոլով քան զմեզ, և բազում ժամանակս առ յունականսն ի թագաւորանիստ քաղաքն կացեալ և նոցին ամենայն իրի տեղեկացեալ, և թէ ի սմանէ թագուցաւ ճշմարտութիւն, ապա վերջացելոցս զիա՞րդ եղեւ յայտնի, որք ոչ առաքինութեամբ ի սորին չափ հասեալք և ոչ գիտութեամբ իմաստից։ Եւ այսոքիկ այսչափ։ Յայսմ հետէ ընթացուք ի բանից քննութիւն և տեսցուք՝ որչափ է կարողութիւն ընդդիմադրելով զպատասխանին, ոչ հակառակութեամբ և յանդգնութեամբ, այլ սրբոցն խօսեցեալ բանիւք հաստատելով զիրիս այս զճշմարտութիւն՝ վասն պարզամտացն անսայթաք մնալոյ։ Բայց նախ քան զայս՝ խնդրեմ ուսանել, յորո՞ց ոմանց առաջարկութիւն իրիս այ-

սորիկ եղև, զի ծանիցուք զմայր բանին, զի ի շարագրողէն շարագրութիւն յարգի կամ եպերի։

«Գրիգորի՝ ասէ, կաթուղիկոսի գրել այս թեթեւութիւն գրոյս վերևի». ոչ սրբոյ՝ զի չէր. ոչ տեառն, զի ամօթ համարէին, ոչ վերագիտողի, զի եպերանաց ունէին կարծիս։ Եւ մի ոք կրանս անզգամութիւն համարեսցի, զի թէ գործով ոչ էին կատարեալ՝ ոչ ունէաք ընդ գրով արկանել. զի որք զայսոսիկ ծանուցին դասամանագրութիւն, կծնոյ բանիս ինքեանք հրապարակեցին, աքսորեցին և հրապարակագոյժ արարին. ապա որոշով իմաստութեամբ զնորին վերագրեն զանուան յորջորջումն ի տառատպութեան, քանզի պարտէր կամ սուրբ վերաձայնեալ զգրեալսն հաստատել, կամ թէ ճշմմ էր արժանի, զոր արարին՝ խոտան և ամօթալի զբանսն համարել։

Այլ մեք ի սրբոցն դիմեսցուք բան, և զնոցին յառաջ բերիցուք զճշմարտութիւն, և նախ զսրբոյն Ներսիսի Հայոց վերագիտողի՝ եղբօր Տեառն Գրիգորի քեռորդւոյ Վկայասիրին։ Եւ արդ դիցուք նախ զբանս ունայնախոհիցն՝ թէ զինչ ամեն վասն ջրոյն. «թէ պարտ է, ասէ, խառնել ի ս. խորհուրդն, որպէս և այլ քրիստոնեայքն»։ Որոց առաջին պատասխանի այս. իւրաքանչիւր ոք երթիցէ ըստ հաճոյից իւրոց, այլ մեք երթիցուք յանուն տեառն Աստուծոյ մերոյ։ Եւ գիտել պարտ է թէ ի պատասխանելն հսկառակութիւն ոչ է, այլ միայն զճշմարիտն ծանուցանել վասն օգտի։ «Սուրբ գրոց, ասէ, վկայութեամբ և նախ յաւետարանչէն Յովհաննու դնէ, որպէս ասէ, թէ «երեք են որ վկայեն յերկինս, Հայրն և Բանն և Հոգին» (Ա. Յովհ. Ե, 7)։ Այս վկայութիւն սակս յայտ առնելոյ թէ որդի Աստուծոյ Յիսուս և ոչ վասն ի սուրբ խորհուրդն ջրոյ։ «Եւ երեք ՝ն որ վկայեն, ասէ, յերկրի. հոգին և ջուրն և արիւնն»։ Թէ զՅորդանան ասէ, անդ արիւն ոչ լիցի. ապա թէ և գխաչին, որպէս և է ճշմարիտ, ջուրն ի մկրտութիւն, զի որիշ ելի կողէն, և արիւնն ի հաղորդութիւն։ Դնէ և զՊօղոսին, թէ յուտել հացին զմահն Տեառն պատմել. (Ա. Կոր. ԺԱ, 26). և Պօղոս անդ ջուր ոչ լի-

չէ, այլ միայն զբաժակն՝ ասէ՝ ըմպել, և ի կողէն արիւն և ջուր ելանելն՝ կենդանի աստուածութեամբն և մեռեալ մարմնով զՏէրն խաչին քարոզէր և ոչ ի ս. խորհուրդն ջուր արկանել։ Բերէ և զբան Փրկչին՝ թէ առեալ զբաժակն ի սեղանոյն գոհացաւ և ասէ. «զայս արարէք առ իմոյ յիշատակի». «և բաժակն՝ ասէ՝ ոչ անապական գինոյն է անուն, այլ ամանոյն»։

Ո՛վ դուք՝ որ զայդ ասէք և ոչ պատկառէք. յորժամ ասէ՝ «քանիցս անգամ թէ ըմպիցէք զբաժակս», միթէ զամանն ասաց ըմպել. և ով ի մարդկանէ զպնակ կամ զգաւազ կամ զսկիհ էարբ։ Տեսանէք թէ անզգուշութիւնդ սուր տանի զքեզ հանէ։ Հոմանուն է բաժակն, զի և զչարչարանսն բաժակ ասէ [1]. «կարէք ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ». ասաց Տէրն։

Յիշէ և զՍողոմոն, զի ասէ՝ «խառնեաց ի խառնարանս զգինի իւր». (Առ. Թ, 2)։ Սողոմոն ոչ վասն խառնելով ջրոյ և գինոյ ասէ, այլ վասն հնոյ կտակին որ առ նորս միաբանութեան. որով և զանզգամսն ի զգայութիւն ածէ. զի հինն ասէ, «մի՛ սպանաներ», և նորս՝ «մի՛ բարկանար», ուստի սպանանելն լինի. այլ և զմարմին և զարիւն ընդ աստուածութիւնն խառնեաց։ — Զրաբանէ և գբերանն Ոսկի և զԲասիլիոս թէ ի պատարագամատուցին գրեալ են ջուր արկանել։ Եւ իմ առընթեր ունելով զպատարագս սրբոցն, և այժմ հայելով նկատեմ. սուրբն Բասիլիոս գրեալ է յիւրում պատարագամատուցին այսպէս. «առեալ գինի արկանէ խաչանիշ ի սկիհն ասելով. յաղագս յիշատակի տնօրէնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի». և ջուր բնաւ ոչ յիշէ։ Նոյնպէս և Յոհան յիւրում պատարագամատուցին զնոյնս է գրեալ. «Եւ առեալ, ասէ՝ զգինին արկանէ խաչանիշ ի սկիհն, ասելով. յաղագս յիշատակի տնօրէնութեան Տեառնն Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Եւ սուրբքս ջուր ոչ յիշեն. իսկ եթէ ոմանք յանդգնաբար եդեալ են, զսուրբքն մի՛ զրաբանեսցին ստութեամբ։

---

[1]) Վասն զի հին սովորութիւն էր՝ մահապարտին մի բաժակ թմրեցուցիչ տալ և ապա կատարել։

—Եւ Տեառնեղբօրն Յակովբայ բնաւ անյարմար է զայդ ասել. և սրբոյն Աթանասի. զի թէ նոցա արարեալ էր, ապա սուրբքս՝ որ յետ նոցա էին, յիւրեանց պատարագամատուցին եղեալ էին, որով յայտ է թէ չէ և չէ բնաւ ուրեք։— Այլ և զԵփրեմ և զԳրիգոր Նիւսայ յիշէ և ասէ այսպէս. «Բաց զբերանդ և արբ զջուրն ի կողէն, զոր տէգն աղբիւրացոյց քեզ»։ Զոր պարտ է իմանալ թէ ի խորհուրդ մկրտութեան ասէ, զորոր. մտացն բերանով ասէ՝ ըմպել. զի և ի մեկնութիւն տէրունական աղօթիցն՝ Նիւսացին ինքն՝ զմտացն գիտակցութիւն աղբիւր կոչէ, զոր խորհրդաբար պարտ է իմանալ։ Զի և Եսայի ծառաւելոց հրամայէ գնալ ի ջուր, որ զմկրտութիւն ցուցանէ և ոչ զհաղորդութիւն։ Եւ Եպիփան Կիպրացին ի մեկնութիւն սաղմոսին, և Դանիէլ ասորին. «Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տէր», զմկրտութեան խորհուրդ են առեալ՝ որ մտացն է ճաշակումն և ոչ զգալի բերանոյն։

Առնու և զմիւս բան Նիւսացւոյն՝ «զի գինին ջուր է, ասէ, որակացեալ ի փայտ». և եթէ այս այսպէս էր և է ճշմարիտ, ապա զջուր ի ջուր զիա՞րդ պարտ է արկանել. զայս ոչ տեսաք ի մարդիկ առ ի յարբումն զայս արարեալ՝ զի ծիծաղելի է։—Ինչ ծեքելով զբանն Յովհաննու, զոր ի մեկնութեան աւետարանին ասէ՝ «ոչ արբիցս ի բերոյ որթոյ, մինչև արբիցս զդա ընդ քեզ նոր յարքայութեան Հօր իմոյ». (Մատթ. ԻԶ, 29. Մարկ. ԺԴ, 25. Ղուկ. ԻԲ. 18)։ Զոր և ասէ թէ զմիւս չար հերձուածն արմատաքի խլել, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն։ «Զայս ոչ վասն այսորիկ, ասեն, թէ ասէ, թէ որ ի գինին ջուր խառնեն հերձուած անուանելով, այլ որ զսուրբ խորհուրդն ջրով միայն առնեն»։ Աւա՜ղ ստութեան և ունայնութեան բանից. զայսոցիկ զպատասխանին երանելին Ներսէս Կլայեցին լիով և անթերի առնէ, զոր յետոյ դիցուք ի կարգին իւրում։ Իսկ մեք զայս ինչ հարցանեմք ո՞վ դուք. Քրիստոս գինով զխորհուրդն աւանդեաց. «ի բերոյ որթոյ, ասաց, ո՞չ արբիցս» և ոչ ի ջրոյ։ Ո՞ր միտք որ լոկ ջրով մատուցանէ զխորհուրդն, և ընդէ՞ր ոչ ասաց Յոհան, թէ որ

միայն ջրով առնեն. քան թէ՝ որ ի կիր արկանեն՝ ասաց. և ի կիր արկանելն ո՛չ միոյ՝ այլ խառնակութեան է անուն։ — Եւ թէ «ընդէ՞ր ոչ յայտնեաց, ասէ, զանուանս այնոցիկ ս. Յովհան». առ մեզ չէ յայտնի, զի ոչ էին, այլ միայն ստայոդ բանք, որպէս եղջիւրաքաղ և յարալեզն. և զի ոչ էին, ոչ գոյ յայտնութիւն։ Այլ ասէ՝ «գտաք ի գիրս Երինոսի զանուանս նոցա, զի Եբիոնեանքն, ասէ, լոկ մարդ ասեն զՔրիստոս, վասնորոյ ջրով միայն պատարագէին. և Մարկիոնեանքն Աստուած միայն ասէին, և սակս այնր գինով միայն պատարագէին»։ Եբիոնեանքն ոչ թէ ջրով պատարագէին, այլ զջուր որպէս զԱստուած պատուէին և հանապազ մկրտէին զամառն և զձեռն։ Ահա յայտնի ստութիւն, զի թէ եղեալ էր այս երբէք ուրեք միայն ջրով ումեք պատարագեալ, սուրբքն ծանուցեալ էին, և ի բազմաց լսելիս հասեալ էր մինչև ցայժմ, այլ զի ոչ էր՝ ոչ եղև յայտնի։ Եւ թէ գինուով միայն պատարագելն հերձուած էր, սուրբքն ոչ էին միայն գինուով պատարագեալ և մեզ հասուցեալ. և թէ Մարկիոնեանքն զայս առնէին հերձուածութեամբ, ապա որք մեզ ուսուցին, որ մինչև ցայժմ զՄարկիոն նզովեմք զայն ընդէ՞ր ոչ ուսուցին, թէ գինուով միայն պատարագելն Մարկիոնի աղանդն է և չէ պարտ առնել։ Մարկիոն երիս սկզբունս ասաց՝ բարի և չար. զնոր Կտակարանսն օտար՝ ասէ յԱստուծոյ և զյարութիւն անարգէ և որչափ մեղանչէ ոք, դարձեալ մկրտի։ Եւ թէ երեխայ ոք մեռանի՝ յանուն ն՝ր զայլ ոք մկրտեն. այլ և ի կանանց լինին մկրտունք, զորս նզովեմք. և վասն գինւոյ և ջրի բնաւ ոչ լիշէ։ Տեսանե՞ս զի սուտն անոտք է և ընթանալ ոչ կարէ. զի որք զայսոսիկ գրեցին զրաբանութիւն, ես ինքնին ականատես եղէ երբեմն, զի գրեալ էին ստայոդ բանք և մակագրեալ զանուն Յովհաննու. և մատուցին առաջի իմ՝ զի այնու պատրեսցեն. որ և ի նոյն տեղւոջն եպերեցաւ և ոչ եղեւ ընդունելի, զի սուտ էր։ Վասնորոյ չէ զարմանք՝ թէ և զայս ստութեամբ ի վերայ Յոհաննու և Երինոսի յոգէին. և թէ այլ Երինոս ունէին բաց յաշակերտէ առաքելոցն իւրեանց աղանդովն՝ մեզ չէ ընդունելի։ — Բերէ սուտ ի մէջ և զբանս

Զ. Ժողովոյն Յունաց, որ յաւուրս Յուստիանոսի։ Եւ զայս, որք միտս ունին՝ իմանալ պարտ է, զի ժողովս այս և Յուստիանոս ԾԳ. ամաւ յետոյ է, քան զՄարկիոն և ժողովն Քաղկեդոնի, որք նոյն հերձուածովն էին և մեզ չէ ընդունելի. զի զիւրեանց սահմանէին տիրաժակս և ոչ զսրբոց հարցն օրինադրութիւնս։ Եւ Զենոն կայսր Յունաց յետ ԻԳ. ամի ժողովոյն Քաղկ. վասն ուղղափառութեան հաւատոց ԺԲ. գլուխս նգովս գրեաց վասն Քաղկ. ժողովոյն՝ խրամատուլաց զուղիղն։ — Ասէ և զժողովն Կարթագինէի առ Ոնորիոսիւ թագաւորին Հռոմոց։ Ոնորիոս որդի էր Թէոդոսի մեծին եւ եղբայր Արկադիոսի. եւ թէ նոքա ջուրբ էին հաստատեալ ժողովոյ, ասա Յոհան եւ այլ սուրբքն, որ յետ նոցա, ընդէ՞ր ոչ ընկալան կամ ուսուցին. յայտ է թէ ոչ է ճշմարիտ։

Ասէ ի մէջ և զԱղեքսանդրոս պապ Հռովմայ, որ «զխորհրդական գործ եկեղեցւոյ քահանայապետի, ասէ, ուսուցանել, զմկրտութիւն և զպատակ ն ի խորհուրդ պատարագին յիշէ կՁուրն՝ որ ի կողին Տեառն և զՍողոմոնի ասելն վասն խառնմանն»։ — Զ։ յոգիկ զպատասխանին յառաջ արարաք, բայց ջուրն ի Հռովմայեցիքն յետոյ եմուտ և ոչ էր յառաջագոյն. ն ոմն ի վարդապետաց նոցին ասէր ցիս, թէ՝ «ոչ իշխեմք ասել ազգիս մերում, թէ ջուրն ի մկրտութեան խորհուրդ է և ոչ պատարագին»։ — Առնու և զՅուլիոս Հռովմայ և զԿիպրիանոս Կարքեդոնի, որ և զնորին Սողոմոնի բանսն բերէ ի մէջ վկայելով։ Նաեւ զԱմբրոսիոս եւս յիշէ թէ՝ «զՀռովմայ եկեղեցին գլուխ ասէ»։ Եւ այս ոչ է ճշմարիտ, զի մի եկեղեցի մեծ և փոքր ոչ կարէ լինել, որպէս մի մարդն ինքն ինքեան մեծ և փոքր ոչ լինի։ Բայց զայսոցիկ պատասխանին յառաջագոյն արարաք. թէ սուրբ և իմաստուն հարքն մեր առաջինք, որ մօտագոյնք էին ի ժամանակն, նոքա լիով և անթերի զճշմարիտն գիտէին, որ սաուգապէս տեղեակ էին սրբոցն բանից. և ամենայնիւ ի վրայ հասեալք ճշմարտութեան, որք զուղիղն մեզ ուսուցին և ոչ ըզթիւրն։ — Առնու վկայ և զԳրիգոր Աստուածաբան յայտնապէս հակառակ ինքեան և յամօթ նախատանաց, զի

զարիւնն յայտնապէս վկայ կենդանութեան աստուածային բնութեան ասէ, և գՁուրն՝ մեռելութեան մարմնոյն որ ի վերայ խաչին, և ոչ ի խորհուրդ հաղորդութեան։ Գրիգոր Նիւսացին յԵրգերգոցին սեկնութեան ասէ. «նա է ճշմարիտ ողկոյզն որ ի վերայ վաստեղէն վերամբարձութեանցն զինքն եցոյց, որոյ արիւնն փրփրեցելոցն և հրճուեցելոցն ըմպելի և փրկութիւն լիցի». և ՁՈՒՐ ոչ յիշէ։ Ս. Գրիգոր Աստուածաբան ի թլթին որ առ Դորոթէոս այսպէս գրէ. «ի վերայ սնդոնի, այսինքն ս. սեղանոյն, գնեմք զհացն առաՁագրութեան և զբաժակն օրհնութեամբ սրբելով՝ ճշմարտապէս զնա մարմին և արիւն Տեառն առանց յերկուանալոյ ճաշակեմք»։ Սուրբս այս ՁՈՒՐ ոչ յիշէ, յաւօթ սռնելով զհակառակամարտսն, ուստի յայտ են թէ ստութեան են բանք և ոչ ճշմարտութեան։ «Մարմին իմ ճշմարիտ կերակուր է, ասաց Քրիստոս, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի». և ոչ ՁՈՒՐն։ Իսկ զի ասէ թէ՝ «զայսոսիկ բանք Ոնեկենտոս պապն Հռովմայ գրեալ առ տէր Գրիգոր կաթուղիկոսն Հայոց՝ եղբայր Ներսիսի՝ լուսափայլ և փառաւոր վարդապետն». ահա յայտնի եղեւ լրբութիւն և անամօթութիւն և յիւրոցն եպերի բանից, մաքառելով ընդ ինքեան, զի թէ նոքա, որ ի ձէնՁ վկայեցան լուսափայլ և փառաւ զոլով՝ ոչ ընդունեցան, այլ շաղփաղփութիւն և շաղակրատանք համարեցան, դուք՝ որ ո՛չ լուսափայլ և ո՛չ փառաւոր, զիա՞րդ յանդգնիք ընդդէմ նոցին և ամենայն սրբոց անզգամել հակաճառելով. զի նոքա քաՁ գիտէին զսրբոցն առաՁնոց զբանսն և միշտ նոցին հետեւելով շաւղաց, զուղիղն ընտրելով և ուսուցանելով հանապազ։ Նաեւ գԵրինոս առնու վկայ և նորին բանիւ ցուցանէ թէ «ի Մատթէոսի աւետարանին գրեալ է թէ՝ առեալ Տէրն ի սեղանոյն հաց և ՁՈՒՐ ամանով՝ որ կայր առաՁի աշակերտացն՝ օրհնեաց սրբեաց և գոհացաւ»։ Ի համատարած ծովէ կամ ի յորդաբուղխ գետոյ մի ճաշակն բաւական է առ ի ստուգութիւն քաղցրութեան եւ դառնութեան. այսպէս եւ միով բանիւ յայտնեսցի բազմացն ստութիւն։ Ի չարոց աւետարանչացն մեք զմինն գիտեմք Մատթէոս

եւ նա ընդ բաժակին ջուր ոչ լիշէ. ապա թէ նոքա այլ ունին աւետարան ինչ Մատթէոս եւ այլ Քրիստոս, մեք զայն ոչ ճանաչեմք. եւ թէ այդ այդպէս է, ահա յայտնի եղեւ եւ բաժանեցան ի միմեանց որդիքն Աստուծոյ եւ որդիքն սատանայի։ Ապա թէ զմերն ճանաչեն Քրիստոս եւ Մատթէոս, զբանս աւետարանին մի ծեքեսցեն, այլ ճշմարտութեան հետեւեսցին։ Նաեւ Նչուսացին յԵրգերգոցին տեսութիւն «զարիւնն ասէ՝ լինել հրճուեցելոցն ի փրկութիւն»։

– Յիշէ եւ զՊետա քահանայ եւ զայլս ոմանս՝ զնոյնս ճառեալ զաւանդ սովորութեան ջրոյ եւ ասէ թէ՝ «զնոյն տեսութիւն գտաք ի նամակ սքանչելի հօրն մերոյ Գրիգորի»։ Թէ սքանչելի է եւ սուրբ, որպէս եւ է ճշմարիտ, նմա ընդէր ոչ հետեւիս, քան Պետայ եւ Ոնոկենտայ. զի թէ նա ընկալեալ էր զբանս նոցին, պարտ էր եւ քեզ ընդունել. ապա թէ նա ոչ, եւ ո՛չ քեզ էր համարձակելի խրամատող լինել ցանկոյն հայրենի եւ յօձէն հարկանիլ, զի յանդգնութիւն մեծ է ընդդէմ սրբոցն ընդդիմագրութիւն առնել։ Մինչեւ ցայս վայր է մարդահաճոյ, զի մի ասացից՝ մարդապաշտ հոկաճառութիւնս այս. զի թէ ճշմարիտ էին բանքս այսոքիկ, ապա ընդէր որ գրեացն զսոյն, յաքսորելն իւրում իբր ստրջացեալ իմն զղջմամբ ասէր. «Հաճելով իմ զկամս թագաւորին՝ ջուր արկի ի ս. խորհուրդն եւ զայս կրեմ ի նմանէ»։ Եւ յետ այսորիկ՝ որք մօտակայքն էին՝ պատմեցին թէ ասէր. «Հայ եմ եւ Հայ մեռանիմ»։

Եւ արդ այս ամենայն արկածք սատանայի են, զի պատառեաց զեկեղեցի եւ դեռ եւս պատառէ, զի մի միաբանելովն՝ գլխոյ նորին գեր ի վերոյ գտցին. վասնորոյ ատելութեամբ զմեզ առ իրեարս գրգռէ եւ բաժանէ, զի դիւրաւ յաղթեսցէ։ Ո՛ տայր ինձ զամենայն քրիստոնեայս մի կամք եւ մի խորհուրդ, քանզի զինչ երանութիւն քան զայսոսիկ. այլ զի միայն այս ամենակարող ձեռինն է հնարաւոր և ոչ մերումս ջանի, գոնէ զմիմեանս յիւրաքանչիւր սահման ընդունեսցուք սիրով, եւ մի՛ զմիմեանս նախատեսցուք. եւ ոչ փոքր է այս առ ի յուղղութիւն, զի հին սովորութիւն քաղցր է իւ-

րաքանչիւր ումեք և կարող է Աստուած զամենեսեան յիւրաքանչիւրն կեցուցանել, զի յուսովն Աստուծոյ հաճոյ է ամենայն։

Այսուհետեւ մնացեալ բանսն որ ի կարգիս է, զայլոց ոմանց զհաւանողացն տեսցուք։ «Վասնորոյ, ասէ, բազմութիւն ժողովեցան»։ Սուտ ասէ, զի սակաւք էին եւ ոչ բազումք. պարտ էր յամենայն Հայաստանեայս առաքել եւ ժողովել, եւ թէ ամենեքեան հաւանեալ էին, ապա զայդպիսի նորաձեւութիւն յեկեղեցի մուծանել, թէ ոչ՝ ի բաց ընկենուլ։ Ո՞ր իրաւունք է այդ, ինքնահաճոյ մտաց ախորժակօք գրել եւ առ ամենեսեան առաքել, թէ ընկալարուք։

«Նաեւ յոյժ հաւանութեամբ, ասէ, ընկալաք»։— Դուք օրինադիրք եւ դուք ընկալո՞ւչք. կարի գեղեցիկ. բայց չէ ճշմարիտ, զի նոյն ինքն ի տեղին բազումք հակառակեցան եւ դեռ տակաւին ևս հակառակին. եւ իրք որ ի սահմանելն իւրում հակառակութիւն կրէ, յայտ է՝ թէ ոչ է ճշմարիտ, այլ սուտ է։

«Այլ եւ պատուով, ասէ, ընկալաք զհրամանս սուրբ հօրս՝ իբրեւ ճշմարիտ»։ Թէ ս. հայր էր, ընդէ՞ր ընկեցիք յաթոռոյ եւ չար ի վերայ եդիք, եւ ընկեցող դուք՝ որ օրինադրէք զբանսն. ծածկեալքն ոչ թագչին, այլ յայտնին, Տէրն հրամայէ. բայց ձեզ որքան հնար էր, յընդդիմակէն պարտ էր ջանալ եւ ոչ սիրով նենգել եւ պարսաւանօք պատուել։

«Եւ հաստատեցաք, ասէ. յեկեղեցիս Հայոց»։ Ի գրոց՝ Առաջին Հայք եւ Երկրորդ եւ Երրորդ եւ Չորրորդ անուանին. եւ Կիլիկէ յայսցանէ ոչ է եւ ի սոցանէ ի ժողովդ ձեր ոչ ոք էր. յո՞ր եկեղեցիս Հայոց ասես՝ հաստատել։ Յայտ է թէ յոչ որ։

«Այլ, ասէ, գլուխքն աստ էին»։ Գլուխն այնքան է գլուխ, որքան ի վերայ անդամոց մարմնոյն հաստատեալ է, իսկ յորժամ ի բաց կտրեսցի՝ որոշելով ի մարմնոյն, յայնժամ ոչ է գլուխ, այլ խաղալիկ, ծաղր եւ այպն կատականաց։

Աւանդութիւնս այս, ասէ, եւ կարգաւորութիւն տօնից ի ս. Լուսաւորչէն սկսեալ կայր յեկեղեցիս հա-

յոց եւ ի պատճառէ իմեքէ խափանեալ եղեւ»։ Երբ այդպիսի սրտտես եւ կորովաբիբք էր, որ գիտացիք թէ յառաջն էր եւ յետոյ խափանեալ եղեւ, զպատճառն ընդէ՞ր ոչ գիտացիք, կամ զժամանակն, թէ յորոց պատճառէ կամ յորում ժամանակի։ Ս. Ներսէս ի թուղթըն՝ որ առ Մանիլ թագաւորն յունաց, գրեալ է թէ «զաւանդութիւնս զայս ի ս. Լուսաւորչէն մերմէ ունիմք, զոր ընկալեալ էր նորա ի սրբոցն, որ յառաջ քան զնա». եւ դուք ասէք եթէ ի պատճառէ իմեքէ խափանեալ. ով որ միտս ունիցի, կարէ ճշմարտապէս ընտրել, թէ ձեզ պարտ է լսել՝ թէ ս. Ներսիսի եւ եղբօր նորին Գրիգորի, եւ միւս Գրիգորի Վկայասիրի, որ սքանչելիք եւ զարմանալիք են։

«Եւ սկսեալ այժմ, ասէ, ի ձեռն եպիսկոպոսապետին Գրիգորի եւ Կոստանդեայ եւ Լեւոնի, Օշնի եւ Ալինախի»։—Ո՜հ, ո՜հ, ո՜հ անբանութեանս եւ կարի յոյժ անզգայութեանս։ Սուրբ եւ երանելի մեծապատիւ կայսրն Կոստանդիանոս յարեւելից եւ յարեւմտից, ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ եւ յամենայն գաւառաց ժողով արարեալ, սրբոց եւ իմաստնոց եւ սքանչելագործաց, որք զհոգին սուրբ ընկալեալ էին իբրեւ զառաքեալսն, մահացուցանելոյ եւ կենդանացուցանելոյ իրաւունք առեալ՝ իբրեւ զՊետրոս եւ զայլ առաքեալսն. իսկ ասա՝ «Գրիգորիս, Կոստանդիս. Հեթմիս եւ Ալինախիս, իշխանաւք եւ ռամիկ ժողովրդովք, զորոց զգործն Աստուած գիտէ՝ որ ծածկագէտն է։ Իշխանաւք եւ թագաւորաւք կարգ եւ կանոնք եկեղեցւոյ ոչ է երբէք եղեալ եւ չէ պարտ լինել, զի առաջին թագաւորքն վասն ճշմարտութեան միայն ժողով հրամայէին սրբոց հարց լինել, իսկ զընտրութիւն ի ձեռն նոցին թողուին։ Իսկ ասա՝ սպառնալիք եւ ասա՝ թագաւորական ոչ հնազանդելոցն եւ ուխտադրութիւն զհրամանս արքայի եւ ըստ հաճոյս նորին, թէեւ անօրէնութիւն իցէ յանձն առնուլ կատարել. եւ ապա քահանայապետական աթոռոյն արժանանալ։

«Մի՞ ոք, ասէ, սուրբ ժողովոյս օրինադրութեան ընդդիմանալ»։—Սուտ ժողով պարտ է ասել՝ եւ ոչ

սուրբ, ի հոգւոյ ստութեան, եւ ոչ ի Քրիստոսի Հոգւոյն, որ Աստուած է ճշմարիտ։

«Զի մի, ասէ, ընդ պատուհասիւք դիցի, եւ մասն եւ բաժին ընդ հերետիկոսացն ընկալցի»։ Թէ մարմնական սպառնալք պատուհաս, ես եւ հաւանողք ինձ պատրաստ եմք ի վերայ ճշմարտութեան եւ սրբոցն օրինադրութեան մեռանել. եւ հաւատամք ըստ հրամանի սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի վկայասիրի, այսու չար չարանօք տուաջին սրբոցն զտանել մասնակից։ Իսկ ընդ հերետիկոսացն, զոր ասէք, բաժին նոքա ընկալցին, որ զսրբոց լուսաւորչացն մերոց զհրամանսն արհամարհեն, զյանկ օրինացն պատառեն և զուաջին սրբոց հարցն զկանոնադրութիւնսն խափանեն։ Իսկ զարեղէն հացն, զոր ասէ, և առանց գինւոյ ջուրն՝ ի սրբոց յանդիմանի, զի սուտ է և ոչ ճշմարիտ (տես. Ընդհ. էջ. 181)։ Նաեւ Ասորին ասէ. «զսահմանս եկեղեցւոյ խաղաղութեամբ եդ Քրիստոս և զպատուիրանս, որ ոչ ի գարեղէն հացէ դարմանի իբրև զանասուն, և ոչ փրկեսցէ զնա Գէդէոն, որ եղեւ օրինակ գարեղէն նկանակի. այլ Էմմանուէլ, որ կոչեաց զանձն իւր հաց յորենոյ, և ասէ՝ թէ «ոչ հատն յորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ»։ (Յովհ. ԺԲ, 24)։ Արդ ինքն յորժամ ճաշակեաց զկամաւոր զմահն, ել ի գլուխ մեծի արդեանց և արար մեծագոյն շեղջս յորենոյ եւ դարմանէ զեկեղեցի իւր։ Եւ ասա ջրի՝ զինչ վկայութիւն է. որով յանդիմանին սատխասքն և անձնահաճքն։ Եւ արիւնն և ջուրն ի կողէն, զոր ասէ, ի ս. խորհուրդն թէ իցէ, դնեմք ասա զսրբոցն բանքն, որով յայտնի ճշմարտութիւն և յանդիմանի ստութիւն։ Ասէ սուրբ վարդապետն եւ հռետոր բանիբուն իմաստութիւնն Յոհան՝ մականուն՝ Սարկաւագ կոչեցեալ. զրէ այսպէս. «Ոչ է պարտ խմորով եւ ջրով զանտապականն ապականել խորհուրդ. Զի Դաւիթ ասէ. «ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն». մի՞ ոք յառաջ բերիցէ զանտեղի պատասխանին, թէ գրեալ է՝ «մանուկն աճէր եւ զօրանայր». զի ոչ է այս իսկ վասն ջրոյն ի կողիցն որ ասեն «ել ջուր եւ արիւն»։ Ան-

հանճար է խորհրդածութիւնդ եւ ամենեւին հակառակ ուղիղ իմացուածոց, վասն զի ոչ ի խաչին գոլով ասաց. «զայս արարէք առ իմոյ յիշատակի». այլ ի վերնատանն ի խորհրդոյն աւանդութեան կատարման, ուր ոչ զայն ասաց առնել իւր յիշատակ։ «Տօնեսցուք. մի՛ ի խմորս հինս չարութեան եւ անզգամութեան, այլ յանխմորս՝ ստուգութեան եւ ճշմարտութեան»։ Խմորեալ հաց չարութեան եւ հեշտասիրութեան, այլ եւ ամբարտաւանութեան, որպէս եւ որք ճշմարտութեամբ զտեղիդ (Ա. Կոր. Ե, 8) քննեալ թարգմանեցին, նշանակիչ է. իսկ բաղարջ անաւելորդ պարզութեան եւ չարչարանաց եւ նուաստախոհութեան, ուստի եւ մին խոտեցաւ յաստուածային սեղանոյն առ հնովն, եւ միւսն ընտրեցաւ։ Ընդէր արդ զհակառակն գործով եւ տեսութեամբ ախորժէք, եւ զայն յանպարկեշտից ոմանց՝ թէ դէպ լիցի՝ եւ ի պոռնկաց կանանց եւ ի կրպակաւորաց վաճառականաց, յորոց ոչ վայել է եւ ոչ յայլ ինչ խոնարհագոյն պէտս սրբութեան մուծանել բնաւ եւ ոչ դոյզն ինչ։ Զկապէնս պոռնկի եւ ոչ օրէնք հրամայէին առնուլ ստուէրին սպասաւորաց։ Աղանդոց է օրինադրութիւնդ, քաջ գիտասջիք, եւ ոչ խորհրդածուաց եկեղեցւոյ, զի արդեամբք զոր բանիւ կասկածէին, աւանդեցին զերկոսին կարծիս ամբարշտութեան. ապականութիւն զանապականն եւ ի զառի կուսէն աստուածային ծնունդ. ո՛չ սոյնպէս, այլ ըստ մեզ»։

Եւ բազում բանք են սրբոյ վարդապետին յայս միտս, զոր ոչ կարասցուք ստ ժողովել զամենայն։ . . . . . (մեզ յայտնի վկայութիւններ բերելուց յետոյ, ասում է). Նաեւ որ ականջս ունի լսելոյ, բաւական են այսոքիկ, զի ասէ. «տուր իմաստնոյն պատճառ եւ իմաստնագոյն լիցի»։ Իսկ որք ոչ կամեցին լսել, մեք անպարտ եմք. սակս այսորիկ իւրաքանչիւր ոք յիւր միտս հաճեսցի։ Եւ Քրիստոսի փառք [1])։

Արշակ Տէր Միրզեան.

---

[1]) Ցուշագիրը ասում է. «զստացող այսմ աստուածապատում գաւանութեանս ուղղափառաց զՅովհաննէս քահանայ, որ մե-

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

20-ին Հոկտ. 1861 թուակ. Մոսկվա.

Ազնիւ բարեկամ

Յովհաննէս Սայաթնովեանց.

Վերջապէս, ամիսներ եկած, ամիսներ անցած, լսում եմ Ձեզանից մի քանի բարեկամական խօսք ու վրայց երբև պատասխանի իմ նամակիս ապրիլի 17-ից, որ գրած էր Ձեզ ընդդէմ Ձեր նամակին նոյն ապրիլի 5-ից։ Ձեմ կարող—որովհետև ուսած եմ միանգամ մտածողապէս ապրել աշխարհիս վերայ և ոչ վայր ի վերոյ ո՛. վայրենի—չասել Ձեզ ցաւելով, որ գարմացած եմ Ձեր, որպէս և շատ հայերի, ընթացքի վերայ և ամենեին անոյս եմ այսուհետև որ և իցէ բարի բան Ձեր համար առնել, որովհետև Դուք ամենեքեանքդ ոչինչ չգիտէք, բացի ձեռք ու ոտք կապելուց և չախչախելուց մի մարդ, որ ձեր աղգի մէջ յանցաւոր էր դարձել Նորանով, որ մի անօրինակ հայրենասիրութեամբ այսքան տարի գոհել էր իւր կեանքը Ձեր համար։ Գործը այնտեղ է հասել, որ ես իմ բարեկամներից նոյնքան ևս, գուցէ աւելի ևս, պարտ եմ գանգատաւոր լինել, քան թէ իմ յայտնի թշնամիներից։ Խնդրեմ ներէք հաւարձակութեանս, դոքա հնարովի բաներ չեն, ահա կապացուցանեմ Ձեզ փաստերով ու պատճառներով, որ իմանաք Դուք, թէ Հայոց ժողովուրդը ո՛րտեղ է, և Նպարեանցը որտեղ է։ Նախ և յառաջ, խօսենք Հայոց մարդերի առ հասարակ խարդախ ու սուտ բարքի վերայ, որ իսկոյն երևեցաւ Հիւսիսափայլի տպագրութեան սկզբումը այս դարու (և անցեալ տարիքը շատ աւելի պատուաւոր եղած չեն) որպէս Հաշտարխանում, նոյնպէս և այլ տեղերում։ Հայք բոլորեքեան մի սանրով են սանրած, բայց մենք այս բոպէիս մնանք Հաշտարխանի վերայ։ Պարոն Ս. Ալէքսանդրեանցը ստանալով ինձանից 30 տոմսակ Հիւսիսափայլի համար, ուղարկում է պ. Այվազեանին. սա յետոյ, այսինքն մի քանի շաբաթից յետոյ, ուղարկում է Ալէքսանդրեանցին 30 անունների ցուցակ առանց արծաթի, և խնդրում է նորանից, որ նա բարաթ առնէ Մոսկվայի մէջ և հատուցանէ ինձ օրագրի վճարքը. նամակը ցոյց տուեց ինձ Ս. Ալէքսանդրեանցը առաջարկելով ինձ լոկ ցուցակը, որ և ես չընդունեցի առանց արծաթի, ի հարկէ և ոչինչ չխօսելով։ Նա ստիպեց ինձ ընդունել փափագանօք ետ գրել կամ յընթերցումն սնձին իւրոյ, և յիշատակ հոգոյ։ Եւ զմեղապարտ գրիչս Գէորգ երէց՝ ծնողաց յիշէցէք առ Տէր յընթեռնուլ կամ յօրինակել և Աստուած զձեզ լիշէ»։

դունել անարժան ցուցակը և ուղարկել Ձեզ Հաշտարեան Հիւսիսափայլ, բայց ես հրաժարուեցայ այդպիսի յանձնառութիւնից, ասելով նորան, որ մի անկանոն գործ է, առանց հատուցումն ստանալու, օրագիրք արձակել չոր ու ցամաք անուններին վերայ։ Վերջապէս ասաց նա ինձ, թէ նա կարող չէ արժանի հատուցանել ինձ, որ վէհտև արժանի չունէր։ բայց թէ նա ինչու, ինչպէս ասած էր Այվազեանի նամակի մէջ, բարանի չարեց ի հարկէ ոչ իմ հարցանելիքս էր և ոչ իմ առաջարկելի բանը։ Նամակի մէջ ասած չկար, որ նա արժանիը Քուրդուվից կամ Սարիբէկովից ստանար։ Այժմն լսում եմ պարոն Փանդէեվի և Ձեր նամակից, որ Ս. Ալէքսանդրեանցը գրել է Ձեզ մի ամենևին խառնափնտոր, անորոշ բան, ինչպէս երևում է, ծածկելու իւր ընթացքը իմ հետ, փոխանակ ուղղակի և պարզապէս գրելու Ձեզ, թէ Նպարեանցը չկամի առանց արժանի ուղարկել Ձեզ օրագիր, գր. ում է Ձեզ մի անպատշաճ բացատրութիւն, որպէս թէ ես Հաշտարեանցիքը անարժան էի համարել իմ օրագրին, կամ թէ այդպէս բան գլուխ չի գայ։ Այո անկարգութեամբ չկամի Նպարեանցը գործ կատարել, բայց կարգով ու խելացի ճանապարհով պատրաստ է Նպարեանցը ամեն մարդու հետ գործ ունենալ, մանաւանդ իւր ժողովրդի հետ։ Սորանից ահա բացայայտ ու յուսափայլ է, որ Ս. Ալէքսանդրեանցը կամելով ձեղանից թագուն պահել իւր յանձնառութիւնը արժանի վճարել կամ հասուցանել ինձ, այլ և կամելով իւր անձը արդարացնել Ձեր առաջև, մեղքը ձգել է իմ վերայ, այնպէս խառնափնդորելով գործը, որ մէջ տեղում երևում չէ մի որոշակի բան։ Բայց զարմանում եմ, որ Դուք կամ Այվազեանը չշտապեցիք իսկոյն կարգի դնել այս բանը, ուղղակի գրելով ինձ ձեր պահանջմունքը, և այժմ տարին վերջացած, աշխատում էք պատ ի պատ խօսքերով ամեն մինդ Ձեզ արդարացնել. բայց աւելորդ էր այդ, ես գիտեմ Հայոց ազգի բարք ու վարքը, գիտեմ, որ այդ ազգի մէջ միշտ հիւանդացել է և մեռել է առողջ գործը. հիւանդի ու մեռածի վերայ ի՞նչ խօսենք։ Եթէ Այվազեանը ուղարկած լինէր ցուցակը իմ վերայ հանդերձ պատուերով արժանիը ստանալ այս ինչ կամ այն ինչ անուն մարդուց Մոսկվայում, կամ թէ զոնեայ Ս. Ալէքսանդրեանցը Այվազեանի նամակի վերայ կամենար երաշխաւոր լինել ինձ, այնուհետև յառաջ կերթար գործը, բայց ոչ մինը չեղաւ, և ես, ի հարկէ, իմ կանոնիս վերայ հաստատ մնացի, ոչ ոք չստիպեցի, ոչ ոքի հիւսիսափայլ չուղարկել առանց երաշխաւորութեան կամ հատուցման, որովհետև իմ գործը վաճառականութիւն չէ, այլ յիստակ առնլիք և տալիք իսկոյն։ Այլ և հարկաւոր եմ համարում ասել Ձեզ, որ, ինչպէս շատ միւսները, նոյնպէս և պարոն Այվազեանը անկանոնաբար են վարուել իմ տոմսակների հետ, որ արժանիի ստացման վկայա-

գիրք էին իմ ստորագրութեամբք. ուրեմն առանց հատուցման երբէք կարելի չէր նորանց օտարի ձեռք տալ. բայց եթէ հատուցած էր արծաթը, ուրեմն ես պիտի ստանայի նորան և գործ կատարէի։ Բայց, կարծեմ, մեր Հայերը մեր կվիտանցիան ստացած անդամ չեն հաւատացել մեզ, այլ կամեցած են նախ և յառաջ մեր օրագիրը ստանալ, ապա վճարել։ Խոստովանեցէ՛ք առաջի Աստուծոյ և Ձեր Հայ եղբօրը, որ շատերն ես այսպէս կամեցած են—ինչպէս ասում էր ինձ Ս. Այէքսանդրեանցը. և ինչ պիտի լինէր մի այդպիսի անկարգութեան հետևանքը, այդ ես գիտենք և մինչև այսօրս մեր աղնուամտութեամբ գրեթէ 400 մանէթի պարտքի տակ ենք։ Թէպէտ ձեզանից ոչ ոք-չը գիտէ և չկամի կարդ ասած բանը հասկանալ։ Որ հայ ենք, արդէն պիտի բարբարոս լինինք, այսպէս կամին մեր Հայը. թո՛ղ դորա այսպէս կամենան, բայց մեք չկամինք մեր հայութիւնը բարբարոսութիւն շինել։ Դեռ շատ բան ունիմ ասելու ձեզ։

Ձեր նամակը, որի հետ ուղարկած էիք Ձեր գեղեցիկ ոտանաւորը, ես ամենայն յօժարութեամբ տպած կլինէի, բայց այդ մասին դուք յայտնած չէիք ձեր կամքը. և Ձեր նամակի մէջ գովասանութիւն լինելով Հիւսիսափայլի վերայ, մի փոքր յետ քաշուեցայ, ոչ թէ այն պատճառով որ սուտ էր գրածը, ոչ, այլ մի ուրիշ պատճառով, այո՛ մեր նախանձոտ բարեկամներից ոմանք այնպէս են կարծում, որ ես փառասէր մարդ եմ և գովասանութիւնք եմ տպում իմ վերայ օտարների բերանից իմ օրագրի մէջ։ Գիտէք, ասնիւ եղբայր Սայաթնովեանց, թէ ինչ անարժան գրութեան մէջ է մեր ազգը, մեր թշնամիքը ամենայն տեսակ ապականութիւն թափում են Նաղարեանցի վերայ, բայց մեր բարեկամները մտածում են, թէ նոցա պիտոյ էր լուռ մնալ, և եթէ Ձեզ պէս աշխարհական մարդիկ յատագով ու պաշտպան դուրս գային մեզ, այդ ես հարկաւոր չէր ընդունել, ասել է՝ Նաղարեանցին պիտոյ է հայհոյէ ամենայն մարդ, թշնամին իւր խօսելով և բարեկամը իւր լուռ մնալով համաձայնել Նորան։ Ասացի Ձեզ վերևում, որ այսպիսի ազգի մէջ այսուհետև անհնարին է ինձ գործ կատարել, ոչ թէ մեր թշնամին միայն թշնամի է մեզ, այլև մեր բարեկամը թշնամի է մեզ, գուցէ աւելի վատթարապէս։ Իմ կարծիքը Ձեր աշխարհականների վերայ այսպէս է, ինչպէս և գրած եմ իմ հրապարակական նամակի մէջ առ ազգը, որ այսուհետև դուք, աշխարհականքդ լաւ ու վատ հանդէս գաք, ձայն տաք, որոտաք և յայտնէք ձեր կարծիքը։ Այսուհետև ձեզ տեղիք չկայ մտածելու, թէ ուսումնականք, գիտնականք կան ձեր ազգի մէջ. ոչինչ չկայ, սխալվում էք դուք, մի քանի վախկոտ, կիսատ միսատ անբարոյական իմաստակներ, նախանձոտ բարեկամներ, ահա ձեզ ձեր ուսումնականքը։ Զէ, այժմ պիտի դուք բանաք, արձակէք և հնչեցնէք ձեր փակած բերանը, եթէ կամիք որ ձեր սերունդքը չթքեն ձեր գերեզմանի վերայ, ինչ-

պէս վատթար Նախնիքի գերեզմանի վերայ։ Այսուհետև դուք էք իմ դատաւորքը և ոչ թէ ձեր վատթար, անբարոյական ուսումնականքը, որ միայն Նախանձոտ ու Նախանձարեկ իմաստակներ են, անարժան մարդկային անուան։ Աւելի բան ունիմ ձեզ ասելու։

Դուք պահանջում էք ինձանից, որ ես իմ գիտնական և գործական դպրոցի մասին, որ բացուելու է Մոսկուայի մէջ Տէրութեան տուած թոյլտուութեամբ, այնպէս գործ կատարեմ, ինչպէս Հայոց ազգը միշտ պահանջել է Նազարեանցից, որ նա Հիւսիսափայլ տպէ, այսինքն առանց արծաթի նպաստաւորութեան։ Դպրոցը բաց է, Տէրութեան թոյլտուութեան թուղթը ծոցումն է, բայց աշակերտ չկայ, որովհետև ամեն մարդ Հայերից Ձեզ պէս մտածում է և խօսում է. այսինքն թող յառաջ Նազարեանցը մի 10, 20 աշակերտք ունենայ, ապա և ես իմ որդին կը յանձնեմ նորա դպրոցի հոգաբարձութեանը։ Այդ ինչ տեսակ մարդիկ էք դուք, պարոններ, Նազարեանցը ինչպէս առնէ, որ 10, 20 աշակերտ հաւաքէ իւր մօտ, բանայ իւր ուսումնարանը, կարգաւորէ նորան, եթէ դուք, եթէ ոչ մինը ձեկանից չկամի նորան իւր զաւակը յանձնել։ Խնդրեմ ասել, այդ ինչ հրաշք էք դուք պահանջում Նազարեանցից, մի՞թէ այդքան անմտութեամբ պատժել է Ձեզ Աստուած, որ չէք կարող հասկանալ, թէ մի 10, 20 աշակերտք այն ժամանակ կը հաւաքուին Նազարեանցի մօտ, այն ժամանակ ուսումնարանը կ'բացուի, կսկսի գործաւորուի, կ'կարգաւորի, երբ արդէն աշակերտք կային, երբ Հայոց ծնողքը իւրեանց զաւակները յանձնած էին նորան։ Դպրոցը դատարկ պատերով ու սեղաններով չէ լինելու, այլ աշակերտների ներկայութեամբ։ Կամ մի՞թէ կարծում էք դուք որ Նազարեանցը պիտի իւր դպրոցը իւր վիվիսկայով բերէ Հիւսիսափայլի տետրակների պէս դնէ ձեր ձեռքի մէջ, որ դուք, հաւատաք նորան և յանձնէք նորան ձեր որդիքը։ Զգիտեմ, ինչ տեսակ մարդիկ էք դուք, պարոն Հայեր, ինչ էք տուել ինձ ինչ էք պահանջում։ Զարմանում եմ, որ դուք տակաւին կարօտ էք միւս այլ տեղեկութիւնների իմ դպրոցիս մասին, քան թէ այս երկու անգամ հրատարակուեցան Հիւսիսափայլի մէջ։ Ոչ ապաքէն ասած է այնտեղ թէ ծնողք զանազան քաղաքներից պարտ էին ինձ տեղեկութիւն տալ, թէ քանի զաւակ այս կամ այն տեղից կամէին ուղարկել ինձ, յայտնելով ինձ իւրեանց ցանկութիւնը իւրեանց որդիների ուսումնառութեան մասին դպրոցի գիտնական կամ գործական մասումը և այլն և այլն, ոչ ապաքէն դրած են այնտեղ ամենայն ծանօթութիւնք զանազան ուսանելի նիւթերի և դպրոցի բոլոր թէ տնտեսական և թէ ուսումնական մասին, այլ ինչ միւս ծանօթութիւնք կարող եմ տալ Հայերին։ Բաւական չէր որ նոքա իմանալով ինձանից այդ տեղեկութիւնք, ծանօթութիւն տային ինձ ուղարկելի մանուկնե-

րի մասին, և ես իմ կողմից միտ դնելով աշակերտների բազմութեանը, զոր օրինակ 10-ի, 20-ի, զրէի ծնողներին, որ ուղարկեն տղայքը և ես պատրաստութիւն տեսանէի ընդունելու նորանց։ Բայց ոչ Հայելը մտածում են, Նաղարեանցը նախ և յառաջ պիտոյ է մի քանի 1000 մանէթ ցած դնէ, տուն բռնէ, տարբ կարգ հոգայ, վարժապետներ հրաւիրէ, առանց մի ծնողից ևս մի աշակերտ ստանալու։ Այս էք պահանջում ինձանից, ապնիւ պարոն. ես չգիտեմ և հարկադրուած եմ ասել Ձեզ, որ դուք ամենայն կարգից դուրս բան էք պահանջում ինձանից, և Աստուած կարող չէ Ձեր պահանջողութիւնը կատարել, ուր մնաց Նաղարեանցը, որովհետև ձեր պահանջողութիւնը անխել պահանջողութիւն է։ Ամենայն մասնաւոր դպրոց ամենայն տեղ բացուած է և բացւում է աշակերտը գտանելով, այսինքն եթէ այս կամ այն ծնողը հաւատալով մի արժանաւոր մարդու հրատարակութեանը յանձնում են նորան իւրեանց մանուկները և այդպէս օրէ օր բազմանում են աշակերտքը հինգից դառնալով 10, տասնից դառնալով 20, քսանից 30 և այլն և այլն, և ոչ մի ծնող չէ մտածում այնպէս, որպէս թերահաւատ Հայերը, որ թող նորա նախ և յառաջ տեսանեն, որ մի դպրոցապահ 10, 20 աշակերտք ունենայ, ապա թէ կ'տային իւրեանց մանուկները նորան։ Բայց ոչ մինը Հայերի մէջ այնքան խելք չունի, որ ինքն ասէ. իւրեան, թէ ինչպէս կարող են 10 ու 20 աշակերտք մի տեղ հաւաքուել, եթէ ոչ մի ծնող չկամի յառաջուց տալ։ Գուցէ Յովսէփ Ձերքեշեանցը լաւ ներգործել է ընդդէմ ինձ թող հովանայ սիրտը, զոնեայ Հայերի անմտութիւնը և Ձերքեշեանցի չարաիսութիւնքը լաւ հանդիպում են միմեանց։ Եւ աւելի բան։

Դուք ինձ յայս էք տալիս, որ գալոց 1862 թուականին յանձնառու էք դուք 20 ընկերագրութեան Հիւսիսափայլի, շնորհակալ եմ։ Դուք ստանում էք ահա ծանուցումն գալոց տարու Հիւսիսափայլի մասին, որի մէջ փոքր ի շատէ բացայայտել եմ մեր Հայերի առաջև Հիւսիսափայլի որպիսութիւնը, գործի բոլոր հանգամանքը պարզ ի պարզոյ դնելով նոցա առաջև, և Հիւսիսափայլի գործը յանձնելով նոցա իմաստուն հոգաբարձութեանը։ Այսքան տարի գործ կատարեցինք Հայերի համար. այսուհետև կարող չենք այնպէս, ինչպէս յառաջ. ուրեմն թող Հայերը զգաստանան, ճանաչեն իւրեանց օգուտը և վնասը և օգնեն մեզ, ապա թէ ոչ, ինչպէս հաճոյ է նոցա։

Ձեր բարեացակամ Ս. Նաղարեանց։

Մոսկուա 5 յունիսի 1872.

Իմ ազնիւ Յովհաննէս Միրզաբէգեանց [1]).

Ձեր սիրելի Նամակը անցեալ Մայիսի 18 թուականից անկորուստ հասած է ինձ, որոյ մասին խնդրեմ ընդունել իմ առ ի սրտէ շնորհակալութիւնը, մանաւանդ Ձեր առիս ունեցած վստահութեան մասին։ Որ ի փոքուն հաւատարիմ է ի վերայ բազմաց կացուցէ զնա Տէրն իւր։

Արդարև ինձ ևս յոյժ ցաւելի է, որ իմ տեղափոխութիւնս դէպի Թիֆլիս, այնքան զրկանքով հանդերձ, անպտուղ և ապարդիւն գտանուեցաւ, որ ես հարկադրուած էի դարձեալ տեղափոխուիլ դէպի Մոսկուա, յանձն առնելով կրկին ասառապանք և նորանոր ծանր ծախք, որ միանգամայն քակտեցին և կործանեցին իմ փոքր ի շատէ նիւթական բարեվիճակութիւնը։ Այս բոլոր կորուստները ստանելի են ինձ, բայց մի բան անտանելի է ինձ, որ մեր սիրելի Հայերին օգնել կարելի չէ, թէ դու զոհէիր նմա քո անձը։ Մեղանում մինչև այսօրեան օրս ոչ առաջինն է յայտնի և ոչ վերջինը, այլ ամենայն ինչ վայր ի վերոյ և վայրենի, և դորա պատճառն այն է, որ մենք չունինք ոչինչ քաղաքական կեանք, որ նոյն և մի մեծ բարոյական կարգ է, առանց որոյ աշխարհիս վերայ ոչինչ կարելի չէ արգասաւորել, որովհետև ուղղութիւն չկայ և հասարակաց նպատակ չկայ, որ միայն կարող էր միաւորել մեր ցիր և ցան մտաւոր և բարոյական զօրութիւնքը։ Այլ ինչ որ մեզանում կայ խակ ու խուկ տղայական միտքեր են, անգդամ խօսք ու զրոյցք Մեղուի մէջ Հիւսիսափայլի աշխատաւորի վերայ, որ ինչպէս կարծում են, այն պատճառով միայն անյաջող է գտանուած, որ չէ եղած ժողովրդական, ոչ իւր լեզուով և ոչ իւր գաղափարներով։ Իսկ Մեղուն է միայն ժողովրդական, Մեղուն ամենևին տգէտ հայկական լեզուի հոգուն, ոուսախօս և թաթարախօս առաւել քան թէ հայախօս, որովհետև ոուսերէն և թաթարերէն մասծող. լսեցէ՞ք, ընթերցա՞ք այն յաւելուածը Մեղուի, Գրիգոր Արծրունի ցանցառամիտ տգէտ իրաւաբանի գրչից, որպէս թէ Հիւսիսափայլը իւր վեցամեայ ընթացքի մէջ չէ տուած այդին, եթէ ոչ Մեսսիական Հարսեր և Կիկերոնի ճառերը. միւս ոչինչ, ոչինչ։ Ահա մեր հայկական գրականութեան դատաւորքը. վա՜յ քեզ քաղաք որոյ թագաւորքո յիմար մանուկ է։ Հիւսիսափայլը չէ տուել այդին ժամանակին պատշաճ գաղափարներ, վասն որոյ չէ գտել ժողովրդի մասնակցութիւնը և այդպէս կործանուած է!! Ժողովրդի մեղքը թող քաւէ Հիւսիսափայլի հրատարակողը։ Ես ի հարկէ ընդդէմ այդպիսի տգէտ և անամօթ խօսողների ոչինչ չունիմ, բացի արհամարհութիւնից, միայն թէ ցաւել կարող չեմ, տեսանելով որ

1) Այժմ խորէն ա. քահանայ Բագուի, որից և ստացել ենք այս նամակը։ Ծ. Խ.

այդպիսի անուս, անկիրթ և անմիտ մարդիկ հազար տեսակ մոլորութիւններ տարածում են մի անդատողական ազգի մէջ և դրանով օրէ օրէ դժուարանում է, քարոտվում է մի ճշմարիտ լուսաւորութեան ճանապարհ, կամ թէ դա ամենևին փակվում է մեր առաջև։ Եւ ինչ լուսաւորութիւն պիտի յառաջանայ մի ազգի մէջ, ուր մարդիկ—որպէս թէ մտածող և խօսող հեղինակներ ամենայն բան դատում են և դատապարտում են առանց որ և իցէ քննութեան, առանց որևիցէ տեղեկութեան այն իրին, որոյ մասին կամէին կարծիք տալ։ Եւ ինչ հարկաւոր էր աշխատութիւն և դառն վաստակ յանձն առնուլ քննելու, ծանօթանալու խնդրին, առանց դոյա ևս կարելի է դատել ու դատապարտել։ Ահա՛ մեր լիտերատուրայի այժմեան վիճակը—մի ողորմելի վիճակ։

Դարձուցանելով իմ դէմքը այդ խրտուիլակներից և նուիրելով իմ մտածութիւնքը արժանաւոր ազգօգուտ նիւթերի, ես գիտաւորութիւն ունիմ իմ ծերութեան օրերը նշանաւոր կացուցանել—գոնեայ արժանապէս կնքել մի գրաւոր վաստակով, որ պիտի մնար իբրև արձան մշտնջենաւոր յիշատակի զալոց սերունդի մէջ. դա է հայերէն մշակութիւնը Ջոնս Վիլեամ Դրեպերի գործի (որոյ բնագիրը անգլիարէն է) մակագրութեամբ «պատմութիւն իմացական զարգացման Եւրոպայի» որոյ կիսակատար թարգմանութիւնը ռուսերէն գուցէ յայտնի լինի Զեզ անուամբս «Исторія интелектуальнаго умственнаго развитія Европы.» Դորա հայերէն մշակութիւնը անգլիական բնագրի կկացուցանէ գոնէ 1000 երես, և բնագիրը բաժանած 2 հատոր։ Տպագրութեան ծախքը 2000 ման. իսկ աշխատութեանը, որ կարօտ է գոնեայ 2 տարու—4000։ Ես կամէի այդ գործը տպագրել 100 ստորագրողների օգնութեամբ կամ նպաստով, որ կացուցանելու էր վաթսուն վաթսուն ման. որոյ փոխարէն ամեն մի ստորագրող ստանալու էր 12 օրինակ, ուրեմն 5 ման. երկու հատորին. և բնագիրը և ռուսաց թարգմանութիւնը շատ աւելի արժան չէ։

Ես կամէի տակաւին աշխատել մեր հայերի համար, մինչև կհասնէր իմ կեանքի օրերի երեկոն, և աշխատասիրել մի արժանաւոր, մշտնջենաւորապէս արժանաւոր գործ։ Որպիսի է ձեր բարեմիտ կարծիքը և ձեր բարեացակամ մտածող ընկերների կարծիքը։ Իմ կարծիքն է, որ նախ և յառաջ պիտոյ է տալ ազգին օրինաւոր գրեանք, ուստի կարող էին նոքա հիմնական պատրաստական տեղեկութիւնք ստանալ հասկանալու այն ճառերը, որ հրատարակվում են օրագրերի մէջ, որովհետև մարդկութեան ներկայ վիճակը հասկանալու համար կարևոր է նորա անցած գնացած օրերի տեղեկութիւնը, գիտութիւն պատմութեան, ընդհանուր պատմութեան որոյ հետևանքն է և այժմեան բարեվիճակութիւնը Եւրոպայի, որ թէ ինչ գնով է ստացած, կուսանին Հայերը վերոյիշեալ գրուածը ընթերցասիրելով։

Խնդրեմ մատուցանել իմ սիրոյ և յարգութեան ողջոյն մեր բոլոր բարեկամներին, մանաւանդ Բաքուի մարդասիրական ընկերութեան նախագահին, պարոն Մովսէս Զոհրաբեանին։

Ցանկալի է ինձ իմանալ թէ մեր Շամախու երկրաշարժութիւնից անբաղդացած հայրենակիցքը որքան օգնութիւն ստացած էին ընդ ամենը բոլոր հայկական հասարակութիւններից։ Մոսկուայում տեղեկանում եմ ես, որ մեր պրոտեստանտեան հայ եղբայրակիցքը այստեղի և Ամերիկայի կողմից ստացած են օգնութիւն 8000 ման. որ բաւական մեծ գումար. Աստուած տայ, որ և մեր լուսաւորչական Հայերը յետ չընային օտարականներից այսպիսի առաքինական գործով, որ է թեթևացնել իւրեանց անբաղդացած կրօնակից և հայրենակից եղբայրների վիճակը։

Մաղթելով ձեզ յԱստուածուստ ամենայն հոգևոր և մարմնաւորբարիք, մնամ

Ձեր,

իմ ապնիւ բարեկամ,

յարգող Ստեփանոս Նազարեանց.



ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

ԱՐՇԱԿ ՏԷՐ ՄԻՔԷԼԵԱՆ. Ուսումն սուրբ գրոց. (Ներածութիւն) Ա. Նախաձեռնարկ հոգևոր դպրոցների և ս. Գրքի ընթերցասէրների համար։ Թիֆլիս. 1900. Շարաձէի տպ. գինն է 1 ռ. 8°. 231։—ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (ՍԵԴՐԱԿԵԱՆ). Քահանայական խնդիր, համառօտ ակնարկ։ Մոսկուա. տպ. Հերբէկի 1900. 8° եր. 220. գինն է 1 ռ.—Հ. Ս. ԷՓԻՒԿԵԱՆ. Պատկերապարդ բնաշխարհիկ բառարան, պրակ առաջին. Վենետիկ, Ս. Ղազար, 1900. 8°. 160 եր. գինն է 1 ռ.—ԼԵՒՈՆ ՄՍԵՐԵԱՆ. Հայերէն բարբառախօսութիւն, Ներածական ճառ, Թարգմ. ի ռուսերէնէն Հ. Գ. Մենեվիշեան, ի Մխ. ուխտէ. Վիեննա, Մխիթ. տպ. 1899. գինն է 50 սանտիմ. փոքրագիր 8° եր. 30. —ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. Մելիք-Իւսուֆ, պատմական պօէմա (1728—1750). Թիֆլիս, տպ. Շարաձէի 1900. փոքրագիր 8°. 30 եր.—ՄԵԼԻՔ Ս. ԴԱՒԻԹ-ԲԷԿ. Լուսինեանք, Վիեննա 1900. Մխիթ. տպ. 8°. եր. 144.—Կ. ՏԻՄԻՐԵԱԶԵՎ. Շարլզ Դարվին, Թարգմ. Ս. Տէր-Գասպարեան. Բագու, տպ. Գիւլբասարեանի 1900. 8° եր. 66. գինն է 25 կ.—ՅԱԿՈԲ ԱԴԱՄԵԱՆ. Ազատ ժամեր, Թիֆլիս, տպ. Շարաձէի. 1900. 8° եր. 172.—Յ. ՏԷՐ ՄԻՐԱՔԵԱՆ. Դեռահասների ազատ ընթերցանութիւնը, 190 յանձնարարելի ու մերժելի գրքերի ցուցակով, Թիֆլիս, տպ. Ռօտինեանի 1899. 8° եր. 229. գինն է 60 կ.—ԲԺՇԿ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ, Թշուառների բարեկամ բժիշկ Հասպ, փոխ. ռուս. Թիֆ. 1900. տպ. Ռօտ. հրատ. Հայոց Հրատ. ընկեր. № 180. գինն է 20 կ. փոքրագիր 91 եր.—Դ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐԵԱԿ. Պառաւ ծիտը, Թարգմ. ռուս. Նղիսաբեթ Սարգսեան, № 10 հրատ. Ա. Պօղոսեանի գում. գինն է 3 կ. 8° եր. 18. տպ. Մ. Մարտիրոսեանի 1900.—Վ. Պ. ԱՒԵՆԱՐԻՈՒՍ. Ի՞նչ է ասում սենեակը, Թարգմ. Ջ. Տ.-Գ. Թիֆ. տպ. Մ. Մարտ. 1900. 8° եր. 27. գինն է 10 կ. № 11. հրատ. Ա. Պօղոսեանի գում.—Տ. ԻՒԹԻՃԵԱՆ. Առաջնորդ առողջապահութեան, Ա. հատոր. Ատամունք, Բ. տպագր. Կ. Պոլիս 1899. փոքրագիր եր 52. գին երեք դահեկան։—ԲԺ. ՍԻՄԷՕՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ «Մշակ»ը (25-ամեակի առթիւ) 189⁶/₇ թ. թ. կուսակցական պայքարը։ Մոսկուա, տպ. Բարխուդարեանի 1900. 8° եր. 98. գինն է 1 ռ. —Մի լրագրական քննադատութեան առթիւ—Ամնագիրներ։

Հայկական գրականութեան կրօնական դրոշմ կրելու մասին շատ է գրուած. արդէն իսկ պատմական փաստ է, որ հայկական գրականութիւնը ծնունդ լինելով եկեղեցական պիտոյքի, սնուել ու զարգացել է դարերի ընթացքում կրօնական ոգւով, նոյն ոգին տիրապետող է եղել և անցած դարում, որ ընդհանուր պատմական տեսակէտով ազատ էր կրօնական ուղղութիւնից և կրում էր գիտնական դրոշմ, ուստի և շատերը կոչում էին այդ դարը լուսաւորութեան դար։ Այդ լուսաւոր դարու ազդեցութիւնը սակայն տարբեր էր զանազան ազգերի վրայ. մեր ազգը, որ միշտ հետևողի դեր է կատարել պատմութեան մէջ, այս անգամ ևս հաւատարիմ մնաց իւր ընթացքին և լուսաւորութեան ուղին բռնելով՝ հեռուից, շատ հեռուից հետևեց առաջադէմ մարդկութեան։ Տասնիններորդ դարում հայ գրականութիւնը այնպիսի բազմադիմի յգ՝ՈՒՆԷ ցոյց տուաւ, որ նա երբէք չէր ունեցել, սակայն նա չը թողեց և իւր նախնական ընթացքը, որի մէջ գտնուում է շնորհիւ պատմական հանգամանքների։ Հայ եկեղեցին դեռ ևս աւանդապահ է մեր լեզուի և ազգայնութեան և ով գիտէ, թէ դեռ քանչքան ժամանակ պիտի մնայ միայնակ ապաստանարան այդ սուրբ աւանդների։ Եկեղեցին լեզուի խնդրում մինչև իսկ աւելի աւանդապահ է, քան թէ ցանկալի կարող է լինել, բայց զուրկ չէ և յառաջադիմական քայլերից, որոնք առհաւատչեայ են ապագայի մեծագոյն բարիքների։ Մինչդեռ մինչև անցած դարու կէսը գրաբար լեզուով միայն կարելի էր կրօնական և եկեղեցական խնդիրների մասին գրել, այժմ աստուածաբանական, զուտ կրօնական և եկեղեցական խնդիրների մասին բազմաթիւ աշխարհաբար երկեր ունենք։ Այս առաջին քայլն էր դժուարինը, որին անշուշտ կը հետևեն շատ այլ քայլեր։

Քրիստոնէական կրօնի ճշմարտութիւնների աղբիւր ս. Գիրքը դեռ ևս անմատչելի է մեր ժողովրդին, բայց արդէն իսկ մեծ աշխատանք է գործ դրուած, որ ս. Գիրքը մատչելի լինի ժողովրդին, անթիւ աշխարհաբար դասագրքեր և մեկնողական գրուածներ նախապատրաս-

տում են այդ վախճանական մեծ գործը։ Այս հայեցակէտով ողջունել պէտք է պ. Տէր Միքելեանի «Գրոց աւուրք», որ մի նախադուռն է Աստուածաշնչի հնագոյն և հիմնական գրքերի մեկնութեան և ըմբռնողութեան։ Արգոյ հեղինակն այս Ա. հատորում երկու հատուածով ծանօթացնում է նորավարժներին Աստուածաշնչի նշանակութեան և Հնգամատեանի հետ, որ հին օրէնքի հիմքն է, այսու նախապատրաստում է նա և նոր կտակարանի ըմբռնումն։ Այսպ՛սի մեկնողական շարադրութիւնները հնար կը տան մեր հոգևորականութեան դուրս գալու միջնադարեան «փոշոտ» մեկնութիւնների շրջանից, որ դեռ ևս միակ տիրապետողն է։

Այստեղ անյարմար է և հակառակ իսկ ակնարկներս նպատակին մի առ մի խօսել հեղինակի հայեցքների և մեկնութիւնների մասին, ուստի պիտի շատանամ հետևեալ երեք ընդհանուր դիտողութեամբս. ա) նորավարժներին և համբակներին ուսուցանելու ուղիղ ճանապարհն է թանձրացեալ նիւթից չը հեռանալն և վերացականից խուսափելը, այս պատճառով, կարծեմ թէ հեղինակն աւելի լաւ կանէր, որ նախ ուսուցանէր և ապա այնպիսի վերացական և դժուարին խնդիրների քննութիւնների մասին խօսէր, ինչպիսիք են ս. Գրքի գրական արժէքը, ս. Գրքի բացատական քննաբանութիւնը և այլն գրեթէ ամբողջ առաջին հատուածն, որ ինքը կոչում է «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԷՏՔԻՆ»։ Երկրորդ դիտողութեան արժանի կէտն է արգոյ հեղինակի գործածած լեզուն, որ ձգտում է սովորականից դուրս, արհեստական ձեւերի կիրառութեան, պարզութիւնը ոճի զարդն է, մանաւանդ վարդապետող, ուսուցանող ոճի։ Դիտողութեանս երրորդ կէտը վերաբերում է հեղինակութեան աղբիւրներին, որոնց մասին արժէր նախաբանի մէջ յիշատակել, որպէս զի նիւթի գիտնական արժէքը միանգամից ակնյայտնի լինէր. ոչ մի հեղինակ, մանաւանդ գիտնական հեղինակ անընդհատ և ինքնուրոյն գիւտեր չէ անում, այլ օգտուում է ուրիշների երկարատեւ և տքնաջան աշխատանքից, ուստի ամօթաբեր չէ օգտուիլն, այլ պէտք է գիտենալ որպիսի

աղբիւրներից պէտք է օգտուիլ, որոնց անունն ևս քաջութեամբ կարելի է տալ։

Կրօնական վարդապետականից անցնելով եկեղեցական կանոնականին և վարչականին, պիտի արձանագրենք «Քահանայական խնդիր» մակագրութիւն կրող մի շարադրութիւն, որ մեր այժմեան հրապարակագրութեան մենավաճառների բանակում մեծ գգրգիւնով հուչակուեցաւ։ Այդ երկի հեղինակն է Արիստակէս (ինչպէս ի զգուշութիւն յայտնում է վերնագիրն, Սէրբակէան, և ոչ այլ ոք Արիստակէս) Եպիսկոպոս, ինչու ոչ արքեպիսկոպոս, քանի որ Սեդրակեան սրբազանը շատ ժամանակ է, որ վայելում է արքեպիսկոպոսի պատիւը։ Համեստութիւնը կրօնաւորի առաքինութիւն է, ուրեմն արդարացի է կարծել, որ հեղինակը դիտմամբ արքեպիսկոպոս չէ ստորագրել, ոչ ապաքէն մեր նշանաւոր մատենագիր Յովհան Սարկաւագն ևս չը նայելով իւր եպիսկոպոսական աստիճանին, կոչում է իրեն Սարկաւագ։ Անշուշտ նոյն հոգւով քննած կը լինի հեղինակն և մեր եկեղեցական խնդիրներից այս գժուարագոյնը, մտածում է ընթերցողն և բաց անում գիրքը։ Սակայն ի՜նչ հակասութիւն. ամբողջ շարադրութիւնը, որին մի լրագրող Խոշոր Մեքենայապետներ անունը տուաւ, մի ամբաստանագիր է մեր այս դարու մեռած և կենդանի հոգևորականութեան դէմ։ Ինչպէս յայտնի է ամեն ամբաստանագիր ճշմարտութիւն չէ և ինչպէս գիտեն ամենքը, ամեն դատաստան ևս երկնքից իջած լուսափայլ հրեշտակ չէ։ Սակայն մի կողմ թողնենք մեր զգացածը թէ վրդովեցուցիչ իրողութիւնների և թէ մեռածների այս անօրինակ քարկոծութեան դէմ և ծանօթանանք գրքի բովանդակութեան հետ ինչքան այս տեղը և մեր նպատակը կը ներէ։

Արիստակէս սրբազանն իւր երկն սկսում է այն օրուան անցքերից, երբ ինքը մտել է վարչական ասպարէզ և նկարագրում է իւր ամբողջ գործունէութիւնը մինչև վերջին օրերս, այնպէս որ այս շարադրութիւնը մի կողմից pro domo suo է գրուած, միւս կողմից մի հեռանկար է ընթերցողի աչքի առաջ այն ցի-

պուածի համար, երբ մեր եկեղեցին կունենայ մի այնպիսի Հովուապետ, ինչպիսին ինքն է։ Այս երկու դիտաւորութիւններն ևս պախարակելի չէին լինիլ, եթէ գերապատիւ հեղինակը խնայած լինէր մեր անցեալ և ներկայ եկեղեցականութեան ներկայացուցիչներին, բայց մեծ վշտով պիտի արձանագրենք, որ արդոյ հեղինակը մեծ տեղ է տուել մութն ակնարկներին, որոնց հարկաւ չեն կարող պատասխանել մեռած գործիչները։

Եր. 39 տող 7. «Պարծենալով կարող ենք ասել, որ եկեղեցական կարգապահութեան և հպատակութեան կողմից ԵՐԻԷՔ չենք թերացել». գրում է սրբազանն, բայց իւր երկի ամեն մի էջ դրա հակառակն է վկայում։ Նոյն իսկ իւր գործունէութեան առաջին քայլը, երբ նա Զալալեանց Սարգիս եպիսկոպոսի ձեռքի տակ լինելով և Նուխուայ գիւղերի հոգևոր վիճակը քննելուց յետոյ, դիմում է ՈՒՇԸՆԷ սինոդին, մի անկարգապահութիւն և իւր մեծաւորի դէմ դատախազութիւն է, մինչդեռ նրա պարտքն էր զեկուցագիր տալ իւր մեծաւորին և նրանից դարման խնդրել և ոչ թէ մեծաւորից բարձր իշխանութեան առաջ սևացնել նրան։ Նոյն ընթացքը նկարագրում է Սրբազանը և վերաբերութեամբ իւր Տաթևի յաջորդութեան, նոյնն է պատմում ինքը և վերաբերութեամբ իւր Թիֆլիզի առաջնորդութեան և սինոդի անդամութեան մասին։ Այն չարիքը, որի դէմ ինքն իբրև առաջնորդ մաքառում է, գործ են իւր նման ստորադրեալների, ահա մի խոշոր խնդիր, որ աչքաթող է արել Սրբազանը քահանայական խնդրի քննութեան ժամանակ։ Եթէ քահանան ըմբոստ է յաջորդի դէմ, յաջորդն առաջնորդի, առաջնորդը սինոդի և սինոդն Հայրապետի, այնտեղ չէ կարելի արդիւնաւոր գործի ակնկալութիւն ունենալ։

Մի առանձին և վշտացուցիչ վիպասանութիւն է գերապատիւ հեղինակի Թիֆլիզի առաջնորդութեան պատմութիւնը, որ սկսուում է բամբասանքներից և վերջանում բամբասանքներով (տես. եր. 11 և 12 և այլն)։ Այս խնդրում երկու աչքի ընկնող կէտ կայ, մէկն այն է որ հեղինակը ճգնում է ցոյց տալ, որ Թիֆլիզի թեմի

հոգևոր վիճակն անչափ ընկած էր իրենց առաջ և դրա պատճառը Մակար Սրբազանի առաջնորդութիւնն է եղել, երկրորդ որ երբ ինքն ուզեցել է վիճակը բարեկարգել, իրեն արգելք են եղել սինոդն ու կաթուղիկոսը։

Թողնենք այն հանգամանքը, որ իրենից առաջ և Մակար Սրբազանից յետոյ թեմն ուրիշ և իւր իսկ խոստովանութեամբ մի շատ արժանաւոր առաջնորդ է ունեցել, որի գործունէութեան մասին ոչինչ չենք լսում, պէտք էր վիճակագրական եղանակով ապացուցանել նախկին թեմակալի ապարդիւն և վնասակար գործունէութիւնը և ոչ թէ «ասէ, կոսէ» ներով։ Եթէ հեղինակն այդ ուղին բռնած լինէր՝ մի կողմից կ'երևէր, որ նախկին թեմակալը մի շատ աւելի, բազմապատիկ վատթար վիճակ էր ժառանգել քան ինքը և երկրորդ՝ անհերքելի փաստեր կ'ունենայինք նախկին առաջնորդի գործած գեղծումների մասին, ապա թէ ոչ, այսպիսի խոսքեր, թէ «պէտք էր տալ առատ աջահամբոյր առաջնորդին», «դարձեալ աջահամբոյր» և այլն կոչւում են բամբասանքներ։ Ես չեմ ցանկանում նախկին առաջնորդին բոլորովին սպիտակացնել, բայց համոզուած եմ, որ նրա ժամանակ անուսների ձեռնադրութեան շարքում եղել են արժանաւոր ձեռնադրութիւններ և վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ հէնց այդ առաջնորդի ժամանակ Վրաստանի թեմում բազմաթիւ Ներսիսեան դպրոցից աւարտածներ են ձեռնադրուել. ամբողջ թեմի վարչութեան գնահատութեան համար քիչ է միայն Թիֆլիզ քաղաքի քահանայից վիճակագրութիւնը, որի վրայ բազմադիմի ազդեցութիւններ են եղել և ցայսօր իսկ Թիֆլիզն իրեն արժանաւոր քահանայական դասակարգ չունի. անշուշտ եմ, որ ինքը գերապատիւ հեղինակն այսօր գոհ չի լինիլ իւր իսկ ձեռնադրածներից ամենից։

Շնորհակալ ենք սրբազանին այն կոնդակի արտատպութեան համար, որ գրել է Մակար Կաթողիկոսը մայիսի 2-ին 1886 թ. Ը. 251։ Այս մի կոնդակն արժէ մի ամբողջ գիրք, ինչպիսին է սրբազանի այս երկը։ Ցաւում եմ, որ տեղը չէ ներում այդ կոնդակն

ամբողջովին յառաջ բերելու, երկու խօսքով դրա իմաստը հետևեալն է. ոչ ոք չէ արգելում առաջնորդին իւր նկատած անկարգութիւնները բառնալ և բարեկարգել եկեղեցին, ընդհակառակն այդ նրա պարտքն է։ Կլասիքական է կոնդակի խօսքերը. «Մեք զյայտագիրն զայն... համարեցաք ոչ իբրև ծրագիր, որ նորօրինակ ինչ թուի մեզ, այլ իբրև ընդհանուր տեսութեամբ նկարագիր աննախանձելի դրութեան եկեղեցեաց, ոմանց եկեղեցականաց, վանօրէից և արքունի դպրոցաց վիճակիդ Տփխիսայ, զորս մարդ էր Ա՝ խակոն պարտ ընդարձակութեամբ արդի վերածել հեղինեպ ի բարեկարգութեան ամենայն խնդրելոյ ի մեծ ղեր-ծուն»։

Գրքի գլ. Դ. սկսում է դարձեալ մի անապացոյց մեղադրութեամբ և շարունակուում այն անարժան մեղադրանքների կրկնութեամբ, որ մի անգամ արդէն տպագրել էր տեղակալութեան «Արարատը»։ Սրիստակէս սրբազանը վայելուչ է համարել այս տողերս «1888 թուին անկարող լինելով տանելու Սրբազնագոյն Քահանայապետի անձամբ Թիֆլիզում արած մի քանի պարկեշտ կարգադրութիւնները...» Այս ձևով անփաստ վիրաւորանքը մի հանգուցեալ Քահանայապետի դէմ, առնուազն անվայելուչ է։ Սրբազանի առաջնորդութեան նախանձորդների մասին գրածներն ևս այս կարգին դասել պէտք է, չեմ հերքում, որ կարող էին Վրաստանի թեմի գահին բաղձացողներ լինել, սակայն արժէր բերնէ բերան տարածուող բամբասանքներին տեղ տալ մի շարադրութեան մէջ, որ կամենում է լուրջ լինել։ Հապա թէ ուրիշներն ևս այլ բամբասանքներ յառաջ բերէին։ Ս. Էջմիածնի Նիւթական վիճակի համար կոկորդիլոսի արտասուքներ թափողներին յիշեցնէին «Գրիգոր Լուսաւորչի Լումայի» խնդիրը, որի իրականանալուն մի առաջնորդ դէմ կացաւ, քանի որ ինքը չէր կաթողիկոս։ Սակայն բամբասանքը թէև միշտ սիրելի է եղել վանականներին, այսուամենայնիւ անարժան է պատմութեան մէջ տեղ բռնելու։ Վերին աստիճանի անախորժ տպաւորութիւն է թողնում կրկին վեհարանից ծախուած գինու շիշերի և լոբու մասին գրածները, աւելի հետա-

քրքիր էի Սրբազանի սինոդական դառնալու խնդրին, որի մասին մի խօսք անգամ չը գտայ այս էջերում։ Սինոդի հաշիւները ցոյց են տուել արդէն և ապագային ամէնքը կիմանան, որ Մակար Կաթողիկոսի ժամանակն Էջմիածնի նիւթական շահերն աւելի էին պահպանուած քան երբէք։ Սակայն բաւ է. այս ձևով եթէ շարունակեմ, թերևս քննադատելի գրքից աւելի մեծ գիրք գրելու սատիպուիմ, նմուշի համար այսքանս էլ բաւ է։

Արգոյ հեղինակը քննելով անցեալ դարու բոլոր մեր հայրապետների գործունէութիւնը, արձանագրում է, որ Կոտրեցին յայտնի է իբրև ապիկար և վնասակար, Ներսէս Աշտարակեցին ոչինչ չէ արել քահանայական խնդրի մասին, Մատթէոսը թոյլ և վնասակար է եղել, Գէորգն ու Մակարը կաշառների դուռն բանալով լցրել են եկեղեցին ագէտներով, այս ճանապարհն է բռնել և Հայրիկը։ Այս նշանակում է. «ի սկզբանէ էր խաւար և ոգի Արիստակէս եպիսկոպոսի լուսաւորէր ի վերայ ջուրց»։ Սակայն այդ է ճշմարտութիւնը։

Մինթէ ճշմարիտ է, որ հայոց եկեղեցին միայն մի փառաւոր շրջան է ունեցել մի ամբողջ դարու շրջանում և այն շնորհիւ հայ եպիսկոպոսներից ամենից անգրագէտի և ժամահարութեան արուեստով հռչակաւորի։ Ափսոս, որ Սրբազանը մոռացել է յիշատակելու, որ երբ իւր հռչակաւոր ծրագիրն ընդունուեցաւ սինոդից և ուղեցոյց որոշուեցաւ, թնչպէս կատարուեց Ծիրանաւորի քահանայի ձեռնադրութիւնը, որի պատճառաւ ինքն ստիպուեցաւ ուղևորուել Հին Նախիջևանի կողմերը...

Դառնամ այժմ բուն խնդրին։ Ցիրաւի մեր քահանայական դասը բարձր դիրք չունի, նրա անդամների մէջ ագէտներ և անարժաններ շատ կան, սակայն մեր քահանայական դասը ոչ մի կերպ յետ չէ ժողովրդից, նա ժողովրդի ծնունդ է, երկուսի էլ կրթական վիճակի մակերևոյթը մի է։ Ամբողջ գիւղեր անգրագէտ են, ունինք և շատ անգրագէտ քահանայք, քաղաքներում և աւաններում ժողովուրդը քաղաքակրթուած է, ունինք բազմաթիւ կրթուած հովիւներ ևս։ Ցանկալի է, որ քահանայք բարձր լինին ժողովրդից, շատ բարձր, սակայն

այդ ցանկութիւնը pium desiderium է և կը մնայ այդպէս դեռ երկար ժամանակ։

Այդ ցանկութիւնն իրականացնել չի լինիլ որոշ հրահանգներով և օրէնքներով, դա ունի իւր տնտեսական, քաղաքական և բարոյական պատճառները, որոնցից միայն մէկն է աչքի առաջ ունեցել հեղինակը։ Այս առթիւ չերկարացնելով խօսքս, ընթերցողի ուշադրութիւնն եմ հրաւիրում պ. Ա. Արտխանեանցի քննութեան վրայ, որ տպուեցաւ «Ծարազում» այս գրքիս առթիւ։ Սխալուում է արդոյ հեղինակը կայծելով որ մեր անցեալ դարու հայրապետները ոչինչ չեն արել այդ խնդրի համար, նրանք մեծ գործ են կատարել, որովհետև խնդիրն արմատիցն են բռնել և ոչ ծայրերից։ Ներսէս Աշտարակեցու հիմնած դպրոցը մեզ ցարդ բազմաթիւ քահանայք է տուել, նրան ենք պարտական մեր կրթուած քահանայից 60%, նոյնը կատարել է Մատթէոս կաթողիկոսը մեր ժողովրդական դպրոցի դռները լայն բանալով, ոչ նուազ մեծ գործ է կատարել Գէորգ Դ. Ճեմարան հիմնելով, որից թէ քահանայք են ելեր և թէ կուսակրօններ, որոնք պիտի բռնեն այն ամենեցուն տեղերը, որոնք Աստուծոյ շնորհը վաճառում են։ Այս ընթացքին հետևել են և յաջորդ երկու հայրապետները, բայց ոչ մի վերք միանգամից չի բուժուում, մանաւանդ եթէ դա հին է։ Եթէ այս հայրապետների ժամանակ եղել են տգէտների ձեռնադրութիւններ և նոյն իսկ ջատագովութիւն տգէտների ձեռնադրութեան, դրա պատճառն այն է, որ չի կարելի Մեսիայի գալստեան սպասելով բոլոր մարգարէներին կոտորել. Արիստակէս Սրբազանը չի հաւատում, որ Աստուած անպիտան անօթներն ևս իրեն գործիք կարող է շինել և վերջապէս ձկնորս առաքեալներին յետոյ յաջորդեցին Պօղոսներ և ապա գիտնական Որոգինէսներ, Բարսեղներ, Գրիգորներ... Անշուշտ մենք անցել ենք միանգամ այդ շրջանը, բայց ո՞վ է մեղաւոր, որ պատմական հանգամանքները մեզ կրկին գլորել են տգիտութեան անդունդը։

Այս ամենից յետոյ յանձնարարում ենք հայ ըն-

թերցողին այս գիրքը, որի մէջ նա կըտեսնէ մասամբ իւր և իւր հոգևոր դասի թերութիւններն ու մանր, մարդկային հաշիւներն, իսկ պատմական սխալներն ու խեղաթիւրումները ժամանակը կըսրբագրէ։

Թող ներեն ընթերցողները, որ այս անգամ աւելի կանգ առայ կրօնական խնդիրների վրայ, բայց առթից օգտուել պէտք էր, քանի որ մեր հրապարակագրութեան մէջ շատ խնդիրներ միակողմանի միայն կարդող են լուսաբանուել վերջին տարիներս։

Դառնամ բանասիրութեան։ Այս նուագ քիչ երեւոյթներ պիտի արձանագրեմ. աչքիս առաջ երկու գիրք ունիմ միայն, Ս. Հ. Էփրիկեանի պատկերազարդ բնաշխարհիկն և Լևոն Մսերեանցի բարբառախօսութեան թարգմանութիւնը։ Վենետիկի և Վիեննայի մխիթարեանները վաղուց արդէն սովորութիւն են դարձրել մոջեան աշխատասիրութեամբ ի մի հաւաքել հայութեան մասին գրուածներն և ապա հատոր առ հատոր լոյս ընծայել, շնորհապարտ ենք նրանց այդ մասին։ Հ. Էփրիկեանի աշխատութեան Ա. սրակը արտատպած է Համավէպից և բովանդակում է իւր մէջ Ա. տարի մի մասը։ Բնաշխարհիկը պարզաբար այբուբենական կարգով մի բառարան է հայկական աշխարհագրական վայրերի։ Այդ բառարանի առաւելութիւնն այն է, որ իւր մէջ ամփոփում է բոլոր հին ու նոր տեղեկութիւններն հայկական վայրերի մասին հանդերձ մատենագիտութեամբ, սրանով բառարանիս արժէքն աւելի ևս մեծանում, որովհետև այդ մատենագիտութիւնը միջոց է տալիս ստուգելու և ընդարձակելու լիշուած տեղեկութիւնները։ Մի խօսք արժէ ասել պատկերների մասին, որովհետև դրանք միշտ իսկական պատկեր չեն լիշուած վայրերի և շէնքերի, այլ հանուած են զանազան ժամանակներում և զանազան արժէք ունեցող շարադրութիւններից։ Այս բառարանս աւարտուելուց յետոյ զարդ կարող է լինել ամեն մի հայկական մատենադարանի։

Պ. Լ. Մսերեանի ներածական բանախօսութիւնը շեշտում է հայկական լեզուաքննութեան մէջ բարբառների ուսումնասիրութեան նշանակութիւնը, որ վաղուց

արդէն ցոյց է տուել հանգուցեալ Ք. Պատկանեանը, որին և հեղինակը մատուցանում է արժանի յարգանքները։ Բարբառների ուսումնասիրութիւնը շատ աւելի յետ է մնացած մեր բանասիրութեան մէջ քան այլ խնդիրները։ Ցարդ եղած հետազօտութիւններից աչքի ընկնողներն են պ. Սարգսեանի Ագուլեաց բարբառի ուսումնասիրութիւնն և Հախվերդեանի Թիֆլիզի բարբառի ուսումնասիրութեան փորձը, նորերս առանձնապէս հրատարակուած մեր բարբառախօսութիւնը Մսերեանցի Մշոյ բարբառի հետազօտութեամբ, որն ափսոս որ հիմնուած է գաղթականների լեզուից քաղած նիւթի վրայ։ Նոյն խնդրով զբաղուում է և երիտասարդ բանասէր Աճառեանը, որ սկսել է ուսումնասիրել Արցախեցոց բարբառը։ Սակայն այս ամէնը դեռ բարբառագիտութեան փորձեր են, ցանկալի է, որ մեր բարբառներով շատ աւելի նիւթեր հրատարակուէին իբրև նիւթեր լեզուաբանական ապագայ քննութեանց համար։

Բանաստեղծական երկերով հարուստ չէ մեր գրականութիւնը, հետզհետէ երևան եկող երևոյթներն ևս աղքատիկ ու խղճուկ են, միակ բանաստեղծական տետրակը, որ մեր առջևն է, արտատպուած է «Լուսայից»։ Մեր նորագոյն բանաստեղծներից պ. Յարութիւն Թումանեանցը դեռ ևս զարգացման աստիճանի վրայ է, նրա փորձերը նոյն աւանդական վիպական շրջանումն են։ Մելիք-Իսուֆը մի յանգաւոր վիպական պատմուածք է մեր նոր անցեալից, մելիքների վերջին մաքառման շրջանից, բայց ափսոս, որ բանաստեղծի երևակայութիւնը թոյլ է և գրեթէ առանց գիւտերի։ Երիտասարդ բանաստեղծի մէջ կայ մի առկայծուող կրակ, որ պէտք է վառել ու բորբոքել, խորհուրդ կը տայինք պ. Թումանեանցին չշտապել հրատարակելու իւր այս փորձերն, այլ ճգնելու ճախացնել և կոկել այդ նիւթերը։

Ցարդ չենք ունեցել մենք «պատմական» գրականութիւն, կարող եմ շնորհաւորել, որ այդ երևոյթն ևս այժմ տեղի է ունեցել այլ կերպ դժուար է որոշել պ. Մելիք-Ս. Դաւիթբէկի «Լուսինեանք» կոչուող գրական արտադրութիւնը։ Փորձենք մի վայրկեան որո-

շելու այդ գրուածքի տեսակը։ Ըստ երևութին դա պատմական շարադրութիւն կամ մենագրութիւն է Լուսինեանց տոհմի մասին, ինչպիսիք շատ կան եւրոպական գրականութիւնների մէջ զանազան հին ազնուական ցեղերի մասին, բայց նրանք հիմնուած են անժխտելի պատմական վաւերականների վրայ, մինչ այս երկի պատմական հնագոյն հատուածներն յիրաւի քաղուած են հին պատմական աղբիւրներից և վերաբերում են ստոյգ իրողութիւնների, իսկ վերջին գլուխները, որոնց նպատակն է ապացուցանել Գալֆանների Լուսինեանց ցեղից լինելուն, անհիմն և կարկատան հիւսուածքներ են մի տոհմի և մի անձի մասին։ Թէ ինչու համար նախկին Ամբրոսիոս և Խորէն վարդապետները կարևոր են համարել իրենց Լուսինեան ճանաչեցնել տալու, պարզ է, մարդկային սնափառութեան տեսակէտով, իսկ թէ ինչո՞ւ պ. Դաւիթբէկ նրանց այդ ցանկութեան պատմական իրողութեան նշանակութիւն է կամենում տալ, մեզ անհասկանալի է, նոյն իսկ այս մաքուր, իշխանական ծախիւք տպագրուած գիրքը կարդալուց յետոյ։ Իրողութիւնը շատ պարզ է, մութ եղածն ևս գիրքն է պարզում, որ կրօնաւորի սքեմը թողած Ամբրոսիոս վարդապետը հարուստ կին առնելով իրեն իշխան է կամենում ճանաչեցնել տալ մի այդպիսի երկրում և ժաղաքում, ուր իսկական իշխանները արհամարհում են իրենց տիտղոսները։ Մեզ համար Ամբրոսիոս և Խորէն Գալֆանները աւելի յարգի և աւելի պատուարժան են իբրև հայ գրականութեան յայտնի մշակներ քան թէ իբրև իշխանական սերնդի որդիք։ Բեռլինի վեհաժողովի ժամանակից Գալֆանները ցանկութիւն ունեցան Լուսինեան հռչակուելու, թերևս կարծելով՝ թէ նոր գահը պիտի թափուր մնայ և ժառանգորդպէտք է հին հայկական թագի... Յիշում եմ, որ այս անուանափոխութեան առթիւ հանգուցեալ Գաբրիէլ եպիսկոպոս Այվազովսկին զայրացել էր և նամակով իսկ գրել իւր նախկին ընկերներին։ Ափսոս, որ կորել է Այվազովսկու նամակների պատճէնների ժողովածուն, որ նրա անտիպ երկերի հետ էջմիածին էին տարուել։ Զարմանալի

թեթևամտութեամբ Սան Ստէֆանոյի դաշնագրի 16 դ. յօդուածն ևս միմիայն Խորէն եպիսկոպոսի ջանքերի արդիւնք է հռչակուած (եր. 73), ինչ միամտութիւն։

Բնական և բժշկական գիտութեանց շրջանից երկու տետրակ պիտի արձանագրենք այստեղ, մին Կ. Պոլիս հրատարակուած և միւսը Բագու։ Բժիշկ Իւթիւճեանի «Առողջապահութեան առաջնորդ» կոչուած մատենադարանի խոստացուած 40 հատորներից առաջինը կրում է «Ատամունք» վերնագիրը։ Այս փոքրիկ տետրը բաղկացած է 56 փոքրագիր երեսից, որոնցից առաջինը ձօն է, երկրորդը պարապ, երրորդն ուղղուած է ազգային ուսումնական վարչութեան ատենապետին (պոլսեցիք այլ կերպ գիրք հրատարակել չը գիտէն), չորրորդը պարապ է, հինգերորդը ազգային պատրիարքարանի թուղթն է, վեցերորդ պարապ, իններորդից մին չեւ 12 ազդ, 13 – 14 եր. յառաջաբան, բուն նիւթը գրաւում է եր. 15 – 49. 50 եր. պարապ է, 51 – 52 ծանուցումն կամ յանձնարարութիւն է ատամ մաքրելու դեղերի։ Չը նայելով այսպիսի աւելորդ ծանրութեամբ բեռնաւորութեան, տետրակս իբրեւ ամենատարրական ծանօ՛ժութիւններ ատամների խնամքի համար կարող է օգտակար լինել ժողովրդին։

Կ. Տիմիրեազեվի Չարլզ Դարվինի մասին 1878 թ. կարդացած դասախօսութեան հայերէն թարգմանութիւնը տալիս է մեզ ոմն Ս. Տէր Գասպարեան, շնորհակալ լինինք, որ պարոնը ցանկութիւն է ունեցել լրացնելու մեր գրականութեան թերին և բնական գիտութեանց այս հսկայի մասին թարգմանել է մի դասախօսութիւն, որ գրուած է երկու տասնեակ տարի առաջ, սակայն ինչ յանդիմանութիւններով է հանդիմում պարոնը իւր այս թարգմանութիւնը, ինչպէս ասում են, նա մի ջուլ-ջուլ է հայերիս, որ դեռ չունինք դարվինական գրականութիւն։ Պարոն թարգմանիչը ոչ միայն անծանօթ է հայ գրականութեան, նա չը գիտէ ամենևին և հայերէն լեզուն, տէր Աստուած, երբ պիտի սզատուի խեղճ հայերէն լեզուն այս նահատակութիւնից, թարգմանիչ պարոնը 8 երես յառաջաբանի մէջ մի կատարեալ

աւերմունք է գործում հայերէն քերականութեան, թէ ինչպէս կատարած կը լինի թարգմանութիւնը, այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Ցաւում ենք, որ պիտի հիասթափումն պատճառենք պարոնին. նա իւր նպատակին չէ հասել, յառաջաբանն ու թարգմանութիւնը հայերէն հասկանալի դարձնելու համար պէտք է թարգմանել հայերէնի։ Հետաքրքրուողը թող կարդայ յառաջաբանի հէնց առաջին պարբերութիւնը, որ մենք տեղի սղութեան պատճառով չենք կարող արտատպել։ Զարմանալի ձգտումն ունի թարգմանիչը բառերն աղաւաղելու, օրինակ՝ «բաւարարեցուցիչ», «անքակելի», «արմատախլութիւն», «յարգանքալից» և այլն։ Շատ ափսոս, որ այս թէպէտ և հնացած, բայց գեղեցիկ բանախօսութիւնը բառարանի օգնութեամբ և տառացի թարգմանուած լինելով՝ չէ կարող Դարվինի մասին հայ ընթերցողի ծանօթութեանց պաշարն աւելացնել։

Վերջին ժամանակներս մեր մանկական գրադարանը բաւական հարստացաւ, տասը տարի առաջ հայ ծնողներն ու մանկավարժները զուր էին փնտռում մանկական ընթերցանութեան համար հայերէն գրքեր, որոնց ցանկը մի երկու տասնեակից աւելի չէր, այն ևս ըստ մեծի մասին անյարմար և կարիքից սարսափուած միայն ընդունուած գրքերից կազմուած։ Այժմ մի ամբողջ մանկական մատենադարան ունինք, որ մասամբ պարտական ենք մեր հանգուցեալ հրատարակչական ընկերութեան. ոչ այդչափ միայն, մեր մանկավարժներից մէկը, պ. Յ. Տէր Միրաքեանը մի բաւական ստուար հատոր է հրատարակել դեռահասների ընթերցանութեան մասին, որին կցել է և մի ցուցակ իրեն ծանօթ մանկական գրքերի, որոնց նաև գնահատել է «ընտիր», «միջակ», «անպէտք» մակդիրներով։ Այս ուղեցոյցը մի ֆոլիոյ (հաւաքումն) է զանազան մանկավարժական բառարաններից ու նման գրքերից, գրուած է սահուն լեզուով, բայց դժբախտաբար երկարաբան և կրկնութիւններով լի ոճով։ Գալով գրքերի ցանկին, դա շատ թերի է, զարմանքով պիտի ասենք, թէ չենք հասկանում ինչպէս կարող էր հեղինակը մոռանալ Քամալեանց

Ս-ի ընտիր հէքիաթներն ու նման շատ գրքեր, այդ թերին շատ է նուազեցնում ցանկի արժէքը։

Մանկական գրադարանն հարստացել է երկու փոքրիկ տետրակով. «Պառաւ ծիտը» և «Ի՞նչ է ասում սենեակը», վերջինս կարող է երկրորդ թարգմանութիւն համարուել, որովհետև Յ. Տէր Միրաքեանի ցանկի մէջ № 82 նոյն գլուածքը նշանակուած է «Ի՞նչ է խօսում սենեակը» աւելի յաջող թարգմանած վերնագրով։ Պ. Տէր Միրաքեանը այս գրքիս մասին ասում է. «գեղ չէ». ես կաւելացնեմ, որ զուրկ է իսկական մանկական գրուածքի առաւելութիւններից, շինծու և անբնական եղանակով պատմուած, որ մանուկներին կը ձանձրացնէ։ Թարգմանութիւնն անխնամ է կատարուած, ռամկական ոճերի հետ կան զուտ օտարաբանութիւններ, անպակաս են և սխալները, օրինակ «կամ մի ղոշ էն է գառնում, կամ միւս». «ռանդայով ռանդեց», «գլուխը գովելու իրաւունք ունիմ», «տանել կռուասէը աթոռի ծաղրը». «երկաթը ծա-ալ-ոդ է (՞)», «ընկ ծ էնոտորէ անձռանի էոյաերով», «մարդիկ իրանց մարմինները մաքուր պահեն», «գարդուէ», «ծած պուչիս», «մի ֆ նոյն ժամանակ սկսեց լուսանալ»։

Մամին-Սիբիրեակ-ի Պառաւ ծիտը թարգմանութիւն է Եղիսաբէթ Սարգսեանի. գրուածքն իբրև մանկական ընթերցանութեան նիւթ անարժէք է, եթէ պ. Տէր Միրաքեանի ձևով ասելու լինենք. պիտի նշանակենք „առանձին արժէք չունի“, „շատ միջակ է“ և այլն. թարգմանութիւնը շատ թերութիւններ ունի, սա մի իսկական բառացի թարգմանութիւն է, որ պէտք է վերածել հայերէնի։ Ահա յառաջ եմ բերում մի քանի օրինակ այս թարգմանութիւնից, որ ընթերցողն ինքը դատէ. „մի ֆ նուն(3) է, բան չի գ-ոս գ՞ոյ(լ)“, „ոարոաֆելի բոյարաս էոոյը“, „արկզ ԵՐԿԱԹԷ ԿՏՈՒՐՈՎ“ (крышка)!!, „դէ շուտ, ա՛յ կնիկ, հաւաքուիր“ (соберись), „հին բոյնից հանել բերել էին բոյրը“, „որ օդը սուլում էր (՞)“։ Տասն և չորս երես մանկական գրուածքն աւելի խնամով պէտք էր թարգմանել, մանաւանդ որ այդ թարգմանութիւնը առատ վարձա-

տրուած է Ա. Պողոսեանի դրամագլխի հաշուին։

Ժողովրդական ընթերցանութեան համար ընտիր նիւթ է „բժիշկ Հասազ"ի կենսագրութիւնը, որ փոխադրութիւն է ռուսերէնից կատարուած բժ. Վ. Արծրունու ձեռքով ու տպագրած հրատարակչական ընկերութեան միջոցներով։

Ժողովրդական ընթերցանութեան նիւթ կարող է լինել և պ. Յակոբ Ադամեանի Ազատ ժամերը", որի մէջ զետեղուած է նաեւ Սենկեւիչի „Հետեւենք նրան" գողտրիկ շարադրութեան թարգմանութիւնը։ Այս փոքրիկ բայց ընտիր վէպն այնքան հաճելի է եղել մեզ հայերիս, որ երեք անգամ թարգմանուել է, ամենից առաջ „Արձագանք"ում, ապա առանձին գրքոյկով 1896 թ., իսկ այս երրորդն է [1]։ Թարգմանութեանս լեզուն բոլորովին տարբերուում է պ. Ադամեանի ինքնուրոյն շարադրութեան լեզուից, արժէր համեմատել երեք թարգմանութիւններն ևս, բայց ձեռքի տակ չունիմ միւս երկուսը։

Ազատ ժամերի խրատները մի գրական արուեստասէրի (dilettante) գործ են, որի գրական արժէքը շատ քիչ է, բայց հետաքրքրական են իբրև մեր հին սերնդի մտածողութեան և նրանց հետաքրքրող խնդիրների նկարագրութիւն։

Վերջին տարիներս մի շարք բանակռուական տետրեր է սկսել հրատարակել պ. բժ. Ս. Շահ-Նազարը, դրանց մի քանիսի մասին առիթ եմ ունեցել խօսելու արդէն „Լուսայի" նախընթաց համարներում, այժմ աչքիս առջևն է „Մշակը" 189⁶/₇ թ.թ. կուսակցական պայքարը», որի մասին մի որոշ կարծիք յայտնելը բաւական դժուարին է, որովհետև հեղինակի առաջադրած խնդրի քննութիւնն ևս թերի է և անորոշ։ Նախ այդ ինչ կուսակցական պայքար է 189⁶/₇ թ.թ. յատուկ, ինչքան յիշում եմ, այդ թուականներին այն պայքարը, որ յայտնի է մեր մէջ իբրև լրագրական կուսակցու-

---

[1]) Որքան գիտենք երկրորդ թարգմանութիւնն էլ պ. Ադամեանի ձեռքով է կատարուած։ Ծ. Խ.

թիւնների պայքար, բաւական սառել էր և բնորոշ ոչ մի յատկանիշ չունէր, դա շարունակութիւն է այն պայքարի, որ այդ լրագիրն սկսել է իւր ծննդեան օրուանից և վարում է ցարդ։ Ես այդ պայքարի եղանակի ու նպատակի մէջ ոչ մի զանազանութիւն չեմ տեսնում, ուստի անկարող եմ $189^{6}/_{7}$ թուականը զատել իւր նախորդ և յաջորդ տարիներից։ Տեարակիս մէջ բազմաթիւ ճշմարտութիւններ կան, սակայն ոչ մէկը դրանցից նոր չէ, ինչպէս հեղինակն ինքն էլ խոստովանում է, այդ ճշմարտութիւնները քանիցս կրկնել են Արձագանքն ու Նոր Դարը, Հանդէս պատմական և գրականական ու այլք։ Փոխանակ բանակռուական յօդուածներից անթիւ ցիտատներ հանելու, արգոյ հեղինակը դեղեցիկ գործ կատարած կըլինէր, եթէ լուրջ հետազօտողի պէս առնէր իւր քննադատած լրագրի 25-ամեայ համարները, ցոյց տար նրա կատարած դրական և բացասական դերը, ապա թէ ոչ ուշ համարեն գաղտնիք հռչակաւոր թաշիրբաշու շահատակութիւնները, որ նոյն խմբակցութեան անդամներից շատ շատերի համար այժմ բոլորովին պարզ են։

Քանի որ խօսքիս ընթացքն հասաւ լրագրութեան, կամենում եմ օգտուել առիթից ու մի քանի խօսք ասել և pro domosuo երկու քննադատութեանց առթիւ, որ «Մշակի» երկու խմբագիրները գրել են ինձ դէմ [1])։ «Լումայի» վերջին համարին պարսաւանք գրելու տենչով վառուած, այդ լրագրում ապաստանարան գտած յայտնի վիպասան, քաղաքագէտ, հրապարակախօս և այլն և այլն պ. Լէօն չէր մոռացել և ինձ, աննշանակ անարգական խօսքերից յետոյ պարոնը խծբծել էր և իմ լեզուիս առթիւ մի քանի նախադասութիւն լառաջ բերելով Զմշկիկի պատմութիւնից։ Այդ նախադասութիւնների բոլոր թերութիւնն այն էր, որ պ. Լէօն չը գիտէ հայերէն յարաբերական (որ) դերանուան կանոնը և տեղեկութիւն չունի նախադասութեանց անդամների ըստ

---

[1]) „Վինոգրադով, դասագիրք ընդհ. պատմութեան" մասն Գ. Նոր-Դար. Բագու. 1900. 379 եր.

մտաց (կապա սիմենկան) համաձայնութեան մասին։

Նոյն սխալանքները գտել է իմ լեզուիս մէջ «Մշակի» միւս քննադատ պ. Տ. Յ. որ մի ընդարձակ յառաջաբանով և վերջաբանով քննութիւն է տպագրել Մշակի անցեալ տարուան № 247-ի մէջ։

Այդ քննադատութեան ձև կրող, բայց կուսակցական ստոր դիտումներից բղխած տողերն ամենից գեղեցիկ կերպիւ կրդատապարտուին իրենց ոճով։ Մեծ պատիւ է անում ինձ պարոն Տ. Յ. պահպանողական կուսակցութեան սիրն, կուռք և այլ կոչումներ տալով, այդ բառերը մատնում են միայն նրա կրքերն, որոնց պատրաստում է յաղուրդ տալու։ Այդպիսի և աւելի ևս հշակակն ճամարտակութիւններ սովոր ենք լսել պ. Տ. Յ.-ից, որին դեռ ուսանող ժամանակ «Արձագանքում» դասեր են տրուած իւր սանձարձակ լեզուի համար։ Այդ հին վրէժն այժմ մասամբ ինձնից է լուծում պարոնը, մոռանալով որ մենք հաւասար զէնքեր չունինք այժմ։

Պարոն քննադատս երեք լրագրական սիւնակի համար նիւթ ժողովելիս անգամ սխալուել և մի բառի տեղ մէլան է արտագրել, протекціонистъ ես չեմ թարգմանել վաճառականութիւն և չէի էլ կարող թարգմանել այդպէս, ես այդ խնամակալութիւն եմ թարգմանել։ Եթէ պարոնը չարամտութեամբ չէ գրել այդ տողը, ընդունում եմ, որ աչքի կամ դրչի սխալ է այդ, ուրեմն չը պիտի զարմանայ, որ երեք սիւնակի մէջ սխալուելն երբ հնարաւոր է, աւելի ևս 400 երեսանոց գրքումը կարող են lapsus-ներ լինել, ինչպէս է իսկապէս և перерожденіе ու вырожденіе բառերի մէջ, որի համար շնորհապարտ եմ իրեն։ Ընդունում եմ նոյնպէս, որ մի թարգմանութեան մէջ գործ դրուած բառերի փոխարէն կարող են աւելի յարմարագոյնները լինել, սակայն դրանով չի ապացուցուիլ, որ թարգմանութիւնն անպէտք է։

Գալով քննադատութեան առանձնակի կէտերին, պիտի յիշեմ նախ, որ իմ պատճառովս Վինոգրադով պրոֆէսորին էլ վատաբանել է պարոն քննադատը, ինչ-

մեղք ունի յայտնի ռուս գիտնականը, որ մի մշակականի չի չաջողուել նրա երկի հայերէն թարգմանութիւնը, չէ՞ որ դուք ինքներդ առաջարկել էիք հրատ. ընկերութեան թարգմանել նոյն դասագիրքը: Ֆրանսիական հին պաուլամենտ կոչուող դատարանական հաստատութեան մասին երկար դասախօսութիւն կարդալու կարիք չունէր պ. Տ. Յ. նոյնը նա կարող էր կարդալ և իմ թարգմանութեան մէջ, ուր ոչ ոք չի կասկածիլ, որ ազգային ժողով կոչուող հաստատութիւնն այդ շըրջանում, այդ թուականում դատական հաստատութիւն էր: Սխալուում է պարոնը կալծելով, որ физіократъ բառն ես եմ թարգմանել «բնութեան իշխան», այդ թարգմանութիւնը միւթարեաններին է, թող տեսնի Նորայրի բառարանում, ինքս էլ չեմ հաւանել այդ թարգմանութեան և դրել եմ փակագծի մէջ, որ քննադատս բաց է թողել ուշադրութեամբ:

Ինչ կը վերաբերի պարոնի չը հաւանած բառերին, դրա մասին վիճելն աւելորդ է, ես կարծում եմ, որ «կատարելահասակ» աւելի ճիշտ է քան «չափահաս», «կանգ առնել տալ» աւելի լաւ է քան «կանգնացնել», որ ուրիշ նշանակութիւն ևս ունի: Յարաբերական դերանուան կանոնը, որ գայթակղութեան քար է դարձել, առաջարկում եմ կարդալ Զայրխեան Այդնեանի քերականութեան մէջ եր. 340 յոդ. Է. նոյնը և «զարգացելոց ու տարերքի» մէջ. հայերէնի մէջ որ յարաբերականը եզական ձևով յոգնակի նշանակութիւն ունի: «ժողովածու» բառը հաւաքական լինելով նրա յարաբերականը կարող է ըստ մասոյ (ըստ սիւնէսէս) դրուել յոգնական ձևով: Դպրոցականներն անդամ գիտեն, որ պատմական ոճի մէջ անցեալ կատարեալը փոխարինում է կատարեալին և ընդհակառակն, նայելով նկարագրի ոճին, ուրեմն այդ ռսերէն չգիտենալու հեռևանք չէ, մանաւանդ որ ես ոչ քերականութիւն եմ թարգմանել և ոչ բառարան կազմել, այլ պատմական մի գրուածք եմ վերածել հայերէն լեզուի:

Յանցանքներից մեծագոյնն է եղել ամեն բառ հայացնելը, դա ընդունում եմ և դիտմամբ եմ արել,

որտեղ էլ անձեռնհաս եմ գտնուել, շատ եմ ափսոսացել։ Օտար բառերի տառադարձութեան մէջ յիրաւի սանսիւյալիսմի փոխարէն գրել եմ սանսիւյալիզմ ռսերէնի ազդեցութեան տակ, սակայն մի՞թէ այդ իրաւունք է տալիս քննադատին դատելու իմ ֆրանսերէնի գիտութեան մասին. այդ նոյնը կը լինէր, եթէ մէկը ֆրանսերէն լեզուի հեղինակաւոր ուսուցիչ ներկայանար այն պատճառով, որ զանազան յանձնարարութիւններով ֆրանսիական Զուիցերիա է գնացել մի երկու անգամ։ Հայոց պատմութեան յաւելուածը քննադատը ողորմելի է կոչում, ամենևին գաղափար չունենալով դրա ծաւալի և նշանակութեան մասին, եթէ ընդհ. պատմութեան մէջ զուգընթացաբար աւելացնում են հայոց պատմութիւն, դա պէտք է իւր ծաւալով և ծրագրով համապատասխանի ընդհանուր բովանդակութեան, «ծոխացրեց» բառի իմաստը սահմանափակում է պ. Տ. Յ. ինքնակամ կերպով։ Ամենից լաւ մատնում են պ. քննադատին իւր վերջին խօսքերը. նա զայրացած է, որ այդ հատորը տպագրուած է մի մեկենասի ծախքով և յայտնում է, թէ մեր մէջ հեշտ է հրատարակիչ գտնել անպէտք գրքի համար, իսկ դժուար բան է, կարգին գրքի համար հովանաւոր (՞՞) և հրատարակիչ գտնել. բոլորովին համաձայն եմ, վերջին տարիներս հրատարակչական ընկերութեան այդ ուղղութեամբ գործունէութիւնը ես եմ արձանագրել, այժմ աւելին կասեմ, մեր մէջ շատ ՝էլի հեշտ է գէրատուհի քերթողը՝ հա՞ր կոմիտասները դառնալ և մեծագումար վարձատրութիւն ստանալ, քան տքնաջան տշխատութեամբ վարձատրուել։ Եթէ մեր այժմեան հրապարակագրութեան մենավաճառներն այս ուղղութեամբ շարունակեն իրենց քննադատութիւնն, այն ժամանակ գրագէտներին մ նուամէ կրկնել Քուիլովի առակի խրատը. «Ըզմեզ ալ դուն փըրկէ Աստուած, կոշտ ու տգէտ դատաւորաց»։ Այս վիճակից կազատուէինք, եթէ ամսագրութիւն ունենայինք, սակայն ամսագիրների մասին այլ անգամ։

Ն. Քարամեան

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ. *Ընթերցանութեան ձեռնարկ կրտսեր դասարանների համար, համաձայն բառգրքով։ Կազմեցին Կ. Կուսիկեանց եւ Լ. Սարգսեանց։ Թ. 1900.*

Ինչպէս երեւում է գրքի յառաջաբանից՝ այս ձեռնարկը պատրաստուած է «օտարախօս» հայ աշակերտների համար, և պ. պ. Կուսիկեանցն ու Սարգսեանցն աւելորդ են համարել այդպիսի հայ երեխաներին որ և է ժողովրդական հեքիաթ կամ երգ տալ սովորելու. մինչև անգամ ժողովրդական առած էլ չեն գտել գրքի մէջ զետեղելու համար, այլ դորա փոխարէն Հ. Ճուլարտեանից և Գ. եպ. Այվազեանից են վերցրել մի քանի անհամ «ասացուածներ և առակաւոր խօսքեր»։ Օրինակի համար, փոխանակ ասելու՝ «ուրիշի համար փոս փորողն ինքը մէջը կ'ընկնի», այս նորագոյն մանկավարժները աւելի լաւ են համարում որ հայ երեխան սովորի.

Թէ ուրիշին փոս կը փորես՝
Նայէ որ շատ չը խորես,
Որ երբ գուն մէջը գըլորուես՝
Ողջ մընաս, ողջ դուրս ելնես։

Ա. մասի մի քառորդից աւելի տեղ են բռնում Գ. Բարխուդարեանի «Մարդը և հրէշը» և Ղ. Աղայեանցի «Արեւամանուկը». մնացածի մէջ քանակութեան կողմից աչքի են ընկնում Կռիլովի (և ոչ Կրիլովի) առակները, որոնց թարգմանութիւնը (Գ. եպ. Այվազ.) պ. պ. Կուսիկեանցն ու Սարգսեանցը պարտք են համարել ազաւաղելու, որպէս զի, երևի, «օտարախօս» հայ երեխաներին աւելի մատչելի լինին։ «Մայրենի խօսքը» կազմողներն այսպէս են հայերէն սովորեցնում. «Կապկին մէկը, որ ծերաց աչքի ոյժը պակասել էր» կամ՝

«Վշտացած կապիկը խոր ցաւով սրտի
Այնպէս է ջրիմ ակնոցը քարի,
Որ փշուր-փշուր իսկոյն եղէ»։

Ի՞նչ է նշանակում.

«Մեր սանամոր ոչ թէ միայն աչքերը,
Ատամներն էլ նրան է առնում»։

Լազարեանց ճեմարանի ուսուցիչները սովորեցնում են մեզ որ ասենք «ատամներս հարուեցին» և ոչ թէ «ատամներս առաւ», ասում են. «Բերանը մրմռաց.—«Ի. բաւ, ես շատ խենթ եմ եղել, որ ստամոքսի համար սնունդ եմ ծամում, ինչ է՝ որ նա մարսէ նրան պարոնի նման ձգուած», և ուզում են որ հայ երեխան մարսէ այսպիսի նախադասութիւններ։ Ուրիշ գիւղացու խրճիթ չտեսած հայ մանուկը պիտի հասկանայ, թէ ինչ է նշանակում մէկին «վառարանի լեռևը» նստեցնել. «սեղանը ծածկուած է» ասելիս պիտի գլխի ընկնենք որ «սեղան է բաց տրած» կամ «հաց է քցած»։ «Անդամները, տեսնելով որ իրանց կորուստը մօտ է՝ ճանաչեցին յանցանքը». ուստ յանցանքը։ Պ. պ. Կուսիկեանցի և Սարգսեանցի կարծիքով այս նշանակում է՝ «կանոնաւոր, սահուն լեզուով գրուած» ընթերցանութեան նիւթ տալ օտարախօս հայ երեխաներին. սակայն ո՞վ գիտէ, գուցէ այդպէս էլ պէտք է, «'ի նկատի ունենալով հայ աշակերտների ուրոյն պայմանները»։ Երևի հէնց այդ «ուրոյն պայմաններն» աչքի առաջ ունենալով գրքի մէջ զետեղուած են մի քանի նախաջրհեղեղեան ոտանաւորներ, որ վաղուց մոռացուած են. ախր ի՞նչ էք հասկանում Ս. Նազարեանցի հռչակաւոր «Մայրենի լեզուի» այս տողերից.

«Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է, այո, մինս այլ ձև ու ոճը» և այլն.

Յետոյ՝ երևի նոյն այդ «ուրոյն պայմանների» շնորհիւ է ներելի համարուում փոքր երեխաներին ամբողջ «Մայր-Արաքսին» դաս տալ, առանց բան հանելու, կամ «մեկնողական ընթերցանութեան» նիւթ դարձնել Պէշիկթաշլեանի «սիրոյ ժամերն 'ի յանտառին զմայլեցան» և այլն. կամ ի՞նչ երեխայի սովորելու բան է Պատկանեանի «Տապանագիր Մ. Բ. մանկան» ոտանաւորը։ Միանգամայն անտեղի ենք համարում մի մանկական ընթերցանութեան ժողովածուի մէջ նաև Ա. Ահարոնեանցի

«Փշուր ըմ խաց» պատմութիւնը, որ սակայն ինքն ըստ ինքեան վատ բան չէ։

Մեր Նորսգոյն բանաստեղծներից մի բացառիկ պատուի արժանացել է այս գրքի մէջ Ա. Ծատուրեանը. բայց ինչ ասենք այդ մասին, քանի որ պարզ նկատուում է որ բանաստեղծութեան վերաբերութեամբ պ. պ. Կուսիկեանցն ու Սարգսեանցն իրենց «ուրոյն» ճաշակն ունին։

Մի փոքրիկ հարց է։ ո՞ւմ և ինչի համար է գրքին կցած «համառօտ բառգիրքը». եթէ այս գիրքը «կրտսեր» դասարանների համար է, այդ ո՞ր մանկավարժական օրէնքով դուք փոքր երեխաներին տանը, բառարանի օգնութեամբ, պատրաստելու դաս պիտի տաք։

Իրենց «Մայրենի խօսքով» պ. պ. Կուսիկեանցն ու Սարգսեանցը մի անգամ ևս ապացուցանում են, որ մի գործ կատարելու համար բաւական չէ միայն բարի ցանկութիւն ունենալը։

Ա. Բ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Տ. Կ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Սաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Գերապատիւ Տ. Թեմակալի վիճակին Վրաստանի և Իմերէթի Ս. Գէորգ Արքեպիսկոպոսի, միաբանի Վանաց աւագ եկեղեցւոյ Տփխեաց Արժանապ. Գիւտ աւագ քահանայի, Գերազնիւ պարոնայց Գէորգայ Եանդուլիանց, Աբգարու Յովհաննիսեանց և Աղէքսանդրի Երիցեանց և հարազատ որդւոց Մայր Աթոռոյս Նուիրեմք ողջոյն Տիրաւանդ հանդերձ Հայրապետական օրհնութեամբ։

Յամին 1897 յ19 ամսեանն Յունիսի կոնդակաւ մերով թ. 609 թղթատրեցար բարեգործ պ. Աւետիքայ Բ. Ղուկասեանց կառուցանել ի գաւթի Վանաց աւագ եկեղեցւոյ քաղաքիդ շինութիւն մի ընդ անուամբ «եկեղեցական պատմական թանգարան»։ Զարդիս, որպէս յայտնէ մեզ մեծապատիւ բարերարն, արդէն աւարտեալ է ամենեխմբ զշինութիւնն և մնայ կարգադրութեան Մերոյ յաղագս բացման թանգարանին։ Եւ քանզի մեծածախս շինութիւն բարերարին ունի զիւրն նշանակութիւն և հարկ իսկ է զի ըստ կոչման անուանն ունիցի յատուկ վերահսկող մարմին մի յաղագս ապագային ի բարգաւաճումն և ի յարատեւութիւն այնորիկ, Մեր հարկ համարիմք սովին Հայրապետական կոնդակաւ կարգել պ Գերապատուութիւն Ձեր հանդերձ Տ. Գիւտ քահանայիւ ընդ գերազնիւ պարոնայցդ ցմահ մնայիւն Յանձնաժողով և վերահսկող եկեղեցական թանգարանի պ. Ղուկասեանի որ ի գաւթի

Առաջնորդանիստ եկեղեցւոյդ, իսկ որպէս կառավարիչ անմիջական ըստ յատուկ ցանկութեան բարերարին նշանակեմք զանդամն Յանձնաժողովոյդ զՏ. Դիւտ աւագ քահանայն Ագանեանց։

Յանձն առնելով զայս ազգապարծան գործ Ձեզ Յանձնաժողովոյդ թողումք ի կամս Ձեր առնել զպատշաճաւորն կարգադրութիւն յաղագս բացման նորին ի մխիթարութիւն և քաջալերութիւն բարեբար հիմնադրին, որոյ կտակաւ ունին յանձնել ի գործադրութիւն Յանձնաժողովիդ քանի մի այլ բարենպատակ և կարևոր կարգադրութիւնք։

Օրհնելով զբարերարն, զպատճառն և զնորընտիր Յանձնաժողովդ նորոյ թանգարանի՝ մաղթեմք վասն ամենեցունցդ կալ մնալ յառողջ և յաջող ի կենցաղս ազգօգուտ գործովք առաքինական վաստակովք և քրիստոնէական բարեգործութեամբ, արժանացեալք գովութեան ազգիս և վարձուց երկնաւորին։ Ողջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ Հօրէ և ի Մէնջ. Ամէն։

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց

Ի 15 Յունիսի 1900 ամի և ըստ տոմարիս ՌՅԽԹ.
ի Հայրապետութեան մերումէ. ամի, յԱրարատեան Մայր
Աթոռ Ս. Էջմիածնի։ Ի Վաղարշապատ։ Թ. 660.

---

† ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Հայ գրականութիւնն ընդհանրապէս և Տաճկահայ պարբերական մամուլը մասնաւորապէս՝ քսաներորդ դարու հէնց սկզբին մեծ կորուստ ունեցաւ յանձին Մ. Մամուրեանի։

Դեռ մի տարի առաջ Տաճկահայերը մեծ շքով տօնեցին այդ գրական բեղմնաւոր գործիչի յիսնամեայ յոբելեանը և ահա յունուարի 2 ին յանկարծ նրա մահուան բօթն են հաղորդում լրագիրները։

Մեր գրական գործիչներից շատ քչերին է վիճակուել յիսուն տարի շարունակ գրիչը ձեռքին և տոկուն

աշխատութեամբ մաքառել — յանուն սկզբունքի — ամեն տեսակ արտաքին և ներքին խոչնդոտների դէմ, բարձր պահելով մամուլի կոչումը։

Մամուրեանը երեսուն տարի խմբագրելով և հրատարակելով «Արևելեան մամուլ» երկշաբաթաթերթը՝ եղակի դիրք ունէր տաճկահայոց ասուլների նման երևացող և անյայտացող պարբերական հրատարակութիւնների մէջ և ուղղութեամբ ևս զգալի կերպով զանազանւում էր Պոլսի լայնածաւալ թերթերից։ «Արևելեան մամուլը» տալիս էր ըստ մեծի մասին լուրջ յօդուածներ՝ թէ հայոց գրականութեան ու պատմութեան շրջանից, թէ բնական գիտութիւններից և թէ մանկավարժութիւնից։

Մամուրեանն եւրոպական կրթութեան տէր մարդ լինելով՝ աւելի ենթակայ էր ֆրանսիական ուղղութեանը և այդ պատճառով էլ նրա թարգմանութիւններն ըստ մեծի մասին ֆրանսերէնից և ֆրանսիական հեղինակներից էին. այդ թարգմանութեանց շնորհիւ հայերէն կարդացողների թիւը հետզհետէ ստուարանում էր և տաճկահայոց աշխարհաբարը զարգանում և կանոնաւորւում։

Մամուրեանն իբրև տեսուչ և ուսուցիչ մի քանի տասնեակ տարիներ ամբողջ սերունդներ է կրթել Զմիւռնիայում, դպրոցներ բարեկարգել, և բազմաթիւ դասագրքեր յօրինել։

Իբրև հասարակական գործիչ նա եռանդուն մասնակցութիւն է ունեցել Զմիւռնիայի ազգային — վարչական և բարեգործական հաստատութիւնների մէջ և միշտ առաջնորդողի դեր ստանձնել։

Այսպէսով Մամուրեանն իբրև խմբագիր, դաստիարակ, տեսուչ, բանասէր, թարգմանիչ, հասարակական գործիչ՝ մեծ համակրութիւն էր վայելում շնորհիւ իւր քրտնաջան աշխատութեան, հմտութեան, խոհականութեան և եռանդի ու տոկունութեան։ Նա վախճանուեց եօթանասնամեայ հասակում՝ թողնելով վշտահար՝ մօտ հարիւրամեայ մօրը, ամուսնուն և միակ որդուն։

Մամուրեանի յուղարկաւորութիւնը տեղի է ունեցել Զմիւռնիայում մեծ շքով, խօսուել են բազմաթիւ դամ-

բանականներ, որոնց մէջ նշանաւոր է Զմիւռնիայի առաջնորդ Տ. Մելքիսեդէկ Արք. եպիսկոպոսի խմաստալի և սրբատամորմոք ճառը։

Յաւիտենական հանգիստ քրտնաջան վաստակաւորին։

ՄԱՄՈՒԼԻ ՍՏՈՒԵՐԸ

Որքան էլ կամենանք լաւատես լինել, չենք կարող ուրանալ, որ Վենետիկի Ղազար կղզու միաբանները չեն սիրում ոչ սխալ դրել և ոչ իւրեանց նախորդաց վրայ սխալ յիշել. այս բնական հետևութիւն է անսխալականութեան դաւանանքի։ «Լումայի» անցեալ համարում տպուած Շիրակաւանի ժողովը յօդուածը, վրդովել է «Բազմավէպի» խմբագրութեան և մէկը խօսելով ու գովասանելով այդ համարը, յարձակւում է, նախ հայհոյելով ինձ՝ իբր թէ ես ատելութեամբ տոգորուած եմ կաթուղիկէութեան (՝) դէմ (եղուիթութեան դէմ այո՛) և ապա սխալ է գտնում մեր ասածը թէ Զամչեանը վերագրում է Քաղկ. դէմ գումարուած Մանազկերտի հայ-ասորական ժողովը ոմն Յովհ. Մանազկերտցու և հ. Զ. նոյնը ակնարկում է իւր «դպրութեան պատմութեան» մէջ. և ասում է այդ խօսքի արուեստակը թէ Զամչ. ընդունում է Օձնեցու ժողովը և հերքում է «վաւերականութիւնը՝ Ց. Օձնեցւոյ ընծայուած պատմութեան մը այդ ժողովոյն վրայ». այլև հ. Զ. այդ է կրկնած։

Թող գիտենայ հ. Տ. Ս., որ խօսքը Մանազկերտի այն ժողովի մասին է, որ գումարուել է Ասորոց հետ ընդդէմ Քաղկ.-ի և այն գրութեանց, որոնք այդ են հաստատում։ Իսկ Զամչեան իւր պատմութեան Բ. 352—353 բացէ ի բաց վերագրում է Օձնեցու այդ ժողովը ոմն Յովհաննէս Մանազկերտցու, իւր ստեղծած տեղապահին, որ ժողով գումարելու այնքան իրաւասութիւն ունէր, որքան հ. Տ. Ս ճչմարտութիւնը խոստովանելու։ Իսկ 577—630 ոչ թէ մի պատմութեան վաւերականութիւնն է հերքում, այլ պնդում է՝ որ Օձնեցին խօսքով, գործով ու ժողովով հակառակ չէ եղել Քաղկ.-ին։ Հարցը միայն այդ կէտի վրայ է և այդ «մոլորութիւնն» ու «հմտութիւնն և գրուածները» Հ. Գ. Զ. Զամչեանի վրայ յենուելով մեր պատ-

մըչաց ոմանց (՞՞՞) մէջ Օձնեցուն և Յովհան Մանազկերտցուն չփոթած է համարում։ Պարզ չէ։

Իւր խօսքի արուեստակութիւնից ոչինչ չչահելով Կ. Տ. Ս. ասում է՝ իբր թէ Խոսրովիկը գանգատւում է Օձնեցու դէմ դաւանափոխութեան համար, ըստ որում և նմանում է ջրի վրայից խուլ բանող խեղդուողի, և իւր խօսքին հաստատութիւն է բերում, որ Տաչեանն էլ այդ է խոստովանում։ Բայց Կ. Տ. Ս. կարող էր նեղութիւն քաշել նայել նոյն իսկ գրչագրաց մէջ և կտեսնէր, որ այդտեղ ոչ անուն կայ, ոչ կաթուղիկոս է յիշուած և ոչ էլ յովտի չափ հիմք կայ կարծելու թէ նա Հայոց առաջնակարգ հոգևորական է։ Ասողիկի, Կիրակոսի, Միքայէլի, Օրբէլի, Վարդանի, Մխիթ. Արիվանեցու, այլև Հայրապետի բանախօսութեան, Աբուլֆարաճի, Արշարունու դիմաց Կ. Տ. Ս. օճառի փամփուշտ է փայլատակեցնում (հմմտ. Հայաս. եկեղ. և Բիւզ. ժող. պար. ԺԲ.)։

Յետոյ ասում է Կ. Տ. Ս., որ Յովհաննու թարգմանչի յիշած եռետիկոսը Աշոտ Մսակերի ժամանակ (+720) է եղել, որ և հաստատում է Վարդանի և Մխիթար Արիվանեցու (Կ. Տ. Ս. չգիտէ վերջինիցս լինելը։ այլ հ. Գ. Զ.-ից) վկայութեամբ, բայց չէ կարողացել տեսնել Վարդանի 78 և 82 էջերում թէ ինչպէս է Նանա սարկաւագը մինչև 862 թիւը ապրել ու ներկայ եղել Շիրակաւանի ժողովում. կամ ինչպէս է Բուղայի մօտ գերի ընկել և հայերի հետ տարիներ յետոյ ազատուել. տեսէք ձեր պաշտած Զամչեանը Բ. 451.678. չլինի թէ Նանա ապրած համարէք աւելի քան 160 տարի !! Ձեր օգտի համար ամեն ինչ հնարաւոր կըդարձնէք։ Ականատեսի խօսքը մերժենք ուրեմն ԺԳ. և ԺԴ. դարերի պատմչաց խառնուած թուերով։

Ապա Կ. Տ. Ս. զրպարտում է ինձ իբր թէ «անուղղակի» եմ ուզում իմանալ ժողովի որոշումը մինչդեռ հրատարակուած են կանոնները։ Դուք որտեղից գիտէք որ ժողովի որոշումը այդ նզովքներն են. չէ՞ որ ես ունիմ թէ տպածները և թէ գրչագիրը, որտեղ այդ նզովքները միայն Վահանի առաջարկութիւնն է։ Կ. Տ. Ս, իւր հիւսուածքը վերջացնում է նկատելով թէ Զամիչը ասել է, որ Մուսը կեղծ թուղթ է գրել։ Դուք էլ Կ. Տ. Ս., կարող էք չատ չոյել ձեր երևակայութիւնը ըստ քմաց մտքեր ծնելով, այլ սակայն ապացուցանել է պէտք. մենք անսխալականութիւն չենք ընդունում. և արժէ՞ խօսել

ձեր գիտութեան ակնարկ դիմակի դէմ։

Եւ դուք ու ձեր նմանիք թէ որքան դիմակաւորուած էք յայտնապէս և որքան մոլի կուսակցական. ահա թարմ փաստեր.

Ամն Թորոսեան թարգմանելով Գելցերի «Փաւստոս» Բիւզանդը», յառաջաբանում գրում է. «բայց ամենէն աւելի կարևոր կէտը, որ և դուցէ բովանդակ գրութեան նպատակը կը կազմէ, այն է թէ ս. Լուսաւորիչը Վաղարշապատի մէջ չէ հիմնած նախկին ազգային եկեղեցին Մայր եկեղեցին, այլ Տարոնոյ Աշտիշատ քաղաքին մէջ... Իրողութիւն մ'է այս—ոչ ամենուն ախորժելի—պատմական փաստերով (?) հաստատած, որ իրմէ նախորդ գիտնոց տեսութենէն վրիպել էր, և որով կըտապալին շատ մի երևակայեալ չէնքեր, չափազանց պահանջներ, կարծեցեալ իրաւասութիւններ...։

Այս ցնդած խօսքերի հեղինակը արդեօք գոնէ գիտենար, որ նախ Գելցերի նպատակը գո՞ւէ չափ անգամ այդ եղած չէ, այլ Փաւստոսի արժէքը ցոյց տալն է մեր եկեղեցու նկատմամբ։ Երկրորդ՝ պէտք է հասկանար, որ Տարոնի եկեղեցին էլ Հայաստանումն է, որպէս և Ս. Թադէոսի վանքն Ալատազում և ուրիշ շատ եկեղեցիներ նաև նախքան Ս. Լուսաւորիչը։ Այլև որ Ս. Լուսաւորիչը Տրդատին բժշկելուց յետոյ կոյսերի վկայարանները շինեց և Ս. Էջմիածինն ըստ տեսլեան ձևակերպեց ու շրջապատեց։ Երրորդ՝ կարող էր մոլեռանդութիւնը թողնել և կարդալ զօրօր. Բիւզանդի երես. 32 (Պետերբ.), որտեղ Վաղարշապատի «նախ եկեղեցին», իւր պատիւն ունէր վայելչապէս։

Վերջապէս եթէ այդքան կորովաքիր էք, հապա քաջութիւն ունեցէք խոստովանելու, որ ոչ թէ մի հայագէտ, այլ բազմաթիւ լատինագէտ ու յունագէտ պատմաբան գիտնականներ անթիւ փաստերով ապացուցել են Պետրոսի Հռովմում բնաւ ՉԵՂԱԾ լինելը։

Ահա որպիսի՞ կուսակցական խաւարով քողարկուած էք դուք և ձեր նմանիք, Կ. Տ. Ս.։

Բայց ահա և յունիսի տեսրը. սկզբի հատածում Հ. Ս. Երեմ. Կրօնի և ազգութեան վրայ է խօսում, շտապում է ոգեւորուիլ բանաստեղծի խօսքերով և նոյն իսկ գրութեան վերջում ասում է նախ թէ՝ «Կաթուղիկէ (իմա Հռովմէական) քահանային դաւանանքն ամենափոքր տարբերութիւն մը միայն

ունի լուսաւորչականիներն» (°°°) և յետոյ՝ ուրիշ խօսքերով մօտաւորապէս այս է ասում. ըստ բանաստեղծին մենք եղբայրներ ենք. ահա բողոքականք գողանում են ձեր գառներից. երբ մի քանիսն էլ մենք ենք գողանում, ինչու՞ էք գոչում, բողոքում, չէ՞ որ եղբայր ենք։

Միթէ բողոքականի գողութիւնը կարդարացնի ձեր գողութիւնը։ Հ. Երեմ. Եղբայրութեան հիմքը սէրն ու համբերատարութիւնն է և ոչ թէ Հռովմէական մոլեռանդութիւնը և „յածիլ ընդ ծով ցամաք առնել եկամուտ մի. և յորժամ լինիցի՝ առնէք որդիս գեհենի կրկին ևս քան զձեզ“ [1)]։

Մի երկու խօսք էլ Կ. Տ. Ս.-ի և նմանեաց դաշնակցի մասին։

Լ.օյոլա գրքի մատենախօսութեան մէջ տնչեալ «Լուսայում» մի փոքրիկ նկատողութիւն էինք արել՝ որ «կարելի պէտք է լինէր առաջարկելու կազմողին՝ լրացնել նկատուած պակասները և նորից ներկայացնել ընկերութեան։ Չլինի՞ թէ նոր սկզբունքներով են առաջնորդւում բացասական կեանքի այդ նոր պահպանողականները»։ Յետոյ ասել էինք, որ տեղի սղութիւնը և մատենախօսական նեղ շրջանակը թոյլ չեն տալիս բովանդակութեան վրայ մանրամասն խօսելու։

Մերժողների նախագահ Լէօ չէ կարողացել տանել մեր հարցականը և ելել է մի բան ասելու։ Մի մեծ նամակով ասում է՝ որ ընկերութեան յանձնարարութեամբ է գիրքը գրուել, որ հեղինակը պէտք է յիշէր իւր աղբիւրները, որ թարգմանել է

[1)] Մազալու է յիշեալ թերթի վերաբերմունքն առ „Մշակ“. հ. Երեմ. մի շարք արամազդական ներբողներ է անում և յետոյ կամ ի միջի այլոց ասում է, որ նա բարձր գիրք կունենայ. „եթէ իւր թերթերէն պակաս չընէ դէպի ողջմտութիւն, գիտութիւն, յառաջադիմութիւն մղող ընտիր և ամփոփ առաջնորդող յօդուածներ. զորս ի գործ կը դնէր իւր հիմնադիրը։ „Մշակ“ աւելի ուղղամիտ ընթացք մը բռնած կըլլայ, եթէ իւր գրիչը միջնադարեան (!!) կրօնից իրը խարազան և Տարվինականութեան իրը դափնեի տերի չգործածէ։ 1899 է. 338։ «Մշակ իր խարազանը դեռ կը շարժէ. Ռընան, Տարուին, Զոլայ կը պաշտպանուին, թող պաշտպանուին, միայն չի մոռանանք՝ որ առանց կրօնի հայութիւնը դիակ մընէ“։ Այս ամենն այն լրագրի մասին է ասում, որի մասին նոյն յօդուածում գրում է. „որ գիտէ պատուոյ արժանաւորին արժանիքը“. 1900 № 11. էջ 512։

Բրկովի գրքից, որով հասկանայինք թէ ինչու մերժել են։ Յետոյ ասում է, որ կազմողը քաղուածներ է արել Նալբանդեանի յօդուածից։

Թող ընթերցողը համեմատէ. մենք ինչ ենք ասում, իսկ սա ինչ. «Կազմեց» է գրուած, ուրեմն աղբիւրներից է քաղել։ Չենք ուզեցել բովանդակութիւնը քննադատել, չենք որոնել աղբիւրները. մեր հարցն այլ է եղել և վերև գրուած է։ Այս պարզ է։

Բայց դուք Լէօի զէնքը տեսէք. մի շարք հայհոյանքներ չպրտելով ասում է. «Հայաստ. տիրացուներին յատուկ է մեծ մեծ վէճեներ կարդալ, առանց կարդալու, սովորելու։ Տգիտութեան յատուկ է անձնապաստանութիւնը։ Այդ տգիտութիւնն է պատճառ որ աստուածաբանն ապլօմբով յայտարարում է թէ «հայերէն ոչինչ չունինք եզուիտութեան մասին գրուած». մինչդեռ Մ. Նալբ. դեռ 1857-ին է տուել Լօյօլայի և եզուիթական կարգի մանրամասն (!) պատմութիւնը *) «Թափառական Հրէայ» վէպի թարգմանութեան սկզբում։

Մենք ասել ենք փոկ եզուիթութեան մասին միայն մի գիրք գիտենք՝ «Ճիզուիթն» տպուած ի Կ. Պ., որ՝տեսած չենք» —հետևաբար մեր խօսքն ամենքին մատչելի գրքի մասին է և ոչ յառաջաբանի կամ յօդուածի **)։ Ապլօմբ չկայ և պարբերութիւնը սկսւում է «որքան ինձ յայտնի է», որ հեռու է ապլօմբից։ Իսկ բարձրայօն պարոնի հայհոյանքները իրեն թողնելով հրաւիրում ենք ընթերցողի ուշադրութիւնը մի կէտի վրայ. ինձ «տգէտ» է անուանում։ Որ Բրկովի տեարից ու «Թափառական հրէայի» յառաջաբանից մեծ գիտութիւն է ձեռք բերել Լէօն եզուիթների մասին, այդ իմացանք. արդեօք բարի չի լինիլ մեզ յայտնելու թէ ինքը գոնէ որ միջնակարգ դպրոցի ուսման դասընթացքն է աւարտել։

Ա. Տէր-Միքելեան

---

*) Իւր անձնական մեծամեծ արժանիքներ երևակայող պարոնն այնքան ողորմելի է, որ չգիտէ թէ եզուիթական կարգի մանրամասն պատմութիւնը հաղիւ կարելի լինի անել «Թափառական հրէայ» գրքի հայերէն հատորի պէս երկու երեք հատորներում !!!

ՍՏՄՅՈՒՍԱԾ ԳՐՔԵՐ

Ա. Զիլինգարեան և Տ. Բաշմաճեան. Մաղնիսականութիւն. Շուշի 1900։

Левонъ Мсеріанцъ. Двѣ ученыхъ обители. Москва 1898.

— Этюды по Армянской діалектологіи ч. I Москва 1897.

— *Հայերէն բարբառախօսութիւն։ Թարգմ. ռուս. Հ. Գարբ Մէնէվիշեան.* Վիեննա 1899.

Բժ. Սիմ. Շահնազարեանց. «Մշակ»ը. 189⁸/₇ թ. կուսակցական պայքարը. Մոսկուա 1900.

Յ. Տէր Միրաքեան. Դեռահասների ապատ ընթերցանութիւնը. արտ. «Մուրճ» ամսագրից։ Թիֆլիս. 1899։

Մելիք Ս. Դաւիթ-Բէկ. Լուսինեանք. Վիեննա 1900.

— Բաղդատական քերականութիւն ծագումն ու զարգացումները հանուած «Բանասէր» հանդէսից. Պարիս. 1900.

Գէօրթէ. Փաուստ. Թարգմ. բնագրից բժշ Լեւոն Տիգրանեան. Երևան 1900.

Աշակերտի առողջապահութիւն. Թարգմ. տիկ. Մարիամ. Ն. Նախիջևան 1900.

Յ. Պարոնեան. Հոսհոսի ճեռատետրը. Թիֆլիս 1900.

Է. Օժէշկո. Եասի արկածները. Թիֆլիս 1900.

Գաղթականի մը համառօտ կարծիքները. Մոսկուա 1900.

Ն. ա. ք. Երզնկեանց. Դասագիրք կրթնի. Բ. գրքոյկի Ա. մասը. Թիֆլիս 1900.

Դօքտ. Ն. Տաղաւարեան. Սաղմնաբանութիւն. Կ. Պոլիս 1900.

Արշակ Տէր Միքէլեան. Ուսումն ս. Գրոց. Ա. Թիֆ. 1900.

Մամին Սիբիրեակ. Պառաւ ծիտը. Թարգմ. ռուս. Եղ. Սարգսեան. Թիֆլիս 1900.

Վ. Աւենարիուս. Ինչ է ասում սենեակը. Թարգմ. Ջ. Տ.-Գ. Թիֆլիս 1900.

Յ. Պարոնեան. Մեծապատիւ մուրացկանները. Թիֆ. 1900.

Տեղեկագիր և հաշուեկշիռ 1899—1900 տ. Ատրպատականի Հայուհեաց բար. ընկերութեան. Թաւրիզ 1900.

Յար. Թումանեանց Մելիք-Իսուփ. պատմ. պօէմա. 1728—1750, արտ. «Լումայ» հանդիսից. Թիֆլիս 1900.

Թշուառների բարեկամ բժ. Հաազ. ռուս. փոխ. բժ. Վ. Արծրունի. Թիֆլիս 1900.

Մ. եպ. Բարխուտարեանց. Մատչելի քարոզներ. Ա. տետրակ Վաղարշապատ. 1900.

Մխիթարեանց. Տաղեր ու խաղեր Ալէքսանդրապոլ 1900.

Կ. Տիմիրեազեվ. Զարլզ Դարվին. Թրգմ. Ա. Տէր Գասպարեան Բագու 1900.

Պ. Վինոգրադով. Դասագիրք ընդհանուր պատմութեան մ.

Ш. Նոր-Դար Թարգմանեց և Հայոց պատմութեան յաւելուածքով ճոխացրեց Ն. Քարամեան Բաղու 1900.

Նոր Դպրոց, տարբական ընթացք. ա. պրակ. հրատ. Սմբատ Դաւթեան. Կ. Պոլիս. 1900

Գուիտոն Լուսինեան. Նոր բառգիրք պանակերազարդ ֆրանսա-հայ. Կ. առաջին Ա—Н. Փարիզ. տպ. Մորիսի. 1900 գին 25 ֆրանք.

1901 ընդարձակ օրացոյց Ազգային Հիւանդանոցի Կ. Պոլիս.

Հ. Ցակ. Վ. Տաշեան. Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հետազօտութիւնք և բնագիրք մ. բ. է—ժ. Վենա 1901

ՕրացոյցՀյուշատ 900 ԺԹ Պոլիս, տպ. Ց. Մատթէոսեան (բազմալեզուեան)

Մմբատ Շահազիզեան Ցիշողութիւններ վարդանանց տգնի առիթով. Մոսկուա 1901.

Տեղեկագիր հոգատար—որբախնամ ընկերութեան Զմիւռնիոյ, 1899 ապրիլ 1 1900 մարտ 31, Իզմիր 1900.

Դոքտ. Ն. Տաղաւարեան. բառացուցակ ախտանուանց ֆրանսերէն է ի Հայ. Բ. տպ. սրբագրեալ և ճոխացեալ. Կ. Պոլիս 1901

Սուրէն Պարթեւեան. Խարազան (գիտցած ըլլան. դիակի մը շուրջը Բաշալեան երեկոյթը). Ա. պրակ. Յունուար 1901, Փարիզ. 1901

Armenia Magyar—orménу havi szemle. 1901 1. fuzet. Januàr. Szamosuvar. 1901.

Եկեղեցական բարեկարգութեան քանի մը հիմանգներ Կ. Պոլիս. 1900.

Դոքտ. Ն. Տաղաւարեան. Տարուինականութիւն. գ. տպ. Կ. Պոլիս 1901.

Օրացոյց Երուսաղէմի 1901.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Խմբագրութիւնս բաղդ ունեցաւ Աղգիս Վեհափառ Հայրապետի Դիւանի գրութեան հետ (դեկտ. 23 թ. 1456) ստանալ երկու օրինակ էջմիածնատիպ օրացոյց Նորին Սրբութեան կողմից ի շնորհաւորութիւն նոր տարւոյ։

Վարանդէից մեծ. պ. Ստեփանոս Տէր Փանոսեանցը „Լուսայ“ի երեք օրինակի բաժանորդ գրուելով՝ երկու օրինակը թողնում է խմբագրութեանս բարեհայեցողութեան։ Խմբագրու-

թիւնը որոշեց այդ երկու օրինակն ուղարկել Լայպցիգի Հայ ակադեմիական ընկերութեան և Վարագի վանքի որբանոցին։

Պ.-Բուրգից շնորհ. Սիմէոն Սարկ. Մնացականեանը „Լումայ"ի մի օրինակ թողել է խմբագրութեանս տնօրինութեան, որ և ուղարկում ենք Սսի Մայրավանքի մատենադարանին։

Բարձր. Հ. Կորիւն վարդապետը „Լումայ"ի մի օրինակ նուիրել է Սեւանայ մենաստանի մատենադարանին։

Խմբագրութիւնս „Լումայ"ի այս համարն ուղարկում է միմիայն այն թերթերին, որոնք փոխանակելով ուղարկում են մեզ և իրանց թերթերը. ինչպէս նաև տպագրում է այն լրագիրների յայտարարութիւնները, որոնք անվարձ տպել են մերը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

„ԲԱԶՄԱՎԷՊ"ին. 1900 թուի մայիսի համարը չենք ստացել. խնդրում ենք ուղարկել։

Կ. ՊՕԼԻՍ. „ԲԻՒՐԱՆ"ի խմբագրութեան. ինչո՞ւ դադարեցրիք մեզ „Բիւրակն" ուղարկել։

«ԼՈՒՄԱՅ»-Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

ԱԽԱԼՑԽԱ	— ալ. Աղէքսանդր Սիմէոնեանց
ԲԱԳՈՒ	— հ. Եղիշէ քահ. Գեղամեան
	— հ. Ներսէս քահ. Տէր-Կարապետեան
	— հ. Անտոն Կարա—գործ. „Մեսաժըրի" ընկ.
	— ալ. Նիկ. Ղ.-Քեւխայեան
ԳԱՆՁԱԿ	— ալ. Յովսէփ Խոջայեանց
	— հ. Յուսիկ ք, Վերդեան
ՋԱՔԱԹԱԼԱ	— հ, Աշոտ ք. Տէր-Իսրայէլեանց
ՏՓԽԻՍ	— „Լումայ"-ի խմբագրութիւն
	— Կենտրոնական գրավաճառանոց
	— հ. Արշակ ք, Մինասեանց

Հրատարակիչ՝ ԴԻՈՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձեռնարկած լինելով գրելու Հանգուցեալ Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեանի կեանքի ու գրական գործունէութեան տեսութիւնը, խնդրում ենք մեր ընթերցող հասարակութիւնից նպաստել մեզ, ուղարկելով մեզ Հանգուցեալ եպիսկոպոսին վերաբերեալ զանազան վաւերականներ՝ թղթեր, նամակներ, յիշատակարաններ և այլն։ Խոստանում ենք, այդ վաւերականներից օգտուելուց յետոյ, անկորուստ վերադարձնել նոցա ըստ պատկանելոյն։

Ն. Նախիջևան — Երուանդ Ճահագիզ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ե. ԳԻՐՔ

ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԼՈՍՏ ՏԵՍԱՆ

ԵՐԳԻՉԱՐԱՆ Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա.

ԾԻԾԱՂ

480 երես, հեղինակի պատկերով

ԳԻՆՆ Է 1 Ռ. 25 Կ.

Բ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

158 երես, գինն է 50 կոպ. գումարով զիջում։

Գ.

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

223 ԵՐ. ԳԻՆՆ Է 75 Կ.

Դիմել ,,Լուսոյ"-ի խմբագրութիւնը։

Կ. Պոլսի Նորատիպ (մեր նախնեաց թարգմանութիւն)

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Կովկասեան պահեստը գտնուում է մեզ մօտ.

Կաշեկազմ մէջադիր	. . .	2 ռ. 50 կ.
» » ոսկեզօծ	. . .	3 ռ. 20 կ.
» մեծադիր	. . .	5 ռ.
Փառակազմ »	. . .	9 ռ.

«ԱՐԱՐԱՏ»

ԱՄՍԱԳԻՐ

Լիստարի

Բաժանվում է ամեն Ուրբաթաշաբաթում 4 ռ. Աբրամաշ. 5 ռ.

Հասցէն. — Св. Эчміадзинъ. Типографическ. Комитету.

«ՌԻԻԶԱՆԴԻՈՆ»

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄՆՕՐԵԱՅ

Հրատարակվում է Կ. Պոլիս:

Տարեկան գինն է մեր կողմերի համար 16 ռ.: Ստորագրուել կարելի է „Լումայ"ի խմբագրատանը:

«ԱՐԵՒԵԼՔ»

ՕՐԱԹԵՐԹ

Հրատարակվում է Կ. Պոլիս.

Տարեկան գինն է մեր կողմերի համար 16 ռ.: Ստորագրուել կարելի է „Լումայ"ի խմբագրատանը:

«ԲԱՋՄԱՎԷՊ»

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան գինը 10 ֆ., կանխիկ:

Հասցէն. — Redactioù de la Revue Bazmavêp S. Lazare Venise (Italie).

«ՌԻԻՐԱՊԷՆ»

Շաբաթաթերթ տարեկան 20 ֆր. կարելի է ստորագրուել „Լումայ"ի խմբագրատանը:

«ՆՈՐ-ԴԱՐ»

Քաղաքական գրականական ամենօրեայ լրագիր

Հասցէն—Тифлисъ Ред. ежедневной газеты Норъ Даръ.

«ՄՈՒՐՃ»

Քաղաքական - հասարակական գրական ամսագիր.

Տարեկան 10 մանեթի

Հասցէն. — Тифлисъ Редакція журнала „Мурчъ".

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 10 ֆրանք:

Հասցէն.—Red. de la Revue „Handesse Amsoria" Wienne

Տանտիկինների համար անհրաժեշտ գիրք

ԽՈՀԱՐԱՐՈՒՀԻ

ԿԵՐԱԿՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

ճեռնարկ

Կազմեց Թ. Ա.

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԷԿ

Գոհարով գիրք-ոն

Դիմել „Լումայ"ի խմբագրութեան:

«ԱՂԲԻՒՐ»

Մանկական պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար

«ՏԱՐԱՋ»

պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար:

1901 թուին հրատարակվում են նոյն ուղղութեամբ:

„Աղբիւր"ի տարեկան գինը 3 ռուբլի, „Տարաջ"ինը 6 ռուբլի:

Հասցէն.—Тифлисъ, Ре.. иллюст. журнала Агбюръ-Таразъ.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՄՍԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

Տարեկան 5 ֆրանք:

Հասցէ. Armenian Rectory, Upper Brook Street, Manchester.

ԲԱՆԱՍԷՐ

ՀՆԱԲՈՍԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ

ՀԱՆԴԷՍԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑՈՒԱԾ Է

ՆԵՐԿԱՅ 1901 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Տարեկան գինն է՝ 20 ֆր. —8 ռ. վեցամսեան՝ 10 ֆր.—4 ռ.

Կը հրատարակուի տարին չորս պրակ, իւրաքանչիւրը հարիւր երեսներէ բաղկացած եւ մի միայն ազգային հնախօսութեան, պատմութեան, լեզուաբանութեան, մատենագրութեան եւ ասոնց յարակից գիտութեանց նուիրուած:

Տնօրէն „Բանասէր"ի
Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

Մեր հասցէն է՝ M. Basmadjian 112, Bd Rochechouart Paris.

Թիֆլիսում կարելի է դրուել «Լուայ»ի խմբագրատանը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

«ՄԵԼԻՔ-ԻԻՍՈՒՓ»

ՊԱՏՄԱԿԱՆ ՊՕԷՄ

Արտատպուած «Լուայ»-ից

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ

Նոյն հեղինակի

1) ՄԵԼԻՔ-ՌԷՊԼԱՐ, *պատմ. պօէմա* . 10 *կոպ.*
2) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ . . 50 »
3) ՀԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ (I *գիրք*) . . 30 »
4) ԱՄՈՒՐԻՆ . . . . . 20 »
5) ԽՕԼԵՐ, *վոդեվիլ մէկ արարուածով* . 10 »
6) ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵՒԵՐԸ, (*թարգմ.*) . 30 »

Դիմել՝ Тифлисъ, Центральная Книжная торговля *կամ հեղինակին՝* Тифлисъ. Чавчавадзевская ул, д. Маркарова № 25.

ԳՈՒԹԱՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՑ

Հողագործական, գիտական եւ արուեստական

(Պատկերներով)

Տնօրէն **Գարեգին Դ. Մեծատուրեան**

Գուրթանը մամլոյ ներքև է և մի քանի օրէն լոյս պիտի տեսնէ, Հայ և ֆրանսացի աշխատակիցներու աշխատակցութեամբ։ Առ այժմ ամիսը անգամ մը պիտի հրատարակուի Գուրթանը և իւրաքանչիւր թիւը պիտի բաղկանայ 16 էջէ։

Տարեկան բաժնեգինն է

Թուրքիոյ համար 10 ֆրանք, Ռուսիոյ համար 6 ռուբլի և Արտասահմանի համար 12 ֆրանք։

Յօդուած, նամակ և բաժնեգին դրկել՝ K. Médzadourian Inginieur-Agronome 23 rue de la Callégiale (V me) Paris

---

ՆՈՐԱԲԱՑ

գրելու պիտոյքների եւ գրքերի վաճառանոց

Դ. Գ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ

Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ. № 32.

Շատ պակաս գներով վաճառուում են տետրակներ, յիշատակարաններ, ծրարներ, մատիտներ, բակետներ, շրջանակներ, օլէոգրաֆիական և ազգային գործիքների պատկերներ, շնորհաւորական այցետոմսեր, օրացոյցներ, պատկերազարդ հէքիաթներ, դասագրքեր, գրքեր և լրագիրներ։ Այստեղ պատրաստուում են եւ պատկերների համար շրջանակներ։

Ընդունուում է բաժանորդագրութիւն „Լումայի“, „Ազգագրական հանդիսի“, „Կվալիի“, „Մօգզաուրիի“, „Զէջիլիի“ և „Ռուս. Վր. հանրագիտական բառարանի“։ Ընդունուում են հրատարակիչներից ամեն լեզուով գրքեր կոմիսիայով վաճառելու համար։